Ֆրանսիական գրականություն, Վեպ, Արձակ

13+

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ

Շագրենի կաշին

Ֆրանսերենից թարգմանեց՝ ԱՐԲՈՒՆ ՏԱՅԱՆ

ԹԱԼԻՍՄԱՆԸ

1829 թվականի հոկտեմբերի վերջին մի երիտասարդ Պալե-Ռուայալ[1] մտավ ճիշտ այն պահին, երբ խաղատները բացվում են համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է ըստ էության անխուսափելի դարձած կրքի իրավունքը: Առանց երկար վարանելու, նա բարձրացավ համար 36 խաղատան սանդուղքով:

— Պարոն, բարեհաճեցեք հանձնել ձեր գլխարկը,— չոր ու ազդու ձայնով նրան գոչեց մեռելատիպ մի ծերուկ, որ ծվարել էր պատվարի ետևի ստվերում և որ հանկարծ վեր կացավ, ցուցադրելով իր գարշելի կերպարանքը:

Երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզանից խլում է ձեր գլխարկը: Արդյոք դա յուրատեսակ ավետարանական առակ, երկնային նախազգուշացո՞ւմ է, թե՞, ավելի շուտ, մի տեսակ դժոխային պայմանագիր, որ որևէ գրավական է պահանջում ձեզանից: Արդյոք դա ձեզ պարտավորեցնելու համա՞ր է, որ դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր տանելու են ձեր փողը: Արդյոք դա հասարակական բոլոր կոյանոցները ներթափանցող ոստիկանությո՞ւնն է, որ ուզում է իմանալ ձեր գլխարկագործի անունը, կամ ձեր անունը, եթե դուք այն գրել եք գլխարկի աստառի վրա: Վերջապես, արդյոք դա նրա համա՞ր է, որ ձեր գանգի չափը առնեն և ուսանելի մի վիճակագրություն կազմեն խաղացողների մտավոր ընդունակության մասին: Այս հարցում վարչությունը կատարյալ լռություն է պահում: Բայց լավ իմացեք, հենց որ դուք մի քայլ եք անում դեպի խաղասեղանը, ձեր գլխարկն արդեն ձեզ չի պատկանում, դուք ևս ձեզ չեք պատկանում. դուք խաղի իշխանության տակ եք դնում ձեզ, ձեր հարստությունը, ձեր գլխարկը, ձեր գավազանը և ձեր վերնազգեստը: Ձեր դուրս գալու ժամանակ խաղը գործնական դաժան հեգնանքով ձեզ կապացուցի, որ նա դեռևս ձեզ թողնում է ինչ-որ բան, ձեզ վերադարձնելով ձեր գույքը: Այնուամենայնիվ, եթե դուք ունեք նոր գլխարկ, ի վնաս ձեզ կսովորեք, որ պետք է ունենալ խաղի հատուկ տարազ:

Զարմանքը, որ արտահայտեց երիտասարդը, երբ ստացավ համարանիշը իր գլխարկի փոխարեն, որի եզրերը, բարեբախտաբար, որոշ չափով մաշված էին, ըստ բավականին ցույց

---

[1] **Պալե-Ռուայալ** — XVII դարում կառուցված շքեղ պալատ: Բալզակի ժամանակ պալատին ընթերակա ճեմուղիներում տեղավորված էին խաղատները, սրճարանները, խանութները:

էր տալիս դեռ նրա անփորձությունը. իսկ ծերուկը, որ, անտարակույս, իր երիտասարդ հասակից մխրճվել էր խաղացողների կյանքի եռուն հաճույքների մեջ, նրա վրա նետեց մռայլ ու պաղ մի հայացք, որի մեջ փիլիսոփան կնկատեր հիվանդանոցների ցավագարություններ, սնանկացածների թափառումներ, ջրահեղձների անզգայացումներ, ցմահ տաժանակրություններ, տարագրություններ դեպի Գուասակոալկո[2]: Երկարավուն, գունաթափ դեմքով այս մարդը, որ այժմ սնվում էր միայն Դարսեի[3] դոնդողե ապուրներով, պարզապես ներկայացնում էր իր վախճանին հասած կրքի դժգույն պատկերը: Նրա խոր կնճիռները վաղնջական և տևական տանջանքների նշաններ էին. հավանաբար նա խաղում էր հենց այն օրը, երբ ստանում էր իր խղճուկ ռոճիկը: Ոչինչ չէր ցնցում նրան, նման անզորացած ձիուն, որի վրա այլևս չեն ազդում մտրակի հարվածները. նա միշտ անզգա էր մնում կործանումով դուրս եկած խաղացողների խուլ հառաչանքների, լուռ անեծքների, ապշահար հայացքների նկատմամբ: Նա խաղի մարմնացումն էր: Եթե երիտասարդը դիտեր այս տխուր կերբերոսին, գուցե յուրովի ասեր. «Թղթախաղից բացի ուրիշ ոչինչ չկա նրա սրտում»: Բայց երիտասարդը չլսեց այս կենդանի խորհուրդին, որին, անշուշտ, նախախնամությունն էր դրել այստեղ, ինչպես դնում է գարշանքը բոլոր վատահամբավ տների դռանը: Նա համարձակորեն մտավ խաղասրահ, ուր ոսկու զնգոցը դյութական ազդեցություն էր գործում ընչաքաղցությամբ տոգորված զգայարանների վրա: Այս երիտասարդին հավանաբար այստեղ էր մղել Ժան-Ժակ Ռուսոյի բոլոր պերճախոս ֆրազներից ամենից ավելի տրամաբանականը, որի տխուր իմաստը, կարծեմ, սա է. «Այո, ես ընդունում եմ, որ մարդ կարող է խաղալու գնալ, բայց միայն այն ժամանակ, երբ իր և մահվան միջև տեսնում է սոսկ իր վերջին ստակը»:

Երեկոյան խաղատների պոեզիան զոհեիկ է, բայց նրա ներգործությունն ապահովված է, ինչպես ներգործությունն արյունալի դրամայի: Սրահները լեցուն են հանդիսատեսներով ու խաղացողներով, տաքանալու համար եկած աղցավոր ծերունիներով, գինիով սկսվող և Սենում վերջացող գինարբուքներից հուզված դեմքերով: Խաղի կիրքը հորդում է այստեղ, բայց դերակատարների հոծ բազմությունը ձեզ թույլ չի տալիս դեմառդեմ տեսնելու խաղի դևին: Երեկոյան դա իսկական համերգ է, որտեղ ամբողջ հավաքախումբը գոռում-գոչում է, և նվագախմբի յուրաքանչյուր գործիքը եղանակավորում է իր ֆրազը: Դուք այստեղ կտեսնեք բազմաթիվ արգո մարդկանց, որոնք եկել են զվարճություններ գտնելու, և դրանց համար վճարում են այնպես, ինչպես պիտի վճարեին ներկայացման կամ խորտկակերության հաճույքի համար, կամ ինչպես մի ձեղնախցում պիտի դնեին էժանագին զգվանքներ, որոնց համար հետո պիտի հատուցեին ամբողջ երեք ամիս տևող կսկծեցուցիչ ափսոսանքներով: Բայց դուք հասկանո՞ւմ եք հոգեկան վիճակը այն մարդու, որ անհամբերությամբ սպասում է խաղատան բացվելուն: Երեկոյան խաղացողի և առավոտյան խաղացողի միջև կա այնպիսի տարբերություն, ինչպիսի տարբերություն կա անհոգ ամուսնու և իր գեղեցկուհու լուսամուտի տակ մարմրող սիրահարի միջև: Միայն առավոտյան դուք կնկատեք բաբախուն կիրքը և

---

[2] **Գուասակոալկո**—գետ Մեքսիկայում, որի ափերին էր գտնվում ֆրանսիացի տարագիրների գաղութը Բուրբոնների գահակալության շրջանում (1814—1830):

[3] **Դարսե Ժան** (1725—1801) — ֆրանսիացի քիմիկոս, գտել էր եղանակը ոսկորներից ստանալու դոնդող (ժելատին), որ իբրև էժանագին սննդանյութ օգտագործվում էր զանազան բարեգործական հաստատություններում:

կարիքը՝ իրենց ահավոր մերկությամբ: Այդ ժամանակ դուք կարող եք տեսնել իսկական խաղացողին, որը չի կերել, չի քնել, չի ապրել, չի մտածել, այնքան նա դաժանորեն ձաղկվել է անհաջողությունների մտրակով, այնքան տառապել-տանջվել է «տրանտ-է-քարանտ»[4] դուրս բերելու սաստիկ մարմաջով: Այդ անիծյալ ժամին դուք կնկատեք աչքեր, որոնց հանդարտությունը սարսափեցնում է, դեմքեր, որոնք կախարդում են, նայվածքներ, որոնք ասես բարձրացնում ու լափում են խաղաքարտերը:

Այսպիսով, խաղատները գեղեցիկ տեսարան են ներկայացնում միայն խաղասկզբին: Եթե Իսպանիան ունի իր ցլամարտերը, եթե Հռոմն ունեցել է իր կրկեսամարտիկները, ապա Փարիզը հպարտանում է իր Պալե-Ռուայալով, որի գրգռիչ բախտախաղերը ձեզ հաճույք կպատճառեն իրենց գրավիչ պատկերով, ուր արյունը հոսում է հեղեղորեն, առանց, սակայն, թրջելու պարտերում նստած հանդիսատեսների ոտքերը: Փորձեցեք մի թռուցիկ հայացք նետել այս մրցարանի վրա, ներս մտեք. .. Ինչպիսի՜ մերկություն: Մարդու հասակի բարձրությամբ պաստառներով ծածկված պատերը չունեն ոչ մի նկար, որ կարողանար հոգին թարմացնել: Այնտեղ չկա նույնիսկ մի մեխ, որ դյուրացներ ինքնասպանությունը: Հատակը մաշված, կեղտոտված է: Սրահի կենտրոնը գրավում է ձվաձև մի սեղան: Սեղանը ծածկված է ոսկեդրամներից քրքրված սփռոցով, իսկ շուրջը կիպ շարված են ծղոտե աթոռներ, ամենահասարակ աթոռներ, որոնք ցույց են տալիս շքեղության նկատմամբ զարմանալի տարբերությունն այս մարդկանց, որոնք գալիս են այստեղ խորտակվելու հանուն հարստության ու շքեղության: Մարդկային այս հակասությունը երևան է գալիս ամեն անգամ, երբ հոգու մեջ ուժգնորեն պայքարում են կրքերը: Սիրահարը ցանկանում է իր սիրուհուն զարդարել մետաքսով և հանդերձավորել արևելյան փափուկ գործվածքով, բայց շատ հաճախ նրան տիրանում է մի խղճուկ խշտյակի վրա: Փառասերը բարձր իշխանություն է երազում, սողալով ստրկահոգության տիղմի մեջ: Առևտրականը մի կերպ ապրում է իր խոնավ ու վատառողջ խանութում, բարձրացնելով մի ընդարձակ ապարանք, որտեղից կանխահաս հարստության ժառանգ դարձած իր որդին արտաքսվելու է իր հարազատ եղբորից: Վերջապես, կա՞ արդյոք ավելի անհաճո բան, քան հաճույքի տոնը: Տարօրինա՜կ հարց: Մշտապես պայքարելով ինքն իր հետ, իր հույսերը կորցնելով վերահաս աղետներից և փրկություն որոնելով իրեն չպատկանող ապագայի հույսերի մեջ, մարդ իր բոլոր արարքների մեջ ցուցաբերում է անհետևողականություն և թուլակամություն: Այս աշխարհում լրիվ ոչինչ չի իրականանում, բացի դժբախտությունից:

Երբ երիտասարդը խաղասրահ մտավ, այնտեղ արդեն կային մի քանի խաղացողներ: Ճաղատ գլխով երեք ծերունիներ անփութորեն նստած էին խաղասեղանի շուրջը. նրանց դիմականման դեմքերը, որոնք անայլայլ էին, ինչպես դիվանագետների դեմքերը, մատնում էին նրանց բթացած հոգիները, սրտերը, որոնք վաղուց ի վեր մոռացել էին բաբախել նույնիսկ այն դեպքում, եթե վտանգի ենթարկեին կնոջ անկապտելի ունեցվածքը: Սև մազերով, ձիթագույն դեմքով մի երիտասարդ իտալացի արմունկով հանգիստ հենվել էր սեղանի ծայրին և կարծես ականջ էր դնում այն ներքին նախազգացումներին, որոնք խաղացողին գոչում են «այո-ոչ» ճակատագրական բառերը: Այս հարավային դեմքից փչում էր ոսկի և կրակ: Յոթ կամ ութ հանդիսատեսներ կանգնած, բոլորաձև շարված, սպասում էին այն տեսարաններին, որ նրանց համար պատրաստում էին բախտի քմահաճույքները, դերակատարների դեմքերը,

---

[4] **«Տրանտ-է-քարանտ»** (երեսուն և քառասուն) — աչքերի թիվը համանուն թղթախաղում:

փողի և փողը հավաքող ձողի շարժումը: Այս պարապ մարդիկ լուռ, անշարժ, ուշադիր էին, ինչպես ամբոխը Գրեվի հրապարակում, երբ դահիճը կտրում է մեկի գլուխը: Բարձրահասակ, նիհար, մաշված ֆրակով մի մարդ մեկ ձեռքով մատյան էր բռնել, մյուսով գնդասեղ, որպեսզի նշանակեր **կարմիրի** և **սևի** շահած կետերը: Նա մեկն էր այն ժամանակակից տանտալներից, որոնք ապրում են իրենց դարի վայելքներից դուրս, մեկն այն գանձազուրկ ժլատներից, որոնք խաղում են երևակայական մի գումարի վրա, մի տեսակ խելամիտ խենթ, որ դժբախտության ժամանակ իրեն մխիթարում է մի պատրանքով, և որ մոլության ու վտանգի հետ վարվում է այնպես, ինչպես վարվում են երիտասարդ քահանաները սուրբ հաղորդության հետ, երբ առավոտյան պատարագն են մատուցում: Խաղացողի դիմաց կանգնած մի քանի բախտախնդիրներ, որոնք ուսումնասիրել են խաղի բոլոր շանսերը և նման են այն հին թիապարտներին, որոնք այլևս չեն վախենում թիարաններից, եկել էին այստեղ բախտ փորձելու և անմիջապես ձեռք բերելու հավանական շահումը, որով ապրում էին: Երկու ծերունի ծառաներ, թևերը խաչաձևած, անփութորեն ետ ու առաջ էին քայլում և ժամանակ առ ժամանակ լուսամուտներից դեպի պարտեզ նայում, կարծես անցորդներին ցույց տալու համար իրենց տափակ երեսները իբրև ցուցանակ: Խաղապետն ու գանձապահը խաղակիցների վրա հենց նոր աղոտ ու սպանիչ մի հայացք նետեցին և հեղձուկ ձայնով «Փողերը դրեք» ասացին, երբ երիտասարդը բաց արեց դուռը: Լռությունը մի տեսակ ավելի խորացավ, և գլուխները հետաքրքրությունից շրջվեցին դեպի նորեկը: Զարմանալի՜ բան. տեսնելով անծանոթին՝ բթացած ծերունիները, քարացած ծառայողները, հանդիսատեսները և նույնիսկ մոլեռանդ իտալացին՝ բոլորը ինչ-որ զարհուրելի զգացում ունեցան: Պետք է շատ դժբախտ լինել՝ գութ շարժելու համար, շատ թույլ՝ համակրանք առաջացնելու համար կամ շատ մռայլադեմ՝ ցնցելու համար սրտերն այս սրահում, ուր վիշտը միշտ լուռ է, անձկությունը՝ զվարթ և հուսահատությունը՝ վայելուչ: Եվ ահա այս բոլորը կար այն նոր զգացումի մեջ, որ սթափեցրեց սառած սրտերը, երբ երիտասարդը ներս մտավ: Բայց չէ՞ որ դահիճներն անգամ երբեմն արտասվել են խարտիշագեղ կուսական գլուխների վրա, որ նրանք պետք է կտրեին հեղափոխության տված ազդանշանով:

Առաջին իսկ հայացքից խաղացողները նորեկի դեմքի վրա ինչ-որ ահավոր գաղտնիք կարդացին, նրա նուրբ դիմագծերը կրում էին ինչ-որ հրապուրիչ մելամաղձություն, նայվածքը վկայում էր զուր ճիգերի, բազում հուսախաբությունների մասին: Ինքնասպանության մռայլ զգացումը նրա ճակատին տվել էր անփայլ ու հիվանդագին դալկություն, դառն ժպիտը թեթև ծալքերով գծագրվել էր նրա բերանի անկյուններում, և ամբողջ դեմքը արտահայտում էր այնպիսի անտրտունջ համակերպություն, որ ցավալի էր նրան նայել: Ինչ-որ թաքուն հանճար էր առկայծում այդ աչքերի խորքում, որոնք գուցե մշուշվել էին հաճույքներից առաջացած պարտասումից: Արդյոք շվայտությո՞ւնն էր իր պիղծ կնիքը դրել այս ազնիվ դեմքի վրա, որը մի ժամանակ անապակ ու վառվռուն էր, իսկ այժմ արդեն խաթարվել էր: Բժիշկներն, անշուշտ, սրտի կամ կրծքի խանգարումներին կվերագրեին նրա կոպերը եզերող դեղին շրջանակը և այտերի տենդագին կարմրությունը, մինչդեռ բանաստեղծները դրանց մեջ կցանկանային տեսնել գիտությանը անձնուրաց ծառայության նշանները, լամբարի տմույն լույսի տակ անքուն անցկացրած գիշերների հետքերը: Բայց հիվանդությունից ավելի մահացու մի կիրք, մտավոր աշխատանքից ու հանճարից ավելի անողոք մի հիվանդություն այլակերպել էին այդ թարմ դիմագծերը, կարկամել այդ առույգ մկանները, ուժասպառել սիրտը, որին միայն թեթևակիորեն էին հպել գինարբուքները, տքնությունն ու հիվանդությունը: Ինչպես, երբ հայտնի մի ոճրագործ տաժանավայրն է հասնում,

կալանավորները հարգանքով են ընդունում նրան, այսպես այս խաղատանը տանջանքների մեջ կոփված մարդակերպ դևերը ողջունեցին անլուր մի վշտի, ծանր մի վերքի, որ խորաչափում էր նրանց հայացքը, և անծանոթի լուռ հեգնանքի վեհությունից և նրա հագուստի անշուք վայելչությունից նրանք ճանաչեցին իրենց իշխանավորներից մեկին: Երիտասարդը հագել էր ճաշակով մի ֆրակ, բայց փողկապի բաճկոնակի կիպ միակցումը թույլ չէր տալիս տեսնելու՝ սպիտակեղեն ունե՞ր թե ոչ: Նրա ձեռքերը, որոնք նուրբ էին ինչպես կանացի ձեռքերը, կասկածելի մաքրություն ունեին. երկու օր է, ինչ նա արդեն ձեռնոց չէր կրում: Եթե խաղապետը և նույնիսկ ծառայողները սարսռացին, այդ նրանից էր, որ անմեղության հմայքը դեռ փթթում էր նրա փխրուն ու բարեձև մարմնի, բնականից գանգուրված շեկ ու նոսր մազերի մեջ: Դեմքից դատելով՝ նա քսանհինգ տարեկան կլիներ, և մոլությունը նրա մոտ, ըստ երևույթին, պատահական բան էր: Երիտասարդության թարմությունը դեռ դիմադրում էր անհագ պագշոտության ավերածություններին: Խավարն ու լույսը, ոչինչն ու կյանքը պայքարում էին նրա մեջ՝ հմայք և սարսափ առաջացնելով միաժամանակ: Երիտասարդը ներկայանում էր այստեղ, ինչպես անճաճանչ և ուղեկորույս հրեշտակ: Եվ մոլության ու պղծության այս բոլոր վաստակավոր ուսուցիչները, նման ատամնաթափ պառավների, որոնք խղճում են՝ տեսնելով ապականության անձնատուր եղող մի գեղեցիկ աղջկա, արգահատում էին նորեկին և պատրաստ էին նրան գոչելու՝ «Դո՛ւրս եկեք այստեղից»: Նա ուղղակի գնաց դեպի խաղասեղանը, կանգ առավ, առանց վարանելու սփռոցի վրա նետեց ձեռքին բռնած ոսկեդրամը, որը գլորվեց սևի վրա. ապա, ինչպես բոլոր ուժերը մարդիկ, որոնք արհամարհում են ճղճիմ անվճռականությունը, խաղապետի վրա նետեց գրգռիչ և միաժամանակ հանդարտ մի հայացք: Այս խաղը այնպիսի հետաքրքրություն առաջացրեց, որ ծերերը փող չդրին. սակայն իտալացին կրքի մոլեռանդությամբ կառչեց իրեն հրապուրած մտքից և իր ամբողջ ոսկին դրեց անծանոթի դրածի դեմ: Գանձապահը մոռացավ ասել սովորական խոսքերը՝ «Փող դրեք», «Փողը դրված է», «Էլ փող չի դրվի», որովհետև ամեն ինչ, ի վերջո, վերածվեց խռպոտ և խժալուր աղմուկի: Խաղապետը վերցրեց քարտերը և, կարծես, անտարբեր այս տխուր զվարճությունները կազմակերպողների կորստի կամ շահի նկատմամբ, հաջողություն մաղթեց նորեկին: Հանդիսատեսները այս ոսկեդրամի բախտի մեջ ուզեցին տեսնել դրամայի լուծումը, ազնիվ մի կյանքի վերջին տեսարանը. նրանց աչքերը բոցկլտացին, երբ կանգ առան ճակատագրական ստվարաթղթերի վրա. բայց չնայած այն ուշադրությանը, որով մեկ երիտասարդին, մեկ քարտերին նայեցին, նրանք հուզմունքի որևէ նշան չկարողացան նկատել երիտասարդի սառն և անտրտունջ դեմքի վրա:

— Կարմիր, սև,— պասս,— հայտարարեց խաղապետը պաշտոնական տոնով:

Իտալացու կրծքից մի տեսակ խուլ հռնդյուն դուրս եկավ. երբ նա տեսավ թե ինչպես մեկը մյուսի ետևից սփռոցի վրա են ընկնում ծալված դրամատոմսերը, որ իրեն նետեց գանձապահը: Իսկ երիտասարդը իր կործանումն իմացավ միայն այն ժամանակ, երբ փղոսկրե ձողը երկարաձգվեց՝ իր վերջին նապոլեոն-ոսկին քաշելու համար: Փղոսկրը չոր ձայնով զարնվեց ոսկուն, որը նետի արագությամբ գլորվեց ու միացավ դրամարկղի առջև դիզված ոսկիների կույտին: Անծանոթը դանդաղորեն փակեց աչքերը, նրա շրթները սպիտակեցին, բայց նա իսկույն նորից բաց արեց կոպերը. նրա շրթները նորից ստացան բուստի կարմրություն. նա նմանվեց այն անգլիացուն, որի համար կյանքն այլևս գաղտնիքներ չունի, և, առանց գթություն հայցելու, հեռացավ այն սրտաճմլիկ հայացքով, որ հաճախ հուսահատության մեջ ընկած խաղացողները նետում են հանդիսատեսների վրա: Ինչպիսի՜

դեպքեր են տեղի ունենում մի վայրկյանի ընթացքում և ինչպիսի՜ բաներ՝ մի զառ նետելու միջոցին:

— Դա, իհարկե, նրա վերջին փամփուշտն էր,— ժպտալով ասաց խաղապետը մի պահ լռությունից հետո, և ոսկեդրամը բռնելով բթամատի ու ցուցամատի միջև, ցույց տվեց ներկաներին:

— Նա գլուխը կորցրել է, կգնա իրեն ջուրը կգցի,— պատասխանեց խաղատուն հաճախողներից մեկը, նայելով խաղացողներին, որոնք բոլորն էլ իրար ճանաչում էին:

— Վա՜հ,— բացականչեց ծառայողը, մի պտղունց քթախոտ քաշելով:

— Լավ կլիներ, որ մենք էլ այս պարոնի պես բախտ ունենայինք, ասաց մի ծերունի իր ընկերներին, մատնանշելով իտալացուն:

Բոլորը նայեցին երջանիկ խաղացողին, որը դողդողացող ձեռքերով հաշվում էր դրամատոմսերը:

— Ինչ-որ մի ձայն,— ասաց նա,— ականջիս շշնջաց՝ «Հաշվով խաղը կհաղթի երիտասարդի հուսահատությանը»:

— Նա խաղացող չէ,— հարեց գանձապահը:— Խաղացողը իր փողը երեք մասի կբաժաներ, որպեսզի ավելի շանս ունենար տանելու:

Երիտասարդը դուրս եկավ առանց իր գլխարկը պահանջելու, բայց ծեր պահապան շունը, նկատելով գլխարկի աննախանձելի վիճակը, վերադարձրեց այն, ոչ մի բառ չասելով. երիտասարդը մեքենայորեն հանձնեց համարանիշը և աստիճաններից իջավ Di tanti palpitil[5] շվացնելով, բայց այնքան մեղմ, որ ինքն անգամ հազիվ էր լսում քաղցրալուր մեղեդին:

Շուտով նա գտնվեց Պալե-Ռուայալի կամարների տակ, գնաց մինչև Սենտ-Օնորե փողոցը և, մտնելով Տյուիլրիե զբոսայգին, վարանոտ քայլերով անցավ նրա միջով: Նա կարծես քայլում էր անապատում. մարդիկ նրան արմկահարում էին, բայց նա չէր տեսնում նրանց. ամբոխի ժխորի միջից նա լսում էր միայն մի ձայն, մահվան ձայնը. ի վերջո նա խորասուզվեց ընդարմացուցիչ մտախոհության մեջ, նման այն մտախոհության, որի մեջ ընկնում են ոճրագործները, երբ նրանց Արդարադատության պալատից սայլակով տանում են դեպի Գրեվի հրապարակ, դեպի գլխատարան, որը կարմիր է 1793 թվականից ի վեր հեղված արյունով:

Ինչ-որ մեծ և ահավոր բան կա ինքնասպանության մեջ: Շատ մարդկանց համար անկումը լինում է ոչ սոսկալի, ինչպես երեխաների համար, որոնք ընկնում են այնքան փոքր բարձրությունից, որ չեն ճմլվում, բայց երբ ջարդվում է մի մեծ մարդ, ապա այդ նշանակում է, որ նա ընկել է մեծ բարձրությունից, որ նա բարձրացել է մինչև երկինք և տեսել ինչ-որ անմատչելի դրախտ: Անողորմ պետք է լինեն այն ներքին փոթորիկները, որոնք նրան ստիպում են խաղաղություն հայցելու ատրճանակի փողից: Որքա՜ն երիտասարդ տաղանդներ, ձեղնահարկի խցում ներփակված, միլիոնավոր կենդանի էակների մեջ կորած,

---

[5] **«Սրտի ի՜նչ բաբախումներով»** (իտ.) — Ռոսսինիի «Տանկրեդ» օպերայի արիայի բառերը:

ծյուրվում ու կործանվում են ոսկուց հղփացած ու ձանձրացած մարդկանց աչքերի առաջ, որովհետև չունեն մի բարեկամ, մի ափոփարար կին: Բավական է միայն այս մասին մտածել, և մենք կպատկերացնենք ինքնասպանության հսկայական չափերը: Աստված միայն գիտե, թե ինչքա՛ն մտահղացումներ, ինչքա՛ն չգրված պոեզիաներ, ինչքա՛ն հուսալքություններ և խեղդված աղաղակներ, ապարդյուն փորձեր և վիժած գլուխգործոցներ են խռնվում կամավոր մահվան և բեղմնավոր հույսի միջև, որի ձայնը երիտասարդին Փարիզ էր կանչել: Ամեն ինքնասպանություն մելամաղձության վսեմ պոեմա է: Դուք որտեղ կգտնեք գրականությունների օվկիանոսում լողացող մի գիրք, որ իր հուզականությամբ կարողանա մրցել լրագրային այսպիսի հակիրճ հաղորդման հետ.

«Երեկ, ժամը չորսին, երիտասարդ մի կին Սեն գետը նետվեց Արվեստների կամուրջից»:

Փարիզյան այս լակոնականության առջև դժգունում է ամեն ինչ՝ դրամաները, վեպերը, նույնիսկ այս հին վերնագիրը՝ «Իր որդիների կողմից բանտ նետված Կառնավանի փառապանծ թագավորի ողբերը», միակ պատառիկը կորած մի գրքի, որի ընթերցումից արտասվել էր Ստերնը[6], որը հենց ինքն էր լքել իր կնոջն ու որդիներին...

Անծանոթը պաշարվեց բազմաթիվ նման խոհերով, որոնք բեկորներով հածում էին նրա գլխում, ինչպես պատառոտված դրոշների ծվեններն են ծփում մարտի ժամանակ: Նա մի պահ իրենից վանեց մտքերի և հուշերի բեռը, կանգ առնելով ծաղիկների առջև, որոնց գլխիկները մեղկորեն օրորվում էին դալարիքի միջով փչող զեփյուռից. ապա, իր մեջ զգալով կյանքի թրթիռը, որ դեռ գոյատևում էր ինքնասպանության ծանր մտքի տակ, աչքերը բարձրացրեց երկինք. բայց գորշ ամպերը, հողմի տխրաթաթավ մռնչյունները և ծանրաշունչ օդը դարձյալ նրան ներշնչեցին մեռնելու ցանկություն: Նա մոտեցավ Արքայական կամուրջին, մտածելով իր նախորդների վերջին քմահաճույքների մասին: Նա ժպտաց, հիշելով, որ լորդ Կաստրիֆը, նախքան իր կոկորդը կտրելը, բավարարել էր մեր պահանջներից ամենահետինը, և որ ակադեմիկոս Օժեն, մահվան գնալիս, փնտրել էր իր քթախոտատուփը, որպեսզի քթախոտ քաշեր: Նա փորձում էր հասկանալ այս տարօրինակությունները, հարցեր էր տալիս ինքն իրեն, երբ հանկարծ, սեղմվելով կամուրջի պատին, որպեսզի ճանապարհ տար շուկայի բեռնակրին, ինքն իր վրա զարմացավ, որ ֆրակի թևնոցից խնամքով թափ է տալիս այն թեթև փոշին, որ առաջացել էր բեռնակրի քսվելու հետևանքով: Հասնելով կամուրջի մեջտեղ, նա մռայլորեն նայեց ջրին:

— Վատ ժամանակ ես ընտրել խեղդվելու համար,— ծիծաղելով նրան ասաց ցնցոտավոր մի պառավ:— Սենը տղմոտ և սառն է...

Երիտասարդը պատասխանեց բարեմիտ մի ժպիտով, որ արտահայտում էր նրա անմիտ վճռականությունը, բայց հանկարծ սարսռաց՝ հեռվում, Տյուիլրիի նավամատույցի վրա տեսնելով մի տաղավար, որի վրա հսկայական տառերով գրված էր՝ **ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽԵՂԴՎՈՂՆԵՐԻՆ**: Պարոն Դաշեն[7] նրա աչքին երևաց իր մարդասիրության բովանդակ զինվածությամբ, հրամայելով շարժման մեջ դնել բարերար թիակները, որոնցով ջարդում են խեղդվածների գլուխները, երբ նրանք, ի դժբախտություն իրենց, ջրի երես են դուրս գալիս, նա

---

[6] **Ստերն** Լոուրենս (1713—1768)—անգլիացի գրող:

[7] Դաշե — Սեն գետի փրկարար կայանների վերահսկիչը այդ տարիներին:

պատկերացրեց, թե ինչպես այդ պարոնը իր շուրջն էր հավաքում հետաքրքրասերներին, բժիշկ էր կանչում, ծխաբույժեր էր պատրաստում. նա կարդաց լրագրողների ցավակցությունները, որոնք կազմված էին կերուխումի ուրախությունների և ժպտուն պարուհու հետ հանդիպման արանքում, նա լսեց, թե ինչպես են զնգում էկյուները, որ ոստիկանապետը հաշվում էր մակույկավարներին՝ իր դիակը գտնելու համար: Մեռած՝ ինքը արժե հիսուն ֆրանկ, բայց կենդանի՝ ինքը ընդամենը միայն տաղանդավոր մարդ է, առանց հովանավորների, առանց բարեկամների, առանց հարդանկողնի, առանց ծածկի,— իսկական սոցիալական զրո, անօգուտ պետության համար, որ իր մասին ամենևին չէր էլ հոգում: Օրը ցերեկով մահը նրան գարշելի թվաց, նա որոշեց մեռնել գիշերով, որպեսզի անհայտ մի դիակ հանձներ այն հասարակությանը, որ չէր ճանաչել իր կյանքի մեծությունը: Ապա նա ժամանակ սպանել ուզող անգործ մարդու անփույթ քայլվածքով շարունակեց իր ճանապարհը և ուղղվեց դեպի Վոլտերի առափնյա փողոցը: Երբ նա իջավ կամուրջի ծայրի աստիճաններից, ափնուղու անկյունում նրա ուշադրությունը գրավեցին եզրապատի վրա տարածված հին գրքերը, և քիչ մնաց դրանցից մի քանիսի համար սակարկություն աներ: Բայց նա սկսեց ժպտալ, փիլիսոփայորեն ձեռքերը մտցրեց բաճկոնակի գրպանների մեջ և նորից առաջ շարժվեց իր անհոգ քայլվածքով, որի մեջ սառը արհամարհանք էր զգացվում, երբ հանկարծ զարմանքով և անսպասելիորեն լսեց, որ մի քանի դրամներ զնգացին իր գրպանում: Հույսի ժպիտը պայծառացրեց նրա դեմքը, շրթունքներից սահելով տարածվեց ամբողջ դիմագծերի, ճակատի վրա, ցնծությամբ շողացրեց մթին աչքերն ու այտերը: Երջանկության այս կայծը նման էր այն բոցերին, որոնք վազում են այրված թղթի մնացորդների վրայով. բայց նրա դեմքը ունեցավ սև մոխիրների բախտը, նորից մռայլվեց, երբ նա, ձեռքը արագ դուրս քաշելով գրպանից, տեսավ ընդամենը երեք սու:

— Բարի պարոն, la carità! la carità! Catarina![8] Մի սու տվեք հացի համար:

Ուռած դեմքով, մրոտած մարմնով, քրքրված հագուստներով սավոյացի պատանի մի ծխանմաքրիչ ձեռքը մեկնեց այդ մարդուն, որպեսզի նրանից վերցներ վերջին դրամները:

Պատանուց երկու քայլ այն կողմ, անհամարձակ, հիվանդոտ, ցավագար, բրդզզված ձորձերով մի ծեր մուրացիկ խուլ թավ ձայնով ասաց.

— Պարոն, տվեք ինչքան կարող եք, ես աստծուն կաղոթեմ ձեզ համար:

Բայց երբ երիտասարդը նայեց ծերունուն, վերջինս լռեց և այլևս ոչինչ չխնդրեց, գուցե այդ մեռելանման դեմքի վրա նկատելով սեփականից ավելի սուր կարիքի նշանները:

— La carità! la carità!

Անծանոթը իր մանր դրամները նետեց պատանուն ու ծերունուն և հեռացավ առափնյա մայթից, որպեսզի շարունակի իր ճանապարհը տների երկայնքով. նա այլևս չէր կարող տանել Սենի սրտաճմլիկ տեսարանը:

— Աստված ձեզ երկար կյանք տա,— ասացին նրան երկու մուրացիկները:

---

[8] Ողորմություն, ողորմություն, ի սեր սուրբ Կատարինայի (իտ.):

Հասնելով փորագրանկարների մի խանութի առջև, այս կիսամեռ մարդը տեսավ մի մանկամարդ կնոջ, որ իջնում էր շողշողուն կառքից: Նա զմայլանքով նայեց այդ հիասքանչ կնոջը, որի սպիտակ դեմքը ներդաշնակորեն շրջանակված էր վայելուչ գլխարկի սնդուսով: Նա հմայվեց կնոջ բարեկազմ իրանով, շնորհալի շարժուձևերով: Կառքից իջնելիս՝ մանկամարդ կինը թեթևակի բարձրացրեց շրջազգեստը, և երևաց նրա մի սրունքը, որի նուրբ ուրվագծերը ի հայտ եկան սպիտակ և լավ պրկված գուլպայից: Նա մտավ խանութ և ալբոմների, վիմագրական հավաքածուների սակարկությամբ զբաղվեց. նա դրանցից գնեց՝ բավական ոսկի վճարելով, որոնք փայլփլեցին ու զնգացին հաշվեսեղանի վրա: Երիտասարդը, որ ձևացնում էր, թե մուտքի մոտ ցուցադրված փորագրանկարներին է նայում, անծանոթ գեղեցկուհուն ուղղեց շատ խորաթափանց մի հայացք, ինչպիսին կարող է նետել մի տղամարդ, և, ի պատասխան, ստացավ մեկը այն անտարբեր հայացքներից, որոնք պատահաբար նետվում են անցորդների վրա: Դա երիտասարդի հրաժեշտի ողջույնն էր սիրույն, կնոջը: Բայց այս վերջին, կրքոտ կոչը չհասկացվեց, չհուզեց թեթևամիտ կնոջ սիրտը, չկարմրացրեց նրան, չխոնարհեցրեց նրա աչքերը: Դա ինչ էր որ այդ կնոջ համար: Մի նոր հիացական հայացք, մի նոր ներշնչված ցանկություն, որ երեկոյան նրան ասել պիտի տար այս շոյող խոսքը. «Այսօր ես **լավն** էի»: Երիտասարդը արագ մոտեցավ մի ուրիշ պատուհանի և շուռ չեկավ, երբ անծանոթ կինը կառք բարձրացավ: Ձիերը շարժվեցին, շքեղության ու պերճագեղության այս վերջին պատկերը խավարեց, ինչպես պիտի խավարեր երիտասարդի կյանքը: Նա մելամաղձորեն քայլեց խանութների երկայնքով, առանց մեծ շահագրգռության դիտելով ցուցափեղկերում դրված ապրանքների նմուշները: Երբ խանութները վերջացան, նա սկսեց ուսումնասիրել Լուվրը, Ակադեմիան, Աստվածամոր տաճարի և Արդարադատության պալատի աշտարակները, Արվեստների կամուրջը: Այս բոլոր կոթողները ասես տխուր տեսք էին ստացել, արտացոլելով գորշ գույները երկնքի, որի աղոտ նշույլները սպառնական կերպարանք էին տվել Փարիզին, որը սիրուն կնոջ նման ենթակա է տգեղության և գեղեցկության փոփոխականության անբացատրելի քմայքներին: Այսպիսով, բնությունն անգամ նպաստում էր՝ մահամերձին սուզելու ցավագին հոգեզմայլության մեջ: Մատնված ազդեցությանը չարաշուք մի ուժի, որի քայքայիչ գործունեությունը ճանապարհ է գտնում մեր նյարդերում շրջող հոսանքի մեջ, նա զգում էր, որ իր մարմինը անզգալաբար հոսանուտ է դառնում: Այս հոգեվարքի տագնապները նրա մեջ առաջացնում էին կոհականման մի հորձանք, և շենքերն ու մարդկանց նա տեսնում էր մի մշուշի միջով, ուր ամեն ինչ ալեծփում էր: Նա ուզեց ազատվել իր հոգու վրա ազդող ֆիզիկական աշխարհի գրգռիչ ազդեցություններից և ուղղվեց դեպի հնությունների մի վաճառատուն, որպեսզի ճարակ տար իր զգայություններին կամ թեկուզ գիշերն այնտեղ սպասեր, արվեստի գործերի գները հարցնելով: Դրանով նա ուզում էր մի տեսակ արիություն գտնել, սրտապնդիչ բանի մասին հարցնել, ինչպես անում է ոճրագործը, որ գլխատարան գնալիս կասկածում է իր ուժերի վրա. սակայն մոտալուտ մահվան գիտակցությունը մի պահ երիտասարդին վերադարձրեց երկու սիրեկան ունեցող դքսուհու ինքնավստահությունը, և նա հազվագյուտ իրերի վաճառանոցը մտավ անկաշկանդ տեսքով, շրթների վրա սառած ժպիտով, որ նման էր հարբածի ժպիտին: Մի՞թե նա հարբած չէր կյանքից կամ, գուցե, մոտալուտ մահից: Շուտով նա նորից ընկավ բանդագուշանքների մեջ և սկսեց իրերը տեսնել արտասովոր գույներով նկարված կամ թեթև շարժումով կենդանացած, դրա պատճառը, անշուշտ, անկանոն շրջանառությունն էր իր արյան, որ մերթ հորձանվում էր երակներում, ինչպես ջրվեժ, մերթ հոսում էր հանդարտ ու մեղմ, ինչպես գաղջ ջուր: Նա հայտարարեց, որ ցանկանում է սրահները դիտել և տեսնել, թե

իր ճաշակին հարմար ինչ հազվագյուտ իրեր կան այնտեղ: Թարմադեմ, թշեղ, շիկահեր, ջրաղվեսի մորթե գլխարկով մի երիտասարդ հանձնակատար վաճառանոցի պահպանությունը հանձնեց յուրատեսակ էգ Կալիբանի[9] կերպարանք ունեցող մի պառավ գեղջկուհու, որ զբաղված էր հախճասալե մի վառարանի մաքրությամբ, որի հրաշալիքներն արդյունք են Բեռնար Պալիսիի[10] հանճարի. ապա անփույթ տոնով ասաց անծանոթին.

— Դիտեցեք, պարոն, դիտեցեք: Ներքևում միայն սովորական իրեր ունենք. բայց դուք նեղություն կրեցեք բարձրանալու վերև, և ես ձեզ ցույց կտամ Կահիրեից բերված գեղեցիկ մումիաներ, դրվագված անոթներ, քանդակված եբենոսներ, **իսկական վերածնունդ,** բոլորն էլ նոր ստացվածք, բոլորն էլ բարձրորակ:

Այն ահավոր կացության մեջ, ուր գտնվում էր անծանոթը, չիչերոնեի այս շաղակրատանքը, անմիտ փերեզակային այս խոսքերը նրա համար ճղճիմ դատարկաբանություններ էին, որոնցով սահմանափակ մտքի տեր մարդիկ սպանում են հանճարեղ մարդուն: Որոշելով իր խաչը տանել մինչև վերջ, նա ձևացրեց, թե լսում է իր ուղեցույցին և նրան պատասխանեց շարժումներով կամ միավանկ բառերով. բայց նա աստիճանաբար կարողացավ ստանալ լռելու իրավունքը և անվեհերորեն անձնատուր եղավ իր վերջին մտախոհություններին, որոնք ահավոր էին: Նա բանաստեղծ էր, և նրա հոգին պատահաբար գտավ առատ սնունդ. նա դեռ կենդանվույն պետք է տեսներ քսան աշխարհների նշխարները:

Առաջին հայացքից վաճառատան սրահները ներկայացրին խառնաշփոթ մի պատկեր, որի մեջ խռնված էին մարդկային և աստվածային բոլոր ստեղծագործությունները: Հարգով լցված կոկորդիլոսներ, բոաներ, կապիկները ժպտում էին եկեղեցական գունավոր ապակիներից, կարծես ուզում էին կիսանդրիները կծել, փայլփլուն իրերի ետևից վազել կամ ձեղնաջահերի վրա մագլցել: Սևրի մի անոթ, որի վրա տիկին Ժակոտոն[11] նկարել էր Նապոլեոնին, գտնվում էր Սեզոստրիսին[12] նվիրված սֆինքսի կողքին: Աշխարհի սկիզբն ու երեկվա դեպքերը զուգակցված էին այստեղ արտառոց բարեհոգությամբ: Շամփուրը դրված էր սրբանոթի վրա, հանրապետական թուրը՝ միջնադարյան հրացանի վրա: Լատուրի պաստելանկարած տիկին Դյուբարրին[13]

---

[9] **Կալիբան** — կիսամարդ-կիսահրեշ երևակայական էակ, որին Շեքսպիրը դարձրել է իր «Փոթորիկ»-ի գործող անձերից մեկը:

[10] **Բեռնար Պալիսի** — XVI դարի ֆրանսիացի քիմիկոս և հանքաբան ֆրանսիական խեցեգործության արվեստի ստեղծողը:

[11] **Տիկին Ժակոտո** — Մարիա Ժակոտո (1778—1855), հախճապակու նկարչուհի, որ շատ հայտնի էր Նապոլեոն I-ի կայսրության տարիներին:

[12] **Սեզոստրիս** — հունական անունը Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ի, որ ապրել է XIII դարում մեր թվարկությունից առաջ:

[13] **Լատուրի պաստելանկարած տիկին Դյուբարրին** — Դյուբարրին Լուդովիկոս XV-ի սիրուհին է Մորիս Լատուրը (1704—1788) ֆրանսիացի նկարիչ է, որ գլխավորապես նկարել է պաստելով:

գլխի վրա աստղ, մերկ և ամպասույզ՝ ասես անհագ հետաքրքրությամբ դիտում էր հնդկական մի չիբուխ և աշխատում էր գուշակել դեպի իրեն գալարվող ծխի քուլաների նշանակությունը: Մահվան գործիքները՝ դաշույնները, հետաքրքրաշարժ ատրճանակները, գաղտնի փակաղակով զենքերը խառնիխուռն նետված էին կյանքի գործիքների՝ հախճապակյա թանամանների, սաքսոնական ափսեների, չինական ըմպանակների, հնադարյան աղամանների, միջնադարյան մեղրամանների կողքին: Փղոսկրե մի նավ առագաստները պարզած լողում էր անշարժ մի կրիայի կռնակի վրա: Օդահան մի մեքենա մտել էր վեհափառորեն անայլայլ Օգոստոս կայսեր աչքի մեջ: Ֆրանսիական քաղաքապետների, հոլանդական բուրգմիստրների բազմաթիվ դիմանկարներ, որոնք անզգա էին, ինչպես նրանք եղել էին կյանքում, բարձրանում էին հնության այս քաոսի վրա, նրա վրա նետելով աղոտ ու պաղ մի հայացք:

Երկրագնդի բոլոր երկրները ասես այստեղ բերել էին մի բեկոր իրենց գիտություններից, մի նմուշ իրենց արվեստներից: Սա մի տեսակ փիլիսոփայական աղբանոց էր, ուր ոչինչ չէր պակասում — ո՛չ վայրենու ծխափողը, ո՛չ արևելյան կանանոցի կանաչ-կարմիր հողաթափը, ո՛չ մավրիտանական յաթաղանը, ո՛չ թաթարական կուռքը: Այստեղ կար ամեն ինչ, մինչև իսկ զինվորի ծխախոտապարկը, մինչև իսկ քահանայի հաղորդատուփը, մինչև իսկ ինչ-որ գահի ամպհովանին զարդարած փետուրները: Իսկ երանգների խայտաբղետությունից, լույսի ու ստվերի սուր հակադրությունից առաջացած ցոլացումների արտասովոր բազմազանության շնորհիվ այս հրեշավոր պատկերները կենդանանում էին հազարավոր այլազան լուսեղեն երևույթներով: Թվում էր, թե ականջը լսում էր ընդհատ աղաղակներ, միտքը որսում էր անավարտ դրամաներ, աչքը նշմարում էր մարմրուն նշույլներ: Վերջապես, համառ փոշին իր թեթև քողն էր ձգել այս բոլոր առարկաների վրա, առաջացնելով զանազան և զարմանազան տեսլապատկերներ:

Քաղաքակրթություններով, գլուխգործոցներով, պաշտամունքներով, աստվածություններով, թագավորություններով շվայտություններով, բանականությամբ և խոլականությամբ խճողված այս երեք սրահները անծանոթը նախ համեմատեց բազմերեսակավոր մի հայելու հետ, որի յուրաքանչյուր երեսակը արտացոլում էր մի աշխարհ: Ստանալով այս ընդհանուր, աղոտ տպավորությունը, նա ցանկացավ կենտրոնանալ ինչ-որ հաճելի բանի վրա, բայց այդքան նայելուց, խոկալուց, անրջելուց հետո նա ընկավ ուժգին մի տենդի մեջ, որ գուցե հետևանք էր իր աղիքների մեջ մռնչացող քաղցի: Ազգային և անհատական այդքան գոյություններ տեսնելը, որոնց մասին էին վկայում նրանցից հետո վերապրող մարդկային այս ձեռագործները, ի վերջո ընդարմացրեց երիտասարդի զգայարանները. նրան վաճառատուն բերող ցանկությունը կատարվեց — նա դուրս եկավ իրական կյանքից, աստիճանաբար բարձրացավ դեպի գաղափարական մի աշխարհ, հասավ հոգեզմայլության կախարդական պալատները, ուր տիեզերքը նրան երևաց բեկորների ու հրացոլքների մեջ, ինչպես մի ժամանակ ապագան, շողալով, սուրբ Հովհաննեսի աչքերին երևաց Պաթմոսում[14]:

---

[14] **Ապագան, շողալով, սուրբ Հովհաննեսի աչքերին երևաց Պաթմոսում** — ըստ քրիստոնեական ավանդության, ապագայի տեսիլքները Հովհաննես առաքյալին երևացին Պաթմոս կղզում (Եգեյան ծով): Այդ տեսիլքները նկարագրված են «Հայտնության» մեջ:

Շնորհալի և սարսափելի, խավար և պայծառ, հեռավոր և մերձավոր բազմաթիվ ցավագին պատկերներ նրա առջև վեր կացան զանգվածներով, բյուրյակներով, սերունդներով։ Խստամբեր, խորհրդավոր Եգիպտոսը բարձրացավ իր ավազուտներից՝ սև ապարոշով փաթաթված մումիայի կերպարանքով. նրան հետևեցին փարավոնները, որոնք ժողովուրդներ էին թաղում իրենց դամբարանները կառուցելու համար և Մովսեսը, և հրեաները, և անապատը,— նա տեսավ հնադարյան և հանդիսավոր մի ամբողջ աշխարհ։ Գալարաձև և սպիտակափայլ մի սյան վրա թարմագեղ ու հմայիչ մի մարմարե արձան նրան խոսեց Հունաստանի և Իոնիայի հեշտագրգիռ առասպելների մասին։ Ա՛հ, ո՛վ նրա տեղը չէր ժպտա, տեսնելով կարմիր ֆոնի վրա դեռատի թխագեղ աղջկան, որ պարում էր էտրուսկյան մի նուրբ կավամանի վրա, Պրիապոս[15] աստծու առջև, որին նա ողջունում էր ցնծագին։ Հանդիպակաց կողմում լատին մի թագուհի գրգանքով փայփայում էր իր քիմեռային։ Կայսերական Հռոմը իր բոլոր քմահաճույքներով շնչում էր այստեղ, երևակայության մեջ զարթեցնելով բաղնիքը, մահիճը, իր Տիբուլլային սպասող անհոգ երազուն Հուլիայի[16] պճնազգեստը։ Արաբական թալիսմանների զորությամբ օժտված Կիկերոնի գլուխը հիշեցնում էր ազատ Հռոմը և երիտասարդի առջև բաց անում Տիտոս Լիվիոսի էջերը։ Երիտասարդը դիտեց senatus populusque romanus-ը[17] հյուպատոսը, սակրավոր թիկնապահները, ոսկեհուռ պարեգոտները, Ֆորումի պայքարները, զայրացած ժողովուրդը դանդաղորեն տողանցում էին նրա առջև, ինչպես երազի մշուշապատ տեսիլներ։ Վերջապես, այս բոլոր պատկերների վրա իշխում էր քրիստոնեական Հռոմը։ Մի նկար բաց էր անում երկինքը, և նա տեսավ ոսկե ամպի մեջ սուզված, հրեշտակներով շրջապատված կույս Մարիամին, որ նսեմացնում էր արևի պայծառությունը և լսում տրտունջները դժբախտների, որոնց հեզորեն ժպտում էր այս վերածնված Եվան։ Երբ երիտասարդը դիպավ Վեզուվի և Էտնայի լավաներից պատրաստված մի մոզաիկի, նրա հոգին սլացավ դեպի ջերմ ու ոսկեվառ Իտալիան. նա ներկա եղավ Բորջաների[18] գինարբուքներին, շրջեց Աբրուցցիի լեռներով, տենչաց իտալական տարփանքները, տոչորվեց երկար սևաթույր աչքերով սպիտակ դեմքերի համար։ Նա սարսուռով գուշակեց ամուսնու սառը սրով ընդհատված գիշերային արկածների վախճանը, երբ տեսավ միջնադարյան մի դաշույն, որի երախակալը պատրաստված էր ժանյակի նրբությամբ և որի ժանգը նման էր արյան բծերին։ Հնդկաստանն իր կրոններով վերակենդանացել էր սրածայր, լայներիզ ու բոժոժավոր փեղույր դրած և ոսկի ու մետաքս հագած մի կուռքով։ Այս կուռքի մոտ փռված եղեգնահյուս փսիաթը, որ գեղեցիկ էր, ինչպես նրա վրա թավալված բայադերան, դեռ արձակում էր հնդկեղեգնի բուրմունքները։ Չինական մի հրեշ, որի աչքերը շիլ էին, բերանը ծուռ, մարմինը կոր, ներկայացնում էր հոգին

---

[15] **Պրիապոս** — հունական դիցաբանության մեջ պտղաբերության, զգայական հաճույքների աստվածը։

[16] **Իր Տիբուլլային սպասող անհոգ ու երազուն Հուլիան** — Տիբուլլան հռոմեական սիրերգակ բանաստեղծ է Օգոստոսի դարաշրջանում։ Այստեղ նրա անունը գործածված է փոխաբերական իմաստով իբրև սիրո երգիչ։ Հուլիան Օգոստոս կայսեր դուստրն է, որ հռչակված էր իր գեղեցկությամբ և բազմաթիվ սիրային արկածներով։

[17] Հռոմեական սենատը և ժողովուրդը (լատ.)։

[18] **Բորջաներ** — մի տոհմ, որ մեծ դեր խաղաց XV դարի և XVI դարի սկզբի Իտալիայի քաղաքական կյանքում։ Բորջաները հայտնի էին իրենց շվայտությամբ և դաժանությամբ։

հնարագետ մի ժողովրդի, որը, միշտ միօրինակ գեղեցկությունից հոգնած, անասելի հաճույքներ է գտնում տգեղությունների բազմազանության մեջ: Բենվենուտո Չելլինիի արվեստանոցից դուրս եկած մի աղամանի տեսքը երիտասարդին փոխադրեց դեպի Վերածնունդի ժամանակները, երբ արվեստներն ու սանձարձակությունը ծաղկում էին, երբ տիրակալները զվարճանում էին հպատակների չարչարանքներով, երբ պերճաղիճների գիրկն ընկած եկեղեցու իշխանները, ողջախոհության վճիռներ էին արձակում հասարակ քահանաների համար: Երիտասարդը տեսավ Ալեքսանդրի նվաճումները մի խորաքանդակի վրա, Պիսարրոյի[19] կոտորածները՝ պատրույգավոր մի հրացանի մեջ, ապերասան, բորբոքուն, անողոք կրոնական պատերազմները՝ մի սաղավարտի ներսում: Ապա ցայտեցին ասպետական ժամանակների ծիծղուն պատկերները վարպետորեն ընդելուզված և հղկված միլանական մի լանջազրահից, որի դիմապանակի միջով դեռ փայլում էին պալադինի աչքերը:

Կահագործությունների, հնարագիտությունների, նորաձևությունների, ստեղծագործությունների, ավերածությունների այս օվկիանը երիտասարդի համար կազմում էր անվերջանալի մի պոեմ: Ձևերը, գույները, մտքերը — ամեն ինչ վերակենդանացել էր այստեղ, բայց ոչ մի բան լիավարտ տեսքով չէր ներկայանում հոգուն: Բանաստեղծը պետք է ավարտեր ուրվագծերը մեծ նկարչի, որ պատրաստել էր այս անհուն երանգապնակը, որի վրա շռայլորեն և անփութորեն շաղ էին տրված մարդկային կյանքի անհամար դեպքերը: Աշխարհ ընդգրկելուց, երկրներ, դարաշրջաններ, թագավորություններ տեսնելուց հետո երիտասարդը վերադարձավ անհատական կյանքերին: Նա նորից հետաքրքրվեց անձերով, մասնադեպերով, զանց առնելով ազգերի կյանքը, որը շատ էր ճնշիչ մի սոսկական մարդու համար:

Ահա այնտեղ նիրհում էր Ռույշիի թանգարանից[20] բերված մոմաձույլ մի երեխա, և այդ դյութական էակը երիտասարդին հիշեցրեց իր անտիական հասակի ուրախությունները: Երբ նա տեսավ մի դեռատի տայիտուհու կուսական կիսամերկության հմայիչ պատկերը, նրա վառ երևակայությունն իրեն նկարեց բնության պարզունակ կյանքը, իսկական ամոթխածության անբիծ մերկությունը, մարդուն այնքան հատուկ ծուլության հեշտանքները, անդորրավետ կյանքը զովաշունչ և երազուն առվակի եզրին, բանանենիի ներքո, որ առանց մշակության քաղցրահամ մանանա է մատակարարում մարդկանց: Բայց հանկարծ, անհամար խեցեմորթների սադափների պսպղումներից ներշնչված, ծովասեզեր, ջրիմուռներ և ատլանտյան փոթորիկներ բուրող աստղաձև բուստերի տեսքից ոգեշնչված, նա դարձավ ծովահեն և ստացավ Լարայի[21] պոետական վեհատեսիլ կերպարանքը: Ապա, հիանալով նուրբ մանրանկարներով, խաժագույն և ոսկեգույն արաբեսկներով, որոնցով էր զարդարված մի թանկարժեք ձեռագիր պատարագամատյան, երիտասարդը մոռացավ ծովի մռնչյունները: Մեղկորեն օրորված խաղաղ մտորումներից, նա նորից կառչեց պարապմունքներին ու

---

[19] **Պիսարրո Ֆրանցիսկո** (1475—1541) — իսպանացի արկածախնդիր: Պերուի դաժան նվաճողը:

[20] **Ռույշի թանգարան** — Ռույշը հոլանդացի բժիշկ էր, ստեղծել էր անատոմիական հարուստ հավաքածու, որը 1717 թվին Պետրոս I-ը գնեց և ուղարկեց Պետերբուրգ:

[21] **Լարա** — Բայրոնի համանուն պոեմի հերոսը. հպարտ, տիրական մարդու տիպար:

գիտությանը, երազեց հոգսերից զերծ, հաճույքներից զերծ վանական պարարտ կյանքը և պառկեց մի խցի խորքում, կամարակապ պատուհանից դիտելով իր վանքի մարգագետինները, անտառներն ու այգիները: Տենիրսի մի քանի նկարների առջև նա իր ուսերի վրա զցեց զինվորական տառատոկը կամ բանվորական գրգլյակը. նա ցանկացավ կրել ֆլամանների աղտոտ ու ծխոտ գլխանոցը, նա հարբեց գարեջրով, քարտ խաղաց նրանց հետ և ժպտաց գրավիչ գիրություն ունեցող մի գեղջկուհու: Նա սրսփաց՝ տեսնելով Միերիսի նկարած ձյան տեղումը, կռվեց՝ դիտելով Սալվատոր Ռոզայի նկարած մարտը: Նա ակնապիշ դիտեց իլլինոյսյան կացինը և զգաց, թե ինչպես է Իրոքեսյան դանակը քերթում իր գանգամաշկը: Տեսնելով սքանչելի մի վին, նա այդ հանձնեց դղյակատիրուհուն, վայելեց նրա քաղցրահնչուն ռոմանսը, նրան հայտնեց իր սերը գոթական բուխարու մոտ, երեկոյան մթնշաղի մեջ, որտեղ կորչում էր նրա հավանության հայացքը: Երիտասարդը որսաց բոլոր ուրախությունները, ըմբռնեց բոլոր վշտակրությունները, տիրապետեց գոյության բոլոր բանաձևերին և իր կյանքն ու զգացումները այնքան առատորեն շռայլեց բնության այս տեսիլների, այս սին պատկերների առջև, որ իր ոտնաձայնը հոգում հնչում էր իբրև այլ աշխարհի հեռավոր ձայնը, ինչպես Փարիզի ժխորն է հասնում Աստվածամոր տաճարի աշտարակներին:

Բարձրանալով երկրորդ հարկի սրահները տանող ներքին սանդուղքով, երիտասարդը յուրաքանչյուր աստիճանի վրա տեսավ պատից կախված վահաններ, զրահներ, զենքեր, գեղաքանդակ տապանակներ, փայտե արձաններ: Հալածված ամենազարմանալի պատկերներից, զմայլելի արարածներից, որոնք նրա առջև էին հայտնվում մահվան և կյանքի սահմանի վրա, նա քայլում էր երազի թովչանքների միջով: Վերջապես, կասկածելով իր սեփական գոյության վրա, նա՝ ոչ լրիվ մեռած, ոչ լրիվ կենդանի՝ նմանվեց այս զարմանահրաշ առարկաներին: Երբ նա մտավ նոր սրահները, սկսում էր մթնել, բայց լույսը անօգուտ էր թվում ոսկուց և արծաթից պսպղացող գանձերի համար, որ դիզված էին այնտեղ: Միլիոններ մսխած և ձեղնահարկերում մահացած վատնիչների ամենաթանկ քմահաճույքները ներկայացված էին մարդկային խոլությունների այս ընդարձակ շուկայում: Հարյուր հազար ֆրանկ վճարված և ապա հարյուր սուով վաճառված մի թանաքաման ընկել էր մի գաղտափականքի կողքը, որի գինը անցյալում բավական կլիներ որևէ թագավորի փրկանքի համար: Մարդկային ցեղը այստեղ երևում էր իր թշվառության բոլոր ճոխություններով, իր հսկայական ճղճիմությունների բովանդակ փառքով: Ժան Գուժոնի գծագրությունների համաձայն փորագրված եբենոսե մի սեղան, որը իսկական պաշտամունքի առարկա կարող է լինել արվեստագետի համար, և որը մի ժամանակ մի քանի տարիների աշխատանք է արժել, գուցե ձեռք էր բերված վառելափայտի գնով: Շնորհալի հուրիների ձեռքով պատրաստված թանկարժեք արկղիկներ, կարասիներ շեղջակուտված էին այստեղ առանց որևէ դասավորության:

— Դուք այստեղ միլիոններ ունեք,— բացականչեց երիտասարդը հասնելով այն սենյակը, որով ավարտվում էր անցյալ դարի վարպետների ձեռքով ոսկեզարդված ու դրվագված սրահների երկար շարքը:

— Ասեք՝ միլիարդներ,— պատասխանեց գեր հանձնակատարը:— Բայց սա դեռ ոչինչ է. բարձրացեք մյուս հարկը և դուք կտեսնեք:

Անծանոթը, հետևելով իր ուղեցույցին, հասավ չորրորդ պատկերասրահը, և այնտեղ հաջորդաբար իր հոգնած աչքերի առջևով անցան Պուսենի բազմաթիվ նկարները, Միքելանջելոյի հոյակերտ մի արձանը, Կլոդ Լոռենի մի քանի սքանչելի բնանկարները, Ստերնի մի էջին նմանվող Գերարդ Դոուի մի դիմանկարը, Ռեմբրանդտի, Մուրիլլոյի, Վելասկեսի կտավները, որոնք մռայլ ու գունագեղ էին, ինչպես Բայրոնի պոեմը. ապա հնամենի խորաքանդակներ, ագատե ըմպանակներ, հիանալի օնիքսներ... Մի խոսքով, աշխատանքներ, որոնք կարող էին զզվեցնել աշխատանքը, կուտակված գլուխգործոցներ, որոնք կարող էին ատելի դարձնել արվեստը և սպանել ոգևորությունը: Երիտասարդը հասավ Ռաֆայելի «Կույս»-ի առջև, բայց նա ձանձրացել էր Ռաֆայելից: Կորրեջոյի մի դիմանկարը իր վրա չհրավիրեց նույնիսկ մի հայացք, որին արժանի էր: Պորփյուրե հին ու անգին մի անոթ, որի դրվագումները ներկայացնում էին հռոմեական ամենակամշոտ և ամենասանձարձակ Պրիապոսին, ուրախությունը մի որևէ Կորիննայի[22], հազիվ արժանացավ ժպիտի: Երիտասարդը շնչահեղձ էր լինում անհետացած հիսուն դարերի մնացորդների տակ, իրեն հիվանդ էր զգում այս բոլոր մարդկային մտածումներից. նա ոգեսպառվել էր ճոխությունից ու արվեստներից, ճմլվել էր այս վերածնվող ձևերի ներքո, որոնք, չար ոգու կամքով իր ոտքերի տակ ծնված հրեշների նման, անվերջանալի մարտի էին հրավիրում նրան:

Իր քմահաճություններով նման ժամանակակից քիմիային, որը ամեն գոյացություն գազի է հանգեցնում, մի՞թե մարդկային հոգին չի բաղադրում ահավոր թույներ՝ իր ուրախությունների, ուժերի և գաղափարների արագ կենտրոնացումով: Մի՞թե շատ մարդիկ չեն կործանվում իրենց ներքին էության մեջ հանկարծ տարածված մի որևէ հոգեկան թթվուտի շանթահարիչ ազդեցության տակ:

— Ի՞նչ կա այս արկղի մեջ,— հարցրեց երիտասարդը. մտնելով մի ընդարձակ ներքնասրահ, մարտական փառքերի, մարդկային ճիգերի, քմահաճությունների և հարստությունների վերջին հավաքատեղին, որտեղ նա մատով ցույց տվեց մահոգենուց պատրաստված և արծաթե շղթայից կախված մի մեծդի արկղ:

— Օ՜, դրա բանալին տիրոջ մոտ է,— ասաց գեր հանձնակատարը խորհրդավոր տեսքով:— Եթե դուք կցանկանաք տեսնել այդ նկարը, ես կհամարձակվեմ այդ մասին հայտնելու տիրոջը:

— Կհամարձակվե՞ք,— զարմանքով հարցրեց երիտասարդը:— Մի՞թե ձեր տերը իշխան է:

— Չգիտեմ,— պատասխանեց հանձնակատարը:

Նրանք մի պահ իրար նայեցին, երկուսն էլ հավասարապես զարմացած: Ապա, անծանոթի լռությունը ցանկություն հասկանալով, հանձնակատարը նրան մենակ թողեց ներքնասրահում:

Կյուվիեի[23] երկրաբանական երկերը կարդալով, դուք երբևէ սուզվե՞լ եք տարածության և ժամանակի անհունության մեջ: Նրա հանճարով առաջնորդված դուք երբևէ սավառնե՞լ եք

---

[22] **Կորիննա** — հին հույն բանաստեղծուհի:

[23] **Ժորժ Կյուվիե** (1769—1832) — ֆրանսիացի նշանավոր բնագետ և երկրաբան, հիմնադիրը համեմատական անատոմիայի և հնեաբանության, մի գիտության, որ զբաղվում է անցած

անցյալի անեզր անդունդի վրա: Մոնմարտրի քարահանքերի տակ կամ Ուրալի թերթաքարերի մեջ շերտ առ շերտ, խավ առ խավ երևան բերելով այն կենդանիները, որոնց բրածո մնացորդները պատկանում են անդրջրհեղեղյան ժամանակներին, մարդ սարսափում է՝ իր առջև բացված տեսնելով միլիարդավոր տարիներ, միլիոնավոր ժողովուրդներ, որոնց մոռացել են մարդկային թույլ հիշողությունը և աստվածային անհեղլի ավանդությունը, և որոնց աճյունը դիզվելով մեր երկրագնդի մակերեսի վրա՝ կազմում է երկու ոտնաչափ հող, որը մեզ տալիս է հաց և ծաղիկներ: Մի՞թե Կյուվիեն մեր դարի մեծագույն բանաստեղծը չէ: Լորդ Բայրոնը բառերով վերարտադրեց մի քանի հոգեկան հույզեր, բայց մեր անմահ բնագետը աշխարհներ վերակազմեց ժամանակից սպիտակած ոսկորներով, Կադմոսի[24] նման քաղաքներ վերաշինեց ատամներով, ածխահանքի մի քանի կտորների միջոցով հազարավոր անտառներ վերաբնակեցրեց կենդանաբանության բոլոր գաղտնիքներով, հսկաների սերունդներ վերահաստատեց մի մամոնտի ոտքով: Պատկերները բարձրանում, խոշորանում են և ձևավորում երկրամասերի տեսքը՝ իրենց վիթխարի հասակներին համապատասխան: Նա բանաստեղծ է իր թվերով. նա վսեմ է, երբ յոթի մոտ դնում է զրո: Նա հարուցանում է անէացածը՝ առանց արհեստական մոգական բառեր արտասանելու. նա հողից հանում է գաջաքարի մի մասնիկ և բացականչում՝ «Տեսեք»: Եվ հանկարծ մարմարները կենդանանում են, մահը կենսավորվում է, աշխարհը բացահայտվում: Հսկայական էակների անթիվ դինաստիաներից հետո, ձկների ցեղերից և կակղամորթների տեսակներից հետո երևում է, վերջապես, մարդկային զարմը, այլասերվածքը հաղթակազմ մի տիպի, որին ճմլել է, գուցե, արարիչը: Գիտունի հետահայաց մտքից ոգեշնչված՝ այս ճռզած, երեկ ծնված մարդիկ կարող են թափանցել քաոսի մեջ, անվախճան մի հիմն հնչեցնել և տիեզերքի անցյալը պատկերացնել մի տեսակ հետադարձ Հայտնության տեսքով: Միակ մի մարդու ձայնով տեղի ունեցող այս ահավոր հարության ի տես՝ մենք ողորմելի ենք գտնում կյանքի այս վայրկյանը, այս փշրանքը, որ մեզ շնորհված է բոլոր ոլորտների համար ընդհանուր այն անանուն անհունությունից, որ մենք կոչում ենք **ժամանակ**: Այդքան խորտակված տիեզերքների բեկորների տակ թաղված, մենք մեզ հարց ենք տալիս՝ ինչի՞ են պետք մեր փառքերը, մեր ատելությունները, մեր սերերը, և մի՞թե արժե ապրել՝ ապագայում ինչ-որ մի անշոշափելի կետ դառնալու համար: Ներկայից պոկված՝ մենք մեռած ենք, մինչև այն ժամանակ, երբ մեր սպասավորը ներս կմտնի և մեզ կասի. «Կոմսուհին խնդրեց հայտնել, որ սպասում է ձեզ»:

Տեսնելով այս հրաշալիքները, որոնք երիտասարդին ներկայացրել էին մեզ հայտնի ամբողջ աշխարհը, նրա հոգին ուժասպառվեց, ինչպես ուժասպառվում է փիլիսոփայի հոգին, երբ նա զբաղվում է անհայտ աշխարհի գիտական հետազննությամբ. ավելի սաստիկ, քան երբևէ, նա ցանկացավ մեռնել և ընկավ փղոսկրե մի բազկաթոռի վրա, իր հայացքը հածելով անցյալի այս համայնապատկերի ցնորական տեսիլների վրա: Նկարները լուսավորվեցին, Կույսի գլուխները նրան ժպտացին, արձանները կյանքի խաբուսիկ զույն ստացան: Այն տենդագին տագնապի հետևանքով, որ բորբոքվում էր նրա հիվանդ ուղեղում, արվեստի այս գործերը ստվերի քողի տակ կենդանացան, շարժվեցին, հորձանապտույտ պարեցին նրա առջև.

երկրաբանական շրջաններում երկրի վրա գոյություն ունեցած կենդանական և բուսական աշխարհի հետազոտությամբ:

[24] **Կադմոս** — հին հունական քաղաք Թեբեի առասպելական հիմնադիրը: Ըստ ավանդության, այդ քաղաքի առաջին բնակիչները աճեցին այն վիշապի ատամներից, որ ցանել էր Կադմոսը:

յուրաքանչյուր հախճապակե հրեշ նրան ծամածռություն արեց, նկարների մեջ ներկայացված անձանց կոպերը փակվեցին, որպեսզի հանգստություն տան աչքերին: Այս բոլոր պատկերները սարսեցին, ոստնեցին, տեղաշարժվեցին, մեկը ծանրորեն, մեկը թեթևորեն, մեկը շնորհալիորեն, մեկը բրտորեն, նայած իր բարքին, հատկությանն ու կառուցվածքին: Դա Բրոկենի[25] վրա դոկտոր Ֆաուստի տեսած տեսիլներին արժանի խորհրդավոր մի հավաքույթ էր: Բայց ծայրահեղ հոգնությունից, տեսողության լարումից կամ վերջալույսի քմահաճույքներից առաջացած այս օպտիկական երևույթները չէին կարող սարսափեցնել անծանոթին: Կյանքի սարսափները անզոր էին ազդելու մի հոգու վրա, որ ընտելացած էր մահվան սարսափներին: Մի տեսակ ծաղրական կարեկցությամբ նա նույնիսկ նպաստեց անհեթեթություններին այս բարոյական գալվանիզմի, որի հրաշալիքները միանում էին վերջին խոհերին, որոնք դեռ կենսազգացողություն էին տալիս նրան: Նրա շուրջը այնքան խոր լռություն էր տիրում, որ նա շուտով անձնատուր եղավ քաղցր երազանքների, որոնց պատկերները աստիճանաբար աղոտացան, ասես մոգականորեն երանգ առ երանգ հետևելով վերջալույսի աստիճանական նվազումներին: Երկնակամարից անհետացող լույսը, գիշերվա դեմ պայքարելով, արձակեց իր վերջին շառագույն ցոլքը. երիտասարդը բարձրացրեց գլուխը և տեսավ հազիվ լուսավորված մի կմախք, որը տարակուսանքով գլուխը աջ ու ձախ էր օրորում, կարծես ուզում էր ասել. «Մեռյալները դեռ քեզ չեն սպասում»: Քունը վանելու համար ձեռքը ճակատին տանելիս, երիտասարդը որոշակի զգաց մի զով շունչ, ինչ-որ մազոտ բան հպեց նրա այտերին, և նա սարսռաց: Ապակիները խուլ զնգոցով արձագանքեցին, և նա կարծեց, որ գերեզմանային խորհրդավորություններին հատուկ այս սառը շոյանքը գալիս էր ինչ-որ չղջիկից: Մայրամուտի դժգույն ցոլքերը դեռ մի րոպե նրան թույլ տվին աղոտ կերպով նշմարելու իրեն շրջապատած ուրվապատկերները, ապա այս ամբողջ մեռյալ բնությունն անհետացավ համատարած մթության մեջ: Գիշերը, մահվան ժամը, հանկարծակի վրա հասավ: Դրանից հետո նա որոշ ժամանակ երկրային իրերի մասին որոշակի ոչինչ չընկալեց կամ այն պատճառով, որ խորասուզվեց անրջանքի մեջ, կամ այն պատճառով, որ անձնատուր եղավ իր հոգնությունից սրտակեղեք խոհերի խռնումից առաջացած քնեածությանը: Հանկարծ նրան թվաց, թե մի ահավոր ձայն կանչում է իրեն, և նա ցնցվեց, ինչպես եթե անդունդ գահավիժեր այրող մղձավանջի ժամանակ: Նա աչքերը փակեց. մի վառ լույսի շողյունները շլացնում էին նրան. նա տեսավ, թե ինչպես խավարի մեջ մի տեղ շողում էր կարմրավուն մի շրջանակ, որի կենտրոնում գտնվում էր մի ծերուկ, որ կանգնած էր լապտերը ձեռքին և իր վրա էր ուղղում լույսը: Չլսվեց, թե ինչպես նա ներս մտավ. նա չխոսեց և չշարժվեց: Ինչ-որ մոգական բան կար այս երևույթի մեջ: Նույնիսկ ամենաանվեհեր մարդը, քնի մեջ այսպես հանկարծակիի գալով, անպայման կցնցվեր ծերուկի այդ կերպարանքից, որը կարծես մոտակա գերեզմանից էր դուրս եկել: Անսովոր երիտասարդական փայլը, որ կենդանացրել էր այս յուրատեսակ ուրվականի անշարժ աչքերը, անծանոթին հիմք չէր տալիս հավատալու գերբնական երևույթներին. բայց և այնպես, այն կարճ ժամանակամիջոցում, որ նրա քնաշրջիկ կյանքը բաժանել էր իրական կյանքից, անծանոթը մնաց Դեկարտի հանձնարարած

---

[25] **Բրոկեն** — լեռ հարավային Գերմանիայում: Ըստ ժողովրդական ավանդության, Բրոկենի վրա գիշերները տեղի է ունենում վհուկների հավաք: Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության մեջ Մեֆիստոֆելը Ֆաուստին տանում է Բրոկենի վրա, վհուկների հավաքին:

փիլիսոփայական տարակուսանքի մեջ[26] և ակամա ենթարկվեց ազդեցությանը անբացատրելի մտապատրանքների, որոնց խորհրդավորությունը մերժում է մեր հպարտությունը կամ իզուր է ճգնում վերլուծել մեր անզոր գիտությունը:

Պատկերացրեք տխեղծ և վտիտ մի ծերուկ, սև թավշյա խալաթով, մեջքը սեղմված մետաքսե հաստ լարով: Գլխին թավշյա թասակ, նույնպես սև, որի տակից երկու կողմերի վրա արձակված էին սպիտակ մազերի երկար փնջերը. թասակը նստել էր գանգի վրա, խիստ գծերով շրջանակելով ճակատը: Խալաթը պարուրել էր մարմինը լայն պատանքի նման, և երևում էր միայն նեղ ու գունատ դեմքը: Եթե չլիներ լաթով փաթաթված գավազանի նմանվող չոր բազուկը, որ ծերուկը բարձր էր պահել՝ լապտերի ամբողջ լույսը երիտասարդի վրա ուղղելու համար, կարելի էր կարծել, որ այդ դեմքը կախված էր օդում: Ալեհեր և սրածայր մորուքը ծածկել էր այս արտասովոր էակի ծնոտը և նրան տվել էր նմանությունն այն հրեական գլուխների, որոնք իբրև բնատիպ են ծառայում նկարիչներին, երբ նրանք ուզում են Մովսեսին պատկերել: Այդ մարդու շրթունքները այնքան անգույն և այնքան բարակ էին, որ հատուկ ուշադրություն էր պետք՝ սպիտակ դեմքի վրա բերանի գիծը որոշելու համար: Նրա լայն, կնճռոտ ճակատը, գունատ և փոս այտերը, թարթիչներից և հոնքերից զուրկ մանր, կանաչ աչքերի անողոք խստությունը անծանոթին կարող էին կարծել տալ, թե նա Գերարդ Դոուի պատկերած Ոսկի կշռողն է, որը դուրս է եկել շրջանակից: Հավատաքննիչի խորամանկությունը, որ մատնվում էր այտերն ակոսած խորշոմներից և քունքերի մոտի ծալքերից վկայում էր կյանքի խոր ճանաչողության մասին: Անհնարին բան էր խաբել այս մարդուն, որը կարծես օժտված էր մարդկանց ամենաթաքուն մտքերը գուշակելու ձիրքով: Երկրագնդի բոլոր ժողովուրդների բարքերի իմացությունն ու նրանց իմաստությունը կենտրոնացած էին նրա սառը հոգում այնպես, ինչպես ամբողջ աշխարհի ստեղծագործությունները դիզված էին նրա վաճառատան փոշոտ սրահներում: Դուք կարող էիք նրա դեմքի վրա կարդալ պայծառ հանդարտությունը մի աստծու, որ ամեն ինչ տեսնում է, կամ հպարտ ուժը մի մարդու, որ ամեն ինչ տեսել է: Նկարիչը, վրձինի երկու շարժումով նրան տալով համապատասխան արտահայտություն, կարող էր այդ դեմքը դարձնել Հավիտենական հոր գեղեցիկ պատկերը կամ Մեֆիստոֆելի հեգնող դիմակը, որովհետև նրա ճակատին դրոշմված էր գերագույն ուժ, իսկ բերանին՝ չարագուշակ ծաղր: Իր անսահման զորությամբ բարձելով մարդկային բոլոր տառապանքները, նա ըստ երևույթին սպանել էր նաև երկրային ուրախությունները: Երիտասարդը սարսռաց, երբ զգաց, որ այս ծեր ոգին բնակվում է աշխարհից հեռու, օտար մի ոլորտում, և այնտեղ նա ապրում է միայնակ, առանց վայելքների, որովհետև նա այլևս պատրանքներ չունի, առանց վշտերի, որովհետև նա այլևս հաճույքներ չգիտե: Ծերունին կանգնած էր անշարժ, անսասան, ինչպես աստղը լուսեղեն ամպի մեջտեղ: Նրա կանաչ աչքերը, որոնք լի էին ինչ-որ հանդարտ խորամանկությամբ, ասես լուսավորում էին հոգեկան աշխարհը, ինչպես նրա լապտերը լուսավորում էր այս խորհրդավոր ներքնասրահը:

---

[26] **Դեկարտի հանձնարարած փիլիսոփայական տարակուսանքի մեջ** — Ռենե Դեկարտը (1596—1650) ֆրանսիացի փիլիսոփա է: Կույր հավատին նա հակադրում էր բանականությունը: Տարակույսը Դեկարտի փիլիսոփայական դատողությունների ելակետն էր:

Այսպիսին էր այն արտասովոր տեսարանը, որ հանկարծ գրավել էր երիտասարդին, երբ նա, մահվան խոհերով և ցնորական տեսիլներով օրորվելուց հետո, բաց արեց աչքերը: Եթե նա ապշեց, եթե նա որոշ ժամանակ հավատաց այս ուրվականին, ինչպես երեխան հավատում է իր դայակի պատմած հեքիաթներին, ապա այդ սխալը պետք է վերագրել իր կյանքի և իմացականության վրա մռայլ մտքերի ձգած քողին, իր գրգռված նյարդերին, այն ահավոր դրամային, որի տեսարանները նրան մատակարարում էին տանջալի հաճույքներ, որոնք նման են մի կտոր օպիումի մեջ գտնված հաճույքներին: Այս տեսիլը տեղի ունեցավ Փարիզում, Վոլտերի առափնյա փողոցի վրա, XIX դարում, այնպիսի վայրում և այնպիսի ժամանակ, երբ մոգությունը հնարավոր չէ: Գտնվելով այն տան մոտ, ուր վախճանվել էր ֆրանսիական անհավատության աստվածը[27], լինելով Գեյ-Լյուսակի[28] և Արագոյի աշակերտը, արհամարհելով իշխանավորների բոլոր ձեռնածությունները, երիտասարդը ակնհայտորեն անձնատուր եղավ պոետական թովչանքներին, որոնց հաճախ մենք անձնատուր ենք լինում, ասես նրա համար, որ խույս տանք հուսալքիչ ճշմարտություններից և մարտահրավեր նետենք աստծու ամենակարողությանը: Ուստի նա, ինչ-որ արտասովոր զորության անբացատրելի նախազգացումից հուզված, դողաց այս լույսի և այս ծերունու առջև. բայց այդ հուզումը նման էր այն հուզումին, որ մենք բոլորս զգացել ենք Նապոլեոնի առջև կամ հանճարով փայլած և փառքով պսակված մի մեծ մարդու ներկայությամբ:

— Դուք կամենո՞ւմ եք տեսնել Ռաֆայելի **Հիսուս Քրիստոսը**,— քաղաքավարությամբ նրան հարցրեց ծերունին, մի ձայնով, որի հստակ և հատու ինչյունի մեջ ինչ-որ մետաղային բան կար:

Նա լապտերը դրեց ջարդված մի սյան վրա այնպես, որ մթին արկղը լուսավորվեց ամեն կողմից:

Լսելով Հիսուս Քրիստոսի և Ռաֆայելի սրբազան անունները, երիտասարդը բուռն հետաքրքրություն ցուցաբերեց, որին անշուշտ սպասում էր ծերունին, քանի որ նա իսկույն սեղմեց զսպանակը: Հանկարծ մահոգենու արկղի դռնակը անձայն սահեց մի անցքի մեջ, բաց անելով կտավը անծանոթի հիացած հայացքին: Այս անմահ ստեղծագործության առջև անծանոթը մոռացավ վաճառանոցի արտասովոր տեսարանները, իր քնի քմայքները, նորից մարդ դարձավ, իմացավ, որ ծերունին երկրային, կենդանի և ամենևին ոչ երևակայական էակ է, և նա նորից սկսեց ապրել իրական աշխարհում: Այս կտավի ներկայացրած աստվածային դեմքի գորովալի ողորմածությունը, մեղմանուշ պայծառությունը անմիջապես ազդեցություն գործեցին նրա վրա: Երկնքից զեղած մի բուրմունք ցրիվ տվեց այն դժոխային տանջանքները, որոնք այրում էին նրան մինչև ոսկորների ծուծը: Փրկչի գլուխը ասես դուրս էր գալիս սև ֆոնով պատկերված խավարից. ճաճանչափայլ մի լուսապսակ շողշողում էր նրա մազերի բոլորտիքը, որոնցից ասես դուրս էր ցայտում այդ լույսը. նրա ամբողջ դեմքը արտահայտում էր պերճախոս մի համոզում, որ հեղեղորեն արտազեղում էր բոլոր դիմագծերից: Կարմրավառ

---

[27] **Ֆրանսիական անհավատության աստված** — այսինքն՝ նշանավոր ֆրանսիացի փիլիսոփա-լուսավորիչ Վոլտերը (1694—1778), որ անդուլ պայքար էր մղել կրոնական մոլեռանդության և խավարամտության դեմ:

[28] **Գեյ–Լյուսակ** (1778—1850), **Արագո** (1786—1853) — նշանավոր ֆրանսիացի գիտնական-ֆիզիկոսներ:

շրթները ասես հենց նոր արտաբերել էին կյանքի խոսքը, և հանդիսատեսը նրա սրբազան արձագանքը որոնում էր օդում, լսում էր լռության մեջ, նրա մասին հարցնում էր ապագային, այն գտնում էր անցյալի դասերի մեջ: Ավետարանը հաղորդվում էր հանդարտ պարզությամբ աստվածային աչքերի, որոնց էին ապավինում խռովահույզ հոգիները: Վերջապես, ամբողջ քրիստոնեական կրոնը կարելի էր կարդալ նրա հեզահամբույր և զմայլելի ժպիտի մեջ, որ կարծես արտահայտում էր այդ կրոնը խտացնող այս պատվիրանը՝ **Սիրեցեք միմյանց:**

Այս նկարը ներշնչում էր աղոթք, ուսուցանում էր թողություն, խեղդում էր եսասիրությունը, արթնացնում էր բոլոր քնած առաքինությունները: Ունենալով երաժշտության կախարդանքներին հատուկ առավելությունը, Ռաֆայելի այդ ստեղծագործությունը ձեզ ենթարկում էր հիշողությունների տիրական հմայքին, և նրա հաղթանակը կատարյալ էր, նկարիչը մոռացվում էր: Լույսի ազդեցությունն ավելի էր ուժեղացնում այս հրաշալիքի տպավորությունը. մերթ թվում էր, թե գլուխը շարժվում է հեռավոր մի ամպի ծոցում:

— Ես այս կտավի համար այնքան ոսկեդրամ եմ տվել, որ դրանցով կարելի էր ծածկել այն,— սառնորեն ասաց հնությունների առևտրականը:

— Դեհ, ինչ կա որ, ուրեմն նշանակում է մահ,— բացականչեց երիտասարդը, արթնանալով երազներից: Ծերունու խոսքը նրան վերադարձրեց դեպի իր ճակատագրական վիճակը, և նա անըմբռնելի հետևություններով իջավ վերջին հույսի բարձունքից, որին կառչել էր:

— Օ, ուրեմն ես իրավունք ունեի քեզանից զգուշանալու,— ասաց ծերունին, բռնելով երիտասարդի երկու ձեռքերը և մի ձեռքով մամլակի նման սեղմելով նրա դաստակները:

Անծանոթը թախծագին ժպտաց այդ թյուրիմացության վրա և մեղմ ձայնով ասաց.

— Է՛հ, պարոն, բնավ մի վախենաք, հարցը վերաբերում է իմ մահվան և ոչ թե ձեր... Ինչո՞ւ ես չխոստովանեմ իմ մի անմեղ խաբեությունը,— շարունակեց նա, նայելով անհանգստացած ծերունուն:— Սպասելով գիշերվան, երբ ես կկարողանայի խեղդվել առանց աղմուկ հանելու, եկա ձեր հարստությունները դիտելու: Ո՞վ չէր ների այս վերջին հաճույքը ուսումնական և բանաստեղծ մի մարդու:

Կասկածանքով լսելով կարծեցյալ գնորդին, հնությունների առևտրականը խորաթափանց հայացքով նայեց նրա տրտում դեմքին: Շուտով հանգստանալով նրա ցավագին խոսքերի անկեղծ շեշտից կամ, գուցե, նրա դժգույն դեմքի վրա կարդալով այն դժխեմ բախտը, որից քիչ առաջ դողացել էին խաղացողները, բաց թողեց նրա ձեռքերը: Բայց դեռ ունենալով որոշ կասկած, որը հետևանք էր նրա առնվազն հարյուրամյա տարիքի փորձառության, նա անփութորեն բազուկը երկարեց դեպի պահարանը, իբր թե նրա վրա հենվելու համար և այնտեղից վերցնելով փոքր դանակը, ասաց.

— Դուք, հավանաբար, երեք տարի իբրև արտահաստիքային պաշտոնյա ծառայում եք զանձատանը և դեռ ռոճիկ չեք ստանում, ճի՞շտ է:

Անծանոթը չկարողացավ ժպիտը զսպել և գլխով բացասական նշան արեց:

— Ձեր հայրը ձեզ շատ խստորեն մեղադրե՞լ է ձեր աշխարհ գալու համար: Կամ գուցե դուք պատվազրկվե՞լ եք:

— Եթե ես ուզեի պատվազրկվել, կապրեի:

— Ձեզ սուլե՞լ են Ֆյունամբյուլում[29]: Դուք հարկադրվել եք կուպլետնե՞ր հորինել, որպեսզի վճարեք ձեր սիրուհու թաղման համար: Գուցե դուք ոսկի դիզելու հիվանդությա՞մբ եք տառապում: Կամ գուցե դուք ուզում եք ձեր ձանձրո՞ւյթը հաղթահարել: Վերջապես, ի՞նչ մոլորություն է ձեզ ստիպում մեռնել:

— Բացատրություններ մի փնտրեք այն սովորական պատճառների մեջ, որոնցով է բացատրվում ինքնասպանությունների մեծ մասը: Որպեսզի ինձ ազատեմ իմ անլուր տանջանքները ձեզ հայտնելու պարտավորությունից, տանջանքներ, որոնք դժվար է արտահայտել մարդկային լեզվով, կասեմ միայն, որ ես ընկել եմ ամենախոր, ամենահետին, ամենանվաստացուցիչ թշվառության մեջ: Բայց ես մտադիր չեմ ոչ օգնություն, ոչ էլ մխիթարություն հայցել,— ավելացրեց երիտասարդը վայրենի հպարտությամբ, որ հակասում էր նախորդ խոսքերին:

— Է՛հ, է՛հ:

Այս երկու վանկերը, որ ծերունին արտաբերեց իբրև պատասխան, հիշեցրին փայտե զանգահար մուրճի ձայնը: Ապա նա շարունակեց.

— Առանց ձեզ ստիպելու, որ ինձ խնդրեք, առանց ձեզ կարմրացնելու և առանց ձեզ տալու ֆրանսիական մի սանտիմ, լևանտական մի փարա, սիցիլիական մի տարեն, գերմանական մի հելլեր, ռուսական մի կոպեկ, սկովտիական մի ֆարտինգ, հին աշխարհի մի սեստերց կամ մի օբոլ կամ նոր աշխարհի մի պիաստը, առանց ձեզ ոսկե, արծաթե, պղնձե, թղթե որևէ բան կամ դրամատոմս առաջարկելու, ես ուզում եմ ձեզ դարձնել ավելի հարուստ, ավելի հզոր, ավելի ազդեցիկ, քան կարող է լինել որևէ սահմանադրական միապետ:

Երիտասարդը կարծեց, որ ծերունին երեխայացել է և, շվարած, չգիտեր ինչ պատասխաներ:

— Շուռ եկեք,— ասաց հնությունների առևտրականը,— հանկարծ լապտերը բռնելով և նրա լույսն ուղղելով նկարին հանդիպակաց պատի վրա:— Նայեցեք այս **Շագրենի կաշուն**,— ավելացրեց նա:

Երիտասարդը ընդոստ վեր կացավ և որոշ զարմանքով նկատեց իր նստած աթոռի վերևում պատի վրա կախված **շագրենի** մի կտոր, որի ծավալը աղվեսի մորթու ծավալից ավելի չէր. բայց, ինչպես առաջին հայացքից անբացատրելի մի երևույթ, այս կաշին վաճառանոցում տիրող խոր խավարի մեջ արձակում էր այնպիսի պսպղուն ճառագայթներ, որ կարծես դա մի փոքրիկ գիսավոր աստղ լիներ: Երիտասարդը անվստահությամբ մոտեցավ այդ կարծեցյալ թալիսմանին, որն իրեն իբրև թե պետք է պահպաներ դժբախտությունից, և մտքում ծիծաղեց: Բայց և այնպես, շատ օրինական հետաքրքրությունից մղված, նա կռացավ, որպեսզի բոլոր կողմերից նայեր կաշուն, և շուտով հայտնաբերեց նրա անսովոր փայլի բնական պատճառը: Շագրենի սև, հատիկավոր մակերեսը այնքան խնամքով էր ողորկված ու փայլեցված, քմահաճ երակները այնքան ջինջ ու հստակ էին, որ, նման կարկեհանի երեսակներին, այս արևելյան

---

[29] **Ֆյունամբյուլ** — Փարիզի փոքր թատրոն, ուր ներկայացվում էին մնջախաղեր, զավեշտախաղեր, վոդեվիլներ:

կաշու կարկառները, ինչպես կիզակետեր, արձակում էին վառ ճաճանչների խուրձեր: Երիտասարդը այս երևույթի պատճառը մաթեմատիկորեն բացատրեց ծերունուն, որը պատասխանի փոխարեն ժպտաց չարահեգնությամբ: Այս բարձրամիտ ժպիտը երիտասարդ գիտնականին կարծել տվեց, որ ինքը ինչ-որ խաբեության զոհ է: Նա չուզեց իր հետ գերեզման տանել մի նոր հանելուկ և իսկույն շուռ տվեց կաշին, նման այն երեխային, որ շտապում է իր նոր խաղալիքի գաղտնիքներն իմանալ:

— Ա՜հ, ա՜հ,— բացականչեց նա,— ահավասիկ կնքատիպը, որը արևելցիներն անվանում են **Սողոմոնի կնքատիպ**:

— Ուրեմն դա ձեզ ծանո՞թ է,— հարցրեց առևտրականը, ռունգերից երկու-երեք անգամ օդ բաց թողնելով և դրանով ավելի շատ մտքեր հայտնելով, քան կարող էր արտահայտել ամենաազդու խոսքերով:

— Մի՞թե աշխարհում կա այնպիսի պարզամիտ մարդ, որ հավատա այդ քիմեռային,— բացականչեց երիտասարդը ծերունու մունջ և դառն հեգնանքով լի ծիծաղից վիրավորված:— Մի՞թե դուք չգիտեք, որ Արևելքի սնահավատությունները ինչ-որ սրբազան բան են տեսնում իբրև թե առասպելական ուժով օժտված այս խորհրդանիշի խորհրդավոր ձևի և խաբուսիկ նշանների մեջ: Ես չեմ կարծում, որ տվյալ դեպքում դուք ինձ միամիտ համարելու ավելի հիմք ունենաք, քան եթե խոսեի սֆինքսների և գրիֆոնների մասին, որոնց գոյությունը դիցաբանական առումով մի կերպ ընդունված է:

— Եթե դուք արևելագետ եք,— շարունակեց ծերունին,— ապա գուցե կկարդաք այս գրվածքը:

Ծերունին լապտերը մոտեցրեց թալիսմանին, որի հակառակ երեսը դեպի վեր էր բռնել երիտասարդը, և նրա ուշադրությունը հրավիրեց այդ հրաշագործ կաշու բջիջային հյուսվածքի մեջ արձանագրված նշանների վրա, որոնք ասես գոյացրել էր այն կենդանին, որին մի ժամանակ պատկանել էր կաշին:

— Պետք է խոստովանեմ,— նկատեց անծանոթը,— որ ես չեմ հասկանում, թե ինչպես են կարողացել այդքան խոր արձանագրել այդ տառերը ցիռի կաշու վրա:

Եվ աշխուժորեն դառնալով դեպի այն սեղանը, որ հազվագյուտ իրերով էր ծանրաբեռնված, ինչ-որ բան որոնեց աչքերով:

— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց ծերունին:

— Կաշին կտրելու մի գործիք, որպեսզի տեսնեմ, թե տառերը տպվա՞ծ են, թե կպցված:

Ծերունին դանակը մեկնեց անծանոթին, որը վերցրեց այն և փորձեց կաշին կտրել այն տեղում, ուր արձանագրված էին տառերը. բայց երբ անծանոթը կաշու բարակ մի շերտը հանեց, տառերը նորից երևացին այնքան հստակ և այնքան նման մակերեսի վրա նշված տառերին, որ մի րոպե նրան թվաց, թե կաշին չի կտրվել:

— Լևանտի հնարագիտությունն ունի գաղտնիքներ, որոնք հայտնի են միայն նրան,— ասաց նա, մի տեսակ անհանգստությամբ նայելով արևելյան բառերին:

— Այո,— պատասխանեց ծերունին,— ավելի լավ է այս բոլորը մարդկանց վերագրել, քան աստծուն: Խորհրդավոր բառերը դասավորված էին հետևյալ ձևով.

لو ملكتنى ملكت

الكل ولكن عمرك ملكى واراد الله

هكذا اطلب وستننال مطالبك

و لكن قسمن مطالبك

على عمرك

وى هاهنا

هيكل مرامك استسغزل

ايامك أتريد في الله

عجيبك

آمى

ن

Այդ նշանակում էր.

Եթե դու ձեռք բերես ինձ, ձեռք կբերես ամեն ինչ:

Բայց քո կյանքը ինձ կպատկանի: Աստծու կամքն է այդ:

Ցանկացիր, և քո ցանկությունները

կկատարվեն: Բայց քո ցանկությունները

համապատասխանեցրու քո կյանքին:

Կյանքդ այստեղ է: Յուրաքանչյուր

ցանկության ժամանակ ես կպակասեմ,

բայց կպակասեն և քո օրերը:

Ուզո՞ւմ ես տիրանալ ինձ:

Վերցրու: Աստված

քեզ կլսի:

Ամեն:

— Դուք վարժ կարդում եք սանսկրիտը,— ասաց ծերունին: Միգուցե դուք Պարսկաստանում կամ Բենգալիայում եղե՞լ եք:

— Ոչ, պարոն,— պատասխանեց երիտասարդը, հետաքրքրությամբ շոշափելով խորհրդավոր կաշին, որն իր անճկելիությամբ բավական նման էր մետաղաթերթի:

Ծեր առևտրականը լապտերը նորից դրեց այն սյան վրա, որտեղից վերցրել էր, և երիտասարդին ուղղեց սառն հեգնանքով լի մի հայացք, որը ասես նշանակում էր. «Նա արդեն է՛լ չի մտածում մեռնելու մասին»:

— Սա կատա՞կ է, թե՞ գաղտնիք է,— հարցրեց անծանոթ երիտասարդը:

Ծերունին գլուխն օրորեց և լրջությամբ ասաց.

— Չգիտեմ ինչ պատասխանեմ ձեզ: Այն ահռելի ուժը, որ տալիս է այս թալիսմանը, ես առաջարկեցի ձեզանից ավելի կորովի մարդկանց, բայց նրանք, ծիծաղելով հանդերձ այն առեղծվածային ազդեցության վրա, որ թալիսմանը իբր թե պետք է գործեր իրենց ապագա բախտի վրա, հանձն չառան ինձ անհայտ մի զորության կողմից այնքան ճակատագրականորեն առաջարկված պայմանը կնքելու վտանգին ենթարկվել: Ես նրանց հետ համամիտ եմ, ես կասկածել եմ, հրաժարվել եմ և…

— Եվ նույնիսկ չե՞ք փորձել,— ընդմիջեց նրան երիտասարդը:

— Փորձե՞լ,— ասաց ծերունին:— Եթե դուք Վանդոմի հրապարակի սյան վրա կանգնեիք, կփորձեի՞ք ցած նետվել: Կարելի՞ է կյանքի ընթացքը կանգնեցնել: Մարդ կարո՞ղ է մահը մասնատել: Նախքան այս վաճառատունը մտնելը, դուք որոշել էիք ինքնասպանություն գործել: Բայց հանկարծ ձեզ սկսում է զբաղեցնել այս գաղտնիքը և ձեզ հեռացնում է մահվան մտքից: Մանկամի՛տ: Մի՞թե ձեր որևէ օրը ձեզ չի առաջադրի ավելի ուշագրավ առեղծված, քան դա է: Լսեցեք ինձ: Ես տեսել եմ պետության խնամակալի[30] ապականված արքունիքը: Այն

[30] **Պետության խնամակալ** — ակնարկում է դուքս Ֆիլիպ Օռլեանցուն, որ պետության խնամակալն ու կառավարողն էր Լուդովիկոս XV-ի (1715—1722) անչափահասության տարիներին: Այդ տարիներին պալատական բարքերը ծայրահեղորեն ապականված էին:

ժամանակ ես ձեզ նման թշվառության մեջ էի, մուրալով էի ճարում իմ հացը. բայց և այնպես ես ապրեցի մինչև հարյուր երկու տարի և դարձա միլիոնատեր. դժբախտությունը ինձ հարստություն բերեց, տգիտությունը ինձ սովորեցրեց: Հիմա ես հակիրճ խոսքերով ձեզ կբացահայտեմ մարդկային կյանքի մի մեծ խորհուրդ: Մարդ իրեն ուժասպառում է բնազդաբար կատարվող երկու արարքներով, որոնք ցամաքեցնում են նրա գոյության աղբյուրները: Մահվան այդ երկու պատճառների բոլոր ձևերը արտահայտում են երկու բայեր՝ ցանկանալ և կարողանալ: Մարդկային գործունեության այս երկու եզրերի միջև կա մի ուրիշ բանաձև, որին տիրապետում են իմաստունները, և ես նրան եմ պարտական իմ երջանկությունն ու երկարակեցությունը: Ցանկանալը մեզ այրում է, իսկ կարողանալը՝ մեզ խորտակում, բայց գիտենալը մեր թույլ կազմվածքին հնարավորություն է ընձեռում մնալու մշտախաղաղ վիճակում: Հետևաբար ցանկությունը կամ կամեցողությունը իմ մեջ մեռած է, սպանված մտքից. գործողությունը կամ կարողությունը սահմանափակված է իմ մարմնի բնական պահանջների գոհացումով: Կարճ ասած՝ ես կենտրոնացրել եմ իմ կյանքը ոչ թե սրտի մեջ, որ փշրվում է, ոչ թե զգայարանների մեջ, որոնք բթանում են, այլ ուղեղի մեջ, որը չի մաշվում և բոլորից երկար է ապրում: Ոչ մի չափազանցություն չի խաթարել իմ հոգին ու մարմինը: Եվ ես տեսել եմ բովանդակ աշխարհը: Ես շրջել եմ՝ Ասիայի և Ամերիկայի բարձրաբերձ լեռներով, ես սովորել եմ մարդկային բոլոր լեզուները և ապրել եմ ամեն տեսակ վարչակարգերի ներքո: Ես փոխարինաբար փող եմ տվել մի չինացու, իբր գրավական առնելով նրա հոր դիակը, ես քնել եմ մի արաբի վրանում, վստահելով նրա խոսքին, ես պայմանագրեր եմ ստորագրել եվրոպական բոլոր մայրաքաղաքներում և առանց վախենալու իմ ոսկին թողել եմ վայրենիների հյուղակներում. մի խոսքով, ես ամեն ինչ ձեռք եմ բերել, որովհետև կարողացել եմ ամեն ինչ արհամարհել: Իմ միակ փառասիրությունը եղել է տեսնելը: Տեսնել մի՞թե չի նշանակում գիտենալ... Իսկ գիտենալ, երիտասարդ, մի՞թե չի նշանակում ներքնապես վայելել, մի՞թե չի նշանակում կյանքի բուն էությունը հայտնաբերել և նրա խորքը թափանցել: Ի՞նչ է մնում նյութական ունեցվածքից: Սոսկ մի մտապատկեր: Դատեցեք, թե ինչքան գեղեցիկ կարող է լինել կյանքն այն մարդու, որ, ընդունակ լինելով իր մտքում տպավորելու բոլոր իրականությունները, իր հոգու մեջ է փոխադրում երջանկության ակունքները և նրանցից քաղում բազմապիսի գաղափարական հաճույքներ, որոնք զերծ են երկրային աղտեղություններից: Միտքը բոլոր գանձերի բանալին է, նա ձեզ տալիս է ժլատի բոլոր ուրախությունները, բայց առանց նրա մտահոգությունների: Եվ այսպես, ես սավառնել եմ աշխարհի վրա, իմ վայելքները միշտ եղել են իմացական ուրախությունները: Իմ խնջույքները եղել են ժողովուրդներ, ծովեր, լեռներ, անտառներ դիտելը: Ես ամեն ինչ տեսել եմ, բայց հանգիստ կերպով, առանց հոգնության, ես երբեք ոչինչ չեմ տենչացել, ես միայն ակնկալել եմ: Ես շրջագայել եմ տիեզերքում, ինչպես իմ սեփական պարտեզում: Այն, ինչ մարդիկ կոչում են վիշտ, սեր, փառասիրություն, ձախորդություն, տխրություն, այդ բոլորն ինձ համար խոհեր են, որոնք ես վերածում եմ երազանքների. փոխանակ զգալու, ես արտահայտում, մեկնաբանում եմ դրանք. փոխանակ թողնելու, որ դրանք իմ կյանքը լափեն, ես թատերայնացնում, զարգացնում եմ դրանք. ես զվարճանում եմ դրանցով, ինչպես այն վեպերով, որոնք ես կարդում եմ ներհայեցությամբ: Ես երբեք չեմ հոգնեցրել իմ մարմինը և դրա համար դեռևս վայելում եմ հուժկու առողջություն: Հոգիս ժառանգած լինելով մի կորով, որ ես երբեք չեմ չարաշահել, իմ գլուխը ներկայումս ավելի հարուստ է, քան իմ վաճառասրահները: Ահա այստե՛ղ,— ասաց նա, ճակատին խփելով,— այստե՛ղ են իսկական միլիոնները: Ես հաճելի օրեր եմ անցկացնում, խելացի հայացք նետելով անցյալի վրա. ես

հարուցում եմ բովանդակ երկրներ, գեղատեսիլ վայրեր, օվկիանոսի տեսարաններ, պատմության գեղեցիկ պատկերներ: Ես ունեմ երևակայական մի հարեմ, որտեղ ես տիրանում եմ այն բոլոր կանանց, որոնք ինձ չեն պատկանել: Ես հաճախ նորից եմ տեսնում ձեր պատերազմները, ձեր հեղափոխությունները և խորհրդածում եմ դրանց մասին: Օ՜, ինչպե՜ս տենդագին, վաղանցիկ հիացումները գերադասել առավել կամ նվազ գունագեղ մարմիններից, առավել կամ նվազ կլոր ձևերից. ինչպե՜ս ձեր բոլոր խաբուսիկ հույսերի խորտակումը գերադասել տիեզերքը իր հոգու մեջ հայտնագործելու վսեմ կարողությունից, ժամանակի և տարածության կապանքներից զերծ՝ անկաշկանդ շարժվելու անհուն հաճույքից, ամեն ինչ ընդգրկելու, ամեն ինչ տեսնելու հաճույքից, մյուս ոլորտները հարցաքննելու, աստծուն ունկնդրելու համար աշխարհի եզրի վրա հակվելու հաճույքից: Այստեղ,— հնչեղ ձայնով ասաց նա, ցույց տալով շագրենի կաշին,—**կարողանալն** ու **ցանկանալը** միացված են: Սրա մեջ են ձեր հասարակական գաղափարները, ձեր ծայրահեղ ցանկությունները, ձեր անժուժկալությունները, ձեր ուրախությունները, որոնք սպանում են, ձեր տխրությունները, որոնք ստիպում են ապրել լարված կյանքով,— որովհետև ցավը գուցե ոչ այլ ինչ է, եթե ոչ բուռն հաճույք: Ո՞վ կարող է որոշել այն սահմանը, որտեղ հեշտամոլությունը դառնում է ցավ և որտեղ ցավը դեռ մնում է հեշտամոլություն: Մի՞թե գաղափարական աշխարհի ամենավառ լույսերը չեն շոյում հայացքը, մինչդեռ ֆիզիկական աշխարհի ամենամեղմ մթնշաղը խոցում է նրան: Մի՞թե գիտությունից չի ծագում իմաստությունը: Եվ ի՞նչ է անմտությունը, եթե ոչ ցանկության կամ կարողության չափազանցություն:

— Իսկ ես ցանկանում եմ ապրել չափազանցությամբ,— ասաց անծանոթը, բռնելով շագրենի կաշին:

— Զգուշացի՛ր, երիտասարդ,— բացականչեց ծերունին անհավատալի աշխուժությամբ:

— Ես իմ կյանքը նվիրել էի գիտության և մտածության, բայց դրանք ևս ինձ սնունդ չտվին,— պատասխանեց անծանոթը:— Ես չեմ ուզում խաբվել ոչ Սվեդենբորգին[31] արժանի քարոզից, ոչ ձեր արևելյան հուռութից, ոչ ձեր գթասիրական ջանքերից ինձ պահելու համար այս աշխարհում, ուր իմ գոյությունն ինձ համար այլևս հնարավոր չէ... Եվ ահա,— ավելացրեց նա, ջղաձգորեն ձեռքում սեղմելով թալիսմանը և նայելով ծերունուն,— ես ցանկանում եմ արքայավայել, ճոխ մի ճաշկերույթ, մի խրախճանք, արժանի այն դարին, ուր, ասում են, ամեն ինչ կատարելագործված է: Թող իմ սեղանակիցները լինեն երիտասարդներ, սրամիտներ, աննախապաշարյալներ, գժվելու աստիճան զվարճասերներ: Թող գինիները հաջորդեն մեկը մյուսին, մեկը մյուսից ավելի թունդ, ավելի պճպճուն, այնպիսիք, որոնցից երեք օր շարունակ հարբած լինենք: Թող այդ գիշերը զարդարված լինի վառվռուն կանանցով: Ես ուզում եմ, որ այդ խելահեղ, մոլեգին խրախճանքը իր քառաձի կառքով մեզ տանի աշխարհի սահմաններից այն կողմ և մեզ հասցնի անծանոթ ափերը. Թող հոգիները երկինք բարձրանան կամ տիղմի մեջ սուզվեն,— ես չգիտեմ, թե արդյոք նրանք այդ ժամանակ բարձրանո՞ւմ են, թե ցածրանում, դա քիչ է հետաքրքրում ինձ: Հետևաբար, ես այս չարագուշակ ուժին հրամայում եմ բոլոր ուրախությունները ինձ համար միաձուլել մեկ ուրախության մեջ: Այո՛, ինձ հարկավոր է երկնքի և երկրի բոլոր հաճույքներն ընդգրկել վերջին մի գրկախառնության մեջ, և ապա

---

[31] **Սվեդենբորգ** Էմմանուել (1688—1772) — շվեդացի գրող, խորհրդապաշտ փիլիսոփա:

մեռնել։ Ես ցանկանում եմ հարբելուց հետո հին պրիապոսյան երգեր, մեռելներ հարուցելու ընդունակ երգեր, երկար, անվերջանալիորեն երկար համբույրներ, որպեսզի նրանց շառաչյունը հրդեհի ճարճատյունի նման տարածվելով Փարիզի վրա, զարթեցնի ամուսիններին և նրանց ներշնչի հրաբորբոք եռանդ, երիտասարդացնելով բոլորին, մինչև իսկ յոթանասնամյա ծերունիներին։

Ծերուկը քրքիջ արձակեց, որը դժոխային դռնչյունի նման հնչեց խելացնոր երիտասարդի ականջին և նրան ընդմիջեց այնքան տիրականորեն, որ նա լռեց։

— Ի՛նչ է,— ասաց հնությունների առևտրականը,— դուք կարծում եք, որ իմ հատակի տախտակները հիմա կբացվե՞ն և ճանապա՞րհ կտան շքեղորեն զարդարված սեղաններին և անդրաշխարհյան հյուրերին։ Ո՛չ, ո՛չ, անխոհեմ երիտասարդ։ Դուք պայմանագիր եք ստորագրել, դա ամեն ինչ ասում է։ Հիմա ձեր ցանկությունները կգոհացվեն, բայց ի հաշիվ ձեր կյանքի։ Այս կաշիով նշված ձեր օրերի շրջանակը կսեղմվի՝ համաձայն ձեր ցանկությունների ուժի և թվի, սկսած ամենաչնչին ցանկություններից մինչև ամենասանձարձակը։ Այն բրահմանը, որին ես պարտական եմ այս թալիսմանը, ժամանակին ինձ բացատրել է, որ խորհրդավոր կապ կհաստատվի նրան տիրացողի ճակատագրի և ցանկությունների միջև։ Ձեր առաջին ցանկությունը գռեհիկ ցանկություն է, ես կարող էի այն գոհացնել, բայց դրա հոգսը ես թողնում եմ ձեր նոր կյանքի դեպքերին։ Չէ՞ որ, վերջ ի վերջո, դուք ուզում էիք մեռնել, դեհ, ինչ կա որ, ձեր ինքնասպանությունը միայն հետաձգված է։

Անծանոթը զարմանալով, գրեթե զայրանալով, որ այս տարօրինակ ծերունին իր կիսամարդասիրական դիտավորությամբ, որ բացահայտ կերպով երևաց այս վերջին հեգնանքի մեջ, շարունակում էր ծիծաղել իր վրա, բացականչեց.

— Տեսնենք իմ բախտը կփոխվի՝ առափնյա փողոցով անցնելուս միջոցին։ Բայց եթե դուք չեք ծաղրում մի դժբախտի, ապա ի վրեժ այդքան ճակատագրական ծառայության, ես ուզում եմ, որ դուք սիրահարվեք մի պարուհու։ Այն ժամանակ կհասկանաք ցոփության երջանկությունը և գուցե մսխեք այն բոլոր բարիքները, որ դուք խնայել եք այնքան փիլիսոփայորեն։

Նա դուրս եկավ, չլսելով ծերունու արձակած ծանր հառաչանքը, անցավ բոլոր սրահներով և իջավ սանդուղքներով՝ ուղեկցությամբ թշեղ հանձնակատարի, որը իզուր էր փորձում նրան լուսավորել. անծանոթը վազում էր հանցանքի մեջ բռնված գողի արագությամբ։ Մի տեսակ զառանցանքից կուրացած՝ նա նույնիսկ չնկատեց շագրենի կաշու կծկվելու անհավատալի հատկությունը, կաշու, որը, ձեռնոցի պես փափկելով, կուչ եկավ նրա մոլեգնորեն սեղմած մատների մեջ և հեշտությամբ տեղավորվեց նրա ֆրակի գրպանում, ուր նա այն խոթեց գրեթե մեքենայաբար։ Վաճառատան դռնից փողոց նետվելու ժամանակ նա ընդհարվեց երեք երիտասարդների, որոնք գնում էին թև-թևի տված։

— Անասո՛ւն։

— Տխմա՛ր։

Այսպես եղան նրանց փոխանակած նուրբ ողջույնները։

— Վա՛յ, Ռաֆայելն է։

— Վա՛հ, մենք քեզ էինք փնտրում:

— Ի՞նչ, այդ դո՞ւք եք:

Այս երեք բարեկամական խոսքերը հաջորդեցին հայհոյանքին, հենց որ քամուց օրորվող լապտերի լույսը ընկավ երիտասարդների զարմացած երեսների վրա:

— Սիրելի բարեկամ,— ասաց Ռաֆայելին այն երիտասարդը, որին նա քիչ էր մնացել գլորեր,— դու պիտի գաս մեզ հետ:

— Ի՞նչ բանի համար:

— Դու արի, ես քեզ գործը ճանապարհին կպատմեմ:

Ստիպողությամբ թե համաձայնությամբ՝ բարեկամները շրջապատեցին Ռաֆայելին, նրան բռնեցին թևերից և, մտցնելով իրենց զվարթ խմբի մեջ, քարշ տվին դեպի Արվեստների կամուրջը:

— Սիրելիս,— շարունակեց նրա բարեկամը,— մենք մի շաբաթ է՝ քեզ էինք փնտրում: Քո պատկառելի «Սեն-Կանտեն» պանդոկում[32] որի վրա, ի միջի այլոց, աչքի է ընկնում միշտ միևնույն ցուցանակը՝ սև և կարմիր տառերով, ինչպիսին էր Ժան-Ժակ Ռուսոյի ժամանակ, քո Լեոնարդան[33] մեզ ասաց, որ դու քաղաքից դուրս ես գնացել: Բայց, ճիշտն ասած, մենք նման չէինք դրամական գործով եկած մարդկանց՝ դատական կատարածուների, պարտատերերի, վկաների և այլն: Հոգ չէ: Ռաստինյակը երեկ երեկոյան քեզ տեսել է Բուֆֆոնում[34], մենք մի քիչ սրտապնդվեցինք և ինքնասիրությունից դրդված որոշեցինք հաստատապես իմանալ, թե դու արդյոք չե՞ս թառել Շանզ-Էլիզեի ծառերից մեկի վրա կամ չե՞ս գիշերել այն օթևանում, ուր աղքատները, երկու սու վճարելով, քնում են, ձգված պարաններին կոթնած կամ, գուցե, ավելի բախտավոր լինելով, տեղավորվել ես մի կնոջ զարդասենյակի բացօթյակո՞ւմ: Մենք քեզ չհանդիպեցինք ոչ մի տեղ, ոչ Սեն-Բելաժիի[35], ոչ էլ Լաֆորսի բանտային արձանագրություններում: Գիտական հետազոտության ենթարկելով մինիստրությունները, օպերան, վանատները, ճաշարանները, սրճարանները, գրադարանները, ոստիկանատները,

խմբագրատները, թատրոնական ճեմասրահները, մի խոսքով, Փարիզում եղած բոլոր լավ ու վատ տեղերը, մենք ողբում էինք կորուստը մի մարդու, որ բավականաչափ ձիրքերով էր օժտված, որպեսզի հավասարապես գտնվեր արքունիքում կամ բանտում: Մենք մտածում

---

[32] **«Սեն-Կանտեն» պանդոկ** — այս պանդոկում, որ դեռ գոյություն ուներ Բալզակի ժամանակ, 1745 թվին ապրել է Ժան-Ժակ Ռուսոն:

[33] **Լեոնարդա** — ֆրանսիացի գրող Լըսաժի (1668—1747) «Ժիլ Բլաս» վեպում գործող անձ — պառավ աղախին:

[34] **Բուֆֆոն** — խոսակցության մեջ այսպես էին անվանում Իտալական թատրոնը Փարիզում:

[35] **Սենտ-Բելաժի, Լա-Ֆորս** — բանտեր Փարիզում, ուր XIX դարի առաջին կեսում նստեցնում էին սնանկ պարտապաններին:

էինք սրբագործել քեզ իբրև Հուլիսյան հեղափոխության[36] հերոսի: Եվ, ազնիվ խոսք, մենք ափսոսում էինք քեզ:

Առանց լսելու իր բարեկամներին, Ռաֆայելը գնում էր Արվեստների կամուրջով և նայում էր Սենին, որի ալեծուփ ջրերի մեջ արտացոլված էին Փարիզի լույսերը: Այդ գետի վրա, ուր նա ուզեցել էր նետվել ոչ շատ վաղուց, իրականացան ծերունու գուշակությունները,— նրա մահվան ժամը հետաձգվել էր ճակատագրի կամքով:

— Եվ մենք, իրոք, ափսոսում ենք քեզ,— շարունակեց խոսել Ռաֆայելի բարեկամը:— Հարցը վերաբերում է քաղաքական մի ծրագրի, որի իրականացմանը մասնակից ենք դարձնում քեզ իբրև ականավոր մարդու, այսինքն՝ այնպիսի մարդու, որ գիտե իրեն բարձր դասել ուրիշներից: Թագավորական թասի տակից սահմանադրական մշկընկույզը անհետացնելու ձեռնածությունը[37], սիրելի բարեկամ, ներկայումս ավելի հանդիսավորապես է կատարվում, քան երբևէ անցյալում: Ժողովրդական հերոսությամբ տապալված ապիրատ միապետությունը վատ վարքի տեր կին էր, որի հետ կարելի էր ծիծաղել և քեֆ անել. բայց հայրենիքը անհաճո և առաքինի կին է, որի զսպված փայփայանքները կամա թե ակամա պետք է ընդունենք: Արդ, ինչպես գիտես, իշխանությունը Տյուիլրիից տեղափոխվել է լրագրողների մոտ, իսկ բյուջեն Սեն-Ժերմեն թաղից անցել է Շոսե դ'Անտեն[38]: Բայց ահա այն, ինչ որ դու գուցե չգիտես: Կառավարությունը, այսինքն՝ դրամատերերի և փաստաբանների արիստոկրատիան, այսօր հայրենիքի հետ վարվում է այնպես, ինչպես մի ժամանակ հոգևորականությունն էր վարվում միապետության հետ, անհրաժեշտություն զգաց ֆրանսիական բարի ժողովրդին խաբելու նոր բառերով և հին մտքերով, ինչպես անում են բոլոր ուղղությունների փիլիսոփաները և բոլոր ժամանակների ճարպիկ մարդիկ: Ուստի մեր խնդիրն է թագավորական-ազգային հայացքներ արմատացնել և ապացուցել, որ ժողովրդի համար ավելի լավ կլինի, եթե նա մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն և երեսուներեք սանտիմ վճարի այսինչ կամ այնինչ պարոններով ներկայացված հայրենիքին, քան մեկ միլիարդ հարյուր միլիոն և ինը սանտիմ վճարի մի թագավորի, որ ասում է **ես**, փոխանակ ասելու **մենք**: Մի խոսքով, երկու-երեք հարյուր հազար ֆրանկով հիմնում ենք մի օրաթերթ, նպատակ ունենալով ստեղծել ընդդիմադիր հոսանք, ընդունակ գոհացում տալու դժգոհներին, առանց վնաս հասցնելու արքա-քաղաքացու[39] ազգային կառավարությանը: Արդ, քանի որ մենք

---

[36] **Հուլիսյան հեղափոխություն** — այսինքն 1830 թվականի Հուլիսյան հեղափոխությունը, որ տապալեց Բուրբոնների իշխանությունը: Օգտագործելով ժողովրդի հաղթանակը, բուրժուազիան գահի վրա բազմեցրեց իր ձեռնասունին՝ Լուի Ֆիլիպ Օռլեանցուն:

[37] **Թագավորական թասի տակից, անհետացնելու ձեռնածությունը** — ակնարկում է Հուլիսյան հեղափոխությունից հետո երկրում տիրող քաղաքական կացությունը, Լուի Ֆիլիպ թագավորի ոտնձգությունը սահմանադրության վրա:

[38] **Բյուջեն Սեն-Ժերմեն թաղից անցել է Շոսե դ'Անտեն** — այսինքն՝ բյուջեն արիստոկրատիայի ձեռքից անցել է բուրժուազիայի ձեռքը: Սեն-Ժերմենը Փարիզի արիստոկրատական թաղն է, իսկ Շոսե դ'Անտենը այն փողոցն է, ուր ապրում է խոշոր բուրժուազիան:

[39] **Արքա–քաղաքացի** — բուրժուազիայի շրջանակները այսպես էին մականվանում թագավոր Լուի-Ֆիլիպին:

ծիծաղում ենք թե՛ ազատության և թե՛ բռնապետության վրա, թե՛ կրոնի և թե՛ անհավատության վրա, և քանի որ հայրենիքը մեզ համար մի մայրաքաղաք է, ուր գաղափարները փոխանակվում ու վաճառվում են տողին այսքանով, ուր յուրաքանչյուր օրը բերում է համեղ ճաշեր և բազմաթիվ տեսարաններ, ուր վխտում են ծախու պոռնիկները, ուր ընթրիքները վերջանում են առավոտյան, ուր սերերը կառքերի նման տրվում են վարձով. քանի որ Փարիզը միշտ կլինի բոլոր հայրենիքներից ամենագրավիչ հայրենիքը, ուրախության, ազատության, մտքի, սիրուն կանանց, անպիտան մարդկանց, լավ գինու հայրենիքը, ուր իշխանության գայիսոնը երբեք շատ ուժեղ չի զգացվի, վասնզի մենք մոտն ենք նրանց, որոնց ձեռքին է այդ գայիսոնը... ապա մենք՝ Մեֆիստոֆել ասածու իսկական հետևորդներս, կաշխատենք վերածեփել հանրային կարծիքը, ուրիշ զգեստներ հագցնել դերակատարներին, նոր տախտակներ գամել կառավարական խարխուլ տանը, դեղորայք տալ դոկտրիներներին[40], վերաթրծել հին հանրապետականներին, վերանորոգել բոնապարտականներին և պարենավորել կենտրոնին, միայն թե մեզ թույլ տրվի թաքուն ծիծաղել թագավորների և ժողովուրդների վրա, երեկոյան փոխել մեր առավոտյան կարծիքը, ուրախ կյանք վարել Պանուրգի[41] ձևով կամ փափուկ բարձերի վրա ընկողմանել արևելյան ձևով: Մենք որոշեցինք քեզ հանձնել այդ մակարոնային և զավեշտական իշխանության ղեկը, իսկ դրա համար մենք քեզ կտանենք այն ճաշկերույթին, որ տալիս է հիշյալ օրաթերթի հիմնադիրը, գործից քաշված մի բանկիր, որը, չիմանալով ինչ անել իր ոսկին, ուզում է այն վերածել սրամտության: Դու այնտեղ կընդունվես իբրև եղբայր, մենք քեզ կհռչակենք թագավոր ազատամիտների, որոնք ոչ մի բանից չեն վախենում և խորաթափանցորեն գուշակում են Ավստրիայի, Անգլիայի կամ Ռուսիայի դիտավորությունները, նախքան Ռուսիան, Անգլիան կամ Ավստրիան դիտավորություններ ունենան: Այո, մենք քեզ կնշանակենք վեհապետ այն իմացական ուժերի, որոնք աշխարհին մատակարարում են Միրաբոներ, Տալեյրաններ, Պիտտեր, Մետտեռնիխներ, մի խոսքով, ամեն տեսակ ճարպիկ Կրիսպեններ[42], որոնք իրար հետ խաղում են մի պետության բախտի վրա, ինչպես հասարակ մահկանացուները իրար հետ դոմինո են խաղում մի բաժակ կիրշվասերի[43] վրա: Մենք քեզ ներկայացրինք իբրև գոտեմարտելու ամենակորովի մարտիկի, որ պատրաստ է շվայտության հետ, այդ զարմանալի հրեշի հետ, որին ուզում են մենամարտի հրավիրել բոլոր խիզախ մտքերը, մենք նույնիսկ հավաստիացրինք, որ այդ հրեշը դեռ չի կարողացել քեզ պարտության մատնել: Հույս ունեմ, որ դու սուտ չես հանի մեր գովասանքները: Տայֆերը, մեր ամֆիտրիոնը[44] մեզ խոստացավ նսեմացնել մեր ժամանակակից փոքր Լուկուլլոսների

---

[40] **Դոկտրիներներ** — սահմանադրական միապետության կողմնակիցներ:

[41] **Պանուրգ** — ֆրանսիացի նշանավոր գրող-երգիծաբան Ռաբլեի (1494—1553) «Գարգանտուա և Պանտագրուել» վեպի հերոս, որ դարձել է զվարթ կատակախոսի, անհոգ մարդու տիպ:

[42] **Կրիսպեն** — ճարպիկ և խորամանկ ծառայի տիպ հին իտալական կատակերգություններում և Ռենյարի ու Լբսաժի կատակերգություններում ընդհանրապես ճարպիկ և խորամանկ մարդ:

[43] **Կիրշվասեր** — բալից պատրաստված ըմպելիք:

[44] **Ամֆիտրիոն** — Մոլիերի համանուն կատակերգության մեջ գործող անձ, փոխաբերական իմաստով հյուրընկալ տանտեր:

ողորմելի խնջույքները: Նա բավականաչափ հարուստ է, որպեսզի վեհություն տա չնչին բաներին, վայելչություն և գրավչություն տա մոլությանը... Լսո՞ւմ ես, Ռաֆայել,— հարցրեց ճառախոսը, ընդհատելով ճառը:

— Այո,— պատասխանեց երիտասարդը, զարմացած ոչ այնքան իր ցանկությունների կատարումից, որքան այն բնական ձևից, որով շարահյուսվեցին դեպքերը: Նա չէր կարող հավատալ կախարդական ազդեցությանը, բայց նրան զարմացնում էին մարդկային բախտի պատահականությունները:

— Սակայն դու «այո» ես ասում այնպիսի շեշտով, որ կարծես մտածում ես քո պապի մահվան մասին,— դիմեց Ռաֆայելին մյուս ուղեկիցը:

— Ա՜հ,— հառաչեց Ռաֆայելը այնպիսի պարզամտությամբ, որ ծիծաղեցին երիտասարդ Ֆրանսիայի հույսը հանդիսացող այս գրողները:— Բարեկամներ, ահա թե ինչ եմ ես մտածում. մենք շուտով կդառնանք մեծ ստահակներ: Մինչև հիմա մենք անօրենություն գործեցինք, անկարգություններ արեցինք երկու գինեկոնծությունների միջև, կյանքի մասին դատեցինք հարբած վիճակում, դեմքերն ու դեպքերը գնահատեցինք մարսողության ժամանակ: Գործերին անտեղյակ՝ մենք հախուռն եղանք խոսքերի մեջ, բայց այժմ, քաղաքականության հրաշեկ երկաթով խարանված, մենք կմտնենք մեծ տաժանավայրը և այնտեղ կկորցնենք մեր պատրանքները: Նա, ով հավատում է միայն դևին, նրան թույլատրվում է ողբալ երիտասարդական դրախտը, անմեղության ժամանակը, երբ մենք երկյուղածորեն մեր լեզուն պարզում էինք բարի քահանային, որպեսզի ճաշակեինք մեր տեր Հիսուս Քրիստոսի սրբազան մարմինը: Ա՜հ, իմ ազնիվ բարեկամներ, եթե մենք այնքան հաճույք զգացինք մեր առաջին մեղքերը գործելու ժամանակ, պատճառն այն է, որ մենք դեռևս ունենում էինք խղճահարություններ, որոնք գեղեցկացնում էին նրանց, սրություն ու համ էին տալիս նրանց, իսկ այժմ...

— Օ՛, այժմ,— վրա բերեց առաջին զրուցակիցը,— մեզ մնում է...

— Ի՞նչ,— հարցրեց մյուսը:

— Ոճրագործությունը...

— Ահա մի բառ, որ կախաղանի պես բարձր է և Սենի պես խոր,— նկատեց Ռաֆայելը:

— Օ՛, դու ինձ չհասկացար: Ես խոսում եմ քաղաքական ոճրագործությունների մասին: Այս առավոտվանից ես սկսել եմ նախանձել միայն դավադիրներին: Ես չգիտեմ, թե մինչև վաղը կմնա՞ իմ այդ ցնորքը, բայց ներկայումս ինձ զզվեցնում է երկաթուղու գծերի նման միաձև մեր քաղաքակրթության անգույն կյանքը: Ինձ խորապես հուզում են Մոսկվայից նահանջած ֆրանսիացիների տանջանքները, «Կարմիր ծովահենի[45]» տագնապները, մաքսանենգների կյանքը: Քանի որ Ֆրանսիայում այլևս գոյություն չունի Սեն-Բրունոյի վանական կարգը, ես

[45] **«Կարմիր ծովահեն»** — ամերիկացի գրող Ֆենիմոր Կուպերի (1789—1851) վեպը, որ լի է անհավատալի արկածներով:

կփափագեի գոնե Բոտանի-բեյը[46], այդ յուրատեսակ հիվանդանոցը փոքրիկ լորդ Բայրոնների համար, որոնք ճմռելով կյանքը, ինչպես անձեռոցիկը ճաշից հետո, գտնում են, որ իրենք այլևս անելիք ոչինչ չունեն, եթե ոչ իրենց երկիրը հրդեհել, իրենց ճակատին կրակել, հանրապետական դավադրություն կազմակերպել կամ պատերազմ պահանջել...

— Էմի՛լ,— բորբոքված ասաց Ռաֆայելի մյուս ուղեկիցը,— հավատս վկա, եթե չլիներ Հուլիսյան հեղափոխությունը, ես քահանա կդառնայի, անասնական կյանք կվարեի որևէ գյուղի անկյունում և...

— Եվ ամեն օր ժամագի՞րք կկարդայիր:

— Այո:

— Դու գլուխգովան ես:

— Բայց մենք լրագիրներ հո կարդո՛ւմ ենք:

— Վատ չէ լրագրողի համար: Բայց լռիր, մենք գնում ենք բաժանորդների բազմության միջով: Լրագրությունը, տեսնում ես, դարձել է ժամանակակից հասարակության կրոնը, և այդտեղ առաջադիմություն կա:

— Ինչպե՞ս:

— Քահանայապետերը պարտավոր չեն հավատալ, ժողովուրդը նույնպես...

Այսպես զրուցելով, նման այն պարկեշտ մարդկանց, որոնք ուսումնասիրել են «De viris illustribus»-ը[47], նրանք հասան Ժուբեր փողոցի ապարանքը:

Էմիլը լրագրող էր, որ ավելի շատ փառք էր վաստակել ոչինչ չանելով, քան ուրիշներն իրենց հաջողություններով: Հանդուգն, սրամիտ և խայթող քննադատ, նա ուներ այն բոլոր արժանիքները, որոնք տանելի էին դարձնում նրա թերությունները: Հեգնող և անկեղծ, նա բազմաթիվ սուր խոսքեր էր ուղղում մի բարեկամի, որին, ի բացակայության, պաշտպանում էր արիությամբ և ազնվությամբ: Նա ծիծաղում էր ամեն ինչի վրա, նույնիսկ իր ապագայի վրա: Մշտապես զուրկ դրամից՝ նա որոշ խառնվածքի տեր մարդկանց նման անձնատուր էր լինում անբացատրելի ծուլության և հանկարծ նետում էր մի բառ, որ մի ամբողջ գիրք արժեր, ի նախանձ այն պարոնների, որոնք չէին կարողանում մի կենդանի բառ դնել իրենց գրքերի մեջ: Շռայլ՝ խոստումների մեջ, որոնք երբեք չէր կատարում, նա իր բախտն ու փառքը իրեն բարձ էր դարձրել և հանգիստ կերպով քնում էր դափնիների վրա, այսպիսով, իրեն ենթարկելով ծերության ժամանակ անկելանոցում արթնանալու վտանգին: Այդ բոլորով հանդերձ նա կառափնարան կգնար բարեկամի համար, պարծենում էր իր ցինիզմով, միամիտ էր երեխայի նման և աշխատում էր միայն ոգևորությունից կամ կարիքից դրդված:

---

[46] **Բոտանի–բեյ** (բուսաբանական ծովածոց) — ծովածոց Ավստրալիայում, որտեղ 1787 թվին անգլիացիները գաղութ հիմնեցին աքսորականների համար:

[47] «Վարք երևելի արանց» — հնադարյան ականավոր մարդկանց կենսագրություն, որ կազմել է հռոմեացի պատմաբան Կոռնելիուս Նեպոսը (I դար մ. թ. ա):

— Հիմա մենք անելու ենք, Մետր Ալկոֆրիբասի[48] արտահայտությամբ, **մի փոքրիկ ուրախ խրախճանք**,— ասաց նա Ռաֆայելին, ցույց տալով ծաղկամանները, որոնցով բուրավետված ու կանաչազարդված էին սանդուղքները:

— Սիրում եմ, երբ նախասրահները լավ տաքացված և ճոխ գորգերով պատած են լինում,— նկատեց Ռաֆայելը: Դա հազվադեպ երևույթ է Ֆրանսիայում: Զգում եմ, որ ես այստեղ վերածնվում եմ:

— Իսկ այնտեղ, վերևում, մենք կկոնծենք և կծիծաղենք, իմ խեղճ Ռաֆայել, և այն էլ ինչպե՛ս,— շարունակեց Էմիլը:— Հույս ունեմ, որ մենք հաղթական կքայլենք բոլոր գլուխների վրայով:

Եվ նա ծաղրական ձևով ցույց տվեց հյուրերին, մտնելով լույսերից ու ոսկեզօծումներից շողացող հյուրասրահը իսկույն նրանց շրջապատեցին Փարիզի ամենանշանավոր երիտասարդները: Նրանցից մեկը սկսել էր նոր տաղանդ երևան բերել և իր առաջին նկարով մրցել կայսրության շրջանի նկարչության փառքերի հետ: Մյուսը վերջերս հրապարակել էր թարմությամբ և յուրատեսակ գրական արհամարհանքով տոգորված մի գիրք, որը նոր ուղիներ էր բաց անում ժամանակակից գրական դպրոցի առջև: Մի քանդակագործ, որի խոժոռ դեմքը համապատասխանում էր նրա առնական հանճարին, զրուցում էր այն սառնասիրտ ծաղրասերներից մեկի հետ, որոնք, նայած պարագային, մերթ չեն ուզում տաղանդ տեսնել ոչ մի տեղ, մերթ տեսնում են ամեն տեղ: Մեր ծաղրանկարիչներից ամենասրամիտը, որ խորամանկ նայվածք և խայթող լեզու ունի, որսում էր սուր հեգնաբանությունները, որպեսզի դրանք վերարտադրեր մատիտի ուրվագծումներով: Երիտասարդ և հանդուգն մի գրող, որը ամենքից լավ էր հասկանում քաղաքական մտքերի ուղնուծուծը և մի քանի հեգնական բառերով կարողանում էր արտահայտել որևէ բեղմնավոր հեղինակի ոգին, զրուցում էր մի բանաստեղծի հետ, որի գրվածքները կնսեմացնեին իր ժամանակակիցների բոլոր երկերը, եթե նրա տաղանդի ուժը հավասար լիներ նրա ատելության ուժին: Երկուսն էլ ջանալով ճշմարտությունը չասել և չստել՝ միմյանց ուղղում էին հաճելի, շողոմ խոսքեր: Անվանի մի երաժիշտ si-benol ձայնով և հեգնական շեշտով մխիթարում էր երիտասարդ մի քաղաքագետի, որ վերջերս ամբիոնից ընկել էր, բայց վնասվածք չէր ստացել: Ոճ չունեցող երիտասարդ գրողներ կանգնած էին միտք չունեցող երիտասարդ գրողների կողքին, բանաստեղծ արձակագիրներ՝ արձակունակ բանաստեղծների կողքին: Մի խեղճ սեն-սիմոնական[49], որ բավական միամիտ էր հավատալու համար իր վարդապետությանը, մարդասիրաբար հաշտեցնում էր այս թերի էակներին, անշուշտ փափագելով նրանց դարձնել իր միաբանության անդամները: Վերջապես, այստեղ էին երկու-երեք գիտնականներ, որոնք ստեղծված էին խոսակցությանը ազոտ խառնելու համար[50] և մի քանի վոդևիլիստներ՝ պատրաստ փայլելու վաղանցիկ ցոլքերով, որոնք, ադամանդի ու կայծերի նման, ոչ լույս են տալիս, ոչ ջերմություն: Մի քանի սրտառոց մարդիկ,

---

[48] **Մետր Ալկոֆրիբաս** — կեղծանունը Ֆրանսուա Ռաբլեի:

[49] **Սեն–սիմոնական** — ֆրանսիացի սոցիալիստ ուտոպիստ Սեն-Սիմոնի (1760—1825) հետևորդ:

[50] **Խոսակցությանը ազոտ խառնել** — այսինքն՝ խոսակցությունը զրկել կենդանությունից, զվարթությունից: Հունարեն ազոտ, նշանակում է անկենդան:

թաքուն ծիծաղելով նրանց վրա, որոնք բաժանում էին իրենց արհամարհական կամ հիացական վերաբերմունքը մարդկանց և հանգամանքների նկատմամբ, արդեն վարում էին երկսայրի քաղաքականություն, որի միջոցով նրանք դավ են նյութում բոլոր սիստեմների դեմ, չհարելով նրանցից ոչ մեկին: **Գիտակը**, որ ոչ մի բանի վրա չի զարմանում, խնչում է իտալական օպերայում կավատինայի ժամանակ, բոլորից առաջ է գոչում «բրավո» և առարկում նրան, ով իրենից առաջ է կարծիք հայտնում, նույնպես այստեղ էր և կրկնում էր ուրիշների սրամտությունները, աշխատելով իրեն վերագրել դրանք: Այս հյուրերից հինգը ապագա ունեին, տասը իրենց համար անցողիկ փառք կապահովեին, իսկ մյուսները բոլոր միջակությունների նման կարող էին կրկնել Լուդովիկոս XVIII-ի նշանավոր սուտը՝ **«Միություն և մոռացություն»**[51]: Ամֆիտրիոնը ուներ մտահոգ զվարթությունն այն մարդու, որ երկու հազար էկյու է ծախսել խնջույքի համար: Նա հաճախ անհամբերությամբ աչքերն ուղղում էր դեպի սրահի դուռը, ասես կանչելով ուշացած հյուրերին: Շուտով երևաց գիրուկ մի մարդ, որ դիմավորվեց շողոմ իրարանցումով. դա նոտարն էր, որ հենց այդ առավոտ վերջացրել էր նոր լրագրի հրատարակության գործարքը: Սևազգեստ մի սպասյակ բաց արեց դռներն ընդարձակ ճաշասրահի, և բոլորը առանց ձևականության գնացին իրենց տեղերը գրավելու մեծատարած սեղանի շուրջը: Հյուրասրահից դուրս գալուց առաջ Ռաֆայելը մի վերջին հայացք նետեց նրա վրա: Նրա ցանկությունն իրոք որ կատարվել էր լիովին: Ամենուրեք ոսկի ու մետաքս էր: Փառահեղ աշտանակների բազմաթիվ մոմերի լույսից շողում էին ոսկեզօծ ծոփորների ամենաչնչին մանրամասնիկները, բրոնզե նրբակերտ քանդակները և կահավորանքի ճոխ գույները: Հնդկեղեգներից պատրաստված նրբագեղ ծաղկազամբյուղների հազվագյուտ ծաղիկները սփռում էին անուշահոտ բուրմունքներ: Պաստառակալներն անգամ վայելչություն էին բուրում, բայց առանց ցուցամոլության. ամեն ինչի մեջ կար պոետական-դյութական ինչ-որ բան, որ կարող էր ուժգնորեն ազդել դրամազուրկ մարդու երևակայության վրա:

Հարյուր հազար լիվր եկամուտը քրիստոնեական վարդապետարանի լավ մեկնաբանություն է և մեզ հիանալիորեն կօգնի բարոյականություն մտցնելու արարքների մեջ,— ասաց Ռաֆայելը հառաչելով:— Օ՜, այո, իմ առաքինությունը այլևս ոտքով չի ման գա: Ինձ համար մոլությունը ձեղնահարկի խուցն է, մաշված հագուստն է, ձմեռային գորշ գլխարկն է և պարտքն է դռնապանին... Ա՜հ, այսպիսի ճոխության մեջ ապրեի մի տարի, թեկուզ վեց ամիս, և ապա մեռնեի: Գոնե ես հազար կյանքեր ճանաչած, համտեսած, կլանած կլինեի:

— Է՜հ, դու լումայափոխի կառքը երջանկություն ես համարում,— առարկեց Էմիլը, որ լսում էր նրան:— Դու շուտով կձանձրանաս հարստությունից. դու կնկատես, որ նա քեզ զրկում է ականավոր մարդ դառնալու հնարավորությունից: Մի՞թե արվեստագետը երբևէ տատանվել է հարուստների աղքատության և աղքատների հարստության միջև: Մի՞թե մեզ նման մարդկանց համար հարկավոր չեն մշտական պայքարներ: Ուրեմն նախապատրաստիր քո ստամոքսը, նայիր,— ասաց նա, ցույց տալով երանելի դրամատիրոջ ճաշասրահի շքեղաշուք,

---

[51] **Լյուդովիկոս XVIII–ի նշանավոր սուտը՝ «Միություն և մոռացություն»** — իր թագավորության (1814—1824) սկզբում Լյուդովիկոս XVIII-ը սահմանադրությամբ հռչակեց բոլոր ֆրանսիացիների միություն, խոստանալով մոռացության տալ անցյալ տարաձայնությունները: Սակայն իր քաղաքականության մեջ բուրբոնյան թագավորը չպահեց իր խոստումը և հետապնդեցր իր քաղաքական հակառակորդներին:

դրախտային, քմապարար տեսքը։— Ճիշտն ասած, այս մարդը միայն մեզ համար է փող դիզելու նեղություն կրել։ Չէ՞ որ նա մի տեսակ սպունգ է, որին բնագետները մոռացել են դասել պոլիպոդների շարքում։ Այդ սպունգին հարկավոր է զգուշությամբ ճզմել, քանի դեռ նրան չեն ծծել ժառանգները։ Նայիր, ինչպիսի ոճ ունեն պատերը զարդարող հարթաքանդակները։ Իսկ ձեղնաջահե՞րը, նկարնե՞րը. ինչպիսի՜ ճոխություն, ինչպիսի՜ ճաշակ։ Եթե հավատանք նախանձոտներին և նրանց, որոնք ճանաչում են կյանքի զսպանակները, այդ մարդը, Տայֆերը, հեղափոխության ժամանակ սպանել է մի գերմանացու և ուրիշ մի քանի մարդկանց, որոնցից երկուսը, ասում են, իր լավագույն բարեկամը և այդ բարեկամի մայրն են եղել։ Դու կարո՞ղ ես ոճիրներ պատկերացնել այդ պատկառելի Տայֆերի ալեզարդ գլխի մեջ։ Նա բարեհոգի մարդու տեսք ունի։ Նայիր, ինչպես են կայծկլտում արծաթե սպասքները... Մի՞թե նրանց յուրաքանչյուր շողը դաշույնի մի հարված է նրա համար... Թողեք, խնդրեմ։ Նույնքան կարելի է հավատալ և Մահմեդին։ Եթե հասարակությունն իրավացի է, ապա սրտի ու խելքի տեր, երեսուն մարդ այստեղ է հավաքվել, որպեսզի մի ամբողջ ընտանիքի աղիքները հոշոտի և արյունը խմի... Իսկ մենք երկուսս՝ մաքուր, խանդավառ երիտասարդներս, մասնակից կդառնանք ոճրագործության։ Ես ուզում եմ մեր դրամատիրոջը հարցնել, թե նա արդյոք ազնի՞վ մարդ է...

— Ոչ հիմա,— բացականչեց Ռաֆայելը։— Այլ այն ժամանակ, երբ նա թունդ հարբած կլինի։ Առաջ ճաշենք։

Երկու բարեկամները ծիծաղելով նստեցին։ Նախ և առաջ՝ հրավիրյալներից յուրաքանչյուրը խոսքը կանխող հայացքով իր հիացմունքի տուրքը վճարեց ձյան պես սպիտակ սփռոցով ծածկված երկարաձիգ և մեծասպաս սեղանին, որի վրա համաչափորեն բարձրանում էին օսլայված անձեռոցները՝ շիկագույն հացիկներով եզերված։ Աստղերի պես պսպղուն բյուրեղանոթները նշողում էին ծիածանի բոլոր գույներով, մոմերի լույսերը անվերջ խաչաձևում էին իրար, արծաթե կափույրների տակ դրված խորտիկները գրգռում էին ախորժակն ու հետաքրքրությունը։ Խոսքեր գրեթե չարտաբերվեցին։ Մերձակիցներն իրար նայեցին։ Մատռվակները մադերա լցրին։ Ապա երևաց առաջին ճաշը իր ամբողջ փառահեղությամբ, որը պատիվ կբերեր լուսահոգի Կամբասերեսին[52] և այն կփառաբաներ Բրիյա-Սավարենը[53]։ Բորդոյական և բուրգունդական սպիտակ և կարմիր գինիները մատուցվեցին արքայավայել լիառատությամբ։ Խնջույքի այս առաջին մասը ամեն տեսակետով կարելի էր համեմատել դասական մի ողբերգության ներածության հետ։ Երկրորդ արարվածը մի քիչ շաղակրատ անցավ։ Բոլոր կոչնականները բավականաչափ խմել էին, փոխելով գինիները իրենց ճաշակի համեմատ, և երբ հավաքեցին տարան պատվական ճաշի մնացորդները, արդեն սկսվեցին բուռն վեճերը։ Ոմանց դժգույն ճակատները կարմրել էին, ուրիշների մոտ քթերն սկսում էին շիկանալ, այտերը վառվում էին, աչքերը փայլում։ Գինովության այս արշալույսին խոսակցությունը դեռ դուրս չեկավ պատշաճության սահմաններից, բայց կատակներն ու սրամտությունները քիչ-քիչ սկսեցին ծորել բոլորի

---

[52] **Կամբասերես** — քաղաքական գործիչ ֆրանսիական հեղափոխության, և առաջին կայսրության շրջանում, քաղաքացիական օրենսգրքի հեղինակներից մեկը, հայտնի էր իր որկրամոլությամբ։

[53] **Բրիյա–Սավարեն** — «Համի բնախոսությունը» աշխատության հեղինակը։

բերաններից. ապա բամբասանքը կամացուկ բարձրացրեց իր օձի գլխիկը և սկսեց խոսել մելանուշ ձայնով. ծածկամիտները ուշիուշով լսում էին, հուսալով որ չեն կորցնի իրենց ողջամտությունը: Երկրորդ ճաշի սպասարկության ժամանակ գլուխներն արդեն տաքացել էին: Բոլորը կերան և խոսեցին, խոսեցին և կերան, խմեցին, առանց զգուշանալու հեղուկների ազդեցությունից, այնքան նրանք ախորժահամ և անուշահոտ էին, այնքան օրինակը վարակիչ եղավ: Հյուրերին ավելի բորբոքելու համար Տայֆերը հրամայեց մատուցել ռոնյան, տոկեյան, ռուսիյոնյան շատ թունդ, այրող, հին գինիներ: Եվ ահա, կայանից պոկված փոստակառքի ձիերի նման, այս երիտասարդները անհամբերությամբ սպասված, բայց առատորեն լցված շամպայնի կայծերից մտրակված, թողեցին, որ իրենց մտքերը սուրան դատարկության մեջ այն դատողությունների, որոնց ոչ ոք չի լսի, սկսեցին պատմել պատմություններ, որոնք ունկնդիրներ չեն ունենա, հարյուրերորդ անգամ տվին հարցեր, որոնք կմնան առանց պատասխանի: Միմիայն գինարբուքն էր բարձրացրել իր շառաչուն ձայնը, բազում խառնագոչերից բաղկացած ձայնը, որը հետզհետե աճում էր, ինչպես Ռոսսինիի[54] crescendo-ները: Ապա սկսվեցին նենգամիտ կենացները, պոռոտախոսությունները, անպատկառությունները: Բոլորը ձգտում էին պարծենալ ոչ թե իրենց իմացական կարողությամբ, այլ իրենց կարասների, հնձանների, մառանների տարողությամբ: Թվում էր, թե յուրաքանչյուրը երկու ձայն ուներ: Հասավ մի պահ, երբ տերերը խոսեցին միաժամանակ, իսկ ծառաները ժպտացին: Բայց խոսքերի այդ խառնաշփոթը, որտեղ կասկածելի փայլով անհեթեթությունները և անհեթեթորեն պաճուճված ճշմարտությունները բախվում էին իրար, իրենց համար ճանապարհ բանալով ճիչերի, առանձին դատաստանների և դատավճիռների միջով, ամեն տեսակ անմտությունների միջով, ինչպես ռումբերը, գնդակները և քարտիճները իրար են խաչաձևում մարտի մեջ,— անշուշտ, փիլիսոփային կհետաքրքրեր մտքերի արտակարգությամբ, քաղաքագետին կզարմացներ սիստեմների արտառոցությամբ: Դա նկար և գիրք էր միաժամանակ: Փիլիսոփայությունները, կրոնները, կառավարությունները, տարբեր լայնությունների տակ տարբեր բարոյական ըմբռնումները, մի խոսքով մարդկային բանականության բոլոր մեծ նվաճումները ընկան ժամանակի գերանդու տակ, և, թերևս, դժվար էր որոշել, թե այդ գերանդին գտնվում էր արբեցած Իմաստության ձեռքո՞ւմ, թե՞ իմաստուն և պայծառատես Արբեցության: Այս մրրկավար մտքերը, ինչպես ժայռեր կրծող ալիքներ, ասես պատրաստ էին խախտելու բոլոր օրենքները, որոնց միջև են ծփում քաղաքակրթությունները, այսպիսով առանց իմանալու կատարում էին կամքը աստծու, որը բնության մեջ է թողել բարին ու չարը և միայն իր համար է պահում նրանց անդադրում պայքարի գաղտնիքը: Մոլեգին և զավեշտական այդ բանավեճը գաղափարների մի տեսակ խառնարան եղավ: Օրաթերթի ծննդյան ժամանակ հեղափոխության այս զավակների արած տխուր կատակների և Գարգանտուայի ծննդյան ժամանակ զվարթ խմողների հայտնած դատողությունների միջև կար մի ամբողջ անդունդ, որը XIX դարը բաժանում է XVI դարից. այս դարը ծիծաղելով ավերածություն էր նախապատրաստում, մեր դարը՝ ծիծաղում էր ավերածությունների մեջ:

---

[54] **Ռոսսինի Ջոակինո** (1792—1868) — իտալացի երաժիշտ, հեղինակը «Սևիլյան սափրիչ», «Օթելլո», «Վիլհելմ Տելլ», «Շամիրամ» օպերաների, որոնք մեծ ժողովրդականություն էին վայելում Փարիզում Բալզակի ժամանակ:

— Ինչպե՞ս է այն երիտասարդի ազգանունը,— հարցրեց նոտարը, ցույց տալով Ռաֆայելին։— Կարծեմ լսեցի, որ նրան Վալանտեն անվանեցին։

— Կարծում եք, որ նա պարզապես Վալանտե՞ն է,— բացականչեց Էմիլը ծիծաղելով։— Ոչ, ներեցեք, նա Ռաֆայել դը Վալանտեն է։ Մեր տոհմանշանն է՝ **սև դաշտի վրա ոսկե արծիվ՝ արծաթե թագով, կարմիր մագիլներով ու կտուցով,** և ունի այս գեղեցիկ նշանաբանը՝ Non cecidit animus[55]։ Մենք ընկեցիկ չենք, մենք շառավիղն ենք կայսր Վալենտի[56], որը Վալանտինյան սերնդի նախահայրն է, ֆրանսիական Վալանս և իսպանական Վալենսիա քաղաքների հիմնադիրը. մենք օրինական ժառանգն ենք արևելյան կայսրության։ Եթե մենք Մահմուդին[57] թույլ ենք տալիս իշխելու Կոստանդնուպոլսում, դա զուտ նրա համար է, որ բարի կամք ունենք և փող ու զինվոր չունենք։

Էմիլը իր պատառաքաղով օդում Ռաֆայելի գլխի վրա թագ գծեց։ Նոտարը մի պահ մտասուզվեց, ապա նորից սկսեց խմել, արտահայտիչ մի շարժում անելով, որով նա կարծես խոստովանում էր, որ ինքը չի կարող իր հաճախորդների շարքը դասել Վալանսը, Վալենսիան, Կոստանդնուպոլիսը, Մահմուդը, Վալենտ կայսրը և Վալանտինյան տոհմը։

— Բաբելոն, Տյուրոս, Կարթագեն կամ Վենետիկ կոչված մրջնանոցների ոչնչացման մեջ, մրջնանոցներ, որոնք միշտ ճզմվել են անցնող մի հսկայի ոտքերի տակ, մի՞թե չպետք է տեսնել ինչ-որ հեգնական ուժի նախազգուշացումը ուղղված մարդկությանը,— ասաց Կլոդ Վինյոնը, այդ ստրուկը, որ գնվել էր տողը տասը սուով Բոսյուեին[58] ներկայացնելու համար։

— Մովսեսը, Սուլլան, Լուդովիկոս XI-ը, Ռիշելիեն, Ռոբեսպիերը և Նապոլեոնը, զուցե սրանք բոլորը հանդիսանում են միևնույն մարդը, որ վերահայտնվում է տարբեր քաղաքակրթությունների մեջ, ինչպես գիսավոր աստղը երկնքում,— պատասխանեց Բալլանշի[59] մի հետևորդ։

— Ի՞նչ կարիք կա փորձելու նախախնամությանը,— նկատեց գեղոններ հորինող Կանալիսը։

— Է՛հ, թողեք այդ նախախնամությունը.— բացականչեց **գիտակը**, ընդմիջելով նրան։— Աշխարհում չկա դրանից ավելի առաձգական բան։

---

[55] Ոգին չի թուլացել (լատ.)։

[56] **Կայսր Վալենտ** — Վալենտ Ֆլավիոս, արևելահռոմեական կայսր IV դարում։

[57] **Մահմուդ II** (1809—1839) — թուրքական սուլթան, հայտնի իր դաժանությամբ բալկանյան որոշ ժողովուրդների վերաբերմամբ։

[58] **Բոսյու, Ժակ-Բենին** (1627—1704) — ֆրանսիացի եպիսկոպոս, մի շարք պատմական և աստվածաբանական երկերի հեղինակ։

[59] **Բալլանշ Պիեր–Սիմոն** (1776—1847) — կրոնական զգացումներով տոգորված ֆրանսիացի գրող և փիլիսոփա։

— Բայց, պարոն, Լուդովիկոս XIV-ը ավելի շատ մարդ մեռցրեց ջրուղիներ փորել տալով տիկին դը Մենտենոնի համար[60], քան Կոնվենտը հարկերը արդար կերպով բաշխելու, օրենքի միասնություն հաստատելու, Ֆրանսիան ազգայնացնելու և ժառանգությունները հավասար բաժանելու համար,— ճամարտակեց Մուսսոլը, մի երիտասարդ, որ հանրապետական էր դարձել միայն այն պատճառով, որ իր ազգանվան առջև միավանկ մի մասնիկ պակասում էր:

— Արյունը ձեզ համար գինու գին ունի,— պատասխանեց նրան ուազցի խոշոր կալվածատեր Մորոն:— Դեհ, իսկ այս անգամ դուք թողնելո՞ւ եք մարդկանց գլուխները ուսերի վրա:

— Ինչո՞ւ: Մի՞թե հասարակական կարգի սկզբունքների համար չարժե անել որոշ զոհաբերություններ:

— Բիսիու: Լսո՞ւմ ես: Այս պարոն հանրապետականը կարծում է, որ այդ կալվածատիրոջ գլուխը զոհաբերություն կլինի,— ասաց մի երիտասարդ իր մերձակցին:

— Անձերն ու անցքերը ոչինչ են,— շարունակեց իր տեսությունը զարգացնել հանրապետականը, չնայած իր զկռտոցին,— քաղաքականության և փիլիսոփայության մեջ կան միայն գաղափարներ և սկզբունքներ:

— Ի՜նչ ահավոր բան: Եվ դուք ոչ մի խղճահարություն չէի՞ք ունենա սպանելով ձեր բարեկամներին մի «դը»-ի համար...

— Է՜հ, խղճահարություն ունեցող մարդը իսկական ոճրագործն է, քանի որ նա որոշ գաղափար ունի առաքինության մասին, մինչդեռ Մեծն Պետրոսը կամ Ալբայի դուքսը[61] սիստեմներ են, իսկ ծովահեն Մոմբարը[62] կազմակերպություն է:

— Բայց մի՞թե հասարակությունը չի կարող գոյություն ունենալ առանց ձեր սիստեմների և ձեր կազմակերպությունների,— հարցրեց Կանալիսը:

— Օ, ի՜նչ խոսք,— բացականչեց հանրապետականը:

— Ձեր ապուշ հանրապետությունը ինձ նողկանք է պատճառում: Հնարավոր չէ մի կրտած անասուն մորթել և նրա մեջ հողային օրենք չգտնել:

---

[60] **Տիկին դը Մենտենոնի համար** — Լուդովիկոս XIV-ի հրամանով ձեռնարկվեց շինությունը մի ջրմուղու, որով պետք է ջուր մատակարարվեր Վերսալին և Լուդովիկոս XIV-ի սիրուհի տիկին դը Մենտենոնի դղյակին: Վատ պայմանների և տաժանելի աշխատանքների հետևանքով բազմաթիվ գործավորներ մեռան այդ շինության ընթացքում: Շինությունը, սկսվելուց չորս տարի հետո, այսինքն՝ 1688 թվին, դադարեցվեց:

[61] **Ալբայի դուքս** (1508—1582) — իսպանացի զորավար, որ ծայրահեղ դաժանությամբ ճնշեց հեղափոխությունը Նիդեռլանդիայում:

[62] **Մոմբար** — նշանավոր ծովահեն XVII դարում: «Բնաջնջող» (Exter-minateur) մականունն ստացած Մոմբարի պատմությունը մի շարք գրական ստեղծագործությունների նյութ ծառայեց Ֆրանսիայում XIX դարի սկզբում:

— Քո համոզումները հիանալի են, գետնասունկերով լցված Բրուտոս[63]: Բայց դու հիշեցնում ես իմ ծառային. անպիտանը մաքրասիրության այնպիսի մոլուցք ունի, որ եթե նրան թույլ տամ, որ հագուստներս ուզածին պես մաքրի, մերկ դուրս կգամ:

— Դուք անասուններ եք: Դուք ուզում եք ազգը մաքրել ատամնամաքրիչով,— նկատեց երդվյալ հանրապետականը:— Ձեր կարծիքով արդարադատությունը գողերից ավելի վտանգավոր է:

— Դե՛հ, դե՛հ,— բացականչեց փաստաբան Դերոշը:

— Նրանք ինչքա՜ն տաղտկալի են իրենց քաղաքականությամբ,— ասաց նոտար Կարդոն:— Փակեցե՛ք դուռը: Չկան այնպիսի գիտություններ և այնպիսի առաքինություններ, որոնք թեկուզ մի կաթիլ արյուն արժենան: Եթե փորձենք ճշմարտության հաշվեհարդարը անել, գուցե այն սնանկացած գտնենք:

— Իհարկե, վատ հաշտությունը իսկական կռվից լավ է: Ուստի քառասուն տարուց ի վեր ամբիոններից արտասանված բոլոր ճառերը ես կտայի մի կարմրախայտի, Պերրոյի[64] մի հեքիաթի կամ Շառլեի[65] մի ուրվանկարի համար:

— Դուք շատ իրավացի եք... Այստեղ տվեք ծնեբեկը... Որովհետև վերջ ի վերջո ազատությունը ծնում է անիշխանություն, անիշխանությունը տանում է դեպի բռնապետություն, իսկ բռնապետությունը նորից տանում է դեպի ազատություն: Միլիոնավոր էակներ ոչնչացան, չկարողանալով հաղթանակ ապահովել այս սիստեմներից մեկի համար: Մի՞թե սա ախտավոր շրջանակ չէ, որի մեջ հավետ պետք է պտտվի բարոյական աշխարհը: Մարդ կարծում է, թե կատարելագործել է այն, ինչ միայն տեղաշարժել է:

— Օհո՜,— գոչեց վոդևիլների հեղինակ Կյուրսին:— Ուրեմն, պարոններ, ես խմում եմ ազատության հայր Կառլոս X-ի[66] կենացը:

— Ի՞նչու չէ,— ասաց Էմիլը:— Երբ բռնակալությունը օրենքների մեջ է, ապա ազատությունը բարքերի մեջ է, և ընդհակառակն:

— Ուրեմն խմենք տխմարության կենացը այն իշխանության, որ մեզ այնքան իշխանություն է տալիս տխմարների վրա,— ասաց դրամատերը:

---

[63] **Բրուտոս** — այստեղ նշանակում է հանրապետական: Հին Հռոմի պատմության մեջ հայտնի են հանրապետության ջատագով երկու Բրուտոսներ:

[64] **Պերրո Շառլ** (1628—1703) — ֆրանսիացի գրող, որ հռչակվեց իր հեքիաթներով:

[65] **Շառլե Նիկոլա** (1792—1845) — ֆրանսիացի նկարիչ, նշանավոր ռազմական տեսարանների նկարներով:

[66] **Ազատության հայր Կառլոս X** — Կառլոս X-ի թագավորության ժամանակ (1824—1830) Ֆրանսիայում սրվեցին միապետական և կաթոլիկական ձգտումները: Կառլոս I-ը հեգնաբար «ազատության հայր» է հորջորջվում:

— Է՛հ, սիրելիս, Նապոլեոնը գոնե մեզ փառք թողեց,— գոչեց ծովային մի սպա, որ երբեք դուրս չէր եկել Բրեստից։

— Ա՛յ, փառքը անձեռնտու ապրանք է։ Նա թանկ է նստում և վատ է պահվում։ Մի՞թե փառքը մեծ մարդկանց եսամոլությունը չէ, ինչպես երջանկությունը՝ հիմարների եսամոլությունը։

— Հավանաբար դուք շատ երջանիկ եք...

— Ով առաջինը ցանկապատեց իր սեփականությունը, նա, անկասկած, թույլ մարդ էր, քանի որ հասարակությունը օգուտ է տալիս միայն ապիկար մարդկանց։ Վայրենին և, մտածողը, որոնք գտնվում են հոգեկան աշխարհի երկու տարբեր ծայրերին, հավասարապես սարսափում են սեփականությունից։

— Լա՛վ,— գոչեց Կարդոն։— Բայց եթե սեփականություններ չլինեին, մենք ինչպե՞ս կկարողանայինք նոտարական գործեր կազմել։

— Ահա հիանալի համ ունեցող ոլոռներ։

— Իսկ հետևյալ օրը քահանային մեռած գտան անկողնում։

— Ո՞վ է խոսում մեռածի մասին... Հանաք մի՛ անեք դրա հետ։ Ես մի հորեղբայր ունեմ...

— Դուք իհարկե չէիք ափսոսա, եթե նա մեռներ։

— Ի՛նչ խոսք։

— Լսեցեք, պարոններ... ԻՐ ՀՈՐԵՂԲՈՐԸ ՍՊԱՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿ։ ՍՈՒՍ։ (**Լսեցեք, լսեցեք**)։ Նախ և առաջ ունեցեք կարճ և հաստ մի հորեղբայր, առնվազն յոթանասուն տարեկան, դա լավագույն տեսակի հորեղբայր է (**ընդհանուր աշխուժություն**)։ Որևէ պատրվակով նրան կերցրեք սագի լյարդից կարկանդակ...

— Դե՛հ, իմ հորեղբայրը երկար, նիհար, ժլատ և ժուժկալ է։

— Օ՛, այդպիսի հորեղբայրները կյանքը չարարկող հրեշներ են։

— Եվ,— շարունակեց հորեղբայրների մասին ճառող մարդը,— նրա մարսողության ժամանակ նրան կհայտնեք, որ իր բանկիրը սնանկացել է։

— Եթե դիմանա՞։

— Նրան կտաք մի սիրուն աղջիկ։

— Իսկ եթե նա...— ասաց մյուսը, բացասական նշան անելով։

— Ուրեմն նա հորեղբայր չէ... Հորեղբայրը իր էությամբ ժիր է լինում։

— Մալիբրանի[67] ձայնը երկու նոտայով իջել է։

---

[67] **Մալիբրան** (1808—1836) — նշանավոր երգչուհի Փարիզի օպերային թատրոնում, ուր սկսեց հանդես գալ 1828 թվականից։

— Ո՛չ:

— Այո՛:

— Օհո՛: Այո և ոչ — մի՞թե սրան չի հանգում կրոնական, քաղաքական և գրական բոլոր բանավեճերի պատմությունը: Մարդը անդունդների վրա պարող խեղկատակ է:

— Ուրեմն ես հիմար եմ, որ ձեզ լսում եմ:

— Ընդհակառակը, հիմար եք, որ ինձ չեք լսում:

— Կրթությունը պարզապես անմտություն է: Պարոն Հեյնֆետտերմախը միլիարդից ավելի է հաշվում տպագրած հատորների թիվը, իսկ մարդու ամբողջ կյանքը թույլ է տալիս կարդալ ընդամենը հարյուր հիսուն հազար հատոր: Խնդրեմ, ինձ բացատրեցեք, թե ինչ է նշանակում «կրթություն» բառը: Ոմանց համար կրթությունն այն է, որ գիտենաս Ալեքսանդր Մակեդոնացու ձիու կամ պարոն Դեզակկորի շան անունները, և գաղափար չունենաս նրանց մասին, որոնց մենք պարտական ենք լաստով փայտ փոխադրելու հնարքը կամ հախճապակու գյուտը: Ուրիշների համար կրթված լինել նշանակում է կտակ գողանալ և պարկեշտ, սիրված ու հարգված մարդու անուն հանել, այլ ոչ թե ժամացույց թռցնել (այն էլ երկրորդ անգամ և հանցանքը ծանրացնող հինգ հանգամանքներում) և ապա գնալ մեռնելու Գրեվի հրապարակում, ատելության և անպատվության առարկա դարձած:

— Նաթանը մնալո՞ւ է:

— Է՛հ, նրա աշխատակիցները բավական խելոք մարդիկ են:

— Իսկ Կանալի՞սը:

— Նա մեծ մարդ է, նրա մասին չխոսենք:

— Դուք հարբած եք:

— Սահմանադրության անմիջական հետևանքը մտքերի տափակացումն է: Արվեստները, գիտությունները, ճարտարապետական կոթողները, այդ բոլորը կրծում է ահավոր եսամոլությունը, մեր ժամանակի բորը: Ձեր երեք հարյուր բուրժուաները, նստելով Պալատի նստարանների վրա, մտածելու են միայն կաղամախիներ տնկելու մասին: Բռնապետությունը մեծ գործեր է կատարում անօրինական կերպով, իսկ ազատությունը նեղություն չի կրում նույնիսկ փոքր գործեր կատարելու օրինական կերպով:

— Ձեր փոխադարձ ուսուցումը պատրաստում է հարյուր սուանոց մարդկային դրամներ,— միջամտեց մի բացարձակ միապետական:— Կրթությամբ հավասարված ժողովրդի մեջ անհատականություններն անհետանում են:

— Բայց մի՞թե հասարակության նպատակը յուրաքանչյուրի բարեկեցությունը ապահովելը չէ,— հարցրեց սենսիմոնականը:

— Եթե դուք հիսուն հազար լիվր հասույթ ունենայիք, այնքան էլ չէիք մտածի ժողովրդի մասին: Դուք մարդկությանը ծառայելու ազնիվ զգացումներո՞վ եք տոգորված: Գնացեք Մադագասկար. դուք այնտեղ կգտնեք փոքրիկ թարմ մի ժողովուրդ, որը շատ հարմար է սեն-

սիմոնականացնելու, բարեկարգելու, ապակե անոթի մեջ պահելու համար, իսկ այստեղ մեզ մոտ ամեն մեկը ազատորեն մտնում է իր բջիջի մեջ, ինչպես ցիցը ծակի մեջ: Այստեղ դռնապանները դռնապան են, հիմարները՝ հիմար, և նրանք անհրաժեշտություն չեն զգում առաջ քաշվելու եկեղեցու հայրերի կողմից:

— Դուք կառլիստ[68] եք:

— Ինչո՞ւ չէ: Ես սիրում եմ բռնապետությունը, նա որոշ արհամարհանք է ենթադրում մարդկային ցեղի նկատմամբ: Ես չեմ ատում թագավորներին: Նրանք այնքան զվարճալի են: Գահակալել Պալատում, արևից երեսուն միլիոն մղոն հեռավորության վրա, մի՞թե դա դատարկ բան է:

— Ամփոփենք քաղաքակրթության մասին այս ընդհանուր ակնարկը,— ասաց գիտնականը, փորձելով բան հասկացնել անուշադիր քանդակագործին, և սկսեց դատողություններ անել մարդկային հասարակության սկզբնական զարգացման և նախնադարյան ժողովուրդների մասին:

Ժողովուրդների ծագման ժամանակ տիրապետությունը որոշ չափով նյութական, միասնական և բիրտ էր. հետագայում, երբ համախմբումներն աճեցին, սկսեցին հիմնվել կառավարություններ, որոնք առավել կամ նվազ ճարպիկ եղանակներով կազմալուծեցին նախնական իշխանությունը: Այսպես, խոր հնության ժամանակ ուժը կենտրոնացված էր թեոկրատիայի ձեռքում. քուրմը պահում էր սուրն ու բուրվառը: Ավելի ուշ երևան եկան երկու գերագույն հոգևոր դեմքեր — քահանայապետն ու թագավորը: Ներկայումս մեր հասարակությունը, քաղաքակրթության վերջին աստիճանը՝ իշխանությունը բաշխել է կոմբինացիաների թվի համաձայն, և մենք գործ ունենք ա՛յն ուժերի հետ, որոնք կոչվում են ճարտարարվեստ, միտք, փող, խոսք: Եվ ահա իշխանությունը, միությունից զրկվելով, տանում է դեպի հասարակության քայքայում, որին միակ խոչընդոտ է ծառայում շահը: Այսպիսով, մենք հենվում ենք ոչ կրոնի վրա, ոչ նյութական ուժի վրա, այլ բանականության վրա: Բայց արդյո՞ք դիրքը համարժեք է սրին, դատողությունը՝ գործողության: Ահա դա է հարցը:

— Բանականությունն ամեն ինչ սպանել է,— գոչեց կառլիստը:— Բացարձակ ազատությունը ազգերին տանում է դեպի ինքնասպանություն. հաղթանակ տանելով, նրանք կսկսեն ձանձրանալ, ինչպես անգլիացի միլիոնատերը:

— Է՛լ ի՞նչ նոր բան կասեք մեզ: Այսօր դուք ծաղրուծանակի առարկա դարձրիք բոլոր տեսակի իշխանությունները, բայց դա նույնքան զոհեկություն է, որքան աստծուն ժխտելը: Դուք այլևս ոչ մի բանի չեք հավատում: Հենց դրա համար մեր դարը նման է ցոփությունից կործանված ծեր սուլթանին: Ձեր լորդ Բայրոնը, հասնելով բանաստեղծական հուսահատության վերջին աստիճանին, սկսեց տարփողել ոճրագործությունը[69]:

---

[68] **Կառլիստ** — կողմնակից Կառլոս թագավորի, որին տապալեց 1830 թվականի Հուլիսյան հեղափոխությունը:

[69] **Ձեր լորդ Բայրոնը... սկսեց տարփողել ոճրագործությունը** — Բայրոնի շատ պոեմների հերոսներ միայնակ, հպարտ, հասարակության օրենքները ոտնահարող մարդիկ են:

— Գիտե՞ք ինչ,— ասաց Բիանշոնը բոլորովին հարբած,— ֆոսֆորի ավելի կամ պակաս քանակը մարդուն դարձնում է հանճարեղ կամ ոճրագործ, խելացի կամ ապուշ, առաքինի կամ հանցագործ:

— Մի՞թե կարելի է այդպես դատել առաքինության մասին,— բացականչեց Կյուրսին,— առաքինության, որ բոլոր թատերական երկերի նյութն է, բոլոր դրամաների լուծումը, բոլոր դատական հիմնարկների հիմքը...

— Լռի՛ր, հիմա՛ր: Քո առաքինությունը առանց գարշապարի Աքիլլեսն է[70],— ասաց Բեսիուն:

— Խմե՛նք:

— Ուզո՞ւմ ես գրազ գանք, որ ես մի շնչով մի շիշ շամպայն կխմեմ:

— Լավ միտք է,— գոչեց Բիսիուն:

— Նրանք սայլապանների պես խմած են,— ասաց մի երիտասարդ, որ լրջորեն գինին խմեցնում էր իր բաճկոնին:

— Այո, ներկայումս կառավարման արվեստը պահանջում է, որ իշխանություն ստանա հասարակական կարծիքը:

— Հասարակական կարծի՞քը: Բայց դա ամենաանբարոյականն է բոլոր պոռնիկներից: Լսելով ձեզ, պարոն բարոյագետներ և քաղաքագետներ, մենք պետք է միշտ գերադասենք ձեր օրենքները բնությունից, հասարակական կարծիքը խղճից: Թողե՛ք, ամեն ինչ ճիշտ է, ամեն ինչ սուտ է: Եթե հասարակությունը մեզ բմբուլ տվեց բարձերի համար, ապա այդ բարեգործությունը փոխհատուցվում է հոդացավով, ինչպես որ արդարադատությունը փոխհատուցվում է դատական քաշքշուկով, իսկ քիշմիրե շալերը՝ հարբուխով:

— Հրե՛շ,— ասաց Էմիլը, ընդմիջելով մարդատյացին:— Ինչպե՞ս կարելի է քաղաքակրթությունը վատաբանել հրաշալի գինիների ու խորտիկների, այս լիառատ սեղանի առաջ: Կրծիր ոսկեզօծ կճղակներով եղջյուրներով այս այծյամին, բայց մի կծիր քո մորը...

— Մի՞թե իմն է հանցանքը, եթե կաթոլիկությունը հասնում է այնտեղ, որ մի պարկի մեջ է խոթում հազարավոր աստվածներ, եթե հանրապետությունը միշտ վերջանում է մի

Այդպիսին են ավազակ Սելիմը («Աբիդոսյան հարսնացուն»), ծովահեն Կոնրադը («Ծովահեն»): Իր երկերից մեկի («Կայեն») հերոսը Բայրոնը դարձրեց Կայենին, որը, քրիստոնեական ավանդության համաձայն, առաջին մարդասպանը եղավ աշխարհում, սպանելով իր եղբորը՝ Աբելին: Բայրոնի մոտ Կայենը ապստամբ է, որ ընդվզում է աստծու բռնակալության դեմ:

[70] **Առանց գարշապարի Աքիլլեսն է** — այսինքն՝ անխոցելի է. ըստ հունական դիցաբանության, հերոս Աքիլլեսի մարմնի վրա միակ խոցելի տեղը նրա գարշապարն էր:

Նապոլեոնով, եթե թագավորական իշխանությունը գտնվում է Հենրիկ IV-ի սպանության և Լուդովիկոս XVI-ի գլխատության միջև, եթե լիբերալիզմը դառնում է Լաֆայետ[71]:

— Իսկ դուք հուլիսին չգրկախառնվեցի՞ք նրա հետ:

— Ո՛չ:

— Ուրեմն լռեցեք, սկեպտիկ:

— Սկեպտիկները ամենախղճամիտ մարդիկն են:

— Նրանք խիղճ չունեն:

— Ի՛նչ եք ասում: Նրանք առնվազն երկու խիղճ ունեն:

— Ձեղչել երկնքի մուրհակը,— ահա իսկական առևտրական միտք: Հին կրոնները լոկ հանդիսանում էին ֆիզիկական հաճույքի երջանիկ զարգացումը, իսկ մենք զարգացրել ենք հոգին և հույսը. այստեղ հառաջադիմություն կա:

— Ա՛հ, բարեկամներ, ի՞նչ կարող եք սպասել մի դարից, որ հագեցած է քաղաքականությամբ,— ասաց Նաթանը:— Ի՞նչ վախճան ունեցավ «Բոհեմիայի թագավորի և նրա յոթ դղյակների պատմությունը»[72]:

— Ի՞նչ,— գոչեց **գիտակը** ամբողջ սեղանի երկայնքով:— Բայց դա մատից ծծած խոսքերի խառնակույտ է, գժանոցի համար գրված գործ:

— Հիմա՛ր:

— Խելա՛ռ:

— Օհօ՛:

— Էհե՛:

---

[71] **Եթե թագավորական իշխանությունը գտնվում է... եթե լիբերալիզմը դառնում է Լաֆայետ** — Ֆրանսիայի ամենահզոր թագավորական տոհմը բուրբոնների տոհմն էր: Նրա հիմնադիրը, Հենրիկ IV Բուրբոնը, 1610 թվին սպանվեց ճիզվիտ Ռավալյակի ձեռքով: XVIII դարի ֆրանսիական հեղափոխությունը տապալեց Բուրբոնների արքայատոհմը: Լուդովիկոս XVI-ը Կոնվենտի վճռով գլխատվեց 1793 թվին: Բալզակը հեգնանքով է խոսում Մարի Ժոզեֆ Լաֆայետի (1757—1834) քաղաքական գործունեության մասին: Բաստիլի գրավումից (1789) հետո դառնալով ազգային պահակազորի հրամանատար, Լաֆայետը ամեն կերպ արգելակ հանդիսացավ հեղափոխության հետագա զարգացմանը: Լինելով լիբերալների պարագլուխներից մեկը, 1830 թվի հեղափոխության ժամանակ նպաստեց Լուի Ֆիլիպի գահակալությանը:

[72] **«Բոհեմիայի թագավորի և նրա յոթ դղյակների պատմությունը»** — ֆրանսիացի ռոմանտիկ գրող Շառլ Նոդիեի (1780—1844) պատմվածքը: Նոդիեի այս պատմվածքը հրապարակվել է 1830 թվին: «Շագրենի կաշի»-ի առաջին հրատարակություններում հիշվում է Նոդիեի մի ուրիշ պատմվածքը՝ «Սմարրան», որը լույս է տեսել 1821 թվին:

— Նրանք հիմա կկռվեն։

— Ո՛չ։

— Վաղը, պարոն։

— Չէ՛, հիմա,— ասաց Նաթանը։

— Դե՛հ, դե՛հ, երկուսդ էլ կտրիճներ եք։

— Մի կտրիճ էլ դո՛ւ ես,— ասաց գրգռիչը։

— Միայն թե նրանք չեն կարողանում ոտքերի վրա կանգնել։

— Ահ, ես չեմ կարողանում կանգնե՞լ, կարող է պատահել,— ասաց կռվազան Նաթանը, աշխատելով կանգուն մնալ դեղնուն ոտքերի վրա։

Նա բութ մի հայացք նետեց սեղանի վրա, և ասես ուժաթափված կանգնելու համար գործադրած ճիգից, ընկավ աթոռին, իջեցրեց գլուխը և լռեց։

— Ծիծաղելի չէ՞ր լինի, որ կռվեի մի երկի պատճառով, որը ոչ կարդացել եմ, ոչ էլ նույնիսկ տեսել,— ասաց **գիտակը** իր մերձակցին։

— Էմիլ, ֆրակդ զգույշ պահիր, կողքինդ գույնը գցել է,— ասաց Բիսիուն։

— Կա՞նտը։ Դարձյալ մի գնդակ, որ նետված է անմիտներին զվարճացնելու համար։ Նյութապաշտությունը և ոգեպաշտությունը երկու սիրուն հրթիռներ են, որոնցով պատմուճանավոր խաբեբաները նետում են միևնույն փետրագունդը։ Աստված ամեն ինչի մեջ է, ըստ Սպինոզայի, թե ամեն ինչ բխում է աստծուց, ըստ սուրբ Պողոսի... Տխմարնե՛ր։ Բանալ կամ փակել դուռը, մի՞թե դա միևնույն շարժումը չէ։ Զո՞ւն է հավից, թե հավը ձվից։ (Այստեղ տվեք բադը)։ Ահա՛ ամբողջ գիտությունը։

— Անխե՛լք,— գոչեց նրան գիտնականը։— Քո առաջադրած հարցը լուծվում է մի փաստով։

— Ի՞նչ փաստով։

— Պրոֆեսորական ամբիոննե՞րն են ստեղծվել փիլիսոփայության համար, թե՞ փիլիսոփայությունը ամբիոնների համար։ Դիր ակնոցդ և կարդա բյուջեն։

— Գողե՛ր։

— Ապուշնե՛ր։

— Սրիկանե՛ր։

— Բթամիտնե՛ր։

— Ուրիշ որտե՞ղ դուք կգտնեք մտքերի այնքան աշխույժ, այնքան արագ փոխանակություն, բացի Փարիզից,— գոչեց Բիսիուն, հանկարծ ձայնը ստվարացնելով։

— Դեհ, քեզ տեսնենք, Բիսիու, դասական մի զավեշտախաղ կամ որևէ ծաղրապատկեր ներկայացրու մեզ համար:

— Ուզո՞ւմ եք ձեզ ներկայացնեմ XIX դարը:

— Լսեցե՛ք:

— Լռությո՛ւն:

— Բերաններդ փակեցե՛ք:

— Դու լռելո՞ւ ես, թե չէ, խրտվիլակ:

— Գինի տվեք նրան, և թող լռի:

— Դեհ, Բիսիու, սկսիր:

Դերակատարը իր սև ֆրակը վերից վար կոճկեց, դեղին ձեռնոցները դրեց և, մի աչքը կկոցելով, ծամածռություններ անելով, ներկայացրեց «Ռեվյու դը Դյո Մոնդ»-ը[73], բայց աղմուկը ի վերջո խլացրեց նրա ձայնը, այնպես որ ոչ մի բառ հնարավոր չեղավ լսել նրա ծաղրաբանությունից: Եթե ոչ XIX դարը, գոնե հանդեսը նա կարողացավ ներկայացնել. բայց ինքն էլ չլսեց իր խոսքերը:

Աղանդերը հրամցվեց ինչպես դյութական բան: Ամբողջ սեղանը գրավեց ոսկեզօծ բրոնզե մի մեծղի սպասք, որ պատրաստված էր Թոմիրի արհեստանոցում[74]: Բարձրահասակ սպասյակների քանդակներ, որոնց երևելի մի արվեստագետ տվել էր այն ձևերը, որոնք անթերի գեղեցկություն են համարվում Եվրոպայում, ուսերի վրա պահած տանում էին ելակների, անանասների, թարմ արմավենիների, դեղնագույն խաղողների, ոսկեգույն դեղձերի, Սետաբյուլից[75] նավով բերված նարինջների, նուռերի, Չինաստանից բերված մրգերի ամեն տեսակ ամբողջ բուրգեր, մի խոսքով, ճոխության անակնկալներ, հրուշակային արվեստի հրաշալիքներ, ամենահամեղ համադամներ, ամենահրապուրիչ քաղցրավենիքներ: Քմապարար այս պատկերների գույներն ավելի ցայտուն դարձան հախճապակու փայլից, ոսկեցոլ եզրազարդերից, անոթների կորություններից: Օվկիանոսի ալիքների փրփրուն թավիշի նման քնքուշ, կանաչ ու թեթև մամուռը պսակել էր Պուսենի բնանկարների հախճապակե պատճենները: Գերմանացի մի իշխանի ունեցվածքը չէր բավականացնի այդ լպիրշ ճոխությունը վճարելու համար: Արծաթը, սադափը, ոսկին, բյուրեղները նորից երևացին իրենց բազմազան ձևերով. բայց գինովության տենդագին շատախոսությամբ բռնված հյուրերի մշուշապատ աչքերը գրեթե չնկատեցին արևելյան հեքիաթին արժանի այդ կախարդանքը: Աղանդերային գինիները այստեղ բերին իրենց քաղցր բույրերն ու բորբ բոցերը, իրենց բարկ հյութերն ու զգլխիչ գոլորշիները, առաջացնելով մի տեսակ մտային

---

[73] **«Ռեվյու դը Դյո Մոնդ»** — հանդես, որի խմբագիր Ֆրանսուա Բյուլոզը շիլ էր:

[74] **Թոմիրի արհեստանոց** — ոսկերչական խանութ, որ գոյություն ուներ Փարիզում Բալզակի ժամանակ:

[75] **Սետաբյուլ** — քաղաք Պորտուգալիայում:

պատրանք, հզոր կապանքներով կաշկանդելով ոտքերը, ծանրացնելով ձեռքերը: Մրգերի բուրգերը հափշտակվեցին, ձայները կոպտացան, ժխորը մեծացավ: Խոսքերն անորոշ դարձան, բաժակները ջարդուփշուր եղան, վայրենի քրքիջները թռան ինչպես հրթիռներ: Կյուրսին բռնեց եղջերափողը և սկսեց շեփորել: Դա դևի տված ազդանշանի նման հնչեց: Խելացնորված հավաքախումբը սկսեց երգել, ոռնալ, շչալ, ճչալ, մռնչալ: Չէր կարելի չժպտալ, տեսնելով ի բնե զվարթ այս մարդկանց, որոնք հանկարծ դարձել էին մռայլ, ինչպես Կրեբիյոնի[76]

ողբերգությունների վախճանը, կամ մտախոհ, ինչպես կառքով ճանապարհորդող ծովայինները: Ծածկամիտները իրենց գաղտնիքները հայտնում էին հետաքրքրասերներին, որոնք չէին լսում: Մելամաղձոտները ժպտում էին, ինչպես պարուհիները հոլովապարից հետո: Կլոդ Վինյոնը երերում էր, ինչպես արջը վանդակում: Մերձավոր բարեկամները պատրաստ էին ծեծկվելու: Մարդկային դեմքերի վրա դրոշմված կենդանական նմանությունները, որոնց մասին այնքան հետաքրքրական բացատրություններ են տվել բնախոսները, սկսում էին երևան գալ շարժումների ու կեցվածքների մեջ: Որևէ Բիշա[77], հանկարծ ընկնելով այստեղ, մի ամբողջ պատրաստի գիրք կգտներ իր համար: Տանտերը, զգալով, որ ինքը հարբած է, սիրտ չարեց վեր կենալ, աշխատելով պահել իր վայելուչ և սիրալիր տեսքը, նա միայն դեմքի վրա սառած ծամածռություններով հավանություն էր տալիս հյուրերի զառանցանքներին: Նրա լայն դեմքը կարմրել-կապտել էր, դարձել էր գրեթե մանիշակագույն և ահավոր, գլուխը մասնակցում էր ընդհանուր շարժմանը այնպիսի ճոճումներով, որոնք նման էին առագաստանավի ճոճումներին:

— Դո՞ւք սպանեցիք նրանց,— հարցրեց նրան Էմիլը:

— Ասում են, Հուլիսյան հեղափոխության շնորհիվ մահապատիժը պիտի վերանա,— պատասխանեց Տայֆերը խորամանկ և միաժամանակ հիմար տեսքով հոնքերը քռստելով:

— Բայց դուք նրան երբեմն չե՞ք տեսնում երազում,— աշխատեց իմանալ Ռաֆայելը:

— Վաղեմության պայմանաժամն արդեն անցել է,— ասաց ոսկիների մեջ լողացող մարդասպանը:

— Եվ նրա շիրիմի վրա,— խայթող հեգնանքով գոչեց Էմիլը,— տապանագրողը կարձանագրի. **«Ո՛վ անցորդներ, մի կաթիլ արցունք թափեցեք նրա հիշատակին»:**

Օ՛,— շարունակեց նա,— ես հարյուր սու կտայի այն մաթեմատիկոսին, որը հանրահաշվական հավասարության միջոցով ինձ կապացուցեր դժոխքի գոյությունը:

Մի դրամ նետելով վերև, նա գոչեց.

— Թռչո՛ւն, հանուն աստծու:

---

[76] **Կրեբիյոն** (1674—1762) — ֆրանսիացի թատերագիր, որի ողբերգությունները լի էին սարսափներով և միշտ վերջանում էին արյունալի, մռայլ տեսարաններով:

[77] **Բիշա** (1771—1802) — ֆրանսիացի բժիշկ-բնախոս:

— Մի՛ նայեք,— ասաց Ռաֆայելը, բռնելով դրամը։— Ո՞վ է իմանում: Բախտը այնքան զվարճալի է:

— Ավա՛ղ,— հարեց Էմիլը տխուր հեգնանքով։— Չգիտես ուր կոխես, ամենուրեք անհավատի երկրաչափությունը կամ պապի Pater noster-ն է: Այնուամենայնիվ, խմենք: Կոնծիր, այս է, կարծեմ, աստվածային 22ի պատգամը «Պանտագրյուել»-ի վերջում[78]

:

— Մենք Pater noster-ին ենք պարտական,— պատասխանեց Ռաֆայելը,— մեր արվեստները, մեր ճարտարապետական կոթողները, գուցե և մեր գիտությունները, և դեռ ավելի մեծ բարիքները՝ մեր ներկա կառավարությունները, որտեղ հինգ հարյուր մտքեր հրաշալիորեն ներկայացնում են ընդարձակ և բեղմնավոր մի հասարակություն, և որտեղ հակադիր ուժերը չեզոքացնում են միմյանց, ամբողջ իշխանությունը թողնելով

քաղաքակրթությանը,

հսկայական թագուհուն, որ փոխարինել է թագավորին, այդ հին և ահեղ վեհապետին, յուրատեսակ կեղծ դատավորին, որին մարդը դարձրել էր միջնորդ իր և երկնքի միջև: Այսքան իրականացումների դեմհանդիման անաստվածությունը երևում է ինչպես մի կմախք, որ բացարձակապես ոչինչ չի ծնում: Դու ի՞նչ ես ասում այս մասին։

— Ես մտածում եմ կաթոլիկության թափած արյան հեղեղների մասին,— ասաց Էմիլը սառնությամբ։— Նա թափանցեց և ողողեց մեր երակներն ու մեր սրտերը: Բայց հոգ չէ: Ամեն մտածող մարդ պարտավոր է քայլել Քրիստոսի դրոշի ներքո: Միայն Քրիստոսը սրբագործեց ոգու հաղթանակը նյութի վրա, միայն նա մեզ բացահայտեց բանաստեղծական աշխարհը, որ միջնորդ է ծառայում մեր և աստծու միջև:

— Կարծո՞ւմ ես,— հարցրեց Ռաֆայելը հարբածի անիմաստ ժպիտով։— Լավ ուրեմն, որպեսզի մեզ չարատավորենք, բարձրաձայն առաջարկենք նշանավոր կենացը. Diis ignotis[79]:

Եվ նրանք պարպեցին բաժակները, գիտության, ածխագազի, անուշահոտության, բանաստեղծության և անհավատության բաժակները:

— Հրամմեցեք հյուրասրահ, սուրճը պատրաստ է,— հայտարարեց սպասարկապետը։

Այդ պահին գրեթե բոլոր հրավիրյալները սուզվել էին նախադրախտային այն հեշտանքների մեջ, ուր բանականության լույսերը շիջում են, ուր մարմինը, իր բռնակալից ազատագրված, անձնատուր է լինում ազատության խելացնող ցնծություններին: Ոմանք, հասնելով արբեցության գագաթնակետին, մռայլվել էին, տենդորեն ջանալով կառչել մի մտքից, որը նրանց հավաստեր իրենց սեփական գոյությունը, ուրիշներ, ծանր մարսողությունից

---

[78] **Աստվածային 22ի պատգամը...** — ակնարկում է Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպի վերջին դրվագներից մեկը: Երկար որոնումներից հետո վեպի հերոսները ընկնում են Աստվածային 22ի տաճարը. պատգամախոսը նրանց արտասանում է միայն մի բառ — կոնծիր:

[79] Անհայտ աստծուն (լատ.)։

կարկամած, ժխտում էին շարժումը: Աննկուն ճառախոսներ դեռևս արտաբերում էին տարտամ խոսքեր, որոնց իմաստը իրենք էլ չէին հասկանում: Մի քանի հանկերգներ դեռ հնչում էին ինչպես հոնդյունը մեքենայի, որ հարկադրաբար կատարում է իր արվեստական և անհոգի կյանքին հատուկ շարժումը: Լռությունն ու ժխորը արտառոց կերպով զուգակցվել էին: Բայց և այնպես, լսելով ձայնը սպասյակի, որ տանտիրոջ փոխարեն նոր ուրախություններ էր ծանուցում, հյուրերը վեր կացան և ուղղվեցին հյուրասրահ, մեկը մյուսին բռնելով, քաշելով կամ հրելով: Բոլորը մի րոպե անշարժ և հիացած կանգնեցին շեմերի վրա: Խնջույքի բոլոր հաճույքները նսեմացան այն գրգռիչ տեսարանի առջև, որ հյուրընկալ տանտերն առաջարկում էր ի զվարճություն նրանց ամենահեշտասեր զգայարանին: Ոսկե ձեղնաջահի մոմերի շողշողուն լույսերի տակ, ոսկեզօծ արծաթեղենով զարդարված սեղանի շուրջը հանկարծ կանանց մի խումբ ներկայացավ ապշահար հյուրերին, որոնց աչքերը բոցկլտացին ինչպես ադամանդներ: Զարդարանքները ճոխ էին, բայց առավել ևս ճոխ էին կանացի շլացուցիչ գեղեցկությունները, որոնց առջև դժգունում էին այս ապարանքի բոլոր հրաշալիքները: Փերիների նման դյութական աղջիկների տռփոտ նայվածքները ավելի վառվռուն էին, քան այն լույսի հեղեղները, որոնք ցոլցոլում էին սնդուսե պաստառների, մարմարների սպիտակության և բրոնզների նուրբ ցայտքերի վրա: Սրտերը վառվում էին նրանց վետվետուն վարսերի, այլազան հրապույրներով և այլազան ձևերով կեցվածքների տեսքից: Աչքերը հիացմունքով դիտում էին սուտակների, շափյուղաների և բուստերի հետ ընդելուզված ծաղիկների նարոտը, ձյունաթույր պարանոցների վրա սև մանյակների շղթան, փարոսի բոցերի նման ծփծփուն բեհեզները, սիգապանծ գլխազարդերը, համեստ ու հրապուրիչ պարեգոտները: Այս կանանոցը կախարդում էր բոլոր հայացքները, պարարում էր բոլոր քմահաճույքները: Մի պարուհի հմայիչ կեցվածք ուներ քիշմիրի գեղածուփ ծալքերի տակ և մերկ էր թվում: Մի տեղ թափանցիկ շղարշը, մի ուրիշ տեղ ցոլացիկ մետաքսը քողարկում կամ ցուցադրում էին խորհրդավոր կատարելություններ: Նեղ ոտիկներ խոսում էին սիրո մասին, թարմ և վարդակարմիր բերաններ լռում էին: Նրբագեղ և հեզանազ աղջնակներ, կարծեցյալ կույսեր, որոնց վարսերը բարեպաշտական անբծություն էին բուրում, երևում էին ինչպես տեսիլներ, որոնց կարելի էր ցրել մեկ շնչով: Ապա սիգահայաց, բայց հեզ, բայց հույլ, թույլ, նուրբ, ազնվական գեղեցկուհիներ խոնարհում էին իրենց գլուխները այնպիսի տեսքով, որ կարծես դեռ արքայական շնորհներ ունեին վաճառելու: Մի անգլուհի, Օսսիանի[80] ամպերից իջած սպիտակ և անապակ օդային մի պատկեր, նմանվում էր մելամաղձության հրեշտակին, հանցանքից խուսափող խղճի ձայնին: Իր արդուզարդով ու խելքով հպարտ, իր թուլության ամենակարողությամբ զինված, ճկուն ու տոկուն, անսիրտ ու անկիրք փարիզուհին, որի ամբողջ գեղեցկությունը աննկարագրելի նազելիության մեջ է, և որը գիտե արհեստական կերպով ստեղծել կրքի գանձերը և կեղծել սրտի հույզերը, չէր պակասում այս վտանգավոր հավաքույթի մեջ, որտեղ փայլում էին նաև արտաքուստ հանդարտ և իրենց երջանկության գիտակցությունը ունեցող իտալուհիներ, փարթամ և բարեկազմ նորմանդուհիներ, թխաթույր վարսերով, լայնածիր աչքերով

---

[80] **Օսսիան** — սկովտիացի առասպելական տաղերգու, որ իբրև թե ապրել է III դարում: Նրա անունով բանաստեղծ Մակֆերսոնը 1760 թվին հրատարակեց մռայլ և ճոռոմ մելամաղձությամբ թաթախված քերթվածների մի հավաքածու, որ մեծ ազդեցություն գործեց բանաստեղծների վրա:

հարավային կանայք: Կարելի էր կարծել, որ դրանք Լեբելի[81] կողմից հավաքված վերսալյան գեղեցկուհիներ են, որոնք, առավոտվանից լարելով իրենց թակարդները, ներկայացել են այստեղ, ինչպես արևելյան գերուհիների մի խումբ, որոնք զարթնել են գերեվաճառի ձայնից և պատրաստ են չքանալու արշալույսին: Շփոթահար, ամոթահար, նրանք խռնվում էին սեղանի շուրջ, ինչպես բզզացող մեղուները փեթակի մեջ: Նրանց վեհերոտ շփոթությունը, որի մեջ կշտամբանք և ծեքծեքանք կար միաժամանակ, հաշվախնդիր հրապուրանքի և կամ ակամա ամոթխածության արտահայտություն էր: Գուցե մի զգացում, որ կինը երբեք չի դրսևորում ամբողջապես, նրանց թելադրում էր առաքինության քղամիդով ծածկվել՝ ավելի հմայք ու համ տալու համար ախտամոլության սանձարձակություններին: Եվ ահա Տայֆերի դավը թվում էր, թե պետք է վիժեր: Անսանձ տղամարդիկ սկզբում միանգամից ենթարկվեցին այն տիրական զորությանը, որով օժտված է կինը: Հիացումի շշունջը տարածվեց ինչպես ամենահաճելի մի երաժշտություն: Այդ գիշեր սերը դեռ չէր ուղեկցել նրանց գինովությանը. կրքերի փոթորկին հանձնվելու փոխարեն, հյուրերը, մի րոպե հանկարծ թուլությամբ բռնված, անձնատուր եղան քաղցր հոգեզմայլության հեշտանքներին: Արվեստագետները, մշտապես իրենց նվաճող բանաստեղծության ձայնին ունկնդիր, հաճույքով սկսեցին ուսումնասիրել այս կանացի գեղեցկություններն իրենց բոլոր նրբերանգների մեջ: Մի փիլիսոփա, հավանաբար սթափված շամպայնի ածխաթթվուտի ազդեցությունից առաջացած մի մտքից, դող ելավ խորհելով այն դժբախտությունների մասին, որոնք այստեղ էին բերել այս կանանց, որոնք մի ժամանակ, գուցե, արժանացել էին ամենամաքուր մեծարանքների: Նրանցից յուրաքանչյուրը, հավանաբար, կարող էր արյունալի մի դրամա պատմել: Գրեթե բոլորն իրենց մեջ կրում էին դժոխային տանջանքներ, իրենց հետևից քարշ էին տալիս ամուսնական անհավատարմության հուշեր, դրժված խոստումներ, կարիքից մթագնած ուրախություններ: Հյուրերը քաղաքավարությամբ մոտեցան նրանց, և սկսվեցին զրույցներ այնքան բազմատեսակ, որքան բազմատեսակ էին զրուցակիցների բնավորությունները: Կազմվեցին խմբեր: Կարելի էր կարծել, որ դա մի հյուրասենյակ է պարկեշտ տան մեջ, ուր դեռատի օրիորդներն ու տարեց տիկինները հյուրերին ճաշից հետո սովորաբար կհրամցնեն սուրճ, քաղցրեղեն և օշարակներ, որոնք թեթևացնում են որկրամոլների մարսողության ծանր աշխատանքը: Բայց ահա, ինչ-որ տեղ ծիծաղներ լսվեցին, աղմուկը ուժեղացավ, ձայները բարձրացան: Որոշ ժամանակ զսպված գինարբուքը սպառնաց նորից զարթնել: Լռության և ժխորի այս փոփոխականությունները որոշ չափով հիշեցրին Բեթհովենի սիմֆոնիան:

Հենց որ երկու բարեկամները նստեցին փափուկ բազմոցի վրա, իսկույն նրանց մոտեցավ բարձրահասակ, բարեկազմ, հպարտ կեցվածքով մի աղջիկ, բավական անկանոն, բայց հուզիչ, տռփոտ դիմագծերով, որոնք տպավորություն էին գործում իրենց ուժեղ հակադրություններով: Նրա սև, փարթամ վարսերը, որոնք, կարծես, գտնվել էին սիրային մարտերի մեջ, թեթև փնջերով թափվել էին կլոր, ուշագրավ ուսերին: Երկար, թուխ խոպոպները կիսով չափ ծածկել էին հոյակապ պարանոցը, որի վրայով ժամանակ առ ժամանակ սահում էր լույսը, երևան բերելով նուրբ, շատ սիրուն գծագրություններ: Դեմքի անփայլ սպիտակությունը ցայտուն էին դարձնում վառ գույների ջերմիկ և կենդանի երանգները: Երկար թարթիչներով աչքերը արձակում էին հանդուգն բոցեր, սիրո կայծեր: Կարմիր, խոնավ, կիսաբաց բերանը կոչ էր անում համբույրի: Այս աղջկա իրանը պարարուն

---

[81] **Լեբել** — Լուդովիկոս XV-ի սենեկապետը և վստահելի անձը:

ու ճկուն էր, կարծես ստեղծված էր սիրո համար, կուրծքն ու բազուկները փարթամորեն զարգացած էին, ինչպես Կարրաչիի[82] գեղեցկուհիների մոտ. բայց և այնպես նա ժիր ու թեթև էր երևում, նրա ջլապինդ մարմինը ենթադրել էր տալիս, որ նա հովազի ժրություն ունի, իսկ ձևերի առնական նրբությունը հեշտամոլության կիզիչ հաճույքներ էր խոստանում: Թեև այդ աղջիկը հավանաբար գիտեր ծիծաղել և կայտռել, նրա աչքերն ու ժպիտը ահարկում էին երևակայությունը: Նման դիվահար մարգարեուհու, նա ավելի շուտ զարմացնում էր, քան հրապուրում: Մերթ մեկ, մերթ մի ուրիշ արտահայտություն փայլակի նման շողացնում էր նրա շարժուն դեմքը: Նա գուցե կկախարդեր հագեցած մարդուն, բայց երիտասարդ մարդը կսարսափեր նրանից: Նա նման էր հունական տաճարի բարձունքից ընկած վիթխարի մի արձանի, որ հեռվից երևում է վսեմ, իսկ մոտիկից նսեմ: Սակայն և այնպես իր ապշեցուցիչ գեղեցկությամբ նա, հավանաբար, կարթնացներ անզորներին, իր ձայնով կհմայեր խուլերին, իր հայացքով կենդանություն կտար ծեր ոսկորներին. ահա թե ինչու Էմիլը նրան որոշ չափով նմանեցնում էր շեքսպիրյան մի ողբերգության, հրաշալի մի արաբեսկի, որտեղ ցնծությունը ոռնում է, որտեղ սերը ինչ-որ վայրենի բան ունի, որտեղ գեղեցկության հմայքը և երջանկության հրայրքը հաջորդում են բարկության արյունալի բռնկումներին, կամ նմանեցնում մի հրեշի, որ գիտե կծել և գգվել, դևի պես քրքջալ, հրեշտակի պես արտասվել, մի գրկախառնության մեջ հանկարծ միաձուլել կանացի բոլոր հրապույրները, բացառությամբ կույսի մելամաղձոտ հառաչների և հմայիչ համեստության, ապա մի րոպե հետո մռնչալ, իրեն ծվատել, իր կիրքը, իր սիրածին ճզմել, ի վերջո, ինքն իրեն ոչնչացնել, նման ապստամբած ժողովրդին: Կարմիր թավիշե շրջազգեստ հագած, նա անփութորեն ընդոտնում էր իր ընկերուհիների գլուխներից ընկած ծաղիկները, և խրոխտ շարժումով արծաթե մի ափսե էր կարկառում երկու բարեկամներին: Հպարտ իր գեղեցկությամբ, հպարտ, գուցե, իր մոլություններով, նա ցուցադրում էր իր սպիտակ բազուկը, որը վառ կերպով գծագրվում էր կարմիր թավիշի վրա: Նա կարծես թագուհին էր հաճույքի, կարծես մարմնացումն էր մարդկային ուրախության, այն ուրախության, որ վատնում է երեք սերունդների կուտակած գանձերը, ծիծաղում է դիակների վրա, ծաղրում է նախնիներին, հալեցնում է մարգարիտներ և խորտակում գահեր, երիտասարդներին դարձնում է ծերունիներ, և հաճախ էլ ծերունիներին դարձնում երիտասարդներ,— այն ուրախության, որը թույլատրելի է միայն իշխանությունից պարտասած, մտածումից վաստակած հսկաներին կամ նրանց, որոնց համար պատերազմը դարձել է խաղալիք:

— Ինչպե՞ս է քո անունը,— հարցրեց Ռաֆայելը:

— Ակիլինա:

— Ա՛յ, դու «Փրկված Վենետիկ»[83]-ից ես,— բացականչեց Էմիլը:

---

[82] **Կարրաչի** — հավանաբար նկատի ունի Անիբալո Կարրաչին (1560—1609), ամենանշանավոր նկարիչը վեց համանուն նկարիչներից, որոնք պատկանում էին Բոլոնյան դպրոցին (XVI դար):

[83] **«Փրկված Վենետիկ»** — անգլիացի թատերագիր Թոմաս Օտվեի (1651—1685) ողբերգությունը, որի գործող անձերից մեկը թեթևաբարո Ակիլինան է:

— Այո,— պատասխանեց Ակիլինան։— Ինչպես Հռոմի պապը՝ բոլոր տղամարդկանցից բարձրանալով, նոր անուն է ստանում, այսպես էլ ես, գերազանցելով բոլոր կանանց, ստացա նոր անուն։

— Եվ այն կնոջ նման, որի անունն ես կրում, դո՞ւ էլ ունես քեզ սիրող ազնիվ և ահարկու մի դավադիր՝ պատրաստ մեռնելու քեզ համար,— հարցրեց Էմիլը աշխուժորեն, բանաստեղծական այդ տեսիլից սթափված։

— Ես ունեցել եմ այդպիսի սիրող,— պատասխանեց Ակիլինան։— Բայց կառափնատը իմ ախոյանը դարձավ։ Դրա համար ես միշտ պճնազգեստիս կարմիր լաթի մի կտոր եմ կպցնում, որպեսզի շատ չուրախանամ։

— Օ, եթե նա սկսի պատմել Լառոշելի չորս քաջերի[84] պատմությունը, է՛լ չի վերջացնի։— Լռիր, Ակիլինա։ Ամեն կին կունենա մի սիրահար, որի մահը կարելի է ողբալ, բայց ամեն կին չէ, որ քեզ նման երջանկություն կունենա կառափնատի վրա կորցնելու իր սիրածին։ Ահ, շատ ավելի լավ է իմանամ, որ իմ սիրածը պառկած է գերեզմանում, քան ախոյանի անկողնում։

Այս խոսքերը քնքուշ և մելանուշ ձայնով արտաբերեց մի ուրիշ կին, ամենաչքնաղ, ամենահմայիչ էակը, որ երբևէ կարող էր դուրս գալ կախարդական ձվից կախարդուհու գավազանով։ Նա մոտեցավ անաղմուկ քայլերով, և բարեկամները տեսան սիրունիկ դեմքը, նուրբ իրանը, հմայիչ-համեստ նայվածքով ծավի աչքերը, թարմ ու ջինջ ճակատը։ Ջրից բարձրացող ամոթխած հավերժահարսը այնպես վեհերոտ, սպիտակ և միամիտ չէ, ինչպես այս արտաքուստ տասնվեցամյա աղջնակը, որ կարծես դեռ չէր ճանաչում սերը, չարը, կյանքի փոթորիկները, և կարծես նոր էր դուրս եկել եկեղեցուց, ուր նա, հավանաբար, աղոթել էր հրեշտակներին, որպեսզի նրանց բարեխոսությամբ երկինք կանչվի սահմանված ժամանակից առաջ։ Միայն Փարիզում են պատահում անմեղունակ դեմքով այսպիսի էակներ, որոնք մարգարտածաղկի նման անուշ և քնքուշ ճակատի տակ ծածկում են ամենախոր ապականությունը, ամենանրբացած ախտերը։ Սկզբում, խաբված այդ դեռատի աղջկա քաղցր հրապույրների մեջ թաքնված երկնային խոստումներից, Էմիլն ու Ռաֆայելը սկսեցին նրան հարցուփորձ անել, ընդունելով սուրճը, որ նա լցրել էր Ակիլինայի բերած բաժակների մեջ։ Ի վերջո, նա երկու բանաստեղծների աչքին դարձավ մարդկային կյանքի մեկ երեսն արտացոլող չարագուշակ մի այլաբանություն, նա իր վեհատեսիլ ընկերուհու խիստ և կրքոտ արտահայտությանը հակադրում էր պատկերը այն սառնասիրտ, խենեշորեն դաժան ապականության, որ բավականաչափ թեթևամիտ է, որպեսզի մի ոճիր գործի, և բավականաչափ զորեղ է, որպեսզի ծիծաղի դրա վրա, յուրատեսակ անսիրտ դև, որը վրեժ է լուծում հարուստ ու քնքուշ հոգիներից նրա համար, որ նրանք զգում են այն զգացումները, որոնցից ինքը զուրկ է, և որը միշտ պատրաստ է վաճառելու իր սիրային ծամածռությունները, արցունքներ թափելու իր զոհի թաղման ժամանակ և հրճվելու, երեկոյան նրա կտակը կարդալիս։ Բանաստեղծը կհիանար գեղեցկուհի Ակիլինայի վրա, բոլորը խույս կտային հուզիչ Եֆրասիայից. մեկը ախտի հոգին էր, մյուսը ախտն էր առանց հոգու։

---

[84] **Լառոշելի չորս քաջեր** — Բորի, Գուբեն, Պոմիե և Ռաու անուններով չորս ենթասպաներ, որոնք ծառայում էին Լառոշելում։ 1822 թվին Փարիզում մահապատժի ենթարկվեցին հեղափոխական-հանրապետական դավադրությանը մասնակցելու համար։

— Ես կփափագեի իմանալ, թե դու երբևէ մտածո՞ւմ ես ապագայի մասին,— ասաց Էմիլը այդ սիրուն էակին:

— Ապագայի մասի՞ն,— կրկնեց աղջիկը ծիծաղելով:— Ի՞նչն եք դուք համարում ապագա: Ինչո՞ւ ես մտածեմ այն բանի մասին, որ դեռ գոյություն չունի: Ես ոչ առաջ եմ նայում, ոչ ետ: Մի՞թե արդեն չափազանց հոգս չէ ներկա օրվա մասին մտածելը: Եվ հետո, մենք գիտենք մեր ապագան, դա հիվանդանոցն է:

— Ինչպե՞ս կարելի է հիվանդանոցը նախատեսել և չաշխատել նրանից խուսափել,— բացականչեց Ռաֆայելը:

— Ի՞նչ սարսափելի բան կա հիվանդանոցում,— հարցրեց ահավոր Ակիլինան:— Չէ որ մենք ոչ մայր ենք, ոչ կին. պառավությունը սև գուլպաներ կպարգևի մեր սրունքներին և կնճիռներ մեր ճակատին, կթառամեցնի մեր մեջ այն ամենը, ինչ կանացի է և կցամաքեցնի ուրախությունը մեր բարեկամների հայացքներում, այն ժամանակ էլ ինչի՞ կարիք կունենանք: Մեր բոլոր հմայքներից կմնա միայն հնացած, չորացած, սառած, նեխված տիղմը, որ կքայլի երկու թաթերի վրա, և կխշխշա ինչպես գոսացած տերևները: Մեր ամենասիրուն ձորձեղենները կդառնան ցնցոտիներ, մեր զարդասենյակի բուրավետած յամպարը մեռելի հոտ կարձակի. իսկ եթե այդ տիղմի մեջ մի սիրտ գտնվի, դուք բոլորդ կանարգեք այն, դուք մեզ թույլ չեք տա նույնիսկ մի հիշատակ պահել: Մեր կյանքի այդ շրջանում մի՞թե միևնույնը չէ՝ շնիկնե՞ր խնամենք հարուստ տան մեջ, թե՞ լաթեր դասավորենք հիվանդանոցում: Մի՞թե մեծ տարբերություն կա՝ մեր սպիտակ մազերը կարմիր և կապույտ քառակուսիներ ունեցող թաշկինակո՞վ ծածկենք, թե՞ ժանյակներով, փողոցները ցախավելո՞վ ավլենք, թե՞ Տյուիլրիի աստիճանները սնդուսով, ոսկեզօծ բուխարիների մո՞տ նստենք, թե՞ տաք մոխիրներով պտուկների մոտ տաքանանք, Գրեվի հրապարակի ներկայացո՞ւմը դիտենք, թե՞ օպերա գնանք:

— Aquilina mia, ես բոլորովին համամիտ եմ քո այդ մռայլ մտածումներին,— ասաց Եֆրասիան:— Այո, քիշմիրները, ժանյակները, օծանելիքները, ոսկին, մետաքսը, պերճանքը, այն ամենը, ինչ շողշողուն է, այն ամենը, ինչ հաճելի է, սազում է միայն երիտասարդությանը: Միայն ժամանակը կարող է սանձահարել մեր խենթությունները, բայց երջանկությունը մեզ կարդարացնի: Դուք ծիծաղում եք իմ ասածների վրա,— բացականչեց նա, թունավոր մի ժպիտ նետելով երկու բարեկամներին,— բայց մի՞թե ես իրավացի չեմ: Ավելի լավ է մեռնել զվարճությունից, քան հիվանդությունից: Ես ոչ մարմաջ ունեմ հավերժության, ոչ էլ մասնավոր հարգանք մարդկային ցեղի նկատմամբ, որովհետև տեսնում եմ, թե ինչ է նրան դարձրել աստված: Տվեք ինձ միլիոններ, և ես կմսխեմ, մի սանտիմ անգամ չեմ պահի եկող տարվա համար: Ապրե՛լ դուր գալու և իշխելու համար, դա է այն վճիռը, որ ինձ թելադրում է իմ սրտի յուրաքանչյուր բաբախյունը: Հասարակությունը ինձ հավանություն է տալիս: Չէ՞ որ նա հայթայթում է այն ամենը, ինչ հարկավոր է իմ շռայլությունների համար: Ինչո՞ւ բարերար աստվածը առավոտներն ինձ տալիս է այն եկամուտը, որ ես ծախսում եմ երեկոները: Ինչո՞ւ դուք մեզ համար հիվանդանոցներ եք կառուցում: Աստված մեզ բարու և չարի միջև չի դրել նրա համար, որ ընտրենք այն, ինչ մեզ ցավ կամ ձանձրույթ է պատճառում, ուստի ես հիմար կլինեի, եթե չզվարճանայի:

— Իսկ ուրիշնե՞րը,— հարցրեց Էմիլը:

— Ուրիշնե՞րը: Էհ, դա նրանց գործն է: Իմ կարծիքով, ավելի լավ է ծիծաղել նրանց տառապանքների վրա, քան արտասվել սեփականների վրա: Ես մարտի կհրավիրեմ այն տղամարդուն, որ կփորձի թեկուզ շատ չնչին մի տանջանք պատճառել ինձ:

— Իսկ դու շա՞տ ես տանջվել, որ այդպիսի բաներ ես մտածում,— հարցրեց Ռաֆայելը:

— Ինձ լքեցին մի ժառանգության պատճառով, այ թե ինչ,— ասաց Եֆրասիան, ընդունելով մի կեցվածք, որ ընդգծում էր նրա ամբողջ գրավչությունը:— Եվ սակայն ես օր ու գիշեր աշխատեցի, որպեսզի կերակրեի իմ սիրածին: Ես այլևս չեմ խաբվի ոչ ժպիտներից, ոչ խոստումից, ես ուզում եմ իմ կյանքը դարձնել տնական մի տոնահանդես:

— Բայց մի՞թե երջանկությունը մեր հոգու մեջ չէ,— սաց Ռաֆայելը:

— Իսկ ի՛նչ,— վրա բերեց Ակիլինան,— տեսնել, թե ինչպես բոլորը քեզանով հիանում են, թե ինչպես քեզ շողոքորթում են, թե ինչպես դու գերազանցում ես բոլոր կանանց, նույնիսկ ամենաառաքինիներին, նրանց նսեմացնելով գեղեցկությամբ և հարստությամբ, մի՞թե այս բոլորը դատարկ բան է: Բացի դրանից, մենք մի օրում ավելի ենք ապրում, քան պարկեշտ քաղքենուհին տասը տարում: Դա է հարցը:

— Մի՞թե զազրելի չէ այն կինը, որ առաքինություն չունի,— դիմեց Էմիլը Ռաֆայելին:

Եֆրասիան իժային մի հայացք նետեց նրանց վրա անօրինակ հեգնանքով պատասխանեց.

— Առաքինությո՛ւն: Մենք այդ թողնում ենք տգեղ և կուզիկ կանանց: Ի՞նչ կլինեին այդ խեղճերը առանց դրան:

— Լռի՛ր,— գոչեց Էմիլը,— մի խոսիր այն բանի մասին, որ դու չգիտես:

— Ի՞նչ, չգիտեմ, թե ինչ բան է առաքինությո՞ւնը,— հարեց Եֆրասիան:— Ամբողջ կյանքը նվիրել ատելի մի էակի, մեծացնել երեխաներ, որոնք ձեզ լքում են, նրանց ասել «շնորհակալ եմ», երբ նրանք խոցում են ձեր սիրտը,— ահա առաքինություններ, որ դուք պատվիրում եք կնոջը. ավելին, որպեսզի նրան վարձատրեք անձնազոհության համար, դուք նրա վրա տանջանքների բեռ կբարդեք, աշխատելով գայթակղեցնել նրան. եթե նա անդրդվելի մնա, դուք կվարկաբեկեք նրան: Հիանալի՜ կյանք: Ավելի լավ է մնալ ազատ, սիրել սրտի ուզածին և մեռնել երիտասարդ:

— Դու չե՞ս վախենում, որ այդ բոլորի համար կհատուցես մի օր:

— Իսկ արդ,— պատասխանեց Եֆրասիան,— փոխանակ հաճույքները վշտերի հետ խառնելու, կյանքս կբաժանեմ երկու մասի. առաջին՝ որոշակի ուրախ երիտասարդություն, և երկրորդ՝ հավանաբար տրտում պառավություն, որի ընթացքում կտառապեմ ուզածիս չափ:

— Նա չի սիրել,— ասաց Ակիլինան կրծքային ձայնով: Նա երբեք հարյուր մղոն չի անցել, որպեսզի հեշտանքով ընդունի մի հայացք, իսկ ապա մերժում. երբեք իր կյանքը չի կախել մի մազից, երբեք պատրաստ չի եղել դաշունահարելու մի քանի մարդու, որպեսզի փրկի իր իշխանին, իր տիրոջը, իր աստծուն... Սերը նրա համար սիրուն գնդապետ է:

— Ա՜հ, նորից Լառոշել,— պատասխանեց Եֆրասիան:— Սերը հողմի նման է, չգիտենք, թե որտեղից կփչի: Այո, եթե քեզ մի անասուն սիրեր, դու կսարսափեիր նաև խելոք մարդկանցից:

— Օրենսգիրքը մեզ արգելում է սիրել անասուններին,— հեգնական շեշտով ասաց վեհապանծ Ակիլինան:

— Ես քեզ ավելի ներողամիտ էի կարծում զինվորականների նկատմամբ,— բացականչեց Եֆրասիան ծիծաղելով:

— Արդյոք դուք երջանի՞կ եք, որ կարողանում եք հրաժարվել բանականությունից,— գոչեց Ռաֆայելը:

— Երջանի՞կ,— կրկնեց Ակիլինան խղճալի և ահալի ժպիտով և երկու բարեկամների վրա հուսահատական մի հայացք նետելով:— Ա՜հ, դուք չգիտեք, թե ինչ է նշանակում ուրախանալ՝ մահ ունենալով հոգու մեջ...

Ով որ այդ պահին դիտեր սրահները, որոշ պատկերացում կկազմեր Միլտոնի Պանդեմոնիումի[85] մասին: Պունչի կապույտ բոցերը դժոխային գույն էին տվել նրանց դեմքերին, ովքեր դեռ կարողանում էին խմել: Վայրենի կորովով կենդանացած խոլական պարերը առաջացնում էին քրքիջներ և ճիչեր, որոնք հնչում էին ինչպես հրախաղության ճայթյուններ: Զարդասենյակն ու փոքր սրահը նմանվում էին մեռածներով և մեռնողներով ծածկված մարտադաշտի: Մթնոլորտը տաքացած էր գինիով, վայելքներով, ճառերով: Գինովությունը, սերը, զառանցանքը, ինքնամոռացությունը սրտերի մեջ և դեմքերի վրա էին, դրոշմված էին գորգերին, նկատվում էին տիրող անկարգության մեջ, և բոլոր նայվածքների վրա նրանք ձգում էին թեթև մի քող, որի միջով օդը հագեցած էր թվում արբեցուցիչ գոլորշիներով: Ինչպես արևի ճառագայթի մեջ թրթռացող փայլուն փոշիներ, այդ օդի մեջ խաղում էին ամենաքմահաճ ձևեր, տեղի էին ունենում ամենատարօրինակ բախումներ: Այստեղ ու այնտեղ իրար պլլված մարմինների խմբեր միախառնվել էին սենյակները զարդարած սպիտակ մարմարե արձանների, քանդակագործության ընտիր գլուխգործոցների հետ: Երկու բարեկամները իրենց մտքերի և զգացումների մեջ տակավին պահում էին մի ինչ-որ խաբուսիկ պայծառություն, վերջին մի թրթռում, կյանքի անկատար մի նմանություն, բայց արդեն չէին կարողանում որոշել, թե կա՞ր արդյոք որևէ իրական բան այդ անսովոր տեսիլների մեջ, որևէ ճշմարտանման բան այդ գերբնական պատկերների մեջ, որոնք անդադար անցնում էին իրենց հոգնած աչքերի առջևով: Մեր երազների հեղձուցիչ երկինքը, մեր տեսլապատկերների այրող քաղցրությունը և մանավանդ շղթաներով ծանրացած ինչ-որ շարժունություն, մի խոսքով քնի ամենաանսովոր երևույթները այնպիսի ժրությամբ պաշարեցին նրանց, որ նրանք խրախճանքի զվարճությունները ընդունեցին իբրև մղձավանջի քմահաճություններ, ուր շարժումները անաղմուկ են, իսկ ճիչերը չեն հասնում ականջին: Այդ ժամանակ Տայֆերի հատուկ վստահությունը վայելող սպասյակը ոչ առանց դժվարության իր տիրոջը կանչեց նախասենյակ և այնտեղ նրա ականջին շշնջաց.

— Պարոն, բոլոր հարևանները նայում են լուսամուտներին և գանգատվում են աղմուկից:

— Եթե նրանք վախենում են աղմուկից, թող հարդ դնեն իրենց դռների առջև,— գոռաց Տայֆերը:

---

[85] **Միլտոնի Պանդեմոնիում** — Պանդեմոնիում, դևերի, չար ոգիների բնակավայրը անգլիացի բանաստեղծ Միլտոնի (XVII դ.) «Կորուսյալ դրախտ» վիպերգության մեջ:

Այդ միջոցին Ռաֆայելը այնպես անսպասելի և անտեղի կերպով քրքջաց, որ բարեկամը նրան հարցրեց, թե ինչն է պատճառը այդ վայրենի հրճվանքի:

— Քեզ դժվար կլինի ինձ հասկանալ,— պատասխանեց Ռաֆայելը:— Ամենից առաջ պետք է խոստովանեմ, որ դուք ինձ Վոկտերի առափնյա փողոցի վրա կանգնեցրիք այն պահին, երբ ես պատրաստվում էի Սեն նետվել, և դու, իհարկե, կցանկանաս իմանալ, թե ինչն էր ինձ մղում ինքնասպանության: Բայց դու շա՞տ բան կհասկանաս, եթե ես ավելացնեմ, որ վերջերս գրեթե հեքիաթային մի դիպվածով նյութական աշխարհի ամենաբանաստեղծական ավերակները իմ աչքի առջև կենտրոնացան մարդկային իմաստության սիմվոլիկ պատկերների մեջ, մինչդեռ հիմա խնջույքի ժամանակ մեր շորթած բոլոր հոգեկան արժեքների մնացորդները հանգում են այս երկու կանանց, անմտության կենդանի և ինքնատիպ պատկերներին, իսկ մարդկանց և իրերի նկատմամբ մեր բացարձակ անտարբերությունը անցում ծառայեց դեպի այն մեծապայծառ պատկերները, որոնք ներկայացնում են տրամագծորեն այնքան հակադիր կյանքի երկու սիստեմներ: Եթե դու գինով չլինեիր, գուցե կընդունեիր, որ սա մի ամբողջ փիլիսոփայական աշխատություն է:

— Եթե դու երկու ոտքերդ չդնեիր այդ հմայիչ Ակիլինայի վրա, որի խռմփոցները ինչ-որ նմանություն ունեն վերահաս ամպրոպի գոռոցների հետ, դու կկարմրեիր թե՛ քո գինովության և թե՛ քո շատախոսության համար,— նկատեց Էմիլը, որ իր հերթին զվարճանում էր Եֆրասիայի ծամերը հյուսելով և արձակելով, առանց շատ գիտակցելու այդ անմեղ զբաղումը:— Քո երկու սիստեմները կարող են տեղավորվել մեկ խոսքի մեջ և հանգել մեկ մտքի: Պարզ և մեքենայական կյանքը, մեր միտքը աշխատանքով բթացնելով, տանում է դեպի մի ինչ-որ անմիտ իմաստություն, մինչդեռ վերացականությունների դատարկության կամ բարոյական աշխարհի անդունդների մեջ անցկացրած կյանքը տանում է դեպի խոլական իմաստություն: Մի խոսքով, սպանել զգացումները և ապրել մինչև ծերություն կամ ընդունել կրքերի տանջանքը և մեռնել երիտասարդ,— ահա մեր բաժինը:

Սակայն պետք է նկատել, որ այս վճիռը պայքարի մեջ է մտնում խառնվածքների հետ, որոնցով մեզ օժտել է անողոք ծաղրածուն, որ պատրաստել է կաղապարը բոլոր էակների:

— Հիմար,— ընդմիջեց նրան Ռաֆայելը:— Փորձիր այսուհետև էլ քեզ կրճատել այսպես և դու ամբողջական հատորներ կստեղծես: Եթե ես մտադրություն ունենայի ճշտորեն բանաձևելու այս երկու գաղափարները, կասեի, որ մարդ ապականվում է բանականության մարզությամբ և մաքրվում է տգիտությամբ: Դա նշանակում է մեղադրանք ուղղել հասարակությանը: Բայց ապրենք իմաստունների հետ, թե կորչենք անմիտների հետ, մի՞թե արդյունքը նույնը չի լինի վաղ կամ ուշ: Հենց դրա համար իրերի էության մեծ վերացաբանը[86] այդ երկու սիստեմները ժամանակին արտահայտել է երկու բառով՝ «Կարիմարի, Կարիմարա»[87]:

---

[86] **Իրերի էության մեծ վերացաբանը** — Ռաբլեն: «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպի V գրքում նկարագրված է Իրերի էության թագուհու թագավորությունը:

[87] **«Կարիմարի, Կարիմարա»** — փարիզեցու անիմաստ զոչերը Գարգանտյուայի Փարիզ գալու ժամանակ («Գարգանտյուա և Պանտագրյուել», գիրք 1, գլուխ XVII):

— Դու իմ մեջ տարակուսանք ես առաջացնում աստծու ամենակարողության մասին, որովհետև քո հիմարությունը գերազանցում է նրա զորությանը,— ասաց Էմիլը։— Մեր սիրելի Ռաբլեն այդ փիլիսոփայությունը արտահայտեց «Կարիմարի, Կարիմարա»-ից ավելի կարճ մի ասույթով, դա «Գուցե»-ն է, որտեղից Մոնտեյնը առավ իր «Ես ինչ գիտեմ»[88]-ը: Բարոյական գիտության այս վերջին բառերը արդյոք չե՞ն հանգում բացականչությանը Պյուռոնի[89], որ մնացել էր բարու և չարի միջև, ինչպես Բուրիդանի էշը[90] վարսակի երկու չափերի միջև: Բայց թողնենք այս հավիտենական վեճը, որ այսօր էլ հանգում է «Ե՛վ այո, և՛ ոչ» բառերին: Դու ի՞նչ փորձ էիր ուզում անել, մտադիր լինելով Սեն նետվել: Նոտր Դամի կամուրջի մոտի ջրաբաշխական մեքենայի՞ն էիր նախանձում:

— Ա՜հ, եթե դու իմանայիր իմ կյանքը:

— Ա՜հ,— բացականչեց Էմիլը։— Ես չէի կարծում, որ դու այդքան ռամիկ ես: Չէ որ դա մաշված խոսք է: Մի՞թե դու չգիտես, որ յուրաքանչյուր ոք կարծում է, թե ինքը ուրիշներից շատ է տառապել:

— Ա՜հ,— հառաչեց Ռաֆայելը:

— Պարզապես ծիծաղելի է քո **ահը**: Ասա տեսնեմ, հոգեկան կամ մարմնական հիվանդությո՞ւնն է քեզ ստիպում ամեն առավոտ լարել մկաններդ և Դամիենի[91] նման զսպել ձիերին, որոնք երեկոյան քեզ չորս կտոր կանեն: Թե՞ ձեղնահարկի քո խցում շան հում միս ես կերել, այն էլ առանց աղի: Թե՞ երեխաներդ են ճչացել՝ «Սովա՜ծ ենք»: Միգուցե դու քո սիրուհու մազե՞րն ես ծախել՝ խաղատուն գնալու համար: Կամ թե գնացել ես սխալ հասցեով, երևակայական հորեղբոր կողմից փոխգրված կեղծ մուրհակ վճարելու և վախեցել ես, որ ո՞ւշ կհասնես... Դեհ, խոսիր տեսնեմ: Եթե դու ուզում էիր ջուրը նետվել կնոջ, բողոքարկված մուրհակի կամ ձանձրույթի պատճառով, ես հրաժարվում եմ քեզանից: Անկեղծորեն խոստովանիր, մի՛ ստիր. ես քեզանից պատմական հուշեր չեմ պահանջում: Մանավանդ կարճ խոսիր, ինչքան քեզ թույլ կտա քո գինովությունը. ես պահանջկոտ եմ, ինչպես ուսուցիչը և քնահար, ինչպես կինը երեկոյան աղոթքի ժամանակ:

---

[88] **«Գուցե...» Ես ինչ գիտեմ»** — ըստ ավանդության Ռաբլեն իր մահից առաջ արտասանել է իր կրոնական սկեպտիկությունը արտահայտող խոսքը՝ «Գնում եմ փնտրելու մեծ գուցեն»: XVI դարի ֆրանսիացի փիլիսոփա բարոյագետ Մոնտեյնը իր սկեպտիկությունը արտահայտեց հետևյալ բառերով՝ «Ես ինչ գիտեմ»:

[89] **Պյուռոն** (մոտ 360—270 մ. թ. ա.) — առաջին սկեպտիկ փիլիսոփան Հին Հունաստանում:

[90] **Բուրիդանի էշ** — XIV դարի ֆրանսիացի սխոլաստիկ գիտնական Բուրիդանը, ժխտելով կամքի ազատությունը, իբրև օրինակ բերում էր էշը, որ քաղցից սատկել էր, չկարողանալով ընտրություն անել իր առջև գտնված վարսակի երկու կույտերի միջև: Հետագայում Բուրիդանի էշը դարձավ անվճռական, վարանոտ մարդու պատկեր:

[91] **Դամիեն** — 1757 թվին Դամիենը դատապարտվեց քառահատման՝ Լուդովիկոս XV-ի վրա մահափորձ կատարելու համար: Ականատեսների ասելով, Դամիենը, որ բացառիկ ուժի տեր էր, մահապատժի ժամանակ զսպեց ձիերին, որոնց կապվել էր, մինչև որ դահիճները կտրեցին նրա ձեռքերի և ոտքերի ջիլերը:

— Հիմա՛ր,— ասաց Ռաֆայելը։— Այդ երբվանի՞ց կսկիծները չեն ծագում զգայնությունից։ Երբ մենք հասնենք գիտական իմացության այն աստիճանին, որ կարողանանք սրտերի բնապատմությունը գրել, նրանց անունները որոշել, նրանց ըստ ցեղերի, տեսակների և ընտանիքների դասակարգել, նրանց պատենավորների, բրածոների, սողունների, նախակենդանիների և էլ չգիտեմ ինչի բաժանել, այն ժամանակ, սիրելի բարեկամ, ապացուցված կլինի, որ գոյություն ունեն ծաղիկների նման քնքուշ, փխրուն սրտեր, որոնք ծաղիկների նման էլ կճմլվեն թեթև հպումից, որոնք նույնիսկ չեն զգում որոշ հանքային սրտեր...

— Օ՜, ի սեր աստծու, ինձ ազատիր քո նախաբանից,— կես կատակ, կես գանգատ արտահայտող տոնով ասաց Էմիլը, բռնելով Ռաֆայելի ձեռքից։

ԱՆՍԻՐՏ ԿԻՆԸ

Ռաֆայելը մի պահ լուռ մնաց, ապա անփութորեն շարժելով գլուխը, սկսեց.

— Իսկապես չգիտեմ՝ գինու և պունչի գոլորշիների՞ն վերագրեմ այն պայծառամտությունը, որով ես այս րոպեիս կարողանում եմ ընդգրկել իմ ամբողջ կյանքը իբրև մի միասնական պատկեր՝ հավատարմորեն վերարտադրված դեմքերով, գույներով, լույսերով, ստվերներով, կիսաստվերներով։ Իմ երևակայության այս բանաստեղծական խաղը ինձ չէր զարմացնի, եթե նրան չուղեկցեր յուրատեսակ արհամարհանքը իմ անցյալ տառապանքների և բերկրանքների նկատմամբ։ Ես կարծես իմ կյանքին նայում եմ հեռվից, և, ինչ-որ հոգեկան երևույթի ազդեցության տակ, նա իմ առջև ներկայանում է ամփոփված տեսքով։ Տասը տարի տևած այդ երկար ու դանդաղ տվայտանքը այսօր կարելի է արտահայտել մի քանի խոսքերով, որոնց մեջ վիշտը կդառնա միայն խոհ, իսկ հաճույքը՝ փիլիսոփայական անդրադարձում։ Ես դատողություններ եմ անում, փոխանակ զգալու...

— Քո խոսքերն այնպես ձանձրալի են, ինչպես ընդարձակ ուղղումները օրինագծի մեջ,— գոչեց Էմիլը։

— Գուցե,— ասաց Ռաֆայելը առանց առարկելու։— Ուստի, որպեսզի քո ականջները չհոգնեցնեմ, ես քեզ չեմ պատմի իմ կյանքի առաջին տասնյոթ տարիների մասին։ Մինչև այդ ժամանակ ես քեզ և ուրիշ շատերի նման ապրեցի դպրոցական կամ լիկեոնական կյանքով, որի երևակայական դժբախտությունները և իրական ուրախությունները մենք հիշում ենք այնքան հաճույքով։ Ճիշտ է, այն բանջարեղենները, որ ամեն ուրբաթ մեզ տալիս էին այն ժամանակ, մեր քիմքը փչացրել և մեր ճաշակը բթացրել էին այնպես, որ այլևս ոչ մի բանջարեղեն չէինք ուզում ճաշակել։ Գեղեցիկ կյանք, որի դժվարությունները մենք հիմա բանի տեղ չենք դնում և, սակայն, դրանք մեզ սովորեցրին աշխատել։

— Անցիր դրամային,— ասաց Էմիլը կես ծիծաղկոտ, կես լուրջ տեսքով։

— Երբ կրթարանն ավարտեցի, — շարունակեց Ռաֆայելը, գլխի շարժումով պահանջելով չընդհատել իրեն,— հայրս ինձ ենթարկեց խիստ կարգապահության։ Նա ինձ տեղավորեց իր առանձնասենյակին կից սենյակում. նրա պահանջով ես պառկում էի երեկոյան ժամը իններին և վեր էի կենում առավոտյան ժամը հինգին. նա ուզում էր, որ ես բարեխղճորեն զբաղվեի

իրավագիտությամբ. հաճախում էի իրավագիտության բարձրագույն դպրոց և իրավաբանի մոտ. սակայն ժամանակի ու տարածության օրենքները այնքան խստորեն կանոնավորեցին իմ պարապմունքներն ու զբոսանքները, իսկ հայրս ճաշի պահին այնքան խստորեն հաշիվ էր պահանջում ինձանից, որ...

— Դա ի՞նչ է հետաքրքրում ինձ,— ընդմիջեց Էմիլը։

— Գրո՛ղը տանի քեզ,— բացականչեց Ռաֆայելը։— Մի՞թե դու կհասկանաս իմ զգացումները, եթե ես քեզ չպատմեմ այն ամենօրյա եղելությունները, որոնք ազդեցին իմ հոգու վրա, ինձ դարձրին երկչոտ, այնպես որ հետագայում երկար ժամանակ ես չէի կարողանում ձերբազատվել պատանեկական միամտությունից։ Ուստի, մինչև քսանմեկ տարեկան հասակս, ես ապրեցի վանական կանոնադրության պես սառն մի բռնակալության ճնշման տակ։ Որպեսզի քեզ պարզ դառնար, թե ինչքան տխուր էր իմ կյանքը, գուցե բավական կլինի նկարագրել իմ հորը։ Բարձրահասակ, նիհար, չոր, գունատ, դանակի բերանի պես նեղ դեմքով, նա խոսում էր ընդհատ-ընդհատ, սրտնեղ էր, ինչպես պառավ օրիորդը, բծախնդիր էր, ինչպես գրասենյակի պետը։ Նրա հայրական կամքը միշտ ծանրանում էր իմ չարաճճի և ուրախ մտքերի վրա, որոնք, ասես, ծածկում էր կապարե գմբեթով. եթե ես ուզեի նրան քաղցր ու քնքուշ մի զգացում արտահայտել, նա ինձ հետ կվերաբերվեր ինչպես երեխայի հետ, որը հիմա մի հիմարություն դուրս կտա. ես նրանից շատ ավելի էի վախենում, քան մի ժամանակ մենք վախենում էինք մեր ուսուցիչներից. նրա ներկայությամբ ես ինձ զգում էի ութը տարեկան տղեկ։ Կարծես հիմա էլ նրան տեսնում եմ իմ աչքերի առաջ։ Շագանակագույն թիկնոցի մեջ, ուղիղ կանգնած, ինչպես զատկական մոմ, նա նման էր չորացրած տառեխի, որին փաթաթել են որևէ պարսավագրքի կարմիր շապիկի մեջ։ Բայց և այնպես ես սիրում էի հորս. ըստ էության նա արդարասեր էր։ Խստությունը հազիվ թե ատելի դառնա մեզ, եթե նա արդարացված է դաստիարակի ուժեղ նկարագրով, անբասիր վարքով և հմտորեն զուգակցված է բարության հետ։ Հայրս ինձ երբեք աչքից բաց չթողեց, մինչև իմ քսանամյա հասակը իմ տրամադրության տակ չդրեց տասը ֆրանկ, տասը անպիտան, տասը սրիկա ֆրանկ, այդ անգին գանձը, որի մարսին ես երազել եմ անհույս, ինչպես անպատմելի ուրախությունների աղբյուրի մասին, և, այնուամենայնիվ, հայրս աշխատում էր մի քանի զվարճություններ ընձեռել ինձ։ Ամիսներ շարունակ խոստումներով սնուցելուց հետո նա ինձ տարավ թատրոն, համերգասրահ, պարահանդես, որտեղ ես հույս ունեի հանդիպելու մի սիրուհու։ Սիրուհի՜։ Դա ինձ համար նույնն էր, ինչ անկախությունը։ Բայց ամաչկոտ և երկչոտ, չիմանալով սալոնային լեզուն, չճանաչելով ոչ ոքի, ես ամեն անգամ տուն էի վերադառնում տակավին չհուզված, բայց ցանկություններով փոթորկված սրտով։ Իսկ հաջորդ առավոտ, հեծելազորի ձիու պես սանձահարված իմ հորից, ես վերադառնում էի իրավաբանիս մոտ, իրավագիտության պարապմունքներիս, դատարան։ Հորս գծած միօրինակ ճանապարհից շեղվել ուզել՝ նշանակում էր ինձ վրա հրավիրել նրա բարկությունը։ Նա ինձ սպառնում էր առաջին իսկ հանցանքի համար Անտիլյան կղզիներն ուղարկել իբրև նավաստյակ։ Եվ ինչպե՜ս էի ես դողում, երբ երբեմն համարձակվում էի մեկ կամ երկու ժամով բացակայել որևէ զվարճության համար։ Պատկերացրու ամենավառ երևակայությունը, ամենասիրազեղ սիրտը, ամենաքնքուշ հոգին և ամենաբանաստեղծական միտքը աշխարհի ամենախստասիրտ, ամենամաղձոտ, ամենասառն մարդու հսկողության տակ, մի խոսքով, երիտասարդ աղջկան պսակիր կմախքի հետ, և դու կհասկանաս այդ կյանքը, որի հետաքրքրական կետերը ես կարող եմ միայն թվել հորս մեկ նայվածքով հօդս ցնդած

փախուստի ծրագիրներ, քնով հանգստացած հուսահատություններ, զսպված ցանկություններ, երաժշտությամբ փարատված մռայլ մելամաղձություններ: Ես վշտերս արտահայտում էի թախծալի մեղեդիներով: Բեթհովենն ու Մոցարտը հաճախ եղան իմ հավատարիմ սրտակիցները: Այսօր ես ժպտում եմ, հիշելով այն նախապաշարումները, որոնք իմ խիղճը խռովում էին անմեղության և առաքինության այդ շրջանում: Եթե ես մի ճաշարան մտնեի, ինձ կհամարեի մսխող. իմ երևակայությունը սրճարանն ինձ համար դարձրել էր զեխության վայր, որտեղ մարդիկ կորցնում են իրենց պատիվը և գրավ են դնում իրենց ամբողջ կարողությունը. ինչ վերաբերում է բախտախաղին, դրա համար հարկավոր է փող ունենալ: Օ, թեպետ ես քո քունը բերում եմ, բայց ես քեզ պետք է պատմեմ իմ կյանքի ամենաահավոր ուրախություններից մեկի մասին, մի գիշատիչ ուրախության մասին, որ խրվում է մեր սրտի մեջ, ինչպես հրաշեկ երկաթը տաժանապարտի ուսի մեջ: Ես պարահանդեսի էի գնացել հորս ազգական դուքս դը Նավարրենի մոտ: Բայց որպեսզի դու կարողանաս լիովին պատկերացնել իմ դրությունը, ես պետք է ասեմ, որ կրում էի մաշված ֆրակ, անճոռնի կոշիկներ, կառապանի փողկապ և քրքրված ձեռնոցներ: Ես խցկվել էի մի անկյունում, որպեսզի ուզածիս պես կարողանայի պաղպաղակներ ուտել և սիրուն կանանց դիտել: Հայրս ինձ նկատեց: Ինչ-որ պատճառով, որ երբեք մտքովս չէր անցել — այնքան ինձ զարմացրեց վստահության այդ արարքը,— նա ինձ պահ տվեց իր քսակն ու բանալիները: Ինձանից տասը քայլ հեռու մի քանի հոգի քարտ էին խաղում: Ես լսում էի ոսկու զնգոցը: Ես քսան տարեկան էի, ես ցանկանում էի թեկուզ մի օր անձնատուր լինել իմ հասակին հատուկ հանցանքներին: Դա մտային անառակություն էր, որի նմանը չի գտնվի ոչ թեթևաբարո կանանց քնահաճույքների մեջ, ոչ երիտասարդ աղջիկների երազների մեջ: Մի տարուց ի վեր ես երազում էի լավ հագնվել, գեղեցիկ կնոջ կողքին կառք նստել, տիրական հովեր առնել, Վերիի[92] մոտ ճաշել, իսկ երեկոյան ներկայացման գնալ և միայն հաջորդ առավոտ տուն վերադառնալ, հորս դեմ զինված «Ֆիգարոյի ամուսնություն»-ից[93] ավելի խճճված մի պատմությամբ, որից նա ոչինչ չէր հասկանա: Այս ամբողջ ուրախությունը ես գնահատել էի հիսուն էկյու: Չէ՞ որ ես դեռ գտնվում էի դպրոցից փախած աշակերտի միամիտ հմայքի տակ: Եվ ահա ես մտա զարդասենյակ, ուր ոչ ոք չկար, աչքերս այրվում էին, դողացող մատներով ես գողտուկ հաշվեցի հորս դրամները՝ հարյուր էկյու: Այս գումարով վերակենդանացած բոլոր հանցավոր գայթակղությունները պարեցին իմ առջև, ինչպես Մակբեթի վհուկները կաթսայի շուրջը, բայց միայն հրապուրիչ, թրթռուն, հրաշալի: Ես որոշեցի ստահակ դառնալ: Առանց լսելու ականջիս դռնչյունները և սրտիս ուժգին տրոփյունները, ես վերցրի երկու քսանֆրանկանոց դրամներ, որոնք դեռ կարծես աչքերիս առջև են: Նրանց վրա թվականները ջնջված էին, իսկ Բոնապարտի դեմքը ծռմռված էր: Քսակը գրպանս դնելով, ես մոտեցա խաղասեղանին և, երկու ոսկեդրամները սեղմելով խոնավ ափիս մեջ, սկսեցի պտտվել խաղացողների շուրջը, ինչպես բազեն հավնոցի վրա: Անբացատրելի տագնապների մատնված՝ ես հանկարծ շուրջս նայեցի խորաթափանց հայացքով: Վստահ լինելով, որ ծանոթներից ոչ ոք չի տեսնում ինձ, ես իմ դրամները միացրի կարճ, հաստ ու զվարթ մի

---

[92] **Վերի** — սրճարան-ճաշարան Պալե-Ռուայալի ճեմուղիում, ուր սովորաբար խրախճանում էր ոսկի երիտասարդությունը:

[93] **«Ֆիգարոյի ամուսնություն»** — ֆրանսիացի գրող Բոմարշեի (XVIII դ.) կատակերգությունը, որ աչքի է ընկնում խճճված խարդավանքներով:

մարդու խաղագումարին և նրա գլխի վրա այնքան աղոթքներ և ուխտեր արեցի, որքան անում են երեք ծովային փոթորիկների ժամանակ: Ապա ոճրագործության կամ մաքիավելիականության բնազդից մղված, որ զարմանալի էր իմ հասակի համար, ես կանգնեցի դռան մոտ, նայելով սրահների միջով, բայց ոչինչ չտեսնելով: Իմ հոգին ու նայվածքը սավառնում էին ճակատագրական խաղասեղանի շուրջը: Այդ երեկո ես կատարեցի իմ առաջին բնախոսական դիտողությունը, որին ես պարտական եմ այն մի տեսակ պայծառատեսությունը, որ ինձ թույլ տվեց հասկանալու մեր երկդիմի բնության մի քանի գաղտնիքներ: Ես թիկունքս դարձրի սեղանին, ուր վճռվում էր իմ ապագա երջանկությունը, երջանկություն այնքան ավելի գուցե խոր, որքան նա հանցավոր էր. երկու խաղացողների և իմ միջև կար չորս կամ հինգ շարք հանդիսատեսներից բաղկացած մարդկային պատվար. ձայների աղմուկը ինձ թույլ չէր տալիս որոշելու ոսկու զնգոցը, որ միախառնվում էր երաժշտության հնչյուններին. բայց, չնայած այս բոլոր արգելակներին, օգտվելով կրքերի այն առանձնաշնորհությունից, որը նրանց օժտում է տարածությունն ու ժամանակը հաղթահարելու ընդունակությամբ, ես որոշակի լսում էի երկու խաղացողների խոսքերը, գիտեի, թե քանի կետ ունի յուրաքանչյուրը, հասկանում էի հաշիվը այն խաղացողի, որ բաց էր անում թագավորը, կարծես տեսնում էի նրա քարտերը, մի խոսքով, խաղասեղանից տասը քայլ հեռավորության վրա ես գույնս զգում էի խաղի պատահականություններից: Հանկարծ հայրս անցավ իմ առջև, և այն ժամանակ ես հասկացա Սուրբ գրքի խոսքը. «Աստծու հոգին անցավ նրա առջև»: Ես շահել էի: Խաղացողների շուրջը խռնված բազմության միջով ես վազ տվի դեպի խաղասեղանը՝ ուռկանի պատռված օղակից դուրս պրծած օձաձկան ճարպիկությամբ: Մտատանջությունս փոխարինվեց ուրախությամբ: Ես նման էի այն դատապարտյալին, որ, մահապատժի գնալիս, հանդիպում է թագավորին[94]: Սակայն պատահեց, որ շքանշանակիր մի պարոն պահանջեց պակասող քառասուն ֆրանկը: Բոլոր հայացքները կասկածանքով ուղղվեցին ինձ վրա. ես գույնս զգեցի, քրտինքի կաթիլները ակոսեցին ճակատս: Ինձ թվաց, թե արժանի հատուցում էի ստանում հորս կողոպտելու հանցանքիս համար: Այն ժամանակ բարի գեր մարդուկը իսկական հրեշտակային ձայնով ասաց՝ «Բոլորը դրել են» և վճարեց քառասուն ֆրանկը: Ես գլուխս բարձրացրի և հաղթական հայացք նետեցի խաղացողների վրա: Հորս քսակի մեջ դնելով այն գումարը, որ վերցրել էի այնտեղից, ես շահածս թողեցի այդ արժանավոր և ազնիվ մարդուն, և նա շարունակեց շահել: Հենց որ հարյուր վաթսուն ֆրանկի տեր դարձա, դրանք ծրարեցի թաշկինակի մեջ, այնպես, որպեսզի նրանք չզնգային ճանապարհին, և ես այլևս չխաղացի:

— Ի՞նչ էիր դու անում խաղասեղանի մոտ,— հարցրեց ինձ հայրս, կառք բարձրանալով:

— Նայում էի,— պատասխանեցի ես դողալով:

— Բայց,— շարունակեց հայրս,— զարմանալի ոչինչ չկա եթե դու ինքնասիրությունից դրդված մի քիչ փող ես դրել խաղի մեջ: Բարձր խավի մարդկանց աչքին դու այնպիսի հասակում ես, որ իրավունք ունես հիմարություններ անելու: Այո, Ռաֆայել, ես քեզ կներեի, եթե դու օգտագործած լինեիր իմ քսակը...

---

[94] **Հանդիպում է թագավորին (և ներում ստանում նրանից)** — թագավորը Ֆրանսիայում բարձրագույն իրավունք ուներ ներում շնորհելու և կարող էր կասեցնել մահապատիժը:

Ես ոչինչ չպատասխանեցի: Երբ տուն վերադարձանք, ես հորս հանձնեցի բանալիներն ու դրամները: Մտնելով իր սենյակը, նա քսակը դատարկեց բուխարու վրա, հաշվեց ոսկին, բավական բարեհաճ տեսքով դարձավ դեպի ինձ և յուրաքանչյուր խոսքից հետո առավել կամ նվազ երկար ու նշանակալից ընդհատումներով ասաց.

— Տղաս, դու շուտով քսան տարեկան կլինես: Ես քեզանից գոհ եմ: Քեզ հարկավոր է սահմանել մի թոշակ, թեկուզ նրա համար, որ սովորես խնայող լինել և կյանքի գործերը հասկանալ: Ես քեզ կտամ ամսական հարյուր ֆրանկ: Դու դրամը կգործածես քո հայեցողությամբ: Ահա քեզ տարվա առաջին եռամսյակի համար,— ավելացրեց նա, շոյելով ոսկու կույտը, ասես գումարը ստուգելու համար:

Խոստովանում եմ, ես պատրաստ էի հորս ոտներն ընկնելու, նրան հայտարարելու, որ ես ավազակ եմ, անզգամ եմ և, դեռ ավելի վատ, ստախոս եմ: Ամոթի զգացումը պահեց ինձ: Ես ուզեցի փարվել հորս, նա մեղմորեն հեռացրեց ինձ:

— Հիմա դու տղամարդ ես, զավակս,— ասաց նա:— Իմ որոշումը պարզ ու արդարացի է, և դու պետք չունես շնորհակալություն հայտնելու ինձ: Ռաֆայել, եթե ես իրավունք ունեմ քո երախտագիտության,— շարունակեց նա մեղմ, բայց արժանավայել տոնով,— դա կարող է լինել նրա համար, որ քո երիտասարդությունը ես պահպանել եմ դժբախտություններից, որոնք երիտասարդներին խորտակում են Փարիզում: Այսուհետև մենք կլինենք բարեկամներ: Մի տարի հետո դու կդառնաս իրավագիտության դոկտոր: Դու ոչ առանց որոշ անախորժությունների և ինչ-ինչ զրկանքների ստացար այն հիմնավոր գիտելիքներն ու աշխատանքի սերը, որոնք այնքան անհրաժեշտ են գործեր վարելու կոչված մարդկանց: Ռաֆայել, աշխատիր ինձ հասկանալ: Ես ցանկանում եմ քեզ դարձնել ո՛չ փաստաբան, ո՛չ նոտար, այլ պետական մարդ, որը հանդիսանար մեր խեղճ գերդաստանի պարծանքը... Վաղը կտեսնվենք,— ավելացրեց նա, ինձ արձակելով խորհրդավոր շարժումով:

Այդ օրվանից հայրս անկեղծորեն ինձ մասնակից դարձրեց իր ծրագիրներին: Ես նրա միակ որդին էի, մայրս վախճանվել էր տասը տարի առաջ: Հայրս, որ Օվեռնում գրեթե մոռացված պատմական մի գերդաստանի գլխավորն էր և շատ շոյված չէր սուրը մեջքին հող մշակելու իր իրավունքով, ժամանակին Փարիզ եկավ բախտ փորձելու: Օժտված նրբամտությամբ, որը, եթե միացվի եռանդի հետ, շատ կբարձրացնի Ֆրանսիայի հարավի բնակիչներին, նա գրավել էր բավական կարևոր դիրք, առանց մասնավոր նեցուկի: Հեղափոխությունը շուտով քայքայեց նրա կարողությունը, բայց նա հաջողեց հարուստ օժիտով աղջկա հետ ամուսնանալ և Կայսրության ժամանակ վերականգնել մեր ընտանիքի նախկին փայլը: Ռեստավրացիան մորս վերադարձրեց իր ունեցվածքի զգալի մասը, բայց հորս կործանեց: Իր ժամանակին գնելով արտասահմանում գտնված հողային կալվածներ, որոնք կայսրն էր նվիրել իր զորավարներին, հայրս արդեն տասը տարի է պայքարի մեջ էր լուծարքիչների և դիվանագետների հետ, պրուսական և բավարական դատարանների հետ, նպատակ ունենալով ճանաչել տալ իր իրավունքներն այդ չարաբաստիկ կալվածների վրա: Հայրս ինձ նետեց այդ ձգձգված դատավարության անելանելի լաբիրինթոսի մեջ, դատավարություն, որից կախված էր մեր ապագան: Դատարանը մեզ կարող էր ստիպել վերադարձնելու մեր ստացած եկամուտները, ինչպես նաև 1814—1817 թվականներին կատարած անտառահատումների արժեքը. այդ պարագային մորս ունեցվածքը հազիվ կբավականացներ մեր անվան պատիվը փրկելու համար: Ուստի այն օրը, երբ հայրս կարծես որոշ ազատություն

էր ինձ տվել, ես ընկնում էի ամենաղժնդակ լծի տակ: Ես հարկադրված եղա կռիվ մղել ինչպես մարտադաշտի վրա, գիշեր-ցերեկ աշխատել, պետական մարդկանց այցելել, աշխատել նրանց խիղճը զարթեցնել, փորձել նրանց նյութապես շահագրգռել մեր գործով, հրապուրել նրանց, նրանց կանանց, նրանց ծառաներին, նրանց շներին և այդ զազրելի արհեստը քողարկել վայելուչ ձևերի, հաճոյարար կատակների տակ: Ես հասկացա այն բոլոր վշտերը, որոնցից խամրում էր հորս դեմքը: Շուրջ մի տարի ես արտաքնապես աշխարհիկ մարդու կյանք վարեցի, բայց դիրք ունեցող ազգականների և օգտակար թվացող մարդկանց հետ կապ հաստատելու իմ ջանքերը, թարթափուն կյանքը մեծ հոգսեր էին պատճառում ինձ: Իմ զվարճությունները դեռևս դատական գործերն էին, իսկ զրույցները՝ դատական տեղեկագրերը: Մինչև այդ ժամանակ ես առաքինի էի մնացել այն պատճառով, որ հնարավորություն չէի ունեցել անձնատուր լինելու երիտասարդության կրքերին, բայց այդ ժամանակվանից, վախենալով որ որևէ սայթաքումով կարող էի հորս և իմ կործանման պատճառ դառնալ, ես դարձա իմ անձի բռնակալը և ինձ թույլ չտվի ոչ հաճույքների հետևից ընկնել, ոչ ավելորդ ծախսեր անել: Երբ մենք երիտասարդ ենք, երբ մարդիկ և հանգամանքները, շփվելով մեզ հետ, դեռ մեզանից չեն խլել զգացումի քնքուշ ծաղիկը, մտքի թարմությունը, խղճի ազնիվ մաքրությունը, որը մեզ թույլ չի տալիս գործարքի մեջ մտնելու չարի հետ, մենք որոշակի գիտակցում ենք մեր պարտականությունը, մեր պատիվը մեր մեջ բարձր է խոսում և ստիպում է լսել իրեն, մենք անկեղծ և աննենգ ենք,— այդպես էի ես այն ժամանակ: Ես որոշեցի արդարացնել հորս վստահությունը. մի ժամանակ ես հաճույքով նրանից գողացել էի մի չնչին գումար, բայց այժմ, նրա հետ միասին կրելով նրա գործերի, նրա անվան, նրա տան բեռը, ես թաքուն նրան կտայի իմ ունեցվածքը, իմ հույսերը, ինչպես և նրա համար կզոհեի իմ հաճույքները, և նույնիսկ երջանիկ կլինեի այդ զոհաբերություններով: Եվ ահա, երբ պարոն դը Վիլլելը[95], կարծես դիտմամբ մեզ համար, իրավունքների կորուստի մասին կայսերական մի հրովարտակ մեջտեղ հանեց և մեզ կործանեց, ես ստորագրեցի իմ կալվածների վաճառքի վավերագրերը, ինձ համար թողնելով միայն մի անարժեք կղզի Լուառի վրա, ուր գտնվում էր մորս գերեզմանը: Այսօր, թերևս, փաստաթղթեր, հնարքներ, փիլիսոփայական, մարդասիրական և քաղաքական բնույթի դատողություններ ինձ չէին պակասի, որպեսզի ես չանեի այն, ինչ իմ փաստաբանը անվանեց

հիմարություն.

բայց մենք, կրկնում եմ, քսանմեկ տարեկան հասակում հանդիսանում ենք համակ վեհանձնություն, համակ ջերմություն, համակ սեր: Արցունքները, որ ես տեսա հորս աչքերին, այն ժամանակ ինձ համար հարստություններից ամենագեղեցիկն էին, և այդ արցունքների հուշը հաճախ ինձ սփոփանք ծառայեց թշվառության ժամանակ: Իր պարտատերերին պարտքերը վճարելուց տասը ամիս հետո հայրս մահացավ վշտից. նա ինձ պաշտում՝ էր և ինձ խորտակել էր. այս միտքը սպանեց նրան: 1826 թվականի աշնան վերջին, ես, քսաներկու տարեկան հասակիս մեջ բոլորովին միայնակ ուղեկցեցի իմ առաջին բարեկամի՝ իմ հոր դագաղին: Քիչ երիտասարդներ են գտնվում, որոնք այսպես գնացել են դիակառքերի հետևից, մենակ մնացած իրենց խոհերի հետ, կորած Փարիզում, առանց միջոցների, առանց ապագայի: Հանրային գթության կողմից հավաքված որբերը գեթ իբրև ապագա ունեն մարտադաշտը,

---

[95] **Վիլլել Ժոզեֆ** — Ֆրանսիայի վարչապետը 1821—1828 թվերին: Ծայրահեղ միապետականների պարագլուխը:

իբրև հայր՝ կառավարությունը կամ թագավորական հոգաբարձուն, իբրև ապաստան՝ մանկատունը: Ես ոչինչ չունեի: Երեք ամիս հետո աճուրդի պաշտոնյան ինձ հանձնեց հազար հարյուր տասներկու ֆրանկ, այն ամբողջը, որ մնացել էր հայրական ժառանգության լուծարքից: Պարտատերերն ինձ ստիպել էին վաճառել մեր կահկարասին: Պատանի հասակից վարժված լինելով բարձր գնահատելու ինձ շրջապատած շքեղության առարկաները, ես չկարողացա զարմանքս չարատահայտել այդ խղճուկ մնացորդի տեսքից:

— Այդ բոլորն իսկական **ռոկոկո** էր,— ասաց աճուրդի պաշտոնյան:

Ահավոր բառեր, որոնք խորտակում էին իմ մանկական բոլոր հավատալիքները և հօդս ցնդեցնում իմ առաջին, ամենաթանկագին պատրանքները: Իմ հարստությունն ամփոփվում էր վաճառված գույքի ցուցակի մեջ, իմ ապագան գտնվում էր կտավե մի քսակի մեջ, որ պարունակում էր հազար հարյուր տասներկու ֆրանկ. հասարակության միակ ներկայացուցիչը ինձ համար հանդիսանում էր աճուրդի պաշտոնյան, որն ինձ հետ խոսում էր առանց գլխարկը հանելու... Ինձ գուրգուրած ծառան՝ Հովնաթանը, որին մայրս մի ժամանակ չորս հարյուր ֆրանկ ցմահ տարեթոշակ էր նշանակել, թողնելով տունը, որտեղից ես այնքան հաճախ կառքով զբոսանքի էի դուրս եկել իմ մանկության օրերին, ինձ ասաց.

— Ինչքան կարելի է խնայող եղեք, պարոն Ռաֆայել:

Բարեսիրտ մարդը արտասվում էր:

— Այսպիսիք են, սիրելի Էմիլ, այն դեպքերը, որոնք տնօրինեցին իմ ճակատագիրը, ձևափոխեցին իմ հոգին, և ինձ, դեռ պատանի հասակում, դրին չափազանց կեղծ հասարակական դրության մեջ,— ասաց Ռաֆայելը կարճատև լռությունից հետո:— Ազգակցական թույլ կապեր ինձ կապեցին մի քանի հարուստ տների հետ, որտեղ մուտքը ինձ արգելած կլիներ իմ հպարտությունը, եթե մարդկային արհամարհությունն ու անտարբերությունը նախապես իմ երեսին փակած չլինեին դռները: Թեև ազգական էի շատ ազդեցիկ և օտարներին իրենց հովանավորությունը շռայլող անձանց, բայց ես ոչ ազգականներ ունեի, ոչ հովանավորներ: Հոգիս, անընդհատ խափանված իր խոյանքների մեջ, ներփակվել էր ինքն իր մեջ: Սրտաբաց և անկեղծ, ես ակամա դարձա սառնասիրտ և ծածկամիտ. հորս բռնակալությունը իմ մեջ չքացրել էր ինքնավստահությունը. ես երկչոտ և անճարակ էի, չէի հավատում, որ իմ ձայնը կկարողանա որևէ ազդեցություն գործել, չէի հավանում ինձ, ինձ համարում էի տգեղ, ամաչում էի իմ նայվածքից: Հակառակ այն ներքին ձայնին, որ, հավանաբար, տաղանդավոր մարդկանց նեցուկ է դառնում իրենց պայքարների մեջ և որ ինձ գոչում էր՝ «արիություն, առաջ». հակառակ իմ ուժի հանկարծական դրսևորումներին միայնության պահերին, հակառակ հույսին, որով ես թևավորվում էի, երբ համեմատում էի հասարակության հիացմունքի առարկա դարձած նոր երկերը այն երկերի հետ, որոնք գծագրվում էին իմ երևակայության մեջ, ես, ինչպես երեխա, վստահ չէի ինձ վրա: Ես զոհ էի ծայրահեղ փառասիրության, ես կարծում էի, թե ծնված եմ մեծ գործերի համար, և կյանքս անցկացնում էի ունայնաբար. ես պահանջ էի զգում մարդկանց, և զուրկ էի բարեկամներից: Ես պետք է ինձ համար ուղի բաց անեի աշխարհում և տանջվում էի միայնության մեջ, ավելի շուտ ամոթի, քան երկյուղի զգացումից: Այն տարում, երբ հայրս ինձ նետեց բարձր հասարակության հորձանուտի մեջ, ես այնտեղ հաճախեցի կուսական սրտով և թարմ հոգով: Ինչպես բոլոր չափահաս երեխաները, ես կարոտ էի զգում գեղեցիկ սիրո: Իմ

հասակակիցների մեջ ես հանդիպեցի մի խումբ պարծենկոտների, որոնք քայլում էին կոկոզավիզ, շաղակրատում էին փուչ բաների մասին, համարձակ կերպով նստում էին անմատչելի թվացող կանանց մոտ, լպիրշ բաներ էին խոսում, կծելով իրենց գավազանի գլուխը, ծեքծեքում էին, ծանակում էին ամենասիրուն կանանց, հավատացնում էին, թե իրենց գլուխները դրել են բոլոր բարձերի վրա, ձևացնում էին, թե իրենք կշտացել են հաճույքներից, ամենաառաքինի, ամենապարկեշտ կանանց համարում էին հեշտ որս, որը կարելի է ձեռք ձգել պարզ խոսքով, մի քիչ համարձակ շարժումով, առաջին իսկ հանդուգն նայվածքով: Ես քեզ բացեիբաց կարող եմ հայտարարել, որ իշխանություն կամ գրական մեծ համբավ նվաճելը ինձ երևում էր նվազ դժվար հաղթանակ, քան հաջողություն ունենալը բարձր խավի, երիտասարդ, խելոք և սիրուն կանանց մոտ: Մի խոսքով, իմ սրտի խռովքները, իմ զգացումները, իմ ըմբռնումները անհամատեղելի էին բարձր դասի հասարակության կանոնների հետ: Ես համարձակ էի, բայց միայն հոգու մեջ, այլ ոչ վարվելակերպի մեջ: Ես ավելի ուշ իմացա, որ կանայք չեն սիրում, երբ իրենցից փոխադարձություն են աղերսում. նրանցից շատերին ես պաշտել եմ հեռվից, նրանց համար սիրտս կենթարկեի ամեն մի փորձության, իմ հոգին կհանձնեի ամեն մի տանջանքի, կտայի իմ ամբողջ եռանդը, չվախենալով ոչ զոհաբերություններից, ոչ չարչարանքներից, իսկ նրանք ընտրում էին հիմար հոմանիների, որոնց ես դռնապան էլ չէի ընդունի: Քանի-քանի անգամ ես լուռ և անշարժ հիացել եմ իմ երազների կնոջ վրա, որ երևացել է պարահանդեսում մտովին իմ կյանքը նվիրելով հավերժական զգվանքների՝ ես մի նայվածքով արտահայտում էի իմ բոլոր հույսերը և զմայլանքով նրան առաջարկում խաբկանքներին ընդառաջ վազող իմ երիտասարդական սերը: Որոշ պահերին ես իմ կյանքը կտայի մի գիշերվա համար: Եվ ի՜նչ: Չգտնելով ականջներ, որոնք պատրաստ լինեին լսելու իմ կրքոտ խոստովանությունները, նայվածքներ, որոնք հանգչեցնեին իմ նայվածքները, սրտեր, որոնք բաբախեին իմ սրտին ի պատասխան, ես, մերթ համարձակության պակասից, մերթ առիթը չներկայանալուց, մերթ իմ անփորձությունից, զգում էի բոլոր տանջանքները անզոր եռանդի, որ լափում էր ինքն իրեն: Գուցե ես հույսս կորցնում էի, թե ինձ կհասկանան, կամ գուցե վախենում էի, թե ինձ շատ լավ կհասկանան: Եվ սակայն իմ հոգու մեջ փոթորիկ էր բարձրանում իմ վրա ուղղված առաջին իսկ սիրալիր նայվածքից: Չնայած արտաքուստ բարեհաճ այդ նայվածքը կամ խոսքերը իբրև սիրո կոչեր ընդունելու իմ պատրաստակամությանը, ես մերթ չէի համարձակվում խոսել, մերթ չէի կարողանում ժամանակին լռել: Զգացումներիս հորդությունից իմ խոսքերը լինում էին անիմաստ և իմ լռությունը դառնում էր անմիտ: Իհարկե ես շատ միամիտ էի այն կեղծ հասարակության համար, մարդիկ ապրում են ցուցամոլությամբ, իրենց մտքերն արտահայտում են պայմանական խոսքերով կամ մոդայի թելադրած բառերով: Բացի դրանից, ես բոլորովին անընդունակ էի լուռ պերճախոսության և պերճախոս լռության: Մի խոսքով, թեև իմ մեջ եռում էին կրքերը, թեև ես ունեի այնպիսի հոգի, որին հանդիպել երազում են կանայք, թեև ես գտնվում էի այնպիսի հիազմայլության մեջ, որին այնքան ծարավի են նրանք, և լի էի այն եռանդով, որով պարծենում են հիմարները,— բոլոր կանայք իմ հանդեպ եղել են դավաճանորեն դաժան: Ահա թե ինչու ես միամտորեն հիացել եմ նրանց վրա, ովքեր ընկերական շրջանակում տարփողել են իրենց հաղթանակները, և չեմ կասկածել նրանց ստի մասին: Իհարկե, ես իրավացի չէի, սպասելով հանդիպել անկեղծ սիրո, ցանկանալով մեծ և խոր կիրք գտնել թեթևամիտ և սնապարծ, շքեղության ծարավի և սնափառությամբ արբշիռ կնոջ սրտի մեջ, այն անբավ կիրքը, այն օվկիանը, որի ալիքները մոլեգնում էին իմ սրտում: Օ՜, զգալ, որ դու ծնվել ես սիրո համար, որևէ կնոջ երջանկացնելու համար, և չգտնել ոչ ոքի,

նույնիսկ արի և ազնիվ Մարսելինայի[96], նույնիսկ որևէ պառավ մարկիզուհու: Մախաղի մեջ կրել գանձեր և չհանդիպել մի երեխայի, հետաքրքրական մի աղջնակի, որը հիանար դրանցով: Ես հաճախ հուսահատությունից ուզել եմ ինքնասպանություն գործել:

— Ինչքա՜ն ողբերգական է այս երեկոն,— նկատեց Էմիլը:

— Ա՜հ, մի խանգարիր ինձ դատապարտելու իմ կյանքը,— գոչեց Ռաֆայելը:— Եթե դու բարեկամաբար չես կարող լսել իմ եղերերգությունները, եթե դու չես կարող ինձ համար ձանձրանալ կես ժամ, ապա, ուրեմն, քնիր: Այն ժամանակ ինձանից բացատրություն մի պահանջիր իմ ինքնասպանության մտքի մասին, որ մռնչում է իմ մեջ, ծառանում իմ առջև, կանչում է ինձ, և ես ողջունում եմ նրան: Մի մարդու մասին դատելու համար պետք է առնվազն ներթափանցել նրա մտախոհությունների, մտատանջությունների, մտահուզությունների գաղտնարանը: Հետաքրքրվել միայն նրա կյանքի արտաքին դեպքերով, այդ նույնն է, թե կազմել ժամանակագրական աղյուսակ, գրել պատմություն ի պետս հիմարների:

Դառն շեշտը, որով ասվեցին այս խոսքերը, զարմացրեց Էմիլին, և նա ապշահար հայացքով նայելով Ռաֆայելին՝ իր ամբողջ ուշադրությունը նվիրեց նրան:

— Բայց հիմա,— շարունակեց պատմողը,— այս բոլոր դեպքերը երևում են նոր լույսով: Իրերի կարգը, որ մի ժամանակ ես դժբախտություն էի համարում, գուցե իմ մեջ զարգացրեց այն գեղեցիկ ընդունակությունները, որոնցով ես հպարտացա հետագայում: Չէ՞ որ փիլիսոփայական հետաքրքրությունը, արտակարգ աշխատունակությունը և ընթերցասիրությունը, որոնք լցրին իմ կյանքը յոթ տարեկան հասակից մինչև իմ մուտքը հասարակության մեջ, ինձ ընձեռեցին այն դյուրությունը, որով ես, եթե պետք է ձեզ հավատալ, կարողանում եմ արտահայտել իմ գաղափարները և առաջ ընթանալ մարդկային գիտելիքների ընդարձակ դաշտում: Չէ՞ որ մենությունը, որին ես դատապարտվել էի, իմ զգացումները խեղդելու և ներաշխարհով ապրելու սովորությունը ինձ օժտեցին համեմատելու և մտախոհելու կարողությամբ: Չէ՞ որ իմ զգայնությունը, որ մոլորվել էր աշխարհի խռովահուզությունների մեջ, որոնք ամենագեղեցիկ հոգին անգամ ստորացնում, քուրջի են վերածում, այնքան էր ամփոփվել իր մեջ, որ դարձել էր կամքի կատարյալ օրգանը, ավելի բարձր, քան կրքի ծարավը: Չճանաչված կանանցից, ես, հիշում եմ, նրանց դիտել եմ մերժված սիրո խորաթափանցությամբ: Իսկ հիմա ես հասկանում եմ, որ իմ աննենգությունը չէր կարող դուր գալ նրանց: Գուցե կանայք սիրում են մեր մեջ մի քիչ կեղծավորություն տեսնել: Ես նույն ժամին փոփոխակի կարող եմ լինել տղամարդ և երեխա, սնամիտ և լրջամիտ, աննախապաշարյալ և սնահավատ, հաճախ ոչ նվազ կանացի, քան ինքը՝ կինը, ապա մի՞թե նրանք իմ միամտությունը չեն ընդունի իբրև ցինիկություն և իմ մտքերի մաքրությունն անգամ իբրև ապականություն: Իմ գիտությունը նրանց աչքին ձանձրություն էր, կանացի թալկությունը՝ թուլություն: Իմ երևակայության չափազանց կենդանությունը, բանաստեղծների այդ դժբախտությունը, հավանաբար առիթ էր տվել կարծելու, որ ես անընդունակ, անհաստատամիտ, անկորով մարդ եմ: Երբ ես լռում էի, հիմար էի երևում, իսկ երբ աշխատում էի դուր գալ, ապա, հավանաբար, վախեցնում էի կանանց, և նրանք ինձ

---

[96] **Մարսելինա** — Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» կատակերգության գործող անձ — կին:

վանում էին: Աշխարհիկ հասարակության վճիռը դառնակսկիծ արցունքներ պատճառեց ինձ: Բայց այդ փորձությունը բերեց իր պտուղը: Ես որոշեցի վրեժ լուծել հասարակությունից, տիրել բոլոր կանանց հոգիներին, ինձ ենթարկել նրանց մտքերը, ձգտել առ այն, որ ինձ վրա ուղղվեին բոլոր հայացքները, երբ սպասավորը իմ անունն արտասաներ հյուրասրահի դռանը: Դեռ մանկական հասակում ես որոշեցի մեծ մարդ դառնալ, և, խփելով ճակատիս, Անդրե Շենիեի[97] պես ասում էի. «Այստեղ ինչ-որ բան կա»: Ես կարծես զգում էի, որ իմ մեջ հասունանում է մի միտք, որ արժե արտահայտել, մի սիստեմ, որ արժե հիմնավորել, մի գիտություն, որ արժե բացատրել: Օ՜, իմ սիրելի Էմիլ, այժմ, երբ ես հազիվ եմ լրացրել իմ քսանվեց տարին, երբ ես վստահ եմ, որ կմեռնեմ անհայտ, առանց դառնալու հոմանին այն կնոջ, որին երազել եմ, թույլ տուր ինձ պատմել իմ հիմարությունները: Մեզանից ո՞վ առավել կամ նվազ չափով չի ընդունել ցանկալին իբրև իրական: Օ՜, ես չէի ցանկանա բարեկամը լինել մի երիտասարդի, որ իր երազների մեջ իրեն պսակ չի հյուսել, իր համար պատվանդան չի կառուցել, հաճոյարար սիրուհիների ընկերության մեջ չի զվարճացել: Ես հաճախ եղել եմ զորավար, կայսր. ես եղել եմ Բայրոն, ապա՝ ոչինչ: Մարդկային փառքերի գագաթների վրա խաղալով, ես նկատում էի, որ բոլոր լեռները, բոլոր դժվարությունները դեռ առջևում են: Ինձ փրկեց իմ մեջ եռացող անսահման ինքնասիրությունը, վսեմ հավատքը իմ կոչման, որ ընդունակ է հանճար դառնալու, եթե մարդ թույլ չտա, որ կյանքի մանրուքները ծվատեն իր հոգին, ինչպես թավ մացառների փշերը ծվիկ-ծվիկ պոկում են ոչխարի բուրդը: Ես որոշեցի փառքով պսակվել, ես որոշեցի լռության մեջ աշխատել իմ ապագա սիրուհու համար: Ինձ համար բոլոր կանայք հանգում էին մի կնոջ, և այդ կնոջը ես հույս ունեի գտնել առաջին իսկ հանդիպմանը. ես յուրաքանչյուրի մեջ տեսնում էի մի թագուհի և գտնում էի, որ, ինչպես թագուհիները, որոնք ստիպված են առաջին քայլն անելու իրենց սիրահարներին մոտենալու համար, նրանք պետք է ընդառաջ գային ինձ՝ վեհերոտիս, տառապյալիս, տարաբախտիս: Օ՜, այն կնոջ հանդեպ, որ կարգահատեր ինձ, ես իմ սրտում կտածեի ոչ միայն սեր, այլև այնպիսի երախտագիտություն, որ կպաշտեի նրան ամբողջ կյանքում: Հետագայում իմ դիտողություններն ինձ պարզեցին դժնդակ ճշմարտություններ: Եվ ես, սիրելի Էմիլ, ինձ մշտապես ենթարկում էի միայնակ ապրելու վտանգին: Կանայք, իրենց մտքի ինչ-որ առանձնահատկությամբ, սովորաբար տաղանդավոր մարդու մեջ տեսնում են միայն նրա թերությունները, իսկ հիմարի մեջ՝ միայն նրա արժանիքները. նրանք մեծ համակրանք են տածում հիմարի արժանիքների նկատմամբ, քանի որ դրանք շոյում են իրենց սեփական թերությունները, մինչդեռ բարձր կոչման տեր մարդը նրանց չի կարող պատճառել այնպիսի ուրախություններ, որոնք հակակշռեին նրա թերությունները: Տաղանդը պարբերական տենդ է, և ոչ մի կին չի ցանկանա մասնակից լինել միայն նրա տագնապներին: Նրանք բոլորն էլ գտնում են, որ իրենց սիրեկանները լոկ միջոց են իրենց սնափառությունը գոհացնելու: Նրանք մեր մեջ սիրում են հենց իրենց: Բայց մի՞թե չքավոր մարդու մեջ, ստեղծագործելու կարողությամբ օժտված հպարտ արվեստագետի մեջ չկա վիրավորական եսասիրություն: Նրա շուրջը գոյություն ունի ինչ-որ մտքերի հորձանք, որի մեջ ներգրավվում է ամեն ինչ, նույնիսկ նրա սիրուհին: Քծնանքով շրջապատված կինը կարո՞ղ է հավատ ընծայել այդպիսի

---

[97] **Անդրե Շենիե** (1762—1794) — ֆրանսիացի բանաստեղծ. 1794 թվին գլխատվեց հակահեղափոխականների հետ ունեցած կապի համար: Պատմում էին, որ այն սայլակի վրա, որ նրան գլխատելու էր տանում, նա, խփելով իր ճակատին, գոչել է. «Սակայն այստեղ ինչ-որ բան կար»:

մարդու սիրույն: Նա կընկնի՞ այդպիսի մարդու ետևից: Այդպիսի տարփածուն պարապ ժամանակ չունի բազմոցի վրա անձնատուր լինելու այն քնքուշ կոտրատումներին, որոնց այնքան սիրահար են կանայք և որոնց մեջ հաջողություն են ունենում կեղծ և անզգա տղամարդիկ: Նրան ժամանակը չի հերիքում աշխատանքի համար, էլ ինչպե՞ս ժամանակ հատկացնի ծեթևեթանքի և պերևեթանքի համար: Ես պատրաստ էի կյանքս տալ ամբողջությամբ, բայց չէի կարող ուժերս ջլատել: Մի խոսքով, որևէ դալուկ և ծեքծեքող կնոջ հանձնարարությունը կատարող բորսայական միջնորդի հաճոյարարության մեջ կա ինչ-որ ճղճիմ բան, որից խորշում է արվեստագետը: Չքավոր և մեծ մարդուն բավական չէ վերացական սերը, նա պահանջում է սիրո բոլոր զոհաբերությունները: Մանր էակները, որոնք ամբողջ կյանքը անցկացնում են նրանով, որ քիշմիրե շալեր փորձեն և մոդայական ապրանքների համար կախարաններ դառնան, անձնազոհություն չունեն. նրանք այդ պահանջում են ուրիշներից, սիրո մեջ նրանք ցանկանում են իշխել, այլ ոչ թե հնազանդվել: Հոգով, սրտով իսկական կինը հլու-հնազանդ հետևում է նրան, որի մեջ է տեսնում իր կյանքը, իր ուժը, իր փառքը, իր երջանկությունը: Տաղանդավոր մարդկանց հարկավոր են արևելյան կանայք, որոնց միակ նպատակն է կանխել ամուսինների ցանկությունները, քանի որ տաղանդավոր մարդկանց ամբողջ դժբախտությունը կայանում է նրանց ձգտումների և այդ ձգտումներն իրականացնելու հնարավորությունների անհամապատասխանության մեջ: Իսկ ես ինձ համարելով հանճարեղ մարդ, սիրում էի հենց պճնամոլ կանանց: Հղանալով հանրաճանաչ գաղափարներին այնքան հակադիր գաղափարներ, հավակնություն ունենալով գրավելու երկինքը առանց սանդուղքի, տեր լինելով գանձերի, որոնք գործածության մեջ չէին, զինված ընդարձակ գիտելիքներով, որոնք, ծանրաբեռնելով իմ հիշողությունը, դեռ սիստեմի չէին վերածվել, դեռ չէին յուրացվել իմ կողմից, չունենալով ոչ ծնողներ, ոչ բարեկամներ, միայնակ լինելով ահավոր անապատում, սալարկված անապատում, շնչավորված, մտածուն, կենդանի անապատում, որտեղ ամեն ինչ ձեր հանդեպ անտարբեր է, այսինքն՝ ավելի քան թշնամական,— ես ընդունեցի բնական, թեև խոլական մի որոշում. նրա մեջ ինչ-որ անհնարին բան կար, բայց դա ինձ արիություն տվեց: Ես կարծես ինքս ինձ հետ գրազ էի եկել, որի մեջ ես և՛ խաղացողն էի, և՛ խաղադրամը: Ահա իմ ծրագիրը: Իմ հազար հարյուր ֆրանկը ինձ պետք է բավականացներ երեք տարի, և ես հենց այդ պայմանաժամն էի նշանակել՝ լույս ընծայելու համար մի երկ, որը հասարակության ուշադրությունը ինձ վրա կհրավիրեր և ինձ հարստություն ու համբավ կբերեր: Ես հրճվում էի, մտածելով, որ թեբեական մենակյացի պես ես կսնվեմ հացով ու կաթով, աղմկահույզ Փարիզի մեջ կսուզվեմ գրքերի և մտքերի մեկուսացած աշխարհը, աշխատանքի ու լռության ոլորտը, որտեղ, ինչպես թիթեռի հարսնյակ, ես ինձ գերեզման կշինեմ, որպեսզի վերածնվեմ փառքով ու փայլով: Ապրելու համար ես պատրաստ էի ինձ ենթարկելու մեռնելու վտանգին: Սահմանափակվելով ամենաէական պահանջներով, միայն խիստ անհրաժեշտով, ես գտնում էի, որ տարեկան երեք հարյուր վաթսունհինգ ֆրանկը ինձ բավական կլիներ իմ աղքատիկ ապրուստի համար: Եվ իրոք, այդ խղճուկ գումարը ինձ բավական եղավ ապրելու համար այնքան ժամանակ, ինչ ես հետևեցի այդ իսկական վանական կարգ ու կանոնին:

— Այդ անկարելի է,— գոչեց Էմիլը:

— Ես այսպես ապրեցի համարյա երեք տարի,— պատասխանեց Ռաֆայելը մի տեսակ հպարտությամբ:— Արի հաշվենք: Երկու սուի հաց, երկու սուի կաթ, երեք սուի երշիկ ինձ հերիք եղավ, որպեսզի քաղցից չմեռնեմ և միտքս պահեմ բացառիկ պայծառ վիճակում:

Հավատա, ես ինձ վրա զգացել եմ, որ ծոմը հրաշալի ազդեցություն է գործում երևակայության վրա: Սենյակը ինձ նստում էր օրական երեք սու, գիշերը ես վառում էի երեք սուի ձեթ, սենյակը ինքս էի հավաքում, ֆլանելե շապիկ էի հագնում, որպեսզի լվացքի համար օրական երկու սուից ավելի չծախսեմ: Սենյակս տաքացնում էի ածուխով, որի արժեքը, եթե այն բաժանենք տարվա օրերի վրա, երբեք չէր անցնում երկու սուից: Հագուստներս, սպիտակեղենս, կոշիկներս ինձ կբավականացնեին երեք տարի. ես որոշեցի վայելուչ հագնվել միայն այն ժամանակ, երբ հարկավոր էր լինում հրապարակային դասախոսությունների գնալ կամ գրադարան հաճախել: Այդ բոլոր ծախսերը միասին կազմում էին ընդամենը տասնութ սու, ինձ մնում էր երկու սու չնախատեսված ծախսերի համար: Աշխատանքի այդ երկար տևողության ընթացքում ես չեմ հիշում, թե անցե՞լ եմ Արվեստների կամուրջով[98] կամ ջուր գնե՞լ եմ ջրկիրից. ես ամեն առավոտ գնում էի ջուր բերելու Սեն Միշել հրապարակի վրա Դեգրե փողոցի անկյունի աղբյուրից: Օ՛, ես հպարտությամբ էի տանում իմ աղքատությունը: Ով գեղեցիկ ապագա է գուշակում իր համար, նա իր թշվառ կյանքում քայլում է այնպես, ինչպես անմեղը՝ մահապատժի գնալիս,— նա չի ամաչի: Ես չէի ցանկանում հիվանդություն նախատեսել: Ակիլինայի նման ես հիվանդանոցի մասին մտածում էի առանց սարսափի: Մի րոպե անգամ ես չեմ կասկածել իմ առողջության վրա: Այնուամենայնիվ, աղքատը իրավունք ունի պառկելու միայն այն ժամանակ, երբ մահանում է: Ես կտրեցի մազերս մինչև այն ժամանակ, երբ սիրո և բարության մի հրեշտակ... Բայց ես չեմ ուզում ժամանակից առաջ խոսել այն դեպքերի մասին, որոնց շուտով մենք կհասնենք: Միայն իմացիր, սիրելի բարեկամ, որ, սիրուհի չունենալով, ես ապրեցի մի մեծ մտքով, մի երազանքով, մի պատրանքով, որին մենք բոլորս ավելի կամ պակաս հավատում ենք սկզբում: Այսօր ես ծիծաղում եմ ինձ վրա, իմ գուցե սուրբ և վեհ **ես**-ի վրա, որն այլևս գոյություն չունի: Մոտիկից դիտված հասարակությունը, աշխարհը, մարդկային սովորություններն ու բարքերը ինձ ցույց տվին իմ անմեղ հավատալիքների բովանդակ վտանգը, իմ եռանդուն աշխատանքների ամբողջ ունայնությունը: Այսպիսի պաշարները անօգուտ են փառասերին: Չպետք է մտապաշարով բեռնավորվի նա, ով ընկնում է բախտի հետևից: Տաղանդավոր մարդկանց սխալն այն է, որ նրանք իրենց երիտասարդության տարիները վատնում են բախտի շնորհին արժանանալու համար: Մինչ չքավոր մարդիկ ուժեր և գիտելիքներ են հավաքում, որպեսզի ապագայում հեշտությամբ տանեն իրենցից խույս տվող հզորության բեռը, բառերով հարուստ և մտքերով աղքատ նենգագործները վազվզում են ամեն տեղ, կարթով բռնում են հիմարներին, միամիտների վստահությունը շահում, ոմանք ուսումնասիրում են, ուրիշները առաջ շարժվում. ոմանք համեստ են, ուրիշները՝ համարձակ. հանճարեղ մարդը ծածկում է իր հպարտությունը, նենգագործը ցուցադրում է այն, նա անպայման կհասնի իր նպատակին: Իշխանության տերերը այնքան բուռն պահանջ ունեն հավատալու ակնհայտ արժանիքին, հանդուգն տաղանդին, որ ճշմարիտ գիտնականի կողմից տղայություն կլիներ հույս դնել մարդկային երախտագիտության վրա: Իհարկե, ես մտադրություն չունեմ կրկնելու առաքինության մասին ընդհանուր տեղիները, այն երգ-երգոցը, որ հավետ երգում են չճանաչված հանճարները. ես միայն ուզում եմ տրամաբանորեն հետևցնել պատճառն այն հաջողությունների, որոնք հաճախ ձեռք են բերում միջակ մարդիկ: Ավա՜ղ, գիտությունն այնքան մայրականորեն բարի է, որ գուցե հանցանք կլիներ նրանից պահանջել այլ

---

[98] **Ես չեմ հիշում թե անցե՞լ եմ Արվեստների կամուրջով** — Արվեստների կամուրջով հետիոտն անցնելու համար վճարում էին մեկ սու:

վարձատրություններ, քան այն մաքուր ու քաղցր ուրախությունները, որոնցով նա սնում է իր որդիներին: Հիշում եմ, թե ինչպես մի ժամանակ զվարթորեն կաթով հաց եմ նախաճաշ արել, օդ շնչելով բաց պատուհանի մոտ, հայացքս հածելով թուխ, գորշ կամ կարմիր հերձաքարերով և կղմինդրներով ծածկված, դեղին կամ կանաչ մամուռներով պատած տանիքների համայնապատկերի վրա: Սկզբում այդ տեսարանը ինձ ձանձրալի թվաց, բայց շուտով ես այնտեղ նկատեցի յուրատեսակ գեղեցկություններ: Երեկոյան կիսափակ փեղկերի միջով թափանցած լույսի շերտերը երանգավորում և կենդանացնում էին այդ ինքնատիպ աշխարհի մթին անդունդները: Մերթ փողոցային լապտերների դժգույն նշույլները մշուշի միջով ներքև էին արձակում դեղնավուն ցոլքեր և աղոտ կերպով երևան բերում խռնված կտուրների, անշարժ ալիքների այդ օվկիանի, ոլորապտույտ գիծը փողոցների երկայնքով: Մերթ այդ մռայլ անապատում երևում էին հազվագյուտ դեմքեր. ինչ-որ օդային պարտեզի ծաղիկների միջև ես նկատում էի ոսկրոտ, կեռաձև կիսադեմքը մի պառավի, որ հնդկոտեմներ էր ջրում, և կամ երդիքի լուսամուտի փտած շրջանակի մեջ նշմարում էի մի ջահել աղջիկ, որ, իրեն մենակ կարծելով, պճնվում էր, և ես տեսնում էի միայն նրա գեղեցիկ ճակատը և սիրուն սպիտակ ձեռքով բարձրացված երկար վարսերը: Ես հիանում էի ջրհորդանների մեջ աճած ազազուն բուսականությամբ, աղքատիկ խոտերով, որոնց շուտով կքշեր կտաներ մրրկախառն անձրևը: Ես ուսումնասիրում էի, թե ինչպես մամուռները մերթ վառ գույներ էին ստանում անձրևից հետո, մերթ արևի տակ վերածվում չոր, թուխ թավիշի՝ քմահաճ ցոլացումներով: Մի խոսքով, ցերեկվա լույսի բանաստեղծական և խուսափուկ խաղերը, մշուշի տխրությունները, արևի հանկարծական շողյունները, գիշերվա կախարդական լռությունները, արշալույսի խորհրդավորությունները, ծխնելույզների ծխի քուլաները — այդ անսովոր բնության բոլոր երևույթները ինձ համար դարձել էին սովորական և զվարճացնում էին ինձ: Ես սիրում էի իմ բանտը, քանի որ իմ հոժար կամքով էի գտնվում այնտեղ: Կտուրներից կազմված փարիզյան այդ տափաստանը, որ նման էր լերկ հարթավայրի, բայց որ իր տակ ծածկում էր բնակեցված անդունդներ, մոտ էր իմ հոգուն և ներդաշնակում էր իմ խոհերին: Ծանր բան է, իջնելով երկնային բարձունքներից, ուր մեզ ձգում են գիտական խորհրդածությունները, հանկարծ գտնվել դեմ հանդիման աշխարհիկ հասարակությանը, և ես այն ժամանակ կատարելապես հասկացա մենաստանների մերկությունը: Երբ որոշեցի իմ կյանքի նոր ծրագրին հետևել, ես ինձ համար սենյակ որոնեցի Փարիզի ամենախուլ թաղերում: Մի երեկո, Էստրապադից տուն վերադառնալիս, ես անցնում էի Կորդիե փողոցով: Կլյունի փողոցի անկյունում ես տեսա մոտ տասնչորս տարեկան մի աղջնակ, որ ընկերուհու հետ փետրագունդ էր խաղում, իր ծիծաղով ու չարաճճիություններով զվարճացնելով հարևան տների բնակիչներին: Լավ եղանակ էր, տաք երեկո էր, դեռ սեպտեմբեր ամիսն էր: Կանայք նստել էին դռների առաջ և շաղակրատում էին, ինչպես գավառական մի քաղաքում տոն օրերին: Ես սկզբում նայեցի դեռատի աղջկան, որի դեմքը զմայլելի արտահայտություն ուներ, իսկ մարմինը ստեղծված էր նկարչի համար: Դա առաքինող տեսարան էր: Ապա ես փորձեցի հասկանալ, թե որտեղից էր գալիս այդ պարզահոգությունը Փարիզում և նկատեցի, որ այդ փողոցը փակուղի էր, որտեղ, ըստ երևույթին, քիչ էր երթևեկությունը: Հիշելով, որ Ժան-Ժակ Ռուսոն այդ տեղանքն է բնակվել, ես գտա «Սեն-Կանտեն» պանդոկը. նրա անուշադրության մատնված տեսքը ինձ հուսալ տվեց, որ ես էժան գնով մի սենյակ կգտնեմ, և որոշեցի այնտեղ մտնել: Մտնելով ցած առաստաղով մի բնակարան, տեսա պղնձե դասական աշտանակներ մոմերով, դարակի վրա խնամքով շարված յուրաքանչյուր բանալու վերևում, և ես զարմացա այդ սրահում տիրող մաքրությամբ, որը սովորաբար վատ է պահվում ուրիշ պանդոկներում, իսկ այստեղ ամեն ինչ կարգին էր,

ինչպես ժանրային նկարում. կապույտ մահճակալի, սպասների, կարասիների մեջ կար պայմանական նկարներին հատուկ ինչ-որ պչրական բան: Պանդոկի տիրուհին, քառասնամյա մի կին, որի դիմագծերը վիշտ էին արտահայտում, որի հայացքն ասես մթագնել էր արցունքներից, վեր կացավ և մոտեցավ ինձ. ես խոնարհաբար ասացի, թե ինչքան կարող եմ վճարել բնակարանի համար. առանց զարմանք հայտնելու, նա մի բանալի ջոկեց, ինձ տարավ վերնահարկը և ցույց տվեց մի սենյակ, որ նայում էր կտուրների, բակերի վրա հարևան տների, որոնց պատուհաններից ձգված էին երկար ձողեր, նրանց վրա կախված սպիտակեղենով: Չկա ավելի սոսկալի բան, քան դեղնած, կեղտոտ պատերով այս ձեղնահարկային խուցը, որ թշվառություն էր բուրում և սազում էր աղքատ գիտնականին: Կտուրը նրա վրա շեղակի իջել էր, և կղմինդրների միջև եղած ճեղքերից երևում էր երկինքը: Այստեղ կարելի էր տեղավորել մի մահճակալ, մի սեղան, մի քանի աթոռ, իսկ կտուրի սուր անկյան տակ տեղ կգտնվեր իմ դաշնամուրի համար: Խեղճ կինը, չունենալով միջոցներ, որպեսզի կահավորեր Վենետիկի կապարե խցերը[99] հիշեցնող այս վանդակը, ոչ ոքի չէր կարողացել վարձու տալ այն: Իմ վաճառած գույքերից ձեռք բերելով մի քանի իրեր, որոնք որոշ չափով իմ անձնական սեփականությունն էին կազմում, ու ես իսկույն համաձայնության եկա տանտիրուհու հետ և հետևյալ օրը հաստատվեցի նրա մոտ: Ես՝ երեք տարի ապրեցի այդ օդային գերեզմանում, գիշեր-ցերեկ անդադար աշխատեցի այնպիսի հաճույքով, որ պարապմունքներն ինձ թվացին մարդկային կյանքի ամենագեղեցիկ գործը, նրա խնդիրների ամենահաջող լուծումը: Գիտնականին անհրաժեշտ անդորրության լռության մեջ կա ինչ-որ քաղցր, արբեցուցիչ բան, ինչպես սերը: Մտքի աշխատանքը, գաղափարների որոնումը, գիտության խաղաղ հետազոտությունները մեզ պարգևում են անճառելի, անբացատրելի բերկրանքներ, ինչպես այն ամենը, ինչ առնչություն ունի իմացականության հետ, որի գործունեությունը աննշմարելի է մեր արտաքին զգայարանների համար: Ուստի մենք միշտ ստիպված ենք մտքի գաղտնիքները բացատրել նյութական համեմատություններով: Ժայռերի, անտառների և ծաղիկների մեջ պարփակված և գաղջ զեփյուռից շոյված մենավոր ու ջինջ լճակում լողանալու հաճույքը տգետներին շատ թույլ պատկերացում կտար այն երջանկության մասին, որ ես զգում էի, երբ իմ հոգին լողում էր ինչ-որ լույսի շողերի մեջ, երբ ես լսում էի ներշնչման ահավոր և շփոթ շշունջները, երբ անհայտ մի ակունքից պատկերները հոսում էին իմ թրթռուն ուղեղի մեջ: Դիտել, թե ինչպես գաղափարը ծագում է մարդկային վերացականությունների դաշտում, ինչպես արևը արշալույսին, և բարձրանում է, ինչպես արևը կամ, ավելի շուտ, աճում է ինչպես մանուկը, հասունանում, առնականանում է տակավ առ տակավ, դա ամենաբարձր ուրախությունն է երկրային բոլոր ուրախություններից, ավելի ճիշտ, դա աստվածային հաճույք է: Գիտական զբաղումները ինչ-որ կախարդական բան են հաղորդում այն ամենին, ինչ շրջապատում է մեզ: Խղճուկ գրասեղանը, որի վրա ես գրում էի, գրասեղանը ծածկած դարչնագույն սփռոցը, դաշնամուրը, մահճակալը, բազկաթոռը, պաստառները, կարասիները, այս բոլորը կենդանացան և դարձան իմ հլու բարեկամները, իմ ապագայի լուռ մասնակիցները. քանի՜-քանի՜ անգամ ես իմ հոգին հաղորդել եմ նրանց, նայելով նրանց: Հաճախ աչքերս հածելով ծռված մի քանդակի վրա, ես գտնում էի նոր ուղիներ, իմ սիստեմի ցայտուն մի ապացույց կամ այնպիսի բառեր, որոնք հարմար էի

---

[99] **Վենետիկի կապարե խցերը** — Վենետիկի Դոժերի պալատի բանտախցերը: Այս բանտախցերի պատերը ծածկված էին կապարե թերթերով, որպեսզի տաքությունը տանջեր բանտարկյալներին:

համարում գրեթե անարտահայտելի մտքեր արտահայտելու համար: Երկար դիտելով շրջապատող առարկաները, ես սկսեցի որոշել յուրաքանչյուրի դեմքը, նրա բնութագիծը, նրանք հաճախ խոսում էին ինձ հետ. երբ վերջալույսի խուսափուկ մի շող իմ սենյակն էր թափանցում նեղ լուսամուտի միջով, նրանք գունավորվում, գունաթափվում, պսպղում էին, դառնում էին տխուր կամ զվարթ, միշտ ինձ զարմացնելով նորանոր ձևափոխություններով: Մենավոր կյանքի այս մանր դեպքերը, որոնք վրիպում են աշխարհիկ հասարակության ուշադրությունից, բանտարկյալների սփոփանքն են կազմում: Արդարև, ես գերին էի մի գաղափարի, կալանավորն էի մի սիստեմի, բայց սրտապնդվում էի փառավոր մի կյանքի հեռանկարով: Որևէ դժվարություն հաղթահարելով, ես ամեն անգամ համբուրում էի ձեռքերը այն գեղաչյա, վայելուչ և հարուստ կնոջ, որ մի օր պիտի շոյեր իմ մազերը, գորովանքով ասելով. «Դու շատ տառապեցիր, իմ հեգ հրեշտակ»: Ես ձեռնարկել էի երկու մեծ գործեր: Իմ կատակերգությունը կարճ ժամանակում ինձ կբերեր համբավ և հարստություն, բաց կաներ մուտքը այն հասարակության, ուր ես ուզում էի նորից երևալ, օգտվելով հանճարեղ մարդու արքայական իրավունքներից: Այդ գլուխգործոցի մեջ դուք բոլորդ տեսաք կրթարանը նոր ավարտած երիտասարդի առաջին սխալը, և այդ համարեցիք իսկական տղայական անմտություն: Ձեր կատակները կտրեցին թևերը բեղմնավոր պատրանքների, որոնք այն օրվանից այլևս չզարթնեցին: Միայն դու, իմ սիրելի Էմիլ, ամոքեցիր այն խոր խոցը, որ ուրիշները հասցրին իմ սրտին: Միայն դու գնահատեցիր իմ «Կամքի տեսությունը» այդ ստվար երկը, որի համար ես սովորել էի արևելյան լեզուները, կազմախոսությունը, բնախոսությունը, որին նվիրել էի իմ ժամանակի մեծագույն մասը: Կարծում եմ, որ նա կլրացնի Մեսմերի, Լավատերի, Գալլի, Բիշայի[100] աշխատությունները և նոր ուղի կբանա մարդու մասին գիտության առջև: Այստեղ վերջանում է իմ գեղեցիկ կյանքը, ամենօրյա զոհաբերությունը, աշխարհին անծանոթ շերամի աշխատանքը, որի միակ վարձատրությունը, թերևս, հենց նույն աշխատանքի մեջ է: Իմ գիտակցական կյանքի սկզբնավորումից մինչև այն օրը, երբ ավարտեցի իմ «Տեսությունը», ես անընդհատ դիտեցի, ուսումնասիրեցի, գրեցի, կարդացի, և իմ կյանքը տևական պարհակ եղավ: Արևելյան ծուլության մեղկ սիրահար, երազուն և զգայուն, ես շարունակ աշխատել եմ, հրաժարվելով փարիզյան կյանքի վայելքներից: Համադամների սիրահար, ես եղել եմ ժուժկալ. ցամաքային և ծովային ճանապարհորդությունների սիրահար, զանազան երկրներ այցելելու ծարավի, երեխայի նման սիրելով քարեր սահեցնել ջրի վրա, ես անվերջ նստել եմ գրասեղանիս մոտ. լինելով զրուցասեր, ես լռությամբ լսել եմ հանրային դասախոսությունները գրադարանում և թանգարանում. ես միայնակ քնել եմ իմ խղճուկ խշտյակում, ինչպես բենեդիկտյան վանական, մինչդեռ կինը իմ նվիրական երազն էր, մի երազ, որ ես փայփայում էի և որ միշտ խույս էր տալիս ինձանից: Մի խոսքով, իմ կյանքը դաժան հակասություն, տևական խաբկանք եղավ: Եվ ահա դրանից հետո դատեցեք մարդկանց մասին: Երբեմն իմ բնածին հակումները բորբոքվում էին, ինչպես երկար ժամանակ անթեղված կրակ: Ես, որ չէի ճանաչում կանանց,

---

[100] **Մեսմեր Ֆրանց** (1734—1815) — գերմանացի բժիշկ, կենդանական մագնիսականության տեսության հիմնադիրը: **Լավատեր** Ժան-Գասպար (1741—1801) — զվիցերացի փիլիսոփա, հնարողը դիմագիտության, ըստ որի գոյություն ունի համապատասխանություն դիմագծերի և մարդկային բնավորության որոշ հատկությունների միջև: **Գալլ Ֆրանց** (1758—1828) — գերմանացի բժիշկ, հիմնադիրը ֆրենոլոգիայի, ըստ որի մարդկային ընդունակությունները կախում ունեն գանգի արտաքին գծագրությունից: **Բիշա**—տես 73 էջի ծանոթ.:

որոնց այնքան տենչում էի, ես, որ աղքատ էի և բնակվում էի ուսանողական մի հետնախորշում, ինձ երևակայում էի շրջապատված դյութական սիրուհիներով, ինչպես օդերևույթներով, ինչպես տենդոտ զառանցանքի պատկերներով: Ես սուրում էի Փարիզի փողոցներով՝ շքեղ մի կառքի փափուկ բարձերի վրա ընկողմանած: Ինձ կրծում էին մոլությունները, ես մխրճվել էի շվայտության մեջ, ես ամեն ինչ ցանկանում էի և ամեն ինչ ստացել էի, ես գինով էի առանց գինու, ինչպես սուրբ Անտոնը իր փորձության ժամին[101]: Բարեբախտաբար քունը վերջ ի վերջո հանգցնում էր այս այրող տեսիլները. առավոտյան գիտությունը ժպտալով նորից էր կանչում ինձ, և ես հավատարիմ էի նրան: Ենթադրում եմ, որ առաքինի համարված կանայք հաճախ մատնվում են ցանկությունների կրքերի այս խոլական հորձանքներին, որոնք բարձրանում են մեր մեջ հակառակ մեր կամքի: Այսպիսի երազները զուրկ չեն որոշ հմայքից. մի՞թե դրանք չեն հիշեցնում զրույցները ձմեռային երեկոների, երբ մարդ, նստելով ակութի մոտ, ճանապարհորդություն է կատարում Չինաստանում: Բայց ի՞նչ է լինում առաքինությունը այդ սխրալի ուղևորությունների ժամանակ, երբ միտքը հաղթահարել է բոլոր խոչընդոտները: Իմ կալանքի առաջին տասը ամիսներին ես վարեցի այն անշուք և մենավոր կյանքը, որ ես նկարագրեցի. առավոտները, չնկատվելով ոչ ոքից, ես դուրս էի գալիս օրվա պարենապաշարը հայթայթելու, ինքս էի հավաքում սենյակը, ես տեր էի և ծառա միաժամանակ, ես դիոգենեսություն էի անում[102] անհավատալի հպարտությամբ: Բայց հետո, երբ տիրուհին և նրա աղջիկը ուսումնասիրեցին իմ բարքերն ու սովորությունները, ճանաչեցին ինձ և հասկացան իմ թշվառությունը (զուցե այն պատճառով, որ նրանք նույնպես շատ դժբախտ էին), անխուսափելի կապեր հաստատվեցին նրանց և իմ միջև: Պոլինը, այդ զմայլելի էակը, որի բնական ու թաքուն հմայքներն էին մասամբ ինձ բերել այստեղ, ինձ մատուցեց ծառայություններ, որոնք ես չկարողացա մերժել: Բոլոր դժբախտությունները քույրեր են, նրանք ունեն միևնույն լեզուն, միևնույն վեհանձնությունը, վեհանձնությունը նրանց, որոնք, ոչինչ չունենալով, շռայլում են իրենց զգացումը, նվիրում են իրենց ժամանակը և իրենց անձը: Անզգալաբար Պոլինը դարձավ իմ տիրուհին, ցանկացավ ինձ ծառայել, և նրա մայրը ամենևին չընդդիմացավ: Ես տեսա, թե ինչպես մայրը անձամբ կարկատում էր իմ սպիտակեղենը և կարմրում էր, երբ նրան հանկարծակիի էի բերում այդ մարդասիրական զբաղումի ժամանակ: Ակամա դառնալով նրանց հովանավորյալը, ես ընդունեցի նրանց ծառայությունները: Հասկանալու համար այդ մասնավոր խանդաղատանքը, պետք է զգալ աշխատանքի գրավչությունը, գաղափարների բռնակալությունը և մտքերով ապրող մարդու բնազդական խորշանքը նյութական կյանքի մանրուքների նկատմամբ: Ես կարո՞ղ էի դեմ լինել Պոլինի փափկանկատ ուշադրությանը, երբ նա, նկատելով որ ես յոթ-ութ ժամ ոչինչ չեմ կերել, անաղմուկ քայլերով ներս էր մտնում և ինձ համար համեղ ճաշ բերում: Կանացի նազելիությամբ և երեխայի պարզահոգությամբ նա

---

[101] **Ինչպես սուրբ Անտոնը իր փորձության ժամին** — ըստ քրիստոնեական ավանդության, սուրբ Անտոնը իբրև ճգնավոր ապրում էր եգիպտական անապատում, պահելով ամենախիստ պահք: Քսան տարի շարունակ նրան հալածում էին փորձությունների ու գայթակղությունների տեսիլները:

[102] **Ես դիոգենեսություն էի անում** — այսինքն՝ ես ապրում էի ինչպես հին հույն փիլիսոփա Դիոգենսը (IV դար մ. թ. ա.): Դիոգենեսը ապրում էր տակառի մեջ, հրաժարվելով բոլոր բարիքներից, գոհանալով միայն ամենաանհրաժեշտով:

ժպտում էր, նշանացի ինձ հասկացնելով, որ ուշադրություն չդարձնեմ իր վրա: Նա Արիելն[103] էր, որ օդային ոգու նման սահում էր իմ կտուրի տակ և հոգում իմ կարիքները: Մի օր երեկոյան Պոլինը սրտահույզ միամտությամբ ինձ պատմեց իր պատմությունը: Նրա հայրը կայսերական գվարդիայի հեծելազորային գնդի հրամանատար էր: Բերեզինայից անցնելիս նա գերի ընկավ կազակների ձեռքը. հետագայում, երբ Նապոլեոնը առաջարկեց փոխանակել նրան, ռուսական իշխանությունները իզուր նրան որոնեցին Սիբիրում. ուրիշ գերիների ասելով, նա փախել էր, նպատակ ունենալով Հնդկաստան անցնել: Այդ ժամանակվանից տիկին Գոդենը՝ իմ տանտիրուհին, չէր կարողանում որևէ լուր ստանալ ամուսնու մասին: Սկսվեցին 1814—1815 թվականների աղետները[104]. մնալով մենակ, առանց միջոցների և նեցուկի, նա որոշեց կահավորված մի պանդոկ պահել՝ իր աղջկան կերակրելու համար: Տիկին Գոդենը դեռևս հույս ուներ իր ամուսնուն տեսնելու: Նրա համար ամենածանր վիշտն այն էր, որ Պոլինը մնացել էր առանց կրթության, իր Պոլինը, իշխանուհի Բորգեզեի սանուհին, որը անպայման կարդարացներ գուշակությունները բարձր հովանավորուհու, որ նրան փայլուն ապագա էր խոստանում: Երբ տիկին Գոդենը ինձ հայտնեց իր վիշտը և սրտաճմլիկ տոնով ինձ ասաց՝ «Ես սիրով կհրաժարվեմ Գոդենին բարոն նշանակող թղթի կտորից և Վիչնաուից եկամուտ ստանալու մեր իրավունքից, եթե իմանամ, որ Պոլինը կրթություն կստանա Սեն-Դրնիում»[105], ես հանկարծ սարսռացի և ի երախտագիտություն այն հոգածության, որ ինձ համար շռայլում էին երկու տանտիրուհիները, որոշեցի ինքս ստանձնել Պոլինին կրթություն տալու գործը: Անկեղծությունը, որով նրանք ընդունեցին իմ առաջարկը, հավասար եղավ այդ առաջարկը ինձ թելադրած պարզամտությանը: Այսպիսով, ես ունեցա հանգստի ժամեր: Աղջիկը լավ ընդունակություններ ուներ, նա ամեն ինչ այնպես հեշտությամբ էր ըմբռնում, որ շուտով սկսեց ինձանից լավ դաշնամուր նվագել: Վարժված լինելով բարձրաձայն մտածել ինձ մոտ, նա երևան էր բերում հմայիչ հատկությունները հոգու, որ բացվում է կյանքին, ինչպես ծաղկի բաժակը աստիճանաբար բացվում է արևին. նա ինձ լսում էր ուշի-ուշով և հաճույքով, ինձ նայելով իր սև, թավշյա աչքերով, որոնք կարծես ժպտում էին. նա սերտում էր դասերը իր քնքուշ և փաղաքուշ ձայնով և երեխայի պես ուրախանում էր,երբ ես գոհ էի լինում նրանից: Մայրը, որ միշտ անհանգստությամբ մտածում էր վտանգներից զերծ պահել իր դեռատի աղջկան, որի մոտ հասակի հետ միասին զարգանում էին բոլոր հրապույրները, հաճույքով տեսնում էր, որ նա ամբողջ օրը տանը փակված էր մնում սովորելու համար: Որովհետև միայն իմ դաշնամուրը կար նրա տրամադրության տակ, նա օգտվում էր իմ բացակայություններից՝ վարժությունների համար: Երբ վերադառնում էի, իմ սենյակում էի գտնում Պոլինին, հագնված ամենահամեստ ձևով, բայց ամենափոքրիկ շարժումից նրա նուրբ իրանը և մարմնի բոլոր հրապույրները գծագրվում էին կոպիտ կտավի տակ: Ինչպես «Էշի կաշի»[106] հեքիաթի հերոսուհին, նա ուներ փոքրիկ

---

[103] **Արիել** — բարի ոգի, երևակայական անձ Շեքսպիրի «Փոթորիկ» կատակերգության մեջ:

[104] **1814—1815 թվականների աղետները** — այսինքն՝ Նապոլեոնի անկման հետ կապված դեպքերը:

[105] **Սեն-Դրնի** — Նապոլեոնի կողմից Փարիզի Սեն-Դրնի արվարձանում հիմնված ուսումնական հաստատություն Պատվո լեգեոնի շքանշան ունեցողների աղջիկների համար:

[106] **«Էշի կաշի»** — Շառլ Պերրոյի հեքիաթը, որի մեջ իշխանուհին թաքնվելով իր հորից, հագնում է ամանի լվացողի հասարակ հագուստ:

ոտներ՝ կոպիտ ոտնամաններ հագած։ Բայց այս բոլոր գողտրիկ գանձերը, այս բոլոր հարստությունը, կուսական գեղեցկության ամբողջ պերճանքը ասես գոյություն չունեին ինձ համար։ Ես ինձ հարկադրել էի Պոլինի մեջ տեսնելու միայն մի քրոջ. ինձ համար սարսափելի բան կլիներ խաբել նրա մոր վստահությունը. այս զմայլելի աղջիկը ինձ հիացնում էր ինչպես մի պատկեր, ինչպես մեռած սիրուհու մի նկար. մի խոսքով, նա իմ երեխան էր, իմ արձանը։ Իբրև նոր Պիգմալիոն[107], ես ուզում էի կենդանի և վառվռուն, զգայուն և խոսուն կույսը դարձնել մի մարմար. ես շատ խիստ էի վարվում նրա հետ, բայց ինչքան ավելի էի զգացնում իմ ուսուցչական բռնակալությունը, այնքան ավելի հեզ ու հնազանդ էր դառնում նա։ Եթե ես իմ զուսպ և պարկեշտ վարմունքի համար թելադրված էի ազնիվ զգացումներով, բայց ինձ մոտ չէր պակասում և դատախազին հատուկ իրավարարությունը։ Ես չեմ պատկերացնում դրամական գործերի մեջ ազնվություն առանց մտքերի ազնվության։ Խաբել մի կնոջ կամ սնանկացնել մեկին՝ ինձ համար միշտ միևնույնն է եղել։Սիրել մի ջահել աղջկա կամ սիրվել նրանից, դա նույնն է, թե իսկական ամուսնական դաշինք կնքել, որի պայմանները պետք է նախապես որոշել։ Մենք իրավունք ունենք թողնելու այն կնոջը, որ վաճառվում է, բայց չի կարելի լքել ջահել աղջկան, որ հանձնվում է մեզ, որովհետև նա չի հասկանում իր զոհաբերության հետևանքները։ Իհարկե, ես կարող էի ամուսնանալ Պոլինի հետ, բայց դա հիմարություն կլիներ։ Արդյոք դա չէ՞ր նշանակի քնքուշ և կուսական հոգուն մատնել սոսկալի տանջանքների։ Իմ չքավորությունը խոսում էր եսասիրական լեզվով և իր երկաթե թաթը մշտապես դնում էր իմ և այս բարի էակի միջև։ Եվ հետո, ամոթ ինձ, խոստովանում եմ, որ ես չեմ հասկանում սերը թշվառության մեջ։ Գուցե դա իմ ապականությունից է, որը ես պարտական եմ քաղաքակրթություն կոչվող մարդկային հիվանդության, բայց կինը — թեկուզ նա լինի հրապուրիչ, ինչպես գեղեցկուհի Հելենան, Հոմերոսի այդ Գալատեան — չի կարող նվաճել իմ սիրտը, եթե նա մի քիչ աղտոտ է։ Օհ, կեցցե սերը մետաքսների և քիշմիրների մեջ՝ շրջապատված շքեղության հրաշալիքներով, որոնք հիանալիորեն զարդարում են այն, որովհետև նա ինքը գուցե շքեղություն է։ Ես սիրում եմ կրքերի պոռթկման մեջ ճխլտել նուրբ զարդարանքները, ճմլել ծաղիկները, ավերիչ ձեռքս տանել անուշահոտված սանրվածքների գեղեցիկ կառուցումների վրա։ Հրավառ աչքերը, որոնք թափանցում են դրանք ծածկած ժանյակի քողի միջով, ինչպես բոցը թափանցում է թնդանոթի ծխի միջով, ֆանտաստիկական հրապույրներ են ներկայացնում ինձ համար։ Իմ սիրույն հարկավոր են մետաքսե սանդուղքներ, որոնցով սիրահարվածը լռությամբ բարձրանում է ձմեռային գիշերով։ Ինչպիսի՜ հաճույք է ամբողջովին ձյունապատ վիճակում մտնել աղոտ կերպով լուսավորված, նկարեն մետաքսներով զարդարված մի սենյակ և տեսնել մի կնոջ, որ նույնպես իր վրայից թափ է տալիս ձյունը, որովհետև ուրիշ ինչպե՞ս անվանել այն հեշտալի մարմաշե շղարշները, որոնց միջով նա անորոշ կերպով գծագրվում է, ինչպես հրեշտակը ամպի միջով, և որոնցից նա հիմա կազատվի։ Բացի դրանից, ինձ դեռ հարկավոր է վեհերոտ երջանկություն և համարձակ վստահություն։ Վերջապես, ես ուզում եմ տեսնել այդ խորհրդավոր կնոջը, բայց լիակատար փայլի մեջ, բարձր խավի հասարակության մեջ, առաքինի, մեծարված, ժանեկազարդ, ադամանդաշող կնոջը, որ հրամայում է ամբողջ քաղաքին, գրավում բարձր դիրք և այնքան հարգանք է ներշնչում, որ ոչ ոք չի համարձակվի նրան հայտնել իր

---

[107] **Պիգմալիոն** — հին հունական դիցաբանության մեջ քանդակագործ, նա սիրահարվեց Գալատեայի այն արձանին, որ ինքն էր քանդակել։ Պիգմալիոնի խնդրանքով աստվածները կյանք ներշնչեցին արձանին։

զգացումները: Իր շքախմբով շրջապատված՝ նա գողունի մի հայացք է նետում ինձ վրա, հայացք, որ մերժում է այս բոլոր ձևականությունները, հայացք, որ ասում է, թե ինձ համար պատրաստ է զոհելու և՛ աշխարհը, և՛ մարդկանց: Իհարկե ես շատ անգամներ ծիծաղել եմ ինձ վրա, երբ սիրել եմ մետաքսե ժանյակները, թավիշները, նուրբ ջանջիլները, վարսահարդարի ձեռնածությունները, մոմերը, կառքերը, տիտղոսները, բյուրեղե, ոսկե և արծաթե իրերի վրա տոհմանշանային թագերը, մի խոսքով, այն ամենը, ինչ շինծու է և նվազ կանացի է կնոջ մեջ. ես ինձ վրա ծիծաղել եմ, ես իմ կարծիքը փոխել եմ, բոլորը զուր եղավ: Ինձ հմայում է ազնվատոհմիկ կինը, նրա նուրբ ժպիտը, վայելուչ շարժուձևերը և սեփական արժանապատվության զգացումը. երբ նա պատվար է բարձրացնում իր և մարդկանց միջև, իմ մեջ արթնացնում է իմ ամբողջ սնափառությունը, որը կիսով չափ սեր է: Ընդհանուր նախանձի առարկա դառնալով, իմ երջանկությունը առանձին քաղցրություն է ստանում ինձ համար: Եթե իմ սիրուհին իր կենցաղով տարբերվում է ուրիշ կանանցից, եթե նա չի քայլում ոտքով, եթե նա ապրում է այլապես, քան նրանք, եթե նա հագնում է մի վերարկու, որպիսին նրանք չեն կարող ունենալ, եթե նրանից բուրում է մի անուշահոտություն, որ հատուկ է միայն նրան, նա շատ ավելի է դուր գալիս ինձ և ինչքան ավելի է նա հեռանում երկրից, նույնիսկ իր ամբողջ երկրային սիրով, այնքան ավելի է գեղեցկանում իմ աչքին: Ի բարեբախտություն ինձ, Ֆրանսիայում արդեն քսան տարի է թագուհիներ չկան, եթե ոչ ես կսիրահարվեի թագուհուն: Որպեսզի կինը իշխանուհու շարժուձևեր ունենա, նա պետք է հարուստ լինի: Այսպիսի ռոմանտիկական ֆանտազիաների առջև ինչ կարող էր լինել Պոլինը ինձ համար: Կարո՞ղ էր նա ինձ նվիրել գիշերներ, որոնք մի ամբողջ կյանք արժեն, մի սեր, որ սպանում է և թղթախաղի դնում մարդկային բոլոր ընդունակությունները: Մենք չենք մեռնի մեզ անձնատուր եղող աղքատ աղջիկների համար: Այսպիսի զգացումները, այսպիսի բանաստեղծական երազանքները ես երբեք չեմ կարողանում ոչնչացնել իմ մեջ: Ես ծնվել էի անհնարին սիրո համար, բայց դեպքը այնպես բերեց, որ ես չապրեցի իմ ցանկությունների համաձայն: Քանի՜-քանի՜ անգամ ես Պոլինի փոքրիկ ոտները հագցրել եմ սնդուսե հողաթափեր, մատղաշ կաղամախի նման նրբակազմ նրա մարմինը հանդերձել եմ բեհեզե շրջազգեստներ, նրա ուսերի վրա թեթև ծածկոց եմ ձգել, նրան ուղեկցել եմ, քայլելով նրա առանձնատան գորգերի վրայով և նրան նստեցրել շքեղ կառքի մեջ: Թող նա այդպես լինի, ես նրան կպաշտեի: Ես նրան կտայի մի հպարտություն, որ նա չուներ, ես նրանից կխլեի նրա բոլոր արժանիքները, բնական հմայքը, բնածին հրապույրը, պարզահոգի ժպիտը, որպեսզի նրան մխրճեի մեր մոլությունների Ստիքսի մեջ և նրան օժտեի անխոցելի սրտով, որպեսզի նրան շպարեի մեր ոճիրներով և նրան դարձնեի սալոնական քմահաճ պուպրիկ, փխրուն մի էակ, որը պառկում է առավոտյան և վերակենդանանում է երեկոյան, երբ վառվում է մոմերի արհեստական լույսը: Պոլինը համակ զգացում էր, համակ թարմություն, իսկ ես ուզում էի, որ նա լիներ չոր և սառն: Իմ խելագարության վերջին օրերին հիշողությունն ինձ կենդանացրեց Պոլինի պատկերը, ինչպես նա նկարում է մեզ մեր մանկության տեսարանները: Մեկից ավելի անգամներ ես հուզվել եմ, վերհիշելով հեշտագին պահեր. մերթ ես նորից էի տեսնում, թե ինչպես այդ աղջիկը նստում է իմ սեղանի մոտ և կարելով զբաղվում հեզիկ, լռիկ, մտամփոփ, իսկ նրա գեղեցիկ, սև վարսերի վրա ընկնում է իմ երդիքի պատուհանից թափանցած ցերեկվա թույլ լույսը թեթև արծաթե նախշերով. մերթ ես լսում էի նրա երիտասարդական ծիծաղը, լսում էի, թե ինչպես իր հնչուն ձայնով երգում է փոքրիկ, սիրուն երգեր, որոնք ինքն

էր հորինում առանց դժվարության: Հաճախ իմ Պոլինը ոգևորվում էր երաժշտությամբ, և այն ժամանակ նա զարմանալիորեն նմանվում էր այն ազնվական գլխին, որի մեջ Կառլո Դոլչին[108] ուզեց մարմնացնել Իտալիան: Դաժան հիշողությունը իմ անմիտ գոյության մեջ զարթեցնում էր Պոլինի մաքուր պատկերը ինչպես մեղադրանք, ինչպես առաքինության պատկեր: Բայց խեղճ աղջկան թողնենք իր բախտին: Ինչքան էլ նա հետագայում դժբախտ լիներ, ես գոնե նրան փրկեցի ահավոր փոթորկից, ես նրան չներքաշեցի իմ դժոխքի մեջ:

Մինչև անցյալ ձմեռ ես անցկացրի խաղաղ և աշխատանքային մի կյանք, որի թույլ պատկերը ես փորձեցի քեզ տալ: 1829 թվականի դեկտեմբերի առաջին օրերին ես հանդիպեցի Ռաստինյակին, որը, չնայած իմ հագուստի ողորմելի վիճակին, թևիցս բռնեց և իսկական եղբայրական շահագրգռությամբ հետաքրքրվեց իմ դրությամբ: Նրա վերաբերմունքից զգացված, ես համառոտակի նրան պատմեցի իմ կյանքի և իմ հույսերի մասին. նա սկսեց ծիծաղել և ասաց, որ ես և հանճար եմ, և հիմար: Նրա գասկոնական զվարթությունը, կյանքի փորձառությունը, հարստությունը, որը պարտական էր իր կենցաղագիտության, իմ վրա գործեցին ուժեղ տպավորություն: Ռաստինյակը հավաստեց, որ ես կմեռնեմ հիվանդանոցում՝ ցանցառ մարդու պես ոչ ոքից չճանաչված, նա կուղեկցեր իմ դագաղին և ինձ կթաղեր աղքատների գերեզմանոցում: Նա սկսեց խոսել շառլատանության մասին: Նրան հատուկ սրամտությամբ, որ նրան այնքան գրավիչ է դարձնում, նա ապացուցեց, որ բոլոր հանճարեղ մարդիկ շառլատաններ են: Նա հայտարարեց, որ ես կարող է զրկվեմ մի զգայարանից, կարող է և մեռնեմ, եթե շարունակեմ մենակ ապրել Կորդիե փողոցում: Նրա կարծիքով, ինձ հարկավոր է լինել հասարակության մեջ, մարդկանց վարժեցնել իմ անունը արտասանել, ձերբազատվել այն նվաստացուցիչ խոնարհությունից, որ ամենևին վայել չէ մեծ մարդուն:

— Անխելքները նման վարմունքը անվանում են խարդավանություն,— գոչեց նա,— բարոյագետները դատապարտում են այն և որակում անբովանդակ կյանք: Չլսելով մարդկանց, մենք մեզ հարց տանք, թե ինչպիսի՞ք են արդյունքները: Դու աշխատո՞ւմ ես: Դեհ, դու երբեք էլ ոչնչի չես հասնի: Ես ամեն ինչի վարպետ եմ, բայց ոչ մի բանի պետք չեմ. խեցգետնի պես ծույլ եմ, այնուամենայնիվ ամեն ինչի կհասնեմ: Ես խցկվում եմ, ես քարշ եմ գալիս, ինձ ճանապարհ են տալիս. ես գլուխս գովում եմ, ինձ հավատում են. պարտքեր եմ անում, դրանք վճարում են: Զեխ կյանքը, սիրելիս, քաղաքական սիստեմ է: Իր հարստությունը մսխելով զբաղված մարդու կյանքը հաճախ դառնում է սպեկուլյացիա. նա իր կապիտալները հատկացնում է բարեկամների, հաճույքների, հովանավորների, ծանոթների: Ենթադրենք մի վաճառական մեկ միլիոնի ռիսկ է անում: Քսան տարի նա չի քնել, չի խմել, չի զվարճացել. նա թուխս է դրել իր միլիոնը, նա այն շրջանառության մեջ է դրել ամբողջ Եվրոպայում. նա ձանձրացել է, նա անձնատուր է եղել մարդու հնարած բոլոր դևերին, ապա մի սնանկություն, և նա մնում է — ես ինքս հաճախ այդ նկատել եմ — առանց դրամի, առանց անունի, առանց բարեկամի: Ուրիշ է զեխ կյանք վարողը. նա ապրում է ուզածին պես, նա մասնակցում է ձիարշավներին: Եթե նա պատահմամբ կորցնում է իր կապիտալները, ապա նա հույս ունի հարկահավաք նշանակվելու, հաջող ամուսնություն կնքելու, մինիստրի կամ դեսպանի մոտ տեղավորվելու: Նա դեռ ունի բարեկամներ, դեռ ունի անուն և միշտ ձեռքին փող կունենա: Նա ծանոթ է կյանքի զսպանակներին և դրանք սեղմում է, ինչպես իրեն ձեռնտու է: Դեհ ի՛նչ, կամ իմ սիստեմն է տրամաբանական, կամ ես ցնդել եմ: Մի՞թե դրա մեջ չէ բարոյականությունը

[108] **Կառլո Դոլչի** (1616—1686) — իտալացի նկարիչ:

այն կատակերգության, որ ամեն օր խաղացվում է աշխարհում... Դու վերջացրել ես քո երկը,— շարունակեց նա, մի պահ լռությունից հետո,— դու խոշոր տաղանդ ունես: Ուրեմն, ժամանակն է քեզ սկսել իմ ելակետից: Դու պետք է ինքդ ապահովես քո հաջողությունը, այդպես ավելի ճիշտ է: Դու դաշինք կկնքես տարբեր շրջանակների հետ, կսիրաշահես պոռոտախոսներին: Քանի որ ես ուզում եմ քո փառքի մասնակիցը լինել, ապա կստանձնեմ դերը գոհարավաճառի, որ քո թագի ադամանդները կշարի... Սկսելու համար՝ այստեղ եղիր վաղը երեկոյան: Ես քեզ կտանեմ մի տուն, ուր հաճախում է ամբողջ Փարիզը, մեր Փարիզը, երևելիների, միլիոնատերերի, հռչակավորների Փարիզը, վերջապես Փարիզը այն մարդկանց, որոնք ոսկեղինիկ, պերճախոս լեզու ունեն, ինչպես Հովհան Ոսկեբերանը: Երբ այդ պարոնները հավանում են որևէ գիրք, նա դառնում է մոդայական. եթե նա, իրոք, լավ է, նշանակում է նրանք, իրենք էլ չիմանալով, նրան տվել են հանճարեղության արտոնագիր: Եթե դու խելք ունես, տղաս, քո ձեռքումն է քո «Տեսության» բախտը, հարկավոր է միայն լավ հասկանալ բախտի տեսությունը: Վաղը երեկոյան դու կտեսնես գեղեցիկ կոմսուհի Ֆեոդորային, մոդայական կնոջը:

— Ես ամենևին չեմ լսել նրա մասին...

— Դու կաֆր ես,— ասաց Ռաստինյակը ծիծաղելով:— Ինչպե՞ս չես ճանաչում Ֆեոդորային: Նա ամուսին չունի, բայց ութսուն հազար լիվր եկամուտ ունի. նա ոչ ոքի չի սիրում, գուցե նաև ոչ ոք նրան չի սիրում: Յուրատեսակ առեղծվածային կին, կիսառուս փարիզուհի, կիսափարիզյան ռուսուհի: Մի կին, որի մոտ հրապարակվում են բոլոր անտիպ ռոմանտիկական երկերը, Փարիզի ամենաչքնաղ, ամենահմայիչ կինը: Ոչ, դու նույնիսկ կաֆր էլ չես, դու ինչ-որ միջին բան ես կաֆրի և անասունի միջև... Մնաս բարով, վաղը կտեսնվենք:

Նա ոտքի վրա մի պտույտ գործեց և անհետացավ, չսպասելով իմ պատասխանին, նույնիսկ մտքով չանցկացնելով, թե խելոք մարդը կարող է չցանկանալ Ֆեոդորային ներկայանալ: Ինչպե՞ս բացատրել անվան կախարդական ազդեցությունը: **Ֆեոդորան** հետապնդեց ինձ, ինչպես հանցավոր մի միտք, որի հետ աշխատում են համաձայնության գալ: Ինչ-որ ձայն ինձ ասում էր. «Դու կգնաս Ֆեոդորայի մոտ»: Ես իզուր էի կռվում այդ ձայնի հետ և նրան գոռում, թե նա ստում է. նա իմ բոլոր ապացույցները ջախջախում էր այդ միակ անունով՝ **Ֆեոդորա**: Բայց մի՞թե այս անունը, մի՞թե այս կինը իմ բոլոր իղձերի սիմվոլը, իմ կյանքի նպատակը չէր: Այդ անունից իմ երևակայության մեջ զարթնում էին աշխարհի արհեստական պոեզիաները, շողշողում էին Փարիզի բարձր հասարակության հանդեսները և ունայնության խաբուսիկ փայլերը: Այդ կինը իմ առջև ներկայանում էր ինձ խելագարեցնող կրքի բոլոր հանելուկներով: Գուցե դա ոչ կինն էր, ոչ անունը, այլ իմ բոլոր մոլություններն էին, որ բարձրանում էին իմ հոգում, որպեսզի նորից ինձ փորձության մատնեին: Բայց մի՞թե հարուստ, հոմանի չունեցող, փարիզյան գայթակղություններին չենթարկվող կոմսուհի Ֆեոդորան չէր իմ հույսերի, իմ տեսիլների մարմնացումը: Ես ստեղծում էի այդ կնոջ պատկերը, երևակայությանս մեջ նկարում էի նրան, երազում էի նրա մասին: Գիշերը ես չքնեցի, դարձա նրա սիրահարը, մի քանի ժամում ապրեցի մի ամբողջ կյանք, սիրային մի կյանք, ճաշակեցի հոգեպարար ու բոցավառ հեշտանքները: Մյուս առավոտ, չդիմանալով երեկոյան երկար սպասելու տանջանքին, գրադարանից մի վեպ վերցրի և օրը կարդալով անցկացրի, որպեսզի չմտածեի և մի կերպ ժամանակ սպանեի: Ֆեոդորա անունը հնչում էր իմ մեջ, ինչպես հեռավոր արձագանք, որ չի անհանգստացնում ձեզ, բայց ստիպում է լսել: Բարեբախտաբար, ես դեռ ունեի բավական վայելուչ մի սև ֆրակ և մի սպիտակ բաճկոնակ. ապա իմ ամբողջ

հարստությունից մնացել է մոտավորապես երեսուն ֆրանկ, որ ես դրել էի սեղանի զզրոցների և սպիտակեղենի դարակների մեջ նրա համար, որպեսզի իմ ցնորքների և հարյուր սուանոց դրամի միջև բարձրացնեի փնտրտուքի փշոտ ցանկապատը, որպեսզի դրամը գտնեի լոկ պատահաբար՝ սենյակում երկար պտտվելուց հետո: Հագնվելով, ես իմ գանձը փնտրեցի թղթերի օվկիանոսի մեջ: Գտնված դրամը շատ քիչ էր, և դու դրանից կարող ես եզրակացնել, թե ինձանից ինչքան շատ խլեցին ձեռնոցներն ու կառքը,— նրանք կերան իմ մի ամբողջ ամսվա հացը: Ավա՜ղ, մենք երբեք փողի պակասություն չենք ունենում մեր քմահաճույքների համար, մենք ժլատանում ենք միայն օգտակար և անհրաժեշտ բաների համար ծախսելիս: Մենք ոսկին անհաշիվ նետում ենք պարուհիներին, և սակարկում ենք մի բանվորի հետ, որին է սպասում քաղցած ընտանիքը: Որքա՜ն մարդիկ հարյուր ֆրանկանոց ֆրակ են հագնում, ադամանդե գլխով գավազան են կրում, և սակայն ճաշում են քսանհինգ սուով: Մեր սնափառությունը գոհացնելու համար, ըստ երևույթին, գոյություն չունեն թանկ գներ: Ռաստինյակը, հավատարիմ իր ժամադրության, ժպտաց ինձ տեսնելիս և ծիծաղեց իմ կերպարանափոխության վրա. բայց ճանապարհին նա ինձ բարյացակամորեն խրատեց, թե ինչպես պետք է վերաբերվեմ կոմսուհու հետ. նրա ասելով, կոմսուհին ժլատ, սնափառ և կասկածամիտ կին էր, բայց ժլատ՝ ոչ առանց պերճության, սնափառ՝ ոչ առանց պարզահոգության, կասկածամիտ՝ ոչ առանց բարեհոգության:

— Դու տեղյակ ես իմ պարտավորություններին,— ասաց նա,— դու գիտես, թե ինչքան բան կկորցնեի իմ սիրո առարկան փոխելուց: Ես Ֆեոդորային դիտեցի անկողմնակալ կերպով, պաղարյունությամբ, և իմ դիտողությունները ճիշտ կլինեն: Ես մտածեցի քեզ ներկայացնել նրան միմիայն նրա համար, որ քո երջանկությունն եմ ցանկանում: Ուստի զգույշ եղիր քո ամեն մի խոսքի մեջ. նա ունի ահավոր հիշողություն և դիվանագետից ավելի ճարպկություն. նա կարող է գուշակել, թե երբ ճիշտ կխոսի դիվանագետը: Խոսքը մեր մեջ, ինձ թվում է, թե կայսրը չի ճանաչել նրա ամուսնությունը, որովհետև ռուսական դեսպանը սկսեց ծիծաղել, երբ ես խոսեցի նրա մասին: Դեսպանը նրան չի ընդունում և հազիվ է ողջունում, երբ նրան հանդիպում է Բուլոնյան անտառում[109]: Այսուհանդերձ կոմսուհին մոտ է տիկին դը Սերիզիին, հաճախում է տիկիններ դը Նյուսինգենին և դը Ռեստոյին: Ֆրանսիայում նրա անունը չի արատավորված: Դքսուհի դը Կարիլյանոն, մարաջախտի կինը, ամենախստաբարո կինը բոնապարտականների ամբողջ շրջանակի մեջ, հաճախ ամառն անցկացնում է նրա կալվածքում: Բազմաթիվ երիտասարդ պճնամոլներ և նույնիսկ Ֆրանսիայի մի պերի[110] որդին նրան իրենց անունն առաջարկեցին հարստության փոխարեն. կոմսուհին քաղաքավարությամբ մերժեց բոլորին: Գուցե կոմսությունից ոչ ցած տիտղոսը միայն ընդունակ է արթնացնելու նրա զգացումները: Իսկ դու մարկիզ ես: Եթե նա քեզ դուր է գալիս, համարձակ առաջ գնա: Ահա սրանք են իմ խորհուրդները:

Ռաստինյակի կատակաբանություններն ինձ կարծել տվին, թե նա ծիծաղում է ինձ վրա և դիտմամբ գրգռում է իմ հետաքրքրությունը,— հանկարծ զարթնած իմ կիրքը հասել էր իր սաստկության, երբ մենք վերջապես կանգ առանք ծաղիկներով զարդարված մի սյունագավթի

---

[109] **Բուլոնյան անտառ** — Փարիզի բարձր հասարակության սիրած զբոսավայրը:

[110] **Ֆրանսիայի պեր** — Ֆրանսիայում բարձրագույն պալատի անդամ 1815—1848 թվականներին:

առջև: Բարձրանալով գորգապատած լայն սանդուղքով, ուր աչքի էին զարնում անգլիական դյուրակեցության բոլոր նրբությունները, սիրտս սկսեց տրոփել. ես կարմրեցի, ես ուրացա իմ ծագումը, իմ զգացումները, իմ հպարտությունը, ես հիմա քաղքենի էի: Ավա՜ղ, թշվառության երեք տարիներից հետո ես դուրս էի գալիս ձեղնահարկի խցից, դեռ չսովորելով կյանքի մանրուքներից վեր դասել մեր ձեռք բերած այն գանձերը, այն մտավոր կապիտալները, որոնք հարստացնում են մեզ, երբ իշխանությունն ընկնում է մեր ձեռքը, առանց խորտակելու մեզ, քանի որ գիտությունը մեզ առաջուց նախապատրաստել է քաղաքական պայքարներին:

Ես տեսա քսաներկուամյա, միջահասակ, սպիտակ հանդերձ հագած, ձեռքին հովհար բռնած մի կին, շրջապատված մի խումբ տղամարդկանցով: Նկատելով Ռաստինյակին, նա վեր կացավ, մեզ ընդառաջ եկավ և բարեհամբույր ժպիտով, թավշային ձայնով ինձ ասաց սիրալիր խոսքեր, որոնք անշուշտ նախապատրաստել էր: Մեր ընդհանուր բարեկամը հայտնել էր, որ ես տաղանդավոր մարդ եմ, և նրա ճարպկությունը, նրա գասկոնացու լեզվանիությունը հաճելի ընդունելություն ապահովեցին ինձ համար: Ես հատուկ ուշադրության առարկա դարձա, և դա ինձ շփոթեցրեց, բայց, բարեբախտաբար, Ռաստինյակն արդեն խոսել էր իմ համեստության մասին: Այդ սրահում ես հանդիպեցի գիտունների. գրական գործիչների, նախկին մինիստրների, Ֆրանսիայի պերերի: Իմ գալուց քիչ անց, խոսակցությունը վերսկսվեց. զգալով, որ պետք է բարձր պահեի իմ համբավը, ես զուսպ մնացի և, երբ խոսքը ինձ տրվեց, ես, չչարաշահելով հասարակության ուշադրությունը, աշխատեցի վիճաբանությունն ամփոփել առավել կամ նվազ ծանրակշիռ, խորիմաստ և սրամիտ արտահայտություններով: Ես որոշ տպավորություն գործեցի: Իր կյանքում հազարերորդ անգամ Ռաստինյակը մարգարե դուրս եկավ: Երբ բավական բազմություն հավաքվեց, և բոլորն իրենց ազատ զգացին, իմ հովանավորը թևիցս բռնեց, և մենք ճեմեցինք սենյակներում:

— Դու ցույց մի տա, թե հիացած ես կոմսուհու վրա,— ասաց ինձ Ռաստինյակը,— եթե ոչ նա կկռահի քո այցելության նպատակը:

Սրահները զարդարված էին նուրբ ճաշակով: Ես տեսա ընտիր նկարներ: Յուրաքանչյուր սենյակ, ինչպես դա ընդունված է մեծահարուստ անգլիացիների մոտ, ուներ հատուկ ոճ — մետաքսե պաստառները, զարդարանքները, կահավորումը, ամենաչնչին հարդարանքները համապատասխանում էին հիմնական մտահղացմանը: Գոթական մի զարդասենյակում, որի դռները ծածկված էին ծալքավոր վարագույրներով, ամեն ինչ գոթական էր՝ կարասիները, ճոճանակավոր ժամացույցը, գորգի զարդանկարները. առաստաղի գերանների մուգ քանդակները պարարում էին հայացքն իրենց նրբությամբ և ինքնատիպությամբ. փայտադրվագները գեղարվեստական աշխատանքներ էին, ոչինչ չէր խախտում այս գեղազարդման ամբողջությունը, մինչև իսկ պատուհաններն իրենց թանկարժեք, գույնզգույն ապակիներով: Ինձ հատկապես զարմացրեց արդիական ոճով կահավորված մի սրահակ, որի համար արվեստագետը սպառել էր թեթև, թարմ, հաճելի, անփայլ, ոսկեզօծման մեջ չափավոր՝ մեր գեղազարդման արվեստի հնարանքները: Այստեղ ամեն ինչ մշուշով էր պատած և սիրո շնչով թաթավված, ինչպես գերմանական գեղոնը. դա մի իսկական ապաստան էր 1827 թվականի կրքի համար, որ բուրում է հազվագյուտ ծաղիկներով լի ծաղկազամբյուղների մեջ: Այս սրահից հետո նույն շարքի վրա ես տեսա ոսկեզարդ և շքեղորեն կահավորված մի սենյակ, ուր վերակենդանացել էին Լուդովիկոս XIV-ի ժամանակվա ճաշակները, որոնք քմահաճ, բայց հաճելի հակադրություն էին կազմում մեր ժամանակի նկարչության հետ:

— Քեզ համար հարմար բնակարան կլինի,— ասաց Ռաստինյակը հեգնախառն ժպիտով:— Մի՞թե սա հրապուրիչ չէ,— ավելացրեց նա նստելով:

Հանկարծ նա վեր կացավ, ձեռքիցս բռնեց, ինձ տարավ ննջասենյակ և ցույց տվեց մեղմորեն լուսավորված հեշտաբույր մահիճը սպիտակ մարմաշե ու վիտակե առագաստի տակ, իսկական մահիճ ոգիի հետ նշանված երիտասարդ փերիի:

— Մի՞թե անպարկեշտություն չէ,— ասաց նա ձայնը իջեցնելով,— մի՞թե անպատկառություն, անշնորհքություն չէ, երբ մեզ թույլ են տալիս դիտելու սիրո այս գահը: Ոչ ոքի անձնատուր չլինե՞լ և բոլորին թույլ տալ այստեղ թողնելու իրենց այցաքարտերը: Եթե ես ազատ լինեի, կձգտեի, որ այդ կինը, արտասուքն աչքերին, խոնարհաբար կանգներ իմ դռան տակ...

— Իսկ դու այդպես վստա՞հ ես նրա առաքինությանը:

— Մեր ամենաձեռներեց և ամենաճարպիկ կնամոլները խոստովանում են, որ իրենք հաջողություն չեն ունեցել նրա մոտ. նրանք դեռևս սիրահարված են նրան և նրա հավատարիմ բարեկամներն են: Մի՞թե այդ կինը հանելուկ չէ:

Այս խոսքերը մի տեսակ արբեցություն առաջացրին իմ մեջ, իմ խանդը սկսեց անհանգստանալ Ֆեոդորայի անցյալի համար: Ուրախությունից դողալով, ես շտապ վերադարձա այն սրահը, ուր թողել էի կոմսուհուն. ես նրան հանդիպեցի գոթական զարդասենյակում: Նա մի ժպիտով կանգնեցրեց ինձ, ինձ նստեցրեց իր կողքին, հարցրեց իմ աշխատանքների մասին, որոնցով, կարծես, շատ հետաքրքրվեց, մանավանդ երբ իմ սիստեմի մասին նրան բացատրեցի կատակախոսի լեզվով և ոչ թե դասախոսի վերամբարձ արտահայտություններով: Ֆեոդորան, ըստ երևույթին, շատ ուրախացավ, երբ իմացավ, որ մարդկային կամքը գոլորշու նման նյութական ուժ է. որ հոգեկան աշխարհում ոչինչ չէր դիմանա այդ ուժին, եթե մարդ սովորեր կենտրոնացնել այն, ամբողջապես տիրել նրան և այդ հոսանուտ զանգվածի հեղեղը մշտապես ուղղել հոգիների վրա. որ այդպիսի մարդը կարող էր ուզածին պես փոխել մարդկությանը վերաբերող ամեն ինչ, նույնիսկ բնության օրենքները: Ֆեոդորայի առարկությունները վկայում էին մտքի որոշ նրբության մասին. շողոքորթելու համար նրան՝ ես որոշ ժամանակ հոժարակամ իրավունք տվի նրան, իսկ հետո մի բառով ոչնչացրի այդ կանացիական դատողությունները, նրա ուշադրությունը հրավիրելով մեր կյանքի ամենօրյա մի երևույթի վրա, քնի երևույթի վրա, որ, ըստ երևույթին, հասարակ բան է, բայց, ըստ էության, անլուծելի խնդիրներով լի է գիտունի համար, և ես գրգռեցի նրա հետաքրքրությունը: Կոմսուհին նույնիսկ մի պահ լուռ մնաց, երբ ես նրան ասացի, որ մեր գաղափարները կազմակերպված, ամբողջական էակներ են, որոնք ապրում են անտեսանելի մի աշխարհում և ազդում մեր ճակատագրի վրա, և իբրև ապացույց բերի Դեկարտի, Դիդրոյի, Նապոլեոնի մտքերը, որոնք իշխել են և դեռ իշխում են մեր դարի վրա: Ես պատիվ ունեցա զբաղեցնելու կոմսուհուն: Նա հեռացավ, ինձ հրավիրելով այցելել իրեն:

Ես Ֆեոդորային, ըստ երևույթին, հաճոյացա կամ այն պատճառով, որ իմ գովելի սովորության համաձայն կիրթ բանաձևեր գործածեցի անկեղծ խոսքերի փոխարեն, կամ այն պատճառով, որ նա իմ մեջ տեսավ ապագա հռչակ և որոշեց իր վանդակը լրացնել ևս մի գիտունով: Ես վերհիշեցի իմ բոլոր բնախոսական գիտելիքները և իմ բոլոր դիտողությունները կանանց վրա, և ամբողջ երեկոյան ուշի-ուշով ուսումնասիրեցի այդ ինքնատիպ կնոջը և նրա սովորությունները. պատուհանի խոռոչի մեջ թաքնված՝ ես ջանացի գուշակել նրա մտքերը,

դրանք գտնել նրա վարվելաձևերի մեջ և ուշադիր նայեցի, թե ինչպես նա իբրև տանտիրուհի գնում-գալիս է սենյակներով, նստում ու զրուցում է, իր մոտ է կանչում հյուրերից մեկին, հարցուփորձ անում նրան և, հենվելով դռան շրջանակին, լսում է. քայլվածքի ժամանակ նրա շրջազգեստը այնպիսի գրավչությամբ էր վետվետում, նրա շարժումների մեջ այնպիսի հեշտագրգիռ, ցանկահարույց բան կար, որ ես խիստ կասկածեցի նրա առաքինության վրա: Եթե հիմա Ֆեոդորան արհամարհում էր սերը, ապա առաջ, հավանաբար, շատ կրքոտ էր եղել. տռփոտ կինն էր երևում նույնիսկ զրուցակցի առջև կանգնելու նրա ձևի մեջ. նա պչրանքով հենվել էր փայտադրվագի ելուստին այն կնոջ տեսքով, որ պատրաստ է ընկնելու, բայց պատրաստ է նաև փախչելու, հենց որ նրան վախեցնում է շատ հանդուգն մի նայվածք. բազուկները մեղկորեն խաչաձևած՝ նա կարծես շնչում էր զրուցակցի խոսքերը, բարեհաճորեն լսելով դրանք նույնիսկ հայացքով, իսկ ինքը ուսումնասիրում էր զգացումը: Նրա թարմ և կարմիր շրթները խստորեն աչքի էին զարնում վառ սպիտակ դեմքի վրա: Թխաթույր վարսերը բավական ցայտուն էին դարձնում ֆլորենտական մարմարի պես երակներով ակոսված նրա աչքերի շագանակագույնը: Այդ աչքերի արտահայտությունը կարծես նուրբ իմաստ էր տալիս նրա խոսքերին: Վերջապես, նրա իրանն ուներ ինչ-որ առինքնող հրապույր: Մի մրցակցուհի գուցե խիստ կկոչեր նրա թավ հոնքերը և կգտներ, որ նրան վնասում է հազիվ նկատելի աղվամազը այտերի վրա: Իսկ ինձ թվում էր, թե կիրքը դրել էր իր դրոշմը նրա ամեն ինչի վրա: Սեր էին շնչում այդ կնոջ իտալական կոպերը, Միլոսյան Վեներային արժանի նրա գեղեցիկ ուսերը, նրա դիմագծերը, մի քիչ խոնավ և մթին ստորին շուրթը: Ոչ, նա կին չէր, նա վեպ էր: Նրա կանացի գանձերը, գծերի ներդաշնակ համակցությունը, այնքան շատ բան խոստացող կազմվածքի փարթամությունը չափավորվում էին մշտական ինքնազսպումով և անսովոր համեստությամբ, որոնք հակասում էին նրա ընդհանուր կերպարանքին: Հարկավոր էր ինձ պես սրատես լինել՝ նրա կազմվածքի մեջ հեշտանքի նշանները գտնելու համար: Իմ միտքը ավելի պարզ բացատրելու համար ասեմ, որ Ֆեոդորայի մեջ ապրում էին երկու կին. նրա մոտ մարմինը միշտ մնում էր անկիրք, միայն գլուխը, ասես, սեր էր արտահայտում. նախքան մի տղամարդու վրա կանգ առնելը, նրա հայացքը նախապատրաստվում էր դրան, ասես նրա մեջ ինչ-որ խորհրդավոր բան էր կատարվում, և նրա փայլող աչքերի մեջ ասես ջղաձգական դող էր անցնում: Մի խոսքով, կամ իմ գիտելիքները թերի էին, և ես դեռ շատ գաղտնիքներ ունեի հայտնաբերելու մարդու ներաշխարհում, կամ կոմսուհին գեղեցիկ հոգի ուներ, որի զգացումներն ու արտահայտությունները նրա դեմքին հաղորդում էին տիրապետող, դյութող հմայք, խորապես հոգեկան մի ուժ և այնքան հզոր, որ նա զուգակցում էր ցանկության բորբոքումների հետ: Ես դուրս եկա կնոջով հրապուրված, հմայված, նրա շքեղությամբ հիացած, ես զգացի, որ նա իմ սրտում հուզել էր այն ամենը, ինչ նրա մեջ ազնիվ և արատավոր, բարի և չար էր: Հուզված, ոգևորված, գրգռված, ես սկսեցի հասկանալ, թե ինչն էր այստեղ ձգում արվեստագետներին, դիվանագետներին, իշխանության ներկայացուցիչներին, երկաթե սնդուկներ ունեցող դրամատերերին: Իհարկե, նրանք նրա մոտ գալիս էին այն նույն խելահեղիչ հուզման համար, որ թրթռացնում էր իմ ամբողջ էությունը, բորբոքում էր արյունը երակներիս մեջ, լարում էր նյարդերս և ցնցում ուղեղս: Նա ոչ ոքի անձնատուր չէր եղել, որպեսզի պահեր իր բոլոր երկրպագուներին: Քանի դեռ կինը չի սիրել, նա պչրում է:

— Գուցե նրան կնության են տվել կամ վաճառել են որևէ ծերունու,— ասացի ես Ռաստինյակին,— և առաջին ամուսնության հուշը նրա մեջ զզվանք է առաջացնում սիրո նկատմամբ:

Ես ոտքով վերադարձա Սենտ-Օնորե արվարձանից, ուր բնակվում է Ֆեոդորան: Մինչև Կորդիե փողոցը հարկավոր էր անցնել գրեթե ամբողջ Փարիզով. ճանապարհը կարճ թվաց ինձ. և սակայն ցուրտ էր: Ֆեոդորային տիրելու ձեռնարկել ձմռանը, ցուրտ ձմռանը, երբ իմ ձեռքում երեսուն ֆրանկ էլ չունեի, երբ մեզ բաժանող հեռավորությունը այնքա՜ն մեծ էր: Միայն աղքատ երիտասարդը գիտե, թե կիրքը որքան ծախսեր է պահանջում կառքերի, ձեռնոցների, զգեստների, սպիտակեղենի և այլ բաների համար: Երբ սերը շատ երկար է մնում պլատոնական վիճակում, դառնում է կործանարար: Իրավաբանության ուսանողների մեջ լինում են Լոզեններ[111], որոնց համար ավելի լավ է չմոտենալ ընտիր հարկում բնակվող կրքին: Եվ ես, որ թույլ, աղկաղկ, դժգույն էի և զուրկ շքազգեստից, ես, որ ուժասպառ էի, ինչպես լինում է արվեստագետը նոր ստեղծագործությունից հետո, կարո՞ղ էի չափվել լավ գանգրված, պճնված, շքեղ փողկապներով, որոնց տեսքից կարող է նախանձից տրաքվել ամբողջ Խրովաթիան[112], հարուստ, ժպրհության զրահով պատած և երկանիվ կառքերով շրջագայող սիրուն երիտասարդների հետ:

— Ո՛չ, ո՛չ, Ֆեոդորան կամ մահ,— բացականչեցի ես, հասնելով կամուրջի դարձակետին։— Ֆեոդորան բախտ է:

Գոթական գեղեցիկ զարդասենյակը և Լուդովիկոս XIV-ի ոճով կահավորված սրահը հառնեցին իմ աչքերի առաջ, ես նորից տեսա կոմսուհուն շնորհալի լայն թևնոցներ ունեցող սպիտակ շրջազգեստով, հրապուրիչ քայլվածքով և գայթակղեցուցիչ իրանով: Երբ ես գտնվեցի իմ ցուրտ, բնագետի կեղծամի պես աղտոտ խցում, ես դեռ շրջապատված էի շքեղության մտապատկերներով: Այդպիսի հակադրությունը վատ խորհրդատու է. հավանաբար այսպես են ծնվում ոճիրները: Այն ժամանակ ես, կատաղությունից դողալով, անիծեցի իմ պարկեշտ և համեստ աղքատությունը, իմ ձեղնահարկային խուցը, ուր այնքան բեղնավոր մտքեր էին ծնունդ առել: Իմ ճակատագրի, իմ դժբախտության համար ես հաշիվ պահանջեցի աստծուց, դևից, հասարակական կարգից, իմ հորից, ամբողջ տիեզերքից: Ես պառկեցի բոլորովին քաղցած, ծիծաղելի հայհոյանքներ մռնչալով, բայց հաստատապես որոշելով հրապուրել Ֆեոդորային: Այդ կանացի սիրտը վիճակահանության վերջին տոմսն էր, որից կախված էր իմ բախտը: Ես քեզ չեմ պատմի իմ առաջին այցելությունները Ֆեոդորայի մոտ և անմիջապես կանցնեմ դրամային: Ջանալով ազդել նրա հոգու վրա, ես փորձեցի նվաճել նրա միտքը, շոյել նրա ինքնասիրությունը. որպեսզի նրան ստիպեի ինձ սիրել, ես նրան բազում հիմքեր տվի է՛լ ավելի սիրելու ինքն իրեն. ես երբեք նրան չթողեցի անտարբերության վիճակում. կանայք ուժեղ զգացումների համար պատրաստ են զոհելու ամեն ինչ, և ես նրան շռայլեցի այդպիսի զգացումներ. ես պատրաստ էի նրան ավելի շուտ բարկացնել, քան անտարբեր տեսնել: Սկզբում, ոգևորված հաստատուն կամքով և ինձ սիրել

---

[111] **Լոզեն** — Լուդովիկոս XIV-ի պալատական, որ հայտնի էր բարձր խավի կանանց հետ իր սիրային արկածներով:

[112] **Շքեղ փողկապներով, որոնց տեսքից կարող է նախանձից տրաքվել ամբողջ Խրովաթիան** — բառախաղ է. ֆրանսերեն cravate (փողկապ) բառը ծագել է croate (խրովաթական) բառից: Խրովաթական բանակի այն զորամասերում, որոնք Ֆրանսիայում էին ծառայում XVII և XVIII դարերում, ընդունվեցին շքեղ փողկապներ: Այստեղից էլ առաջացավ cravate — փողկապ բառը:

տալու ցանկությամբ, ես նրա վրա ունեցա որոշ առավելություն, բայց շուտով իմ կիրքը աճեց, ես այլևս չկարողացա ինձ տիրապետել, դարձա անկեղծ և, խելահեղորեն սիրահարվելով, ինձ կորցրի: Ես պարզ չգիտեմ, թե մենք բանաստեղծության և խոսակցության մեջ ի՛նչն ենք կոչում սեր, բայց այն զգացումը, որ հանկարծ զարգացավ իմ կրկնակ բնության մեջ, ես չգտա ոչ մի տեղ, ոչ Ժան-Ժակ Ռուսոյի ճարտասանական և մշակված ֆրազների մեջ, Ռուսոյի, որի բնակարանն էի գուցե զբաղեցնում, ոչ երկու դարերի մեր գրականության սառն ըմբռնումների մեջ, ոչ իտալական նկարների մեջ: Բրիենի լճի տեսարանը, Ռոսսինիի երաժշտության մի քանի կտորները, մարշալ Սուլտին պատկանող Մուրիլլոյի Տիրամայրը, Լեկոմբայի[113] նամակները, պատմվածքների հավաքածուների մեջ հանդիպող որոշ արտահայտությունները, բայց մանավանդ հոգեզմայլվածների աղոթքները և մեր տաղերգուների մի քանի հատվածները — ահա սրանք միայն կարողացան ինձ փոխադրել իմ առաջին սիրո աստվածային ոլորտները: Մարդկային լեզվով ոչ մի բան, գույներով, մարմարներով, բառերով և հնչյուններով մտքի ոչ մի արտահայտություն չէր կարողանա տալ իմ զգացումի ուժը, անկեղծությունը, լռությունը, հանկարծական պոռթկումը: Այո, արվեստը սուտ բան է: Սերը մեր կյանքի հետ ընդմիշտ միաձուլվելուց և նրան իր բոցի գույնով ներկելուց առաջ անցնում է անհամար ձևափոխությունների միջով: Այդ անորսալի ազդեցության գաղտնիքը վրիպում է արվեստագետի հայացքից: Իսկական կիրքը արտահայտվում է ճիչերով, հառաչներով, որոնք անտանելի են սառնասիրտ մարդու ականջների համար: Մարդ պետք է անկեղծորեն սիրի, որպեսզի, կարդալով «Կլարիս Հառլոուին», զգա Լովլասի[114] մռնչյունները: Սերը վճիտ առվակ է, որ հոսում է եղեգների, խոտերի և ծաղիկների միջով, բայց ահա առվակը դառնում է գետակ, դառնում է գետ, իր բնույթն ու տեսքը փոխում է յուրաքանչյուր նոր վտակից, ապա թափվում է անչափելի օվկիանոսում, որը թերի մտքերին միապաղաղ է թվում, իսկ մեծ ու հոգիներին խորասուզում է անվերջանալի մտահայեցությունների մեջ: Ինչպե՞ս վերարտադրել զգացումի այդ վաղանցիկ երանգները, այդ այնքան թանկագին մանրուքները, բառերը, որոնց հնչյունի մեջ պարունակվում են խոսքի գանձեր, այդ նայվածքները, որոնք ավելի արտահայտիչ են, քան ամենալավ քերթվածները: Այն ճակատագրական հանդիպումների ժամանակ, երբ մենք անզգալաբար գերվում ենք կնոջով, բացվում է մի անդունդ, որ ընդունակ է կլանելու մարդկային բոլոր պոեզիաները: Ինչպե՜ս արտահայտես հոգու կենդանի և խորհրդավոր խլրտումները, երբ բառերը մեզ պակասում են գեղեցկության տեսանելի խորհուրդները նկարագրելու համար: Որպիսի՜ կախարդանք: Ինչքա՜ն ժամեր եմ ես անցկացրել՝ անպատմելի հոգեզմայլության մեջ սուզված և **նրան դիտելով** տարված: Ես երջանիկ էի: Ինչո՞վ: Չգիտեմ: Այդ պահերին, երբ նրա դեմքը լույսով էր ողողված, նրա մեջ ինչ-որ բան էր կատարվում, և նա սկսում էր շողալ. հազիվ նկատելի աղվամազը, որ ոսկեզօծում էր նրա նուրբ և քնքուշ մաշկը, թույլ կերպով նշում էր նրա դեմքի շրջագծերը, և դրա մեջ կար այն ամենահմայիչ բանը, որ մեզ հիացնում է արևի լույսի մեջ կորչող հորիզոնի հեռավոր գծերում: Թվում էր, թե ցերեկվա շողը, միաձուլվելով նրա հետ, զգվում է նրան և որ նրա ճառագայթող դիմագծերից արձակվում է մի ավելի վառ լույս, քան իսկական լույսը. ապա մի ստվեր,

---

[113] **Լեկոմբա** — XVIII դարում աղմուկ հանած քրեական մի դատավարության հերոսուհին:

[114] **«Կլարիս Հառլոու»** — անգլիացի գրող Ռիչարդսոնի (1689—1761) վեպը: **Լովլաս** — այդ վեպի հերոսներից մեկը, Կլարիսին հրապուրողը:

անցնելով քաղցր դեմքի վրայով, ասես գունավորում էր այն, բազմապիսի արտահայտություններ տալով նրան: Հաճախ ասես մի միտք էր նշմարվում նրա մարմարե ճակատի վրա. նրա աչքերը կարմրում էին, կոպերը թրթռում, դեմքը ժպտում, նրա շրթների կենդանի բուստը շարժվում էր, մերթ կուչ գալով, մերթ բացվելով. նրա վարսերի հատուկ փայլը մուգ շողեր էր նետում քունքերի թարմ սպիտակության վրա: Այդ դեմքի վրա ամեն գծիկ խոսում էր: Նրա գեղեցկության ամեն երանգ նոր խնծիղ էր իմ աչքերի համար, անծանոթ բերկրանքներ էր բաց անում իմ սրտին: Ես ցանկանում էի մի զգացում, մի հույս կարդալ այդ դեմքի յուրաքանչյուր փոփոխության մեջ: Մեր մունջ խոսքերը փոխանցվում էին հոգուց հոգի, ինչպես ձայնը անցնում է արձագանքի մեջ, և նրանք ինձ առատորեն պարգևում էին վաղանցիկ ուրախություններ, թողնելով իմ մեջ խոր տպավորություն: Նրա ձայնը ինձ պատճառում էր ինչ-որ մոլեգնություն, որ ես հազիվ էի կարողանում զսպել: Լոթարինգիայի չգիտեմ ո՛ր իշխանի նման ես հավանաբար չէի զգա շիկացած ածուխը իմ ափի մեջ, եթե նա իր խտտացնող մատներով շոյեր իմ մազերը: Դա արդեն զմայլություն կամ ցանկություն չէր, դա թովչանք, ճակատագիր էր: Հաճախ վերադառնալով իմ հարկի տակ, անորոշ կերպով Ֆեոդորային տեսնում էի իր առանձնատանը և շփոթ մասնակցություն էի ունենում նրա կյանքին. երբ նա հիվանդանում էր, ես էլ էի հիվանդանում, և հետևյալ օրը նրան ասում էի. «Դուք հիվանդ էիք»:

Քանի՛-քանի՛ անգամ նա ինձ երևացել է գիշերային լռության մեջ իմ հոգեզմայլության ուժից կանչված: Մերթ նա հանկարծ հայտնվում էր իմ առաջ, ինչպես ցայտող լույս, ջարդում էր իմ գրիչը, փախուստի էր մատնում գիտությունն ու տքնությունը, ինձ ստիպում էր իրենով հիանալ, ընդունելով այն գրավիչ կեցվածքը, որի մեջ նրան տեսել էի մի ժամանակ: Մերթ ես ինքս էի նրան ընդառաջ գնում տեսիլների աշխարհում. ես ողջունում էի նրան, ինչպես հույսի, նրան խնդրում էի լսելի դարձնել իր արծաթահնչուն ձայնը. ապա արտասվում էի: Մի օր խոստանալով ինձ հետ թատրոն գնալ, նա հանկարծ քմահաճորեն հրաժարվեց և խնդրեց իրեն մենակ թողնել: Հուսաբեկված այդ քմահաճ վերաբերմունքից, որ ինձ նստում էր մի ամբողջ օրվա աշխատանք և—ասե՞մ — իմ վերջին էկյուն, ես, այնուամենայնիվ, թատրոն գնացի մենակ, ես ուզեցի տեսնել այն ներկայացումը, որ նա ցանկացել էր դիտել: Հազիվ տեղս նստեցի, էլեկտրական մի հոսանք զգացի իմ սրտում: Ինչ-որ ձայն ինձ ասաց. «Նա այստեղ է»: Շուռ եմ գալիս և տեսնում եմ կոմսուհուն՝ օթյակի խորքում, ստվերի մեջ: Իմ հայացքը ուղղվեց այնտեղ, իմ աչքերը միանգամից նրան գտան առասպելական սրատեսությամբ, իմ հոգին թռավ դեպի իր կյանքի ակունքը, ինչպես միջատը դեպի ծաղիկը: Իմ զգացումներն ինչպե՞ս իմացան: Կան թաքուն թրթիռներ, որոնք զարմացնում են մակերեսային մարդկանց, բայց մեր ներքին բնության այս արտահայտությունները նույնքան պարզ են, որքան մեր արտաքին տեսողության սովորական երևույթները. ուստի ես չզարմացա, այլ միայն զայրացա: Իմ հետազոտությունները մարդու հոգեկան ուժերի մասին, որոնք այնքան քիչ են ուսումնասիրված, գոնե ինձ նպաստում էին իմ կրքերի մեջ գտնելու իմ սիստեմը հաստատող մի քանի բացահայտ ապացույցներ: Ինչ-որ արտասովոր բան կար գիտնականի և սիրահարի, իսկական պաշտամունքի և գիտության սիրո այսպիսի միության մեջ: Գիտնականը հաճախ զոհանում էր նրանով, ինչ հուսահատեցնում էր սիրահարին, և հենց որ սիրահարը սկսում էր հավատալ իր հաղթանակին, նա երանության զգացումով դեն էր վանում գիտությունը: Ֆեոդորան ինձ տեսավ և խոժոռվեց. ես անհանգստացնում էի նրան: Առաջին միջնարարին ես գնացի նրա մոտ. նա մենակ էր, ես մնացի: Թեպետ մենք երբեք չէինք խոսել սիրո մասին, բայց ես նախազգացի, որ բացատրություն կլինի: Ես դեռ նրան չէի հայտնել իմ գաղտնիքը, և

սակայն մեր միջև մի տեսակ համաձայնություն կար. նա ինձ հայտնում էր իր զվարճության ծրագիրները, մի տեսակ բարեկամական անհանգստությամբ հարցնում էր, թե կգայի՞ վաղը. ասելով որևէ սրամիտ բառ, նա ինձ վրա նետում էր հարցական հայացք, իբրև թե ցանկանում էր միայն ինձ դուր գալ. եթե ես նեղանում էի, նա դառնում էր սիրալիր. եթե նա բարկանում էր, ես որոշ չափով իրավունք էի ունենում պատճառը հարցնելու նրան. եթե ես որևէ հանցանք էի գործում, նա ուզում էր, որ ես երկար ներողություն խնդրեի, որպեսզի ինձ ներեր: Այս վեճերը, որոնցից մենք հաճույք էինք զգում, լի էին սիրով. այն ժամանակ նա դառնում էր այնքա՛ն նազելի և պաշտելի, իսկ ես՝ այնքա՛ն երջանիկ: Այս անգամ մեր մտերմությունը հանկարծ խզվեց, և մենք ամբողջ երեկոյան դարձանք օտարներ մեկս մյուսին: Կոմսուհին սաստիկ սառն էր, ես վատ բանի նախազգացում ունեցա:

— Ուղեկցեք ինձ,— ասաց նա, երբ ներկայացումը վերջացավ:

Եղանակը հանկարծ փոխվել էր: Երբ մենք դուրս եկանք, անձրևախառն ձյուն էր տեղում: Ֆեոդորայի կառքը չկարողացավ մոտենալ թատրոնի դռանը: Տեսնելով, որ լավ հագնված մի կին ուզում է անցնել բուլվարով, մի թղթատար իր անձրևանոցը բաց արեց մեր վրա, և երբ մենք կառք նստեցինք, իր ծառայության վարձը պահանջեց: Ես մոտս բոլորովին փող չունեի. ես այն ժամանակ իմ կյանքի տասը տարին կտայի երկու սուի համար: Իմ տղամարդու հպարտությունը իր բազմապիսի դրսևորումներով՝ խորտակվեց դժոխային վշտից: «Մանր փող չկա, սիրելիս»,— ասացի ես այնպիսի խիստ տոնով, որ կարծես դրանով արտահայտում էի իմ վիրավորված կիրքը, ասացի ես, այդ մարդու եղբայրակիցը, ես, որ այնպես լավ էի ճանաչում աղքատությունը, ես, որ մի ժամանակ յոթ հարյուր հազար ֆրանկ էի տվել այնքան հեշտությամբ: Ծառան ետ հրեց թղթատարին, և ձիերը սլացան: Ճանապարհին Ֆեոդորան մտացիր էր կամ ձևացնում էր, թե ինչ-որ բանով է մտահոգված, և իմ հարցերին պատասխանում էր միավանկ բառերով և արհամարհանքով: Ես լռություն պահեցի: Դրանք ահավոր րոպեներ էին: Հասնելով նրա տունը, մենք նստեցինք կրակարանի մոտ: Երբ սպասյակը կրակը վառեց և դուրս եկավ, կոմսուհին դեպի ինձ դարձավ դեմքի անսովոր արտահայտությամբ և մի տեսակ հանդիսավորությամբ ասաց.

— Երբ ես եկա Ֆրանսիա, իմ հարստությունը գայթակղեցրեց մի քանի երիտասարդների. ես լսեցի սիրո բացատրություններ, որոնք կարող էին շոյել իմ ինքնասիրությունը. ես հանդիպեցի նաև այնպիսի մարդկանց, որոնց սերը անկեղծ և խոր էր, նրանք կամուսնանային ինձ հետ, եթե ես նույնիսկ աղքատ աղջիկ լինեի, ինչպիսին էի մի ժամանակ: Իմացեք, պարոն դը Վալանտեն, որ ես կարող էի նոր հարստություններ և նոր տիտղոսներ ձեռք բերել. բայց թող ձեզ հայտնի լինի նաև, որ ես դադարեցի հանդիպել այն մարդկանց հետ, որոնք այնքան անմիտ էին, որ ինձ հետ խոսում էին սիրո մասին: Եթե իմ վերաբերմունքը ձեր նկատմամբ թեթևամիտ լիներ, ես ձեզ չէի անի նախազգուշացումներ, որոնք թելադրված էին ավելի շուտ բարեկամական զգացումներից, քան հպարտությունից: Կինը խիստ պատասխան ստանալու վտանգին է ենթարկվում, երբ նա, կարծելով որ իրեն սիրում են, հենց սկզբից մերժում է իրեն մշտապես շոյող զգացումը: Ինձ հայտնի են Արսինոեի և Արամինտոյի[115] տեսարանները, և ես

---

[115] **Արսինոե և Արամինտո** — պչրող երեսպաշտների գրական տիպեր: **Արսինոե** — Մոլիերի «Մարդատյաց» կատակերգության գործող անձ. **Արամինտո** — անգլիացի թատերագիր Կոնգրիվի «Ծեր ամուրի» կատակերգության գործող անձ:

գիտեմ, թե ինչպես կարող են ինձ պատասխանել այդպիսի դեպքերում, բայց ես հույս ունեմ, որ այս անգամ իմ առջև է իր միջավայրից բարձր կանգնած մի մարդ, և որ դուք իմ մասին վատ կարծիք չեք կազմի միայն նրա համար, որ ես ձեզ անկեղծորեն բաց եմ անում իմ հոգին:

Ֆեոդորան խոսում էր պաղարյունությամբ, ինչպես փաստաբանը կամ նոտարը, երբ նրանք իրենց հաճախորդներին բացատրում են դատավարության ձևերը կամ պայմանագրի կետերը: Նրա ձայնի հստակ և հմայիչ հնչյունը նվազագույն հուզում անգամ չէր մատնում. միայն թե նրա միշտ վայեուչ և ազնվաշուք դեմքի ու կեցվածքի մեջ երևում էին սառնություն և չորություն, ինչպես դիվանագետի մոտ: Նա, անշուշտ, կշռադատել էր իր խոսքերը, նախապես կազմել այդ տեսարանի ծրագիրը: Ո՛վ իմ սիրելի բարեկամ, երբ կանայք հաճույք են գտնում մեր սիրտը ծվատելու մեջ, երբ նրանք որոշել են դաշունահարել և խոցել մեր սիրտը, նրանք զմայլելի են, նրանք սիրում են և ուզում են սիրվել: Մի օր նրանք մեզ կհատուցեն մեր տանջանքների համար, ինչպես աստված հատուցում է, ասում են, բարի գործերի համար. նրանք հաճույքով հարյուրապատիկը կհատուցեն այն չարիքի համար, որի դաժանությունը նրանք գիտակցում են. նրանց չարությունը մի՞թե լի չէ կրքով: Բայց տանջվել մի կնոջից, որ ձեզ սպանում է անտարբերությամբ, մի՞թե դա դժնդակ կտտանք չէ: Այդ միջոցին Ֆեոդորան անգիտակցաբար ոտնակոխ էր անում իմ բոլոր հույսերը, փչացնում էր իմ կյանքը և խորտակում իմ ապագան սառն անհոգությամբ և անմեղ անգթությամբ այն երեխայի, որը հետաքրքրությունից պոկում է թիթեռի թևերը:

— Հետագայում,— ավելացրեց Ֆեոդորան,— դուք, հույս ունեմ, կհասկանաք, թե ինչքան ամուր է այն բարեկամությունը, որ ես առաջարկում եմ: Դուք կհամոզվեք, որ բարեկամների հանդեպ ես միշտ բարի եմ և անձնվեր: Ես իմ կյանքը կտայի նրանց համար, բայց եթե ես, չբաժանելով որևէ մեկի զգացումը, ընդունեի այն, դուք առաջինը կարհամարհեիք ինձ: Բավական է: Դուք միակ մարդն եք, որին ես արեցի այս խոստովանությունը:

Սկզբում բառերն ինձ պակասեցին, ես հազիվ զսպեցի իմ մեջ բարձրացած փոթորիկը, բայց շուտով ես իմ հուզումը ծածկեցի հոգուս խորքում և ժպտացի:

— Եթե ես ձեզ ասեմ, որ սիրում եմ ձեզ,— ասացի ես,— դուք ինձ կվանեք. եթե ես ինձ անտարբեր ցույց տամ, դուք ինձ կպատժեք: Քահանաները, դատավորները և կանայք երբեք շուռ տալով չեն հանում իրենց զգեստը: Լռությունը ոչինչ չի կանխագուշակում. ուստի թույլ տվեք ինձ լռել: Եթե դուք ինձ դիմում եք այդքան եղբայրական նախազգուշացումներով, նշանակում է՝ դուք վախենում եք ինձ կորցնել, և այդ միտքը կարող էր շոյել իմ ինքնասիրությունը: Բայց մի կողմ թողնենք անձնականը: Դուք, թերևս, միակ կինն եք, որի հետ ես կարող եմ փիլիսոփայորեն քննել մի որոշում, որ այնքան ներհակ է բնության օրենքներին: Ձեր սեռի ուրիշ էակների համեմատությամբ դուք բացառիկ երևույթ եք: Եկեք միասին բարեխղճորեն որոնենք հոգեբանական այս զարտուղության պատճառը: Գուցե, ինչպես շատ կանանց մոտ, որոնք հպարտ են իրենց անձով և սիրահարված են իրենց կատարելություններին, ձեր մեջ խոսում է նրբացած եսասիրության զգացումը և ձեզ սարսափեցնում է մի տղամարդու պատկանելու, ձեր կամքից հրաժարվելու, ձեզ համար վիրավորական պայմանական մի գերազանցության ենթարկվելու միտքը: Եթե այդպես է, այն ժամանակ դուք հազար անգամ ավելի գեղեցիկ կերևայիք ինձ: Կամ, գուցե, առաջին սերը նվաստացրե՞լ է ձեզ: Գուցե դուք թա՞նկ եք գնահատում ձեր մարմնի բարեձևությունը, ձեր գեղեցիկ իրանը, և դուք վախենո՞ւմ եք մայրության տձևություններից: Արդյոք սրա՞նք են

ամենալուրջ պատճառները, որոնք ձեզ դրդում են հրաժարվել շատ ուժեղ սիրուց: Կամ, գուցե, դուք թերություններ՞ ունեք, որոնք ձեզ ստիպում են առաքինի լինել ակամայից... Դուք մի նեղանաք, ես հարցը քննում, ուսումնասիրում եմ, ես հազար մղոն հեռու եմ կրքից: Բնությունը, որ ստեղծում է ի ծնե կույրեր, կարող է և ստեղծել սիրո մեջ կույր և խուլ-համր կանայք: Դուք, իրոք, թանկարժեք նյութ եք բժշկական դիտողության համար: Դուք ձեր արժեքը չգիտեք: Դուք կարող եք շատ օրինավոր գարշանք տածել տղամարդկանց նկատմամբ. ես հասկանում եմ ձեզ, նրանք բոլորը ինձ էլ են թվում տգեղ և ատելի: Դեհ, դուք իրավացի եք,— ավելացրի ես, զգալով որ սիրտս ուռչում էր,— դուք, իհարկե, մեզ կարհամարհեք. չկա այնպիսի տղամարդ, որ արժանի լիներ ձեզ:

Ես քեզ չեմ կրկնի այն բոլոր դառն հեգնանքները, որ ես ուղղեցի կոմսուհուն: Եվ ի՞նչ: Ամենակծու խոսքը, ամենասուր հեգնանքը նրա մոտ չառաջացրին որևէ շարժում, վրդովմունքի որևէ արտահայտություն: Նա հանգիստ լսում էր ինձ, իսկ նրա շրթների վրա և աչքերի մեջ խաղում էր նրա սովորական ժպիտը, այն ժպիտը, որ նա ծառայեցնում էր իբրև դիմակ, միշտ միևնույն ժպիտը բարեկամների համար, ծանոթների համար, օտարների համար:

— Եվ դուք դեռ կասեք, որ ես բարի չեմ այն բանից հետո, երբ ձեզ թույլ տվի, որ ինձ խծբծեք,— ասաց կոմսուհին, որսալով պահը, երբ ես լուռումունջ նայում էի նրան:— Տեսնում եք,— շարունակեց նա ծիծաղելով,— ես բարեկամության մեջ անմիտ նրբանկատություններ չունեմ: Շատ կանայք ձեզ կպատժեին ձեր հանդգնության համար և իրենց դուռը կփակեին ձեր առաջ:

— Դուք կարող եք ինձ վռնդել առանց որևէ բացատրության:

Այս ասելով, ես զգում էի, որ կարող եմ սպանել նրան, եթե նա ինձ հեռացնի տնից:

— Խե՛նթ եք,— բացականչեց նա ժպտալով:

— Դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչ հետևանք է ունենում բուռն սերը,— նորից ասացի ես:— Հուսահատության մեջ ընկած տղամարդը հաճախ սպանում է իր սիրուհուն:

— Ավելի լավ է մեռնել, քան դժբախտ լինել,— պատասխանեց նա սառնությամբ:— Ձեզ նման կրքոտ մարդը մի օր կմսխի կնոջ հարստությունը և նրան կնստեցնի մոխրի վրա:

Նման թվաբանությունը ինձ ապշեցրեց: Ես որոշակի անդունդ տեսա այդ կնոջ և իմ միջև: Մենք ամենևին չէինք կարող իրար հասկանալ:

— Մնաք բարով,— ասացի ես սառնությամբ:

— Գնաք բարով,— պատասխանեց նա բարեկամաբար գլուխը խոնարհելով:— Վաղը կտեսնվենք:

Ես մի պահ նրան նայեցի համակված մի սիրով, որից ես հրաժարվում էի: Նա կանգնել և ժպտում էր, և այդ արհեստական ժպիտը, մարմարե արձանի ատելի ժպիտը, կարծես սեր էր արտահայտում, բայց այդ սերը սառն էր: Դու հասկանո՞ւմ ես, սիրելիս, թե ինչպիսի տրտմություն ինձ պաշարեց, երբ ես, անձրևի և ձյան տակ, վերադարձա տուն, երբ ես, ամեն ինչ կորցրած, մի մղոն քայլեցի սառցապատած ափնուղիներով: Օ՛, կոմսուհին չգիտեր իմ թշվառ վիճակը, և կարծում էր, որ ես իր նման հարուստ եմ և կառքերով եմ շրջագայում:

Ինչպիսի՜ հուսաբեկություններ, ինչպիսի՜ հուսախաբություններ: Հարցը միայն փողը չէր, այլ իմ հոգու բոլոր հարստությունները: Ես գնում էի ըստ դիպվածի, յուրովի քննության առնելով այդ անսովոր խոսակցությունը. ես այնպես էի խճճվել իմ մեկնությունների մեջ, որ վերջ ի վերջո սկսեցի կասկածել բառերի և մտքերի իրական արժեքի մասին: Եվ, այնուամենայնիվ, ես սիրում էի նրան, սիրում էի այդ սառնասիրտ կնոջը, որ տենչում էր նորից ու նորից տիրապետվել, շարունակ հրաժարվում էր երեկոյան խոստումներից և ամեն օր փոխում էր իր դեմքը: Ինստիտուտի մոտով անցնելիս, ես հանկարծ տենդագին դող զգացի: Այն ժամանակ ես հիշեցի, որ ոչինչ չէի կերել: Ես բոլորովին դրամ չունեի: Ի լրումն դժբախտության, անձրևից ծռմռվել էր իմ գլխարկը: Հիմա ինչպե՜ս մոտենայի գեղանի կնոջ, ինչպե՜ս երևայի որևէ սալոնում առանց պատշաճ գլխարկի: Ես անիծում էի սին և անմիտ մոդան, որի պատճառով մենք դատապարտված ենք մեր գլխարկները ցուցադրելու և մշտապես մեր ձեռքում բռնելու. այնուամենայնիվ, շնորհիվ իմ բացառիկ խնամքների, գլխարկս մինչև հիմա գտնվում էր տանելի վիճակում: Չլինելով ոչ շատ նոր, ոչ շատ հին, ոչ մազաթափ, ոչ փայլուն, նա կարող էր կոկիկ մարդու գլխարկ համարվել. բայց արհեստականորեն պահվող նրա գոյությունը հասել էր իր վերջին սահմանին. իմ գլխարկը ձևատվել, փչացել, անպետքացել էր, դարձել էր իսկական հնոտի, արժանի իր տիրոջը: Երեսուն սու չունենալուս համար ես կորցնում էի իմ կեղծ վայելչությունը: Ա՜հ, ինչքան անհայտ զոհաբերություններ էի արել Ֆեոդորայի համար այս երեք ամսում: Մի րոպե նրան տեսնելու համար ես հաճախ ծախսել էի մի շաբաթվա համար անհրաժեշտ հացի փողը: Աշխատանքը թողնել և քաղցած մնալ, դա դեռ ոչինչ է: Բայց ամբողջ Փարիզի փողոցներով անցնել և չցեխոտվել, վազելով փրկվել անձրևից և կոմսուհուն ներկայանալ այնպես լավ հագնված, ինչպես նրան շրջապատող պճնամոլները, այ դա անհամար դժվարություններ էր ներկայացնում ինձ նման սիրահարված և մտամոլոր բանաստեղծի համար: Իմ երջանկությունը, իմ սերը կախված էին մի բծից իմ միակ սպիտակ բաճկոնակի վրա: Հրաժարվել նրան հանդիպելուց, եթե ես ցեխոտված, թրջված լինեի: Չունենա՞լ նույնիսկ հինգ սու, որպեսզի ես մի մաքրողի մաքրել տայի կոշիկիս վրայի ամենաչնչին ցեխի բիծը: Իմ կիրքը աճում էր այս բոլոր չնչին, ուրիշներին անհայտ տվայտանքներից, որոնք անհունորեն մեծ են դյուրագրգիռ մարդու համար: Դժբախտները անում են զոհաբերություններ, որոնց մասին նրանց չի թույլատրվում խոսել այն կանանց, որոնք ապրում են շքեղության և փարթամության պայմաններում, աշխարհը դիտում են մի պրիսմակի միջով, որը ոսկեզօծում է մարդկանց և իրերը: Եսասիրությունից լավատես դարձած, բարեկրթությունից անգութ դարձած այս կանայք հաճույքների համար խուսափում են խորհրդածություններից և ուրիշների դժբախտության նկատմամբ իրենց անտարբերությունն արդարացնում են իրենց կենսասիրությամբ: Այսպիսի կանանց համար գրոշը միլիոն չարժե, բայց միլիոնը նրանց գրոշ է երևում: Եթե սերը իր դատը պետք է պաշտպանի մեծ զոհաբերություններով, ապա նա պարտավոր է նաև համեստորեն քողարկել դրանք, լռության մեջ թաղել. բայց հարուստ մարդիկ, շռայլելով իրենց հարստությունն ու կյանքը, զոհելով իրենց, օգուտ են քաղում աշխարհիկ նախապաշարումներից, որոնք միշտ մի որոշ փայլ են տալիս նրանց սիրային խենթություններին. նրանց մոտ լռությունը պերճախոս է, իսկ քողը հմայիչ, մինչդեռ իմ դաժան կարիքը ինձ դատապարտել էր ահավոր մտատանջությունների, քանի որ ինձ նույնիսկ չէր թույլատրվում ասել «Սիրում եմ» կամ «Մեռնում եմ»: Բայց մի՞թե դա, իրոք, անձնազոհություն էր: Մի՞թե ես առատորեն վարձատրված չէի այն երջանկությամբ, որ զգում էի, ամեն ինչ զոհաբերելով նրա համար: Կոմսուհու շնորհիվ իմ կյանքի ամենափայլուն դեպքերը ստանում էին առանձին արժեք,

նրանց հետ կապվում էին անսովոր հրճվանքներ: Առաջ անփույթ էի իմ հագուստ-կապուստի նկատմամբ, իսկ հիմա հագնում էի իմ ֆրակը, ինչպես իմ երկրորդ «եսը»: Ինձ վիրավորե՞լ, թե՞ ֆրակս պատռել: Ես չէի վարանի ընտրության մեջ: Մտիր իմ դրության մեջ և դու կհասկանաս այն խելացնոր մտքերն ու հարաճուն մոլեգնությունը, որոնք ինձ պաշարում էին քայլելու ժամանակ և որոնք, գուցե, ավելի էին բորբոքվում քայլելուց: Ես մի տեսակ դժոխային ուրախություն էի զգում, մտածելով որ գտնվում եմ դժբախտության կատարին: Այդ վերջին ճգնաժամին ես ուզում էի տեսնել բարեգուշակ մի նշան. բայց չարիքի գանձարանները անհատակ են:

Պանդոկի դուռը կիսաբաց էր: Սրտաձև կտրված փեղկերի բացվածքների միջով լույսը ընկնում էր փողոցի վրա: Պոլինը և մայրը, ինձ սպասելով, զրուցում էին: Ես լսեցի իմ անունը և ականջ դրի:

— Ռաֆայելը շատ ավելի սիրուն է, քան համար յոթի ուսանողը,— ասում էր Պոլինը:— Նա շատ սիրուն շեկ մազեր ունի: Քեզ չի՞ թվում, թե նրա ձայնի մեջ ինչ-որ սրտագրավ բան կա: Եվ հետո, թեպետ նա արտաքուստ մի քիչ հպարտ է երևում, բայց շատ բարի և շատ կիրթ է: Իսկապես որ նա շատ լավ է: Ես վստահ եմ, որ բոլոր կանայք կգժվեն նրա համար:

— Դու նրա մասին այնպես ես խոսում, որ կարծես սիրահարված ես նրան,— նկատեց տիկին Գոդենը:

— Օ, ես նրան սիրում եմ ինչպես եղբոր,— պատասխանեց Պոլինը ծիծաղելով:— Ես շատ ապերախտ կլինեի, եթե նրա նկատմամբ բարեկամական զգացումներ չտածեի: Չէ՞ որ նա ինձ սովորեցրել է երաժշտություն, գծագրություն, քերականություն, մի խոսքով այն ամենը, ինչ ես հիմա գիտեմ: Դու շատ ուշադրություն չես դարձնում իմ հառաջադիմությանը, մայրիկ, բայց ես այնպես եմ ուսյալ դառնում, որ շուտով կարող եմ դասեր տալ, և այն ժամանակ մենք աղախին էլ կունենանք:

Ես կամացուկ քաշվեցի. ապա դիտմամբ մի քիչ աղմուկ հանեցի և սրահ մտա լամբարը վերցնելու, որը սովորաբար Պոլինն էր վառում: Խեղճ աղջնակը բուժիչ սպեղանի էր դնում իմ վերքերի վրա: Իմ մասին արված այդ միամիտ գովասանքները ինձ մի քիչ արիություն տվին: Ես կարիք էի զգում իմ վրա հավատի և իմ իրական արժանիքների անաչառ գնահատման: Այսպես վերակենդանացած իմ հույսերը լույս սփռեցին այն ամենի վրա, ինչ ես տեսնում էի իմ շուրջը: Գուցե և մինչև հիմա ես լրջորեն չէի դիտել այն տեսարանը, որ այնպես հաճախ իմ աչքերին պարզվում էր այդ սրահում, նստում էին այդ երկու կանայք, բայց այս անգամ ես հիացա իրականության հմայիչ պատկերով, այն համեստ բնությամբ, որ այնքան բնականորեն վերարտադրել են ֆլամանդական նկարիչները: Մայրը, գրեթե հանգած ակութի մոտ նստած, գուլպա էր հյուսում, և նրա շրթների վրա բարի մի ժպիտ էր խաղում: Պոլինը հովհարներ էր ներկում, փոքր սեղանի վրա տարածված նրա ներկերն ու վրձինները բարկ հոտեր էին արձակում. երբ նա վեր կացավ և լամբարը վառեց, ամբողջ լույսը ընկավ նրա սպիտակ դեմքի վրա. ահավոր կրքից ստրկացած մարդը միայն կարող էր չհիանալ նրա թափանցիկ վարդագույն ձեռքերով, գեղեցիկ գլխով և նրա ամբողջ կուսական կերպարանքով: Գիշերային լռությունը առանձին հմայք էր տալիս այդ տարաժամ աշխատանքին, այդ խաղաղ առտնին տեսարանին: Տևականորեն աշխատանքի մեջ և մշտապես զվարթ՝ երկու կանայք ցուցաբերում էին ամենավսեմ զգացումներով լի քրիստոնեական հեզություն:

Անարտահայտելի մի ներդաշնակություն կար այստեղ իրերի և մարդկանց միջև: Ֆեոդորայի շքեղությունը չոր էր, իմ մեջ հոռի մտքեր էր զարթեցնում, մինչդեռ այս խոնարհ աղքատությունը, այս պարզությունն ու բնականությունը թարմացնում էին իմ հոգին: Թերևս ինձ նվաստացած էի զգում շքեղության մեջ, իսկ այս երկու կանանց մոտ, այս մթին սրահում, ուր պարզունակ կյանքը ասես ապաստանել էր սրտի հուզումների մեջ, ես, թերևս, հաշտվում էի ինձ հետ. այստեղ ես կարող էի հովանավորություն ցույց տալ, որին այնքան նախանձախնդիր է տղամարդը: Երբ ես մոտեցա Պոլինին, նա ինձ վրա գրեթե մայրական մի հայացք նետեց, դողդոջ ձեռքերով լամբարը ցած դրեց և բացականչեց.

— Աստված, ինչքա՜ն գունատ եք: Ա՛հ, նա ամբողջովին թրջվել է: Մայրս կչորացնի ձեր հագուստները... Դուք կաթ սիրում եք,— շարունակեց նա կարճատև լռությունից հետո,— այսօր մենք կաթի սեր ունենք, ուզո՞ւմ եք ճաշակել:

Պոլինը կատվի նման նետվեց դեպի կաթով լի հախճապակե ամանը և այն ինձ մատուցեց այնպիսի ժրությամբ, իմ առաջ դրեց այնպիսի սիրալիրությամբ, որ ես վարանեցի:

— Մի՞թե դուք ինձ մերժում եք,— ասաց նա այլայլված ձայնով:

Մենք՝ երկու հպարտներս, իրար հասկանում էինք. Պոլինը ասես տանջվում էր իր աղքատությունից և ինձ մեղադրում էր մեծամտության մեջ: Ես հուզվեցի: Այդ կաթի սերը գուցե նրա առավոտյան նախաճաշն էր: Սակայն ես չհրաժարվեցի: Հեգ աղջիկը փորձեց ծածկել իր ուրախությունը, բայց դա կայծկլտում էր նրա աչքերի մեջ:

— Ես չեմ հրաժարվում,— ասացի ես նստելով: (Հոգածության մի արտահայտություն նկատվեց Պոլինի ճակատի վրա)։— Հիշո՞ւմ եք, Պոլին, Բոսյուեի մոտ այն հատվածը, ուր նա ասում է, թե աստված մի բաժակ ջրի համար ավելի առատորեն կվարձատրի, քան հաղթանակի համար:

— Այո,— պատասխանեց Պոլինը:

Եվ նրա կուրծքը թպրտում էր, ինչպես մատղաշ շիկահավինը երեխայի ձեռքերում:

— Իսկ արդ, քանի որ մենք շուտով բաժանվելու ենք,— ավելացրի ես դեռ վարանոտ ձայնով,— թույլ տվեք ձեզ շնորհակալություն հայտնել այն բոլոր խնամքների համար, որ դուք և ձեր մայրիկը ցուցաբերեցիք իմ նկատմամբ:

— Օ, չհաշվենք,— ասաց Պոլինը ծիծաղելով:

Նրա ծիծաղը ծածկում էր մի հուզում, որից ես ազդվեցի:

— Իմ դաշնամուրը,— շարունակեցի ես, ձևացնելով, թե չեմ լսել նրա ասածը,— Էրարի լավագույն նվագագործիքներից մեկն է: Վերցրեք ձեզ: Վերցրեք առանց այլևայլի: Ես մտադիր եմ ճանապարհորդել և չեմ կարող հետս տանել:

Իմ արտաբերած այս խոսքերի թախծագին տոնից երկու կանայք, ըստ երևույթին, հասկացան, թե ինչ էր կատարվում իմ հոգում և ուշադրությամբ ինձ նայեցին. նրանց նայվածքի մեջ և՛ հետաքրքրություն կար, և՛ սարսափ: Գորովանքը, որ ես փնտրում էի բարձր հասարակության պաղ շրջանակներում, այստեղ իմ առջևն էր, բնական, սրտահույզ և, գուցե, տևական:

— Իզուր եք այդպիսի բան ծրագրել,— ասաց մայրը։— Մնացեք այստեղ։ Ամուսինս հիմա արդեն ճանապարհորդության մեջ է,— շարունակեց նա։— Այսօր երեկոյան ես կարդում էի Հովհաննու Ավետարանը, իսկ Պոլինը այդ միջոցին բանալին կպցրել էր Աստվածաշնչին և այն բռնել էր վարանումով։ Եվ ահա բանալին պտտվեց։ Դա ստույգ նշան է, թե Գոդենը ողջ-առողջ և բարեհաջող է։ Պոլինը նորից գուշակություն արեց ձեզ համար և համար յոթի երիտասարդի համար, բայց բանալին պտտվեց միայն ձեզ համար։ Մենք բոլորս կհարստանանք։ Գոդենը կվերադառնա միլիոնատեր դարձած. ես նրան տեսա երազիս մեջ՝ օձերով լի նավի վրա. բարեբախտաբար, ջուրը պղտոր էր, որ նշանակում է ոսկի և անդրծովյան ակնեղեններ։

Այդ բարեկամական դատարկ խոսքերը, նման այն անորոշ երգերին, որոնցով մայրը քնացնում է հիվանդ երեխային, որոշ չափով հանգստացրին ինձ։ Բարի կնոջ ձայնն ու նայվածքը լի էին այն ջերմությամբ և գորովանքով, որոնք չեն ջնջում վիշտը, բայց ամոքում, օրորում, հանգստացնում են այն։ Պոլինը, մորից ավելի խորաթափանց, զննող հայացքով և անհանգստությամբ նայում էր ինձ, նրա խելացի աչքերը ասես գուշակում էին իմ կյանքը, իմ ապագան։ Գլխի խոնարհումով ես շնորհակալություն հայտնեցի մորը և աղջկան. ապա, վախենալով, որ կհուզվեմ, շտապեցի դուրս գալ։ Երբ բոլորովին մենակ գտնվեցի, խորասուզվեցի իմ վշտի մեջ։ Իմ չարագուշակ երևակայությունը ինձ ներկայացրեց բազմաթիվ անհիմն ծրագիրներ և ինձ թելադրեց անհնարին որոշումներ։ Երբ մարդ քարշ է գալիս իր անցյալ բարեկեցության բեկորների մեջ, նա դեռևս կգտնի որոշ միջոցներ. բայց ես բացարձակապես ոչինչ չունեի։ Ա՜հ, սիրելիս, մենք շատ հեշտ ենք մեղադրում թշվառությունը։ Ներողամիտ լինենք բոլոր հասարակական քայքայիչներից ամենագործոն քայքայիչի հետևանքների նկատմամբ։ Որտեղ թագավորում է թշվառությունը, այնտեղ այլևս գոյություն չունի ո՛չ ամոթ, ո՛չ ոճիր, ո՛չ առաքինություն, ո՛չ բանականություն։ Առանց մտքերի, առանց ուժի, ես այնպիսի վիճակում էի, ինչպես այն աղջիկը, որ ծունկի է եկել վագրի առջև։ Կրքից և փողից զուրկ մարդը դեռ իր անձի տերն է, բայց սիրահարված չքավորը այլևս չի պատկանում իրեն և չի կարող սպանել իրեն։ Սերը երկյուղածության զգացում է մեզ ներշնչում մեր նկատմամբ, մենք մեր մեջ հարգում ենք մի ուրիշ կյանք. սերը դառնում է դժբախտություններից ամենասոսկալին, դժբախտություն, որ զուրկ չէ հույսից, և այդ հույսը ձեզ ստիպում է տանջանքներ կրել։ Ես քնեցի այն մտածումով, որ հաջորդ օրը կգնամ Ռաստինյակի մոտ և նրան կպատմեմ Ֆեոդորաի տարօրինակ որոշման մասին։

— Է՛հ, է՛,— գոչեց Ռաստինյակը, երբ առավոտյան ժամը իններին մտա նրա մոտ։— Գիտեմ ինչու ես եկել. Ֆեոդորան, հավանաբար, քեզ արձակուրդ է տվել։ Մի քանի բարի հոգիներ, որոնք նախանձում են կոմսուհու վրա ունեցած քո ազդեցությանը, արդեն հայտարարել են ձեր ամուսնության մասին։ Աստված գիտե, թե քո ախոյանները ինչքան հիմար բաներ են քեզ վերագրել և ինչքան են քեզ բամբասել։

— Ամեն ինչ հասկանալի է,— բացականչեցի ես։ Ես հիշեցի իմ բոլոր ժպրհությունները և գտա, որ կոմսուհին իրեն շատ լավ էր պահում։ Ես իմ աչքին երևում էի մի անարգ մարդ, որ դեռ բավականաչափ չի տուժել, իսկ նրա ներողամտության մեջ տեսնում էի սոսկ սիրո համբերատար ողորմածություն։

— Չշտապենք եզրակացություններ անել,— ասաց ողջամիտ գասկոնացին։— Ֆեոդորան օժտված է բնածին խորամտությամբ, որ հատուկ է խորապես եսասեր կանանց. նա գուցե քո

մասին կարծիք է կազմել դեռ այն ժամանակ, երբ դու նրա մեջ տեսնում էիր միայն նրա հարստությունն ու շքեղությունը. ինչքան էլ դու ճարտարամիտ լինեիր, նա ամեն ինչ կարդացել էր քո հոգում: Նա բավական ծածկամիտ է, բայց անողոք է ուրիշների ամենաչնչին ծածկամտության նկատմամբ: Գուցե,— ավելացրեց Ռաստինյակը,— ես եմ քեզ մղել վատ ճանապարհի: Հակառակ իր մտքի և վարվելակերպի նրբության, այդ կինը ինձ երևում է տիրական, ինչպես բոլոր կանայք, որոնք հաճույք են ստանում միայն մտքից: Նրա համար ամբողջ երջանկությունը կայանում է կենցաղային բարեկեցության, աշխարհիկ զվարճությունների մեջ. զգացումը նրա համար սոսկ դերակատարություն է. նա քեզ կդժբախտացներ և կդարձներ իր ավագ ծառան...

Ռաստինյակը խոսում էր խուլի հետ: Ես նրան ընդմիջեցի և առերևույթ զվարթությամբ նրան պարզեցի իմ նյութական վիճակը:

— Երեկ երեկոյան չար բախտը ինձանից տարավ իմ ամբողջ դրամը, որ ես կարող էի ուզածիս պես գործածել,— ասաց Ռաստինյակը:— Եթե այդպիսի անպատեհություն չլիներ, ես հոժարությամբ քեզ կառաջարկեի իմ քսակը: Գնանք կապելա նախաճաշ անելու, ոստրե ուտելուց հետո գուցե մի բան կմտածենք:

Նա հագնվեց և կարգադրեց կառքը լծել. ապա, ինչպես երկու միլիոնատեր, երևակայական կապիտալներով ապրող անպատկառ շահամոլների ժպրհությամբ, մտանք «Փարիզյան սրճարանը»: Այդ սատանա գասկոնցին ինձ շփոթեցնում էր համարձակ վարվեցողությամբ և անդրդվելի ինքնավստահությամբ: Շատ ընտիր մի նախաճաշից հետո, երբ սուրճ էինք խմում, Ռաստինյակը գլխով ողջունեց տեսքով և հագնվածքի շիկությամբ աչքի ընկնող մի խումբ երիտասարդների, որոնք սրճարան էին մտնում. այդ դենդիներից մեկին տեսնելով, նա ասաց.

— Դե՛հ, քո գործը հաջող է գնում:

Փայլուն փողկապով այդ ջենտլմենին, որ իրեն համար սեղան էր փնտրում, նա նշան արեց, որ ուզում է հետը խոսել:

— Այդ պճնամոլը շքանշան է ստացել նրա համար, որ հրատարակել է երկեր, որոնցից ինքն էլ բան չի հասկանում, ասաց Ռաստինյակը ականջիս:— Նա քիմիկոս է, պատմաբան է, վիպասան է, հրապարակագիր է. նա բազմաթիվ թատերգությունների համար ստանում է հոնորարի մեկ քառորդը, մեկ երրորդը և նույնիսկ կեսը, դրանով հանդերձ նա տգետ է, բացարձակապես տգետ: Նա մարդ չէ, անուն, հանրությանը ընտանի դարձած պիտակ: Դրա համար նա զգուշանում է մտնել այն գրասենյակները, որոնց դռների վրա արձանագրված է. «Այստեղ կարելի է անձամբ գրել»: Նա այնպես խորամանկ է, որ կարող է խաբել մի ամբողջ վեհաժողով: Կարճ ասած՝ նա բարոյական մետիս է, նա ոչ բոլորովին ազնիվ է, ոչ կատարյալ ստահակ: Բայց սո՛ւս: Նա արդեն մենամարտել է, իսկ բարձր հասարակությունը ավելի բան չի պահանջում և նրա մասին ասում է. «Նա պատվավոր մարդ է»:

— Դեհ, իմ սիրելի, իմ հարգելի բարեկամ, ինչպե՞ս է իրեն զգում ձերդ իմացականությունը,— հարցրեց Ռաստինյակը, հենց որ անծանոթը նստեց կողքի սեղանին:

— Ոչ լավ, ոչ վատ... Աշխատանքով ծանրաբեռնված եմ:

Ես ձեռքիս տակ բոլոր անհրաժեշտ նյութերն ունեմ հույժ շահեկան պատմական հուշագրություններ կազմելու համար, բայց չգիտեմ դրանք ինչպես մատուցեմ: Դա ինձ մտատանջում է: Պետք է շտապել, մեկ էլ տեսար հուշագրությունները մոդայից կընկնեն:

— Այդ հուշագրությունները ներկայի՞ մասին են, թե անցյալի, արքունիքի՞ մասին, թե ուրիշ բանի:

— Մանյակի գործի[116] մասին:

— Մի՞թե դա հրաշք չէ,— ասաց Ռաստինյակը ծիծաղելով:

Ապա, մատնանշելով ինձ, շարունակեց.

— Պարոն դը Վալանտենը իմ բարեկամն է, ձեզ եմ հանձնարարում նրան իբրև ապագա գրական հռչակավորության: Մի ժամանակ նրա մորաքույրը, մարկիզուհի, մեծ ազդեցություն ուներ արքունիքում. նա արդեն երկու տարի է աշխատում է միապետական ոգով տոգորված հեղափոխության պատմության վրա:

Ապա, թեքվելով այս յուրատեսակ առևտրականի ականջին, ավելացրեց.

— Նա տաղանդավոր մարդ է, բայց միամիտ է. նա կարող է իր մորաքրոջ անունով ձեզ համար գրել այդ հուշագրությունները հատորը հարյուր էկյուով:

— Համաձայն եմ,— ասաց երիտասարդը, փողկապը շտկելով:— Մատուցող, ո՞ւր են իմ ոստրեները:

— Այո, բայց դուք ինձ կվճարեք քսանհինգ լուիդոր միջնորդչեք, իսկ նրան կանխիկ կտաք հատորի համար,— շարունակեց Ռաստինյակը:

— Ո՛չ, ո՛չ: Ես կանխիկ կտամ հիսուն էկյու, այսպես ավելի ապահով կլինեմ, որ ձեռագիրը շուտ կստանամ:

Ռաստինյակը շշուկով ինձ կրկնեց այդ տուրևառիկ խոսակցությունը: Ապա, չսպասելով իմ պատասխանին, հայտարարեց.

— Մենք համաձայն ենք: Ե՞րբ կարող ենք ձեզ տեսնել, որպեսզի գործը վերջացնենք:

— Դուք վաղը երեկոյան ժամը յոթին այստեղ եկեք ճաշելու:

Մենք վեր կացանք: Ռաստինյակը մատուցողին մանր դրամ նետեց, հաշիվը գրպանը դրեց, և դուրս եկանք: Ես ապշել էի այն թեթևությունից, անհոգությունից, որով նա վաճառել էր իմ հարգելի մորաքրոջը, մարկիզուհի դը Մոնբորոնին:

---

[116] **Մանյակի գործ** — նկատի ունի թագուհի Մարի Անտուանետի համար սահմանված թանկարժեք մանյակի անհետացման վերաբերյալ աղմկալի պատմությունը: Այդ գործին մասնակից էին ֆրանսիական ազնվականության և կղերականության ականավոր ներկայացուցիչները:

— Ես կնախընտրեմ Բրազիլիա գնալ և այնտեղ հնդիկներին հանրահաշիվ սովորեցնել, որից ոչինչ չեմ հասկանում, քան արատավորել իմ գերդաստանի անունը:

Ռաստինյակը քրքիջով ինձ ընդմիջեց.

— Դու հիմար ես: Նախ՝ վերցրու հիսուն էկյուն և գրիր հուշագրությունը: Երբ գործը կվերջացնես, կհրաժարվես այն տպագրել քո մորաքրոջ անունով, անմի՛տ: Տիկին դը Մոնբորոնը, որ կառափնատի վրա մեռավ, իր շքազգեստներով, իր անունով, գեղեցկությամբ, շպարումով, կոշիկներով, իհարկե, վեց հարյուր ֆրանկից ավելի արժե: Եթե հրատարակիչը քեզ չի վճարի մորաքրոջ իսկական արժեքը, կգտնի մի հին խաբեբայի կամ աղքատացած կոմսուհու, որպեսզի ստորագրել տա հուշագրությունը:

— Օ՜, ինչու ես թողեցի իմ առաքինի ձեղնախուցը,— գոչեցի ես:— Աշխարհը այնպե՜ս կեղտոտ, այնպե՜ս վարնոց կողմեր ունի:

— Դա պոեզիա է,— պատասխանեց Ռաստինյակը,— իսկ մեզ հարկավոր է գործ: Դու երեխա ես: Լսի՛ր. ինչ վերաբերում է հուշագրությանը, ապա հասարակությունը կգնահատի այն, ինչ վերաբերում է այդ գրական կավատին, ապա նա, հավանաբար, դրա վրա ծախսել է իր կյանքի ութ տարիները և իր հրատարակչական կապերի համար վճարել է դաժան փորձառություններով: Գրքի վրա աշխատանքը ձեր մեջ կբաժանվի անհավասար չափով, բայց չէ՞ որ դու կստանաս դրամի մեծ մասը: Քսանհինգ լուիդորը ավելի մեծ գումար է քեզ համար, քան հազար ֆրանկը նրա համար: Դեհ, դու կարող ես պատմական հուշեր գրել, թեկուզ դրանք արվեստի գործեր չլինեն. իսկ չէ՞ որ Դիդրոն հարյուր էկյուով վեց քարոզներ է կազմել:

— Վերջ ի վերջո,— ասացի ես բոլորովին հուզված,— դա ինձ համար անհրաժեշտություն է: Ուստի, բարեկամ, թույլ տուր շնորհակալություններս հայտնել քեզ: Քսանհինգ լուիդորը ինձ կհարստացնի...

— Ավելի կհարստացնի, քան դու կարծում ես,— պատասխանեց Ռաստինյակը ծիծաղելով,— եթե Ֆինոն ինձ վճարում է միջնորդության համար, չե՞ս գուշակում, որ դա կլինի քեզ համար: Գնանք Բուլոնյան անտառ,— հարեց նա,— այնտեղ կտեսնեք քո կոմսուհուն: Ի դեպ, ես քեզ ցույց կտամ այն սիրունիկ այրի կնոջը, որի հետ ես մտադիր եմ ամուսնանալ: Նա էլզասցի է, հիանալի կին է, բայց մի քիչ չափից ավելի գեր է: Կարդում է Կանտ, Շիլլեր, Ժան-Պոլ[117] և հիդրավլիկայի վերաբերյալ մի շարք գրքեր: Նա միշտ իմ կարծիքը հարցնելու սովորություն ունի. ես ձևացնում եմ, թե հասկանում եմ գերմանական զգայնությունը, թե ծանոթ եմ մի շարք գեղոնների, այդ քնաբեր դեղերին, որոնք ինձ արգելել է բժիշկը: Ես դեռ չեմ կարողացել նրան հրաժարեցնել իր գրական ոգևորություններից. նա հեկեկալով արտասվում է Գյոթե կարդալիս, և ես էլ ստիպված եմ լինում մի քիչ արտասվել նրա հետ, որովհետև, սիրելիս, նա ունի հիսուն հազար լիվր եկամուտ և ամենասիրուն ոտքերն ու ձեռքերը աշխարհում... Ա՜հ, եթե նա **հրեշտակը** չարտասաներ **գրեշթակ,** կատարյալ կին կլիներ:

Մենք տեսանք կոմսուհուն, որ շողշողում էր շողշողուն կառքի մեջ: Նա մեզ ողջունեց շատ սիրալիր և ինձ շնորհեց մի ժպիտ, որ այն ժամանակ ինձ թվաց աստվածային և սիրով զեղուն:

---

[117] **Ժան-Պոլ** Ռիխտեր (1763—1825) — գերմանացի ռոմանտիկ գրող:

Ա՜հ, ես շատ երջանիկ էի, ենթադրելով, որ սիրում են ինձ, ես ունեի փող և կրքի գանձեր, ես այլևս ինձ չէի համարում թշվառ: Սիրտս թեթևացել էր, ես զվարթ էի և ամեն ինչից գոհ, ուստի և գտա, որ բարեկամիս սիրուհին զմայլելի է: Ծառերը, օդը, երկինքը, ամբողջ բնությունը ասես ինձ կրկնում էին Ֆեոդորայի ժպիտը: Վերադարձի ճանապարհին մենք գնացինք Ռաստինյակի գլխարկագործի և դերձակի մոտ: Մանյակի գործը ինձ հնարավորություն ընձեռեց արգահատելի խաղաղ վիճակից անցնելու ահեղ մարտական վիճակի: Այսուհետև ես համարձակ կերպով կարող էի բարեկրթությամբ ու վայելչությամբ մրցել այն երիտասարդների հետ, որոնք պտտվում էին Ֆեոդորայի շուրջը: Ես վերադարձա տուն և փակվեցի. արտաքուստ ինձ պահեցի հանգիստ, բայց, նայելով իմ առաստաղի լուսանցույցին, ես առհավետ հրաժեշտ տվի կտուրներին: Ես արդեն ամբողջովին ապագայի մեջ էի, տեսնում էի իմ ապագա կյանքը ինչպես բեմի վրա, կանխապես վայելում էի սերը և նրա բերկրանքները: Օ, ինչքա՜ն կարող է փոթորկալի դառնալ կյանքը ձեղնախուցի չորս պատերի մեջ: Մարդկային հոգին հուշկապարիկ է. նա հարդը վերածում է ադամանդի. նրա կախարդական գավազանի տակ բացվում են հեքիաթային պալատները, ինչպես դաշտային ծաղիկները արևի տաք շնչի տակ... Հաջորդ օրը, կեսօրվա մոտ Պոլինը մեղմորեն բախեց իմ դուռը և ինձ տվեց— կարո՞ղ ես գուշակել ինչ— մի նամակ Ֆեոդորայից: Կոմսուհին ինձ խնդրում էր իրեն հանդիպել Լյուքսեմբուրգի զբոսայգում, որպեսզի միասին գնայինք թանգարան և բուսաբանական այգի:

— Գրաբերը պատասխանի է սպասում,— ասաց Պոլինը մի պահ լռությունից հետո:

Ես իսկույն գրեցի շնորհակալական մի երկտող, և Պոլինը տարավ պատասխանը: Ես սկսեցի հագնվել: Եվ ահա, երբ, ինձանից գոհ, ես արդեն վերջացնում էի իմ արդուզարդը, հանկարծ մի սառը սարսուռ զգացի, մտածելով. «Ֆեոդորան այնտեղ կառքո՞վ կգա, թե ոտքով: Անձրև կլինի՞ թե արև... Միևնույն է, ոտքով թե կառքով,— մտածեցի ես,— միթե՞ կարելի է վստահել կնոջ քմահաճ բնավորության վրա: Նա կարող է մոտը փող չունենալ, բայց հանկարծ կուզենա հարյուր սու ողորմություն տալ սավոյացի մի մանչուկի սոսկ նրա համար, որ նա սիրուն ցնցոտիներ ունի»:

Ես մոտս մանր դրամ չունեի, ես փող պետք է ստանայի միայն երեկոյան: Օ՜, երիտասարդության այդ ճգնաժամերի ժամանակ բանաստեղծը որքա՜ն թանկ է վճարում այն մտային ուժի համար, որ նա ձեռք է բերում խստամբեր կյանքով և աշխատանքով: Մի ակնթարթում բազմաթիվ վառ և ցավագին խոհեր ինձ խոցեցին, ինչպես նետեր: Ես երկինքը դիտում էի իմ լուսանցույցից, եղանակը շատ անորոշ էր: Ճիշտ է, ծայրահեղ դեպքում ես կարող էի կառք վարձել ամբողջ օրվա համար, բայց իմ երջանկության պահին ես ամեն րոպե արդյոք չէի՞ դողա այն մտքից, որ կարող է երեկոյան չհանդիպեմ Ֆինոյին: Ես իմ մեջ չէի զգում բավականաչափ ուժ, որպեսզի այդպիսի մտավախություններ կրեի ուրախությանս ժամերին: Թեև վստահ էի, որ ոչինչ չեմ գտնի, ես, այնուամենայնիվ, սկսեցի վերից վար հետախուզել իմ սենյակը. երևակայական էկյուներ փնտրեցի նույնիսկ ներքնակի մեջ, խուզարկեցի ամեն ինչ, թափ տվի նույնիսկ հին կոշիկները: Ջղագրգիռ տենդի մատնված՝ ես շուռ տվի կարասիները և նրանց մեջ նայեցի մոլորուն հայացքով: Պատկերացնո՞ւմ ես իմ ուրախությունը, երբ ես յոթերորդ անգամ բաց անելով գրասեղանի դարակը և հուսահատական անտարբերությամբ խուզարկելով այն՝ նկատեցի, որ կողքի տախտակին կպել, թաքնվել էր հարյուր սուանոց մի դրամ, մաքուր, փայլուն, շողշողուն, ինչպես նորածագ աստղը: Նրան չսաստելով իր լռության և անգթության համար, որով նա ինձանից թաքնվել էր, ես համբուրեցի այն, ինչպես

դժբախտության ժամանակ հավատարիմ բարեկամի, ես նրան ողջունեցի մի ճիչով, որին պատասխանեց արձագանքը: Ես հանկարծ շուռ եկա և տեսա Պոլինին, նա գունատվել էր:

— Ես կարծեցի, որ ձեր մի տեղը ցավացրիք,— ասաց նա հուզված ձայնով:— Գրաբերը... (Նա խոսքը ընդհատեց, ասես խեղդվում էր): Բայց մայրս վճարեց նրան,— ավելացրեց նա:

Ապա նա խույս տվեց ուրախ, մանկական ժրությամբ, ինչպես մարմնացած քմահաճույք: Խե՛ղճ աղջնակ: Ես նրան մաղթեցի այնպիսի երջանկություն, ինչպիսին գտել էի ես: Այդ պահին ես այնպիսի զգացում ունեի, որ ասես հոգուս մեջ է բովանդակ երկրային ուրախությունը, և ես ցանկանում էի դժբախտներին վերադարձնել այն բաժինը, որը, ինչպես ինձ թվում էր, ես գողացել եմ նրանցից:

Վատ նախազգացումները գրեթե երբեք մեզ չեն խաբում. Կոմսուհին ետ էր ուղարկել կառքը: Մի տեսակ քմահաճությամբ, որ սիրուն կանայք հաճախ չեն կարող բացատրել նույնիսկ իրենք իրենց, նա փափագել էր բուսաբանական այգի գնալ ոտքով, բուլվարների միջով:

— Անձրև է գալու,— ասացի ես:

Նա ուզեց ինձ հակաճառել: Բարեբախտաբար լավ եղանակ արեց, երբ մենք անցնում էինք Լյուքսեմբուրգի զբոսայգով: Բայց դեռ դուրս չէինք եկել զբոսայգուց, երբ մի ստվար ամպից, որի շարժումը հետզհետե ավելացրել էր իմ անհանգստությունը, մի քանի կաթիլ թափվեց: Մենք կառք նստեցինք: Երբ բուլվարները հասանք, անձրևը դադարեց, երկինքը նորից պարզվեց: Հասնելով թանգարան, ես ուզեցի կառքը արձակել, բայց Ֆեոդորան խնդրեց պահել: Ինչպիսի՜ մտատանջություններ: Շաղակրատել նրա հետ, զսպելով ներքին խայտանքը, որ, հավանաբար, արտահայտվում էր իմ դեմքի վրա սառած անմիտ ժպիտով. թափառել այգում, շրջագայել ստվերախիտ ծառուղիներով, զգալ, թե ինչպես նրա թևը հենվում է իմ թևին,— այս բոլորի մեջ ինչ-որ ֆանտաստիկական բան կար. դա երազ էր հարթմնի: Մինչդեռ նրա շարժումների մեջ, լինի քայլելու թե կանգնելու ժամանակ, քնքուշ և սիրային ոչինչ չկար, հակառակ իրենց առերևույթ տռփականության: Երբ ես աշխատում էի հարմարվել նրա շարժումներին, նրա մեջ զգում էի ներքին և թաքուն մի ժրություն, ինչ-որ բուռն և անհավասարակշիռ մի բան: Անհոգի կանանց շարժումներին հատուկ չէ մեղկությունը: Ահա թե ինչու մեր սրտերը համաչափ չէին բաբախում և մեր ոտքերը համաքայլ չէին ընթանում: Բառեր գոյություն չունեն երկու էակների միջև մարմնական այս աններդաշնակությունն արտահայտելու համար, որովհետև մենք դեռ չենք սովորել շարժման մեջ միտքը որսալ: Մեր բնության այս երևույթը բնազդաբար գուշակվում է, նա չի բացատրվում:

— Կրքի բորբոքումների ժամանակ,— մի պահ լռությունից հետո շարունակեց Ռաֆայելը, ասես պատասխանելով ինքն իրեն,— ես չեմ անդամահատել իմ զգայությունները, չեմ հետազոտել իմ հաճույքները, չեմ հաշվել իմ սրտի զարկերը, ինչպես ժլատը քննում ու կշռում է իր ոսկեդրամները: Օ՜, ոչ: Բայց այժմ փորձառությունն իր տխուր լույսն է սփռում անցյալ դեպքերի վրա, և հիշողությունն ինձ բերում է այս պատկերները, ինչպես պայծառ եղանակին ծովի ալիքները մեկը մյուսի հետևից ափ են նետում խորտակված նավի բեկորները:

— Դուք կարող եք շատ կարևոր մի ծառայություն մատուցել ինձ,— ասաց կոմսուհին, շփոթահար նայելով ինձ:— Սիրո նկատմամբ իմ հակակրանքը ձեզ խոստովանելուց հետո ես ինձ ավելի ազատ եմ զգում ձեր սիրալիրությունը հայցելու հանուն բարեկամության: Արդյոք

ձեր արժանիքն ավելի մեծ չի՞ լինի,— շարունակեց նա ծիծաղելով,— եթե այդ ծառայությունը մատուցեք հիմա:

Ես վշտագին նայեցի նրան: Իմ ներկայությամբ ոչինչ չզգալով, նա նենգում էր, բայց չէր սիրում. նա կարծես դեր էր խաղում, ինչպես մարզված դերասանուհին և ապա հանկարծ նրա հայացքը, ձայնը, մի բառը նորից արթնացնում էին իմ հույսերը. բայց եթե իմ աչքերը այրվում էին սիրով, նրանց ճառագայթները չէին ջերմացնում նրա հայացքը, նրա աչքերը պահում էին անայլայլ պայծառություն և մետաղյա թիթեղի պես շողում էին, ինչպես վագրի մոտ: Այդպիսի պահերին ես ատում էի Ֆեոդորային:

— Ինձ շատ կարևոր էր,— շարունակեց Ֆեոդորան շողոմ ձայնով,— որ դուքս դը Նավարրենը ինձ համար բարեխոսեր Ռուսաստանում շատ ազդեցիկ մի անձնավորության մոտ, որի միջնորդությունն ինձ անհրաժեշտ է, որպեսզի վերահաստատվի իմ օրինական իրավունքը, որից է կախված իմ վիճակը և դիրքը բարձր հասարակության մեջ. ինձ հարկավոր է, որ կայսրը ճանաչի իմ ամուսնությունը: Դուքսը ձեր ազգականն է, այնպես չէ՞: Նրա մի նամակը բավական կլիներ:

— Ես պատրաստ եմ ձեզ ծառայելու, հրամայեցեք,— ասացի ես:

— Դուք շատ սիրալիր եք,— հարեց Ֆեոդորան, սեղմելով իմ ձեռքը:— Գնանք ինձ մոտ ճաշի, ես ամեն ինչ կպատմեմ ձեզ, ինչպես խոստովանահոր:

Եվ այս այնքան կասկածամիտ, այնքան խորհրդապահ կինը, որից ոչ ոք որևէ բառ չի լսել իր գործերի մասին, ուզում էր ինձ հետ խորհրդակցել:

— Օ, հիմա ինչքա՜ն ուրախ եմ, որ դուք ինձ հրամայեցիք լռել,— բացականչեցի ես:— Բայց ես կցանկանայի էլ ավելի խիստ փորձություն:

Այդ րոպեին նա անտարբեր չմնաց իմ աչքերի մեջ երևացող արբեցության նկատմամբ և չմերժեց իմ հիացումը, ուրեմն նա սիրում էր ինձ: Մենք հասանք նրա տունը: Ի մեծ բարեբախտություն ինձ՝ իմ քսակի պարունակությունը բավականացրեց գոհացնելու կառապանին: Ես հեշտանքով անցկացրի ժամանակը նրա հետ, նրա տանը. այսպես առաջին անգամն էինք տեսակցում նրա հետ: Մինչև այդ օրը, բարձր հասարակությունը իր նեղիչ նրբակրթությամբ, իր սառը պայմանականություններով մեզ մշտապես բաժանել էր իրարից նույնիսկ նրա ճոխ ճաշկերույթների ժամանակ. այս անգամ ես նրա հետ ինձ զգացի այնպես, ասես մենք ապրում էինք մի հարկի տակ, ասես ես տիրացել էի նրան: Իմ բոցավառ երևակայությունը փշրում էր կապանքները, ուզածիս պես էր դասավորում դեպքերը, ինձ սուզում էր երջանիկ սիրո երանության մեջ: Ես ինձ պատկերացնում էի նրա ամուսինը և հրճվում էի, երբ նրան զբաղեցնում էին զանազան մանր-մունր բաներ. ինձ համար նույնիսկ երջանկություն էր տեսնել, թե ինչպես է նա հանում ուսածածկոցն ու գլխարկը: Մի րոպե նա ինձ մենակ թողեց և, վարսերը հարդարելով, վերադարձավ. նա հմայիչ էր: Եվ այդպիսին ուզում էր լինել ինձ համար: Ճաշի ժամանակ նա իմ հանդեպ չափազանց ուշադիր եղավ, նրա անհուն թովչանքը երևաց ամեն տեսակ փցուն բաների մեջ, որոնք չնչին են թվում և սակայն կյանքի կեսն են կազմում: Երբ մենք երկուսով նստեցինք մետաքսապատ բազկաթոռների վրա, ճարճատող կրակարանի մոտ, արևելյան շքեղության լավագույն հնարանքների միջև, երբ ես այնքան մոտից էի տեսնում այս կնոջ, որի փառահեղ գեղեցկությունը բաբախեցրել էր

այնքան սրտեր, երբ այս դժվարամատչելի կինը խոսում էր ինձ հետ, ցուցաբերելով իր բովանդակ պչրանքը,— իմ հեշտալի երանությունը դարձավ գրեթե տանջալի: Ի դժբախտություն իմ, ես հիշեցի, որ կարևոր գործ ունեի վերջացնելու և որոշեցի գնալ երեկ նշանակված ժամադրությանը:

— Ի՞նչ: Արդե՞ն,— ասաց կոմսուհին, տեսնելով որ ես վերցնում եմ գլխարկս:

Նա ինձ սիրում էր: Ես գոնե այդպես կարծեցի, երբ լսեցի այն փաղաքուշ ձայնը, որով նա արտասանեց այդ երկու բառերը: Երկարացնելու համար իմ զմայլանքը, ես հաճույքով կտայի իմ կյանքի երկու տարին յուրաքանչյուր ժամվա համար, որ նա բարեհաճել էր ինձ շնորհել: Դրամները, որ ես կորցրել էի, աճեցրին իմ երջանկությունը: Արդեն կեսգիշեր էր, երբ նա արձակեց ինձ: Սակայն առավոտյան իմ հերոսությունը ինձ պատճառեց մեծ մտատանջություններ. ես վախենում էի ձեռքից բաց թողնել հուշագրությունների գործը, որ այնքան կենսական էր ինձ համար. ես շտապ գնացի Ռաստինյակի մոտ, և մենք դեռ անկողնում գտանք նրան, որի անունով պետք է հրատարակվեին իմ ապագա աշխատանքները: Ֆինոն ինձ կարդաց հակիրճ պայմանագիրը, ուր ոչ մի խոսք չկար իմ մորաքրոջ մասին, մենք ստորագրեցինք այն, և Ֆինոն ինձ հաշվեց հիսուն էկյու: Մենք նախաճաշ արինք երեքով: Ես գնեցի նոր գլխարկ, վաթսուն ճաշի համար մուծեցի երեսուն սու, վճարեցի իմ պարտքերը, և ինձ մնաց ընդամենը երեսուն ֆրանկ. մի քանի օրով հարթված էին կյանքի բոլոր դժվարությունները: Եթե լսեի Ռաստինյակին և համարձակ կերպով ընդունեի **անգլիական սիստեմը**, ես կարող էի գանձեր ունենալ: Նա ուզում էր, որ ես վարկ ձեռք բերեմ և փոխառություններ կնքեմ. նա հավատացնում էր, որ փոխառությունները ամրացնում են վարկը: Նրա կարծիքով, ապագան ամենախոշոր և ամենահաստատուն կապիտալն է բոլոր կապիտալներից: Եվ գրավ դնելով իմ ապագա նվաճումները, նա իր դերձակին հանձնարարեց նոր զգեստ կարել ինձ համար, որովհետև նա հասկանում էր, թե ինչ է **երիտասարդը**, և պատրաստ էր ինձ չանհանգստացնել մինչև իմ ամուսնությունը: Այդ օրվանից ես թողեցի ուսումնականի վանական կյանքը, որ վարել էի երեք տարի: Ես դարձա Ֆեոդորայի մշտական այցելուն և աշխատեցի արտաքինով գերազանցել նրա մոտ հաճախող լպիրշներին կամ շրջանակի հերոսներին: Ենթադրելով, որ ընդմիշտ ազատվել եմ կարիքից, ես հիմա բարձր խավի շրջանակներում ինձ զգում էի անկաշկանդ, ջախջախում էի իմ մրցակիցներին և համարվում էի հմայիչ, անդիմադրելի հրապուրիչ մարդ: Սակայն փորձված մարդիկ իմ մասին ասում էին. «Այսպիսի սրամիտը կրքեր կունենա միայն գլխում»: Նրանք ողորմածաբար գովում էին իմ խելքը ի հաշիվ զգացականության: «Նա երջանիկ է, որ չի սիրում,— գոչում էին նրանք:— Եթե նա սիրեր, մի՞թե այդպիսի զվարթություն, ավյուն կունենար»: Մինչդեռ ես, ինչպես իսկական սիրահարված, ծայրահեղ հիմար էի Ֆեոդորայի ներկայությամբ: Երբ մենակ էի լինում նրա հետ, չգիտեի ինչ ասեի, իսկ եթե խոսում էի, վատ էի խոսում սիրո մասին. ես ողբալի էի իմ զվարթության մեջ, ինչպես պալատականը, որ ուզում է ծածկել իր սոսկալի վրդովմունքը: Մի խոսքով, ես աշխատում էի անհրաժեշտ դառնալ նրա կյանքի համար, նրա երջանկության համար, նրա սնափառության համար, մշտապես նրա մոտ, ես դարձել էի նրա գերին, խաղալիքը, միշտ պատրաստ էի նրան ծառայելու: Այսպես վատնելով իմ օրը, ես վերադառնում էի տուն և, ամբողջ գիշերն աշխատելով, քնում էի միայն առավոտյան դեմ երկու-երեք ժամ: Սակայն ես Ռաստինյակի պես վարժված չլինելով անգլիական սիստեմին, շուտով մնացի առանց փողի: Այն ժամանակ, իմ սիրելի բարեկամ, ինձ համար, անբախտ ինքնահավանի, անփող պճնասերի, անանուն

սիրահարի համար, նորից սկսվեց անապահով կյանքը. ես նորից ընկա կարիքի մեջ, այն սառն և խոր կարիքի, որ խնամքով պարտակվում է շքեղության խաբուսիկ երևույթի տակ: Ես նորից ապրեցի իմ նախկին տանջանքները, բայց նվազ սրությամբ. հավանաբար, ես արդեն սովոր էի նրանց ահավոր նոպաներին: Կարկանդակներն ու թեյը, որոնք այնքան ժլատորեն են հրամցվում հյուրասրահներում, հաճախ լինում էին իմ միակ սնունդը: Երբեմն կոմսուհու ճոխ ճաշկերույթները երկու օր պահում էին ինձ: Իմ ամբողջ ժամանակը, ջանքերը և դիտողունակությունն օգտագործում էի, որպեսզի ավելի թափանցեմ Ֆեոդորայի անըմբռնելի բնավորության խորքը: Մինչև հիմա իմ դատողության վրա ազդել էր հույսը կամ հուսալքումը. ես հանձին նրա տեսնում էի մերթ ամենակրքոտ կնոջ, մերթ իր սեռի ամենաանզգա ներկայացուցչին, բայց ուրախության և տխրության այս փոփոխականությունները դարձան անհանդուրժելի. ես ուզեցի ելք գտնել այս ահավոր պայքարից, ես ուզեցի սպանել իմ սերը: Երբեմն մռայլ լույսեր էին վառվում իմ հոգում. և այն ժամանակ ես մեր միջև տեսնում էի անդունդը: Կոմսուհին արդարացնում էր իմ բոլոր երկյուղները. ես արցունք դեռ չէի նկատել նրա աչքերում: Թատրոնում հուզիչ մի տեսարանի ժամանակ նա մնում էր սառը և ծիծաղկոտ: Իր մտքի ամբողջ նրբությունը նա պահել էր իր համար և ամենևին չէր գուշակում ուրիշի ուրախությունը կամ վիշտը: Մի խոսքով, նա ինձանով խաղում էր: Ուրախանալով, որ կարող եմ զոհողություն անել նրա համար, ես գրեթե նվաստացա նրա պատճառով, երբ գնացի իմ ազգականի՝ դուքս դը Նավարրենի մոտ, եսասեր մի մարդու, որ ամաչում էր իմ աղքատությունից և ատում էր ինձ, որովհետև մեծ անիրավություններ էր գործել իմ հանդեպ: Դուքսը ինձ ընդունեց այն պաղ քաղաքավարությամբ, որ խոսքերին և շարժումներին ինչ-որ վիրավորական բան է տալիս: Նրա անհանգիստ նայվածքը իմ կարեկցությունը շարժեց. նրա փոխարեն ես ամաչեցի, որ նա այնքան ճղճիմ էր իր մեծության մեջ, այնքան խղճուկ՝ իր պերճության մեջ: Նա սկսեց խոսել այն վնասների մասին, որ կրել է երեքտոկոսանոց փոխառությունից. այն ժամանակ ես ասացի, թե ինչ է իմ այցելության նպատակը: Փոփոխությունը նրա վերաբերմունքի, որ սառնից աստիճանաբար դարձավ սիրալիր, ինձ զզվեցրեց: Եվ հետո, բարեկամս, նա եկավ կոմսուհու մոտ և ինձ ոչնչացրեց: Ֆեոդորան գտավ նրա համար անհայտ հմայքներ ու հրապույրներ. նա դուքսին առինքնեց և առանց իմ մասնակցության կարգադրեց իր խորհրդավոր գործը, որի մասին ես ոչինչ էլ չիմացա: Ես սոսկ միջոց էի ծառայել Ֆեոդորայի համար… Երբ իմ ազգականը նրա մոտ էր լինում, նա կարծես ինձ չէր նկատում և գուցե ընդունում էր նվազ հաճույքով, քան այն օրը, երբ ես նրան ներկայացա: Մի անգամ երեկոյան նա դուքսի առջև ինձ նվաստացրեց այնպիսի շարժումով և նայվածքով, որ ոչ մի խոսքով կարելի չէ նկարագրել: Ես լալով դուրս եկա, վրեժխնդրության ծրագիրներ կազմեցի, ահավոր բռնության տեսակներ մտաբերելով… Հաճախ ես Ֆեոդորայի հետ գնում էի Իտալական օպերային թատրոն, այնտեղ, նրա կողքին, իմ ամբողջ էությամբ հանձնված սիրույն, ես դիտում էի նրան, անձնատուր լինելով երաժշտության թովչանքին, հոգիս սպառելով սիրելու և սրտիս խլրտումները հմտորեն արտահայտված երաժշտական ֆրազների մեջ գտնելու կրկնակ հաճույքից: Իմ կիրքը օդի մեջ էր, բեմի վրա. նա իշխում էր ամեն տեղ, միայն ոչ իմ տիրուհու սրտում: Ես բռնում էի Ֆեոդորայի ձեռքից և, նայելով նրա դիմագծերին, նրա աչքերին անձկում էի զգացումների այդ միաձուլման, այն հանկարծական ներդաշնակության, որ երբեմն առաջ է բերում երաժշտությունը, թրթռացնելով հոգիները միասնաբար. բայց նրա ձեռքը ոչինչ չէր պատասխանում, և աչքերը ոչինչ չէին ասում: Երբ իմ դիմագծերից բխող սրտիս բոցը շատ ուժեղ էր խփում նրա աչքերին, նա ինձ շնորհում էր պաղ մի ժպիտ, այն պայմանական ժպիտը, որ վերարտադրվում է բոլոր սալոնային

դիմանկարներում: Նա չէր լսում երաժշտությունը: Ռոսսինիի, Չիմարոզայի, Ցինգարելլիի աստվածային էջերը նրա մեջ ոչ մի զգացում չէին առաջացնում, ոչ մի բանաստեղծական հույզ չէին արթնացնում. նրա հոգին ամուլ էր: Ֆեոդորան ինքը տեսարան էր տեսարանի մեջ: Նրա դիտակը անընդհատ ուղղվում էր օթյակից օթյակ: Միշտ անհանգիստ, թեև արտաքուստ հանդարտ, նա մոդայի զոհն էր, նրա օթյակը, գլխարկը, կառքը, սեփական անձը նրա համար ամեն ինչ էին: Հաճախ կարելի է հանդիպել վիթխարի կերպարանքով մարդկանց, որոնց բրոնզե մարմնի մեջ բաբախում է գորովալի ու քնքուշ սիրտ, իսկ Ֆեոդորան փխրուն և նուրբ պատյանի տակ ծածկում էր բրոնզե սիրտ: Իմ ճակատագրական գիտությունը շատ քողեր էր պատռում նրանից: Եթե բարեկրթությունը կայանում է ուրիշի համար իրեն մոռանալու, ձայնի և շարժումների մեջ մշտապես մեղմություն պահելու, զրուցակցին հաճելի լինելու և նրան գոհ թողնելու մեջ, ապա Ֆեոդորան, չնայած իր խորամանկության, չէր կարողացել ջնջել իր ռամկական ծագման հետքերը. նրա ինքնամոռացությունը կեղծ էր, նրա վարվելաձևերը բնածին չէին, այլ փութաջանությամբ ձեռք բերված, վերջապես, նրա սիրալիրությունը ինչ-որ ստրկահոգություն էր հիշեցնում: Եվ սակայն, նրա մերձավորները նրա մեղրածոր խոսքերն ընդունում էին իբրև բարության արտահայտություն, իսկ նրա հավակնոտ չափազանցությունները՝ իբրև ազնիվ ոգևորություն: Միմիայն ես էի ուսումնասիրել նրա ծամածռությունները, երևան հանել նրա ներքին էությունը այն նուրբ թաղանթի տակից, որով բավականանում է բարձր հասարակությունը. ես այլևս չէի կարող խաբվել նրա ծեքծեքումներից, ես խորապես ճանաչում էի նրա կատվային հոգին: Երբ ապուշի մեկը նրան հաճոյախոսություններ էր անում, նրան գովաբանում էր, նրա տեղը ես էի ամաչում: Այդ բոլորով հանդերձ ես սիրում էի նրան: Ես հույս ունեի հալեցնել այդ սառույցը բանաստեղծի սիրո թևերի ներքո: Եթե ես թեկուզ մի անգամ կարողանայի բաց անել նրա սիրտը կանացի գորովանքի համար, եթե ես նրան հաղորդակից դարձնեի սիրո վսեմ զոհաբերություններին, նա ինձ համար կդառնար կատարյալ, կդառնար հրեշտակ: Ես սիրում էի նրան, սիրում էի որպես տղամարդ, որպես տարփածու, որպես արվեստագետ, մինչդեռ նրան տիրելու համար հարկավոր էր չսիրել նրան. պարծենկոտ, սառնասիրտ և հաշվագետ մի մարդ գուցե կնվաճեր նրան: Լինելով սնապարծ, ոչ անկեղծ կին, նա, իհարկե, կարող էր լսել սնափառության ձայնը, ընկնել խարդավանքի ցանցերի մեջ. նա կենթարկվեր չոր և սառնասիրտ մի տղամարդու: Իմ սիրտը տանջվում էր սուր ցավից, երբ նա միամտորեն ցուցաբերում էր իր եսասիրությունը: Ես նախատեսում էի, որ մի օր նա կյանքում մենակ կգտնվի իր վշտի հետ, չի իմանա, թե ում մեկնի ձեռքը, չի հանդիպի բարեկամական հայացքի, որ սփոփի նրան: Մի օր երեկոյան ես համարձակություն ունեցա վառ գույներով նրան նկարելու նրա մենավոր, ունայն և տխուր պառավությունը: Խաբված բնության ահավոր վրեժխնդրության այդ պատկերը նրան ստիպեց բիրտ խոսքեր ասել:

— Ես միշտ հարուստ կլինեմ,— ասաց նա։— Իսկ ոսկով մենք միշտ կկարողանանք մեր շուրջը գտնել այն զգացումները, որոնք անհրաժեշտ են բարեկեցության համար:

Ես դուրս եկա ասես շանթահարված այս շքեղության տրամաբանությունից, այս կնոջից, այս հասարակությունից, ինձ պախարակելով իմ հիմար կռապաշտության համար: Ես չէի սիրում Պոլինին նրա աղքատության պատճառով, բայց մի՞թե հարուստ Ֆեոդորան իրավունք չուներ մերժելու Ռաֆայելին: Մեր խիղճը անսխալական դատավոր է, քանի դեռ չենք սպանել նրան: «Ֆեոդորան ոչ ոքի չի սիրում և ոչ ոքի չի մերժում,— աղաղակում էր ինձ իմաստակ մի ձայն,— նա ազատ է, իսկ մի ժամանակ անձնատուր է եղել ոսկուն: Ռուս կոմսը, հոմանի լինի թե

ամուսին, տիրացել է նրան: Այդ կինը կյանքում դեռ կհանդիպի փորձությունների: Սպասիր»: Ոչ արդար, ոչ մեղավոր, այդ կինը ապրում էր մարդկությունից հեռու՝ իրեն հատուկ ոլորտում, ուր ոչ դժոխք էր, ոչ դրախտ: Սնդուսով և ժանյակներով պճնված այս կանացի խորհուրդը խաղում էր իմ սրտի բոլոր մարդկային զգացումներով՝ հպարտությամբ, փառասիրությամբ, սիրով, հետաքրքրությամբ... Մոդայի քմահաճույքով, թե ինքնատիպ երևալու մարմաջով, որ ունենում ենք մենք բոլորս, շատերն այն ժամանակ բռնված էին բուլվարային մի փոքրիկ թատրոն գովելու մտագարությամբ: Կոմսուհին փափագ հայտնեց տեսնելու ալյուրով շպարված մի դերասանուհու, որ հաճույք էր պատճառում մի քանի խելամիտ մարդկանց, և ես պատիվ ունեցա նրան տանելու մի ինչ-որ հոռի զավեշտախաղի առաջին ներկայացմանը: Օթյակը արժեր ընդամենը հարյուր սու, բայց ես մի սու անգամ չունեի: Ինձ մնացել էր դեռ գրելու կես հատոր հուշագրություն, և ես չէի համարձակվում օգնություն մուրալ Ֆինոյից, իսկ Ռաստինյակը, իմ բարերարը, բացակայում էր: Դրամական նեղությունները մշտապես թունավորում էին իմ կյանքը: Մի անգամ, երբ մենք տեղատարափ անձրևի տակ դուրս էինք գալիս Իտալական թատրոնից, Ֆեոդորան ինձ հրամայեց կառք վարձել, և ես ոչ մի կերպ չկարողացա խուսափել նրա ցուցադրական պարտադրանքից. նա չընդունեց իմ ոչ մի պատճառաբանությունը, ոչ այն, որ ինձ համար հաճելի է անձրևը, ոչ էլ այն, որ ուզում եմ խաղատուն գնալ: Իմ դրամազրկությունը նա չէր կռահում ոչ իմ շփոթությունից, ոչ էլ իմ տխուր կատակներից: Աչքերս արյունով էին լցվում, բայց նա արդյոք բան հասկանո՞ւմ էր իմ հայացքից: Երիտասարդների կյանքը ենթակա է քմահաճ դիպվածների: Գնալու ժամանակ, կառանվի յուրաքանչյուր պտույտ իմ մեջ ծնում էր նոր մտքեր, որոնք այրում էին սիրտս. ես փորձեցի կառքի հատակի տախտակը ջարդել, որպեսզի դուրս սողոսկեմ սալահատակի վրա, բայց դա հնարավոր չեղավ, և ինձ վրա եկավ ջղաձիգ մի ծիծաղ, որին հետո փոխարինեց շղթայակապ մարդու մռայլ և բութ հանգստությունը: Տուն հասնելով, երբ սկսեցի բառեր թոթովել, Պոլինը ինձ ընդմիջեց.

— Եթե ձեզ մոտ դրամ չունեք…

— Ա՜հ, Ռոսսինիի երաժշտությունը ոչինչ էր այս բառերի մոտ: Բայց վերադառնանք Ֆյունամբյուլի թատրոն: Որպեսզի հնարավորություն ունենամ կոմսուհուն ուղեկցելու, ես որոշեցի գրավ դնել մորս նկարի ոսկե շրջանակը: Թեև գրավատունը իմ մտքում միշտ պատկերացել է իբրև բանտ տանող դռներից մեկը, այսուհանդերձ ավելի լավ էր ունեցածս անձամբ այնտեղ տանեի, քան ողորմություն խնդրեի: Ինչպիսի՜ ցավ է պատճառում հայացքն այն մարդու, որից դուք փող եք խնդրում: Որոշ փոխառություններ արժեն մեր պատիվը, այնպես ինչպես բարեկամական բերանից դուրս եկած որոշ մերժումներ մեր միջից վերացնում են վերջին պատրանքը: Պոլինը աշխատում էր, իսկ մայրը արդեն պառկել էր: Թռուցիկ մի հայացք նետելով մահճակալի վրա, որի վարագույրները թեթևակի բարձրացված էին, ես ենթադրեցի, որ տիկին Գոդենը խոր քնի մեջ է. ստվերի մեջ, բարձի վրա, որոշակի երևում էր նրա հանդարտ և գունատ կիսադեմքը:

— Դուք հուզվա՞ծ եք, ինչ է,— հարցրեց Պոլինը, վրձինը դնելով ներկամանի վրա:

— Աղջիկս, դուք կարող եք մի մեծ ծառայություն մատուցել ինձ,— պատասխանեցի ես:

Նա ինձ նայեց այնպիսի երանավետ արտահայտությամբ, որ ես սարսռացի:

«Արդյոք նա սիրո՞ւմ է ինձ»,— մտածեցի ես:

— Պոլին...— ասացի ես նորից։

Ես նստեցի նրա կողքին, որպեսզի ավելի լավ դիտեմ նրան։ Նա հասկացավ ինձ, այնքան հետազոտիչ էր իմ ձայնի տոնը. նա իջեցրեց աչքերը. և ես ակնապիշ նայեցի նրան, ենթադրելով, որ կկարողանամ կարդալ նրա սիրտը, ինչպես իմ սիրտը, այնքան միամիտ և վճիտ էր նրա դեմքի արտահայտությունը։

— Դուք ինձ սիրո՞ւմ եք,— հարցրի ես։

— Մի քիչ... ջերմորեն... ամենևին ոչ,— բացականչեց նա։

Ոչ, նա ինձ չէր սիրում։ Նրա կատակախոս տոնի և հմայիչ շարժումների մեջ երևում էր սոսկ երախտագիտությունը չարաճճի դեռատի աղջկա։ Ես նրան հայտնեցի իմ դրամական նեղությունը, իմ տագնապալի վիճակը և խնդրեցի օգնել ինձ։

— Ինչպես թե, պարոն Ռաֆայել,— ասաց Պոլինը։— Դուք չեք ուզում գրավատուն գնալ, բայց ինձ ուղարկում եք։

Ես կարմրեցի, շփոթված երեխայի տրամաբանությունից։ Նա բռնեց իմ ձեռքից, ասես ուզելով փաղաքշանքով մեղմացնել իր բացականչության անմիջականությունը։

— Ես, իհարկե, կգնայի այնտեղ, բայց դրա կարիքը չկա,— ասաց նա։— Այս առավոտ ես ձեզ մոտ գտա հարյուր սուանոց երկու դրամ, որոնք ընկել էին դաշնամուրի հետևը, և դուք չէիք նկատել։ Ես դրանք դրի ձեր սեղանի վրա։

— Դուք շուտով փող կստանաք, պարոն Ռաֆայել,— ասաց Պոլինի բարի մայրիկը, գլուխը դուրս հանելով վարագույների արանքից։— Առայժմ ես կարող եմ ձեզ մի քանի էկյու փոխ տալ։

— Պոլին,— գոչեցի ես, սեղմելով նրա ձեռքը,— ես շատ կցանկանայի հարուստ լինել։

— Եվ ինչո՞ւ,— հարցրեց Պոլինը աշխույժով։

Նրա ձեռքը դողում էր իմ ձեռքի մեջ, պատասխանելով իմ սրտի ամեն մի զարկին. նա արագ ետ քաշեց ձեռքը և նայեց իմ ափին։

— Դուք կամուսնանաք հարուստ մի կնոջ հետ, բայց նա ձեզ շատ վիշտ կպատճառի... Ա՜հ, աստված իմ, նա ձեզ կխորտակի։ Ես վստահ եմ դրանում։

Պոլինի ձայնի մեջ մի տեսակ հավատ կար դեպի իր մոր անմիտ գուշակությունները։

— Դուք շատ դյուրահավատ եք, Պոլին։

— Դեհ, իհարկե, այն կինը, որին դուք սիրելու եք, ձեզ կխորտակի, — ասաց Պոլինը, սարսափահար նայելով ինձ։

Սաստիկ հուզված՝ նա նորից վերցրեց վրձինը, թաթախեց ներկի մեջ և այլևս ինձ չնայեց։ Այդ միջոցին ես շատ կուզենայի հավատալ քիմեռական նշաններին։ Մարդ լիովին դժբախտ չի լինում, երբ սնահավատ է։ Սնահավատությունը հաճախ ոչ այլ ինչ է, եթե ոչ հույս։ Մտնելով իմ սենյակը, ես, իրոք, տեսա երկու պատվական էկյու, որոնց երևալը անհասկանալի թվաց

ինձ: Քնահարության մեջ ես աշխատեցի ստուգել իմ ծախսերը, որպեսզի գտնեմ այդ անսպասելի գյուտի բացատրությունը, բայց վերջ ի վերջո քնեցի, խճճվելով ապարդյուն հաշիվների մեջ: Մյուս առավոտ Պոլինը ինձ մոտ եկավ ճիշտ այն պահին, երբ ես պատրաստվում էի դուրս գալ օթյակի տոմս առնելու:

— Դուք, գուցե, տասը ֆրանկ էլ չունեք,— շառագունելով ասաց բարի և համակրելի աղջիկը,— մայրս ինձ հրամայեց ձեզ հանձնել այս փողերը... վերցրեք, վերցրեք:

Նա երեք էկյու դրեց սեղանիս վրա և ուզեց փախչել, բայց ես կանգնեցրի նրան: Հիացումս ցամաքեցրեց աչքերիցս հոսող արցունքները:

— Պոլին,— ասացի ես,— դուք հրեշտակ եք: Այս փոխատվությունն ինձ նվազ է հուզում, քան այն ամոթխածության զգացումը, որով դուք ինձ առաջարկում եք այն: Ես տենչում էի հարուստ, վայելչագեղ, տիտղոսավոր մի կին: Ավա՜ղ, ես հիմա կփափագեի միլիոններ ունենալ և հանդիպել ձեզ պես աղքատ և ձեզ պես սրտով հարուստ մի դեռատի աղջկա. ես կհրաժարվեի ճակատագրական կրքից, որ սպանելու է ինձ: Գուցե կիրականանա ձեր զուշակությունը:

— Բավական է,— ասաց Պոլինը:

Նա փախավ, և նրա սոխակի ձայնի հնչուն գեղգեղանքները լսվեցին սանդուղքի վրա:

«Նա երջանիկ է, որ դեռ չի սիրել»,— ասացի յուրովի, խորհելով այն մտատանջությունների մասին, որ կրում էի մի քանի ամսից ի վեր:

Պոլինի տասնհինգ ֆրանկը ինձ համար շատ հարգի եղան: Ֆեոդորան մտածելով, որ ռամիկ դասի գարշահոտությունները անպակաս կլինեն այն սրահում, ուր մենք պետք է անցկացնեինք մի քանի ժամ, ափսոսաց, որ մի ծաղկեփունջ չունի. ես գնացի նրա համար ծաղիկներ բերելու, ես նրան բերեցի իմ կյանքն ու հարստությունը: Ես միաժամանակ և ուրախացա, և խղճի խայթ զգացի, երբ նրան ընծայեցի ծաղկեփունջը, որի գինը ինձ ցույց տվեց, թե որքան կործանարար է հասարակության մեջ ընդունված ձևական կնահաճությունը: Շուտով Ֆեոդորան գանգատվեց մեքսիկական մի հասմիկի շատ բարկ բույրից, նա նողկանք զգաց, երբ նայեց հանդիսասրահին, երբ նստեց կոշտ նստարանի վրա. նա ինձ կշտամբեց, որ իրեն այստեղ եմ բերել: Թեև նա իմ քով էր նստել, բայց և այնպես ուզեց հեռանալ. նա հեռացավ: Գիշերներն անքուն մնա՜լ, կյանքի երկու ամիսները վատնե՜լ և նրան չհաճոյանա՜լ: Դեռ երբեք այդ դևը չէր եղել այդքան զմայլելի և այդքան անզգամ: Ճանապարհին, նրա կողքին նստելով անձուկ կառքի մեջ, ես զգում էի նրա շունչը, հպում էի նրա անուշահոտ ձեռնոցին, հայտնապես տեսնում էի նրա գեղեցկության գանձերը. զգում էի հիրիկի բուրմունքի պես քաղցր բուրմունքը — նա համակ կին էր և ամենևին ոչ կին: Եվ հանկարծ մի ակնթարթում ինձ համար լուսավորվեցին այդ խորհրդավոր կյանքի խորությունները: Ես հիշեցի մի բանաստեղծի վերջերս հրապարակած գիրքը[118], ուր ճշմարիտ գեղարվեստական

[118] **Ես հիշեցի մի բանաստեղծի... գիրքը** — նկատի ուներ Անրի Լատուշի «Ֆրագոլետտա» վեպը, որի մեջ գործող անձերից մեկը որձևէգ է:

մտահղացումը իրականացված էր Պոլիկլետի[119] արվեստով: Ինձ թվում էր, թե ես տեսնում եմ այդ հրեշին, որը, մերթ սպայի կերպարանքով սանձահարում էր ամեհի ձիուն, մերթ ջահել աղջկա կերպարանքով պճնազարդվում էր, մերթ հուսահատեցնում էր իր հոմանիներին, մերթ հոմանիի կերպարանքով հուսահատեցնում էր գրգասուն և համեստ մի կույսի: Չկարողանալով ուրիշ կերպ հասկանալ Ֆեոդորային, ես նրան պատմեցի այս մտացածին պատմությունը, բայց նա անհավատալի այդ ստեղծագործության մեջ չտեսավ որևէ նմանություն իր կյանքի հետ և միայն մաքուր սրտով զվարճացավ նրանով, ինչպես «Հազար ու մեկ գիշերներ»-ի հեքիաթով:

«Հավանաբար որևէ խորհրդավոր հանգամանք Ֆեոդորային ուժ է տալիս դիմադրելու ինձ պես մի երիտասարդի սիրույն, դիմադրելու գեղեցիկ հոգեկան հիվանդության վարակիչ ջերմության,— ասում էի յուրովի՝ տուն վերադառնալիս։— Գուցե նա, լեդի Դելակուրի նման, հյուծվո՞ւմ է քաղցկեղից: Անշուշտ նրա կյանքում ինչ-որ արվեստակյալ բան կա»:

Այս մտքերից ես փշաքաղվեցի: Ապա հղացա շատ անխոհեմ և միաժամանակ շատ խելացի մի ծրագիր, ինչպիսին կարող է երբևէ մտածել սիրահարը: Ուսումնասիրելու համար այս կնոջը մարմնապես, ինչպես նրան ուսումնասիրել էի հոգեպես, վերջապես՝ նրան ճանաչելու համար ամբողջապես, ես որոշեցի մի գիշեր անցկացնել նրա ննջասենյակում, առանց նրա գիտության: Ահա թե ինչպես իրագործեցի այդ մտադրությունը, որ լափում էր իմ հոգին, ինչպես վրեժխնդրության ծարավը կրծում է կորսիկացի վանականի սիրտը: Ընդունելության օրերին Ֆեոդորայի մոտ այնպիսի հոծ բազմություն էր հավաքվում, որ դռնապանը չէր կարող հետևել, թե ինչքան մարդ է եկել և ինչքան գնացել: Վստահ լինելով, որ կկարողանամ տանը մնալ առանց նկատվելու, ես անհամբերությամբ սպասեցի կոմսուհու մոտ տեղի ունենալիք առաջիկա երեկույթին: Հագուստներս հագնելով, ես բաճկոնակիս գրպանը դրի անգլիական մի զմելի, որովհետև դաշույն չունեի: Եթե այդ գրենական պիտույքը գտնվեր իմ վրա, նա ոչ մի կասկած չէր առաջացնի, և որովհետև չգիտեի, թե ինձ ուր կհասցնի իմ ռոմանտիկական դիտավորությունը, ես ուզեցի զինված լինել:

Երբ սրահներն սկսեցին լցվել, ես գնացի ննջասենյակ, որպեսզի ամեն ինչ հետաքննեի այնտեղ, և տեսա, որ փեղկերը փակ էին. սկիզբը հաջող էր: Քանի որ սպասուհին կարող էր գալ պատուհանների վարագույրները քաշելու համար, ես ինքս բաց արի դրանք. ես ինձ մեծ վտանգի էի ենթարկում, հանդգնելով տնարարությամբ զբաղվել սպասուհուց առաջ, սակայն, հանգիստ կերպով կշռելով իմ դրության առաջբերելիք վտանգը, ես չխուսափեցի դրանից: Կեսգիշերվա մոտ ես թաքնվեցի պատուհանի խոռոչի մեջ: Որպեսզի ոտքերս չերևային, փորձեցի պատին հենվելով և պատուհանի սողնակից կառչելով բարձրանալ շրջանակի հատակի վրա: Ուսումնասիրելով իմ հավասարակշռության պայմանները և հենման կետերը, չափելով վարագույրներն ինձանից բաժանող տարածությունը, ես, ի վերջո, այնքան ընտելացա իմ դրության դժվարություններին, որ կարող էի այնտեղ մնալ առանց հայտնաբերվելու, եթե ինձ չմատնեին ջղաձգությունները, հազը կամ փռշտոցը: Իզուր չհոգնելու համար, ես կանգնեցի հատակի վրա, սպասելով այն տագնապալի պահին, երբ պետք է կախված մնայի, ինչպես սարդը ոստայնի վրա: Սպիտակ վիտակե ու մարմաշե

---

[119] **Պոլիկլետ**— IV դարի (մ. թ. ա.) հույն քանդակագործ, որին սխալմամբ երկար ժամանակ վերագրվել է Լուվրում պահված Որձևէգի արձանը:

վարագույրները իմ առջև կազմում էին երգեհոնի խողովակների նման ստվար ծալքեր, որոնց մեջ իմ զմելիով ծակեր բաց արի և նրանցից, ինչպես որմնաձերպերից, կարողացա դիտել ամեն ինչ: Սրահներից շփոթ կերպով հասան հյուրերի խոսակցությունները, ծիծաղներն ու բացականչությունները: Այդ անորոշ ժխորն ու խուլ խլրտյունը աստիճանաբար մեղմացան: Մի քանի տղամարդիկ եկան իրենց գլխարկները վերցնելու կոմսուհու պահարանից, որ դրված էր իմ կողքին: Երբ նրանք դիպչում էին վարագույրներին, ես դողում էի, մտածելով ցրվածության, պատահական շարժումների մասին, որոնք հնարավոր են այն մարդկանց մոտ, որոնք շտապ-շտապ փնտրում են ամեն տեղ: Չհանդիպելով այդպիսի անախորժությունների, ես նախազգում էի իմ ծրագրի հաջողությունը: Վերջին գլխարկը տարավ Ֆեոդորային սիրահարված մի ծերունի, որը, իրեն մենակ կարծելով, նայեց մահճակալին և ծանր հառաչ արձակեց, բավական ուժգին մի բացականչությամբ հանդերձ: Կոմսուհու մոտ, իր ննջասենյակին կից զարդասենյակում, դեռ մնացել էին հինգ կամ վեց բարեկամ մարդիկ, որոնց նա թեյ առաջարկեց: Եվ իսկույն բամբասանքը — միակը, որին արդի հասարակությունը դեռ ընդունակ է հավատալու— միախառնվեց սուր հեգնաբանություններին, սրամիտ դատողություններին, բաժակների և գդալների զրնգոցին: Ռաստինյակը, չխնայելով իմ մրցակիցներին, բուռն ծիծաղներ էր առաջացնում իր խայթիչ սրախոսություններով:

— Պարոն դը Ռաստինյակը մի մարդ է, որի հետ չպետք է գժտվել,— ասաց կոմսուհին ծիծաղելով:

— Ես էլ եմ կարծում,— միամտորեն պատասխանեց Ռաստինյակը:— Ես միշտ իրավացի եմ եղել իմ ատելության մեջ... Եվ բարեկամության մեջ,— ավելացրեց նա:— Թշնամիներն ինձ գուցե նույնքան օգտակար են, որքան բարեկամները: Ես հատկապես ուսումնասիրել եմ մեր ժամանակակից լեզուն և այն բնական նենգությունները, որոնք գործադրվում են ամեն ինչի վրա հարձակվելու կամ ամեն ինչ պաշտպանելու համար: Մինիստրական պերճախոսությունը հասարակության կատարելագործության արդյունքն է: Ձեր բարեկամը անխելք է, դուք կխոսեք նրա ուղղամտության, նրա անկեղծության մասին: Մի ուրիշ բարեկամ լույս է ընծայել ծանրակշիռ մի աշխատանք, դուք այն կներկայացնեք իբրև խղճամիտ աշխատություն: Եթե գիրքը վատ է գրված, դուք կգովեք նրա գաղափարները: Երրորդը անհավատ է, փոփոխամիտ է, նրա վրա չի կարելի հենվել, ինչ կա որ, դրա փոխարեն նա պատվական, դյութական մարդ է, նա հիացնում է: Եթե հարցը վերաբերում է ձեր թշնամիներին, դուք մեղքը կբարդեք նրանց վրա իբրև մեռելների: Դուք նրանց վրա կսպառեք ձեր լեզվի բառապաշարը, դուք նրանց թերությունները երևան կբերեք նույնքան ճարտարորեն, որքան վարպետորեն կընդգծեք ձեր բարեկամների արժանիքները: Բարոյականության հարցեր քննելիս այսպիսի ակնոց գործածել նշանակում է վերհասու լինել մեր զրույցների գաղտնիքին և պալատականի արվեստին: Չգործածել այն՝ նշանակում է անզեն պայքարել մարդկանց հետ, որոնք զրահապատված են ասպետների պես: Եվ ես գործածում եմ այն: Երբեմն նույնիսկ չարաչար եմ գործածում: Դրա համար հարգում են ինձ, ինձ և բարեկամներիս, որովհետև իմ սուրը արժե իմ լեզուն:

Ֆեոդորայի ամենաթունդ երկրպագուներից մեկը, իր լպիրշությամբ հայտնի մի երիտասարդ, որ նրան միջոց էր ծառայեցրել մարդ դառնալու համար, վերցրեց Ռաստինյակի այնքան արհամարհանքով նետած ձեռնոցը: Խոսելով իմ մասին, նա սկսեց չափից ավելի գովել ինձ և իմ տաղանդը: Ռաստինյակը նկատի չէր ունեցել բամբասանքի այդ տեսակը: Այդ հեգնական

զովասանքը մոլորության մեջ գցեց կոմսուհուն, և նա անողորմաբար ոչնչացրեց ինձ, զրուցակից բարեկամներին զվարճացնելու համար նա չարաշահեց իմ գաղտնիքները, իմ հավակնությունները, իմ հույսերը:

— Այդ մարդը ապագա է խոստանում,— նկատեց Ռաստինյակը:— Գուցե նա մի օր դաժանորեն վրեժ կլուծի ամեն ինչի համար. նրա տաղանդը առնվազն հավասար է նրա քաջությանը. ուստի ես կտրիճ կկոչեմ նրան, ով կհարձակվի նրա վրա, որովհետև նա ունի սուր հիշողություն…

— Այնքան, որ հուշեր է գրում,— ասաց կոմսուհին, որ կարծես չախորժեց Ռաստինյակի խոսքերից հետո տիրած խոր լռությունից:

— Սուտ կոմսուհու հուշեր, տիկին,— վրա բերեց Ռաստինյակը:— Դրանք գրելու համար հարկավոր է ուրիշ տեսակ քաջություն:

— Ես կարծում եմ, որ նա քաջություն շատ ունի,— նկատեց Ֆեոդորան:— Նա հավատարիմ է ինձ:

Ես մեծ փորձություն զգացի հանկարծ երևալու ծաղրողների առջև, ինչպես Բանկոյի ուրվականը «Մակբեթ»-ի մեջ: Ես կորցնում էի մի սիրուհի, բայց ունենում էի մի բարեկամ: Սակայն սերը հանկարծ ինձ ներշնչեց այն երկչոտ և նենգոտ տարամտություններից մեկը, որոնցով նա քնեցնում է մեր բոլոր վշտերը:

«Եթե Ֆեոդորան սիրում է ինձ,— մտածեցի ես,— ապա մի՞թե նա իր զգացումը չպետք է քողարկի չար կատակով: Քանի՛-քանի՛ անգամ սիրտը հերքել է բերանի սուտը»:

Վերջապես, շուտով իմ անպատկառ ախոյանը, որ մենակ էր մնացել կոմսուհու հետ, ուզեց մեկնել:

— Ի՞նչ: Արդե՞ն,— ասաց կոմսուհին փաղաքուշ ձայնով, որից սիրտս թրթռաց:— Դուք մի րոպե ևս չե՞ք նվիրի ինձ: Ուրեմն էլ ոչինչ չունե՞ք ինձ ասելու: Դուք ինձ համար չե՞ք զոհաբերի ձեր հաճույքներից մի քանիսը:

Երիտասարդը դուրս եկավ:

— Ա՛հ,— բացականչեց կոմսուհին, հորանջելով:— Նրանք բոլորն էլ խիստ տաղտկալի են:

Նա ուժով քաշեց զանգակի լարը, և սենյակներում հնչեց զանգը: Նա մտավ իր սենյակը, կիսաձայն երգելով «Pria che spuntil[120]: Ոչ ոք դեռ չէր լսել կոմսուհու երգելը, և նրա այդ համրությունը տեղիք էր տվել արտառոց մեկնաբանությունների: Ասում էին, որ նրա առաջին սիրահարին, որ հիացած էր նրա տաղանդով և խանդում էր նրան նույնիսկ այն ժամանակ, երբ կլիներ անդենականում, կոմսուհին խոստացել էր ոչ ոքի չպարգևել այն երջանկությունը, որ սիրահարը փափագել էր մենակ ճաշակել: Ես լարեցի իմ հոգու բոլոր ուժերը, որպեսզի ըմպեի այդ հնչյունները: Ֆեոդորան հետզհետե բարձրացրեց ձայնը. նա ասես ոգևորվել էր, նրա ձայնական հարստությունները բացվեցին, և այդ մեղեդին ինչ-որ աստվածային բան

[120] «Դեռ արևը չծագած» (իտ.) — իտալացի երաժիշտ Չիմարոզայի (XVIII դ.) «Գաղտնի ամուսնություն» օպերայի երգի բառերը:

ստացավ: Կոմսուհու ձայնը հնչուն և թրթռուն, վճիտ և ներդաշնակ էր և թափանցում, հուզում, պարարում էր սիրտը: Երաժշտասեր կանայք գրեթե միշտ սիրահարվածներ են: Այն կինը, որ այդպես երգում էր, պետք է և սիրել իմանար: Այդ ձայնի գեղեցկությունը ևս մի խորհրդավոր բան դարձավ այն կնոջ մեջ, որ արդեն այնքան խորհրդավոր էր: Ես տեսնում էի նրան, ինչպես հիմա տեսնում եմ քեզ, ասես ունկնդրում էր սեփական ձայնի հնչյուններին՝ ինչ-որ տռփանքի զգացումով, նա կարծես սիրո խայտանք էր զգում: Վերջացնելով այդ ռոնդոյի գլխավոր թեման, նա մոտեցավ բուխարուն, բայց, երբ նա լռեց, նրա դեմքի արտահայտությունը փոխվեց, դիմագծերն այլակերպվեցին, և նրա ամբողջ դեմքը խոնջանք արտահայտեց: Նա հանեց դերասանուհու դիմակը, նրա դերը վերջացել էր: Սակայն յուրատեսակ հմայք կար նույնիսկ այդ թառամության մեջ, որ նրա գեղեցկության վրա իր դրոշմն էր դրել այդ երեկույթին լարված դերասանության կամ տանջալի հոգնության հետևանքով:

«Հիմա նա իսկականն է»,— ասացի ես յուրովի:

Նա իբրև թե տաքանալու համար ոտքը դրեց բրոնզե բուխարու մոխրակալի վրա, հանեց ձեռնոցները, արձակեց ապարանջանները, գլխից հանեց ոսկե շղթան, որից կախված էր թանկագին քարերով զարդարված օծանելիքի սրվակը: Ես անբացատրելի հաճույք էի զգում, տեսնելով նրա գողտրիկ շարժումները, ինչպես տեսնում ենք էգ կատուների մոտ, երբ նրանք լվացվում են արևի տակ: Նա իրեն նայեց հայելու մեջ և դժգոհությամբ ասաց.

— Այսօր ես սիրուն չէի... դեմքիս գույնը դալկանում է ահավոր արագությամբ… Գուցե հարկավոր է ավելի կանուխ պառկել, հրաժարվել շվայտ կյանքից… Բայց ո՞ւր մնաց Ժյուստինան: Ինձ ձե՞ռ է առնում, ինչ է:

Կոմսուհին նորից զանգ տվեց. սպասուհին ներս վազեց: Նա որտեղ էր տեղավորվել՝ չգիտեմ: Նա իջավ ծածուկ մի սանդուղքով: Ես հետաքրքրությամբ դիտեցի նրան: Իմ բանաստեղծական երևակայությունը հաճախ դատապարտել էր այդ պարթևահասակ, բարեկազմ, թխադեմ աղախնուն, որ սովորաբար չէր երևում հյուրերի մոտ:

— Զա՞նգ տվիք, տիկին:

— Երկու անգամ,— պատասխանեց Ֆեոդորան:— Խլացե՞լ ես, ինչ է:

— Ես նշակաթ էի պատրաստում ձեզ համար:

Ժյուստինան ծունկի եկավ, իր տիրուհու բարձրակոշիկների կապերը քակեց, կոշիկները հանեց, իսկ այդ ժամանակ կոմսուհին անփութորեն տարածված բուխարու մոտի զսպանակավոր թիկնաթոռի վրա, հորանջում էր և գլուխն էր քուրում: Նրա շարժումները շատ բնական էին, ոչինչ չէր մատնում իմ ենթադրած թաքուն տանջանքներն ու կրքերը:

— Ժորժը սիրահարված է,— ասաց նա,— ես նրան կհեռացնեմ: Նա նորից վարագույրները չի ծածկել: Ի՞նչ է նա մտածում:

Այս դիտողության վրա իմ ամբողջ արյունը սիրտս խուժեց, բայց վարագույրների մասին խոսակցությունը դադարեց:

— Կյանքը ունայն է,— շարունակեց կոմսուհին։— Զգույշ եղիր, ինձ չճանկես երեկվա նման։ Ահա նայիր,— ասաց նա, ցույց տալով իր սնդուսածածկ ծունկը,— քո եղունգների հետքը դեռ վրան է։

Նա իր մերկ ոտքերը խոթեց կարապի բմբուլով լցված թավշե հողաթափերի մեջ և սկսեց արձակել շրջազգեստի կոճակները, իսկ Ժյուստինան սանրը առավ, որպեսզի հարդարեր նրա վարսերը։

— Տիկին, ձեզ հարկավոր է ամուսնանալ, զավակներ ունենալ։

— Զավակներ։ Միայն այդ էր պակաս,— բացականչեց կոմսուհին։— Ամուսին։ Ուր է այն մարդը, որի համար ես կարողանայի… այսօր ես լավ սանրվա՞ծ էի։

— Ոչ շատ լավ։

— Հիմար։

— Ուռուցիկ սանրվածքը ձեր դեմքին բոլորովին չի սազում,— շարունակեց Ժյուստինան,— ձեզ ավելի կսազեն հարթ և խոշոր խոպոպները։

— Ճի՞շտ։

— Այո, տիկին, ուռուցիկ սանրվածքը սազում է միայն շեկերին։

— Ամուսնանա՞լ։ Ոչ, ոչ։ Ամուսնությունը առնտուր է, որի համար ես չեմ ծնված։

Ի՜նչ սոսկալի տեսարան սիրահարված մարդու համար։ Այս մենակյաց, առանց ազգականների, առանց բարեկամների, սիրո մեջ անաստված և ոչ մի զգացումի չհավատացող կինը, որի մեջ թույլ էր ամեն մարդկային էակին հատուկ սրտազեղման պահանջը, հարկադրվում էր հոգին սփոփել սպասուհու հետ զրուցելով, արտաբերել ընդհանուր խոսքեր կամ խոսել փցուն բաների մասին… Ես արգահատեցի նրան։ Ժյուստինան քակեց տիրուհու ներքնազգեստի կապերը։ Ես հետաքրքրությամբ դիտեցի կոմսուհուն, երբ նրանից ընկավ վերջին քողը։ Նրա կուսական կուրծքը ինձ շլացրեց. նրա սպիտակ-վարդագույն մարմինը շապկի միջից շողաց մոմերի լույսի տակ, ինչպես արծաթե արձանը շղարշե ծածկույթի տակ։ Ոչ, նրա մեջ ոչ մի թերություն չկար, որ նրան վախեցներ սիրահարվածի անպարկեշտ նայվածքներից։ Ավա՜ղ, գեղեցիկ մարմինը միշտ հաղթանակ կտանի ամենամարտական դիտավորությունների վրա։ Տիրուհին լուռ ու մտախոհ նստեց կրակի մոտ, մինչ սպասուհին մահճակալի վրա կախված ալաբաստրե կանթեղի մոմն էր վառում։ Ժյուստինան գնաց ջեռուցիչը բերեց, անկողինը պատրաստեց, տիրուհուն օգնեց պառկելու։ Դեռ բավական ժամանակ պահանջվեց մանր-մունր ծառայությունների համար, որոնք ցույց էին տալիս Ֆեոդորայի խոր հարգանքը իր անձի նկատմամբ, ապա սպասուհին դուրս եկավ։ Կոմսուհին անընդհատ շրջշրջվում էր անկողնում, նա հուզված էր, նա հառաչում էր. նրա շրթներից արձակվում էր հազիվ լսելի մի մրմունջ, որ մատնում էր անհամբերությունը. նա ձեռքը մեկնեց սեղանին, սրվակը վերցրեց, մուգ գույնի մի հեղուկից չորս-հինգ կաթիլ լցրեց կաթի մեջ և խմեց. ի վերջո, մի քանի անգամ ծանրորեն հառաչելով, բացականչեց.

— Աստվա՜ծ իմ։

Այս բացականչությունը և մանավանդ այն շեշտը, որով Ֆեոդորան արտաբերեց այդ, ճմլեցին սիրտս: Անզգալաբար նա անշարժացավ: Ես վախեցա. բայց շուտով ես լսեցի քնած մարդու համաչափ և ուժեղ շնչառությունը. ես թեթևակի մի կողմ քաշեցի վարագույրների խշխշան մետաքսը, դուրս եկա իմ թաքստոցից, մոտեցա մահճակալին և ինչ-որ աննկարագրելի զգացումով նայեցի կոմսուհուն: Այդպես նա հմայիչ էր: Նա երեխայի պես թևը դրել էր գլխի տակ. ժանյակներով պարուրված նրա հանդարտ ու սիրուն դեմքը այնքան հրապուրիչ էր, որ սիրտս բոցավառվեց: Ես չէի կշռել իմ ուժերը, ես չէի մտածել, թե ինչպիսի կտտանք է սպասում ինձ՝ լինել այնքա՛ն մոտ այդ կնոջ և այնքա՛ն հեռու նրանից: Ես ստիպված եղա կրել այն բոլոր տվայտանքները, որոնք ինքս էի պատրաստել ինձ համար: **Աստվա՛ծ իմ**— անհայտ մտքի այս բեկորը, որից ես կարող էի միայն կռահումներ անել, մեկեն փոխեց իմ պատկերացումը Ֆեոդորայի մասին: Այդ սին կամ խոր, անիմաստ կամ իմաստալից բացականչությունը կարող էր արտահայտել և՛ երջանկություն, և՛ վշտահարություն, և՛ մարմնական ցավ, և՛ մտահոգություն: Դա անե՞ծք էր, թե աղոթք, վերհուշա՞նք էր, թե երազանք, վի՞շտ էր, թե վախ: Մի ամբողջ կյանք կար այդ բառերի մեջ, կարոտության կամ փարթամության կյանք. այդ բառերն իրենց մեջ կարող էին նույնիսկ ոճրագործություն պարունակել: Կնոջ այդ գեղեցիկ նմանության մեջ ծածկված առեղծվածը նորից էր ծագում. Ֆեոդորային կարելի էր բացատրել այնքան եղանակներով, որ նա դառնում էր անբացատրելի: Նրա բերանից դուրս թռած մերթ թույլ, մերթ սուր, մերթ ծանր, մերթ թեթև շնչառությունը յուրատեսակ լեզու էր, որին ես վերագրում էի մտածումներ և զգացումներ: Ես երազում էի նրա հետ միասին, ես հույս ունեի նրա գաղտնիքներն իմանալ՝ թափանցելով նրա քնի մեջ, ես օրորվում էի բազմազան որոշումների, բազմազան դատողությունների միջև: Դիտելով այդ չքնաղ, հանդարտ ու վճիտ դեմքը, ես չէի կարող ընդունել, որ այդ կինը սիրտ չուներ: Ես որոշեցի մի փորձ ևս կատարել: Նրան պատմելով իմ կյանքի, իմ սիրո, իմ զոհողությունների մասին, գուցե ես կկարողանայի գութ զարթեցնել նրա մեջ, արտասուք կորզել նրանից, որ երբեք չէր արտասվել: Իմ բոլոր հույսերը ես դրել էի այդ վերջին փորձի վրա, երբ փողոցային աղմուկը ինձ ազդարարեց օրվա ծագումը: Մի րոպե ես պատկերացրի, որ Ֆեոդորան զարթնում է իմ թևերի մեջ: Ես կարող էի կամացուկ մոտենալ, կողքը պառկել և գրկել նրան: Այս միտքը դաժանորեն տանջեց ինձ, և, որպեսզի ազատվեմ նրանից, վազ տվի հյուրասրահ, ոչ մի զգուշություն չանելով. բարեբախտաբար ես տեսա ծածուկ դուռը, որ տանում էր դեպի նեղ սանդուղքը: Ինչպես ենթադրում էի, բանալին գտնվում էր փականքի ծակի մեջ. ես ուժով քաշեցի դուռը, համարձակ իջա գավիթը և, ուշադրություն չդարձնելով, թե որևէ մեկը կտեսնի ինձ, երեք ոստումով դուրս եկա փողոց:

Երկու օր հետո մի հեղինակ կոմսուհու մոտ պետք է կարդար իր կատակերգությունը. ես գնացի այնտեղ այն դիտավորությամբ, որ բոլորից երկար մնամ և նրան դիմեմ բավական արտառոց մի խնդիրքով. ես ուզում էի կոմսուհուն խնդրել, որ հետևյալ երեկոն ինձ հատկացնի, ինձ նվիրի ամբողջապես, դուռը փակելով բոլորի համար: Իսկ երբ ես առանձին մնացի նրա հետ, արիություն չունեցա: Ժամացույցի ճոճանակի յուրաքանչյուր թիկ-թակը զարհուրեցնում էր ինձ: Կեսգիշերից քառորդ էր պակաս: «Եթե ես նրա հետ չխոսեմ,— մտածեցի ես,— ինձ մնում է միայն զանգս ջախջախել բուխարու անկյունին»:

Ես ինձ երեք րոպե ժամանակ տվի. երեք րոպեն անցավ, ես զանգս չջարդեցի մարմարի վրա, սիրտս ծանրացել էր, ինչպես սպունգը ջրի մեջ:

— Դուք այսօր չափազանց սիրալիր եք,— ասաց կոմսուհին:

— Ա՛հ, եթե դուք կարողանայիք հասկանալ ինձ,— պատասխանեցի ես։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարեց կոմսուհին։— Դուք գունատվել եք։

— Ես վարանում եմ մի շնորհ հայցել ձեզանից։

Կոմսուհին մի շարժումով քաջալերեց ինձ, և ես նրանից ժամադրություն խնդրեցի։

— Հաճույքով,— ասաց նա։— Բայց ինչո՞ւ դուք չեք ուզում հիմա խոսել։

— Ձեզ մոլորության մեջ չգցելու համար, ես պարտավոր եմ հայտնել ձեր ցուցաբերած մեծ սիրալիրությունը հանդեպ ինձ. ես ցանկանում եմ այս երեկոն անցկացնել ձեզ մոտ, ինչպես եթե քույր և եղբայր լինեինք։ Մի վախենաք, ինձ հայտնի են ձեր հակակրանքները. դուք ինձ լավ գիտեք և կարող եք վստահ լինել, որ ձեզանից չեմ պահանջի այնպիսի բան, որ ձեզ տհաճություն պատճառի. բացի դրանից, ժպիրի մարդիկ այդպես չեն վարվում։ Դուք ինձ ապացուցել եք ձեր բարեկամությունը, դուք բարի եք, դուք ներողամիտ եք։ Արդ իմացեք, որ վաղը հրաժեշտ եմ տալու ձեզ… Մի հրաժարվեք ձեր խոսքից,— գոչեցի ես, տեսնելով որ նա ուզում է խոսել, և շտապ հեռացա։

Այդ տարվա մայիս ամսին, երեկոյան ժամը ութին, ես Ֆեոդորայի հետ մենակ էի նրա գոթական զարդասենյակում։ Ես այն ժամանակ չդողացի, ես վստահ էի, որ երջանիկ կլինեմ։ Իմ սիրուհին ինձ պետք է պատկաներ, այլապես ես ինձ կնետեի մահվան գիրկը։ Ես դատապարտեցի իմ երկչոտ սերը։ Մարդ ուժեղ է, երբ գիտակցում է իր թուլությունը։ Կոմսուհին կապույտ քիշմիրե շրջազգեստով ընկողմանել էր բազմոցի վրա, ոտքերը բարձին հենած։ Արևելյան մի գլխազարդ, որը նկարիչները հնադարյան հրեաներին են վերագրում, արտասովոր գրավչություն էր հաղորդել նրա հրապույրներին։ Նրա դեմքը կրում էր դրոշմը այն խուսափուկ հմայքի, որ կարծես ապացուցում էր, որ մենք մեր կյանքի ամեն րոպեին նոր, անկրկնելի էակներ ենք, առանց որևէ նմանության մեր ապագա «ես»-ի և մեր անցյալ «ես»-ի միջև։ Դեռ երբեք Ֆեոդորան այդքան շլացուցիչ չէր եղել։

— Գիտեք, դուք իմ հետաքրքրությունը շարժեցիք,— ասաց նա ծիծաղելով։

— Ես այդ կարդարացնեմ,— պատասխանեցի ես սառնորեն, նստելով նրա կողքին և ձեռքից բռնելով, նրա թույլտվությամբ։— Դուք շատ գեղեցիկ ձայն ունեք։

— Բայց դուք ինձ երբեք չեք լսել,— գոչեց նա զարմանքով։

— Ես ձեզ հակառակը կապացուցեմ, եթե հարկ լինի։ Ուրեմն ձեր հրաշալի ձա՞յնն էլ գաղտնիք է մնալու։ Մի անհանգստանաք, ես մտադիր չեմ նրա մեջ թափանցել։

Մոտ մի ժամ մենք անցկացրինք մտերմաբար զրուցելով։ Ես ընդունեցի տոնը, վարվելակերպն ու շարժուձևերը մի մարդու, որին Ֆեոդորան ոչինչ չէր մերժի, բայց ես լիովին պահեցի սիրահարի ակնածանքը։ Այսպես, ես կատակելով, ստացա նրա ձեռքը համբուրելու բարեհաճ թույլտվությունը. գողտրիկ շարժումով նա հանեց ձեռնոցները, և ես հեշտանքով սուզվեցի պատրանքի մեջ, որին փորձեցի հավատալ. իմ հոգին փափկեց ու փթթեց այդ համբույրի մեջ։ Անհավատալի զիջողությամբ Ֆեոդորան թույլ տվեց իրեն շոյել ու զգվել։ Բայց ինձ մի մեղադրեք անմիտ երկչոտության մեջ. եթե ես այդ եղբայրական փայփայանքի սահմաններից այն կողմ անցնեի, իմ մարմնի վրա կզգայի կատվի ճանկերը։ Մենք տասը րոպե խոր լռություն

պահեցինք: Ես նրանով հիացել էի, երևակայական հմայքներ վերագրելով նրան: Այդ պահին նա իմն էր, միայն իմը... Ես տիրացել էի այդ զմայլելի էակին, որքան կարելի է տիրանալ երևակայությամբ. ես նրան օժտեցի իմ կրքով, բռնեցի նրան և գրկիս մեջ սեղմեցի, իմ երևակայությունը միաձուլվել էր նրա հետ: Այն ժամանակ ես կոմսուհուն հաղթեցի մագնիսական կախարդանքի զորությամբ: Եվ ես հետագայում միշտ ափսոսացել եմ, որ այդ կնոջը չեմ տիրացել վերջնականապես. բայց այդ միջոցին ես չէի փափագում նրա մարմինը, ես փափագում էի հոգին, կյանքը, իդեալական և կատարյալ երջանկությունը, գեղեցիկ երազ, որին մենք երկար չենք հավատում:

— Լսեցեք ինձ,— ասացի ես, վերջապես, զգալով որ հասել է իմ արբեցության վերջին ժամը:— Ես ձեզ սիրում եմ, դուք այդ գիտեք, ես ձեզ հազար անգամ ասել եմ և դուք պետք է հասկանայիք ինձ: Ես չեմ ցանկացել ձեր սերը պարտական լինել ոչ թեթևսոլիկություններին, ոչ շողոմություններին, ոչ էլ հիմարի ժտություններին, և չեմ հասկացվել: Ինչպիսի՜ տագնապներ չեմ կրել ձեզ համար: Սակայն դուք այստեղ մեղավոր չեք: Բայց մի քանի րոպե հետո դուք կդատեք իմ մասին: Կան երկու աղքատություններ: Մեկը ցնցոտիներով համարձակ քայլում է փողոցներով և առանց իմանալու կրկնում է Դիոգենեսի պատմությունը, սնվելով քիչ բանով և սահմանափակվելով միայն ամենաանհրաժեշտով. գուցե նա ավելի երջանիկ է, քան հարստությունը կամ գոնե չգիտե, թե ինչ է հոգսը, և ամբողջ աշխարհը գտնում է այնտեղ, ուր հզոր մարդիկ ոչինչ չեն գտնում: Կա և շքեղությամբ սքողված աղքատությունը, իսպանական աղքատությունը, որն իր չքավորությունը ծածկում է տիտղոսի տակ. հպարտ, փետրազարդ, ճերմակ բաճկոնակով, դեղին ձեռնոցներով այդ աղքատությունը շրջագայում է կառքով և կորցնում է մի ամբողջ հարստություն՝ մեկ սանտիմ չունենալու պատճառով: Առաջինը ռամիկների աղքատությունն է, երկրորդը՝ ստահակների, թագավորների և տաղանդավոր մարդկանց աղքատությունը: Ես ոչ ռամիկ եմ, ոչ թագավոր, ոչ ստահակ. գուցե ես տաղանդավոր էլ չեմ. ես բացառություն եմ: Իմ անունը ինձ հրամայում է ավելի շուտ մեռնել, քան մուրալ... Ապահով եղեք, ես հիմա հարուստ եմ, ես ունեմ այն ամենը, ինչ ինձ հարկավոր է,— ասացի ես,— նկատելով նրա դեմքին այն պաղ արտահայտությունը, ինչպիսին ստանում են մեր դիմագծերը, երբ մեզ հանկարծակիի են բերում խնդրարկուհիները կարգին հասարակությունից: — Հիշո՞ւմ եք այն օրը, երբ դուք որոշեցիք Ժիմնազ[121] գնալ առանց ինձ, կարծելով, որ այնտեղ չեք հանդիպի ինձ:

Կոմսուհին գլխով հաստատական նշան արեց:

— Ես ծախսեցի իմ վերջին էկյուն, որպեսզի տեսնվեի ձեզ հետ... Հիշո՞ւմ եք մեր զբոսանքը Բուսաբանական այգում: Իմ ամբողջ ունեցածը կառքի տվի ձեզ համար:

Ես կոմսուհուն պատմեցի իմ զոհողությունները, նրան նկարագրեցի իմ կյանքը, ոչ այնպես, ինչպես պատմում եմ քեզ այսօր, ոչ գինու գինովության մեջ, այլ սրտի ազնիվ գինովության մեջ: Իմ կիրքը զեղեց բոցատոչոր բառերով, վաղուց մոռացած սրտագին շարժումներով, որոնք չէին կարող վերարտադրել ոչ արվեստը, ոչ հիշողությունը: Դա մերժված սիրո սառը պատմությունը չէր. իմ սիրտն իր ամբողջ ուժով և իր հույսի բովանդակ գեղեցկությամբ ինձ թելադրեց բառեր, որոնք արտացոլում են մի ամբողջ կյանք, կրկնելով մորմոքած հոգու աղաղակները: Մարտադաշտում մեռնողը այսպես է արտասանում իր վերջին աղոթքները:

---

[121] **Ժիմնազ** — դրամատիկական թատրոն Փարիզում:

Կոմսուհին արտասվեց: Ես լռեցի: Աստվա՛ծ իմ: Նրա արցունքները հետևանք էին այն արվեստական հուզման, որ կարելի է ապրել թատրոնում, տոմսին վճարելով հարյուր սու. ես լավ դերասանի հաջողություն ունեցա:

— Եթե ես իմանայի...— ասաց կոմսուհին:

— Խոսքը մի վերջացնեք,— բացականչեցի ես:

Առայժմ ես դեռ բավական շատ եմ սիրում, որպեսզի ձեզ սպանեմ...

Նա զանգակի լարը բռնեց: Ես քրքջացի:

— Ոչ ոքի մի կանչեք,— հարեցի ես:— Ես ձեզ թույլ կտամ խաղաղ կերպով վերջացնելու ձեր կյանքը: Սպանել ձեզ՝ կնշանակեր վատ հասկանալ ատելության ձայնը: Մի վախենաք բռնությունից. ես ամբողջ գիշեր ձեր անկողնի մոտ անցկացրի, առանց...

— Ինչպե՛ս...— բացականչեց կոմսուհին կարմրելով:

Բայց ամոթխածության առաջին զգացումից հետո, որ պետք է ունենա ամեն կին, նույնիսկ ամենաանզգա կինը, նա ինձ վրա արհամարհական մի հայացք նետեց և շարունակեց.

— Դուք հավանաբար խիստ մրսած կլինեք:

— Դուք կարծում եք, որ ձեր գեղեցկությունը այնքան թա՞նկ է ինձ համար,— ասացի ես, կռահելով նրան հուզող մտքերը:— Ձեր դեմքը ինձ համար խոստումն է ձեր մարմնից ավելի գեղեցիկ հոգու: Չէ որ տղամարդիկ, որոնք կանանց մեջ միայն կին են տեսնում, ամեն երեկո կարող են կանանոցին վայել հարճեր գնել և էժան գնով զվարճանալ... Բայց ես փառասեր էի, ես ուզում էի ձեզ հետ ապրել սիրտ սրտի, բայց դուք սիրտ չունեք: Հիմա ես այդ գիտեմ: Ես կսպանեի այն տղամարդուն, որին դուք անձնատուր կլինեիք: Բայց ոչ, դուք նրան կսիրեիք, նրա մահը գուցե ձեզ վիշտ կպատճառեր... Ինչքա՛ն եմ ես տանջվում,— գոչեցի ես:

— Եթե այդպիսի խոստումը կարող է ձեզ մխիթարել,— ասաց կոմսուհին զվարթորեն,— կարող եմ ձեզ հավատացնել, որ ես ոչ ոքի չեմ պատկանի...

— Դուք վիրավորում եք հենց աստծուն և կպատժվեք դրա համար,— ընդմիջեցի ես,— օր կգա, երբ ձեզ անտանելի կդառնան և՛ աղմուկը, և՛ լույսը. պառկած բազմոցի վրա, դատապարտված ապրելու ինչպես գերեզմանում, դուք կկրեք անլուր ցավեր: Դուք կորոնեք այդ դանդաղ ու դժնդակ տանջանքների պատճառը և այն ժամանակ կհիշեք այն դառնությունները, որ դուք այնքան առատորեն սփռել եք ձեր ճանապարհի վրա: Անեծքներ ցանելով ամեն տեղ, փոխարենը կգտնեք ատելություն: Մենք մեր սեփական դատավորները, դահիճներն ենք, ծառայելով մի արդարության, որ իշխում է երկրի վրա և որ բարձր է մարդկանց դատաստանից և ցածր է աստծու դատաստանից:

— Ա՛հ, իհարկե, ես շատ հանցավոր եմ ձեզ չսիրելուս համար,— ասաց կոմսուհին ծիծաղելով,— բայց մի՞թե դա իմ հանցանքն է: Այո, ես ձեզ չեմ սիրում: Դուք տղամարդ եք, դա բավական է: Ես երջանկություն գտնում եմ միայնության մեջ, ինչո՞ւ իմ, եթե կուզեք, եսասիրական կյանքը փոխեմ ստրկուհու կյանքի հետ: Ամուսնությունը մի խորհուրդ է, որի մեջ մենք հաղորդակցում ենք միայն վշտերի հետ: Իսկ երեխաները ձանձրալի են: Մի՞թե ես

ազնվորեն ձեզ չեմ հայտնել իմ բնավորության մասին: Ինչո՞ւ դուք չգոհացաք իմ բարեկամությամբ: Ես կուզենայի հնարավորություն ունենալ ամոքելու այն վշտերը, որ ես պատճառել եմ ձեզ, մտքովս չանցկացնելով ձեր էկյուների հաշիվը: Ես գնահատում եմ ձեր մեծ զոհողությունները. միայն սերը կարող է փոխհատուցել ձեր անձնազոհությունների, ձեր փափկանկատությունների համար, բայց ես ձեզ այնքան քիչ եմ սիրում, որ այս ամբողջ տեսարանը ինձ տհաճություն է պատճառում:

— Ներեցեք, ես զգում եմ, թե ինչքան ծիծաղելի եմ,— հեզորեն ասացի ես, չկարողանալով զսպել իմ արցունքները:— Ես այնպես սիրում եմ ձեզ,— հարեցի ես,— որ հաճույքով լսում եմ ձեր անողորմ խոսքերը: Օ՜, ես կցանկանայի իմ ամբողջ արյունով հաստատել իմ սերը:

— Բոլոր տղամարդիկ առավել կամ նվազ վարպետորեն արտասանում են այդ դասական խոսքերը,— պատասխանեց կոմսուհին, շարունակելով ծիծաղել:— Բայց, ըստ երևույթին, շատ դժվար է մեռնել մեր ոտքերի տակ, որովհետև ես ամենուրեք հանդիպում եմ այդ տեսակ մեռելների... Արդեն կեսգիշեր է, ինձ թույլ տվեք, որ պառկեմ քնեմ:

— Իսկ երկու ժամ անց դուք «Աստված իմ» կբացականչեք,— ասացի ես:

— Նախանցյալ օրը... Այո,— ասաց կոմսուհին:— Ես այն ժամանակ մտածում էի իմ բորսային միջնորդի մասին. ես մոռացել էի նրան ասելու, որ իմ հինգտոկոսանոց եկամուտը վերածեր երեքտոկոսանոցի, իսկ օրվա ընթացքում երեքտոկոսանոցը ընկել էր:

Ես կոմսուհուն նայեցի կատաղությունից շողացող աչքերով: Օ՜, ոճիրը երբեմն կարող է պոեմ դառնալ, ես այդ հասկացա: Վարժված լինելով կրակոտ հայտարարություններին, կոմսուհին արդեն մոռացել էր իմ խոսքերն ու արցունքները:

— Դուք կամուսնանայի՞ք Ֆրանսիայի պերի հետ,— հարցրի ես սառնությամբ:

— Գուցե, եթե նա դուքս լիներ:

Ես վերցրի գլխարկս և հրաժեշտի ողջույն տվի:

— Թույլ տվեք ձեզ ուղեկցել մինչև դուռը,— ասաց կոմսուհին, դառն հեգնանք մտցնելով իր շեշտի ու ժեստի մեջ:

— Տիկին...

— Պարոն...

— Ես այլևս ձեզ չեմ տեսնի:

— Հույս ունեմ,— ասաց կոմսուհին, մեծամտորեն գլուխ տալով:

— Դուք ուզում եք դքսուհի՞ լինել,— շարունակեցի ես, համակված մի տեսակ մոլուցքով, որ իմ սրտում բորբոքվեց նրա այդ շարժումից:— Դուք գժվո՞ւմ եք տիտղոսների և պատիվների համար: Լավ, միայն ինձ թույլ տվեք սիրելու ձեզ, հրամայեցեք իմ գրչին խոսել, իմ ձայնին հնչել լոկ ձեզ համար, եղեք իմ կյանքի թաքուն ակունքը, եղեք իմ աստղը: Այնուհետև ինձ ընդունեք իբրև ամուսին, եթե ես դառնամ մինիստր, Ֆրանսիայի պեր, դուքս... Ես կանեմ այն ամենը, ինչ կցանկանաք:

— Դուք ձեր ժամանակը բավական լավ եք օգտագործել փաստաբանի մոտ,— ասաց կոմսուհին ժպտալով,— ձեր պաշտոնական ճառերը կրակոտ են:

— Դու ներկա ունես, իսկ ես՝ ապագա,— գոչեցի ես:— Ես միայն կին եմ կորցնում, իսկ դու՝ անուն և ընտանիք: Ժամանակը հղի է իմ վրեժխնդրությամբ. նա քեզ կբերի տգեղություն և մենավոր մահ, իսկ ինձ՝ փառք:

— Շնորհակալ եմ վերջաբանիդ համար,— ասաց կոմսուհին, հազիվ զսպելով հորանջը և իր կեցվածքով ցույց տալով, որ այլևս ցանկություն չունի իմ երեսը տեսնելու:

Այդ խոսքը ինձ ստիպեց լռել: Ես նայվածքով ատելությունս արտահայտեցի կոմսուհու նկատմամբ և խույս տվի: Ինձ հարկավոր էր մոռանալ Ֆեոդորային, խելքի գալ, վերադառնալ աշխատանքային առանձնության կամ մեռնել: Եվ ահա ես լծվեցի լարված աշխատանքի, ես որոշեցի ավարտել իմ երկերը: Երկու շաբաթ ես դուրս չեկա իմ խուցից և գիշերներն անցկացրի անպտուղ պարապմունքներով: Ի հեճուկս իմ կորովին և հուսաբեկությունից թելադրված ներշնչման, ես աշխատում էի դժվարությամբ և ընդհատումներով: Մուսաս փախել էր: Ես չէի կարողանում վանել Ֆեոդորայի շողշողուն և հեգնող ուրվականը: Իմ յուրաքանչյուր մտքին ուղեկցում էր մի ուրիշ հիվանդագին միտք, ինչ-որ ցանկություն, որ տանջալի էր, ինչպես խղճի խայթը: Ես նմանվեցի Թեբայիդի ճգնավորներին: Ես նրանց պես չէի աղոթում, բայց նրանց պես ապրում էի անապատում, քարայրները պեղելու փոխարեն ես պեղում էի իմ հոգին: Ես պատրաստ էի սրածայր սեպերով գոտի կապել մեջքիս, որպեսզի ֆիզիկական ցավով մեղմացնեի հոգեկան ցավ:

Մի երեկո Պոլինը մտավ իմ խուցը:

— Դուք ձեզ խորտակում եք,— ասաց նա աղերսական ձայնով:— Ձեզ հարկավոր է զբոսնել, բարեկամների հետ տեսնվել:

— Ա՜հ, Պոլին, ձեր գուշակությունը ճիշտ էր: Ֆեոդորան ինձ սպանում է, ես ուզում եմ մեռնել: Կյանքն ինձ համար անտանելի է:

— Մի՞թե աշխարհում միայն մի կին կա,— հարցրեց Պոլինը ժպտալով:— Ինչո՞ւ դուք ձեզ մշտապես տանջում եք, երբ կյանքը այնքան կարճ է:

Ես նայեցի Պոլինին ապշահար հայացքով: Նա ինձ մենակ թողեց: Ես չնկատեցի նրա հեռանալը, ես լսել էի նրա ձայնը, բայց չէի հասկացել նրա խոսքերի իմաստը: Շուտով ես ստիպված եղա հուշագրությամբ ձեռագիրը տանելու իմ գրական կապալառուին: Կրքով կլանված՝ չգիտեի, թե ինչպես եմ ապրում առանց փողի, գիտեի միայն, որ իմ ստանալիք չորս հարյուր հիսուն ֆրանկը կբավականացնի իմ պարտքերը վճարելու. ուստի գնացի իմ վարձը ստանալու և հանդիպեցի Ռաստինյակին, նա գտավ, որ ես փոխվել, նիհարել եմ:

— Ո՞ր հիվանդանոցից ես դուրս եկել,— հարցրեց նա:

— Այդ կինն ինձ սպանում է,— պատասխանեցի ես:— Ես նրան չեմ կարողանում ոչ արհամարհել, ոչ էլ մոռանալ:

— Ավելի լավ է սպանես նրան, այն ժամանակ դու գուցե կդադարես երազել նրա մասին,— ասաց Ռաստինյակը ծիծաղելով:

— Ես դրա մասին մտածել եմ,— խոստովանեցի ես։— Երբեմն ես իմ հոգին զվարճացնում եմ մի ոճիր, բռնություն կամ սպանություն գործելու մտքով, բայց գտնում եմ, որ ընդունակ չեմ այդպիսի բան անելու։ Կոմսուհին հրաշալի հրեշ է. նա ներում կհայցի, իսկ մեզանից ամեն մեկը Օթելլո չէ։

— Նա այնպես է, ինչպես այն բոլոր կանայք, որոնց չենք կարողանում տիրանալ,— ինձ ընդմիջեց Ռաստինյակը։

— Ես կխելագարվեմ,— գոչեցի ես։— Ես զգում եմ, որ խելագարությունը երբեմն մոնչում է իմ ուղեղում։ Իմ մտքերը ասես ուրվականներ են, նրանք պարում են իմ առջև, և ես չեմ կարողանում նրանց բռնել։ Ես մահը կգերադասեմ այսպիսի կյանքից։ Ուստի ես խղճամտորեն որոնում եմ այդ պայքարին վերջ տալու լավագույն միջոցը։ Հարցը արդեն կենդանի Ֆեոդորայի, Սենտ-Օնորե արվարձանի Ֆեոդորայի մասին չէ, այլ իմ Ֆեոդորայի մասին, որ ահա այստեղ է,— ասացի ես, խփելով ճակատիս։— Դու ինչպե՞ս ես գտնում ափիոնը։

— Ահավոր կերպով, տանջալի,— պատասխանեց Ռաստինյակը։

— Ածխագա՞զը։

— Գարշելի։

— Սե՞նը։

— Ուռկաններն ու դիականոցը շատ կեղտոտ են։

— Ատրճանակի կրակո՞ցը։

— Եթե վրիպես, կմնաս այլանդակված։ Լսիր,— ավելացրեց Ռաստինյակը,— բոլոր երիտասարդների պես ես էլ մի ժամանակ մտածել եմ ինքնասպանության մասին։ Մեզանից ո՞վ երեսուն տարեկան հասակում երկու-երեք անգամ չի սպանել իրեն։ Սակայն ես ավելի լավ բան չեմ գտել, քան կյանքը մաշեցնել հաճույքների մեջ։ Սուզվիր խոր շվայտության մեջ, դու կսպանես քո կիրքը կամ քեզ։ Անժուժկալությունը, սիրելիս, բոլոր մահերի թագուհին է։ Չէ՞ որ նա հասցնում էր շանթահարիչ կաթվածահարության։ Կաթվածը ատրճանակային կրակոց է, որ երբեք չի վրիպում։ Գինարբուքը մեզ ընձեռում է ամեն տեսակ ֆիզիկական հաճույքներ. մի՞թե դա նույն ափիոնը չէ, միայն ավելի փոքր քանակությամբ։ Մեզ ստիպելով չափից ավելի խմել, խրախճանքը մեզ հրավիրում է մահացու մարտի։ Մի՞թե դուքս Կլարենսի մալվազյան գինու տակառը[122] ավելի հաճելի չէ, քան Սենի տիղմը։ Ամեն անգամ, երբ մենք ազնվորեն թավալվում ենք սեղանի տակ, մի՞թե դա թեթև շնչահեղձություն չէ։ Իսկ եթե պարեկը մեզ վերցնում է և պառկեցնում պահականոցի պաղ թախտի վրա, մի՞թե մենք մեզ չենք զգում ինչպես դիականոցում, այն տարբերությամբ, որ մեր փորը ուռած, փքված, կապտած, կանաչած չէ, իսկ մեր գիտակցությունը տագնապի մեջ է։ Ա՛հ,— շարունակեց Ռաստինյակը,— այս երկարատև ինքնասպանությունն այն չէ, ինչ որ սնանկացած

---

[122] **Դուքս Կլարենսի մալվազյան գինու տակառը** — դուքս Կլարենսը (XV դար), Անգլիո թագավոր Էդուարդ IV-ի եղբայրը, մահվան դատապարտվելով, խնդրեց իրեն խեղդել գինու տակառի մեջ։

խանութպանի մահը: Խանութպանները վարկաբեկեցին գետը. նրանք իրենց ջուրն են գցում, որպեսզի իրենց պարտատերերի գութը շարժեն: Եթե քո տեղը լինեի, կաշխատեի մեռնել վայելչորեն: Եթե դու ուզում ես նոր տեսակի մահ ստեղծել, այդպես միայնակ կռվելով կյանքի դեմ, առաջինը ես կհետևեմ քո օրինակին: Ես ձանձրացել եմ, ես հիասթափվել եմ: Այն էլզասուհին, որին ինձ կին առաջարկեցին, վեց մատ ունի ձախ ոտքին. ես չեմ կարող ապրել վեցմատանի կնոջ հետ: Եթե այդ իմացվեր, ես ծիծաղելի կդառնայի: Նա ունի միայն տասնութ հազար ֆրանկ եկամուտ. նրա հարստությունը նվաղում է, իսկ մատների թիվը ավելանում: Սատանա՛ն տանի... Խելառ կյանք վարենք, գուցե և պատահաբար երջանկություն գտնենք:

Ռաստինյակը ինձ քարշ տվեց: Այդ ծրագիրը հղի էր շատ գայթակղիչ փորձություններով, արծարծում էր չափազանց շատ հույսեր, մի խոսքով նա ուներ չափազանց բանաստեղծական երանգ, որպեսզի չհրապուրեր մի բանաստեղծի:

— Իսկ փո՞ղը,— հարցրի ես:

— Չէ՞ որ դու չորս հարյուր հիսուն ֆրանկ ունես:

— Այո, բայց ես պարտք եմ դերձակին, տանտիրուհուն...

— Դու դերձակին վճարո՞ւմ ես: Քեզանից բան դուրս չի գա, և ոչ իսկ մինիստր:

— Բայց ի՞նչ կարող ենք անել քսան լուիդորով:

— Գնալ և խաղալ:

Ես սարսռացի:

— Է՛հ, դու էլ,— ասաց Ռաստինյակը, նկատելով իմ զգուշությունը:— Դու ուզում ես ընդունել իմ որակած **զեխության սիստեմը**, բայց վախենում ես խաղատնից:

— Լսիր,— պատասխանեցի ես,— ես հորս խոստացել եմ երբեք ոտք չդնել խաղատուն: Այդ խոստումը ինձ համար նվիրական է, բացի դրանից, ես անհաղթահարելի զզվանք եմ զգում, երբ անցնում եմ խաղատան մոտով: Առ այս հարյուր էկյուն և մենակ գնա այնտեղ: Մինչ դու բախտախաղի կդնես մեր հարստությունը, ես կգնամ իմ գործերը կարգադրելու և վերադարձին քեզ կսպասեմ քո տանը:

Ահա թե, սիրելիս, ինչպես խորտակեցի ինձ: Բավական է, որ երիտասարդը հանդիպի մի կնոջ, որ իրեն չի սիրում կամ մի կնոջ, որ իրեն շատ է սիրում, որպեսզի խանգարվի նրա ամբողջ կյանքը: Երջանկությունը կլանում է մեր ուժերը, ապերջանկությունը հանգցնում է մեր առաքինությունները: Վերադառնալով «Սեն-Կենտեն» պանդոկը, ես երկար դիտեցի այն խուցը, ուր վարել էի գիտնականի անբասիր կյանք, մի կյանք, որը գուցե պատվավոր և երկարատև լիներ և որը չպետք է թողնեի կրքի համար, որ ինձ անդունդ էր տանում: Պոլինը ինձ գտավ մելամաղձիկ մտախոհությունների մեջ:

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նա:

Ես սառնությամբ վեր կացա և հաշվեցի փողը, որ պարտք էի նրա մորը,— դրան ավելացնելով իմ բնակարանի վեց ամսվա վարձը: Պոլինը ինձ նայեց մի տեսակ սարսափով:

— Ես ձեզանից հեռանում եմ, սիրելի Պոլին:

— Ես այդ գուշակում էի,— գոչեց Պոլինը:

— Լսեցեք, սիրելիս, ես չեմ հրաժարվում այստեղ վերադառնալու մտքից: Իմ խուցը կես տարով պահեցեք ինձ համար: Եթե ես չվերադառնամ նոյեմբերի 15-ին, դուք կդառնաք իմ ժառանգը: Այս կնքված ծրարի մեջ,— ասացի ես, ցույց տալով թղթերի մի կապոց,— գտնվում է «Կամքի մասին» իմ մեծ աշխատության ձեռագիրը. դուք այն կհանձնեք Թագավորական գրադարանին: Իսկ մնացած բոլորը, ինչ ես թողնում եմ այստեղ, կտնօրինեք այնպես, ինչպես կցանկանաք:

Պոլինը ինձ նայեց այնպիսի հայացքով, որ սիրտս ճմլվեց: Նա իմ առաջ կանգնել էր ինչպես կենդանի խիղճ:

— Ես այլևս դասեր չե՞մ առնելու,— հարցրեց Պոլինը,— ցույց տալով դաշնամուրը:

Ես չպատասխանեցի:

— Դուք ինձ նամակ գրելո՞ւ եք:

— Մնաք բարով, Պոլին:

Ես նրան մեղմորեն քաշեցի դեպի ինձ և նրա քնքուշ, ձյունաթույր, կուսական ճակատի վրա եղբայրական, ծերունական մի համբույր դրոշմեցի: Նա խույս տվեց: Ես չուզեցի տեսնել տիկին Գոդենին: Ես բանալին դրի սովորական տեղում և մեկնեցի: Կլյունի փողոցից թեքվելիս ես իմ հետևում լսեցի մի կնոջ թեթև ոտնաձայնը:

— Այս քսակը ասեղնագործել էի ձեզ համար, դուք կմերժեի՞ք ընդունել այն,— ասաց Պոլինը:

Փողոցային լապտերի լույսի տակ ինձ թվաց, թե արտասուքի կաթիլներ նշմարեցի Պոլինի աչքերի մեջ և հառաչեցի: Երկուսս էլ, հավանաբար, մղված միևնույն մտքից՝ մենք իրարից բաժանվեցինք ժանտախտից փախչողի շտապողականությամբ: Շվայտ կյանքը, որին ես նվիրվում էի, իր քմահաճ արտահայտությունը գտավ Ռաստինյակի սենյակի կահավորման մեջ, ուր ազնիվ անհոգությամբ սպասում էի նրա վերադարձին: Բուխարու մեջտեղ բարձրանում էր ճոճանակավոր ժամացույցը Վեներայով, որ նստել էր կրիայի վրա և ձեռքերի մեջ բռնել կիսով չափ ծխված մի գլանակ: Դես ու դեն դրված էին գողտրիկ կահեր — սիրող սրտի ընծաներ: Հին գուլպաներ ընկած էին հեշտագրգիռ բազմոցի վրա: Զսպանակավոր փափուկ թեկնաթոռը, որի մեջ ես խրված էի, կրում էր սպիներ, ինչպես հին զինվոր. նա ցուցադրում էր իր վիրավոր թևերը, իսկ թիկունքին երևում էին օձանելիքի հետքերը, որոնք թողել էին Ռաստինյակի բարեկամ գլուխները: Փարթամության ու թշվառության միամիտ զուգակցումը երևում էր մահճակալի մեջ, որմերի վրա, ամենուրեք: Կարելի էր կարծել, որ դա նեապոլիտանական մի պալատ էր, որի մեջ բնակվում էին լացցարոնիներ: Դա սենյակ էր խաղացողի, ստահակի, որը յուրահատուկ ըմբռնում ունի պերճանքի մասին, որ ապրում է զգայություններով և ամենևին չի խորշում անհարիր զուգորդություններից: Այսուհանդերձ այս պատկերը զուրկ չէր բանաստեղծականությունից: Կյանքն այստեղ ներկայանում էր իր բոլոր զանակներով և գրգյակներով, անակնկալներով և անկատարություններով, ինչպիսին է նա իրականության մեջ, բայց կենդանի, քմաբարո, ինչպես բացօթյա ճամբարում, ուր

ասպատակը կողոպտում է այն ամենը, ինչ ձեռքն է ընկնում: Բայրոնի առանձին էջերով իր վառարանն է վառել այդ երիտասարդը, որ բախտախաղի է դրել հազար ֆրանկ, թեև երբեմն վառելափայտի կտոր էլ չի ունեցել, կառքով է զբոսնել և սակայն պատշաճ շապիկ էլ չի ունեցել: Առավոտյան ինչ-որ կոմսուհի, դերասանուհի կամ թղթախաղ նրան վարձատրում են արքայավայել հանդերձեղենով: Այստեղ մոմը դրված էր ֆոսֆորային հրահանի կանաչ, թիթեղյա տուփի մեջ, այնտեղ ընկած էր իր ոսկեդրվագ շրջանակից զրկված կանացի մի դիմանկար: Դեհ, ինչպե՞ս կարող է հուզումների ծարավի երիտասարդը հրաժարվել հակադրություններով այնքան հարուստ կյանքի հրապույրներից, որոնք խաղաղ ժամանակ նրան տալիս են մարտական կյանքի բոլոր հաճույքները: Ես սկսում էի նիրհել, երբ հանկարծ Ռաստինյակը ոտքով հրեց սենյակի դուռը և գոչեց.

— Հաղթանա՛կ: Հիմա կարող ենք մեռնել մեր ուզած ձևով...

Նա ինձ ցույց տվեց ոսկիներով լեցուն գլխարկը, այն դրեց սեղանի վրա, և մենք պարեցինք նրա շուրջը, ինչպես երկու վայրենիներ իրենց որսի շուրջը. մենք ճչացինք, կայթեցինք, կայտռեցինք, միմյանց կռփահարեցինք այնպիսի ուժգնությամբ, որից ռնգեղջյուրն անգամ կտապալվեր, մենք երգեցինք աշխարհի բոլոր ուրախությունների տեսքից, որոնք մեզ համար պարփակվում էին այդ գլխարկի մեջ:

— Քսանյոթ հազար ֆրանկ,— կրկնում էր Ռաստինյակը, մի քանի թղթադրամներ ավելացնելով ոսկիների կույտին:— Ուրիշներին այս դրամը կբավականացներ ապրելու համար, իսկ մեզ կբավականացնի՞ մեռնելու համար: Օ՛, այո: Մենք մեր հոգին կավանդենք ոսկիների լոգանքի մեջ... Ուռա՛:

Եվ մենք նորից վեր-վեր ցատկեցինք: Մենք ժառանգների նման հավասար բաժանեցինք դրամները, կրկին նապոլեոններից, մեծ ոսկեդրամներից սկսած մինչև մանր դրամները և երկար ժամանակ հրճվեցինք ասելով. «Քե՛զ... Ի՛նձ...»:

— Մենք չենք քնի,— բացականչեց Ռաստինյակը:— Ժոզեֆ, պունչ բեր:

Նա ոսկի նետեց իր հավատարիմ ծառային:

— Ահա քո բաժինը,— ասաց նա,— վերցրու հոգեհանգստի համար:

Հետևյալ օրը ես կարասիներ գնեցի Լրսաժից, վարձեցի Տեբու փողոցի վրա այն բնակարանը, ուր դու ծանոթացար ինձ հետ, և կանչեցի լավագույն կահահարդարին: Ես ձեռք բերի ձիեր: Ես նետվեցի սին և միաժամանակ իրական հաճույքների հորձանքի մեջ: Ես խաղացի, մերթ շահելով, մերթ կորցնելով մեծ գումարներ, բայց միայն բարեկամների մոտ կազմակերպված երեկույթներին և ամենևին ոչ խաղատներում, որոնց նկատմամբ ես պահեցի իմ սրբազան և սկզբնական սոսկումը: Աստիճանաբար ինձ մոտ երևացին բարեկամներ. նրանց համակրանքը ես պարտական էի գժտություններին կամ այն դյուրահավատ թեթևությանը, որով մենք միմյանց ենք տալիս մեր գաղտնիքները, մեզ նվաստացնելով բարեկամության համար, բայց գուցե մենք միմյանց հետ սերտ կապվում ենք միայն մեր մոլություններով: Ես համարձակվեցի ասպարեզ գալ մի քանի գրական գործերով, որոնք արժանացան հավանության: Ընթացիկ գրականության մեծ մարդիկ տեսնելով, որ ես ամենևին վտանգավոր մրցակից չեմ, գովաբանեցին ինձ, իհարկե, ոչ այնքան իմ անձնական արժանիքների համար, որքան իրենց ընկերներին վշտացնելու համար: Գործածելով մեր խրախճանային լեզվի մեջ

մտած պատկերավոր մի արտահայտությունը, ես դարձա **ուտող–խմող մարդ**։ Իմ ինքնասիրությունը արտահայտում էի նրանով, որ օրըստօրե խորտակում էի ինձ, իմ եռանդով ու տոկունությամբ ջախջախելով ամենազվարթ բաժակակիցներին։ Ես միշտ թարմ, միշտ վայելուչ էի։ Ես համարվում էի սրախոս։ Ոչ մի բան իմ մեջ չէր մատնում այն զարհուրելի գոյությունը, որ մարդուն վերածում է ձագարի, գինու տակառի կամ երիվարի։ Շուտով գինարբուքը ինձ երևաց իր ամբողջ ահավոր վեհությամբ, և ես այդ հասկացա։ Իհարկե, խելոք և լրջմիտ մարդիկ, որոնք պիտակներ են կպցնում իրենց ժառանգների համար սահմանված շշերի վրա, չեն կարող հասկանալ ոչ այսպիսի լայն կյանքի տեսությունը, ոչ էլ նրա բնականոն ընթացքը. ինչպե՞ս կարելի է գավառաբնակներին տոգորել նրա բանաստեղծականությամբ, եթե նրանց համար հաճույքների այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են ափիոնն ու թեյը, դեռևս սոսկ դեղորայք են։ Եվ նույնիսկ Փարիզում, մտքի մայրաքաղաքում, մի՞թե մենք չենք հանդիպում թերի գրգամոլների։ Վարժված չլինելով հաճույքի չափազանցության, նրանք հոգնում են առաջին իսկ գինարբուքից հետո, ինչպես այն տարի բուրժուաները, որոնք, լսելով Ռոսսինիի նոր օպերան, նզովում են երաժշտությունը։ Նրանք հրաժարվում են այդ կյանքից, ինչպես սակավապետ մարդը հրաժարվում է Ռյուֆեկի կարկանդակներից[123], որովհետև առաջին կարկանդակը նրան անմարսողություն է պատճառել։ Շվայտությունը, անշուշտ, արվեստ է, ինչպես բանաստեղծությունը, և նրա համար հարկավոր են ուժեղ հոգիներ։ Հասկանալու համար նրա գաղտնիքները, վայելելու համար նրա գեղեցկությունները, մարդ պետք է փութաջանորեն ուսումնասիրի այն։ Ինչպես բոլոր գիտությունները, նա սկզբում վանողական, անհրապույր է։ Մեծագույն խոչընդոտները խափանում են մարդու ճանապարհը դեպի բուռն վայելքները, ոչ թե դեպի մանր ուրախությունները, այլ դեպի այն սիստեմները, որոնք սովորություն են դարձնում ամենահազվագյուտ զգայությունները, միաձուլում, արգասավորում են նրանց, այսպիսով ստեղծում են դրամատիկական մի կյանք և մարդուն ստիպում են տարապայմանորեն, գահավիժորեն վատնել իր ուժերը։ Պատերազմը, իշխանությունը, արվեստը նույնպես հրապուրանքներ են, որոնք նույնքան գերիվեր են մարդկային սովորական ուժերից, նույնքան ձգողական են, որքան շվայտությունը, և այդ բոլորը դժվար մատչելի են։ Բայց երբ մարդ գրոհով նվաճել է այդ մեծ գաղտնիքները, նա ընթանում է ինչ-որ առանձնահատուկ աշխարհում։ Զորավարները, նախարարները, արվեստագետները, բոլորն էլ առավել կամ նվազ չափով հակամետ են սանձարձակության՝ մղված սովորականից այնքան տարբեր իրենց կյանքը բուռն զվարճություններով պարարելու պահանջից։ Եվ, վերջապես։ պատերազմը արյան շվայտություն է, ինչպես քաղաքականությունը՝ իրարամերժ շահերի։ Բոլոր չափազանցությունները եղբայրներ են։ Այդ հասարակական այլանդակությունները անդունդների պես օժտված են ձգողական ուժով. նրանք քաշում են մեզ, ինչպես սուրբ Հեղինեի կղզին կանչում էր Նապոլեոնին. նրանք գլխապտույտ են պատճառում, նրանք կախարդում են, և մենք ձգտում ենք հատակը տեսնել, ինքներս էլ չիմանալով, թե ինչու։ Գուցե նրա մեջ անհունության գաղափա՞րը կա, գուցե նա մարդու հպարտությունը շոյող ինչ-որ բա՞ն է թաքցնում իր մեջ և իր վրա՞ հրավիրում նրա ուշադրությունը։ Ի հակակշիռ պարապմունքների երանավետ ժամերին, ստեղծագործության ժամանակ զգացած բերկրանքներին, հոգնած արվեստագետը իրեն համար պահանջում է կամ, ինչպես աստված,

---

[123] **Ռյուֆեկի կարկանդակներ** — Ռյուֆեկը փոքր քաղաք է Ֆրանսիայում, որ հայտնի էր սագի լյարդով պատրաստված կարկանդակների արտադրությամբ։

կիրակնօրյա հանգիստը, կամ, ինչպես սատանան, դժոխքի վավաշանքները, որպեսզի զգայարանների գործունեությունը հակադրի իր իմացական կարողությունների գործունեությանը:

Լորդ Բայրոնի համար հանգիստը չէր կարող լինել շաղակրատանք բոստոնախաղի շուրջ, որ հրապուրում է ռանտիեին. նրան՝ բանաստեղծին, Հունաստանը հարկավոր էր իբրև խաղադրամ Մահմուդի դեմ[124]: Մի՞թե մարդը պատերազմի ժամանակ չի դառնում մահվան հրեշտակ, յուրատեսակ հսկա դահիճ: Մի՞թե արտասովոր դյութանքներ հարկավոր չեն նրա համար, որ մենք կարողանանք ընդունել մեր փխրուն պատյանի թշնամիները հանդիսացող այն դժնդակ տանջանքերը, որոնցով, ինչպես փշեղեն գոտիով, շրջապատված են կրքերը: Եթե ծխողը ծխախոտի անչափ գործածությունից ջղաձգորեն գալարվում է և յուրատեսակ հոգևարք ապրում, ապա դրա փոխարեն ինչպիսի՜ ոլորտների, ինչպիսի՜ ցնծատոների մեջ է զգում իրեն: Մի՞թե Եվրոպան անընդհատ չի վերսկսել պատերազմը՝ իր արյունաթաթախ ոտքերը տակավին չսրբած: Արդյո՞ք մարդկային զանգվածները ևս ունեն իրենց արբեցությունը, ինչպես բնությունն ունի իր սիրային նոպաները: Առանձին մարդու համար, մի Միրաբոյի համար, որ ապրում է խաղաղ ժամանակ և երազում է փոթորիկների մասին, շվայտությունն ամեն ինչ է, նա անդադրում մարտն է կամ, լավ ևս, ամբողջ կյանքի մենամարտն է ինչ-որ անհայտ ուժի, հրեշի հետ. սկզբում հրեշը ահաբեկում է, հարկավոր է բռնել նրա եղջյուրներից. դա չափազանց դժվար է: Ենթադրենք, բնությունը ձեզ տվել է շատ նեղ կամ շատ ծույլ ստամոքս. դուք հնազանդեցնում, լայնացնում եք այն, դուք սովորում եք գինու գործածությանը, վարժվում եք գինովությանը, անքուն գիշերներ եք անցկացնում, վերջապես հուսարական գնդապետի կազմվածք եք ձեռք բերում, վերակոփում եք ձեզ, ասես աստծու վրա գրոհելու համար: Երբ մարդ այսպես վերափոխել է իրեն, երբ նորակոչիկը հին գինվորի նման իր հոգին վարժեցրել է հրետանային կրակին, իսկ ոտքերը ռազմերթին, երբ նա դեռ չի պատկանում հրեշին և իրենց միջև դեռ չի որոշված, թե ով է տերը իրենցից, նրանք նետվում են մեկը մյուսի վրա, ու մերթ մեկը, մերթ մյուսը հաղթում է հակառակորդին, և դա տեղի է ունենում այնպիսի մի ոլորտում, ուր ամեն ինչ հրաշք է, ուր նիրհում են հոգու մորմոքները և կենդանանում են միայն գաղափարների ուրվականները: Այս կատաղի պայքարը արդեն դառնում է անհրաժեշտ: Հանդիսանալով մարմնացումը այն առասպելական հերոսների, որոնք, ըստ ավանդության, իրենց հոգին ծախել են սատանային, որպեսզի չարիք գործելու ուժ ստանան նրանից, շվայտ մարդն իր մահով է վճարում կյանքի բոլոր հորդուն և բեղուն վայելքների համար: Փոխանակ հուլորեն հոսելու վաճառասեղանի կամ գրասենյակի միօրինակ ափերի երկայնքով, կյանքը եռում ու վազում է հեղեղի նման: Վերջապես, շվայտությունը, հավանաբար, մարմնի համար այն է, ինչ միստիկական հաճույքները հոգու համար: Արբեցությունը մեզ սուզում է անուրջների մեջ, որոնք լի են նույնքան հետաքրքրական բանդագուշանքներով, որքան էքստազային տեսիլները: Այն ժամանակ մենք ունենում ենք դեռատի աղջկա քմահաճույքների պես հանկուցիչ ժամեր, բարեկամների հետ հաճելի զրույցներ, մի ամբողջ կյանք պատկերող բառեր, անկեղծ և անմիջական ուրախություններ, անխոնջ ճանապարհորդություններ, մի քանի ֆրազներով ամբողջական

---

[124] **Նրան, բանաստեղծին, Հունաստանը հարկավոր էր իբրև խաղադրամ Մահմուդի դեմ** — խոսքը վերաբերում է Բայրոնի մասնակցությանը Հունաստանի 1823—1824 թվերի ազգային-ազատագրական պայքարին թուրքական լծի դեմ:

պոեմներ: Մարդկային անասունի անասնական գոհացումից հետո, անասունի, որի մեջ գիտությունը երկար ժամանակ հոգի է որոնել, վրա են հասնում թովչական թմրությունները, որոնց համար հառաչում են նրանք, որոնք ձանձրացել են խոհականությունից: Չէ՞ որ նրանք զգում են լիակատար հանգստության կարիքը, իսկ շվայտությունն արդյո՞ք մի տեսակ տուրք չէ, որ հանճարը վճարում է չարին: Նայիր բոլոր մեծ մարդկանց. կամ նրանք տոփոտ են, կամ բնությունը նրանց ստեղծում է թուլակազմ: Ինչ-որ հեգնոտ կամ խանդոտ ուժ այլասերում է նրանց հոգին կամ մարմինը, որպեսզի հավասարակշռի նրանց տաղանդի գործունեությունը: Արբշռության ժամերին մարդիկ և իրերը ձեր առջև կներկայանան ձեր երևակայության ստեղծած պատկերներով: Իբրև արարչագործության պսակ՝ դուք աշխարհը կձևափոխեք ինչպես կցանկանաք: Այդ տնական տենդի ժամանակ խաղը ձեր ուզածի չափ ձեր երակների մեջ կհոսեցնի հալած արճիճը: Եվ ահա մի օր դուք կպատկանեք հրեշին. այն ժամանակ դուք ինձ նման կունենաք ահավոր մի զարթոնք. անզորությունը կնստի ձեր սնարի մոտ: Եթե հին ռազմիկ եք, ձեզ կկրծի թոքախտը, եթե դիվանագետ եք, սրտի արյունատար անոթների լայնացում կունենաք, և ձեր կյանքը մազից կկախվի. գուցե և թոքատապը ինձ կասի՝ «Ժամանակն է, գնանք», ինչպես մի ժամանակ նա ասել է Ռաֆայել Ուրբինացուն, որը վախճանվեց սիրային անժուժկալությունից: Ահա թե ինչպես ես ապրեցի: Ես աշխարհ եկա կամ շատ վաղ, կամ շատ ուշ. իհարկե, իմ ուժը այստեղ վտանգավոր կլիներ, եթե ես այս կերպով չթուլացնեի այն,— չէ՞ որ հերկուլեսյան բաժակը գինարբուքի վերջում աշխարհն ազատեց Ալեքսանդրից[125]: Վերջ ի վերջո նրանց համար, որոնց կյանքը ձախողվել է, հարկավոր է դրախտ կամ դժոխք, շվայտություն կամ անկելանոց: Հիմա ես արիություն չունեցա բարոյականություն քարոզելու այս երկու էակներին,— ասաց նա, մատնանշելով Եֆրասիային և Ակիլինային:— Չէ՞ որ նրանք իմ պատմության մարմնացումն են, իմ կյանքի պատկերը: Ես չէի կարող մեղադրել նրանց, նրանք իմ առջև երևում էին ինչպես դատավորներ:

Այս կենդանի պոեմի մեջտեղը, այս քնաբեր հիվանդության գրկում ես երկու անգամ նոպաներ ունեցա, որոնք ինձ սուր ցավեր պատճառեցին: Առաջին նոպան պատահեց երկու օր հետո այն պահից, երբ ես, Սարդանապալի[126] նման, խարույկի մեջ նետվեցի. Իտալական թատրոնի սյունաշար կամարների տակ ես հանդիպեցի Ֆեոդորային: Մենք սպասում էինք մեր կառքերին: «Ահ, դուք դեռ կենդանի՛ եք»,— այսպես կարելի էր հասկանալ Ֆեոդորայի ժպիտը և այն չարամիտ և անորոշ խոսքերը, որ նա ասաց իր տարփածուին, անշուշտ նրան պատմելով իմ պատմությունը և իմ սերը բնորոշելով որպես գռեհիկ սեր: Ֆեոդորան հրճվում էր իր կարծեցյալ խորաթափանցությամբ: Օ, մեռնե՛լ այդ կնոջ համար, դեռ պաշտե՛լ նրան, տեսնե՛լ նրան կուրտիզանուհիների անկողնում իմ գերագրգռության, իմ արբեցության ժամանակ և զգա՛լ, որ նրա ծաղր ու ծանակի առարկան եմ դարձել: Չկարողանա՛լ իմ կուրծքը պատռել, պոկել այնտեղից սերը և նետել նրա ոտքերի առաջ:

---

[125] **Հերկուլեսյան բաժակը գինարբուքի վերջում աշխարհն ազատեց Ալեքսանդրից** — ըստ ավանդության, Ալեքսանդր Մակեդոնացին մեռավ խնջույքի ժամանակ, խմելով հսկայական (հերկուլեսյան) բաժակով գինի:

[126] **Սարդանապալ —** Ասորեստանի վերջին թագավորը: Ըստ ավանդության, նա, չուզելով գերի ընկնել բաբելոնցիների ձեռքը, իրեն և իր կանանց այրեց խարույկի վրա:

Ես շուտով մսխեցի իմ հարստությունը, սակայն կանոնավոր կյանքի երեք տարիները ինձ օժտել էին ամենազորավոր առողջությամբ, և այն օրը, երբ ես փող չէի ունենում, ինձ զգում էի գերազանց: Որպեսզի շարունակեի իմ ինքնասպանությունը, ես ստորագրեցի կարճ պայմանաժամով պարտամուրհակներ, և վճարման օրը հասավ: Ահավո՜ր հուզումներ: Իսկ նրանք որքան կենդանացնում են երիտասարդ սրտերը: Ես չեմ ծնվել վաղաժամ ծերանալու համար. իմ հոգին տակավին ջահել, առույգ, կայտառ էր: Իմ առաջին պարտամուրհակը արթնացրել էր իմ բոլոր առաքինությունները. նրանք եկան համբաքայլ և վշտագին ներկայացան իմ առջև: Ես կարողացա համոզել նրանց, ինչպես պառավ մորաքույրների, որոնք սկզբում կփնթփնթան, վերջ ի վերջո լաց կլինեն և փող կտան: Իմ երևակայությունը ավելի խիստ էր, նա ինձ ցույց էր տալիս, թե ինչպես իմ անունը Եվրոպայում շրջում է քաղաքից քաղաք: **«Մեր անունը — այդ մենք ենք»** — ասել է Եվսեբիոս Սալվերտը[127]: Ինչպես մի գերմանացու կրկնորդ, ես դեգերումներից հետո վերադարձա իմ բնակարանը, որտեղից ես չէի էլ մտածում դուրս գալ, և հանկարծ սթափվեցի: Մի ժամանակ, երբ ես Փարիզի փողոցներում հանդիպում էի բանկային պաշտոնյաներին՝ առևտրական խղճի այդ մարդկանց, իրենց տիրոջ տոհմանշանը կրող գորշ ծառայազգեստով, արծաթե վահանակով, անտարբերությամբ էի նայում նրանց. բայց հիմա կանխավ ատում էի նրանց: Չէ՞ որ նրանցից մեկը մի առավոտ կգա ինձ մոտ և ինձանից պատասխան կպահանջի իմ ստորագրած տասնմեկ պարտամուրհակների համար: Իմ ստորագրությունն արժեր երեք հազար ֆրանկ, այդքան ինքս էլ չէի արժենա: Դատական կատարածուները, որոնք անտարբեր են ամեն վշտի, նույնիսկ մահվան նկատմամբ, կանգնում էին իմ առջև ինչպես դահիճներ, որոնք ասում են դատապարտյալին. «Ահա ժամը երեք և կեսը խփեց»: Նրանց գրագիրներն իրավունք ունեին ինձ բռնելու, իմ անունը խզբզելու, խծբծելու, ծաղրելու: Ես պարտքի մեջ էի: Ով պարտքի մեջ է, մի՞թե նա կարող է իրեն պատկանել: Մի՞թե ուրիշ մարդիկ իրավունք չէին ունենա ինձանից հաշիվ պահանջելու, թե ինչպես էի ես ապրում: Ինչո՞ւ էի համեղ պուդդինգներ ուտում: Ինչո՞ւ էի շամպայն խմում: Ինչո՞ւ էի առանց վճարելու քնում, քայլում, մտածում, զվարճանում: Մի րոպե, երբ ես տարված կլինեմ պոեզիայով, կամ խորասուզված որևէ մտքի մեջ, և կամ, նախաճաշի նստելով, շրջապատված կլինեմ բարեկամներով, ուրախություններով, հաճելի կատակներով, իմ առջև կարող է ներկայանալ մի պարոն՝ շագանակագույն ֆրակով, ձեռքին մաշված գլխարկով: Եվ դուրս կգա, որ այդ պարոնը իմ **պարտամուրհակն** է, իմ **պարտքը,** մի ուրվական, որ կփչացնի իմ ուրախությունը. նա ինձ կստիպի թողնել սեղանը և խոսել իր հետ. նա կխլի իմ զվարթությունը, իմ սիրուհուն, ամեն ինչ, մինչև իսկ իմ անկողինը: Խղճի խայթերն ավելի տանելի են, նրանք մեզ չեն շպրտի փողոց, չեն նստեցնի բանտ, չեն գցի մոլության գարշելի որջը. նրանք մեզ կնետեն սոսկ կառափնարան, ուր դահիճը վեհացնում է մեզ. մեր մահապատժի ժամանակ բոլորը հավատում են մեր անմեղությանը, մինչդեռ հասարակությունը ոչ մի առաքինություն չի ընդունում սնանկացած ցոփակյացի մոտ: Բացի դրանից, կանաչ մահուդով, կապույտ ակնոցներով, խունացած հովանոցներով այդ երկոտանի պարտքերը, այդ մարմնացած պարտքերը, որոնց մենք երես առ երես հանդիպում ենք փողոցի անկյունադարձում այն պահին, երբ մեր դեմքին ժպիտ կա, ահավոր իրավունք են վայելում ասելու. «Պարոն դը Վալանտենը ինձ պարտք է և չի վճարում: Նա իմ ձեռքերումն է: Թող նա ինձ չտեսնել չձևացնի»: Պարտատերերին հարկավոր է ողջունել, սիրալիր կերպով ողջունել:

---

[127] **Եվսեբիոս Սալվերտ** — հեղինակը «Փիլիսոփայական և պատմական փորձ մարդկանց, ժողովուրդների և աշխարհագրական անունների ուսումնասիրության» (1823):

«Ե՞րբ եք ինձ վճարելու»,— ասում են նրանք: Եվ մենք հարկադրված ենք լինում ստել, փող խնդրել ուրիշից, խոնարհվել իր սնդուկի վրա նստած մի ապուշի առջև, ընդունել նրա պաղ հայացքը, ապտակից ավելի վիրավորական տզրուկի հայացքը, հանդուրժել նրա բարեմային բարոյականությունը[128] և կոպիտ տգիտությունը: Պարտքը երևակայության պտուղն է, որ չեն հասկանում պարտատերերը: Հոգու խոյանքները գրավում և հաճախ ստրկացնում են նրան, ով փոխառություն է անում. մինչդեռ ոչ մի բարձր բան չի ստրկացնի, ոչ մի վսեմ բան չի ղեկավարի նրան, ով ապրում է փողի համար և փողից բացի ուրիշ ոչինչ չի ճանաչում: Ես սարսափում էի փողից: Վերջապես, պարտամուրհակը կարող է կերպարանափոխվել ընտանիքով ծանրաբեռնված և առաքինությունների ծանրության տակ կռացած ծերունու: Ես կարող էի պարտապան դառնալ Գրյոզի[129] կենդանի մի պատկերի, մանուկներով շրջապատված մի անդամալույծի, մի զինվորի այրի կնոջ, և նրանք բոլորը աղերսանքով ինձ կկարկառեին իրենց ձեռքերը: Ահավոր պարտատերեր, որոնց հետ հարկավոր է արտասվել. երբ մենք նրանց հատուցում ենք մեր պարտքը, մենք դեռ պարտավոր ենք նրանց օժանդակել: Վճարման պայմանաժամի նախօրյակին ես պառկել քնել էի այն շինծու հանգստությամբ, որով մարդիկ քնում են մահապատժից կամ մենամարտից առաջ, իրենց օրորելով խաբուսիկ մի հույսով: Բայց երբ ես զարթնեցի և ուշքի եկա, երբ զգացի, որ իմ հոգին բանտարկված է բանկիրի թղթապանակի մեջ, հանգչում է ցուցակների մեջ, գրված է կարմիր մելանով, իմ պարտքերը ամեն կողմից սկսեցին դուրս թռնել մորեխների պես. նրանք իմ ճոճանակավոր ժամացույցի, իմ բազկաթոռների մեջ էին կամ դրոշմված էին իմ նախասիրած կարասիների վրա: Իմ իրերը, այդ իմ սիրելի անկենդան ստրուկները, դատական հարպիաների[130] որս դարձած, կխլվեն և վայրագորեն կշպրտվեն հրապարակի վրա: Ա՛հ, իմ իրեղենները դեռևս իմ մասունքն էին: Իմ բնակարանի զանգը հնչում էր իմ սրտում, զարնելով իմ գլխին, այսինքն՝ այնտեղ, ուր և պետք է հարվածել թագավորներին: Դա մարտիրոսություն էր առանց երկնային վարձահատուցման: Այո, ազնվական մարդու համար պարտքը դժոխք է, բայց դժոխք դատական կատարածուների, գործակալների հետ: Չվճարված պարտքը ստորություն է, խաբեբայության սկիզբն է, ավելի վատ քան այդ՝ ստախոսություն է: Նա ոճիրներ է նյութում, նա տախտակներ է հավաքում կառափնատի համար: Իմ պարտամուրհակները բողոքարկվեցին: Երեք օր հետո ես վճարեցի նրանց համաձայն: Ահա թե ինչպես. մի շահախնդիր մարդ քովս եկավ և ինձ առաջարկեց իրեն վաճառել Լուառի վրա ունեցած իմ կղզին, ուր գտնվում է մորս գերեզմանը. առաջարկն ընդունեցի: Գնորդի հետ պայմանագիրն ստորագրելով նոտարի մութ գրասենյակում, ես զգացի, որ այնտեղ նկուղի հոտ էր փչում: Ես սարսեցի, հիշելով, որ նույնպիսի ցուրտ խոնավություն էր ինձ պարուրել այն գերեզմանի եզրին, ուր հանգչում էր իմ հայրը: Դա ես ընդունեցի իբրև չարագուշակ բան: Ինձ թվաց, թե լսում էի մորս ձայնը, տեսնում էի նրա ստվերը. չգիտեմ ինչ հրաշքով իմ սեփական անունը զանգերի ղողանջի միջով տարտամորեն հասնում իմ ականջին: Կղզու համար ստացած

---

[128] **Բարեմային բարոյականություն** — բծախնդիր-մանրախնդիր հաշվասիրություն: Բերտրան Բարեմը (XVII դ.) հաշվապահության վերաբերյալ մի տեղեկատուի հեղինակ է:

[129] **Գրյոզ Ժան Բատիստ** (1725—1805) — ֆրանսիացի նկարիչ. հեղինակը «Ծեր անդամալույծը», «Ընտանիքի մայրը» և այլ զգայացունց նկարների:

[130] **Հարպիաներ** — հին հունական դիցաբանության մեջ երեք թևավոր ագահ հրեշներ կանացի դեմքով, բազեի կուրծքով և կեռաձև մագիլներով:

փողից ինձ մնում էր, բոլոր պարտքերը վճարելուց հետո, երկու հազար ֆրանկ: Անշուշտ, ես կարող էի նորից անցնել գիտնականի խաղաղ կյանքին, բոլոր փորձություններից հետո վերադառնալ իմ խուցը, վերադառնալ դիտողությունների մեծ պաշարով և արդեն վայելելով որոշ համբավ: Բայց Ֆեոդորան բաց չէր թողնում իր որսը: Ես հաճախ էի հանդիպում նրան: Ես նրա տարփածուներին ստիպում էի իմ անունը տարփողել նրա ականջներին, այնքան նրանք հիացած էին իմ խելքով, իմ ձիրքերով, իմ հաջողություններով, իմ կառքերով: Նա մնում էր պաղ և անզգա ամեն ինչի նկատմամբ, նույնիսկ այն ահավոր խոսքի նկատմամբ, որ Ռաստինյակը ասել էր իմ մասին. «Նա իրեն սպանում է ձեզ համար»: Ես ամբողջ աշխարհին հանձնարարել էի վրեժ լուծել ինձ համար, բայց ես երջանիկ չէի: Այսպես փորփրելով ամբողջ կյանքի տիղմը, ես առավել ևս զգացի բաժանված սիրո հեշտանքները, ես ուրվականի հետևից ընկա իմ շվայտ կյանքի պատահականությունների միջով, գինարբուքների միջով: Դժբախտաբար ես խաբվել էի իմ գեղեցիկ զգացումների մեջ, իմ բարերարությունների համար պատժվել էի ապերախտությամբ, իսկ իմ հանցանքներ համար վարձատրվել էի բազում բերկրանքներով: Մռայլ փիլիսոփայություն, բայց ճշմարիտ՝ շվայտասերի համար: Բացի դրանից, Ֆեոդորան ինձ վարակել էր իր սնափառության բորով: Թափանցելով իմ հոգու մեջ, ես տեսա, որ նա ախտահարված է փտությամբ: Դևը իմ ճակատի վրա դրոշմել էր իր աքլորային բիտը: Ես այսուհետև այլևս չէի կարող խուսափել ամեն րոպե վտանգի ենթակա կյանքի ցնցումներից և հարստության անիծյալ նրբություններից: Եթե միլիոնատեր լինեի, ես շարունակ կխաղայի, քեֆ կանեի, շարժման մեջ կլինեի: Ես այլևս չէի ցանկանա մենակ լինել: Ինձ հարկավոր էին կուրտիզանուհիներ, կեղծ բարեկամներ, ընտիր խորտիկներ, գինիներ, որպեսզի ինձ մոռանայի: Մարդուն ընտանիքի հետ կապող թելերը իմ մեջ խզված էին ընդմիշտ: Ես դատապարտված էի հաճույքների տաժանքին: Ես պետք է մինչև վերջ իրագործեի այն, ինչ թելադրում էր իմ ճակատագրական վիճակը, ինքնասպանության վիճակը: Վատնելով իմ հարստության վերջին մնացորդները, ես ամեն երեկո անձնատուր էի լինում անհավատալի ցոփությունների, բայց ամեն առավոտ մահը ինձ նետում էր կյանքի մեջ: Ցկյանս եկամուտով ապահովված մարդու նման ես կարող էի հանգիստ մտնել այրվող շենքի մեջ: Ի վերջո, իմ մոտ մնաց միայն մի քսանֆրանկանոց դրամ, և այն ժամանակ ես հիշեցի Ռաստինյակի երբեմնի հաջողությունը. ..

— Է՛հ, է՛հ,— բացականչեց Ռաֆայելը, հանկարծ հիշելով թալիսմանը, և այն դուրս հանեց գրպանից:

Կամ հոգնած այդ երկար օրվա պայքարից, Ռաֆայելը այլևս ուժ չունեցավ իր բանականության ղեկը վարելու գինու և պունչի ալիքների մեջ, կամ հիշողություններից գրգռված և իր սեփական խոսքերի հեղեղից անզգալաբար արբած՝ ոգևորվեց, խանդավառվեց և կարծես խելացնորվեց:

— Գրողի ծո՛ցը գնա մահը,— գոչեց նա թափահարելով շագրենի կաշին:— Հիմա ես ուզում եմ ապրել: Ես հարուստ եմ, ուրեմն ես ունեմ բոլոր արժանիքները: Ոչինչ չի դիմանա իմ առջև: Ո՞վ առաքինի չի դառնա, եթե ամեն ինչ մատչելի է նրան: Հե՛, հե՛, օհե՛: Ես փափագել եմ երկու հարյուր հազար լիվր եկամուտ ունենալ, և կունենամ: Ողջունեցեք ինձ, խոզեր, որ թավալվել եք գորգերի վրա, ինչպես գոմաղբի վրա: Դուք ինձ կպատկանեք, թանկագին սեփականություն: Ես հարուստ եմ, ես ձեզ բոլորիդ կարող եմ գնել, նույնիսկ ահա այն դեպուտատին, որ խոմփում է: Դե՛հ, օրհնեցեք ինձ, բարձր հասարակության տականք: Ես Հռոմի պապն եմ:

Ռաֆայելի բացականչությունները, որոնք ցարդ խլացվում էին շարունակական խռմփոցներից, հանկարծ լսելի դարձան: Քնածների մեծ մասը զարթնեց ճչոցով, բայց, տեսնելով որ իրենց քունը ընդհատած մարդը չի կարողանում կանգնել ոտքերի վրա և աղմկում է գինովցած, նրանք իրենց բարկությունն արտահայտեցին հայհոյանքների մի ամբողջ համերգով:

— Լսեցեք,— գոչեց Ռաֆայելը:— Ձեր տեղը մնացեք, շներ: Էմիլ, ես շատ հարուստ եմ, ես քեզ Հավանայի սիգարներ կտամ:

— Ես ուշադիր լսում եմ,— պատասխանեց բանաստեղծը:— **Ֆեոդորա կամ մահ:**

Շարունակիր քո պատմությունը: Այդ կոտրատվող Ֆեոդորան խաբել է քեզ: Բոլոր կանայք Եվայի դուստրերն են: Քո պատմածի մեջ դրամատիկական ոչինչ չկա:

— Օ, դու քնո՞ւմ էիր, կեղծավոր:

— Ոչ... **Ֆեոդորա կամ մահ**… Շարունակիր. ..

— Արթնացի՛ր,— գոչեց Ռաֆայելը, Էմիլին զարնելով շագրենի կաշիով, ասես ուզելով էլեկտրական հոսանք առաջ բերել նրանից:

— Գրողը տանի,— ասաց Էմիլը, վեր կենալով և Ռաֆայելին մեջքից գրկելով:— Բարեկամս, հիշիր, որ դու այստեղ վատահամբավ կանանց մեջ ես:

— Ես միլիոնատեր եմ:

— Դու միլիոնատեր չես, դու հարբած ես:

— Հարբած եմ իշխանությամբ: Ես կարող եմ քեզ սպանել. . . Լռիր: Ես Ներոնն եմ: Ես Նաբուգոդոնոսորն եմ:

— Բայց, Ռաֆայել, մենք վատ հասարակության մեջ ենք, դու պետք է լռեիր գոնե քո արժանապատվության համար:

— Ես շատ երկար եմ լռել կյանքում: Հիմա ես վրեժ եմ լուծելու բովանդակ աշխարհից: Ես այլևս չեմ զվարճանա աջ ու ձախ անարգ դրամներ շպրտելով, ես կնմանվեմ իմ դարաշրջանին, ես կլափեմ մարդկային կյանքեր, մտքեր, հոգիներ: Ահա ոչ ճղճիմ մի պերճանք, ճի՞շտ է: Պերճանք՝ ժանտախտի ժամանակ: Ես չեմ վախենում ոչ դեղին, ոչ կապույտ, ոչ կանաչ տենդից, չեմ վախենում ոչ բանակներից, ոչ կառափնատներից: Ես կարող եմ տիրանալ Ֆեոդորային.. . Բայց ոչ, չեմ ցանկանում Ֆեոդորային, դա իմ հիվանդությունն է, ես մեռնում եմ Ֆեոդորայից: Ուզում եմ մոռանալ Ֆեոդորային:

— Եթե դու շարունակես այդպես գոռալ, ես քեզ կտանեմ ճաշասրահ:

— Դու տեսնո՞ւմ ես այս կաշին: Սա Սողոմոնի կտակն է: Սողոմոնը, այդ իմաստակ թագավորը, ինձ է պատկանում: Արաբիան իմն է, Պետրիան նույնպես: Իմն է ամբողջ տիեզերքը: Դու էլ իմն ես, եթե ցանկանամ: Այո, եթե ցանկանամ, զգուշացիր: Ես կարող եմ գնել ժուռնալիստի քո ամբողջ կրպակը, և դու կլինես իմ ծառան: Դու ինձ համար կուպլետներ

կհորինես, թղթեր կտողես։ Ծառա՛։ Ծառա — այդ նշանակում է նրա համար ամեն ինչ ոչինչ է, որովհետև նա ոչնչի մասին չի մտածում։

— Այս խոսքերի վրա Էմիլը Ռաֆայելին քարշ տվեց ճաշասրահ։

— Դեհ, լավ, բարեկամս, ես քո ծառան եմ, — ասաց Էմիլը։— Իսկ դու կլինես օրաթերթի գլխավոր խմբագիրը։ Լռի՛ր։ Իմ նկատմամբ ունեցած հարգանքի համար գոնե քեզ վայելուչ պահիր։ Դու ինձ սիրո՞ւմ ես։

— Սիրո՞ւմ եմ։ Դու կունենաս Հավանայի սիգարներ, քանի իմ մոտ է այս կաշին։ Այս կաշին, բարեկամս, ամենազոր կաշի է։ Գերազանց միջոց կոշտուկ հանելու համար։ Դու կոշտուկ ունե՞ս։ Ես կանեմ։

— Դու դեռ երբեք այդքան հիմար չէիր եղել։

— Հիմա՞ր։ Ոչ, բարեկամս։ Այս կաշին նեղանում է, երբ ես որևէ ցանկություն եմ ունենում... Սա իսկական հարց և պատասխան է։ Բրահման. .. Սրա մեջ բրահման կա. . . Այդ բրահմանը ծաղրասեր է, որովհետև, տեսնում ես, ցանկությունները պետք է տարածվեն։

— Դեհ, իհարկե։

— Ուզում եմ ասել. ..

— Այո, շատ ճիշտ է, ես էլ եմ այդպես մտածում։ Ցանկությունը տարածվում է...

— Ուզում եմ ասել՝ կաշին։

— Այո՛։

— Դու ինձ չե՞ս հավատում։ Ես քեզ ճանաչում եմ, բարեկամս, դու ստախոս ես, ինչպես նոր թագավոր։

— Դու ասա, ես կարո՞ղ եմ լուրջ ընդունել քո գինովի բարբաջանքները։

— Գրազ եմ գալիս, որ կապացուցեմ քեզ։ Վերցնենք չափենք. ..

— Դեհ, հիմա նա չի քնի,— գոչեց Էմիլը, տեսնելով, որ Ռաֆայելը սկսեց ինչ-որ բան փնտրել ճաշասրահում։

Շնորհիվ այն բացառիկ պայծառամտության, որ գինովների մոտ երբեմն հաջորդում է արբեցության բանդագուշանքներին, Ռաֆայելը կապկի ժրությամբ գտավ մի թանաքաման և մի անձեռոցիկ. միևնույն ժամանակ նա շարունակ կրկնում էր.

— Վերցնենք չափենք։ Վերցնենք չափենք։

— Դեհ լավ, չափենք,— ասաց Էմիլը։

Երկու բարեկամները անձեռոցիկը բաց արին և նրա վրա դրին շագրենի կաշին։ Էմիլը, որի ձեռքը կարծես ավելի վարժ էր, քան Ռաֆայելինը, թանաքով շրջագծեց թալիսմանը, մինչ Ռաֆայելը ասում էր.

— Ես ցանկացա երկու հարյուր հազար լիվր եկամուտ ունենալ, ճի՞շտ է: Լավ, երբ ես այդ կունենամ, դու կտեսնես, որ շագրենը կփոքրանա:

— Դեհ, իհարկե, կփոքրանա: Իսկ հիմա քնիր: Ուզո՞ւմ ես քեզ տեղավորեմ այս բազմոցի վրա: Այդպես հարմա՞ր է քեզ:

— Այո, մամուլի ձեռնասուն: Դու ինձ կզվարճացնես, ճանճեր կքշես: Դժբախտի բարեկամը իրավունք ունի լինելու հզորի բարեկամը: Ուրեմն ես քեզ կտամ Հավանայի սի.. .

— Լավ, շաղ տուր քո ոսկիները, միլիոնատեր:

— Շաղ տուր քո հոդվածները: Բարի գիշեր: Բարի գիշեր ասա Նաբուգոդոնոսորին.. . Սե՛ր: Խմե՛լ: Ֆրանսիա.. . Փառք և հարստություն... հարստություն:

Շուտով երկու բարեկամներն իրենց խոմփոցները միացրին սրահներում հնչող երաժշտությանը: Խժալո՛ւր համերգ: Մոմերը հանգեցին մեկը մյուսի հետևից, բյուրեղյա ճրագարանները ճթթացին: Գիշերն իր շղարշով պարուրեց երկարատև գինարբուքը, որի մեջ Ռաֆայելի պատմությունը եղել էր ինչպես մի օրգիա խոսքերի, անմիտ բառերի և այնպիսի մտքերի, որոնց համար արտահայտությունները հաճախ պակասել էին:

Հետևյալ օրը միջօրեին գեղանի Ակիլինան վեր կացավ, հորանջելով, հոգնաբեկ. նրա մարմարյա այտերը կրում էին նշանները թավշապատ աթոռակի, որի վրա հանգչել էր նրա գլուխը: Եֆրասիան, իր ընկերուհու շարժումներից զարթնած, ընդոստ վեր թռավ՝ կերկերուն ձայնով. նրա սիրուն դեմքը, որ այնքան սպիտակ, այնքան թարմ էր երեկ, հիմա դեղին դալուկ էր, ինչպես հիվանդանոց գնացող աղջկա դեմքը: Հյուրերը կամաց-կամաց սկսեցին երերալ, ծանր տնքոցներ արձակելով. նրանց ձեռքերն ու ոտքերը կարկամել էին. յուրաքանչյուրը զարթնելիս սաստիկ թուլություն զգաց ամբողջ մարմնով: Սպասյակը բաց արեց սրահների փեղկերն ու պատուհանները: Արևի ջերմ ճառագայթները խաղացին քնողների դեմքերի վրա, և ամբողջ հավաքախումբը ոտքի ելավ: Կանայք, որոնց սանրվածքների նուրբ կառույցները քանդվել և զգեստները ճմռտվել էին իրենց քնի ժամանակ շուռումուռ գալուց, քստմնելի տեսարան ներկայացրին. նրանց մազերը անշնորհք կերպով կախվել էին, դիմագծերը փոխել էին իրենց արտահայտությունը, այնքան փայլուն աչքերը մթագնել էին հոգնածությունից: Թուխ դեմքերը, որոնք այնքան վառվռուն էին ճրագների լույսի տակ, հիմա սոսկում էին պատճառում. ավշային դեմքերը, որոնք այնքան սպիտակ, այնքան քնքուշ են լինում հանգստացած ժամանակ, կանաչել էին. դեռ վերջերս այնքան հմայիչ, կարմիր շրթները հիմա չորացել, դեղնել էին և կրում էին արբեցության ամոթալի նշանները: Տղամարդիկ հրաժարվում էին իրենց գիշերային սիրուհիներից, տեսնելով նրանց այսպես դալկացած, դիակնացած դեմքերը, որոնք նման էին թափորից տրորված ծաղիկների: Բայց այդ քամահրոտ տղամարդիկ է՛լ ավելի զարհուրելի էին: Մարդ ակամա կսարսեր տեսնելով այդ մարդկային դեմքերը խոռոչացած ու կապտած աչքերով, որոնք գինովությունից պաղած, անհանգիստ քնից շլմորած էին և կարծես ոչինչ չէին տեսնում: Այդ ազազուն դեմքերը, որոնց վրա մերկապարանոց երևում էին մեր հոգին զարդարող պոեզիայից զուրկ ֆիզիկական ցանկությունները, ունեին ինչ-որ վայրենի և սառնորեն անասնական բան: Ախտամոլության այդ զարթնումը առանց քողի ու շպարի, զզզվված, մերկ, սառը, սին, մտքի սոփեստություններից զուրկ և պերճությամբ հմայված չարության այդ կմախքը սարսափեցրեց այս անվեհեր ըմբիշներին, ինչքան էլ նրանք վարժված լինեին մարտի

բռնվելու շվայտության հետ: Արվեստագետներն ու պերճաղիճները լռություն պահեցին, խոժոռ հայացքով դիտելով անկարգությունը սրահի, ուր ամեն ինչ ավերված, տակնուվրա էր եղած կրքերի կրակով: Դիվային մի քրքիջ բարձրացավ հանկարծ, երբ Տայֆերը, լսելով իր հյուրերի խուլ հոնդյունը, փորձեց նրանց ողջունել մի ծամածռությամբ: Նրա քրտնաթոր և արյունազանգ դեմքը այս դժոխային տեսարանի վրա բարձրանում էր ինչպես խղճի խայթեր չճանաչող ոճրի կերպար (տես «Կարմիր պանդոկը»): Պատկերը կատարյալ եղավ: Դա տիղմն էր շքեղության պայմաններում, պերճանքների և մարդկային թշվառությունների ահռելի մի խառնուրդ, վերազարթնող պատկերը շվայտության, երբ նա իր հուժկու ձեռքերով արդեն քամել էր կյանքի բոլոր պտուղները, իր շուրջը թողնելով միայն նողկալի խեշերանքներ կամ խաբկանքներ, որոնց նա այլևս չի հավատում: Թվում էր, թե Մահն էր ժպտում ժանտախտահար ընտանիքի մեջ. այլևս ոչ քաղցր բուրմունքներ, ոչ շլացուցիչ լույսեր, ոչ զվարթություն, ոչ ցանկություն, այլ միայն զզվանք իր սրտախառնիչ հոտերով և սպանիչ փիլիսոփայությամբ: Բայց ճշմարտության պես շողացող արևը, բայց առաքինության պես մաքուր օդը հակադրություն էին կազմում գինարբուքի ժանտահոտություններով հագեցած հեղձուցիչ օդի հետ: Ի հեճուկս դեպի մոլությունն ունեցած իրենց հակամետության, այս երիտասարդ աղջիկներից շատերը հիշեցին իրենց երբեմնի զարթնումները, երբ նրանք, անմեղունակ և անապակ, այծտերևուկներով և վարդերով պատատված գյուղական տնակների պատուհաններից դիտում էին արտույտի զվարթ դայլայլներով հմայված, արշալույսի շողերով մեղմորեն լուսավորված և եղյամի ուլունքներով քմահաճորեն զարդարված առավոտյան բնությունը: Ուրիշներ մտաբերեցին ընտանեկան նախաճաշը, սեղանը, որի շուրջ անմեղորեն ծիծաղում էին երեխաներն ու հայրը, ուր ամեն ինչ շնչում էր անճառելի թովչանք, ուր ուտելիքները պարզ էին, ինչպես և սրտերը: Մի արվեստագետ մտածում էր իր խաղաղ արվեստանոցի մասին, անստգյուտ արձանի մասին, զմայլելի բնատիպի մասին, որ իրեն էր սպասում: Մի երիտասարդ փաստաբան, հիշելով այն դատավարությունը, որից կախված էր մի ամբողջ ընտանիքի բախտը, մտածում էր մի կարևոր գործարքի մասին, որ պահանջում էր իր ներկայությունը: Գիտնականը կարոտել էր իր աշխատասենյակը, ուր իրեն սպասում էր ազնիվ աշխատանքը: Գրեթե բոլորը դժգոհ էին իրենցից: Այդ միջոցին, ծիծաղելով, երևաց Էմիլը, թարմադեմ և վարդագույն, ինչպես շատ հաճախված մի խանութի ամենասիրուն գործակատար:

— Դուք ավելի տգեղ եք, քան դատական կատարածուների կցորդը,— գոչեց նա։— Այսօր դուք ոչինչ չեք կարող անել, օրը կորած է, ես կարծում եմ պետք է նախաճաշել:

Այս խոսքերի ժամանակ Տայֆերը դուրս եկավ կարգադրություններ անելու: Կանայք մեղկ քայլվածքով գնացին հայելիներ մոտ՝ կարգի բերելու իրենց ավերված արդուզարդը: Բոլորը ուշքի եկան: Ամենից բոջախոհները քարոզ կարդացին ամենից ողջախոհներին: Պերճաղիճները ծիծաղեցին նրանց վրա, որոնք, ըստ երևույթին, ի վիճակի չէին շարունակելու այդ ուժասպառիչ խնջույքը: Մի րոպեում ուրվականները կենդանացան, խմբեր կազմեցին, միմյանց հարցեր տվին, ժպտացին: Մի քանի ճարպիկ և ժիր սպասյակներ ամեն ինչ շտապ իրենց տեղը դրին սենյակներում: Ճոխ նախաճաշ հրամցվեց: Հյուրերը ճաշասրահ փութացին: Այստեղ ամեն ինչ կրում էր երեկվա գինարբուքի անջնջելի կնիքը, բայց դեռ պահպանվում էր կյանքի ու մտքի նշույլը, ինչպես մահամերձի վերջին ջղաձգությունների մեջ: Ինչպես բարիկենդանի ժամանակ, սատուռնախրախճանքը թաղված էր դիմակներով, որոնք հոգնած

էին պարելուց, հարբած էին խմելուց, բայց և այնպես համառորեն ցանկանում էին շարունակել անզոր ուրախությունը, որպեսզի չխոստովանեին սեփական անզորությունը:

Այն ժամանակ, երբ անվկանդ հյուրերը բազմեցին դրամատիրոջ սեղանի շուրջը, Կարդոն, որ երեկ ճաշից հետո զգուշությամբ չքացել էր, որպեսզի գինարբուքը վերջացներ ամուսնական անկողնում, հանկարծ նորից երևաց, հաճոյակամորեն և սիրալիրորեն ժպտալով: Կարծես նա հոտ էր առել ժառանգության, որ կարելի է համտեսել, գույքագրել, բաժանել, մի ժառանգություն, որ առատ է նոտարական արձանագրություններով, հղի է դրամական վարձատրությամբ, որը նույնքան համեղ է, որքան այն հյութեղ սուկին, որի մեջ էր տանտերը խրում դանակը:

— Ուրեմն մենք կնախաճաշենք նոտարի ներկայությամբ,— գոչեց դը Կյուրսին:

— Դուք ճիշտ ժամանակին եկաք, որպեսզի համարակալեք և նշանակեք այս ամբողջ շարժական գույքը,— ասաց Տայֆերը, դիմելով Կարդոյին և ցույց տալով խնջույքի սեղանը:

— Կտակի գործ չէ, այլ միայն ամուսնության,— ասաց գիտունը, որը մի տարի առաջ առաջին անգամ ամուսնացել էր գերազանց հաջողությամբ:

—Օ՛հ, օ՛հ:

— Է՛հ, է՛հ:

— Մի րոպե,— ասաց Կարդոն,— տափակ կատակների աղմուկից խլացած,— ես այստեղ եկել եմ լուրջ գործով: Ձեզանից մեկին ես բերել եմ վեց միլիոն (Խոր լռություն):— Պարոն,— ասաց նա, դիմելով Ռաֆայելին, որն այդ ժամանակ առանց քաշվելու աչքերն էր սրբում դաստառակի ծայրով,— ձեր մայրը ծննդյամբ Օ՛Ֆլահարտի՞ է:

— Այո՛,— պատասխանեց Ռաֆայելը ինքնաբերաբար — Բարբ-Մարի Օ’Ֆլահարտի:

— Ձեզ մոտ ունե՞ք ձեր և տիկին դը Վալանտենի ծննդյան վկայականները,— շարունակեց Կարդոն:

— Անշո՛ւշտ:

— Դեհ, ուրեմն, պարոն, դուք միակ ժառանգն եք մայոր Օ’Ֆլահարտիի, որ 1828 թվի օգոստոսին վախճանվեց Կալկաթայում:

— Դա անսահման հարստություն է,— գոչեց **գիտակը**:

— Մայորը իր կտակով խոշոր գումարներ էր հատկացրել մի քանի հասարակական հաստատությունների, և ֆրանսիական կառավարությունը ժառանգությունը պահանջել էր Օստ-Ինդիա ընկերությունից,— շարունակեց նոտարը:— Ներկայումս այդ ժառանգությունը պարտքերից ազատ է և մատչելի է: Ես տասնհինգ օր ապարդյուն որոնում էի տիկին Բարբ-Մարի Օ’Ֆլահարտիի ժառանգորդներին, երբ հանկարծ երեկ սեղանի վրա. ..

Այդ միջոցին Ռաֆայելը ընդոստ վեր թռավ այնպիսի կտրուկ շարժումով, ինչպիսին անում է խոց ստացող մարդը: Ներկաները ասես լռելյայն ճչացին. հյուրերի առաջին զգացումը եղավ խուլ նախանձը. բոլորն իրենց բոցավառ աչքերն ուղղեցին Ռաֆայելին: Ապա աղմուկ

բարձրացավ, ինչպես լինում է գրգռված պարտերում, հուզումը հետզհետե սաստկացավ, յուրաքանչյուրն ուզեց ինչ-որ բան ասել նոտարի բերած անհուն հարստությունը ողջունելու տեսքով: Միանգամից ուշքի գալով բախտի հանկարծական հաճոյակատարությունից, Ռաֆայելը իսկույն սեղանի վրա փռեց անձեռոցիկը, որի վրա նա քիչ առաջ չափել էր շագրենի կաշին: Առանց լսելու ներկաների խոսքերը, նա անձեռոցիկի վրա դրեց թալիսմանը և ակամա ցնցվեց՝ մի փոքրիկ տարածություն նկատելով կաշու ծայրի և անձեռոցիկի վրա նշված շրջագծի միջև:

— Էլ ինչո՞ւ է անհանգստանում,— գոչեց Տայֆերը,— լավ հարստություն ձեռք բերեց:

— **Օգնիր, Շատիյյոն**,— ասաց Բիսիուն Էմիլին:— Նա հիմա կմեռնի ուրախությունից:

Ահավոր դալկությունն ի հայտ բերեց բոլոր մկանները ժառանգորդի մեռելատիպ դեմքի վրա, նրա դիմագծերը պրկվեցին, ցցուն մասերը սպիտակեցին, փոսերը մթագնեցին, երեսը կապտեց, նայվածքը սառեց: Նա իր առջև տեսավ մահը: Խամրած կուրտիզանուհիներով, հագեցած սեղանակիցներով շրջապատված պերճաշուք բանկիրը, ուրախության այս ամբողջ հոգեվարքը նրա կյանքի կենդանի պատկերն էր: Ռաֆայելը երեք անգամ նայեց թալիսմանին, որը ազատ կերպով տեղավորվել էր անձեռոցիկի վրա նշանակված անողոք գծերի մեջ. նա փորձում էր տարակուսել, բայց մի պայծառ նախազգացում չքացնում էր նրա թերահավատությունը: Աշխարհը նրան էր պատկանում, նա ամեն ինչ կարող էր և այլևս ոչինչ չէր ցանկանում: Ինչպես անապատում ընկած մի ճանապարհորդ, նա սակավ ջուր ուներ իր ծարավը հագեցնելու համար և իր կյանքը պետք է չափեր ումպերի թվով: Նա տեսնում էր, թե յուրաքանչյուր ցանկությունը ինչքան օրեր կնստի իրեն: Նա սկսում էր հավատալ շագրենի կաշուն, լսել նրա շնչառությունը. նա իրեն հիվանդ էր զգում և մտածում էր. «Արդյոք ես թոքախտավոր չե՞մ: Արդյոք մայրս կրծքի հիվանդությունից չի՞ մեռել»:

— Է՛հ, Ռաֆայել, դուք հիմա լավ կզվարճանաք: Ի՞նչ եք նվիրելու ինձ,— հարցրեց Ակիլինան:

— Խմենք նրա մորեղբոր, մայոր Օ'Ֆլահարտիի մահվան թասը: Այ իսկական մարդ:

— Ռաֆայելը Ֆրանսիայի պեր կլինի:

— Ի՞նչ է Ֆրանսիայի պերը հուլիսյան իրադարձություններից հետո,— նկատեց **գիտակը**:

— Դու օթյակ կունենա՞ս Իտալական թատրոնում:

— Հույս ունե՞մ, որ դուք բոլորիս ճաշկերույթ կտաք,— հարցրեց Բիսիուն:

— Նրա պես մարդը կկարողանա ամեն ինչ վեհությամբ անել,— ասաց Էմիլը:

Այդ ծաղրասեր հավաքախմբի բացականչությունները հնչում էին Ռաֆայելի ականջներում, բայց նա ոչ մի բան չէր կարողանում հասկանալ. նա տարտամորեն մտածում էր բազմազավակ բրետոնական շինականի մեքենայական ու աննպատակ գոյության մասին, շինական, որ վարում է իր արտը, սև հաց է ուտում, խնձորօղի է խմում միևնույն սափորից, հավատում է աստվածածնին և թագավորին, հաղորդվում է զատկին, կիրակի օրերը պարում է կանաչ մարգագետնի վրա և չի հասկանում իր քահանայի քարոզը: Այն տեսարանից, որ Ռաֆայելի աչքերին պարզում էին ոսկեզօծ որմադրվագները, պերճաղիճները, ուտելիքները, շքեղությունը, բռնվում էր նրա շունչը և քոր էր գալիս կոկորդը:

— Ծնեբեկ ցանկանո՞ւմ եք,— գոչեց նրան բանկիրը։

— **Ոչինչ չեմ ցանկանում**,— պատասխանեց Ռաֆայելը որոտուն ձայնով։

— Բրավո,— բացականչեց Տայֆերը։— Դուք հասկանում եք, թե ինչ է հարստությունը,— դա օրինազանցության արտոնագիր է։ Դուք մերն եք։ Պարոններ, խմենք ոսկու զորության կենացը։ Դառնալով վեցապատիկ միլիոնատեր՝ պարոն դը Վալանտենը հասնում է իշխանության։ Նա թագավոր է, նա ամենակարող է, նա ամեն ինչից բարձր է, ինչպես բոլոր հարուստները։ **Ֆրանսիացիները հավասար են օրենքի առաջ** խոսքը, որ արձանագրված է սահմանադրության սկզբում, այսուհետև նրա համար է։ Նա չի ենթարկվի օրենքներին, օրենքները կենթարկվեն նրան։ Միլիոնատերերի համար չկան ո՛չ կառափնատներ, ո՛չ դահիճներ։

— Այո,— պատասխանեց Ռաֆայելը,— նրանք իրենք են իրենց դահիճները։

— Ահա ևս մի նախապաշարում,— գոչեց բանկիրը։

— Խմե՛նք,— ասաց Ռաֆայելը, գրպանը դնելով թալիսմանը։

— Ի՞նչ ես անում,— ասաց Էմիլը, բռնելով նրա ձեռքը։— Պարոններ,— շարունակեց նա, դիմելով ներկաներին, որոնք բավական զարմացած էին Ռաֆայելի խորհրդավոր շարժումների վրա,— իմացեք, որ մեր բարեկամ դը Վալանտենը, բայց ի՞նչ եմ ասում, **պարոն մարկիզ դը Վալանտենը** իր մոտ ունի հարստանալու գաղտնիքը։ Բավական է, որ նրա մեջ որևէ ցանկություն առաջանա, և դա իսկույն կիրականանա։ Որպեսզի նա ծառա կամ անսիրտ մարդ չհամարվի, հիմա մեզ բոլորիս պետք է հարստացնի։

— Օ՜, իմ անուշիկ Ռաֆայել, ես ուզում եմ մարգարտաշար մի մանյակ,— գոչեց Եֆրասիան։

— Եթե նա ազնիվ մարդ է, ինձ կնվիրի երկու կառք և ընտիր, արագավազ ձիեր,— ասաց Ակիլինան։

— Ինձ ցանկացեք հարյուր հազար լիվր եկամուտ։

— Քիշմիրե շալեր։

— Վճարեցեք իմ պարտքերը։

— Մի կաթված ուղարկեք իմ հորեղբորը՝ մեծ ժլատին։

— Ռաֆայել, տասը հազար լիվր եկամուտ, և իմ ու քո հաշիվը կփակվի։

— Այս ինչքա՜ն նվերներ,— գոչեց նոտարը։

— Նա պետք է ինձ բուժի հոդացավից։

— Այնպես արեք, որ ռենտան ընկնի,— գոչեց բանկիրը։

Այս խոսքերը իրար հետևից տեղացին, ինչպես հրեղեն խուրձերը հրախաղության ավարտին։ Եվ այս բոլոր մոլի ցանկությունները հայտնվում էին ավելի շուտ լրջությամբ քան կատակով։

— Իմ սիրելի բարեկամ,— ասաց Էմիլը ծանրախոհ տեսքով,— ես կգոհանամ երկու հարյուր հազար լիվր եկամուտով, բարի եղիր անել ինձ այդ շնորհը։

— Էմիլ,— ասաց Ռաֆայելը,— մի՞թե դու չգիտես, թե ինչ գնով է դա տրվում։

— Այ քեզ արդարացում,— գոչեց բանաստեղծը։— Մի՞թե մենք մեզ չպետք է նվիրաբերենք բարեկամների համար։

— Ես պատրաստ եմ ձեզ բոլորիդ մահ ցանկալ,— պատասխանեց Ռաֆայելը, մռայլ և խորախորհուրդ մի հայացք նետելով հյուրերի վրա։

— Մահացողները վայրագորեն անգութ են,— ասաց Էմիլը ծիծաղելով։— Ահա դու հարուստ ես,— ավելացրեց նա լրջորեն,— և երկու ամիս չանցած դու զազրելի եսամոլ կդառնաս։ Դու արդեն հիմարացել ես, չես հասկանում կատակը։ Քեզ միայն պակասում է, որ քո շագրենի կաշուն հավատաս. ..

Ռաֆայելը, վախենալով հավաքվածների ծաղրից, լռություն պահեց, չափից ավելի խմեց և, ի վերջո, հարբեց, որպեսզի մի պահ մոռանա իր աղետավոր զորությունը։

ՀՈԳԵՎԱՐՔ

Դեկտեմբեր ամսվա առաջին օրերին յոթանասնամյա մի ծերունի տեղատարափ անձրևի տակ գնում էր Վարեն փողոցով, յուրաքանչյուր ապարանքի մոտ գլուխը բարձրացնելով և երեխայի միամտությամբ ու փիլիսոփայի խորասուզությամբ փնտրելով մարկիզ Ռաֆայել դը Վալանտենի բնակարանը։ Տիրական բնավորության պայքարը ծանր վշտի հետ՝ որոշակի նկատվում էր աղեբեկ երկար մազերով շրջանակված և հին մագաղաթի պես չորացած նրա դեմքի վրա։ Եթե որևէ նկարիչ հանդիպեր սև հագած այդ տարօրինակ, վտիտ, ոսկրուտ մարդուն, ապա, վերադառնալով իր արվեստանոցը, անպայման նրան կուրվանկարեր իր ալբոմում և նկարի տակ կգրեր. **«Հանգեր որոնող դասական բանաստեղծ»։** Գտնելով իրեն ցույց տրված համարը, այս հարուցյալ Ռոլենը[131] մեղմորեն բախեց հոյակապ մի ապարանքի դուռը։

— Պարոն Ռաֆայելը տա՞նն է,— հարցրեց ծերունին ծառայազգեստով դռնապանին։

— Մարկիզը ոչ ոքի չի ընդունում,— պատասխանեց դռնապանը, կուլ տալով սուրճի մեծ բաժակի մեջ թաթախված հացի խոշոր պատառը։

— Նրա կառքը այստեղ է, ասաց ծերունին, ցույց տալով փայլուն կառքը, որ կանգնած էր մուտքի մոտ, վրանաձև ծածկի տակ։— Նա հիմա կգա, ես նրան կսպասեմ։

— Է՛հ, մարդուկ, այդպես կարող եք մինչև առավոտ սպասել, կառքը միշտ պատրաստ է պահվում մարկիզի համար,— նկատեց դռնապանը։— Խնդրում եմ, դուրս եկեք, ես վեց հարյուր ֆրանկ ցմահ թոշակս կկորցնեմ, եթե թեկուզ մի անգամ առանց հրամանի օտար մարդ թողնեմ տուն։

---

[131] **Ռոլեն Շառլ** (1661—1741) — ֆրանսիացի պատմագետ և մանկավարժ։

Այդ միջոցին բարձրահասակ մի ծերունի, որ իր տարազով բավական նմանվում էր նախարարական սուրհանդակի, նախասենյակից դուրս եկավ և արտորանքով ներքև իջավ, ոտից գլուխ չափելով շփոթահար խնդրարկուին։

— Այսուհանդերձ, ահա պարոն Հովնաթանը, նրա հետ խոսեք,— ասաց դռնապանը։

Երկու ծերունիները փոխադարձ համակրությունից կամ հետաքրքրությունից մղված՝ միմյանց հանդիպեցին ընդարձակ գավթի մեջտեղը՝ փոքր հրապարակի վրա, որտեղ սալաքարերի միջև բուսել էին թավ խոտեր։ Սոսկալի լռություն էր տիրում այդ ապարանքում։ Հովնաթանին տեսնելիս մարդ ակամա կցանկանար թափանցել այն գաղտնիքի մեջ, որ հայտնում էր նրա դեմքը և որի մասին էր խոսում ամեն մի մանրուք այս մռայլ առանձնատան մեջ։ Իր մորեղբոր ահագին ժառանգությունն ստանալուց հետո Ռաֆայելի առաջին հոգսը եղավ գտնել իր ծերունի, անձնվեր և վստահելի ծառային։ Հովնաթանը ուրախությունից արտասվեց, տեսնելով իր երիտասարդ տիրոջը, որին կարծում էր, թե հրաժեշտ է տվել ընդմիշտ, և նա իրեն անհունորեն երջանիկ զգաց, երբ մարկիզը նրան հանձնեց իր տան կառավարչի բարձր պաշտոնը։ Ծերունի Հովնաթանը դարձավ ազդեցիկ միջնորդը Ռաֆայելի և արտաքին աշխարհի միջև։ Որպես իր տիրոջ հարստության գերագույն տնօրինող, նրա անհայտ մտքերի կույր գործադրող՝ նա ասես դարձել էր վեցերորդ զգայարանը, որի միջոցով Ռաֆայելին էին հասնում կյանքի խռովահուզությունները։

— Ես ցանկանում էի խոսել պարոն Ռաֆայելի հետ,— ասաց ծերունին Հովնաթանին, բարձրանալով աստիճանների վրա, որպեսզի պաշտպանվեր անձրևից։

— Խոսել պարոն մարկիզի հետ,— գոչեց կառավարիչը։— Նա ինձ հետ նույնիսկ հազիվ է խոսում, ինձ հետ, որ նրա կաթնահայրն եմ։

— Բայց ես էլ եմ նրա կաթնահայրը,— գոչեց ծերունին։— Եթե ձեր կինը անցյալում նրան սնուցել է կաթով, ես էլ նրան կերակրել եմ Մուսաների կրծքով։ Նա իմ սանն է, իմ զավակը, carus alumnus-ը[132]։ Ես ձևավորել եմ նրա ուղեղը, մշակել եմ նրա միտքը, զարգացրել եմ նրա տաղանդը, և, համարձակվում եմ ասել, դա ինձ համար փառք ու պատիվ է։ Չէ՞ որ նա մեր ժամանակի ամենանշանավոր մարդկանցից մեկն է։ Իմ ղեկավարությամբ նա սովորել է վեցերորդ, երրորդ դասարաններում և ճարտասանության դասարանում։ Ես նրա ուսուցիչն եմ։

— Ա՜հ, դուք պարոն Պորիկե՞ն եք։

— Անշուշտ։ Բայց. ..

— Սո՛ւս, սո՛ւս,— սաստեց Հովնաթանը խոհարարի երկու աշկերտներին, որոնց ձայները խզում էին տան մեջ տիրող վանական լռությունը։

— Բայց, լսեցեք,— շարունակեց ուսուցիչը,— չլինի՞ մարկիզը հիվանդ է։

— Ա՜հ, սիրելի պարոն Պորիկե, աստված միայն գիտե, թե ինչ վիճակ ունի իմ տերը,— պատասխանեց Հովնաթանը։— Արդարև, Փարիզում երկու տուն չի գտնվի մեր տան նման։ Հասկանո՞ւմ եք։ Երկու տուն։ Հավատս վկա, չի գտնվի։ Մարկիզը հրամայեց գնել այս

[132] Սիրելի սան (լատ.)։

առանձնատունը, որ առաջ պատկանում էր մի դուքսի և պերի։ Երեք հարյուր հազար ֆրանկ ծախսեց կահավորման համար։ Իսկ երեք հարյուր հազարը ահագին գումար է։ Բայց հիմա մեր տան ամեն մի իրը մի հրաշալիք է։ «Լավ է,— մտածեցի ես, երբ տեսա այդ ամբողջ ճոխությունը։— Այնպես է, ինչպես նրա հանգուցյալ պապի մոտ։ Երիտասարդ մարկիզը իր մոտ կընդունի ամբողջ քաղաքն ու արքունիքը»։ Բայց այդպես չեղավ։ Նա ոչ ոքի չուզեց տեսնել։ Նա տարօրինակ կյանք է վարում, հասկանո՞ւմ եք, պարոն Պորիկե, **վայելչագեղ** կյանք։ Ամեն օր վեր է կենում նույն ժամին։ Միայն ես, ես իրավունք ունեմ մտնելու նրա սենյակը։ Ամառ լինի, թե ձմեռ, դուռը բաց եմ անում ժամը յոթին։ Դա մեր մեջ համաձայնեցված կարգ է։ Մտնում եմ և ասում. «Պարոն մարկիզ, ժամանակն է վեր կենալու և հագնվելու»։ Մարկիզը վեր է կենում և հագնվում է։ Ես պետք է նրան տամ սենեկազգեստը, որը միշտ կարվում է միևնույն ձևով, միևնույն կտավից։ Ես պարտավոր եմ ուրիշը պատվիրել, երբ հինը մաշվում է, միայն որպեսզի մարկիզը նեղություն չկրի նոր սենեկազգեստ պահանջելու։ Երևակայեցեք որ այդպես է։ Ինչ կա որ, իմ որդյակը կարող է օրական հազար ֆրանկ ծախսել և ուզածը անել։ Այդուհանդերձ ես նրան այնպես եմ սիրում, որ եթե նա աջ երեսիս ապտակի, կպարզեմ ձախը։ Թող նա ինձ հրամայի ավելի դժվար բաներ անել, դրանք էլ կանեմ, հասկանո՞ւմ եք։ Նա ինձ ծանրաբեռնել է այնքան մանր-մունր գործերով, որ ուրիշ ոչ մի բանի ժամանակ չեմ ունենում։ Նա լրագրեր կարդում է, իհարկե։ Հրաման է՝ դրանք դնել միշտ նույն տեղում, նույն սեղանի վրա։ Միևնույն ժամին անձամբ սափրում եմ նրան, և ձեռքերս չեն դողում դրանից։ Խոհարարը կկորցնի հազար էկյու ցմահ թոշակը, որը սպասում է մարկիզի մահից հետո, եթե նախաճաշը առավոտները ճիշտ ժամը տասին, իսկ ճաշը ժամը հինգին **վայելչագեղորեն** չդրվի մարկիզի առջև։ Ճաշացուցակը կազմված է օր առ օր ամբողջ տարվա համար։ Մարկիզը ոչ մի բանի պակաս չի զգում։ Երբ ելակը դուրս է գալիս, նրան է տրվում, Փարիզ բերված առաջին թյունիկ ձուկը նրա սեղանի վրա է։ Հայտագիրը տպագրված է, դեռ առավոտյան նա անգիր գիտե, թե ինչ կունենա ճաշին։ Հագնում է նույն ժամին նույն հագուստներն ու սպիտակեղենը, որոնք ես միշտ դնում եմ, հասկանո՞ւմ եք, նույն բազկաթոռի վրա։ Ես պետք է դեռ հետևեմ, որ կերպասը միատեսակ լինի. հարկ եղած պարագային, եթե թիկնոցը, ենթադրենք, մաշվել է, ես պարտավոր եմ նորով փոխարինել այն և մարկիզին այդ մասին ոչ մի բառ չասել։ Եթե եղանակը լավ է, ես մտնում եմ և ասում «կցանկանա՞ք զբոսանքի դուրս գալ»։ Նա պատասխանում է «այո» կամ «ոչ»։ Եթե նա զբոսնելու տրամադրություն ունի, ձիերին չի սպասի. նրանք միշտ լծված են. ինչպես տեսնում եք, կառապանը **վայելչագեղորեն** նստած է մտրակը ձեռքին։ Ճաշից հետո մարկիզը մի օր գնում է օպերա, մյուս օր Իտալ... Ա՛հ, ոչ, Իտալական թատրոն դեռ չի գնացել, ես միայն երեկ օթյակ ճարեցի։ Ապա ճիշտ ժամը տասնմեկին վերադառնում է և պառկում։ Օրվա մեջ երբ ոչինչ չի ունենում անելու, կարդում է, շարունակ կարդում։ Ինձ պատվիրված է առաջուց կարդալ «Գրավաճառանոցի լրատուն» և նոր գրքերը գնել, հենց որ նրանք վաճառքի հանվեն, և մարկիզը դրանք հենց նույն օրը գտնում է իր բուխարու վրա։ Ես հրաման ունեմ ժամը մեկ անգամ մտնելու նրա սենյակը, որպեսզի նայեմ կրակին, ամեն ինչին, հետևեմ, որ նա ոչ մի բանի պակասություն չզգա։ Նա ինձ մի գրքույկ է տվել անգիր սովորելու. այնտեղ գրված են իմ բոլոր պարտականությունները — իսկական քրիստոնեական վարդապետարան։ Ամառը սառույցների միջով ես պետք է սենյակներում պահպանեմ նույն ջերմաստիճանը, իսկ թարմ ծաղիկներ ես պիտի դնեմ ամեն տեղ ամեն ժամանակ։ Նա հարուստ է։ Նա կարող է օրական ծախսել հազար ֆրանկ, կարող է գոհացնել իր բոլոր քմահաճույքները։ Խեղճը բավական երկար ժամանակ կարիքի մեջ է եղել։ Նա ոչ ոքի չի վիրավորում, ոչ մի բառ չի ասում, բացարձակ լռություն է պահանջում տանը և

պարտեզում: Այսպես ահա իմ տերը ոչ մի ցանկություն չի հայտնում, բայց բոլորին հնազանդեցնում է ձեռքի ու աչքի նշանով, և բավական է: Եվ նա իրավացի է. եթե ծառաներին ձեռքումդ չպահես, ամեն ինչ տակնուվրա կլինի: Ես նրան ասում եմ, թե ինչ պետք է անի, և նա լսում է: Դուք չեք հավատա, թե նրա մոտ բանը որտեղ է հասնում: Նրա սենյակները մի.. . մի... մի շարքի վրա են: Դիցուք նա բաց է անում իր ննջասենյակի կամ աշխատասենյակի դուռը — թրա՛կ, բոլոր դռները բացվում են մի մեխանիզմի միջոցով: Այսպիսով նա կարող է տան մի ծայրից մյուս ծայրը գնալ և ոչ մի փակ դուռ չի գտնի: Դա հարմար և հաճելի է նրա համար և լավ է մեզ համար: Բայց դա մեզ շատ թանկ նստեց... Մի խոսքով, բանը այնտեղ հասավ, պարոն Պորիկե, որ նա ինձ ասաց. «Հովնաթան, դու ինձ պետք է խնամես, ինչպես ծծկեր մանկան»: Ծծկեր մանկա՛ն: Այո, պարոն, այդպես էլ ասաց՝ ծծկեր մանկան: «Իմ տեղը դու կմտածես, թե ինչ է ինձ հարկավոր.. .»: Ես ոնց որ տերն եմ, հասկանո՞ւմ եք, իսկ նա՝ ոնց որ ծառան: Ինչո՞ւ է այդպես: Այդ ոչ ոք չգիտե աշխարհում, բացի իրենից և աստծուց: Դա **վայելչագեղ է:**

— Նա պոե՛մ է գրում,— գոչեց ծերունի ուսուցիչը:

— Կարծո՞ւմ եք, որ պոեմ է գրում: Ուրեմն գրելը տաժանելի գործ է: Ինձ չի թվում, թե բան է գրում: Նա հաճախ ասում է, որ ուզում է ապրել **բուսական կյանքով**: Դեռ երեկ, պարոն Պորիկե, երբ հագնվում էր, նայում էր մի կակաչի վրա և ասում. «Ահա իմ կյանքը. .. Ես ապրում եմ **բուսական կյանքով**, իմ խեղճ Հովնաթան»: Իսկ ուրիշներ ենթադրում են, որ նա **մենամոլ** է. ոչինչ չես հասկանում:

— Հովնաթան, այդ բոլորն ապացուցում է,— ասաց ուսուցիչը տիրական լրջությամբ, որ խոր հարգանք ներշնչեց տարեց սենեկապետին,— որ ձեր տերը աշխատում է մի մեծ երկի վրա: Նա խորասուզված է խոհերի մեջ և չի ուզում մտացրվել առօրյա կյանքի հոգսերից: Մտային աշխատանքի ժամանակ հանճարեղ մարդը ամեն ինչ մոռանում է: Մի օր նշանավոր Նյուտոնը.. .

— Ի՞նչ: Նյուտո՞նը: Նրան չեմ ճանաչում,— ասաց Հովնաթանը:

— Նյուտոնը՝ մեծ երկրաչափը,— շարունակեց Պորիկեն,— քսանչորս ժամ անցկացրեց մտախոհությունների մեջ, արմունկը սեղանին հենած. երբ մյուս օրը դուրս եկավ խոհերից, նրան թվաց, թե դեռ երեկվա օրն է, ասես նա քնել էր... Ես գնամ տեսնեմ նրան, իմ սիրասուն տղային, ես նրան պետք կգամ:

— Մի րոպե,— գոչեց Հովնաթանը:— Թեկուզ դուք Ֆրանսիայի թագավորը լինեք, հասկանալի է՝ նախորդը, էլի ներս չեք մտնի այլապես, քան դռները ջարդելով և իմ դիակի վրայով անցնելով: Բայց, պարոն Պորիկե, ես վազեմ ասեմ, որ դուք այստեղ եք և հարցնեմ՝ կարելի՞ է ներս թողնել: Նա կպատասխանի «այո» կամ «ոչ»: Ես երբեք չեմ ասում «կհաճե՞ք», «կկամենա՞ք», «կցանկանա՞ք»: Այս բառերը վերացված են խոսակցությունից: Երբ մի անգամ այդպիսի մի բառ բերանիցս փախավ, նա բարկանալով ասաց. «Դու ուզում ես ինձ մեռցնե՞լ, ինչ է»:

Հովնաթանը ծերունի ուսուցչին թողեց նախասենյակում, նշան անելով որ առաջ չշարժվի, բայց շուտով վերադարձավ նպաստավոր պատասխանով և վաստակավոր ծերունուն առաջնորդեց հոյակապ սենյակների միջով, որոնց բոլորի դռները բաց էին: Պորիկեն հեռվից

նկատեց իր սանին, որ նստել էր բուխարու մոտ: Ռաֆայելը մեծ նախշերով սենեկազգեստի մեջ փաթաթված և զսպանակավոր թիկնաթոռի մեջ խրված՝ լրագիր էր կարդում: Ծայրահեղ մելամաղձությունը, որին նա մատնված էր երևում, արտահայտված էր նրա հոգնաբեկ մարմնի հիվանդագին կեցվածքի մեջ, դրոշմված էր ճակատի վրա, նրա ամբողջ դեմքի վրա, որ դժգույն էր, ինչպես ազազուն ծաղիկը: Ինչ-որ կանացի նրբություն և հիվանդ հարուստին հատուկ տարօրինակություններ հատկանշում էին նրան: Նրա ձեռքերը սպիտակ, փափուկ և քնքուշ էին, ինչպես սիրուն կանանց մոտ: Նոսրացած շեկ մազերը սեթևեթիկ պչրությամբ խոպոպված էին քունքերի մոտ: Թեթև քիշմիրե հունական գդակը ծոպերի ծանրության տակ իջած էր մի կողմի վրա: Նա հատակի վրա էր գցել դահանակե ոսկեզարդ դանակը, որ գործածում էր թուղթ կտրելու համար: Ծնկների վրա էր ընկած սաթե ծխափողը հնդկական հոյակապ մի Հուկայի[133], որի երփներանգ պարույրները օձի պես գալարվում էին հատակի վրա, և նա արդեն չէր ներծծում նրա թարմացուցիչ բուրմունքը: Սակայն, նրա երիտասարդ մարմնի ընդհանուր թուլությունը չէր համապատասխանում նրա ծավի աչքերին, որոնց մեջ կարծես կենտրոնացած էր նրա բովանդակ կյանքը, որոնց մեջ արտացոլված էր առաջին իսկ հայացքից տպավորություն գործող անսովոր զգացումը: Ցավալի էր նայել այդ աչքերին: Ոմանք դրանց մեջ կարող էին կարդալ հուսահատություն, ուրիշները կարող էին զուշակել խղճի խայթերի պես ահավոր ներքին պայքար: Դա խոր նայվածքն էր անզոր մարդու, որ իր ցանկությունները թաքցնում է հոգու աչքերում, և կամ նայվածքն էր ժլատ մարդու, որ երևակայությամբ վայելում է բոլոր հաճույքները, որոնք կարող էր նրան ընձեռել փողը և հրաժարվում է նրանցից, որպեսզի չպակասի իր գանձը. դա նայվածքն էր շղթայված Պրոմեթեոսի, և կամ նայվածքն էր գահընկեց Նապոլեոնի, երբ նա 1815 թվականին, Էլիսյան պալատում իմանալով թշնամիների ռազմավարական սխալը, խնդրեց քսանչորս ժամով իրեն հանձնել հրամանատարությունը, և խնդիրքը մերժվեց[134]: Դա նայվածքն էր նվաճողի և դատապարտյալի: Ավելի ճիշտ՝ դա մի նայվածք էր, որով մի քանի ամիս առաջ Ռաֆայելը նայել էր Սենի ջրերին կամ խաղի դրված իր վերջին ոսկեդրամին: Նա իր կամքը, իր խելքը ենթարկել էր կոպիտ ողջամտությանը մի ծերուկ գեղջուկի, որ հազիվ էր քաղաքակրթվել տիրոջ մոտ իր հիսնամյա ծառայությամբ: Գրեթե ուրախանալով, որ մի տեսակ ինքնաշարժ մեքենա է դառնում, նա հրաժարվել էր կյանքից՝ ապրելու համար և բարձել էր հոգուց ցանկության բովանդակ պոեզիան: Որպեսզի ավելի լավ ոգորեր անողոք ուժի դեմ, որի մարտահրավերն ընդունել էր, նա Օրիգենի[135] նման դարձել էր սրբակյաց, ներքինացնելով իր երևակայությունը: Հետևյալ օրը այն օրվա, երբ նա հարուստ ժառանգություն էր ձեռք բերել և

---

[133] **Հուկա** — հնդկական նարգիլե:

[134] **Գահընկեց Նապոլեոնի, երբ նա 1815 թվականին...** — 1815 թվականին Վաթերլոյի մոտ պարտությունից հետո, Նապոլեոնը Փարիզի Էլիսեյան պալատում երկրորդ անգամ ստորագրում է իր հրաժարումը գահից: Իմանալով հակառակորդ զորքերի մոտենալը Փարիզին, նա խնդրում է, որ իրեն թույլ տրվի դիմագրավել թշնամուն իբրև պարզ զորաբաժնի զորավար: Ժամանակավոր կառավարությունը մերժեց Նապոլեոնի խնդիրքը:

[135] **Օրիգեն**

(185—253) — աստվածաբան և Աստվածաշնչի մեկնաբան: Ըստ ավանդության, նա իրեն կուրացրեց, որպեսզի, առանց բամբասանքի առիթ տալու, կարելիություն ունենա կանանց բացատրելու Սուրբ գիրքը:

տեսել էր շագրենի կաշու կծկումը, նա իր նոտարի տանն էր: Այնտեղ բավական հայտնի մի բժիշկ աղանդերի ժամանակ լրջորեն պատմել էր, թե ինչպես էր բուժվել թոքախտավոր մի զվիցարացի: Այդ մարդը տասը տարվա ընթացքում ոչ մի բառ չէր արտասանել, իրեն վարժեցրել էր բոպեում վեց անգամ գոմի ծանր օդը շնչելու և սնվում էր միայն անուշեղենով: «Ես նրա պես կլինեմ»,— մտածեց Ռաֆայելը, որ ցանկանում էր ապրել ամեն գնով: Պերճաշքությամբ շրջապատված, նա վերածվել էր մեքենայի: Երբ ալևոր ուսուցիչը տեսավ այդ կենդանի դիակին, սահմռկեց. ամեն ինչ նրան արվեստական թվաց այդ փխրուն և աղկաղկ մարմնի մեջ: Տեսնելով մարկիզի փաղաղիչ հայացքը և մշտական խոհերից խոժոռված ճակատը, նա չկարողացավ ճանաչել իր սանին, որին հիշում էր թարմ, վարդագույն, առնացի: Եթե այդ բարեհոգի դասականը, նրբամիտ քննադատը, ընտիր ճաշակի պահապանը կարդացած լիներ լորդ Բայրոնին, պիտի կարծեր, թե Մանֆրեդին է տեսնում այնտեղ, ուր հույս ուներ գտնել Չայլդ Հարոլդին[136]:

— Բարև ձեզ, պարոն Պորիկե, ինչպե՞ս եք,— հարցրեց Ռաֆայելը իր ուսուցչին, այրող և խոնավ ձեռքով սեղմելով ծերունու սառած մատները:

— Ես, ոչինչ, լավ եմ,— պատասխանեց ծերունին, այդ տենդավառ ձեռքի հպումից զահանդած:— Իսկ դո՞ւք:

— Կարծում եմ, որ քաջառողջ եմ:

— Դուք, հավանաբար, աշխատում եք գեղեցիկ մի երկասիրության վրա, այնպես չէ՞:

— Ոչ,— պատասխանեց Ռաֆայելը:— Exegi monumentum[137].. . Պարոն Պորիկե, ես գրել եմ իմ էջը և հավետ հրաժեշտ եմ տվել գիտությանը: Ես նույնիսկ չգիտեմ, թե ուր է գտնվում ձեռագիրս:

— Անշուշտ մաքուր ոճով եք գրել, այնպես չէ՞,— հարցրեց ուսուցիչը:— Հույս ունեմ, որ դուք չեք որդեգրել բարբարոս լեզուն այն նոր դպրոցի, որ կարծում է, թե հրաշք է գործում՝ հայտնագործելով Ռոնսարին[138]:

— Իմ աշխատությունը զուտ բնախոսական գործ է:

---

[136] **Մանֆրեդին է տեսնում այնտեղ, ուր հույս ուներ գտնել Չայլդ Հարոլդին** — Մանֆրեդը և Չայլդ Հարոլդը Բայրոնի համանուն երկերի հերոսներն են: Մանֆրեդը կորովասիրտ, բայց ողբալիորեն միայնակ, իր հպարտ «եսի» ներհայեցողության մեջ սուզված մարդու տիպարն է: Չայլդ Հարոլդը տիպարն է անհատապաշտ էպիկուրյանի, որ անտարբեր կերպով նայում է շրջապատող աշխարհին:

[137] — «Հուշարձան եմ կանգնեցրել» (լատ.), մեր թվարկության I դարի հռոմայեցի բանաստեղծ Հորացիոսի մի տաղերգի սկիզբը:

[138] **Բարբարոս լեզուն այն դպրոցի, որ կարծում է, թե հրաշք է գործում, հայտնագործելով Ռոնսարին** — դասականության հետևորդ Պորիկեն դատափետում է ռոմանտիկ դպրոցի լեզուն: Ռոմանտիկները բարձր էին գնահատում XVI դարի բանաստեղծ Պիեր Ռոնսարի բանաստեղծական արվեստը:

— Օ, ամեն ինչ պարզ է,— հարեց ուսուցիչը։— Գիտական աշխատությունների մեջ քերականությունը պետք է համապատասխանի հետազոտության պահանջներին: Այսուհանդերձ, տղաս, հստակ, ներդաշնակ ոճը, Մասսիյոնի, Բյուֆֆոնի, մեծ Ռասինի[139] լեզուն, մի խոսքով դասական ոճը, ոչ մի բանի չի վնասի.. . Բայց, սիրելիս,— ասաց ուսուցիչը, ընդմիջելով իր խոսքը,— ես մոռացա իմ այցելության նպատակը: Ես ձեզ մոտ եկել եմ գործով:

Շատ ուշ հիշելով նրբակիրթ շաղակրատությունները և ճամարտակ շրջաբանությունները, որոնց վարժվել էր իր ուսուցիչը երկար տարիների դասախոսության հետևանքով, Ռաֆայելը գրեթե զղջաց նրան ընդունելուն համար, և արդեն պատրաստ էր ցանկանալու, որ նա հեռանա, բայց իսկույն զսպեց իր թաքուն փափագը, գաղտագողի նայելով իր աչքերի առաջ կախված շագրենի կաշուն, որ ամրացված էր մի սպիտակ կտավի կտորի, որի վրա չարագուշակ շրջագծերը խնամքով նշված էին կարմիր գծով: Ճակատագրական գինարբուքից ի վեր Ռաֆայելն իր ամենաչնչին քմահաճույքն անգամ խեղդում էր իր մեջ և ապրում էր այնպես, որ որևէ ցնցում չպատճառեր այդ ահարկու թալիսմանին: Շագրենի կաշին դարձել էր յուրատեսակ վագր, որի հետ հարկավոր էր ապրել, առանց գրգռելու նրա կատաղությունը: Ուստի Ռաֆայելը համբերությամբ լսեց ծեր ուսուցչի երկար-բարակ բացատրությունները: Պորիկեն մի ամբողջ ժամ պատմեց այն հալածանքների մասին, որոնց ինքը ենթարկվել է հուլիսյան հեղափոխությունից հետո: Կողմնակից լինելով ուժեղ կառավարության, այդ ծերունին հայրենասիրական զգացումով հրապարակ էր եկել մամուլում, պահանջելով, որ խանութպաններին թողնեն իրենց վաճառասեղանների մոտ, պետական գործիչներին՝ հանրային գործերի ղեկավարությունում, փաստաբաններին՝ Արդարադատության պալատում, Ֆրանսիայի պերերին՝ Լյուքսեմբուրգի պալատում. բայց արքա-քաղաքացու ժողովրդական նախարարներից մեկը նրան ամբաստանել էր կառլիզմի մեջ և հեռացրել ամբիոնից: Ծերունին մնացել էր առանց գործի, առանց ռոճիկի և առանց հացի: Նա խնամակալն էր իր խեղճ զարմիկի, նրա համար վճարում էր Սեն-Սյուլպիսի ուսումնարանում, ուր նա սովորում էր, և հիմա ինքը ոչ այնքան իրեն համար, որքան իր որդեգրյալի համար եկել էր խնդրելու իր նախկին աշակերտին, որպեսզի նա միջնորդեր նոր նախարարի մոտ՝ ոչ թե վերահաստատվելու իր նախկին պաշտոնում, այլ թեկուզ տեսչի պաշտոն ստանալու որևէ գավառական դպրոցում: Ռաֆայելը ընկճվել էր անհաղթահարելի քնեածությունից, երբ ծերունու միօրինակ ձայնը դադարեց հնչել նրա ականջներում: Քաղաքավարությունից հարկադրված լինելով նայելու ծերունու աղոտ, գրեթե անշարժ աչքերին, լսելու նրա դանդաղընթաց և ծանրատաղտուկ ճառախոսությանը, նա ընդարմացել, մագնիսացել էր կարկամության ինչ-որ անբացատրելի ուժով:

— Այսպես ուրեմն, պարոն Պորիկե,— ասաց նա, ինքն էլ ստուգապես չիմանալով, թե որ հարցին է պատասխանում,— ես ոչինչ չեմ կարող անել, բացարձակապես ոչինչ: Ես **սրտանց ցանկանում եմ,** որ դուք հաջողեիք. ..

Այդ միջոցին, չնկատելով, թե ինչպես անդրադարձան այդ տափակ, եսասիրական անտարբերությամբ տոգորված խոսքերը ծերունու դեղնած ու խորշոմած ճակատի վրա, Ռաֆայելը ընդոստ վեր ցատկեց, նման սարսափահար այծյամի: Նա փոքրիկ, սպիտակ մի

---

[139] **Մասիյոն, Բյուֆֆոն, մեծ Ռասին** — XVII—XVIII դարերի ֆրանսիացի գրողներ, որոնց երկերը համարվել են դասական ոճի օրինակ:

շերտ նշմարեց սև կաշու ծայրի և կարմիր գծի միջև և այնպիսի ահավոր ճիչ արձակեց, որ խեղճ ուսուցիչը զարհուրեց:

— Դո՛ւրս այստեղից, ծե՛ր անասուն,— գոչեց Ռաֆայելը:— Դուք տեսուչ կնշանակվեք: Ավելի լավ չէ՞ր, որ դուք ինձանից հազար էկյու ցմահ կենսաթոշակ պահանջեիք, քան այդպիսի մահաբեր ցանկություն հայտնեիք: Այն ժամանակ ձեր այցելությունը ոչ մի վնաս չէր տա ինձ: Ֆրանսիայում հարյուր հազար պաշտոն կա, իսկ ես միայն մի կյանք ունեմ: Մարդու կյանքն ավելի թանկ է, քան աշխարհի բոլոր պաշտոնները. .. Հովնաթա՛ն:

Հովնաթանը երևաց:

— Այ թե դու ինչ ես արել, երիցս հիմար: Ինչո՞ւ դու առաջարկեցիր նրան ընդունել,— ասաց Ռաֆայելը, ցույց տալով քարացած ծերունուն:— Ի՞նչ է, ես հոգիս քեզ հանձնեցի, որպեսզի հոշոտե՞ս: Դու հիմա իմ կյանքից տասը տարին խլեցիր: Այդպիսի մի սխալ ևս, և դու ինձ կուղարկես այնտեղ, ուր ես ուղարկեցի իմ հորը: Ավելի լավ չէ՞ր տիրանայի գեղեցկուհի Ֆեոդորային, քան ծառայություն մատուցեի այս վաղավեր կմախքին, այս մարդկային խլյակին: Նրան կարելի էր պարզապես փող տալ... Այսուհանդերձ, եթե աշխարհի բոլոր Պորիկեներն էլ սովամահ լինեին, ի՞նչ կտուժի դրանից:

Ռաֆայելը գունատվել էր բարկությունից, փրփուր էր առաջացել նրա դողդոջուն շրթների վրա, աչքերն ստացել էին արյունռուշտ արտահայտություն: Երկու ծերունիներն սկսեցին դողալ, ինչպես երեխաներն օձ տեսնելիս: Երիտասարդը ընկավ թիկնաթոռի վրա. ինչ-որ հակազդեցություն տեղի ունեցավ նրա հոգում, արցունքներ հոսեցին բոցակեզ աչքերից:

— Օ՜ իմ կյանքը, իմ գեղեցիկ կյանքը. ..— ասաց նա:— Ո՛չ բարերար խոհեր, ո՛չ սեր, ոչի՛նչ:

Ապա դարձավ դեպի ուսուցիչը և հարեց մեղմ ձայնով.

— Եղածը եղած է, իմ ծերուկ բարեկամ: Դուք առատորեն կվարձատրվեք ձեր հոգածության համար, և իմ դժբախտությունը գոնե կծառայի ազնիվ և արժանավոր մի մարդու բարվույն:

Ռաֆայելը այս գրեթե անիմանալի խոսքերը արտասանեց այնպիսի սրտառուչ շեշտով, որ երկու ծերունիներն արտասվեցին, ինչպես մարդ արտասվում է, երբ լսում է հուզիչ մի երգ օտար լեզվով:

— Նա լուսնոտ է,— ասաց Պորիկեն ցած ձայնով:

— Ես գիտեմ ձեր բարությունը, բարեկամս,— շարունակեց Ռաֆայելը դարձյալ մեղմորեն, դուք ինձ կներեք: Հիվանդությունը պատահականություն է, իսկ անմարդկայնությունը՝ ախտավորություն: Իսկ հիմա թողեք ինձ,— ավելացրեց նա:— Վաղը կամ մյուս օր, գուցե նույնիսկ այսօր երեկոյան դուք նոր պաշտոն կստանաք, քանի որ **դիմադրությունը հաղթեց շարժմանը**[140]:

---

[140] **Դիմադրությունը հաղթեց շարժմանը** — ակնարկում է ֆրանսիական երկու բուրժուական կուսակցությունների պայքարը 1830 թվի Հուլիսյան հեղափոխությունից հետո: Շարժման կուսակցությունը պահանջում էր հետագա ազատական բարեփոխություններ: Դիմադրության կուսակցությունը զորավիգ էր կանգնած Լուի Ֆիլիպ թագավորի

Երթաք բարով:

Ահով համակված և Վալանտենի հոգեկան առողջության համար խիստ անհանգստացած, ծերունին հեռացավ: Նրա համար ինչ-որ գերբնական բան կար այդ տեսարանի մեջ: Նա տարակուսում էր իր վրա և հարցեր էր տալիս իրեն, ասես ծանր քնից զարթնած լիներ:

— Լսիր, Հովնաթան,— ասաց երիտասարդը, դիմելով ծերունի ծառային։— Աշխատիր վերջապես հասկանալ քեզ վրա դրված պարտականությունները:

— Լսում եմ, պարոն մարկիզ:

— Ես նման եմ այն մարդուն, որ գտնվում է կյանքից դուրս։

— Լսում եմ, պարոն մարկիզ:

— Բոլոր երկրային ուրախությունները խաղում են իմ մահվան անկողնի շուրջը և պարում են իմ առջև, որպես գեղեցիկ կանայք: Եթե ես նրանց կանչեմ, կմեռնեմ: Ամեն ինչում մահ է: Դու պետք է պատվար լինես աշխարհի և իմ միջև:

— Լսում եմ, պարոն մարկիզ,— ասաց ալևոր ծառան, սրբելով իր կնճռոտ ճակատի վրա առաջացած քրտինքի կաթիլները։— Բայց եթե դուք չեք ցանկանում տեսնել գեղեցիկ կանանց, ապա այսօր երեկոյան ի՞նչ պիտի անեք Իտալական թատրոնում: Անգլիացի մի ընտանիք Լոնդոն է մեկնում և ինձ զիջեց իր աբոնեմենտը, այնպես որ դուք հիանալի, հոյակապ մի օթյակ կունենաք առաջին կարգում:

Ռաֆայելը խոր մտախոհությունների մեջ սուզված՝ այլևս չէր լսում:

Դուք տեսնո՞ւմ եք այդ շքեղ, արտաքուստ անպաճույճ, թխագույն կառքը, որի դռնակների վրա, սակայն, փայլում է հին ազնվական մի գերդաստանի տոհմանշանը: Երբ կառքը անցնում է, պչրուհիները հիանում են նրանով, ագահորեն նայում նրա դեղին սնդուսե ծածկոցին, թավամազ գորգին, հարդագույն ծոպերին, փափուկ բարձերին և հայելանման են երկու ապակիներին: Այդ ազնվաշուք կառքին հետևում ծառայազգեստավոր լաճեր, իսկ կառքի ներսում, մետաքս բարձի վրա, հանգչում է կապուտածիր աչքերով տենդավառ մի գլուխ, դա գլուխն է տխրաթաթավ և մտախոհ Ռաֆայելի: Հարստության ճակատագրական պատկեր: Երիտասարդը հրթիռի պես սուրում է Փարիզի փողոցներով, հասնում է Ֆավարի թատրոնի[141] մուտքին, կառքի սանդղակը բացվում է, երկու լաճերը բռնում են նրա թևերից, նախանձահույզ ամբոխը նայում է նրան:

— Դա ի՞նչ է արել, որ հարստացել է,— ասում է իրավագիտության մի աղքատ ուսանող, որը, մի էկյու անգամ չունենալով, չէր կարող լսել Ռոսսինիի կախարդական հնչյունները:

Ռաֆայելը համրորեն ճեմում էր հանդիսասրահի շուրջը. նա այլևս ոչ մի վայելք չէր սպասում այն հաճույքներից, որոնց այնքան տենչացել էր մի ժամանակ: Սպասելով «Շամիրամ»-ի

քաղաքականությանը, ըստ որում լիովին գոհացած էր Հուլիսյան հեղափոխության արդյունքներից:

[141] **Ֆավարի թատրոն** — Օպերային թատրոն Փարիզում:

երկրորդ արարվածին, նա զբոսնում էր ճեմասրահով, սլքտում էր միջանցքներով, մոռանալով իր օթյակը, ուր նա նույնիսկ դեռ չէր մտել: Սեփականության զգացումը այլևս գոյություն չուներ նրա սրտում: Բոլոր հիվանդների նման նա մտածում էր միայն իր հիվանդության մասին: Հենված բուխարիկին, որի առջևով, ճեմասրահի երկայնքով, երթևեկում էին երիտասարդ և տարեց պճնամոլներ, հին և նոր նախարարներ, առանց պերության պերեր, ինչպիսին նրանց դարձրել է Հուլիսյան հեղափոխությունը, վերջապես բազմաթիվ գործարարներ և լրագրողներ,— Ռաֆայելը մի քանի քայլ հեռու բազմության մեջ նկատեց արտասովոր և գերբնական մի կերպարանք: Նա ընդառաջ գնաց այդ արտառոց էակին, անպատկառորեն աչքերը կկոցելով, որպեսզի ավելի լավ դիտեր նրան: «Այ քեզ պատկեր»,— մտածեց նա: Հոնքերը, մազերը, մազարենյան ձևի մորուքը[142], որով անծանոթը հպարտանում էր բացահայտորեն, ներկված էին սև գույնով, բայց որովհետև, հավանաբար, շատ էին նրա սպիտակ մազերը, ապա շպարանյութերը նրան տվել էին մանուշակավուն անբնական մի գույն, որի երանգները փոխվում էին համաձայն լուսավորության առավել կամ նվազ ուժգնության: Նրա նեղ և տափակ դեմքը, որի խորշոմները ծածկված էին կարմիր և սպիտակ ներկերի թանձր խավերով, արտահայտում էր միաժամանակ և՛ խորամանկություն, և՛ անհանգստություն:Ներկերի այդ ծեփվածքը տեղ-տեղ պակաս էր դեմքի վրա, որտեղ աչքի էր զարնում կապարագույն զառամ մաշկը: Չէր կարելի առանց ծիծաղի նայել սրածայր ծնոտով, ցցուն ճակատով այդ դեմքին, որը հիշեցնում է այն ծիծաղաշարժ դեմքերին, որոնք պարապ ժամերին փայտից քանդակում են գերմանացի հոտաղները: Եթե մի դիտող մարդ փոխնիփոխ նայեր այդ զառամյալ Ադոնիսին[143] և Ռաֆայելին, մարկիզի մոտ կնկատեր երիտասարդի պայծառ աչքեր ծերունու դիմակի տակ, իսկ անծանոթի մոտ՝ ծերունու մթար աչքեր երիտասարդի դիմակի տակ: Ռաֆայելը ճգնում էր հիշել, թե որտեղ է տեսել շեկ փողկապով, բարձր կոշիկներով այդ վտիտ ծերուկին, որ հնչեցնում էր կոշկախթանները և խաչաձևում ձեռքերը այնպիսի տեսքով, որ ասես պահպանել էր կենսառույգ երիտասարդության բովանդակ կորովը: Նրա քայլվածքի մեջ բռնազբոսիկ, արվեստական բան չկար: Խնամքով կոճկված վայելուչ ֆրակը ենթադրել էր տալիս, որ այն կրողը հին, ամուր կազմվածք ունի, ընդգծում էր դեռևս մոդաներին հետևող ծեր պճնամոլի բարեձևությունը: Ռաֆայելը այս մի տեսակ կենդանի պուպրիկի մեջ տեսնում էր ուրվականի բոլոր կախարդանքները, և նայում էր նրա վրա, ինչպես Ռեմբրանդտի վաղնջական, ծխամած մի կտավի վրա, որ վերջերս է վերահարդարված, ջնարակված և նոր շրջանակի մեջ դրված: Այս համեմատությունը Ռաֆայելին հնարավորություն տվեց ճշմարտության հետքը գտնելու իր շփոթ հիշողությունների մեջ. նա ճանաչեց հազվագյուտ իրերի վաճառականին, այն մարդուն, որին էր ինքը պարտական իր դժբախտությունը: Այդ միջոցին մի մունջ ժպիտ էր գծագրվում այդ ֆանտաստիկ անձի սառած, շինծու ատամներից պրկված շրթների վրա: Եվ ահա, Ռաֆայելի վառ երևակայությունը երևան բերեց այդ մարդու ապշեցուցիչ նմանությունը այն իդեալական գլխի հետ, որ նկարիչները վերագրում են Գյոթեի Մեֆիստոֆելին: Բազմաթիվ սնահավատ մտքեր պաշարեցին Ռաֆայելի սկեպտիկ հոգին, այդ րոպեին նա հավատաց դևի զորությանը,

---

[142] **Մազարենյան ձևի մորուք** — փոքրիկ, սրածայր մորուք, ինչպիսին կրում էր կարդինալ Մազարենը (XVIII դ.):

[143] **Ադոնիս** — հին հունական դիցաբանության մեջ գեղեցիկ պատանի, որ սիրահարվեց Աֆրոդիտեին: Առնական գեղեցկության տիպար:

բոլոր կախարդական երևույթներին, որ հիշատակվում են բանաստեղծների կողմից օգտագործվող միջնադարյան առասպելների մեջ: Սոսկումով խորշելով Ֆաուստի ընթացքից[144], նա հանկարծ օրհասական մարդկանց նման ջերմեռանդորեն հավատաց աստծուն, կույս Մարիամին և օգնության կանչեց երկինքը: Ճաճանչավառ մի լույսի մեջ նա տեսավ Միքելանջելոյի երկինքը և Սանցիո Ուրբինացու[145] ամպերը, թևավոր գլուխներ, սպիտակամորուս մի ծերուկ, լուսապսակով շրջանակված մի չքնաղ կին: Հիմա նա հասկանում էր այդ սխրալի ստեղծագործությունները. ցնորային և միաժամանակ այնքան մարդկային, դրանք նրան բացատրում էին իր պարագան և դեռ թողնում էին ինչ-որ հույս: Բայց երբ նրա հայացքը նորից ընկավ Իտալական օպերայի ճեմասրահի վրա, ապա կույս Մարիամի տեղ նա տեսավ հմայիչ մի աղջկա, անարգ Եֆրասիային, ճապուկ ու թեթև մարմնով պարուհուն՝ շողշողուն շրջազգեստի մեջ, արևելյան շափյուղաներով զարդարված. նա անհամբերությամբ մոտեցավ իր անհամբեր ծերունուն և անպատկառ տեսքով, սիգապանծ գլխով, վառվռուն աչքերով, իրեն ցուցադրեց այս նախանձոտ և ակնապիշ հասարակությանը, որպեսզի բոլորը տեսնեին, թե ինչքան հարուստ է այն առևտրականը, որի անսպառ գանձերը ինքը վատնում էր: Ռաֆայելը հիշեց այն ծաղրական մաղթանքը, որով ինքը պատասխանել էր ծերունու ճակատագրական նվերին, և հիմա նա ճաշակեց վրիժառության բովանդակ ուրախությունը, տեսնելով խոր նվաստացումը այն բարձր իմաստության, որի անկումը դեռ քիչ առաջ անհնարին էր թվում: Հարյուրամյա ծերունին անկենդան մի ժպիտ ուղղեց Եֆրասիային, որը ի պատասխան ինչ-որ սիրալիր բան ասաց. ծերունին իր ոսկրացած թևը առաջարկեց աղջկան, մի քանի անգամ նրա հետ շրջեց ճեմասրահում, հրճվանքով որսալով ամբոխի կրքոտ նայվածքներն ու հաճոյախոսությունները՝ ուղղված իր սիրուհուն, և չնկատելով արհամարհական ժպիտը, չլսելով խայթող ծաղրանքները, որոնց առարկան ինքն էր հանդիսանում:

— Այս աղջիկ-հարալեզը ո՞ր գերեզմանոցում է հանել այդ դիակը,— ասաց ռոմանտիկներից ամենակոկիկը:

Եֆրասիան քմծիծաղեց: Հեգնողը շեկ մազերով, խաժ ու վառ աչքերով, բարեձև բեղերով, պոչատ ֆրակով, շեղադիր գլխարկով մի երիտասարդ էր. լինելով լեզվանի, նա շարահարեց ռոմանտիկական սեռին հատուկ բառեր:

«Ինչքա՜ն ծերունիներ հիմարությամբ են վերջացնում իրենց պատվավոր, առաքինի և բազմաշխատ կյանքը,— մտածեց Ռաֆայելը:— Նրա ոտներն արդեն սառում են և նա սիրաբանում է...»:

— Լսեցեք,— գոչեց նա կանգնեցնելով առևտրականին և աչքով անելով Եֆրասիային:— Դուք մոռացե՞լ եք ձեր փիլիսոփայության խիստ կանոնները. ..

---

[144] **Ֆաուստի ընթացք** — նկատի ունի Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության մի դրվագը: Հուսահատված կյանքից, գիտությունից, դոկտոր Ֆաուստը դաշինք է կնքում Մեֆիստոֆելի հետ, որը պարտավորվում է կատարել Ֆաուստի բոլոր ցանկությունները, իբրև պարգև պահանջելով նրա հոգին:

[145] **Սանցիո Ուրբինացի** — վերածնունդի շրջանի նկարիչ Ռաֆայելը:

— Ահ, հիմա ես երջանիկ եմ, ինչպես երիտասարդը,— ասաց ծերունին կերկերուն ձայնով։— Ես ճիշտ եմ հասկացել կյանքը։ Մի ամբողջ կյանք կա մի ժամվա սիրո մեջ։

Այդ ժամանակ հանդիսատեսները, զանգը լսելով, գնացին իրենց տեղերը։ Ծերունին և Ռաֆայելը բաժանվեցին։ Մտնելով իր օթյակը, մարկիզը հանդիսասրահի մյուս կողմում, ճիշտ իր դիմաց, նկատեց Ֆեոդորային։ Ըստ երևույթին, կոմսուհին նոր էր եկել և ուսածածկոցը ետ էր գցում, մերկացնելով կուրծքը և գողտրիկ շարժումներ անելով, ինչպես վայել է իրեն ցուցադրող պչրուհուն. բոլոր հայացքներ ուղղվեցին նրան։ Նրան ուղեկցում էր Ֆրանսիայի երիտասարդ մի պեր. նա պերից խնդրեց թատերադիտակը, որ նրան տվել էր բռնելու։ Կոմսուհու շարժուձևից, իր նոր ուղեկցին նայելու կերպից Ռաֆայելը հասկացավ, թե ինչպիսի բռնակալության էր ենթարկված իր հաջորդը։ Հավանաբար հմայված, ինչպես Ռաֆայելը անցյալում, նրա պես խաբված, նրա պես ճշմարիտ զգացումի ամբողջ ուժով այդ կնոջ սառն հաշիվների դեմ պայքարած երիտասարդը պետք է կրեր այն տանջանքները, որոնցից Ռաֆայելը, բարեբախտաբար, ձերբազատվել էր։ Անճառելի մի խնձիղ պայծառացրեց Ֆեոդորայի դեմքը, երբ նա, թատերադիտակը պտտեցնելով բոլոր օթյակների վրա և արագորեն նայելով արդուզարդերին, գտավ, որ իր զարդարանքով և գեղեցկությամբ գերազանցում էր Փարիզի ամենաչքնաղ, ամենաշքեղ կանանց. նա ծիծաղեց, որպեսզի ցույց տար իր սպիտակ ատամները, ծաղիկներով պճնված գլուխը շրջեց, որպեսզի հիանային իր վրա, հայացքը օթյակից օթյակ տարավ, ծիծաղելով մի ռուս իշխանուհու վրա, որ իր գդակը անշնորհք կերպով ճակատի վրա էր քաշել կամ մի բանկիրի աղջկա վրա, որի անվայելուչ գլխարկը տգեղացրել էր նրան։ Հանկարծ նա հանդիպեց Ռաֆայելի պիշ աչքերին և գունատվեց. մերժված հոմանին շանթահարեց նրան իր սևեռուն, անտանելիորեն արհամարհական նայվածքով։ Այն ժամանակ, երբ կումսուհու բոլոր երկրպագուները չէին պրծնում նրա իշխանությունից, Ռաֆայելը աշխարհում միակն էր, որ չէր ենթարկվել նրա թովչանքներին։ Անպատիժ կերպով խրոխտացող իշխանությունը մոտ է կործանման։ Այս ճշմարտությունն ավելի խոր է դրոշմված կանանց սրտում, քան արքաների գլխում։ Եվ ահա Ֆեոդորան հանձին Ռաֆայելի տեսնում էր իր դյութանքների ու պչրանքների վախճանը։ Նախորդ օրը օպերայում Ռաֆայելի ասած սրամիտ մի խոսքը արդեն նշանավոր էր դարձել փարիզյան շքասրահներում։ Այդ ահավոր հեգնաբանության խայթը անդարմանելի խոց էր պատճառել կոմսուհուն։ Ֆրանսիայում մենք գիտենք դաղել վերքը, բայց դեռ չգիտենք ամոքել մի խոսքի պատճառած ցավը։ Այն պահին, երբ բոլոր կանայք մերթ մարկիզին, մերթ կոմսուհուն էին նայում, կոմսուհին պատրաստ էր նրան նստեցնել որևէ նոր Բաստիլի զնդանում, որովհետև, ի հեճուկս Ֆեոդորային հատուկ ծածկամտության, նրա մրցակցուհիները հասկացան, որ նա տառապում է։

Եվ ահա վերջին սփոփանքը խույս տվեց կոմսուհուց։ «Ես բոլորից գեղեցիկ եմ» հեշտալուր խոսքը, այս հավերժական հանկերգը, որ մեղմացնում էր վիրավորված սնափառության բոլոր մորմոքները, դարձավ պատրանք։ Երկրորդ արարվածի ներկայացումից առաջ մի կին բազմեց Ռաֆայելի մերձակից օթյակում, որը մինչև այդ ժամանակ պարապ էր մնացել։ Ամբողջ պարտերում հիացումի շշունջ տարածվեց։ Մարդկային դեմքերի ծովում ծփացին ուշադրության ալիքները, բոլոր հայացքներն ուղղվեցին անծանոթ կնոջ վրա։ Ահելներն ու ջահելները այնքան աղմկեցին, որ, երբ վարագույրը բարձրացավ, նվագախմբի երաժիշտները շուռ եկան, որպեսզի լռություն պահանջեն, բայց սրանք էլ միացան հանդիսականների կայթյուններին, այնպես որ ժխորը ավելի սաստկացավ։ Բոլոր օթյակներում ոգևորված

խոսքեր փոխանակվեցին: Տիկնայք զինվեցին դիտակներով, երիտասարդացած ծերերը ձեռնոցների մուշտակով սկսեցին սրբել դիտակների ապակին: Բայց զմայլանքի խուլ աղմուկը աստիճանաբար հանդարտվեց, երգերը հնչեցին բեմի վրա, կարգը վերահաստատվեց: Բարձր հասարակությունը, ամաչելով որ տեղի է տվել բնական պոռթկմանը, վերստացավ իր նրբակիրթ ձևերի վեհաշուք սառնությունը: Հարուստներն աշխատում են ոչ մի բանից չզարմանալ. նրանք առաջին իսկ նայվածքով պարտավոր են գեղեցիկ ստեղծագործության մեջ գտնել թերությունը, որպեսզի ազատվեն զարմանքից, այդ գռեհիկ զգացումից: Այնուամենայնիվ մի քանի այրեր չկարողացան ուշքի գալ. չլսելով երաժշտությունը, սուզվելով միամիտ զմայլության մեջ, նրանք անքթիթ նայում էին Ռաֆայելի հարսանուհուն: Վալանտենը ստորակա օթյակում, Ակիլինայի կողքին նկատեց գարշելի, արյունագանգ դեմքը Տայֆերի, որն իրեն աչքով էր անում: Ապա տեսավ Էմիլին, որը, նվագախմբի մոտ կանգնած, կարծես ասում էր իրեն. «Նայիր կողքիդ նստած գեղեցկուհուն»: Ահա և Ռաստինյակը, որ նստել էր տիկին դը Նյուսինգենի և նրա դստեր կողքին և քաշքշում էր իր ձեռնոցները, ջղայնանալով, որ գամված է տեղում և չի կարող մոտենալ աստվածային անծանոթուհուն: Ռաֆայելի կյանքը կախված էր ինքն իր հետ կռած դաշինքից, որ ցարդ դեռ չէր խախտվել. նա ուխտել էր ուշադրությամբ չնայել ոչ մի կնոջ և, որպեսզի չենթարկվեր փորձության, իր հետ կրում էր մի դիտակ, որի վարպետորեն պատրաստված ապակին խաթարում և այլանդակում էր ամենագեղեցիկ դիմագծերի ներդաշնակությունը: Ռաֆայելը դեռ չէր հաղթահարել առավոտյան իրեն համակած վախը, երբ սովորական սիրազեղ մի ցանկության պատճառով թալիսմանը այնպես արագ կծկվել էր, և հիմա նա հաստատապես որոշեց չնայել իր հարսանուհուն: Նա կռնակը դարձրեց անծանոթ կնոջ օթյակին և, մեկնվելով, անպատկառորեն նրա առաջ փակեց բեմի կեսը, իբրև թե արհամարհում է նրան և չի ուզում իմանալ, թե իր հետևում գտնվում է մի սիրուն կին: Հարսանուհին ճշտորեն ընդօրինակեց Վալանտենի կեցվածքը. նա արմունկը հենեց օթյակի եզրին և, կիսով չափ դառնալով դեպի բեմը, նայեց երգիչներին այնպես, ինչպես եթե դիրք ընդունելիս լիներ նկարչի առջև: Նրանք երկուսով նմանվում էին գժտված սիրահարների, որոնք իրար խեթ են նայում, մեկը մյուսին կռնակ են դարձնում, բայց առաջին իսկ փաղաքշական բառից պատրաստ են գրկախառնվելու: Մերթ ընդ մերթ անծանոթ կնոջ վարսերը կամ գլխարկի թեթև փետուրները հպում էին Ռաֆայելի գլխին և նրա մեջ առաջացնում տռփանքի զգացողություն, որի դեմ նա արիաբար պայքարում էր. շուտով Ռաֆայելը զգաց շրջազգեստը պճնող ժանյակների քաղցր շփումը, լսեց շրջազգեստի կանացիական շրշյունը, մի շրշյուն, որ լի էր կախարդական հեշտանքներով. վերջապես շնչառությունը, որ աննկատելիորեն շարժում էր այդ սիրուն կնոջ կուրծքը, թիկունքը, հանդերձները, նրա բովանդակ դյութական էությունը, հանկարծ հաղորդվեց Ռաֆայելին, ինչպես էլեկտրական կայծ. շղարշն ու ժանյակը, ուսը խտղտելով, ասես Ռաֆայելին փոխանցեցին նրա մերկ և սպիտակ թիկունքի հաճելի ջերմությունը: Վերնախավի պայմանականություններով անջատված և մահվան անդունդներով բաժանված այդ երկու էակները բնության քմահաճույքով նույն վայրկյանին հառաչեցին և, գուցե, մտածեցին մեկը մյուսի մասին: Հալվեի բարկ բուրմունքները ի վերջո արբեցրին Ռաֆայելին: Արգելքից գրգռված ու բորբոքված երևակայությունը մի ակնթարթում նրան մի կին նկարեց հրեղեն գծերով: Նա արագ շուռ եկավ: Անծանոթ կինը, օտար տղամարդու հետ շփվելուց անհանգստացած, նույնպես շուռ եկավ. նրանց նայվածքները, միևնույն մտածումից կենդանացած, իրար հանդիպեցին:

— Պոլին:

— Պարո՛ն Ռաֆայել:

Երկուսն էլ մի պահ քարացած՝ լուռ նայեցին միմյանց: Պոլինը անպաճույճ, բայց վայելուչ հանդերձով էր: Կուրծքը անմեղորեն ծածկած շղարշի միջով վարժ աչքը կարող էր նշմարել շուշանի սպիտակություն և պատկերացնել այն ձևերը, որոնք հիացում կպատճառեին որևէ կնոջ: Եվ միշտ նույն կուսական համեստությունը, երկնային անբծությունը, միշտ նույն նազելի շարժուձևերը: Նրա թեզանիքը թեթևակի դողում էր, և դա մատնում էր այն սարսուռը, որով համակված է նրա մարմինը, ինչպես և սիրտը:

— Օ, վաղը եկեք,— ասաց Պոլինը,— եկեք «Սեն-Կանտեն» պանդոկը և առեք ձեր թղթերը: Ես այնտեղ կլինեմ կեսօրին: Մի ուշանաք:

Պոլինը իսկույն վեր կացավ և դուրս եկավ: Ռաֆայելը ուզեց հետևել Պոլինին, բայց նրան վարկաբեկելու վախից մնաց տեղում. նա նայեց Ֆեոդորային և նրան տգեղ գտավ: Ի վիճակի չլինելով երաժշտական մի ֆրազ անգամ հասկանալու, հեղձուկ զգալով այս հանդիսասրահում, և, վերջապես, սիրտը լցվելով, Ռաֆայելը դուրս եկավ և վերադարձավ տուն:

— Հովնաթան,— ասաց նա իր ալևոր ծառային, երբ պառկեց անկողնում,— ինձ կես կաթիլ ափիոն տուր շաքարի կտորի վրա և վաղը տասներկուսից քսան պակաս արթնացրու…

— Ուզում եմ, որ Պոլինը ինձ սիրի,— գոչեց Ռաֆայելը առավոտյան, անբացատրելի անձկությամբ նայելով թալիսմանին:

Կաշին չշարժվեց, ասես նա կորցրել էր կծկվելու հատկությունը: Նա, իհարկե, չէր կարող կատարել արդեն կատարված ցանկությունը:

— Ա՜հ,— բացականչեց Ռաֆայելը, կարծես իր վրայից թոթափում էր կապարե մի վերարկու, որ կրել էր այն օրից, երբ թալիսմանը իրեն էր ընծայվել:— Դու ինձ խաբում ես, դու ինձ չես հնազանդում, դաշինքը խախտված է: Ես ազատ եմ, ես կապրեմ: Ուրեմն այս բոլորը վատ կատա՞կ էր.. .

Այս խոսքերն արտասանելով, նա չէր համարձակվում հավատալ իր այդ հայտնագործությանը: Նա հագնվեց այնպես պարզ, ինչպես հագնվում էր անցյալում և որոշեց ոտքով գնալ իր նախկին բնակարանը, փորձելով մտքով փոխադրվել այն երջանկահիշատակ օրերը, երբ նա անվեհերորեն անձնատուր էր եղել ցանկությունների մոլուցքին, երբ նա դեռ չէր ըմբոշխնել երկրային բոլոր վայելքները: Նա քայլում էր և իր առջև տեսնում էր ոչ թե «Սեն-Կանտեն» պանդոկի Պոլինին, այլ երեկվա Պոլինին, այդ անթերի, այնքան տենչալի տարփուհուն, դեռատի, խելացի, սիրազեղ օրիորդին՝ արվեստագետի խառնվածքով, ընդունակ հասկանալու բանաստեղծն ու բանաստեղծությունը և ապրելու պերճանքի մեջ. մի խոսքով՝ Ֆեոդորային, բայց գեղեցիկ հոգով, կամ Պոլինին, բայց կոմսուհի և միլիոնատեր դարձած, ինչպես Ֆեոդորան: Երբ նա գտնվեց մաշված շեմքի վրա, դռան ճաքած սալաքարի վրա այն խարխուլ տան, ուր այնքան անգամ հուսակտուր մտածումներ էր ունեցել, սրահից դուրս եկավ մի պառավ կին և հարցրեց նրան.

— Դո՞ւք եք պարոն Ռաֆայել դը Վալանտենը:

— Այո, մայրիկ,— պատասխանեց Ռաֆայելը։

— Դուք հիշո՞ւմ եք ձեր նախկին բնակարանը,— հարեց պառավը։— Այնտեղ ձեզ սպասում են։

— Պանդոկը դեռ տիկին Գոդենի ձեռքո՞ւմն է,— հարցրեց Ռաֆայելը։

– Օ, ոչ, պարոն։ Տիկին Գոդենը հիմա բարոնուհի է։ Նա բնակվում է Սենի մյուս ափին սեփական գեղեցիկ շենքում։ Նրա ամուսինը վերադարձել է։ Հետը շատ փող է բերել. .. Ասում են, տիկինը կարող էր գնել ամբողջ Սեն-Ժակ թաղը, եթե ցանկանար։ Նա ինձ նվիրեց պանդոկում եղած ամբողջ գույքը։ Մի խոսքով, բարի կին է։ Այնպես պարզ է, ինչպես առաջ էր։

Ռաֆայելը արագ բարձրացավ վերնահարկի իր խուցը և, երբ հասավ սանդուղքի վերջին աստիճաններին, դաշնամուրի նվագ լսեց։ Պոլինը սպասում էր նրան. նա համեստորեն հագել էր գունագեղ բամբակե շրջազգեստ, բայց շրջազգեստի ձևից, գլխարկից, ձեռնոցներից և ուսածածկոցից, որոնք անփութորեն նետված էին մահճակալի վրա, երևում էր, որ նա հարստացել է։

— Օ, վերջապես եկաք,— գոչեց Պոլինը, գլուխը շրջելով և հրճվանքի միամիտ թափով վեր կենալով։ Ռաֆայելը մոտեցավ և նստեց Պոլինի կողքին, բոլորովին այլայլված, շփոթված, երջանիկ. նա լռությամբ նայեց Պոլինին։

— Ինչո՞ւ դուք մեր մոտից հեռացաք,— հարցրեց Պոլինը և, շառագունելով, աչքերը խոնարհեցրեց։— Ի՞նչ է պատահել ձեզ։

— Ահ, Պոլին, ես եղել եմ և դեռ մնում եմ շատ դժբախտ մարդ։

— Ավա՜ղ,— գոչեց Պոլինը հուզված։— Երեկ երեկոյան ես ձեր վիճակը հասկացա, երբ ձեզ տեսա լավ հագնված, հարուստի երևույթով, բայց իրականում ամեն ինչ առաջվանն է, այնպես չէ՞։

Վալանտենը չկարողացավ զսպել արցունքները և բացականչեց.

— Պոլի՜ն, ես. ..

Ռաֆայելը խոսքը չավարտեց, սերը բոցկլտաց նրա աչքերում, գորովը զեղեց նրա նայվածքում։

— Օ՜, դու ինձ սիրում ես, դու ինձ սիրում ես,— բացականչեց Պոլինը։

Ռաֆայելը հավանության նշան տվեց գլխի խոնարհումով, նա ի վիճակի չէր մի բառ անգամ արտաբերելու։

Այն ժամանակ երիտասարդ օրիորդը նրա ձեռքը բռնեց, սեղմեց և մեկ ծիծաղելով, մեկ արտասվելով ասաց.

— Հարուստնե՛ր, հարուստնե՛ր, երջանիկնե՛ր, հարուստնե՛ր։ Քո Պոլինը հարուստ է... Բայց ես հիմա կփափագեի աղքատ լինել։ Քանի՜-քանի՜ անգամ յուրովի ասել եմ, որ «Նա ինձ սիրում է» խոսքի համար ես կտայի աշխարհի բոլոր գանձերը։ Ո՜վ իմ Ռաֆայել։ Ես միլիոններ ունեմ։ Դու պերճանքը սիրում ես, գոհ կլինես, բայց դու պետք է սիրես նաև իմ հոգին, որի մեջ

այնքան սեր կա քեզ համար: Գիտե՞ս, հայրս վերադարձել է: Ես հարուստ ժառանգ եմ: Ծնողներս ամբողջովին ինձ են թողել տնօրինելու իմ բախտը: Ես ազատ եմ, հասկանո՞ւմ ես:

Ռաֆայելը Պոլինի ձեռքերը բռնեց և համբուրեց այնքան խելահեղորեն, այնքան խանդակաթորեն, այնքան անհագորեն, որ նրա համբույրը ասես նման էր ջղաձգության: Պոլինը ձեռքերն ազատեց, Ռաֆայելի ուսերի վրա դրեց և նրան նայեց. նրանք իրար հասկացան և իրար փարվեցին, գրկախառնվեցին, ողջագուրվեցին այնպիսի սրբազան, կաթոգին, ամեն մի հետին մտքից զերծ ջերմությամբ, ինչպիսին կարող է լինել մեկ համբույրի, առաջին համբույրի մեջ, որով երկու հոգիներ գերիշխանություն են ստանում մեկը մյուսի վրա:

— Ա՜հ,— բացականչեց Պոլինը, ընկնելով աթոռի վրա:— Ես այլևս չեմ կարող քեզանից բաժանվել.. . Չգիտեմ որտեղի՞ց է իմ մեջ այդքան հանդգնություն,— հարեց նա շառագունելով:

— Հանդգնությո՞ւն, Պոլին: Օ, մի՛ վախենա, դա հանդգնություն չէ, դա սեր է, ճշմարիտ, խոր, հավերժական սեր, ինչպես իմն է, այնպես չէ՞:

— Օ՜, խոսիր, խոսիր, խոսիր,— ասաց Պոլինը:— Քո բերանն այնքա՛ն երկար ժամանակ համր է եղել ինձ համար. ..

— Ուրեմն դու ինձ սիրո՞ւմ էիր:

— Օ՜, աստված: Սիրում էի՞: Լսիր, քանի՜-քանի՜ անգամ ես արտասվել եմ քո սենյակը հավաքելիս, ափսոսալով, որ ես և դու աղքատ ենք: Ես պատրաստ էի ինձ դևին վաճառելու, միայն թե քեզ ազատեի վշտից: Հիմա, Ռաֆայելդ իմ, դու բոլորովին իմն ես, իմն է այդ գեղեցիկ գլուխը, իմն է քո սիրտը: Օ, այո, հատկապես սիրտը, այդ հավերժական հարստությունը.. . Խոսքս ինչի՞ մասին էր,— շարունակեց Պոլինը կարճատև լռությունից հետո:— Հա, հիշեցի: Մենք ունենք երեք, չորս, թերևս հինգ միլիոն: Եթե ես աղքատ լինեի, հավանաբար կցանկանայի քո անունը կրել, որպեսզի ինձ քո կինը կոչեին, իսկ հիմա քեզ համար կզոհաբերեի ամբողջ աշխարհը, հոժարությամբ կլինեի քո մշտական աղախինը: Եվ ահա, Ռաֆայել, քեզ ընծայաբերելով իմ սիրտը, իմ անձը և իմ հարստությունը, ես այնուամենայնիվ քեզ տալիս եմ հիմա ոչ ավելի, քան այն օրը, երբ դրի այստեղ,— Պոլինը ցույց տվեց սեղանի զզրոցը,— հարյուր սուանոց մի դրամ: Օ, ինձ ինչքա՜ն վիշտ պատճառեց քո ուրախությունն այն ժամանակ:

— Ինչո՞ւ դու հարուստ ես,— գոչեց Ռաֆայելը:— Ինչո՞ւ դու սնափառություն չունես: Ես ոչինչ չեմ կարող անել քեզ համար:

Ռաֆայելը իր ձեռքերը գալարեց երջանկությունից, հուսահատությունից, սիրուց:

— Ես քեզ գիտեմ, երկնային էակ. երբ դու դառնաս մարկիզուհի դը Վալանտեն, ոչ իմ տիտղոսը, ոչ իմ հարստությունը քեզ համար չեն արժենա.. .

—. .. Քո մի մազը,— հարեց Պոլինը:

— Ես նույնպես միլիոններ ունեմ, բայց հիմա ի՞նչ է մեզ համար հարստությունը: Ես կարող եմ քեզ նվիրել իմ կյանքը, վերցրու:

— Օ, քո սերը, Ռաֆայել, քո սերը մի ամբողջ աշխարհ արժե ինձ համար: Ինչպես, քո միտքը ի՞նձ կպատկանի: Այն ժամանակ ես երջանիկներից ամենաերջանիկն եմ:

— Մեզ կարող են լսել,— նկատեց Ռաֆայելը:

— Օ, այստեղ ոչ ոք չկա,— ասաց Պոլինը գլուխը թափ տալով:

— Դե, մոտս եկ,— գոչեց Ռաֆայելը, թևերը նրան մեկնելով:

Պոլինը ընդոստ ծնկի եկավ և ձեռքերով փաթաթվեց Ռաֆայելի վզին:

— Գրկեցեք ինձ այն բոլոր վշտերի համար, որ դուք պատճառել եք ինձ,— ասաց Պոլինը,— այն բոլոր մտատանջությունների համար, որ ձեր ուրախությունները պատճառել են ինձ, այն բոլոր գիշերների համար, որ ես անցկացրել եմ հովհարներ ներկելով:

— Հովհարնե՞ր:

— Քանի որ մենք հարուստ ենք, գանձ իմ, ես կարող եմ քեզ ամեն ինչ ասել: Խե՛ղճ տղա: Ինչքան հեշտ է խաբել խելոք մարդկանց: Մի՞թե դու կարող էիր շաբաթն երկու անգամ ճերմակ բաճկոնակներ և մաքուր շապիկներ ունենալ, ամիսը երեք ֆրանկ վճարելով լվացարարուհուն: Իսկ կաթը դու խմում էիր կրկնակի անգամ ավելի, քան կարելի էր գնել քո դրամով: Ես քեզ խաբում էի ամեն ինչի մեջ՝ վառելիքի, ձեթի, նույնիսկ փողի մեջ: Ո՛վ իմ Ռաֆայել, ինձ մի առնիր կին,— ավելացրեց Պոլինը ծիծաղելով,— ես շատ խորամանկ եմ:

— Բայց ինչպե՞ս էիր դա անում:

— Ես աշխատում էի մինչև գիշերվա ժամը երկուսը և հովհարներից շահածիս կեսը տալիս էի մորս և կեսը՝ քեզ:

Մի պահ նրանք մեկը մյուսին նայեցին, հրճվանքից և սիրուց խելահեղ:

— Օ, մի օր մենք, հավանաբար, ահավոր վշտով կվճարենք այսպիսի երջանկության համար,— գոչեց Ռաֆայելը:

— Դու կամուսնանա՞ս,— հարցրեց Պոլինը:— Ես քեզ չեմ զիջի ոչ մի կնոջ:

— Ես ազատ եմ, սիրելիս:

— Ազա՛տ,— կրկնեց Պոլինը:— Ազա՛տ և ի՛մը:

Պոլինը ծնկի եկավ, ձեռքերը ծալեց և ջերմեռանդ հրայրքով նայեց Ռաֆայելին:

— Ես վախենում եմ, որ խելագարվեմ: Ինչքա՛ն դու սիրուն ես,— շարունակեց Պոլինը, շոյելով իր սիրեցյալի խարտյաշ մազերը:— Ինչքա՛ն հիմար է նա, այդ քո կոմսուհի Ֆեոդորան: Ինչպիսի՛ հաճույք ես զգացի երեկ, երբ բոլորն ինձ ողջունում էին: Նա այդպիսի ընդունելություն չգտավ: Լսիր, սիրելիս, երբ իմ թիկունքը դիպավ քո թևին, ինչ-որ ձայն ինձ շշնջաց. «Քո սիրեցյալն այստեղ է»: Ես շուռ եկա և տեսա քեզ: Ես փախա, որպեսզի բոլորի ներկայությամբ չնետվեմ քո վիզը:

— Երանի քեզ, որ կարողանում ես խոսել,— բացականչեց Ռաֆայելը,— իմ սիրտը լցված է: Ես ուզում եմ փղձկալ և չեմ կարողանում: Մի քաշիր քո ձեռքը: Ինձ թվում է, թե ամբողջ կյանքումս այսպես պետք է քեզ նայեմ երջանիկ ու զոհ:

— Օ, սե՛ր իմ, կրկնիր ինձ այդ խոսքերը:

— Ինչ արժեք ունեն խոսքերը մեզ համար,— պատասխանեց Ռաֆայելը և տաք արցունք կաթեցրեց Պոլինի ձեռքի վրա:— Հետագայում ես կաշխատեմ քեզ բացատրել իմ սերը. հիմա ես կարող եմ միայն զգալ այն.. .

— Օ՜,— բացականչեց Պոլինը,— այդ հրաշալի հոգին, հրաշալի հանճարը, սիրտը, որ ես այնքան լավ եմ ճանաչում, այդ բոլորը ի՞մն է, իսկ ես՝ քո՞նը:

— Ընդմի՛շտ, իմ քա՜ղցր էակ,— ասաց Ռաֆայելը հուզաթաթավ ձայնով:— Դու կլինես իմ կինը, իմ բարի ոգին: Քո ներկայությունը միշտ փարատել է իմ վշտերը և սփոփել իմ հոգին. հիմա քո հրեշտակային ժպիտը ասես մաքրագործեց ինձ: Ես կարծես նոր կյանք եմ սկսում ապրել: Իմ դժխեմ անցյալը, իմ ճղճիմ խոլությունները այժմ ինձ միայն վատ երազներ են թվում: Ես հոգևին մաքրվում եմ քո կողքին: Զգում եմ երջանկության շունչը: Օ՜, մնա միշտ այստեղ,— ավելացրեց նա, երկյուղածությամբ Պոլինին սեղմելով իր բաբախուն սրտին:

— Մահը երբ ուզե, թող գա,— զմայլագին բացականչեց Պոլինը:— Ես ապրեցի:

Երանի նրան, ով կգուշակի, կհասկանա նրանց անճառելի բերկրանքները:

— Ո՜վ իմ Ռաֆայել,— ասաց Պոլինը երկու ժամ լռությունից հետո,— ես կփափագեի, որ ոչ ոք երբեք չմտներ մեր այս թանկագին խուցը:

— Պետք է դուռը որմափակել, պատուհանը ցանկապատել և այս տունը գնել,— պատասխանեց մարկիզը:

— Այո, ճիշտ է,— ասաց Պոլինը:

Ապա, մի րոպե լռելուց հետո, ավելացրեց.

— Մենք մոռացանք փնտրել քո ձեռագիրը:

Երկուսն էլ սկսեցին ծիծաղել բարի, անմեղ ծիծաղով:

— Ես հիմա հեգնում եմ բոլոր գիտությունները,— գոչեց Ռաֆայելը:

— Իսկ փա՞ռքը:

— Դու ես իմ միակ փառքը:

— Դու շատ տխուր էիր, երբ գրում էիր այս խզբզոցները,— ասաց Պոլինը, թերթելով թղթերը:

— Իմ Պոլին. ..

— Օ, այո, քո Պոլին... Ուրեմն ի՞նչ:

— Դու որտե՞ղ ես բնակվում:

— Սեն-Լազար փողոցի վրա։ Իսկ դո՞ւ։

— Վարեն փողոցի վրա։

— Ինչքան հեռու կլինենք մեկս մյուսից, մինչև.. .

Պոլինը խոսքը չավարտեց և պչրանքով ու խորամանկությամբ նայեց իր տարփածուին։

— Բայց մենք ամենաշատը երկու շաբաթ բաժան կապրենք,— ասաց Ռաֆայելը։

— Ճիշտ է։ Երկու շաբաթ անց մենք կամուսնանանք։ Պոլինը երեխայի պես վեր-վեր ցատկեց։— Օ, ես անսիրտ աղջիկ եմ,— հարեց նա։— Ես չեմ մտածում ոչ հոր մասին, ոչ մոր մասին, աշխարհում ոչ մի բանի մասին։ Գիտե՞ս, սիրելիս, հայրս ծանր հիվանդ է։ Նա Հնդկաստանից վերադարձավ լուրջ հիվանդ վիճակում։ Քիչ մնաց մահանար Հավրում, ուր մենք գնացել էինք նրան դիմավորելու։ Ա՜հ, աստված,— բացականչեց նա, նայելով ժամացույցին։— Արդեն ժամը երեքն է։ Ես պետք է տանը լինեմ, նա զարթնում է ժամը չորսին։ Տանտիրուհին ես եմ, մայրս իմ բոլոր ցանկությունները կատարում է, հայրս ինձ պաշտում է, բայց ես չեմ ուզում չարաշահել նրանց բարությունը, դա վատ բան կլիներ։ Խե՛ղճ հայրիկ, երեկ նա էր ինձ ուղարկողը Իտալական թատրոն... Դու վաղը կգաս նրան տեսնելու, այնպես չէ՞։

— Մարկիզուհի դը Վալանտենը կհաճի՞ ինձ պատիվ անել, թևանցուկ գալով ինձ հետ։

— Սենյակի բանալին հետս տանեմ,— ասաց Պոլինը։— Չէ՞ որ սա պալատ է, սա մեր գանձատունն է։

— Պոլին, ևս մի համբույր։

— Հազա՜ր համբույր։ Աստված իմ,— ասաց Պոլինը, նայելով Ռաֆայելին,— և այսպես կլինի միշտ։ Այս բոլորն ինձ երազ է թվում։

Նրանք դանդաղորեն իջան սանդուղքներից, ապա ընթանալով համրաքայլ, միասին խլրտալով միևնույն երջանկության բեռան տակ, մեկը մյուսին սեղմվելով երկու աղավնիների նման, նրանք հասան Սորբոնի հրապարակը, ուր սպասում էր Պոլինի կառքը։

— Ես ուզում եմ գալ քեզ մոտ,— գոչեց Պոլինը։— Ուզում եմ տեսնել քո ննջասենյակը, քո աշխատասենյակը, ուզում եմ նստել այն սեղանի մոտ, որի վրա դու աշխատում ես։ Դա կլինի առաջվա պես,— ավելացրեց նա, շառագունելով։— Ժոզեֆ,— դիմեց նա սպասյակին,— ես գնում եմ Վարեն փողոցը, հետո կվերադառնամ տուն։ Հիմա ժամը երեք անց քառորդ է, իսկ տուն պետք է լինեմ ժամը չորսին։ Թող Ժորժը քշի ձիերին։

Եվ մի քանի րոպեից հետո երկու սիրահարները հասան Վալանտենի առանձնատունը։

— Օ, ինչքա՜ն գոհ եմ, որ այս բոլորը տեսել եմ,— բացականչեց Պոլինը, շոշափելով Ռաֆայելի մահճակալը եզերող մետաքսյա վարագույրները։— Երբ ես քնեմ, ապա մտքով այստեղ կլինեմ։ Քո սիրուն գլուխը կպատկերացնեմ բարձի վրա։ Ասա, Ռաֆայել, դու ոչ ոքից խորհուրդ չե՞ս հարցրել տունդ կահավորելիս։

– Ոչ ոքից։

— Իսկապե՞ս։ Մի կին չի՞ եղել, որ. ..

— Պոլին։

— Օ՜, ես սարսափելի խանդոտ եմ։ Դու լավ ճաշակ ունես։ Վաղը, ես քո մահճակալի պես մահճակալ կունենամ։

Ռաֆայելը, երջանկությամբ արբշիռ, գրկեց Պոլինին։

— Բայց հա՜յրս.. . հա՜յրս,— բացականչեց Պոլինը։

— Ես քեզ կուղեկցեմ, ուզում եմ որքան կարելի է ուշ բաժանվել քեզանից,— ասաց Ռաֆայելը։

— Ինչքա՜ն ազնիվ ես։ Ես չէի համարձակվում քեզ առաջարկել. . .

— Մի՞թե դու իմ կյանքը չես։

Ձանձրալի կլիներ այստեղ կետ առ կետ բերել սիրահարների ամբողջ շաղակրատանքը, որին արժեք են տալիս միայն նայվածքը, ձայնի երանգը, անմեկնելի շարժուձևերը։ Ռաֆայելը Պոլինին ուղեկցեց մինչև տուն և վերադարձավ հրճվանքի այնպիսի զգացումով, ինչպիսին միայն կարող է զգալ և կրել մարդը այս աշխարհում։ Իսկ երբ նստեց թիկնաթոռի մեջ, կրակի կողքին, խոկալով իր երազանքների հանկարծական և լիակատար իրականացման մասին, մի սառը միտք թափանցեց նրա ուղեղը, ինչպես դաշույնի պողպատը թափանցում է կուրծքը, և նա նայեց շագրենի կաշուն ու տեսավ, որ կաշին թեթևակի նեղացել էր։ Նա թունդ հայհոյեց մայրենի լեզվով, առանց անդուլետյան վանամոր[146] ճիզվիտական թերասացության, գլուխը հենեց թիկնաթոռի թիկնակին և անքթիթ, չտեսնող աչքերը հառեց վարագուրակալին։

— Աստվա՜ծ իմ,— բացականչեց նա։— Ի՜նչ, իմ բոլոր ցանկությունները, բոլոր. .. Խե՜ղճ Պոլին։

Նա կարկինը առավ և չափեց, թե ինչքան կյանք արժեց իրեն այս առավոտ։

— Ինձ մնաց միայն երկու ամիս,— ասաց նա։

Սառը քրտինք պատեց նրան, բայց հանկարծ աննկարագրելի կատաղության թափով բռնեց շագրենի կաշին և ճչաց.

— Ի՜նչ հիմարն եմ ես։

Այս խոսքի վրա նա դուրս փախավ տնից, պարտեզների միջով հասավ մի ջրհորի և նրա մեջ շպրտեց թալիսմանը։

— Ինչ ուզում է լինի. ..— ասաց նա։— Գրողի ծոցը գնա այս տեսակ տխմարությունը։

Այսպես ուրեմն Ռաֆայելը անձնատուր եղավ սիրո երջանկությանը և Պոլինի հետ ապրեց սերտ սրտակցությամբ։ Նրանց ամուսնությունը, որ հետաձգվել էր այնպիսի պատճառներով,

---

[146] **Անդուլետյան վանամայր** — անգլիացի գրող Ստերնի «Տրիսամ Շենդի» վեպի գործող անձ։ Երբ վանամայրը հայհոյանք էր տալիս, բառը մինչև վերջ չէր ասում, որպեսզի «նվազեցներ իր մեղքը»։

որոնք հետաքրքրական չեն պատմելու համար, պետք է տեղի ունենար մարտի սկզբներին: Նրանք իրար հասկացել էին և ոչ մի կասկած չունեին իրենց փոխադարձ զգացումների մասին, բայց որովհետև երջանկությունը նրանց առջև բաց էր արել իրենց տարփանքի բովանդակ ուժը, ապա երբևէ երկու հոգիներ, երկու բնավորություններ այնպես սերտ սիրով չկապվեցին միմյանց, ինչպես Ռաֆայելն ու Պոլինը: Նրանք որքան ավելի իրար ճանաչեցին, այնքան ավելի իրար սիրեցին. երկուստեք նույն նրբազգացությունը, նույն ամոթխածությունը, նույն սերը, միայն թե անբիծ, հրեշտակային սերը. ոչ մի ամպ նրանց երկնակամարի վրա. մեկի ցանկությունը օրենք էր մյուսի համար: Նրանք երկուսն էլ հարուստ էին, կարող էին գոհացնել իրենց ամեն տեսակ քմահաճույքները, հետևաբար նրանք քմահաճույքներ չունեին: Ընտիր ճաշակը, գեղեցկության զգացումը, իսկական բանաստեղծական ըմբռնումը հարսնացուի բնորոշ հատկություններն էին, նա արհամարհում էր կանացի ցուցադրական պաճուճանքները, սիրած մարդու ժպիտը նրան ավելի գեղեցիկ էր թվում, քան Օրմուսի[147] մարգարիտը, բեհեզներն ու ծաղիկները կազմում էին նրա ամենաճոխ պճնանքները: Այնուամենայնիվ, Պոլինն ու Ռաֆայելը խույս էին տալիս հասարակությունից, առանձնությունը այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն կենարար էր թվում նրանց: Շրջմոլիկները այդ գեղեցիկ ապօրինի զույգին ամեն երեկո տեսնում էին Իտալական թատրոնում կամ օպերայում: Սկզբում նրանց մասին որոշ բամբասանքներ էին շրջում շքասրահներում, բայց շուտով Փարիզի վրայով անցնող դեպքերի հորձանքը[148] մոռացրեց երկու անվնաս սիրահարներին: Բացի դրանից, նրանց ամուսնությունը հայտարարված էր: Դա որոշ չափով նրանց արդարացնում էր բարոյիկ համարված մարդկանց աչքին: Բարեբախտաբար նրանց ծառաներն էլ համեստ գտնվեցին, այսպիսով, ոչ մի չարախոսություն չմթագնեց նրանց երջանկությունը:

Փետրվարի վերջին, երբ բավական տաքացած օրերը թույլ էին տալիս անձկագին տենչալու գարնան խայտանքները, Պոլինն ու Ռաֆայելը միասին նախաճաշում էին ոչ մեծ ջերմոցում, որը մի տեսակ ծաղկազարդ սրահ էր և գտնվում էր պարտեզին ընթերակա հարթության վրա: Ձմեռային տմույն արևը, որի ճաճանչները թափանցում էին ցանցառ թփուտների միջով, արդեն ջերմացրել էր օդը: Ծառերի խայտաբղետ սաղարթները, ծաղիկների վառ երանգները, լուսաստվերի քմահաճ խաղերը ակնախտիղ տեսարան էին պարզում դիտողին: Այն ժամանակ, երբ ամբողջ Փարիզը դեռ տաքանում էր տխուր ակութների առջև, այդ երիտասարդ ամոլը խայտում էր կամիլիաների, եղրևանիների և հավամրգիների շրջանակում: Նրանց խնդուն դեմքերը բարձրանում էին նարգիզների, հովտաշուշանների և բենգալյան վարդերի վրա: Այդ մեղկ և ճոխ ջերմոցի հատակը ծածկված էր գունագեղ գորգի նմանվող աֆրիկական փսիաթով: Կանաչ կտավով պատած պատերի վրա խոնավության հետքն անգամ չկար: Կահավորումը արտաքուստ կոպիտ, բայց ողորկ և մաքրափայլ փայտից էր: Պոլինը սրճով մրճոտում էր մի կատվի ձագի, որ կուչ էր եկել սեղանի վրա, ուր նրան ձգել էր կաթի հոտը. նա զվարճանում էր կատվիկի հետ, նրան հոտոտել էր տալիս կաթի սերը, ապա հեռացնում էր այն, որպեսզի չարացներ նրան և երկարաձգեր խաղը. նա քահ-քահ ծիծաղում էր կատվիկի յուրաքանչյուր ծամածռության վրա և ամեն տեսակ կատակներ էր

---

[147] **Օրմուս** — Պարսից ծոցում կղզի, որի ափերի մոտ մարգարիտ են որսում:

[148] **Փարիզի վրայով անցնող դեպքերի հորձանքը** — ակնարկում է 1830 թվի Հուլիսյան հեղափոխության անդրադարձումները Լեհաստանում, Ալժիրում և այլուր:

անում, որպեսզի Ռաֆայելին թույլ չտար թերթ կարդալ, որն արդեն տասն անգամ ընկել էր նրա ձեռքից: Ինչպես ամեն բնական և անկեղծական բան, առավոտվա այս տեսարանը տոգորված էր անճառելի երանությամբ: Ռաֆայելը ձևացնում էր, թե թերթ է կարդում, բայց գաղտուկ նայում էր կատվիկի հետ զզվրտող Պոլինին, երկար ղենջակի մեջ ոչ լրիվ ծածկված իր Պոլինին, նրա արձակած վարսերին, կապույտ երակներով և սև թավշե հողաթափով նրա սպիտակ ոտիկին: Նա հմայիչ էր իր կիսամերկությամբ, զմայլելի, ինչպես Վեստոլլի[149] մտացածին պատկերները. նա թվում էր և՛ աղջիկ, և՛ կին, ավելի շուտ աղջիկ, քան կին. նա հրճվում էր անխառն երջանկությամբ և ճանաչում էր միայն սիրո առաջին բերկրությունները: Հազիվ թե Ռաֆայելը, համակ խորասուզված քաղցր անրջանքների մեջ, մոռացավ թերթը, Պոլինը կորզեց այն, ճմլեց և այդ թղթե գունդը պարտեզ նետեց, իսկ կատվիկը վազեց քաղաքականության հետևից, որ, ինչպես միշտ, պտտվում էր ինքն իր շուրջը: Եվ երբ Ռաֆայելը, այդ մանկական զվարճությունից սթափված, ուզեց կարդալը շարունակել և կռացավ, որպեսզի վերցներ թերթը, որ արդեն չքացել էր, լսվեց անկեղծ, ուրախ, հնչուն ծիծաղ, ինչպես թռչունի դայլայլը:

— Ես խանդում եմ քո թերթին,— ասաց Պոլինը, սրբելով իր մանկական զվարթ ծիծաղից առաջացած արցունքները:— Մի՞թե դա ուխտադրժություն չէ,— հարեց նա, հանկարծ նորից կին դառնալով,— իմ ներկայությամբ տարվել ռուսական կոչերով և Նիկոլայ կայսեր արձակը[150] գերադասել սիրո խոսքերից ու նայվածքներից:

— Ես չէի կարդում, իմ հրեշտակ, ես քեզ էի նայում:

Այդ միջոցին ջերմոցի մոտ հնչեցին ծանր քայլերը պարտիզպանի, որի երկաթագամ կոշիկների տակ ճռճռում էր ծառուղիների ավազը:

— Պարոն մարկիզ, ներեցեք, որ անհանգստացնում եմ ձեզ, ինչպես և տիկնոջը, բայց ես բերել եմ տարօրինակ մի բան, ինչպիսին երբեք չեմ տեսել կյանքում: Հենց նոր դույլով ջրի հետ ջրհորից քաշեցի հազվագյուտ տեսակի ծովային մի բույս: Ահա այն: Սա ջրին ընտելացած կլինի, որովհետև ոչ թրջված էր, ոչ էլ խոնավացած, փայտի պես չոր էր և բոլորովին փայլուն: Իհարկե, պարոն մարկիզը ինձանից գիտուն է, և մտածեցի, որ պետք է սա նրան բերել, նրա համար հետաքրքրական կլինի:

Եվ պարտիզպանը Ռաֆայելին ցույց տվեց անողոք շագրենակաշին, որի ծավալը հիմա վեց քառակուսի բթաչափ չկար:

— Շնորհակալ եմ, Վանիեր,— ասաց Ռաֆայելը:— Շատ հետաքրքրական բան է:

— Ի՞նչ պատահեց քեզ, հրեշտակս: Դու գունատվեցիր,— բացականչեց Պոլինը:

— Դուք գնացեք, Վանիեր:

---

[149] **Վեստոլլ Ռիչարդ** (1765 —1836) — անգլիացի նկարիչ, որ հայտնի էր Շեքսպիրի և Միլտոնի երկերի նկարազարդումով:

[150] **Նիկոլայ կայսեր արձակը** — ակնարկում է Նիկոլայ I-ի կոչը լեհերին՝ 1830 թվին լեհական ապստամբությունն ընկճելուց հետո:

— Քո ձայնը ինձ վախեցնում է,— ասաց Պոլինը,— նա ինչ-որ տարօրինակ կերպով հանկարծ փոխվեց... Ի՞նչ պատահեց քեզ: Ի՞նչ ես զգում: Ի՞նչդ է ցավում: Հիվա՞նդ ես: Բժիշկ կանչենք,— գոչեց նա:— Հովնաթան, օգնությո՛ւն:

— Հարկ չկա, Պոլին,— ասաց Ռաֆայելը, վերագտնելով իր հանգստությունը:— Դուրս գանք այստեղից: Այստեղ ինչ-որ ծաղիկ կա, որի սուր հոտն ինձ անհանգստացնում է: Գուցե դա աղավնի՞ճն է:

Պոլինը նետվեց անմեղ տունկի վրա, պոկեց նրան ցողունից և պարտեզ շպրտեց:

— Օ, հրեշտա՛կս,— բացականչեց նա, Ռաֆայելին իր գրկում սեղմելով նույնքան կաթոգին, որքան նրանց սերն էր, և մարմրուն պչրանքով պարզելով իր բոսոր շրթները՝ համբույրի համար:— Երբ դու գունատվեցիր, ես հասկացա, որ քեզանից հետո չէի ապրելու. քո կյանքն իմ կյանքն է: Ռաֆայել, ձեռքդ մեջքիս տար: Այնտեղ դեռ զգում եմ սառնություն, մահվան սարսուռ: Քո շրթները բոցակեզ են: Իսկ ձեռքե՞րը... սառած,— ավելացրեց նա:

— Ոչի՛նչ,— գոչեց Ռաֆայելը:

— Իսկ ինչո՞ւ համար է այդ արցունքը: Տուր ես խմեմ այն:

— Օ, Պոլին, Պոլին, դու ինձ չափազանց շա՛տ ես սիրում:

— Քո մեջ ինչ-որ արտակարգ բան է կատարվում, Ռաֆայել... Ճիշտը խոսիր, թե ոչ ես շուտով կիմանամ քո գաղտնիքը: Տուր ինձ դա,— հարեց Պոլինը, վերցնելով շագրենի կաշին:

— Դու իմ դահիճն ես,— գոչեց երիտասարդը, սարսափահար նայելով թալիսմանին:

— Ի՛նչ ես ասում,— թոթովեց Պոլինը և ձեռքից բաց թողեց ճակատագրի ահարկու խորհրդանշանը:

— Դու ինձ սիրո՞ւմ ես,— հարցրեց Ռաֆայելը:

— Սիրո՞ւմ եմ: Դա ի՞նչ հարց է:

— Դեհ լավ, թող ինձ, գնա:

— Խեղճ աղջիկը դուրս եկավ:

— Ի՛նչ,— բացականչեց Ռաֆայելը, երբ մենակ մնաց: Մեր լուսավորված դարում, երբ մենք սովորել ենք, որ ադամանդները ածխային բյուրեղացումներ են, մի դարաշրջանում, երբ ամեն ինչի բացատրությունը գտնված է, երբ ոստիկանությունը կարող է նոր մեսիային դատարանները քարշ տալ և նրա գործած հրաշքները քննության ենթարկել Գիտությունների կաճառում, երբ մենք հավատում ենք միայն նոտարի ստորագրությանը, ես հավատա՞մ ինչ-որ «Մանե-Թեկել-Ֆարես»-ի[151]: Ոչ, աստված վկա, ես չեմ կարող մտածել, որ գերագույն էակին հաճելի է տանջել բարեհոգի արարածին... Գնամ տեսնեմ գիտուններին:

---

[151] **«Մանե–Թեկել–Ֆարես»** — ըստ աստվածաշնչային ավանդության, այս բառերը անտեսանելի ձեռքով արձանագրված էին պատի վրա այն սրահի, ուր խնջույք էր անում

Շուտով նա գտնվեց Գինիների շուկայի, տակառների այդ վիթխարի պահեստարանի, և Սալպետրիերի պատսպարանի, գինովության այդ վիթխարի օջախի առջև, մի լճակի առջև, որտեղ կայտռում էին ամենահազվագյուտ ցեղերի բադեր, որոնց խայտաբղետ գույները, մայր տաճարի գույնզգույն ապակիների նման, պսպղում էին արևի ճառագայթների ներքո: Այստեղ էին հավաքված աշխարհի բոլոր բադերը. կակաչելով, թավալելով, թպրտալով, կազմելով մի տեսակ բադային երեսփոխանական ժողով, գումարված հակառակ իրենց կամքի, բայց, բարեբախտաբար, առանց սահմանադրության և առանց քաղաքական սկզբունքների, նրանք ապրում էին այստեղ, չհանդիպելով որսորդների, բայց երբեմն դառնալով բնագետների դիտողության առարկա:

— Ահա պարոն Լավրիլը,— ասաց պահապանը Ռաֆայելին, որ փնտրել էր կենդանաբանության այդ մեծ քրմապետին:

Մարկիզը տեսավ կարճահասակ մի մարդ, որ խորախորհուրդ տեսքով նայում էր երկու բադերի: Միջին տարիքի այդ գիտունը բարեհամբույր և սիրալիր արտահայտություն ուներ. նրա բովանդակ կերպարանքի մեջ զգացվում էր գիտությանը նվիրված մարդու մտահոգություն. կեղծամիկից, որ նա անդադար քորում էր և զվարճալիորեն ետ-ետ քաշում, երևում էին սպիտակած մազերը, որոնք մատնում էին գիտության մեջ հայտնագործություններ անելու մոլեգին կիրքը, որ, բոլոր կրքերի նման, այնքան տիրականորեն մեզ կտրում է արտաքին աշխարհից, որ մենք կորցնում ենք եսի գիտակցությունը: Ռաֆայելը, իբրև գիտությամբ և հետազոտությամբ զբաղված մարդ, հիացավ այդ բնախույզի վրա, որ իր գիշերաջան տքնություններով ընդարձակում էր մարդկային գիտելիքների շրջանակը և իր մոլորություններով անգամ ծառայում էր Ֆրանսիայի փառքին. այնուամենայնիվ, պճնասեր կինը հավանաբար նրա վրա կծիծաղեր այն պատճառով, որ գիտնականի տաբատի գոտու և գծավոր բաճկոնակի միջև երևում էր մի բացվածք, որ, սակայն, ամոթխածորեն ծածկված էր շապիկով, որի վրա անհամար ծալքեր էին առաջանում, երբ նա շարունակ մեկ կռանում, մեկ բարձրանում էր, իր կենդանաբանական դիտողությունների պահանջի համաձայն:

Քաղաքավարական ողջույնի առաջին բառերից հետո Ռաֆայելը անհրաժեշտ համարեց պարոն Լավրիլին դիմել հասարակ մի հաճոյախոսությամբ՝ նրա բադերի առիթով:

— Օ, մենք հարուստ ենք բադերով,— պատասխանեց բնախույզը:— Այսուհանդերձ, ինչպես դուք հավանաբար գիտեք, սա ամենատարածված տեսակն է թաղանթոտանիների կարգի մեջ: Նա ընդգրկում է հարյուր երեսունյոթ տարատեսակներ, որոնք խիստ տարբերվում են մեկը մյուսից, սկսած կարապից և վերջացրած զենզեն բադով. յուրաքանչյուրն ունի իր անունը, իր հատկանիշը, իր հայրենիքը, իր առանձին կերպարանքը և նույնքան քիչ նմանություն ունի ուրիշ տարատեսակի հետ, որքան սպիտակամորթը նեգրի հետ: Արդարև, պարոն, երբ մենք բադ ենք ուտում, հաճախ չենք էլ կասկածում, թե ինչքան տարածված է...

Այստեղ Լավրիլն ընդհատեց իր խոսքը, տեսնելով մի փոքրիկ սիրուն թռչուն, որ բարձրանում էր լճափին:

Բաբելոնի թագավոր Բաղդասարը: Այդ արձանագրությունը նրան կանխագուշակում էր մոտալուտ կործանում:

— Ահա, տեսեք, փողկապավոր կարապը, Կանադայի խեղճ զավակը, որ եկել է հեռավոր աշխարհից, որպեսզի մեզ ցույց տա իր թուխ-մողոշիկ փետուրները, իր սև փողկապը: Տեսեք, քորում է իրեն. .. Ահա հայտնի աղվափետուր սագը կամ այլապես՝ փափկափետուր բադը, որի բմբուլի տակ քնում են մեր փափկասուն կանայք: Ինչքա՜ն սիրուն է: Ով չէր հիանա նրա կարմրասպիտակ փորիկի վրա, նրա կանաչ կտուցի վրա: Ես հենց նոր ականատես եղա մի զուգավորման, որ մինչև հիմա անհուսալի էր թվում,— շարունակեց Լավրիլը։— Ամուսնությունը բավական երջանիկ անցավ, մեծ անհամբերությամբ կսպասեմ արդյունքին։ Հույս ունեմ ստանալ հարյուր երեսունութ տարատեսակը, որին, թերևս, իմ անունը տրվի: Ահա նրանք, նորապսակները,— ասաց նա, ցույց տալով երկու բադերի։— Ահա դա ծիծաղող սագն է (anas albifrons), մյուսը՝ շչող բադը (anas ruffina, ըստ Բյուֆֆոնի): Ես երկար տատանվում էի շչող բադի, սպիտակահոն բադի և լայնաքիթ բադի միջև: Ահա տեսեք լայնաքիթը, հաստլիկ թուխ-սև չարագործը կանաչավուն-ծիածանային պչրուն պարանոցով։ Բայց շչող բադը բբուկավոր էր, դրա համար էլ, հասկանում եք, ես այլևս չտատանվեցի: Այստեղ մեզ չի բավականացնում միայն սև գդակավոր բադը: Մեր բնագետ պարոնները միաբերան պնդում են, որ նա բադիճոնի և կեռակտուցավորի անկարևոր կրկնությունն է. ինչ վերաբերում է ինձ. ..

Այստեղ նա մի զարմանալի ծամածռությամբ արտահայտեց գիտունին հատուկ համեստություն և հպարտություն — հպարտություն, որի մեջ նշմարվում էր համառություն, համեստություն, որի մեջ նշմարվում էր բավարարություն.. .

—. . . Ես այդպես չեմ կարծում,— ավելացրեց նա։— Տեսնում եք, պարոն, մենք այստեղ խաղ չենք անում: Ես այս րոպեիս զբաղվում եմ բադերի մասին մի մենագրությամբ.. . Հիմա պատրաստ եմ ձեզ ծառայելու:

Մինչ նրանք մոտենում էին Բյուֆֆոն փողոցի վրա սիրուն մի տան, Ռաֆայելը շագրենի կաշին հանձնեց պարոն Լավրիլի ուսումնասիրությանը:

— Այդ բանը ինձ ծանոթ է,— ասաց վերջապես գիտունը, խոշորացույցով նայելով թալիսմանին։— Նա կափարիչ է ծառայել ինչ-որ տուփի համար: Շագրենը շատ հին բան է: Հիմա տուփ պատրաստողները նախընտրում են գործածել, ինչպես հավանաբար գիտեք, raja sephen-ի, Կարմիր ծովի ձկան, կաշին:

— Բայց սա՞ ինչ է, բարի եղեք ասելու.. .

— Դա ուրիշ բան է,— ընդմիջեց գիտունը։— Ձկան կաշու և շագրենի կաշու միջև կա այնպիսի տարբերություն, ինչպիսին կա օվկիանոսի և ցամաքի, ձկան և չորքոտանու միջև: Սակայն ձկան կաշին ավելի ամուր է, քան ցամաքային կենդանու կաշին: Իսկ սա,— շարունակեց նա, ցույց տալով թալիսմանը,— ինչպես դուք, անշուշտ, գիտեք, կենդանաբանության ամենահետաքրքրական երևույթներից մեկն է:

— Ուրեմն ի՞նչ է իսկապես,— գոչեց Ռաֆայելը:

— Սա էշի կաշի է,— պատասխանեց գիտունը, մխրճվելով բազկաթոռի մեջ:

— Ես այդ գիտեմ,— ասաց երիտասարդը:

— Պարսկաստանում գոյություն ունի շատ հազվագյուտ տեսակի մի էշ,— շարունակեց բնագետը,— որին նախնիները անվանում են **ցիռ**, equus asinus, իսկ թաթարները՝ **քուլան**։ Պալլասը[152] նրա վրա դիտողություն կատարեց և արդյունքը հանձնեց գիտությանը։ Արդարև, այդ կենդանին երկար ժամանակ համարվում էր առասպելական։ Նա, ինչպես գիտեք, հիշվում է Սուրբ գրքում։ Մովսեսը արգելել էր նրան զուգավորվել իր ցեղակիցների հետ։ Բայց ցիռը առավել ևս հայտնի դարձավ այն պագշոտությամբ, որի առարկան նա եղավ և որի մասին հաճախ խոսում են Աստվածաշնչի մարգարեները։ Պալլասը, ինչպես դուք հավանաբար գիտեք, իր Acta Petropolitana-ի երկրորդ հատորում հայտնում է, որ պարսիկներն ու նոգայիսները դեռ հիմա էլ ակնածանքով հարգում են այդ տարօրինակ վավաշանքները իբրև առաջնակարգ դարման երիկամունքի հիվանդությունների և հոդացավերի դեմ։ Մենք՝ խեղճ փարիզեցիքս, գաղափար չունենք ցիռի մասին։ Մեր թանգարանում ցիռ չկա։ Ի՜նչ պատվական կենդանի,— շարունակեց գիտունը։— Նա շատ խորհրդավոր էակ է, նրա աչքերը պատած են ցոլացիկ թաղանթով, որին արևելցիները կախարդական ուժ են վերագրում. նրա մորթն ավելի նուրբ ու ողորկ է, քան մեր ամենաընտիր ձիերինը. նա պատած է առավել կամ նվազ շեկ շերտերով և շատ նման է զեբրի մորթին։ Այդ կենդանու բուրդը փափուկ, ալիքանման, մետաքսանման է շոշափելիս. նրա տեսողությունն իր սրությամբ հավասար է մարդու տեսողությանը. նա մի քիչ ավելի խոշոր է մեր լավագույն ընտանի էշերից և օժտված է արտասովոր քաջությամբ։ Եթե հանկարծ հարձակվում են նրա վրա, նա զարմանալի ճարպկությամբ պաշտպանվում է ամենավայրագ գազաններից. ինչ վերաբերում է արագավազությանը, ապա դա կարելի է համեմատել միայն թռչունների թռիչքի հետ. արաբական կամ պարսկական լավագույն նժույգները չեն հասնի ցիռի հետևից։ Խղճամիտ գիտնական Նիբուրի[153] հոր ճշտումով — Նիբուրի, որի վերջերս տեղի ունեցած մահը մենք ողբում ենք, ինչպես դուք հավանաբար գիտեք,— այդ զարմանալի էակների վազքի միջին արագությունը հավասար է ժամում յոթը աշխարհագրական մղոնի։ Մեր ապասերած էշերը պատկերացում չեն կարող տալ այդ անկախ ու սեգ ավանակի մասին։ Նա ժիր, աշխույժ է, նրա նայվածքը խելացի ու խորամանկ է, տեսքը սիրուն, շարժումները՝ կայտառ։ Նա Արևելքի կենդանիների թագավորն է։ Թուրքական և պարսկական սնահավատությունները նրան նույնիսկ խորհրդավոր ծագում են վերագրում, և Սողոմոնի անունը միախառնվում է այն պատմություններին, որ թիբետական և թաթարական բանասացները պատմում են այդ ազնվացեղ կենդանիների սխրագործությունների մասին։ Ընտելացած ցիռը ահագին գումար արժե, գրեթե անկարելի է նրան բռնել լեռներում, ուր նա սուրում է այծյամի պես և թռչում թռչունի պես։ Թևավոր ձիերի, մեր Պեգասի մասին հորինված առասպելը, անկասկած, ծագել է այն երկրներում, ուր հոտաղները կարողացել են հաճախ տեսնել, թե ինչպես ցիռը մի ժայռից ցատկում է մյուս ժայռը։ Հեծնելու էշերը, որոնք Պարսկաստանում ստացվել են էգ էշի և ընտելացած ցիռի զուգավորումից, ներկվում են կարմիր գույնով. այդպես է արվում անհիշելի ժամանակներից ի վեր։ Թերևս, այստեղից է ծագել մեր առածը՝ «Գեշ, ինչպես կարմիր էշ»։ Այն ժամանակներում, երբ բնապատմությունը շատ էր արհամարհված Ֆրանսիայում, ինչ-որ ճանապարհորդ, հավանաբար, մեզ մոտ է

---

[152] **Պալլաս Պետեր** (1741—1811) — գերմանացի ֆիզիկոս և բնագետ։

[153] **Նիբուր** (1733 —1815) — գերմանացի ճանապարհորդ, արաբական թերակղզու առաջին հետազոտողներից մեկը։

բերել այդ հետաքրքրական կենդանին, որը շատ վատ է տանում ստրկական կյանքը: Այստեղից էլ հիշյալ առածը: Ձեր ցույց տված կաշին,— շարունակեց գիտունը,— ցիռի կաշի է: Նրա անվան ծագման մասին կան տարբեր բացատրություններ: Ոմանք ենթադրում են, որ **Շագրին** թուրքական բառ է, ուրիշները հակամետ են կարծելու, որ **Շագրին** այն քաղաքն է, ուր այդ կենդանաբանական մնացորդը ենթարկվում է քիմիական մշակման, որ բավական լավ է նկարագրված Պալլասի մոտ, դա էլ կաշուն տալիս է այն յուրահատուկ կետկիտումը, որ մեզ զարմացնում է: Մարտելենսը ինձ գրել է, որ **Շագրին** գետակ է. . .

— Պարոն, շնորհակալ եմ ձեր տված բացատրությունների համար. եթե բենեդիկտյանները դեռ գոյություն ունենային, ապա այդ բոլորը հիանալի նյութ կծառայեին որևէ արբա Կալմեի[154] ծանոթագրությունների համար, բայց ես պատիվ ունեմ ձեզ դիտել տալու, որ այս կաշու կտորը սկզբում իր ծավալով հավասար էր.. . այս աշխարհագրական քարտեզին,— ասաց Ռաֆայելը, ցույց տալով մի բաց ատլաս,— բայց երեք ամսվա ընթացքում նա զգալիորեն նեղացել է...

— Այո, հասկանում եմ,— պատասխանեց գիտունը:— Բոլոր կազմավորված էակների մորթերը ենթակա են բնական կազմալուծման, որը հեշտ է նկատել և որի ընթացքը կախված է մթնոլորտային պայմաններից: Նույնիսկ մետաղները զգալի կերպով լայնանում և նեղանում են, որովհետև ճարտարագետները բավական նշանակալի տարածություններ են դիտել խոշոր սալաքարերի միջև, որոնք նախապես ագուցված են եղել երկաթե ձողիկներով: Գիտությունն ընդարձակ է, իսկ մարդկային կյանքը՝ շատ կարճ: Հետևաբար մենք չենք կարող հավակնություն ունենալ ճանաչելու բնության բոլոր երևույթները:

— Ներեցեք, պարոն, մի հարց ևս ուզում եմ ձեզ տալ,— հարեց Ռաֆայելը մի քիչ շփոթված:— Դուք լիովին վստա՞հ եք, որ այս կաշին ենթակա է կենդանաբանության ընդհանուր օրենքներին, որ նա կարող է լայնանալ:

— Օ, իհարկե.. . Վա՛յ, գրո՛ղ,— բացականչեց պարոն Լավրիլը, փորձելով ձգել թալիսմանը:— Այնուամենայնիվ, պարոն,— ավելացրեց նա,— գնացեք Պլանշետի՝ մեքենագիտության նշանավոր պրոֆեսորի մոտ, նա ապահովաբար կգտնի այս կաշու վրա ազդելու, նրան փափկացնելու, ձգելու եղանակը:

— Ա՜հ, պարոն, դուք փրկում եք իմ կյանքը:

Ռաֆայելը հրաժեշտ տվեց գիտուն բնախույզին և, թողնելով նրան սրվակներով ու չորացած բույսերով լեցուն աշխատանոցում, փութաց Պլանշետի մոտ: Հիմա, այդ այցելությունից հետո, նա առանց գիտակցելու տիրապետում էր բովանդակ մարդկային գիտությանը — նոմենկլատուրային: Բարեսիրտ Լավրիլը, ինչպես Դոն-Կիխոտին այծերի պատմությունը պատմող Սանչո Պանսան, զվարճանում էր կենդանիներին վերահաշվելով և համարագրելով: Հասնելով իր կյանքի եզրին, նա դեռ հազիվ մի մասնիկն էր ճանաչում այն անհամար հոտի, որ աստված անհայտ նպատակով սփռել էր աշխարհների օվկիանում:

Ռաֆայելը գոհ էր:

---

[154] **Աբբա Կալմե** (1672—1757) — բենեդիկտյան վանական-աստվածաբան, հայտնի էր իր ընդարձակ և մանրակրկիտ ծանոթագրություններով:

— Ես պետք է սանձահարեմ իմ էշին,— գոչեց նա:

Դեռ նրանից առաջ Ստերնը ասել է. «Խնայենք մեր էշին, եթե ուզում ենք ապրել մինչև ծերություն»: Բայց անասունը ըմբոստ է:

Պլանշետը բարձրահասակ, նիհար էր, իսկական բանաստեղծ՝ խորասուզված մշտական մտահայեցության մեջ, հայացքը միշտ հառած դեպի մի անհատակ անդունդ, որի անունն է **շարժում**: Ռամիկը խենթ է համարում այդ վսեմ մտքերին, այդ չհասկացված, պերճության և աշխարհայնության նկատմամբ զարմանալիորեն անտարբեր մարդկանց, որոնք ամբողջ օրեր ծծում են մի մարած ծխագլանակ և մտնում մի հյուրասրահ, առանց կոճկելու իրենց զգեստների բոլոր կոճակները: Կգա մի օր, երբ նրանք, նախապես երկար չափելով դատարկ տարածությունը կամ x-եր կուտակելով Aa—Gg-ի տակ, կվերլուծեն որևէ բնական օրենք և կտարրալուծեն որևէ պարզագույն սկզբունք. հանկարծ ամբոխը հիանում է նոր մեքենայով կամ որևէ սայլակով, որոնց կառուցվածքը իրենց պարզությամբ մեզ ապշեցնում և շփոթեցնում է: Համեստ գիտունը ժպտալով ասում է իրեն մեծարողներին. «Ի՞նչ եմ ես ստեղծել: Ոչինչ: Մարդը ուժ չի հնարում, նա նրան ուղղություն է տալիս, գիտությունը կայանում է բնությանը նմանվելու մեջ»:

Երբ Ռաֆայելը մտավ մեքենագետի մոտ, վերջինս կանգնել էր մեխվածի պես, ասես նա մի կախված էր, որ, ընկնելով կախաղանից, կանգնել էր ուղղաձիգ: Պլանշետը հետևում էր արևի ժամացույցի թվատախտակի վրա գլորվող ագատի մի գնդիկի և սպասում էր նրա կանգնելուն: Խեղճը ոչ շքանշան ուներ, ոչ թոշակ, որովհետև չէր կարողացել իր ապրանքը արժեցնել: Նա երջանիկ էր, որ հետամուտ է մի գյուտարարության, և չէր մտածում ո՛չ փառքի մասին, ո՛չ աշխարհի մասին, ո՛չ իր մասին, նա ապրում էր գիտությամբ, գիտության համար:

— Դա անբացատրելի է,— ասաց նա:— Ա՛հ, պարոն,— բացականչեց նա, նկատելով Ռաֆայելին:— Ես պատրաստ եմ ձեզ ծառայելու: Ինչպե՞ս է ձեր մայրիկը.. . Անցեք կնոջս մոտ: «Բայց ես էլ կարող էի այսպես ապրել»,— մտածեց Ռաֆայելը: Նա մեքենագետին դուրս հանեց մտորումներից, նրան ցույց տալով թալիսմանը, և հարցնելով, թե ինչպես կարելի է ազդել նրա վրա:

— Դուք գուցե կծիծաղեք իմ դյուրահավատության վրա,— ասաց մարկիզը հուսկ հետո,— բայց ես ձեզանից ոչինչ չեմ ծածկի: Ինձ թվում է, թե այս կաշին ունի դիմադրական այնպիսի ուժ, որին ոչինչ չի կարող հաղթահարել:

— Պարոն,— սկսեց Պլանշետը,— բարձր խավի մարդիկ շատ ազատ են վարվում գիտության հետ, նրանք բոլորը մեզ ասում են գրեթե այն, ինչ մի թեթևամիտ երիտասարդ ասաց աստղաբաշխ Լալանդին, խավարումից հետո նրան բերելով մի քանի դամաներ. «Բարի եղեք նորից սկսելու»: Ի՞նչ գործողություն եք ուզում առաջացնել. Մեքենագիտության նպատակն է շարժման օրենքները կիրառել կամ դրանք չեզոքացնել: Ինչ վերաբերում է բուն շարժմանը, ապա ես պետք է ամենայն խոնարհությամբ հայտարարեմ ձեզ՝ մենք անկարող ենք նրա սահմանումը տալ: Ընդունելով այդ, մենք դիտում ենք ինչ-ինչ մնայուն երևույթներ, որոնք ղեկավարում են պինդ և հեղուկ մարմինների գործողությունը: Վերստեղծելով նման երևույթների նախապատճառները, մենք կարող ենք մարմինները տեղափոխել, նրանց սահմանված արագությամբ շարժիչ ուժ հաղորդել, նրանց նետել, նրանց բաժանել մասերի կամ անհունորեն փոքրիկ մասնիկների, նայած թե նրանց փշրում ենք թե փոշիացնում. կարող

ենք նրանց ոլորել, նրանց հոլովական շարժում հաղորդել, նրանց ձևափոխել, սեղմել, ընդլայնել, ձգել: Ամբողջ գիտությունը հիմնված է միայն մի իրողության վրա: Տեսնո՞ւմ եք այս գնդիկը,— շարունակեց Պլանշետը:— Ահա նա այս քարի վրա է: Իսկ հիմա այնտեղ է: Ինչպե՞ս անվանենք ֆիզիկապես այնքան բնական, բայց մտքի համար անըմբռնելի այդ գործողությունը: Շարժո՞ւմ, տեղաշարժությո՞ւն, տեղափոխությո՞ւն: Ինչքա՛ն դատարկ են հնչում այդ բառերը: Մի՞թե անվանումը հարցի լուծում է: Ահա, սակայն, բովանդակ գիտությունը: Մեր մեքենաները օգտագործում կամ տարրալուծում են այդ գործողությունը, այդ իրողությունը: Այդ աննշան երևույթը եթե նյութերի վրա կիրարկվի, կպայթեցնի Փարիզը: Մենք կարող ենք արագությունը մեծացնել ի հաշիվ ուժի և ուժը ի հաշիվ արագության: Ի՞նչ է ուժը և արագությունը: Մեր գիտությունը չի կարող այդ ասել, ինչպես չի կարող շարժում ստեղծել: Շարժումը, ինչպիսին էլ լինի, անսահման էներգիա է, իսկ մարդը չի հնարում էներգիան: Էներգիան միակ է, ինչպես և շարժումը, որը էներգիայի էությունն իսկ է: Ամեն ինչ շարժում է: Միտքը շարժում է: Բնությունը հաստատված է շարժման վրա: Մահը շարժում է, որի նպատակները սակավ են հայտնի մեզ: Եթե աստված հավիտենական է, ապա հավատացեք, որ նա մշտական շարժման մեջ է: Աստված գուցե հենց շարժումն է: Ահա թե ինչու շարժումը անբացատրելի է, ինչպես նա, խոր է, ինչպես նա, անպարագրելի, անըմբռնելի, անշոշափելի: Ո՞վ երբևէ շոշափել, ըմբռնել, չափել է շարժումը: Մենք զգում ենք շարժման հետևանքները, բայց չենք տեսնում շարժումը: Մենք կարող ենք նույնիսկ ժխտել այն, ինչպես ժխտում ենք աստծուն: Որտե՞ղ է նա: Որտե՞ղ չէ: Որտեղի՞ց է ծագում: Որտե՞ղ է նրա սկիզբը: Որտե՞ղ է նրա վախճանը: Նա շրջապատում է մեզ, ազդում է մեր վրա և խույս է տալիս: Նա ակներև է, ինչպես փաստը, մթին է, ինչպես վերացականությունը, հետևանք և պատճառ է միանգամայն: Նրան, ինչպես և մեզ, հարկավոր է տարածություն, իսկ ի՞նչ է տարածությունը: Դա մեզ բացահայտում է միայն շարժումը. առանց շարժման նա ոչ այլ ինչ է, եթե ոչ անիմաստ բառ: Այդ անլուծելի հարցը, շարժումը, նման դատարկության, նման արարչագործության, նման անվախճանության, շփոթեցնում է մարդկային միտքը, և մարդուն տրված է ըմբռնելու միայն մի բան, այն, որ ինքը երբեք չի ըմբռնի շարժումը: Տարածության մեջ այս գնդիկի կողմից հաջորդաբար գրավված յուրաքանչյուր երկու կետերի միջև մարդկային բանականության համար գտնվում է մի վիհ, մի անդունդ, որի մեջ ընկավ Պասկալը[155]: Ազդելու համար անհայտ նյութի վրա, որ դուք կամենում եք ենթարկել անհայտ ուժի, մենք պետք է նախ և առաջ ուսումնասիրենք այդ նյութը. նայած նրա բնական հատկություններին՝ նա կա՛մ կջարդվի հարվածից, կա՛մ կդիմադրի նրան. եթե նա մասերի բաժանվի, իսկ ձեր ուզածը այն մասնատելը չէ, ապա մենք չենք հասնի առաջադրված նպատակին: Եթե դուք ուզում եք սեղմել այն, անհրաժեշտ է հավասար շարժում հաղորդել նյութի բոլոր մասնիկներին, այնպես, որպեսզի հավասարաչափ պակասի նրանց բաժանող անջրպետը: Եթե դուք ուզում եք ձգել այն, մենք պետք է ջանանք յուրաքանչյուր մասնիկին հաղորդել հավասար կենտրոնախույս ուժ, քանի որ առանց ճշտորեն պահպանելու այդ օրենքը, մենք կառաջացնենք կապակցության խախտումներ: Գոյություն ունեն շարժման անհուն եղանակներ, անսահման բաղակցություններ: Դուք ի՞նչ արդյունք եք ուզում ստանալ:

---

[155] **Պասկալ Բլեզ** (1623—1662) — ֆրանսիացի փիլիսոփա, գիտուն և գրող, Պասկալը սահմանեց հեղուկների տարածականության օրենքը (Պասկալի օրենքը), ջրաբաշխական մամուլի գործողության սկզբունքը: Իր փիլիսոփայական և բարոյագիտական հայացքները նա շարադրեց «Գավառական նամականի» երկում:

— Ես ուզում եմ ստանալ այնպիսի ճնշում, որը կարողանար անսահմանորեն ձգել այս կաշին.. . — ասաց Ռաֆայելը անհամբերությամբ:

— Նյութը սահման ունի, հետևաբար չի կարող ձգվել անսահմանորեն,— պատասխանեց մաթեմատիկոսը,— սակայն տափակացումը անխուսափելիորեն կընդլայնի նրա մակերեսը ի հաշիվ հաստության. կաշին կարելի է բարակացնել այնքան, ինչքան բավականացնում է նրա նյութը:

— Ձեռք բերեք այդպիսի արդյունք, և դուք միլիոններ կստանաք,— գոչեց Ռաֆայելը:

— Ես կողոպտելու եմ ձեր փողը,— ասաց պրոֆեսորը հոլանդացու սառնասրտությամբ:— Երկու խոսքով ես ձեզ կպատմեմ այն մեքենայի մասին, որի տակ աստված անգամ կճզմվեր, ինչպես ճանճ: Նա կարող էր մարդուն տափակացնել ծծանաթղթի պես, մարդուն՝ իր խթանավոր կոշիկներով, փողկապներով, գլխարկով, ոսկեղենով, գոհարեղենով, ամեն ինչով.. .

— Ի՜նչ ահռելի մեքենա:

— Փոխանակ երեխաներին ջուրը գցելու, չինացիները պետք է այսպես օգտագործեին նրանց,— շարունակեց գիտունը, անտեսելով մարդկային հարգանքը սերնդի նկատմամբ:

Բոլորովին անձնատուր եղած իր մտքերին, Պլանշետը վերցրեց դատարկ և հատակը ծակ մի ծաղկաման և դրեց արևի ժամացույցի սալի վրա, ապա գնաց պարտեզ մի քիչ կավահող բերելու: Ռաֆայելը ցնծության մեջ էր, ինչպես երեխան, որին դայակը զարմանահրաշ հեքիաթ է պատմում: Դնելով կավահողը սալի վրա, Պլանշետը գրպանից հանեց մի փոքրիկ հատոց, թանթրվենուց երկու ճյուղ կտրեց և սկսեց դրանք փորել սուլելով, ասես մարդ չկար սենյակում:

— Ահա մեքենայի բաղկացուցիչ մասերը,— ասաց նա:

Կավահողից շինված մի արմունկի միջոցով նա այդ փայտե փողրակներից մեկը կպցրեց ծաղկամանի հատակին այնպես, որպեսզի նրա ծակը միանար ծաղկամանի ծակին: Այդ հորինվածքը նման էր մեծղի ծխափողի: Ապա նա սալի վրա սփռեց կավահողի մի շերտ, նրան տվեց կոթով թիակի ձև, ծաղկամանը դրեց նրա ամենալայն մասի վրա և թանթրվենու փողրակը ամրացրեց կավե թիակի այն մասին, որ կոթի նմանություն ուներ: Ապա կավահողի շաղախ կպցրեց թանթրվենու փողրակի մյուս ծայրին և, ուղղաձիգ կերպով այստեղ խրելով մյուս փողրակը, մի ուրիշ արմունկի միջոցով այն միացրեց հորիզոնական փողրակին, այնպես, որ օդը կամ որևէ հեղուկ կարողանային պտույտ գործել այդ հանպատրաստից մեքենայի մեջ և ուղղաձիգ փողրակից միջանկյալ փողանցքի միջով հոսել դատարկ ծաղկամանի մեջ:

— Այս սարքը,— հայտարարեց նա Ռաֆայելին՝ ներածական ճառ արտասանող ակադեմիկոսի լրջությամբ,— ամենաանժխտելի վկայություններից մեկն է մեծ Պասկալի հնարագիտության, որ մեզ հիացում է պատճառում:

— Չեմ հասկանում...

Գիտունը ժպտաց: Նա մի պտղատու ծառից վերցրեց մի սրվակ, որի մեջ դեղագործը նրան ուղարկել էր մրջյուններից պատրաստված մի հեղուկ, ջարդեց սրվակի տակը, ձագար շինեց և

խնամքով այն միացրեց փորված ճյուղի անցքին, ծաղկամանի տեսքով ջրամբարի դիմաց, որ ուղղաձիգ կերպով խրվել էր կավահողի մեջ. ապա ցնցուղից լցրեց այնքան ջուր, որքան անհրաժեշտ էր, որպեսզի նա գտնվեր մեծ անոթի և թանթրվենու կլոր փողրակի հետ նույն մակարդակի վրա.. .

Ռաֆայելը մտածում էր իր շագրենի կաշու մասին:

— Պարոն,— ասաց մեքենագետը,— ջուրը դեռևս համարվում է անճնշելի մարմին, մի մոռանաք այդ հիմնական սկզբունքը. ճիշտ է, նա ճնշվում է, բայց այնքան աննշան չափով, որ նրա ճնշելիությունը մենք պետք է հավասարեցնենք զրոյի: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես ջրի մակերեսը հասել է մինչև ծաղկամանի բերանը:

— Այո, պարոն:

— Արդ, դիցուք թե այդ մակերեսը հազար անգամ ավելի մեծ է թանթրվենու փողրակի անցքից, որի միջով ես լցրի հեղուկը: Նայեցեք, հանում եմ ձագարը:

— Լավ:

— Եվ ահա, պարոն, եթե ես որևէ ձևով ավելացնեմ այս հեղուկային զանգվածի ծավալը, էլի ջուր ներմուծելով փողրակի անցքից, ապա հեղուկը հարկադրված կլինի իջնել և կբարձրանա ջրամբարում, որ ծաղկամանն է, մինչև որ միևնույն մակարդակին հասնի և այստեղ, և այնտեղ.. .

— Դա պարզ է,— գոչեց Ռաֆայելը:

— Բայց ահա թե ինչումն է տարբերությունը,— շարունակեց գիտունը,— եթե ուղղահայաց փողրակի մեջ ավելացված ջրի բարակ սյունը ներկայացնի այնպիսի ուժ, որ հավասար լինի, դիցուք, կես լիտրի, նրա ճնշումը անխուսափելիորեն կփոխանցվի ամբողջ հեղուկային զանգվածին և կզգացվի ծաղկամանի ջրի մակերեսի բոլոր կետերի վրա, այնպես որ հազար սյուն ջուր, ձգտելով բարձրանալ, ինչպես եթե յուրաքանչյուրը մղված լիներ մի ուժից, հավասար այն ուժին, որ հեղուկին ստիպում է իջնել թանթրվենու ուղղահայաց փողրակի մեջ, բնականաբար կառաջացնեն այստեղ,— Պլանշետը ցույց տվեց ծաղկամանը,— հազար անգամ ավելի մեծ ուժ, քան այն, որ ազդում է այնտեղից:

Եվ գիտունը մատով ցույց տվեց կավահողի մեջ խրված փայտե փողրակը:

— Այդ բոլորը շատ պարզ է,— ասաց Ռաֆայելը:

Պլանշետը ժպտաց:

— Ուրիշ խոսքով,— շարունակեց նա մաթեմատիկոսին հատուկ համառ տրամաբանությամբ,— որպեսզի ջուրը դուրս չթափվի ջրամբարից, հարկավոր է նրա մակերեսի յուրաքանչյուր մասնիկի վրա գործադրել ուղղահայաց փողրակի մեջ գործող ուժին հավասար ուժ, բայց եթե ջրային սյունի բարձրությունը մի ոտնաչափ լինի, ապա մեծ անոթի հազար փոքրիկ սյուների բարձրությունը աննշան կլինի: Իսկ հիմա,— ասաց Պլանշետը, մի պոնդ տալով փայտե ձողիկներին,— այս ծիծաղելի սարքը փոխարինենք համապատասխան ամրությամբ ու տարածությամբ մետաղե փողրակներով, և ահա, եթե մենք ջրամբարի հեղուկ

մակերեսը ծածկենք ամուր և շարժական մետաղաթերթով և նրան հակադրենք մի ուրիշ մետաղաթերթ, որի դիմադրականությունն ու ամրությունը երաշխավորված լիներ, և ընդսմին հնարավորություն ստանանք ուղղահայաց փողրակի միջով անընդհատ ջուր ավելացնելու հեղուկ զանգվածին, ապա առարկան, սեղմված երկու ամուր մակերեսների միջև, անխուսափելիորեն կտափականա նրան սեղմող վիթխարի ուժերի ճնշման տակ: Անընդհատ ջուր ներմուծել փողրակի մեջ և հեղուկային զանգվածի ուժը փոխանցել մետաղաթերթին — ոչինչ բան է մեքենագիտության համար: Դրա համար բավական են երկու մխոցներ և մի քանի կափույրներ: Հիմա, սիրելիս, հասկանալի՞ է ձեզ,— հարցրեց նա, Ռաֆայելի թևը բռնելով,— որ չկա այնպիսի նյութ, որ, դրվելով երկու անսահմանորեն մեծացող ուժերի ճնշման միջև, հարկադրված չլինի տափականալու:

— Ի՛նչ: Դա հնարել է «Գավառական նամականի»-ի հեղինա՞կը,— գոչեց Ռաֆայելը:

— Այո, միայն նա: Մեքենագիտությունը չգիտե դրանից ավելի պարզ և ավելի գեղեցիկ բան: Հակառակ սկզբունքով — ջրի ծավալականությամբ — ստեղծվել է շոգեմեքենան: Բայց ջուրը ծավալվում է միայն մինչև որոշ աստիճան, մինչդեռ նրա անճնշականությունը, լինելով որոշ տեսակ բացասական ուժ, անխուսափելիորեն դառնում է անսահման:

— Եթե այս կաշին ձգվի,— ասաց Ռաֆայելը,— ես ձեզ խոստանում եմ հսկայական հուշարձան կանգնեցնել Բլեզ Պասկալին, տասը տարին մի անգամ հարյուր հազար ֆրանկ մրցանակ սահմանել մեքենագիտության կարևորագույն հարցերի լուծման համար, օժիտ տալ ձեր բոլոր զարմուհիներին, վերջապես մի անկելանոց կառուցել այն մաթեմատիկոսների համար, որոնք խենթացել կամ աղքատացել են:

— Դա շատ օգտակար կլիներ,— պատասխանեց Պլանշետը:— Վաղը ձեզ հետ կգնանք Շպիգհալտերի մոտ,— շարունակեց նա, համակ իմացական ոլորտում ապրող մարդու հանդարտությամբ:— Այդ նշանավոր մեքենագործը հենց նոր իմ ծրագրով պատրաստել է կատարելագործված մի մեքենա, որի միջոցով երեխան կարող է իր գլխարկի մեջ տեղավորել հազար խուրձ խոտ:

— Ցտեսություն մինչև վաղը:

— Ցտեսություն:

— Հետո ինձ կխոսեք մեքենագիտության մասին,— ասաց Ռաֆայելը:— Չէ՞ որ դա ամենագեղեցիկն է բոլոր գիտություններից: Լավրիլը իր ցիռերով, բաղերով, դասակարգումներով, տարատեսակներով, փորձանոթների մեջ ամեն տեսակ հրեշներով լավագույն դեպքում պետք կգար բիլիարդախաղի նշումների համար:

Հետևյալ օրը Ռաֆայելը ուրախ տրամադրությամբ գնաց Պլանշետի մոտ, և նրանք միասին գնացին Սանտե[156] բարեգուշակ անունը կրող փողոցը: Շուտով երիտասարդը գտնվեց Շպիգհալտերի վիթխարի արհեստանոցում, բազմաթիվ հրաշեկ և մռնչուն հնոցների միջև: Դա մի ամբողջ հրեղեն անձրև էր, մեխերի հեղեղ, մխոցների, պտուտակների, լծակների, գերանների, խարտոցների, պնդօղակների օվկիանոս, ձուլվածքների, ատաղձների,

[156] ֆր. santé նշանակում է առողջություն:

կափարիչների և պողպատաձողերի մի ծով: Երկաթների խարտուքը կոկորդ էր բռնում: Երկաթը օդումն էր, մարդիկ երկաթով էին պատած, ամեն ինչից երկաթի հոտ էր գալիս: Երկաթը կյանք ուներ, նա կազմափոխվում, հալվում, քայլում, մտածում էր, ընդունելով բոլոր ձևերը, ենթարկվելով բոլոր քմահաճույքներին: Փուքսերի ֆշշոցների, մուրճերի հարաճուն կոփյունների, երկաթը ճռնչացնող գործիքների շչյունների տակ Ռաֆայելը անցավ մաքուր և լավ օդափոխված մի սրահ, և այնտեղ նա տեսավ վիթխարի մամլակը, որի մասին երեկ ասել էր Պլանշետը: Նրան զարմացրեց թափծու տախտակների և անխորտակելի հենաբարձիկով միացած երկաթե հաստոցների հաստությունը:

— Եթե դուք այս բռնակը յոթն անգամ պտտացնեք արագությամբ,— ասաց Շպիգհալտերը, ցույց տալով հղկված երկաթե լծակը,— ապա պողպատե թերթը փշուր-փշուր կլինի, և այդ փշուրները ասեղների պես կծակեն ձեր ոտքերը:

— Սատանան տանի,— գոչեց Ռաֆայելը:

Պլանշետը իր ձեռքով շագրենի կաշին մտցրեց ամենազոր մամլակի երկու տախտակների միջև և, գիտական համոզումներով տոգորված մարդու վստահությամբ, բուռն թափով դարձրեց լծակի բռնակը:

— Բոլորդ պառկեցեք, թե չէ կսպանի,— որոտաձայն գոռաց Շպիգհալտերը և ինքը նետվեց հատակի վրա:

Զիլ շվոց բարձրացավ արհեստանոցում: Մեքենայի մեջ գտնված ջուրը ջարդեց ձուլվածքը, տարապայման ուժգնությամբ դուրս ժայթքեց, բայց, բարեբախտաբար, ուղղվեց դեպի մի հնացած հնոց, որին շուռ տվեց, տապալեց, թավալեց, ինչպես թաթառը հորձանվում է տան շուրջը և այն քշում տանում իր հետ:

— Օ՜հ,— բացականչեց Պլանշետը սառնասրտությամբ,— շագրենը անվնաս-անվթար է մնացել: Վարպետ Շպիգհալտեր, երևի ձուլվածքը ծակ էր կամ մեծ փողրակի մեջ մի անցք կար. ..

— Ոչ, ոչ, ես գիտեմ իմ ձուլվածքը: Պարոն, վերցրեք տարեք ձեր այդ կաշին, դրա մեջ դև կա:

Գերմանացին դարբնի մուրճը բռնեց, կաշին նետեց սալի վրա և բարկության ամբողջ ուժով թալիսմանին տվեց այնպիսի շառաչուն հարված, ինչպիսին երբեք չէր հնչել իր արհեստանոցներում:

— Նրա վրա ոչ մի նշան չի էլ երևում,— բացականչեց Պլանշետը, շոյելով ըմբոստ շագրենը:

Բանվորները վազելով եկան: Ենթավարպետը վերցրեց կաշին և նետեց հնոցի վառվող քարածուխի վրա: Բոլորը կիսաշրջանաձև շարված կրակի շուրջը, անհամբերությամբ սպասեցին ահագին փուքսի ներգործությանը: Ռաֆայելը, Շպիգհալտերը և պրոֆեսոր Պլանշետը կանգնեցին այդ սևամած և ակնկառույց ամբոխի կենտրոնում: Տեսնելով աչքերի այդ շողացող սպիտակուցները, երկաթի խարտուքներով աղտոտված գլուխները, սև ու փայլուն արտահագուստները, մազոտ կրծքերը, Ռաֆայելը երևակայությամբ փոխադրվեց գերմանական բալլադների գիշերային ֆանտաստիկական աշխարհը: Ենթավարպետը, կաշին տասը րոպե պահելով հնոցի մեջ, դուրս հանեց ունելիով:

— Տվեք ինձ,— ասաց Ռաֆայելը։

Ենթավարպետը կատակելով կաշին մեկնեց Ռաֆայելին։ Ռաֆայելը առանց դժվարության վերցրեց կաշին,— նա սառն էր և ճկուն։ Սարսափի ճիչ բարձրացավ, բանվորները դես ու դեն փախան։ Դատարկված արհեստանոցում մնացին միայն Վալանտենն ու Պլանշետը։

— Դրա մեջ անպայման դիվային բան կա,— գոչեց Ռաֆայելը հուսահատական ձայնով։— Մի՞թե մարդկային ոչ մի ուժ ի վիճակի չէ ինձ շնորհելու մի ավելորդ օր։

— Պարոն, հանցանքն իմն է,— պատասխանեց մաթեմատիկոսը տխուր տեսքով,— այդ արտասովոր կաշին մենք պետք է ենթարկեինք գլանող մեքենայի ազդեցությանը։ Որտե՞ղ էին իմ աչքերը, երբ ես ձեզ մամլակ առաջարկեցի։

— Ես ինքս ձեզ խնդրեցի այդ,— ասաց Ռաֆայելը։

Գիտունը շունչ քաշեց, ինչպես մի մեղադրյալ, որին անմեղ են ճանաչում տասներկու երդվյալներ։ Սակայն, հետաքրքրվելով այն զարմանալի հանելուկով, որ նրան առաջադրում էր կաշին, նա մի րոպե մտածեց և ասաց.

— Հարկավոր է ռեակտիվներով ազդել այդ անհայտ նյութի վրա։ Գնանք Ժաֆեի մոտ, գուցե քիմիան ավելի արդյունավոր դուրս գա, քան մեխանիկան։

Վալանտենը իր ձիուն արշավեցրեց այն հույսով, որ նշանավոր քիմիկոս Ժաֆեին կգտնի իր աշխատանոցում։

— Է՛հ, հին բարեկամ, ինչպե՞ս է քիմիան,— ասաց Պլանշետը, դիմելով Ժաֆեին, որ նստել էր բազկաթոռի մեջ և զննում էր ինչ-որ դիրտ։

— Քնում է։ Ոչ մի նորություն։ Այսուհանդերձ, Ակադեմիան ճանաչեց սալիցինի գոյությունը, բայց սալիցինը, ասպարագինը, վոկելինը, դիգիտալինը հայտնագործություններ չեն. ..

— Ի վիճակի չլինելով բաներ հնարել, դուք երևի սկսել եք անուններ հնարել,— նկատեց Ռաֆայելը։

— Այդ ճիշտ է, երիտասարդ։

— Լսիր,— ասաց քիմիկոսին պրոֆեսոր Պլանշետը,— փորձիր քայքայել այս նյութը։ Եթե դու սրանից որևէ տարր դուրս բերես, ապա առաջուց ես այն կանվանեմ **դիաբոլին**[157], որովհետև, փորձելով այն սեղմել, մենք հենց նոր ջարդեցինք ջրաբաշխական մամուլը։

— Տեսնենք, տեսնենք,— ուրախ-ուրախ գոչեց քիմիկոսը։— Գուցե դա մի նոր պարզ մարմին է։

— Սա պարզապես էշի կաշու կտոր է,— ասաց Ռաֆայելը։

— Պարոն... — լրջորեն նկատեց հռչակավոր քիմիկոսը։

— Ես կատակ չեմ անում,— պատասխանեց մարկիզը և նրան մեկնեց շագրենի կաշին։

---

[157] ֆր. diable բառից, որ նշանակում է դև։

Բարոն Ժաֆեն կաշուն դիպցրեց իր խորդուբորդ լեզուն, որ վարժվել էր աղեր, թթվուտներ, ալկալիներ, գազեր համտեսել, և, մի քանի անգամ համը նայելով, ասաց.

— Ոչ մի համ: Դեհ, մենք նրան մի քիչ ֆտորիկային թթվուտ կտանք:

Ենթարկվելով այդ նյութի ազդեցությանը, որից այնքան արագ են քայքայվում կենդանական հյուսվածքները, կաշին ոչ մի փոփոխություն չկրեց:

— Դա շագրեն չէ,— գոչեց քիմիկոսը:— Այս խորհրդավոր անծանոթի հետ մենք կվարվենք այնպես, ինչպես հանքանյութի հետ և նրա քիթը կկոտրենք, այսինքն՝ մենք նրան կդնենք հրաշեկ քուրայի մեջ, ուր ես կարմիր պոտաս շաղ կտամ:

Ժաֆեն դուրս եկավ և իսկույն վերադարձավ:

— Պարոն,— ասաց նա Ռաֆայելին,— ինձ թույլ տվեք մի կտոր վերցնել այդ զարմանալի նյութից. նա այնքան արտասովոր է...

— Մի կտո՞ր,— գոչեց Ռաֆայելը:— Մի մազի չափ էլ չէի տա: Այսուհանդերձ փորձեք,— ավելացրեց նա տխուր և միաժամանակ հեգնական արտահայտությամբ:

Գիտունը կոտրեց ածելին, ձգտելով կտրել կաշին, նա փորձեց այն ճղել էլեկտրական ուժեղ հոսանքով, այն ենթարկեց վոլտայան մարտկոցի ազդեցությանը. վերջապես գիտության բոլոր շանթերը ոչինչ չկարողացան անել ահավոր թալիսմանին: Երեկոյան ժամը յոթն էր: Պլանշետը, Ժաֆեն և Ռաֆայելը սպասելով վերջին փորձի արդյունքներին, չնկատեցին, թե ինչպես է անցնում ժամանակը: Շագրենը հաղթական դուրս եկավ բավական քանակությամբ ազոտաքլորի հետ բախումից:

— Ես կորա՛ծ եմ,— բացականչեց Ռաֆայելը:— Դա աստծու կամքն է: Ես կմեռնեմ:

Նա զարմանք պատճառեց երկու գիտուններին: Նրանք երկար լռեցին, չհամարձակվելով միմյանց հաղորդել իրենց մտքերը. վերջապես Պլանշետը ասաց.

— Միայն թե այս դեպքը չպատմենք Ակադեմիայում, ապա թե ոչ մեր պաշտոնակիցները կծիծաղեն մեզ վրա:

Երկու գիտունները նման էին այն քրիստոնյաներին, որոնք դուրս էին եկել իրենց գերեզմաններից, առանց տեսնելու աստծուն երկնքում: Գիտությո՞ւնը: Անզոր: Թթվուտնե՞րը: Մաքուր ջուր: Կարմիր պոտա՞սը: Խայտառակված: Վոլտայան մարկտո՞ցը և շա՞նթը: Խաղալիքներ:

— Ջրաբաշխական մամուլը փշրվեց, ինչպես հացի կտոր,— ավելացրեց Պլանշետը:

— Ես հավատում եմ դևին,— ասաց բարոն Ժաֆեն, մի պահ լռությունից հետո:

— Իսկ ես՝ աստծուն,— պատասխանեց Պլանշետը:

Նրանք երկուսն էլ իրենց դերում էին: Մեքենագետի համար տիեզերքը մեքենա է, որի ղեկավարումը պահանջում է բանվոր. քիմիկոսի համար դա հորինվածքն է դևի, որ ամեն ինչ քայքայում է, իսկ աշխարհը գազ է, որ օժտված է շարժվելու ունակությամբ:

— Մենք չենք կարող ժխտել փաստը,— շարունակեց քիմիկոսը։

— Է՛հ, պարոնայք դոկտրինյորները մեզ մխիթարելու համար են մոգոնել այս մշուշոտ առածը — անմիտ ինչպես փաստը։

— Քո առածը թեև փաստ է, բայց, ըստ իս, անմիտ է,— նկատեց քիմիկոսը։

Նրանք ծիծաղեցին և նստեցին ճաշելու այն մարդկանց տեսքով, որոնք հրաշքի մեջ միայն սովորական երևույթ են տեսնում։

Երբ Վալանտենը տուն վերադարձավ, նրան համակեց սառը կատաղություն, նա այլևս ոչ մի բանի չէր հավատում, նրա մտքերը խճճվում, պտտվում, ծփում էին, ինչպես այն մարդկանց մոտ, որոնք ականատես են եղել անհնարին մի եղելության։ Նա հաճույքով դեռ կհավատար Շպիգհալտերի մեքենայի ինչ-որ ծածուկ թերությանը,— մեքենագիտության և կրակի անզորությունը չէր զարմացնում նրան. բայց կաշու ճկունությունը, որ նա զգում էր, երբ շոշափում էր այն, բայց միաժամանակ նրա կարծրությունը, որ նկատվում էր, երբ մարդու տրամադրության տակ եղած բոլոր խորտակիչ միջոցները ուղղվում էին նրա դեմ,— ահա թե ինչն էր սարսափեցնում Ռաֆայելին։ Այս անհերքելի փաստը գլխապտույտ էր պատճառում նրան։

«Ես գժվել եմ,— մտածեց նա,— առավոտվանից ոչինչ չեմ կերել, բայց ոչ քաղց եմ զգում, ոչ ծարավ, իսկ կրծքիս մեջ ասես կրակ է վառվում»։

Նա շագրենի կաշին նորից դրեց շրջանակի մեջ և, կարմիր թանաքով նորից նշանակելով թալիսմանի շրջագիծը, նստեց բազկաթոռի մեջ։

— Արդեն ժամը ութն է,— բացականչեց նա։— Օրն անցավ երազի նման։

Նա հենվեց բազկաթոռի թևին, գլուխը դրեց ձախ ձեռքի վրա և այդպես երկար մնաց, խորասուզված այն մռայլ մտախոհությունների մեջ, այն փաղաղիչ մտորումների մեջ, որոնց գաղտնիքը դատապարտյալներն իրենց հետ տանում են մահվան։

— Ա՛հ, Պոլին, խե՛ղճ աղջիկ,— բացականչեց նա։— Կան անդունդներ, որոնց վրայով չի կարող անցնել սերը, որքան էլ հզոր լինեն նրա թևերը։

Այդ միջոցին նա որոշակի լսեց հեղձամղձուկ մի հառաչանք և, շնորհիվ այն գերզգայնությանը, որ հատուկ է սիրահարին, նա ճանաչեց Պոլինի շունչը։

«Օ, ահա և դատավճիռը,— մտածեց Ռաֆայելը։— Եթե նա իրոք այստեղ է, ես կցանկանայի մեռնել նրա բազուկների մեջ»։

Լսելով զվարթ և անբռնազբոսիկ մի քրքիջ, Ռաֆայելը երեսով դարձավ դեպի մահճակալը և թափանցիկ վարագույրների միջով տեսավ Պոլինի դեմքը. վերջինս զոհ դեմքով ժպտում էր, ինչպես այն երեխան, որին հաջողվել է մի խորամանկություն անել. նրա գեղագանգուր վարսերը սփռվել էին ուսերի վրա. այդ պահին նա նման էր Բենգալյան վարդի՝ սպիտակ վարդերի փնջի մեջ։

— Ես կաշառեցի Հովնաթանին,— ասաց Պոլինը։— Ես քո կինն եմ, մի՞թե այդ մահճակալը ինձ չի պատկանում։ Մի նեղանա, սիրելիս, ես միայն ցանկանում էի քո կողքին քնել, քեզ զարմացնել։ Ներիր ինձ այդ հիմարության համար։

Նա կատվի պես դուրս ցատկեց անկողնից, շողալով սպիտակ մարմաշի մեջ և նստեց Ռաֆայելի ծնկների վրա։

— Սե՛ր իմ, ի՞նչ անդունդի մասին էիր խոսում դու,— հարցրեց Պոլինը, որի դեմքը մտահոգ արտահայտություն էր ստացել։

— Մահվան։

— Դու ինձ մտատանջում ես,— ասաց Պոլինը։— Կան այնպիսի գաղափարներ, որոնց մասին մենք՝ խեղճ կանայքս, ավելի լավ է չմտածենք, դրանք մեզ սպանում են։ Դա սիրո ուժի՞ց է, թե արիության պակասից, չգիտեմ։ Մահը ինձ չի սարսափեցնում,— շարունակեց նա ծիծաղելով։— Մեռնել քեզ հետ միասին, թեկուզ վաղը առավոտյան, վերջին անգամ համբուրելով քեզ, ինձ համար երջանկություն կլիներ։ Ինձ թվում է, թե այդ ժամանակ ես հարյուր տարուց ավելի կապրեի։ Ի՞նչ փույթ օրերի թիվը, եթե մի գիշերում, մի ժամում մենք սպառել ենք խաղաղությամբ և սիրով տոգորված ամբողջ կյանքը։

— Դու իրավացի ես, քո սիրուն բերանով երկինքն է խոսում։ Եկ համբուրեմ քեզ, և մեռնենք,— ասաց Ռաֆայելը։

— Մեռնե՛նք,— պատասխանեց Պոլինը ծիծաղով։

Առավոտյան ժամը իննին լույսը թափանցել էր փեղկերի անցքերի միջով. նա թուլացել էր վարագույրների մարմաշից, բայց և այնպես երևում էին գորգի ճոխ գույները և մետաքսապատ կահույքը ննջասենյակի, ուր հանգչում էին երկու սիրահարները։ Տեղ-տեղ նշողում էին ոսկեզօծումները։ Արևի մի շող մարմրում էր բմբուլե փափուկ ծածկոցի վրա, որը սիրային խաղերից նետվել էր հատակին։ Պոլինի շրջազգեստը, որ կախված էր շարժական հայելու վրա, երևում էր ինչպես մի անորոշ ուրվական։ Մանրիկ կոշիկները ընկել էին անկողնից հեռու։ Մի սոխակ եկավ թառեց լուսամուտի գոգին. նրա ճռվողյունները և թևերի թափահարումը արթնացրին Ռաֆայելին։

— Եթե ինձ վիճակված է մեռնել,— ասաց նա զարգացնելով այն միտքը, որ ունեցել էր երազի մեջ,— նշանակում է, իմ կազմվածքի մեջ, մսե և ոսկորե այդ մեքենայի մեջ, որին կենդանացնում է իմ կամքը, որ և ինձ տալիս է անհատականություն,— կան լուրջ խանգարումներ։ Բժիշկները պարտավոր են ճանաչել իմ կյանքին սպառնացող ախտանիշները և կարող են ինձ ասել՝ ես առո՞ղջ եմ թե հիվանդ։

Նա նայեց քնած կնոջը, որ ձեռքով բռնել էր իր գլուխը, քնի մեջ ևս արտահայտելով սիրո խանդակաթ հոգածությունը։ Երեխայի պես զմայլելիորեն փռված և երեսը Ռաֆայելին դարձրած, Պոլինը ասես դեռ նրան էր նայում, նրան պարզելով իր կիսաբաց սիրուն բերանը՝ համաչափ և մաքուր շնչառությամբ։ Փոքրիկ հախճապակենման ատամները ցայտուն էին դարձնում կարմրությունը թարմագեղ շրթների, որոնց վրա մի ժպիտ էր խաղում. այդ պահին նրա դեմքի վարդակարմիրը ավելի վառ էր և սպիտակությունը, այսպես ասած, ավելի սպիտակ, քան ցերեկվա ամենատարփալի ժամերին։ Նրա վստահությամբ լի

ինքնամատուցումը սիրահարվածի հմայքին ավելացնում էր քնած մանկան հրապույրը. նույնիսկ ամենաանկեղծ կանայք ցերեկվա ժամերին դեռ ենթարկվում են հասարակական որոշ պայմանականություններին, որոնք կաշկանդում են նրանց հոգու բնական զեղումները, բայց քունը ասես նրանց վերադարձնում է դեպի զգացումի անմիջականությունը, որ կազմում է մանկական հասակի զարդը: Պոլինը ոչ մի բանից չէր շառագունում, ինչպես մեկը այն ազնիվ, երկնային էակներից, որոնց շարժումների մեջ դեռ չկան հետին մտքեր, և որոնց նայվածքների մեջ դեռ չկան գաղտնիքներ: Նրա կիսադեմքը պարզորոշ գծագրվել էր բարձի նուրբ ջանջիլի վրա. ժանյակների սիրուն զարդերը միախառնվելով արձակված վարսերին՝ նրան տվել էին գրգռիչ տեսք, բայց նա քնել էր հաճույքի պահին, նրա երկար թարթիչները իջել էին, ասես նրա հայացքը պաշտպանելով շատ վառ լույսից կամ օգնելով կենտրոնանալու հոգուն, որը ձգտում է երկարաձգել համաճարակ, բայց խուսափուկ կրքի վայրկյանը. ծամերի փնջերով շրջանակված և ժանյակների հանգույցի վրա գծագրված նրա վարդագույն ականջիկը կգժվացներ արվեստագետին, նկարչին, ծերունուն, բայց թերևս կզգաստացներ խելագարին: Տեսնել, թե ինչպես ձեր սիրուհին քնում է, խաղաղորեն քնում և ժպտում ձեր թևարկության տակ, շարունակում է ձեզ սիրել նույնիսկ քնի մեջ, երբ ամեն արարած ասես դադարում է գոյություն ունենալուց, և դեռևս ձեզ է պարզում համր բերանը, որ ձեզ խոսում է վերջին համբույրի մասին. տեսնել կնոջը վստահ, կիսամերկ, բայց պարուրված սիրո քողով և անարատ՝ անկողնի անկարգության մեջ. դիտել նրա ցվրված հանդերձները, մետաքսե գուլպան, որ նա երեկոյան աճապարանքով հանել է ձեզ համար. քակված գոտին, որ վկայում է նրա անհուն վստահությունը ձեր հանդեպ,— մի՞թե դա անճառելի ուրախություն չէ: Այդ գոտին համակ պոեմ է: Այն կինը, որին նա պահում էր, այլևս գոյություն չունի ձեզանից դուրս, այդ կինը պատկանում է ձեզ, նա դարձել է ձեր մի մասը. այսուհետև դավաճանել նրան, նշանակում է վիրավորել ինքն իրեն: Խանդաղատած Ռաֆայելը դիտեց սիրով զեղուն, հիշատակներով լեցուն այդ սենյակը, ուր լուսավորությունն իսկ ստանում էր հեշտագրգիռ երանգներ, և նորից հայացքն ուղղեց այդ բարեձև, դեռատի, սիրակեզ կնոջը, որի զգացումները մանավանդ անբաժանելիորեն պատկանում էին իրեն: Նա կցանկանար ապրել առհավետ: Երբ նրա հայացքն ընկավ Պոլինի վրա, վերջինս իսկույն բացեց աչքերը, կարծես արևի շողն էր արձակվել նրանց վրա:

— Բարի լույս, հոգիս,— ասաց Պոլինը, ժպտալով:— Ինչքա՜ն սիրուն ես, չարաճճի:

Այդ երկու գլուխները, դրոշմված մի հրապույրով, որ նրանց տալիս էին սերն ու երիտասարդությունը, կիսամթությունն ու լռությունը, ներկայացնում էին աստվածային մի պատկեր, որի վաղանցիկ հմայքը պատկանում է միայն կրքի առաջին օրերին, ինչպես միամտությունն ու անբծությունը մասնահատուկ են մանկությանը: Ավա՜ղ, սիրո այդ գարնանային խնդությունները, ինչպես և մեր մատաղ հասակի ծիծաղները պետք է չքանան և պետք է ապրեն միայն մեր հիշողության մեջ, որպեսզի մեր ծածուկ խոհերի քմահաճույքների համաձայն մեզ հասցնեն հուսահատության և կամ մեր վրա փչեն սփոփարար մի բուրմունք:

— Ինչո՞ւ դու զարթնեցիր,— հարցրեց Ռաֆայելը:— Ես այնքան հաճույքով նայում էի քո քնելուն, ես արտասվում էի. ..

— Ես նույնպես,– ասաց Պոլինը,— ես արտասվեցի գիշերը, նայելով, թե ինչպես դու քնում էիր, բայց արտասվեցի ոչ ուրախության արցունքներով: Լսի՛ր, Ռաֆայել, լսի՛ր: Քնի ժամանակ դու ծանր ես շնչում, քո կրծքում ինչ-որ խշշոց կա, որ ինձ վախեցնում է: Դու

ընդհատ ու չոր հազ ունես, ինչպես իմ հայրը, որ մեռնում է թոքախտից: Քո թոքերի խշշոցի մեջ ես նկատեցի այդ հիվանդության որոշ նշանները: Իսկ հետո դու տենդ ունեցար, ես դրանում վստահ եմ, քո ձեռքը խոնավ ու տաք էր. .. Թանկագինս, դու դեռ երիտասարդ ես,— ավելացրեց Պոլինը սարսռագին,— դու դեռ կարող ես ապաքինվել, եթե, դժբախտաբար... Բայց ոչ,— գոչեց նա զվարթուն,— ոչ մի դժբախտություն չկա. բժիշկներն ասում են, որ այդ հիվանդությունը վարակիչ է:

Պոլինը երկու բազուկներով գրկեց Ռաֆայելին և նրա շունչը բռնեց այնպիսի համբույրով, որի մեջ զեղում է բովանդակ հոգին:

— Ես չեմ ուզում ապրել մինչև պառավելը,— հարեց Պոլինը:— Երկուսս էլ մեռնենք երիտասարդ հասակում և երկինք բարձրանանք լիաբուռն ծաղիկներով:

— Այդպիսի ցանկություններ ծագում են, քանի դեռ քաջառողջ ենք,— նկատեց Ռաֆայելը, մատները խրելով Պոլինի ծամերի մեջ:

Բայց այդ միջոցին հանկարծ նրա հազի նոպան բռնեց, դա մեկն էր այն խոր և թունդ հազերից, որոնք ասես դագաղից են դուրս գալիս, որոնք, լարելով նյարդերը, ցնցելով մարմինը, հոգնեցնելով ողնուղեղը, ինչ-որ ծանրություն տալով արյունատար անոթներին, դալկացնում են հիվանդներին և նրանց նետում դողի ու քրտինքի մեջ: Ռաֆայելը, գունատ և ոգեսպառ, դանդաղորեն կքեց սնարի վրա, նա այնպես էր թուլացել, որ ասես սպառել էր իր վերջին ուժերը: Պոլինը սևեռուն նրան նայեց լայնաբաց աչքերով և մնաց քարացած, սարսափից պապանձված:

— Է՛լ գժություններ չանենք, հրեշտակս,— վերջապես ասաց Պոլինը, ջանալով Ռաֆայելից ծածկել իր ահավոր նախազգացումները:

Նա ձեռքերով փակեց իր դեմքը,— նրա աչքերի առջև կանգնել էր մահվան քստմնելի կմախքը: Ռաֆայելի դեմքը կապտել էր, աչքերը խոռոչացել, նա հիշեցնում էր մի գանգ, որ հանվել էր գերեզմանից՝ գիտական ուսումնասիրության համար: Պոլինը հիշեց Ռաֆայելի մի բացականչությունը, որ նա արտաբերել էր երեկ, և ասաց յուրովի.

«Այո, կան անդունդներ, որոնց վրայով սերը չի կարող անցնել. նա պետք է իրեն թաղի այնտեղ»:

Մարտ ամսվա մի առավոտ, այս ցավալի տեսարանից մի քանի օր հետո, Ռաֆայելը գտնվում էր իր սենյակում, շրջապատված չորս բժիշկներով, որոնք նրան նստեցրել էին լուսամուտի առջև բազկաթոռի մեջ և հերթով շեշտված ուշադրությամբ շոշափում էին բազկերակը, քննում էին նրան և հարցուփորձ անում: Հիվանդը ճգնում էր գուշակել նրանց մտքերը, կարդալ նրանց շարժումները և նրանց ճակատների վրա գոյացող ամենամանր ծալքերը: Բժիշկների այս խորհրդակցությունը նրա վերջին հույսն էր: Այս գերագույն դատավորները պետք է արձակեին նրա կյանքի կամ մահվան դատավճիռը: Մարդկային գիտությունից կորզելու համար նրա վերջին խոսքը, Ռաֆայելը հրավիրել էր ժամանակակից բժշկագիտության պատգամախոսներին: Շնորհիվ իր հարստության և մարկիզության, հիմա նրա առջև էին բոլոր երեք սիստեմները, որոնց միջև են տատանվում մարդկային գիտելիքները: Այդ բժիշկներից երեքը, որոնք մարմնացնում էին պայքարը սպիրիտուալիզմի, անալիզմի և ինչ-որ ծաղրական էկլեկտիզմի միջև, իրենց հետ բերում էին բովանդակ բժշկության

փիլիսոփայությունը: Չորրորդ բժիշկը Օրաս Բիանշոնն էր, հմտություն և մեծ ապագա ունեցող մի մարդ, թերևս ամենակարկառունը նոր բժիշկներից, խելոք և համեստ ներկայացուցիչը այն ժրաջան երիտասարդության, որ պատրաստվում է ժառանգել Փարիզի համալսարանի հիսուն տարվա հավաքած գանձերը և, թերևս, կկառուցի կոթողը նախընթաց դարերի կուտակած բազմապիսի նյութերից: Լինելով բարեկամը մարկիզի և Ռաստինյակի, նա արդեն մի քանի օր է բուժում էր Ռաֆայելին, իսկ հիմա նրան օգնում էր պատասխանելու երեք պրոֆեսորների հարցերին և երբեմն որոշ համառությամբ նրանց ուշադրությունն էր հրավիրում այն ախտանիշների վրա, որոնք, իր կարծիքով, թոքախտի նշաններ են:

— Դուք անժուժկալ եղե՞լ եք: Շվայտ կյանք վարե՞լ եք: Մտային աշխատանքով շատ զբաղվե՞լ եք,— հարցրեց Ռաֆայելին երեք երևելի բժիշկներից մեկը, որի բարձր ճակատը, լայն դեմքը և պատկառազդու կազմվածքը կարծես հայտնում էին նրա գերազանցությունը իր ախոյանների նկատմամբ:

— Երեք տարի ես աշխատեցի մի ընդարձակ երկի վրա, որով դուք գուցե կզբաղվեք մի օր, իսկ հետո որոշեցի սանձարձակ կյանք վարել,— պատասխանեց Ռաֆայելը:

Մեծանուն դոկտորը ի նշան զոհության գլխով արեց, կարծես ասելով. «Ես այդպես էլ գիտեի»: Դա նշանավոր Բրիսսեն էր, օրգանիստների[158] պարագլուխը, Կաբանիսների[159] և Բիշաների[160] հաջորդը, մեկը այն դրապաշտ և նյութապաշտ մտքերից, որոնք մարդուն դիտում են իբրև սահմանափակ էակի, որ միմիայն ենթակա է իր սեփական կազմվածքի օրենքներին, այնպես որ նրանց համար առողջության բնականոն վիճակը, ինչպես և մահացու անկանոնությունները միշտ ունեն ակներև պատճառներ:

Ստանալով պատասխան, Բրիսսեն լուռ նայեց մի միջահասակ մարդու, որը իր ծիրանեգույն դեմքով և կրակոտ աչքերով հիշեցնում էր հնամենի մի սատիր, և որը, լուսամուտի խոռոչի անկյունին կռթնած, լռությամբ և ուշադրությամբ նայում էր Ռաֆայելին: Դա դոկտոր Կամերիստուսն էր, երազատես և հավատավոր մի մարդ, վիտալիստների[161] պարագլուխը, Վան-Հելմոնտի[162] վերացական տեսությունների պոռոտ պաշտպանը, որը մարդկային կյանքը համարում էր ինչ-որ բարձրագույն սկզբունք, անբացատրելի երևույթ, որ ծաղրում է վիրաբուժական նշդրակը, մոլորեցնում է վիրաբուժությունը, խուսափում է դեղորայքից,

---

[158] **Օրգանիստներ** — գոեհիկ մատերիալիզմի հետևորդները բժշկության մեջ. այսպես օրինակ, նրանք գտնում էին, որ ուղեղը օրգանական կերպով արտադրում է միտք, ճիշտ այնպես, ինչպես լյարդը արտադրում է լեղի:

[159] **Կաբանիս Պիեր-Ժան** (1757—1808) — ֆրանսիացի փիլիսոփա-մատերիալիստ, բժիշկ և բնախոս:

[160] **Բիշա** — տե՛ս 73 էջի ծանոթությունը:

[161] **Վիտալիստներ** — վիտալիզմը իդեալիստական հոսանք է կենսաբանության մեջ: Վիտալիստները կենդանի բնության բոլոր երևույթները բացատրում էին հատուկ «կենսական ուժի» գոյությամբ:

[162] **Վան–Հելմոնտ** (1577—1644) — բելգիացի բժիշկ-վիտալիստ:

հանրահաշվական x-երից, կազմախոսական ուսումնասիրություններից և ծիծաղում է մեր ճիգերի վրա,— համարում էր մի տեսակ անշոշափելի, անտեսանելի բոց, որ ենթարկվում է ինչ-որ աստվածային օրենքի և հաճախ վառվում է մարդկային դատավճիռներով մահվան դատապարտված մարմնում, իսկ միևնույն ժամանակ մարում է ամենակենսունակ օրգանիզմում։

Հեգնական մի ժպիտ էր խաղում երրորդի շրթների վրա — դա դոկտոր Մոգրեդին էր, հույժ խելացի, բայց սկեպտիկ և ծաղրասեր մի մարդ, որ հավատում էր միայն նշդրակին, Բրիսսեի հետ միասին ընդունում էր, որ քաջառողջ մարդը կարող է մեռնել, և Կամերիստուսի հետ միասին ընդունում էր, որ մարդը կարող է ապրել և մահից հետո։ Նա գտնում էր, որ բոլոր տեսություններն էլ որոշ արժանիքներ ունեն, բայց նրանցից ոչ մեկը չէր որդեգրում, կարծելով որ լավագույն բժշկական սիստեմն է ոչ մի սիստեմ չունենալ և միայն փաստերին հետևել։ Բժշկականության այս Պանուրգը, դիտողականության աստվածը, մեծ հետազոտողը և մեծ հեգնողը, ամենահանդուգն փորձարկուն, այժմ զննում էր շագրենի կաշին։

— Ես կցանկանայի անձամբ դիտել ձեր ցանկությունների և կաշու կծկման միջև գոյություն ունեցող զուգադիպությունը,— ասաց նա մարկիզին։

— Ինչի՞ համար,— գոչեց Բրիսսեն։

— Ինչի՞ համար,— կրկնեց Կամիրիստուսը։

— Օ, ուրեմն, դուք համակարծիք եք,— նկատեց Մոգրեդին։

— Բայց կաշու կծկումը բացատրվում է շատ պարզ,— ասաց Բրիսսեն։

— Նա գերբնական է,— ասաց Կամերիստուսը։

— Հիրավի,— հարեց Մոգրեդին, լուրջ տեսք ընդունելով և Ռաֆայելին վերադարձնելով շագրենի կաշին,— կաշու կարծրացումը անբացատրելի և սակայն բնական փաստ է, որը աշխարհի ստեղծումից ի վեր հուսահատության է մատնում բժշկությանը և սիրուն կանանց։

Ուշադիր դիտելով երեք բժիշկներին, Ռաֆայելը նրանցից ոչ մեկի մեջ չտեսավ արգահատանք իր հիվանդության նկատմամբ։ Երեքն էլ հանդարտ լսում էին նրա պատասխանները, անտարբեր նայում էին նրան և հարցուփորձ անում՝ առանց կարեկցելու նրան։ Նրանց քաղաքավարության միջով զգացվում էր անհոգությունը։ Ինքնավստահությունից թե խորհրդածությունից նրանց խոսքերն այնքան սակավ, այնքան գաղջ էին, որ երբեմն Ռաֆայելին թվում էր, թե նրանք ուրիշ բանի մասին են մտածում։ Երբեմն միայն Բրիսսեն, ի պատասխան Բիանշոնի մատնանշած ահավոր ախտանիշների, մռլտում էր. «Լավ, այդպես»։ Կամերիստուսը սուզվել էր խորախորհուրդ խոհերի մեջ։ Մոգրեդին նմանվում էր այն կատակերգակ հեղինակին, որ ուսումնասիրում է երկու տարօրինակ տիպեր, որպեսզի հետագայում նրանց փոխադրի իր կատակերգության մեջ։ Օրասի դեմքը մատնում էր խոր մորմոքը և թախծալի կարեկցանքը։ Նա շատ վերջերս էր բժիշկ դարձել, որպեսզի անտարբեր մնար հիվանդների տանջանքների առջև և անկարեկիր՝ մահվան մահիճի մոտ. նա դեռ չէր սովորել զսպել ցավակցության արցունքները, որոնք մարդուն թույլ չեն տալիս հստակ տեսնել և զորավարի նման որսալ հաղթանակի նպաստավոր պահը, չլսելով մահամերձների հեծությունները։ Բժիշկները մոտ կես ժամում, եթե կարելի է այդպես արտահայտվել, առան

հիվանդության և հիվանդի չափը, ինչպես դերձակը առնում է իրեն հարսանեկան զգեստ պատվիրած երիտասարդի ֆրակի չափը. նրանք մի քանի ընդհանուր խոսքեր ասացին, խոսեցին նույնիսկ հանրային գործերի մասին, իսկ հետո ցանկացան անցնել Ռաֆայելի առանձնասենյակը, որպեսզի իրենց կարծիքները փոխանակեն և հիվանդության բնույթը որոշեն:

— Պարոններ, ես կարո՞ղ եմ ներկա լինել ձեր խորհրդակցությանը,— հարցրեց Ռաֆայելը:

Բրիսսեն և Մոգրեդին կտրականապես ընդդիմացան և, ի հեճուկս հիվանդի թախանձանքներին, հրաժարվեցին խորհրդակցել նրա ներկայությամբ: Ռաֆայելը ենթարկվեց սովորությանը, վճռելով սողոսկել միջանցքում, ուրկից կարող էր հեշտությամբ լսել երեք պրոֆեսորների բժշկական վիճաբանությունը:

— Պարոններ, ինձ թույլ տվեք համառոտակի հայտնել իմ կարծիքը,— ասաց Բրիսսեն:— Ես մտադիր չեմ ոչ ձեզ պարտադրել այն, ոչ էլ հակաճառություն լսել. նախ և առաջ՝ այդ կարծիքը որոշ և ստույգ է, դա բխում է իմ հիվանդներից մեկի և մեր հետազոտության առարկա հանդիսացող հիվանդի միջև կատարյալ նմանությունից. երկրորդ՝ ինձ սպասում են հիվանդանոցում: Իմ ներկայությունը պահանջող գործի կարևորությունը ինձ արդարացում կծառայի առաջինը խոսք առնելուս: Մեզ զբաղեցնող ենթական հավասար չափով հոգնել է և մտավոր աշխատանքից. .. Այդ ինչի՞ վրա է նա աշխատել, Օրաս,— դիմեց նա երիտասարդ բժշկին:

— Կամքի տեսության վրա:

— Սատանա՛ն տանի, դա ընդարձակ նյութ է: Կրկնում եմ, նա հոգնել է և շատ լարված մտքի աշխատանքից, և անկանոն ապրելակերպից, և ուժեղ գրգռանյութերի հաճախակի գործածությունից: Մարմնի և ուղեղի բուռն գործունեությունը խարխլել է նրա ամբողջ օրգանիզմը: Պարոններ, դեմքի և մարմնի վրա մի շարք նշաններ բացահայտորեն ցույց են տալիս, որ նա ունի ստամոքսի ուժեղ գրգռում, ողնաշարի նյարդերի բորբոքում, մակորովայնի զգայնություն և ենթաորովայնի կարկամություն: Դուք նկատեցիք, որ նրա մոտ մեծացել է լյարդը: Վերջապես, պարոն Բիանշոնը, որ շարունակ հետևել է հիվանդի մարսողությանը, մեզ հայտնեց, որ դա ծանր ու դժվար է կատարվում: Ճիշտն ասած, ստամոքս գոյություն չունի այլևս. մարդը չքացել է: Ուղեղը տկարացել է, որովհետև մարդը այլևս չի մարսում կերածը: Մակորովայնի, այդ կենսական կենտրոնի, աստիճանական խանգարումը խախտել է ամբողջ սիստեմը: Այստեղից էլ շարունակական և ակնհայտ իռադացիաները. նյարդային ցանցի միջոցով քայքայումը հասել է ուղեղին, այստեղից էլ այդ օրգանի ծայրահեղ գրգռվածությունը: Երևան է եկել մտագարություն: Հիվանդի մոտ կա սևեռամտածություն: Նրա երևակայության մեջ շագրենի կաշին, իրոք, կծկվում է, թեև, գուցե, նա միշտ այդպես է եղել, ինչպես մենք հիմա տեսանք. բայց այդ շագրենը կծկվում է, թե ոչ, դա նրա համար այն ճանճն է, որ նստել էր ինչ-որ մեծ վեզիրի քթին: Շուտ տզրուկներ դրեք մակորովայնի վրա, մեղմացրեք այդ բացառիկ կարևոր օրգանի գրգռվածությունը, հիվանդին ստիպեցեք ռեժիմ պահել, և մտագարությունը կանցնի: Ես իմ խոսքը վերջացնում եմ: Դոկտոր Բիանշոնը ինքը պետք է սահմանի բուժման ընդհանուր և առանձին եղանակները: Գուցե հիվանդությունը բարդացել է, գուցե շնչառական ուղիները նույնպես գրգռվել են, բայց ես կարծում եմ, որ մարսողական խողովակի բուժումը շատ ավելի կարևոր, անհրաժեշտ, հրատապ է, քան

թոքերի բուժումը: Վերացական նյութերի վրա համառ աշխատանքը և որոշ բուռն կրքեր ծանր խանգարումներ են առաջացրել կենսական մեխանիզմի մեջ. սակայն դեռ ժամանակ կա զսպանակներն ուղղելու, առանձին լուրջ վնասվածք չի նկատվում: Ուստի դուք կարող եք հաստատապես փրկել ձեր բարեկամին,— եզրափակեց Բրիսսեն, դիմելով Բիանշոնին:

— Մեր գիտուն պաշտոնակիցը հետևանքն ու պատճառը շփոթում է,— պատասխանեց Կամերիստուսը:— Այո, նրա նկատած խանգարումները, իրոք, կան հիվանդի մոտ, բայց դեպի ուղեղ գնացող այդ գրգռումը օրգանիզմում չի ծագել ստամոքսից, ինչպես ապակու վրա շառավիղները ապակու ճեղքվածքից: Որպեսզի ապակին ջարդվեր, հարկ եղավ հարված, իսկ ո՞վ հասցրեց հարվածը: Մի՞թե այդ գիտենք: Մի՞թե մենք բավարար չափով քննել ենք հիվանդին: Մի՞թե մեզ ծանոթ են նրա կյանքի բոլոր դեպքերը: Պարոններ, նրա մոտ ախտահարված է կենսական սկզբունքը, Վան-Հելմոնտի **արքեան**[163]. կենսական ուժը վնասված է հենց իր հիմքում. աստվածային կայծը, միջակա բանականությունը, որը, ասես փոխանցող մեքենա է հանդիսանում և որը ծնունդ է տալիս կամքին, կյանքի այդ գիտությանը, դադարել է կանոնավորել օրգանիզմի ամենօրյա աշխատանքը և յուրաքանչյուր օրգանի գործունեությունը. այստեղից էլ առաջանում են այն բոլոր խանգարումները, որոնք այնքան լավ է նկատել իմ ներհուն եղբայրակիցը: Շարժումը գնում է ոչ թե մակորովայնից դեպի ուղեղ, այլ ուղեղից դեպի մակորովայն: Ո՛չ,— բացականչեց Կամերիստուսը, խփելով իր կրծքին,— ո՛չ, ես մարդ դարձած ստամոքս չեմ: Ոչ, ստամոքսը դեռ ամեն ինչ չէ: Ես չեմ համարձակվի պնդել, որ եթե կանոնավոր որովայն ունեմ, ապա մնացածը կարևոր չէ. .. Մենք չենք կարող,— շարունակեց նա ավելի մեղմ ձայնով,— միևնույն ֆիզիկական պատճառով բացատրել և միևնույն եղանակով բուժել այն ծանր խանգարումները, որոնցից առավել կամ նվազ լրջորեն վնասվում են տարբեր անհատներ: Մարդիկ նման չեն մեկը մյուսին: Մեզանից յուրաքանչյուրի օրգանները հատկանշվում են տարբեր աստիճանի գրգռությամբ և սննդառությամբ. նրանք ստեղծված են տարբեր դերեր կատարելու և իրագործելու այն, ինչ նրանց սահմանված է մեզ անհայտ իրերի կարգով: Մասնիկը մեծ ամբողջի, որ բարձրագույն կամքով նախասահմանված է մեր մեջ առաջացնելու և պահպանելու կենդանության երևույթները, յուրաքանչյուր մարդու մեջ արտահայտվում է տարբեր ձևով և նրան վերածում է մի էակի, որ երևութապես վախճանական է, բայց ինչ-որ մի կետով համագոյակցում է անվախճան մի պատճառի հետ: Ուստի յուրաքանչյուր ենթակայի մենք պետք է քննենք առանձնապես, պետք է խորապես ուսումնասիրենք նրան, պետք է գիտենանք, թե ինչով է նա ապրում և ինչի մեջ է նրա ուժը: Թրմված սպունգի կակղության և չեչաքարի կարծրության միջև գոյություն ունեն անհամար անցումներ: Նույնը վերաբերում է և մարդուն:

Տարբերություն չդնելով ավշային մարդկանց սպունգային կազմվածքի և երկար ապրելու սահմանված որոշ մարդկանց մետաղային ամրությամբ մկանների միջև, ինչպիսի սխալներ չի գործի միակ անողոք սիստեմը, պահանջելով բուժել թուլացմամբ, սպառմամբ մարդկային ուժերի, որոնք, ձեր կարծիքով, միշտ գտնվում են գրգռված վիճակում: Տվյալ դեպքում ես գտնում եմ, որ անհրաժեշտ է բացառապես հոգեկան բուժում, ներաշխարհի խոր ուսումնասիրություն: Հիվանդության պատճառը պետք է որոնենք հոգու մեջ, այլ ոչ թե մարմնի մեջ: Բժիշկը ներշնչված, հատուկ ձիրքով օժտված էակ է, որին աստված

---

[163] **Կենսական սկզբունքը, Վան–Հելմոնտի արքեան** — Վան-Հելմոնտը պնդում էր, որ մարդկային մարմնի կենտրոնական օրգանը ինչ-որ հոգեկան սկզբունք է — արքեան:

ընդունակություն է տվել կենսական ուժերի էության մեջ թափանցելու, ինչպես մարգարեներին աչքեր է տվել ապագան տեսնելու, բանաստեղծին ունակություն՝ բնությունը ոգեկոչելու, երաժշտին ունակություն՝ հնչյունները դասավորելու ներդաշնակ կարգով, որի նախատիպը, գուցե, այլ աշխարհում է...

— Նա միշտ իր բացարձակատիրական, միապետական, կրոնական բժշկության հետ է,— մռլտաց Բրիսսեն:

— Պարոններ,— ընդմիջեց Մոգրեդին, փութալով խլացնել Բրիսսեի բացականչությունը,— չմոռանանք մեր հիվանդին. ..

«Ահա թե որտեղ է գիտությունը,— տրտմորեն մտածեց Ռաֆայելը:— Իմ բուժումը գտնվում է համրիչների և տզրուկների միջև, Դյուպյուիտրենի[164] նշդրակի և իշխան Հոհենլոեի աղոթքի[165] միջև: Մոգրեդին կանգնած է փաստի և խոսքի, նյութի և ոգու միջև գտնվող սահմանագծի վրա: Մարդկային **այոն** և **ոչը** ինձ հալածում են ամենուրեք: Միշտ Ռաբլեի **Կարիմարի–Կարիմարան**: Ես հոգեպես հիվանդ եմ — **Կարիմարի**: Ես մարմնապես հիվանդ եմ — **Կարիմարա**: Ես կապրե՞մ թե ոչ — դա անհայտ է նրանց: Պլանշետը գոնե ավելի անկեղծ էր, նա պարզապես ասում էր՝ **չգիտեմ**»:

— Այդ միջոցին Վալանտենը լսեց դոկտոր Մոգրեդիի ձայնը:

— Հիվանդը մտագա՞ր է: Լավ, համամիտ եմ,— գոչեց նա:— Բայց նա երկու հարյուր հազար լիվր եկամուտ ունի, այդպիսի մտագարներ շատ հազվագյուտ են լինում, և մենք, համենայն դեպս, պարտավոր ենք խորհուրդ տալ նրան: Իսկ թե նրա փորն է ազդել ուղեղի վրա, թե ուղեղը փորի վրա, այդ մենք, հավանաբար, կստուգենք, երբ նա մահանա: Ուրեմն ամփոփենք: Նա հիվանդ է, դա անվիճելի փաստ է: Նրան հարկավոր է բուժում: Մի կողմ թողնենք կարծիքները: Տզրուկներ դնենք, որպեսզի հանգստացնենք աղիքների գրգռվածությունն ու նեվրոզը, որոնց առկայությունը մենք բոլորս ընդունում ենք, իսկ հետո նրան կուղարկենք հանքային ջրեր. այսպիսով, մենք միանգամից երկու սիստեմներն էլ գործադրած կլինենք: Իսկ եթե նա թոքերի հիվանդ է, ապա մենք չենք կարող նրան բուժել: Հետևաբար.. .

Ռաֆայելը շտապ եկավ և իր տեղը նստեց: Քիչ հետո չորս բժիշկները դուրս եկան առանձնասենյակից: Օրասը, խոսք առնելով ասաց Ռաֆայելին.

— Բժիշկները միաձայն ընդունեցին, որ անհրաժեշտ է անհապաղ տզրուկներ դնել փորի վրա և անմիջապես ձեռնամուխ լինել միաժամանակ ֆիզիկական և հոգեկան բուժման: Նախ և առաջ՝ հարկավոր է դիետա, որպեսզի մեղմանա ձեր օրգանիզմի գրգռվածությունը.. .— (Այստեղ Բրիսսեն գլխով հավանության նշան տվեց):— Ապա հարկավոր է առողջապահական ռեժիմ, որը բարերար ազդեցություն կգործի ձեր հոգեկան տրամադրության վրա: Ուստի մենք միաձայն ձեզ խորհուրդ ենք տալիս գնալ Էքսի հանքային ջրերը Սավոյայում կամ, եթե կնախընտրեք, Մոն-Դորի հանքային ջրերը Օվեռնում: Օդն ու բնությունը Սավոյայում ավելի

---

[164] **Դյուպյուիտրեն Գիյոմ** (1777—1835) — նշանավոր ֆրանսիացի վիրաբույժ:

[165] **Իշխան Հոհենլոե** (1794—1850) — ճիզվիտ, որը ուսուցանում էր, թե աղոթքները բավական են հիվանդին բուժելու համար:

հաճելի են, քան Կանտալում, բայց դուք ընտրեցեք ձեր ճաշակի համաձայն։— (Այստեղ դոկտոր Կամերիստուսը հասկանալ տվեց։ որ ինքը համաձայն է)։— Բժիշկները,— շարունակեց Օրաս Բիանշոնը,— գտնելով որ որոշ փոփոխություններ կան ձեր շնչառական ապարատում, միաձայն օգտակար համարեցին իմ նախորդ պատվերները։ Նրանք կարծում են, որ դուք շուտով կկազդուրվեք և որ դա կախված կլինի իմ ցույց տված տարբեր միջոցների խելացի գործադրությունից. ..

— Ահա. .. «Ահա թե ինչու ձեր աղջիկը համր է»[166],— ասաց Ռաֆայելը ժպտալով և Օրասին տարավ իր առանձնասենյակը, որպեսզի նրան հանձներ այդ անօգուտ խորհրդակցության գինը։

— Նրանք տրամաբան են,— ասաց երիտասարդ բժիշկը Ռաֆայելին։— Կամերիստուսը զգում է, Բրիսսեն ուսումնասիրում, Մոգրեդին տարակուսում։ Չէ՞ որ մարդու մոտ կա և՛ հոգի, և՛ մարմին, և՛ բանականություն։ Այդ երեք նախապատճառներից մեկնումեկը մեր մեջ ավելի ուժեղ է գործում։ Մարդկային բնությունը միշտ էլ երևան է գալիս մարդկային գիտության մեջ։ Հավատա ինձ, Ռաֆայել. մենք չենք բուժում, մենք միայն օգնում ենք բուժելու։ Բրիսսեի և Կամերիստուսի բժշկական սիստեմների միջև դեռևս գտնվում է սպասողական սիստեմը. բայց որպեսզի վերջինս հաջողությամբ կիրարկվի, պետք է հիվանդին ճանաչել տասը տարի։ Բժշկագիտության, ինչպես և բոլոր մյուս գիտությունների հիմքում կա բացասում։ Ուրեմն աշխատիր ապրել խելացիորեն, փորձիր գնալ Սավոյա. բնությանն ապավինելը ամենալավն է և միշտ կլինի ամենալավը։

Մի ամիս հետո, ամառային մի գեղեցիկ երեկո, Էքսի հանքային ջրերը եկած մարդկանցից մի քանիսը զբոսանքից հետո հավաքվեցին առողջարանի սրահում։ Ռաֆայելը միայնակ երկար նստել էր լուսամուտի մոտ, կռնակը դարձրած հավաքվածներին. նա խորասուզվել էր այն մեքենայական անուրջների մեջ, երբ մտքերը ծնվում, շարակցվում, մշուշվում են առանց ձևավորվելու, և անցնում են ինչպես թափանցիկ, դժգույն ամպեր։ Այն ժամանակ տրտմությունը լինում է մեղմ, ուրախությունը՝ տարտամ և հոգին՝ գրեթե քնած։ Անձնատուր եղած այդ հաճելի զգացողությանը, երջանիկ, որ ինքը ոչ մի ցավ չի զգում, որ, վերջապես ստիպել է լռել շագրենի կաշու սպառնալիքները, Ռաֆայելը լողում էր երեկոյան գաղջ մթնոլորտում, ըմպում լեռնային վճիտ ու հեշտաբույր օդը։ Երբ լեռնագագաթների վրա մարվեցին վերջալույսի ծիրանի ցոլքերը և օդը զովացավ, նա վեր կացավ տեղից, որպեսզի լուսամուտը փակեր։

— Բարեհաճեցեք չփակել լուսամուտը, մենք խեղդվում ենք,– ասաց նրան տարեց մի տիկին։

Խժալուր և սուր տոնով արտաբերված այս խոսքը ծակեց Ռաֆայելի ականջները,— այսպես այն մարդը, որի բարեկամական տրամադրությանը մենք ուզում էինք հավատալ, անզգուշաբար բաց է թողնում մի խոսք, խորտակում է մեր զգացումների քաղցր պատրանքը, բաց անելով մարդկային եսամոլության անդունդը։ Ռաֆայելը դիվանագետին հատուկ սառն

---

[166] **«Ահա թե ինչու ձեր աղջիկը համր է»** — խոսք Մոլիերի «Ակամա բժիշկ» կատակերգությունից։ Սգանարելը, որին բժշկի տեղ են դնում, արտասանում է լատիներեն բառերի անիմաստ մի կույտ, իսկ ապա եզրակացություն է անում. «Ահա թե ինչու ձեր աղջիկը համր է»։

ու անզգա մի հայացք նետեց պառավ կնոջ վրա, կանչեց սպասյակին և, երբ նա մոտեցավ, չորությամբ ասաց նրան.

— Բա՛ց արեք լուսամուտը։

Այս բառերից զարմանքի արտահայտություն առաջացավ հավաքվածների դեմքերի վրա։ Բոլորն սկսեցին փսփսալ, հիվանդին նայելով առավել կամ նվազ պերճախոս հայացքով, ասես նա ծանր հանցանք էր գործել։ Ռաֆայելը, որ դեռ լիովին չէր ձերբազատվել պատանեկական ամոթխածությունից, դարձավ ամաչկոտ, բայց նա շուտով թոթափեց իր կարկամությունը, վերստացավ իր կորովը և փորձեց իրեն հաշիվ տալ այդ անսովոր եղելության մասին։ Հանկարծ նրա միտքը պայծառացավ, նրա առջև հայտնապես երևաց անցյալը, և այն ժամանակ ուրվագծվեցին նրան ներշնչող զգացումի պատճառները, ինչպես դիակի վրա երակները, որոնց ամենափոքր ճյուղավորումները բնագետները գունավորում են ինչ-որ սրսկման միջոցով. նա իրեն ճանաչեց այդ խուսափուկ պատկերի մեջ, նա հետևեց իր կյանքին օր առ օր, խոհ առ խոհ, ոչ առանց զարմանքի նկատեց, որ ինքը մռայլ ու մտացիր է այդ ծիծաղկոտ հասարակության ծոցում. շարունակ մտածում է իր ճակատագրի մասին, մշտապես մտահոգված է իր հիվանդությամբ. արհամարհում է ամենասովորական խոսակցությունները. խուսափում է այն կարճատև մտերմությունից, որ շատ շուտով հաստատվում է ճանապարհորդների միջև, հավանաբար այն պատճառով, որ նրանք այլևս հույս չունեն հանդիպելու միմյանց. ամեն ինչի նկատմամբ անտարբեր է, մի խոսքով նման է մի ժայռի, որ անզգա է ալիքների և՛ զգվանքների, և՛ մոլուցքների նկատմամբ։ Անսովոր մի ներհայեցությամբ նա սկսեց կարդալ իրեն շրջապատողների հոգին. աշտանակի լույսի տակ նկատելով մի ծերունու դեղին գանգը և հեգնող կիսադեմքը, նա հիշեց, որ մի անգամ տարել էր նրան և չէր առաջարկել նորից խաղալ. մի քիչ հեռու նա տեսավ մի սիրուն կնոջ, որի ծեքծեքանքների նկատմամբ սառնասիրտ մնաց. յուրաքանչյուրը նրան մեղադրում էր որևէ վիրավորանքի համար, որ առաջին հայացքից աննշան է, բայց անմոռանալի է այն պատճառով, որ աննկատելի խոց է պատճառել ինքնասիրությանը։ Նա ակամա վիրավորել էր ունայն զգացումները բոլորի, որոնց նա հանդիպել էր։ Նրանց, որոնց նա հյուր էր կանչել, կամ նրանց, որոնց նա առաջարկել էր իր ձիերը, ջղայնացրել էր իր շքեղությամբ. զարմացած նրանց ապերախտությունից, նա նույնիսկ չէր նվաստացրել նրանց,— այն ժամանակ նրանք կարծեցին, թե նա քամահրում է իրենց և նրան մեղադրեցին արիստոկրատական մեծամտության մեջ։ Խորազննելով մարդկանց հոգիները, գուշակելով նրանց ամենաթաքուն մտքերը, նա զարհուրեց հասարակությունից, նրա քաղաքավարությունից, նրա փայլից։ Լինելով հարուստ և բարձր մտքի տեր, նա դարձել էր նախանձի և ատելության առարկա. իր լռությամբ նա ի դերև էր հանում հետաքրքրասերների հույսերը. նրա համեստությունը մեծամտություն էր թվում ճղճիմ և մակերեսային մարդկանց։ Նա հասկացավ, թե ինչպիսի թաքուն և աններելի ոճիր է գործել նրանց հանդեպ. նա խույս էր տալիս նրանց միջակության դատաստանից։ Ըմբոստ՝ նրանց լլկիչ բռնակալության նկատմամբ, նա ցույց էր տալիս, որ նրանց կարիքը չի զգում. ձգտելով նրանից վրեժ լուծել վեսության համար, բոլորը բնազդաբար միավորվել էին, որպեսզի նրան զգացնեին իրենց ուժը, նրան ենթարկեին մեկուսացման, նրան հասկացնեին, որ իրենք էլ նրա կարիքը չեն զգում։ Աշխարհիկ հասարակության այդ պատկերը սկզբում նրան ներշնչեց արգահատանքի զգացում, բայց հետո նա ակամա սարսռաց, մտածելով, թե ինչքան հեշտությամբ էր իր առջև բարձրանում հոգեկան աշխարհը ծածկող մսի քողը, և նա փակեց աչքերը, ասես չուզելով այլևս ոչինչ տեսնել։ Հանկարծ սև

վարագույր քաշվեց ճշմարտության այդ մռայլ ուրվապատկերի վրա, և Ռաֆայելը գտնվեց ահավոր մեկուսացման մեջ, որ սպասում է նրան, ով ձգտում է իշխանության և տիրապետության: Այդ միջոցին նա սաստիկ հազաց: Ոչ ոք նրան ոչ մի բառ չասաց, թեկուզ անտարբեր և հասարակ մի բառ, քաղաքավարական կարեկցություն արտահայտող մի բառ, ինչպես այդպիսի պարագաներում ընդունված է կիրթ հասարակությունից պատահաբար հավաքված մարդկանց մեջ,— դրա փոխարեն նրա ականջին հասան թշնամական բացականչություններ և զայրագին շշուկներ: Հասարակությունը նույնիսկ անհրաժեշտ չէր համարում ձևականություններ անելու Ռաֆայելի մոտ, գուցե, որովհետև լավ էր հասկացել նրան:

— Նրա հիվանդությունը վարակիչ է...

— Վերակացուն նրան պետք է արգելի սրահ մտնել:

— Ճիշտն ասած, կարգին հասարակության մեջ չի թույլատրվում այդպես հազալ:

— Այսպիսի հիվանդը չպետք է գա հանքային ջրեր. ..

— Պետք է գնալ այստեղից:

Խույս տալու համար այդ չարախոսություններից, Ռաֆայելը վեր կացավ և սկսեց ճեմել սրահում: Որևէ պաշտպան գտնելու հույսով նա ցանկացավ մոտենալ միայնակ նստած մի երիտասարդ կնոջ և նրան մի քանի սիրալիր խոսքեր ուղղել, բայց մոտենալու ժամանակ կինը մեջքը դարձրեց և ձևացրեց, թե նայում է պարողներին: Ռաֆայելը վախեցավ, որ այդ երեկոյան ինքն արդեն սպառել է իր ամբողջ թալիսմանը. իր մեջ չզգալով ոչ ցանկություն, ոչ համարձակություն զրույցի բռնվելու որևէ մեկի հետ, նա սրահից գնաց բիլիարդանոց: Բիլիարդանոցում ոչ ոք չխոսեց նրա հետ, ոչ ոք չբարևեց նրան, ոչ ոք նրան չնայեց թեկուզ մի բարյացակամ հայացքով: Նրա ի բնե խոհուն միտքը ներհայեցությամբ բացահայտեց իր առաջացրած նողկանքի իսկական և ընդհանրական պատճառը: Այդ փոքրիկ աշխարհը, թերևս առանց գիտակցելու, ենթարկվում էր այն մեծ օրենքին, որ ղեկավարում է բարձր հասարակությունը, որի ամբողջ անողոք բարոյականությունն անցավ Ռաֆայելի աչքերի առջևով: Հետադարձ մի հայացք նետելով իր անցյալի վրա, նա դրա լիավարտ պատկերը տեսավ Ֆեոդորայի մեջ: Այստեղ նա չկարողացավ ավելի կարեկցություն գտնել իր հիվանդության նկատմամբ, քան անցյալում այդ կնոջ մոտ՝ իր սրտի մորմոքների նկատմամբ: Բարձր հասարակությունն իր միջից արտաքսում է տարաբախտներին, ինչպես քաջառողջ մարդը իր մարմնից վանում է հիվանդության սաղմերը: Այդ հասարակությունը սոսկում է վշտակրություններից և դժբախտություններից, նա սարսափում է դրանցից, ինչպես համաճարակ հիվանդություններից, և երբեք չի տատամսի դրանց և մոլությունների միջև ընտրության մեջ. մոլությունը պերճություն է: Ինչքան էլ վեհաշուք լինի դժբախտությունը, հասարակությունը միշտ կարողանում է նսեմացնել այն, ծաղրել մի հեգնաբանությամբ. նա նկարում է ծաղրապատկերներ, տապալված թագավորի երեսին նետելով լուտանքներ, իբրև թե վրեժ լուծելով իր կրած վիրավորանքների համար. նման երիտասարդ հռոմայեցիներին կրկեսում, նա անողորմ է ընկած գլադիատորի նկատմամբ. նա ապրում է ոսկով և ծաղրով… **Մա՛հ թույլերին** — ահա պատգամը արտոնյալ խավի, որ հաստատվել է աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ, ըստ որում ամեն տեղ բարձրանում են հարուստները, և այդ խոսքը արձանագրված է փարթամությամբ շաղախված և արիստոկրատիզմով սնված սրտերում:

Նայեցեք երեխաներին դպրոցում: Դա փոքրացված պատկերն է հասարակության, ճշգրիտ պատկերը, միայն ավելի միամիտ և անկեղծ ձևով արտահայտված. այստեղ դուք շարունակ կգտնեք խեղճ ստրուկներ, տառապանքի և վշտի զավակներ, որոնց նկատմամբ միշտ տածում են ինչ-որ զգացում արհամարհանքի և արգահատանքի միջև. իսկ Ավետարանը նրանց դրախտ է խոստանում: Ավելի ցած իջեք կենդանի էակների աստիճաններով: Եթե մի հավ հիվանդանում է հավանոցում, մյուսները նրան հալածում են, փետրում, կտցում և վերջ ի վերջո սպանում: Հավատարիմ եսամոլության այդ կանոնին, բարձր հասարակությունն իր խստությունները շռայլում է թշվառներին, որոնք հանդգնել են փչացնել նրա տոնական տրամադրությունը և խանգարել նրա զվարճությունները: Ով տառապում է մարմնով կամ հոգով, ով տնանկ է և անզոր, նա պարիա[167] է: Նա թող մնա իր անապատում: Դրա սահմաններից դուրս նա ամենուրեք կգտնի ձմեռային ցրտություն — նայվածքների, վերաբերմունքի, խոսքերի, սրտերի սառնություն. երջանիկ է նա, եթե վիրավորանք չի քաղում այնտեղ, ուր նրա համար պետք է ծաղկեր մխիթարանք: Օրհասականնե՛ր, մնացեք անտերունչ ձեր մահիճների վրա: Ծերունինե՛ր, նստեցեք միայնակ ձեր սառած օջախների մոտ: Հեք անօժիտ աղջիկնե՛ր, սառեցեք կամ այրվեցեք ձեր մենավոր խցերում: Եթե բարձր հասարակությունը հանդուրժում է որևէ դժբախտություն, ապա դա մի՞թե նրա համար չէ, որ նրան հարմարեցնի իր նպատակներին, օգուտ քաղի նրանից, թամբի, բարձի, սանձի նրան, հեծնի նրա վրա իր սեփական զվարճության համար: Մաղձոտ նաժիշտնե՛ր, ձեր դեմքերը զվարթ պահեցեք, հլությամբ տարեք ձեր կարծեցյալ բարերարուհու քմահաճույքները, ձեռքերի վրա պահեցեք նրա շնիկները, մրցելով նրանց հետ՝ զվարճացրեք նրան, կռահեցեք նրա ցանկությունը և լռեցեք: Իսկ դո՛ւ, անհամազգեստավոր լաճերի թագավոր, անամոթ մակաբույծ, տանը թող քո ինքնասիրությունը. մարսիր կերակուրը, երբ մարսում է քո տերը, լաց նրա արցունքներով, ծիծաղիր նրա ծիծաղով, հիացիր նրա ստախոսություններով. եթե ուզում ես խծբծել նրան, սպասիր նրա անկմանը: Բարձր հասարակությունը այսպես է պատվում դժբախտությունը. նա նրան սպանում է կամ վանում, ստորացնում է կամ ամորձատում:

Ռաֆայելի սրտից այս խոհերը բխեցին բանաստեղծական ներշնչման արագությամբ. նա շուրջը նայեց և զգաց այն չարագուշակ սառնությունը, որ հասարակությունը ծորում է, վանելու համար դժբախտներին և որ հոգին թաթավում է ավելի արագ, քան դեկտեմբերյան ցուրտ քամին թափանցում է մարմինը: Նա թևերը խաչաձևեց, պատին հենվեց և ընկավ խոր մելամաղձության մեջ: Նա մտածեց, թե այդ տխուր բարեկրթությունը ինչքան քիչ երջանկություն է պատճառում բարձր հասարակությանը: Եվ ի՞նչ երջանկություն է դա: Զվարճություններ՝ առանց հաճույքի, զվարթություններ՝ առանց հրճվանքի, հանդիսություններ՝ առանց վայելքի, զմայլություններ՝ առանց տենչանքի, այլ խոսքով վառարանում չվառված փայտ կամ մնացած մոխիր՝ առանց բոցի կայծերի: Երբ Ռաֆայելը գլուխը բարձրացրեց, տեսավ որ ինքը մենակ է, խաղացողները դես ու դեն էին փախել:

«Եթե ես նրանց մոտ ցույց տայի իմ ուժը, նրանք կսկսեին պաշտել իմ հազը»— մտածեց նա:

Այս մտածումից նա մի արհամարհական հայացք նետեց իր և աշխարհի միջև:

---

[167] **Պարիա** — Հնդկաստանում ամեն տեսակ իրավունքներից զրկված մարդ. ընդհանրապես՝ արհամարհված, ոտնահարված մարդ:

Հետևյալ օրը ջրաբուժարանի բժիշկը նրան այցելեց և սիրալիր կերպով հարցրեց նրա առողջության մասին: Լսելով նրա փաղաքշական խոսքերը, Ռաֆայելը ուրախալի հուզում զգաց: Նա գտավ, որ բժշկի դեմքին փափկություն և բարություն կա, որ նրա շիկագույն կեղծամի խոպոպիկները մարդասիրություն են բուրում, որ նրա ֆրակի ձևը, նրա տաբատի ծալքերը, կվակերի կոշիկների նման նրա լայնաքիթ կոշիկները, ամեն ինչ, մինչև իսկ պուդրան, որը կեղծամի հյուսակներից կիսաշրջանաձև թափվել էր նրա կորացած մեջքի վրա, ի հայտ էր բերում առաքելական բնավորություն, արտահայտում էր քրիստոնեական գթություն, անձնազոհություն, որ հասնում էր այնտեղ, որ մարդը հիվանդների հանդեպ տածած սիրուց վիստ ու տրիկտրակ էր խաղում նրանց հետ և միշտ տանում նրանց փողը:

— Պարոն մարկիզ,— ասաց նա Ռաֆայելի հետ երկար խոսելուց հետո,— ես հիմա կարող եմ փարատել ձեր տխրությունը: Այժմ ինձ բավական հայտնի է ձեր կազմվածքը, և ես հաստատապես կարող եմ ասել, որ Փարիզի մեծատաղանդ բժիշկները սխալվել են ձեր հիվանդության բնույթի վերաբերյալ: Եթե դուք, պարոն մարկիզ, արկածի զոհ չդառնաք, կարող եք Մաթուսաղայի չափ երկար ապրել: Ձեր թոքերը դարբնոցի փուքսերի պես զորեղ են, իսկ ձեր ստամոքսը ետ չի մնում ջայլամի ստամոքսից. սակայն եթե դուք մնաք լեռնային կլիմայի տակ, ապա շուտով սառը հողը մտնելու վտանգին կենթարկվեք: Պարոն մարկիզ, ես ձեզ կհասկացնեմ երկու խոսքով: Քիմիան ապացուցել է, որ մարդկային շնչառությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այրում, որի ուժը կախված է յուրաքանչյուր անհատին հատուկ օրգանիզմում կուտակված այրելի նյութերի ճնշումից կամ նոսրացումից: Ձեզ մոտ այրելի նյութը առատ է. դուք, եթե կարելի է այսպես արտահայտվել, գերթթվածնյալ եք, որովհետև դուք ունեք մեծ կրքերի համար ծնված մարդու կրակոտ խառնվածք: Շնչելով սուր և մաքուր օդը, որ թուլակազմ մարդկանց մոտ արագացնում է կենսական պրոցեսները, դուք ավելի եք նպաստում այրմանը, որ արդեն շատ արագ է կատարվում ձեր մեջ: Հետևաբար, ձեր գոյության պայմաններից մեկը հովիտների և գոմերի թանձր մթնոլորտն է: Այո, մտային աշխատանքով հյուծված մարդու համար կենսարար օդը կարելի է գտնել Գերմանիայի պարարտ արոտներում, Բադեն-Բադենում, Տեպլիցում: Եթե Անգլիան ձեզ չի վախեցնում, ապա նրա մառախլապատ օդը կհանգստացնի ձեր ներքին հրայրքը, բայց մեր բուժավայրը, որ հազար ոտնաչափ բարձր է Միջերկրական ծովի մակերեսից, վնասակար է ձեզ համար: Այս է իմ խորհուրդը,— ասաց նա, համեստ տեսք ընդունելով,— ես այս խորհուրդն եմ տալիս, թեև դա դեմ է մեր շահերին, քանի որ եթե դուք կատարեք այն, մեզ կվշտացնեք ձեր մեկնումով:

Առանց այս վերջին բառերի, Ռաֆայելը պիտի խաբվեր քաղցրալեզու բժշկի կեղծ բարեհոգությունից, բայց նա խորագետ էր և բժշկի տոնից, շարժումներից ու նայվածքից, որոնք ուղեկցեցին այդ ծաղրական խոսքին, գուշակեց, որ այդ մարդը կատարում է զվարթ հիվանդների հավաքախմբից ստացած հանձնարարությունը: Այդ ծաղրական դեմքերով դատարկապորտները, այդ ձանձրացած պառավները, շրջմոլիկ անգլիացիները, իրենց ամուսիններից փախած և իրենց հոմանիների հետ հանքային ջրերը եկած պճնամոլ կանայք մտածում էին մի միջոց բուժավայրից արտաքսելու խեղճ, թույլ, վտիտ, ոգեվար մի մարդու, որ, ըստ երևույթին, անընդունակ է տոկալու մշտական հալածանքներին: Այդ խարդավանքի մեջ ինչ-որ զվարճալի բան գտնելով իր համար, Ռաֆայելը ընդունեց մարտահրավերը:

— Որպեսզի ձեզ չվշտացնեմ իմ մեկնումով, ես կջանամ օգտվել ձեր խորհուրդից, շարունակելով մնալ այստեղ,— հայտարարեց նա բժշկին:— Վաղվանից ես կառուցել կտամ մի տուն, որտեղ օդը կլինի այնպես, ինչպես դուք եք պատվիրում ինձ համար:

Հասկանալով Ռաֆայելի շրթների վրա խաղացող դառն ժպիտը, բժիշկը բան չգտավ ասելու և բարվոք համարեց հրաժեշտ տալ:

Բուրժե լիճը լեռների մեջ ընկած մի վիթխարի բաժակ է սղոցաձև բերանով, բաժակ, որի մեջ Միջերկրական ծովից յոթ-ութ հարյուր ոտնաչափ բարձրության վրա ջրի կաթիլը շողում է այնպիսի կապույտով, որպիսին չկա ամբողջ աշխարհում: Կատվի Ատամի բարձունքից լիճը երևում է ինչպես վայր ընկած փիրուզ: Ջրի այդ հրաշալի կաթիլն ունի ինը մղոն շրջանակ և որոշ տեղերում մոտ հինգ հարյուր ոտնաչափ խորություն: Գտնվել մակույկի մեջ, ջրային հարթության վրա, պայծառ երկնքի տակ և լսել միայն թիերի ճողփյունը, հորիզոնում տեսնել միայն ամպածրար լեռներ, զմայլվել ֆրանսիական Մորիենի պսպղուն ձյուներով, հերթով դիտել պտերների թավիշով պատած գրանիտե ժայռերը կամ գաճաճ թփուտներով ծածկված ծիծղուն բլուրները, մի կողմից տեսնել փարթամ բնությունը, մյուս կողմից՝ անապատը (ասես աղքատը եկել է հարուստի սեղանին) — այս ներդաշնակություններն ու այս հակադրությունները կազմում են մի տեսարան, որտեղ ամեն ինչ մեծ և ամեն ինչ փոքր է: Լեռնաստաններում առանձնահատուկ են տեսողության և հեռապատկերի պայմանները. հարյուր ոտնաչափ բարձրություն ունեցող եղևնին եղեգ է երևում, լայն հովիտները նեղ կածաններ են: Այդ լիճը միակ վայրն է, ուր սիրտը կարող է սրտի բացվել: Այստեղ կարելի է խոկալ և սիրել: Ոչ մի տեղ դուք չեք հանդիպի այսպիսի զմայլելի ներդաշնակության ջրի և երկնքի, լեռների և երկրի միջև: Այստեղ սպեղանիներ կան կյանքի ամեն տեսակ անդոհների համար: Այս վայրը պահում է վշտերի գաղտնիքը, ամոքում, թեթևացնում է կսկիծները, սիրույն հաղորդում է ինչ-որ լրջություն, երկյուղածություն, որից կիրքը դառնում է ավելի խոր, ավելի մաքուր և համբույրը դառնում է ավելի վսեմ: Բայց սա հատկապես հիշատակների լիճ է. նա հուշերը ներկում է իր ալիքների գույնով, իսկ նրա ալիքները հայելի են, ուր ամեն ինչ ցոլանում է: Ռաֆայելը իր ցավի բեռը կտաներ միայն այս գեղեցիկ բնության մեջ, միայն այստեղ նա կարող էր լինել անհոգ, անտենչ և երազուն: Բժշկի այցելությունից հետո նա դուրս եկավ զբոսնելու և մակույկավարին հրամայեց իրեն տանել դեպի ամայի ելուստը գեղատեսիլ մի բլրան, որի մյուս լանջին գտնվում է Սենտ-Իննոսան գյուղակը: Այդ բարձր հրվանդանից աչքը ընդգրկում է և՛ Բյուժեի լեռները, որոնց ստորոտով է հոսում Ռոնը, և՛ լճի հատակը: Բայց Ռաֆայելը հատկապես սիրում էր այդտեղից դիտել հանդիպակաց ափը, Օտ-Կոմբի տրտմաշուք մենաստանը, սարդինական թագավորների այդ գերեզմանոցը[168], որը հանգչում է լեռնալանջերի ստորոտին, ինչպես իրենց ուղևորությունն ավարտած ուխտավորներ: Հանկարծ թիերի հավասար, համաչափ և վանականների սաղմոսերգության նման միալար հնչող մի ճողփյուն խռովեց բնության լռությունը: Զարմացած, որ զբոսնողներ կան սովորաբար ամայի լճի այդ մասում, Ռաֆայելը, առանց դուրս գալու իր մտորումներից, մի հայացք նետեց մակույկի մեջ նստած անձանց վրա և խելի վրա տեսավ այն տարեց տիկնոջը, որ երեկ այնքան բրտորեն էր խոսել իր հետ: Երբ մակույկը անցավ Ռաֆայելի մոտով, վերջինիս բարևեց միայն այդ տիկնոջ նաժիշտը, լավ ընտանիքից սերած մի խեղճ աղջիկ, որին Ռաֆայելը կարծես առաջին անգամ էր տեսնում: Մակույկը ծածկվեց հրվանդանի ետև, և մի

---

[168] **Սարդինական թագավորների գերեզմանոցը** — 1720 թվին կազմվեց Սարդինական թագավորությունը, որի կազմի մեջ մտնում էին Սավոյան, Պիեմոնտը և Սարդինիան: 1870 թվին Տուրինի դաշնագրով Սավոյան անցավ Ֆրանսիային: Բուրժե լիճը, որ նկարագրում է Բալզակը, գտնվում է Սավոյայում:

քանի որպէ անց Ռաֆայելը արդեն մոռացել էր տիկնանց, երբ հանկարծ իր մոտ լսեց շրջազգեստի շրշյուն և թեթև ոտնաձայն: Ետ նայելով, նա տեսավ նաժիշտին. նրա շփոթված դեմքից Ռաֆայելը գուշակեց, որ նա խոսելիք ունի իր հետ և մոտեցավ նրան: Երեսնամյա, բարձրահասակ և բարակ, չոր և պաղ աղջիկը, ինչպես բոլոր պառավ օրիորդները, շփոթվել էր նրանից, որ իր աչքերի արտահայտությունը չէր համապատասխանում իր վարանոտ, դեղնկոտ, կթոտ քայլվածքին: Պառավ և միաժամանակ ջահել, նա իրեն պահում էր արժանապատվությամբ, հասկանալ տալով, որ ինքը բարձր է գնահատում իր արժանիքներն ու կատարելությունները: Բացի դրանից, շարժումները միանձնուհու շարժումների պես զգույշ էին, ինչպես այն կանանց մոտ, որոնք, չթերանալու համար իրենց սիրո կոչման մեջ, իրենց վրա են փոխադրում իրենց սրտի բովանդակ գորովը:

— Պարոն, ձեր կյանքը վտանգի մեջ է, այլևս մի մտնեք ջրաբուժարանի սրահը,— ասաց նա Ռաֆայելին և իսկույն ետ քաշվեց, ասես արդեն արատավորել էր իր պատիվը:

— Օրիորդ, խնդրում եմ պարզ ասացեք, քանի որ դուք բարեհաճել եք այստեղ գալ,— պատասխանեց Վալանտենը ժպիտով:

— Ա՜հ, առանց զորավոր պատճառի ես չէի համարձակվի իմ վրա հրավիրել կոմսուհու բարկությունը, որովհետև եթե նա իմանա, որ ես ձեզ նախազգուշացրել եմ…

— Իսկ ո՞վ կարող է նրան պատմել,— գոչեց Ռաֆայելը:

— Այդ ճիշտ է,— պատասխանեց տարեց օրիորդը, աչքերն արագ-արագ թարթելով, ինչպես բուն արևին:— Բայց մտածեցեք ձեր մասին,— ավելացրեց նա,— երիտասարդները, որոնք ուզում են ձեզ վտարել այստեղից, մտադիր են ձեզ մենամարտի հրավիրել և ձեզ ստիպել իրենց հետ կռվելու:

Հեռաստանում լսվեց տարեց տիկնոջ ձայնը:

— Օրիորդ, շնորհակալ եմ ձեզանից. . . — սկսեց մարկիզը:

Բայց նրա հովանավորուհին արդեն չքացել էր, լսելով ձայնն իր տիրուհու, որ նորից էր կանչում ինչ-որ տեղ լեռներում:

«Խե՜ղճ աղջիկ: Դժբախտ էակները միշտ հասկանում և օգնում են մեկը մյուսին»,— մտածեց Ռաֆայելը և նստեց ծառի տակ:

Բոլոր գիտությունների բանալին անվիճելիորեն հանդիսանում է հարցական նշանը: Մեծ գյուտերի մեծ մասը մենք պարտական ենք ինչպե՞ս հարցին: Կյանքի իմաստությունը, թերևս, կայանում է նրանում, որ մարդ ամեն դեպքում հարցնի՝ ինչո՞ւ: Բայց, մյուս կողմից, ամեն ինչ նախատեսելու խնամյալ սովորությունը խորտակում է մեր պատրանքները: Այսպես և Ռաֆայելը տարեց օրիորդի բարի արարքը առանց կանխամտածության դարձնելով իր թարթափուն մտքերի առարկա, սաստիկ դառնություն զգաց:

«Եթե ինձ սիրահարվել է մի նաժիշտ, այդտեղ ոչ մի անսովոր բան չկա,— մտածեց Ռաֆայելը,— ես քսանյոթ տարեկան եմ, ունեմ տիտղոս, և երկու հարյուր հազար լիվր եկամուտ: Բայց որ նրա տիրուհին, որ ջրավախության մեջ ետ չի մնում կատուներից, մակույկով նրան զբոսանքի է բերել ինձ մոտ, ահա այդ է տարօրինակը, ահա այդ է

զարմանալին: Երկու կանայք եկել են Սավոյա, որպեսզի արջամուկերի պես քնեն և կեսօրին զարթնելով հարցնեն, թե արևն արդեն ծագե՞լ է, իսկ այսօր դեռ ժամը ութը չեղած վեր են կացել և եկել են իմ ետևից»:

Տարեց օրիորդը իր քառասնամյա միամտությամբ Ռաֆայելի աչքերին շուտով դարձավ ևս մի տարատեսակ նենգ և կռվասեր վերնախավի, դարձավ մարմնացումը ճղճիմ խորամանկության, անճարակ նենգության, մանր վեճերի մարմաջի, ինչպիսին հատուկ է կանանց և քահանաներին: Մենամարտը մտացածի՞ն բան էր, թե՞ ուզում էին նրան վախեցնել: Ճանճերի պես աներես և նեղիչ այդ փցուն հոգիները կարողացել էին վիրավորել նրա ինքնասիրությունը, արթնացնել նրա հպարտությունը, գրգռել նրա հետաքրքրությունը: Չցանկանալով ո՛չ խաբվել, ո՛չ երկչոտ համարվել և, գուցե, զվարճանալով այդ փոքրիկ դրամայով, Ռաֆայելը հենց նույն երեկոյան սրահ եկավ: Հենված բուխերիկի մարմարե հարթակին, նա կանգնել էր գլխավոր սրահում, ջանալով ոչ մի առիթ չտալ վեճի, բայց նա ուշադիր նայում էր դեմքերին և արդեն իր աչալրջությամբ որոշ չափով մարտահրավեր էր նետում հասարակայնությանը: Նա հանգիստ սպասում էր, որ հակառակորդները իրենք մոտենային իրեն, ինչպես մի դոգ, որ, վստահ իր ուժին, չի հաչում վայրապար: Երեկոյի վերջում նա ճեմեց խաղասրահում, ելքի դռնից մինչև բիլիարդանոցի դուռը, ժամանակ առ ժամանակ մի հայացք նետելով այնտեղ հավաքված երիտասարդ խաղացողների վրա: Քիչ հետո նրանցից մեկը նրա անունը տվեց: Թեպետ նրանք շշուկով էին խոսում, Ռաֆայելը հեշտությամբ գուշակեց, որ ինքը ինչ-որ վեճի առարկա է դարձել, և, ի վերջո, որսաց բարձրաձայն արտասանված մի քանի խոսքեր:

— Դո՞ւ:

— Այո, ես:

— Կասկածում եմ:

— Գրազ գա՞նք:

— Դեհ, ինչ կա որ:

Երբ Ռաֆայելը, որ անհամբեր ուզում էր իմանալ, թե ինչի մասին է գրազը, առաջ եկավ, որպեսզի լսի խոսակցությունը, բիլիարդանոցից դուրս եկավ պարթևահասակ, թիկնեղ, համակրելի տեսքով մի երիտասարդ, որ, սակայն, ուներ սևեռուն ու լկտի նայվածքը այն մարդկանց, որոնք հենվում են ինչ-որ նյութական ուժի վրա:

— Պարոն,— հանդարտ տոնով ասաց երիտասարդը, դիմելով Ռաֆայելին,— ինձ հանձնարարված է ձեզ հաղորդել մի բան, որի մասին դուք երևի չգիտեք. ձեր դեմքը և ձեր անձը այստեղ տհաճություն են պատճառում բոլորին, մասնավորապես ինձ. . . Դուք բավականաչափ բարեկիրթ եք, որպեսզի ձեզ զոհաբերեք ընդհանուր բարիքի համար, ուստի ես ձեզ խնդրում եմ այլևս չերևաք ընդհանուր սրահում:

— Պարոն, այդպես կատակում էին Կայսրության ժամանակ շատ զորանոցներում, իսկ հիմա դա դարձել է խիստ անկրթություն,— պատասխանեց Ռաֆայելը սառնությամբ:

— Ես չեմ կատակում, — ասաց երիտասարդը։— Կրկնում եմ՝ ձեր առողջությունը կարող է տուժել այստեղ մնալուց սրահի շոգը, հեղձուցիչ օդը, վառ լուսավորությունը, բազմամարդ հասարակությունը վնասակար են ձեր հիվանդության համար։

— Դուք որտե՞ղ եք սովորել բժշկությունը,— հարցրեց Ռաֆայելը։

— Պարոն, թեկնածուի աստիճան ես ստացել եմ Լբպաժի հրաձգարանում, Փարիզում, իսկ դոկտորի աստիճան՝ սրախաղության թագավոր Սերիզիի մոտ։

— Ձեզ մնում է ստանալ վերջին աստիճանը,— վրա բերեց Ռաֆայելը։ — Ուսումնասիրեցեք քաղաքավարության կանոնները, և դուք կդառնաք կատարյալ կիրթ մարդ։

Այդ միջոցին երիտասարդները, ոմանք լռին, ոմանք ժպտուն, դուրս եկան բիլիարդանոցից. ուրիշներ նետեցին քարտերը և սկսեցին ուշադիր լսել բանավեճը, որ ուրախացնում էր նրանց սրտերը։ Միայնակ այդ թշնամական միջավայրում, Ռաֆայելը ջանաց իր պաղարյունությունը պահել և իր կողմից ոչ մի անվայել բան թույլ չտալ, բայց երբ ոսոխը նրան վիրավորանք հասցրեց շատ խիստ և սրամիտ ձևով, Ռաֆայելը սառնասրտորեն պատասխանեց.

— Պարոն, մեր ժամանակ ընդունված չէ ապտակել, բայց ես չգիտեմ, թե ինչ բառով նշավակեմ ձեր ստոր վարմունքը։

— Բավական է, բավական է։ Վաղը կբացատրվեք,— ասացին երիտասարդները և կանգնեցին երկու հակառակորդների միջև։

Վիրավորող կողմը ճանաչվեց Ռաֆայելը։ Հանդիպումը նշանակվել էր Բորդո դղյակի մոտ, դալարազգյաց մի զառիթափի վրա, ոչ հեռու նոր բացված ճանապարհից, որով հաղթողը կարող էր Լիոն գնալ։ Ռաֆայելը կամ պետք է պառկեր անկողնում, կամ պետք է հեռանար Էքսի ջրերից։ Հասարակությունը ցնծում էր։ Հաջորդ օրը առավոտյան ժամը ութին Ռաֆայելի հակառակորդը երկու վկաների և վիրաբույժի հետ առաջինը եկավ հանդիպման վայրը։

— Այստեղ շատ լավ է։ Հիանալի եղանակ է մենամարտի համար,— ասաց նա զվարթորեն, նայելով կապույտ երկնակամարին, լճին և ժայռերին. բայց այդ նայվածքի մեջ չէր նկատվում ոչ կասկածանք, ոչ տխրություն։— Եթե ես նրա ուսը խոցեմ, ապա հավանաբար նրան մի ամիս անկողին կպառկեցնեմ, այնպես չէ՞, բժիշկ,— ավելացրեց նա։

— Առնվազն մի ամիս,— պատասխանեց վիրաբույժը։— Միայն թե հանգիստ թողեք այդ ուռենին, այլապես կհոգնեցնեք ձեր ձեռքը և չեք կարողանա պետք եղածին պես ղեկավարել ձեր զենքը։ Վիրավորելու փոխարեն դուք կարող եք սպանել նրան։

Կառքի ձայն լսվեց։

— Նա՛ է,— ասացին վկաները և շուտով տեսան չորս ձիերի լծված մի կառք, որ վարում էին երկու կառապաններ։

— Ի՜նչ տարօրինակ մարդ է,— բացականչեց Ռաֆայելի հակառակորդը։— Փոստակառքով է գալիս սպանվելու…

Մենամարտի մեջ, ինչպես խաղի ժամանակ, այս կամ այն ելքով անմիջականորեն շահագրգռված մասնակիցների երևակայության վրա ազդում է ամեն մի աննշան բան, ուստի

և երիտասարդը որոշ անհանգստությամբ սպասեց, քանի կառքը չէր եկել և կանգնել ճանապարհի վրա: Առաջինը կառքից ծանրորեն իջավ ծերունի Հովնաթանը և Ռաֆայելին օգնեց դուրս գալու. ծերունին նրան պահեց իր թույլ թևերով և, ինչպես սիրահարը իր սիրուհու հանդեպ, մանրախնդիր հոգածություն ցուցաբերեց նրա հանդեպ: Երկուսով առաջացան շավիղով, որը մեծ ճանապարհից տանում էր մինչև մենամարտի համար նշանակված վայրը, և, աչքից ծածկվելով, քիչ հետո նորից երևացին. նրանք գնում էին համրաքայլ: Այդ արտասովոր տեսարանի չորս հանդիսատեսները խորապես հուզվեցին, տեսնելով ծառայի բազուկին հենված Ռաֆայելի կերպարանքը. նիհար, դժգույն, նա քայլում էր լուռ, գլխահակ, հոդացավ ունեցողի պես: Կարելի էր կարծել, որ դրանք երկու ծերունիներ են, հավասարապես քայքայված՝ մեկը ժամանակից, մյուսը մտածմունքից. առաջինի տարիքը նշում էին սպիտակ մազերը, երիտասարդը այլևս տարիք չուներ:

— Պարոն, ես գիշերը չեմ քնել,— ասաց Ռաֆայելը իր հակառակորդին:

Ռաֆայելի սառն խոսքը և ահեղ նայվածքը սարսուռ պատճառեցին մենամարտի բուն հրահրողին, որ գիտակցեց իր հանցանքը և ամաչեց իր վարմունքի համար: Ռաֆայելի կեցվածքի, ձայնի, շարժումների մեջ արտասովոր մի բան կար: Նա լռեց, և ոչ ոք չհամարձակվեց խզել լռությունը: Անհանգստությունն ու անհամբերությունը հասել էին ծայր աստիճանի:

— Դուք դեռ ժամանակ ունեք ինձանից ներողություն խնդրելու,— հարեց Ռաֆայելը,— ներողություն խնդրեցեք, պարոն, եթե ոչ կսպանվեք: Դուք հույսը դնում եք ձեր ճարպկության վրա և չեք հրաժարվում մենամարտից, որի մեջ կարծում եք թե գերազանցություն ունեք: Բայց, պարոն, ես վեհանձնորեն զգուշացնում եմ ձեզ, որ գերազանցությունն իմ կողմն է: Ես ունեմ ահարկու մի զորություն: Բավական է ես ուզենամ, և ձեր ճարպկությունը կչքանա, ձեր տեսողությունը կմթագնի, ձեր ձեռքը կդողա և ձեր սիրտը կխփի. ավելին, դուք կսպանվեք: Ես չեմ կամենում գործադրել իմ ուժը, դա ինձ շատ թանկ կնստի: Դա մահացու կլինի ոչ միայն ձեզ համար: Բայց եթե դուք հրաժարվեք ներողություն խնդրել ինձանից, ապա չնայած մարդասպանության ձեր սովորության, ձեր գնդակը կթռչի այս ջրվեժի մեջ, իսկ իմը, թեկուզ նշան էլ չբռնեմ, ուղղակի կխփի ձեր սրտին:

Խուլ մի քրթմնջյուն ընդհատեց Ռաֆայելին: Հակառակորդի հետ խոսելիս Ռաֆայելը նրա վրա էր հառել սևեռաբիբ, անտանելիորեն պայծառ հայացքը. նա շտկվել էր, նրա դեմքը դարձել էր անխռով, ինչպես վտանգավոր խելագարի մոտ:

— Թող նա լռի,— ասաց երիտասարդը իր վկաներից մեկին,— սիրտս գալարվում է նրա ձայնից:

— Պարո՛ն, բավակա՛ն է: Դուք իզուր եք ճառախոսում,— գոչեցին վիրաբույժն ու վկաները Ռաֆայելին:

— Պարոններ, ես կատարեցի իմ պարտքը: Երիտասարդը հայտնե՞լ է իր վերջին կամքը:

— Բավակա՛ն է, բավակա՛ն է:

Ռաֆայելը անշարժ կանգնել էր, ոչ մի վայրկյան աչքից չկորցնելով իր հակառակորդին, Շառլին, որ, ինչպես թռչունը օձի հայացքի տակ, քարացել էր գրեթե կախարդական մի ուժով.

հարկադրված ենթարկվելու այդ սպանիչ հայացքին, նա հեռացնում էր աչքերը, բայց նորից էր ակամա ընկնում նրա զորության ներքո:

— Ջուր տվեք, ծարավ եմ,— ասաց նա վկային:

— Դու վախենո՞ւմ ես:

— Այո,— պատասխանեց նա:— Այդ մարդու աչքերն ինձ այրում ու կախարդում են:

— Ուզո՞ւմ ես ներում խնդրել նրանից:

— Ուշ է:

Հակառակորդներին կանգնեցրին իրարից տասնհինգ քայլ հեռավորության վրա: Յուրաքանչյուրն իր մոտ ուներ երկու ատրճանակ, և, մենամարտի պայմանի համաձայն, հակառակորդները պետք է կրակեին երկու անգամ, ուզած ժամանակ, բայց միայն վկաների տված ազդանշանից հետո:

— Ի՞նչ ես անում, Շառլ,— գոչեց Ռաֆայելի հակառակորդի երիտասարդ վկան:— Դու գնդակը դնում ես, առանց վառոդ լցնելու:

— Ես մեռած եմ,— հեծելով պատասխանեց Շառլը:— Դուք ինձ դրել եք արևի դիմաց…

— Արևը ձեր ետևում է,— լուրջ և հանդիսավոր տոնով ասաց Ռաֆայելը և դանդաղորեն լցրեց ատրճանակը, առանց ուշադրություն դարձնելու ազդանշանին, որ արդեն տրվել էր, ոչ էլ նշանին, որ հակառակորդը բռնել էր իր վրա:

Այդ գերբնական վստահության մեջ ահավոր մի բան կար, որ զգացին նույնիսկ կառավարները, որոնց այստեղ էր բերել դաժան հետաքրքրությունը: Խաղալով իր զորության հետ կամ, գուցե, ուզելով փորձել այն, Ռաֆայելը խոսում էր Հովնաթանի հետ և նրան էր նայում իր ոսոխի կրակոցի տակ: Շառլի գնդակը ջարդեց ուռենու մի ճյուղը և ոստոստելով ընկավ ջրի մեջ: Ռաֆայելը, բախտի բերմամբ կրակելով, խփեց հակառակորդի սրտին և, առանց ուշադրություն դարձնելու երիտասարդի դիտապաստ ընկնելուն, իսկույն դուրս հանեց շագրենի կաշին, որպեսզի ստուգեր, թե ինչքան էր իրեն նստել մի մարդու կյանքը: Թալիսմանը դարձել էր կաղնու տերևիկի չափ:

— Դե՛հ, ի՞նչ եք նայում, կառապաններ: Ճանապարհ ընկեք,— ասաց Ռաֆայելը:

Նույն երեկոյան նա Ֆրանսիա ժամանեց և Օվեռնի ճանապարհով գնաց Մոն-Դորի հանքային ջրերը: Ճանապարհին հանկարծ նրա մեջ ծագեց մի միտք, մեկը այն մտքերից, որոնք ընկնում են հոգու մեջ, ինչպես արևը հոծ ամպերի միջով իր ճաճանչն է նետում մթին հովիտը: Անողոք իմաստության տխուր շողե՛ր: Նրանք լուսավորում են կատարված դեպքերը, երևան են հանում մեր սխալները և մեզ աններելի կացուցանում մեր առաջ: Նա հանկարծ մտածեց, որ զորության ձեռքբերումը, ինչքան էլ նա անսահման լինի, դեռ բավական չէ իմանալու համար, թե ինչպես պետք է օգտագործել այն: Գայիսոնը երեխայի համար խաղալիք է, Ռիշելյեի համար կացին է. իսկ Նապոլեոնի համար լծակ է, որի միջոցով կարելի է շուռ տալ աշխարհը: Իշխանությունը մեզ թողնում է այնպես, ինչպես ենք մենք ի բնե, և մեծացնում է միայն մեծերին: Ռաֆայելը կարող էր ամեն ինչ անել, բայց ոչինչ չէր արել:

Մոն-Դորի ջրաբուժարանում միշտ նույն հասարակությունը փախչում էր նրանից անփոփոխ փութկոտությամբ, ինչպես կենդանիները հեռու են փախչում ընկած կենդանուց, հեռվից առնելով մահվան հոտը: Այդ ատելությունը փոխադարձ էր: Վերջին դեպքը նրան ներշնչել էր խոր թշնամություն հասարակության նկատմամբ: Ուստի Ռաֆայելի առաջին հոգսը եղավ մի մենավոր ապաստան գտնել ջրաբուժարանի շրջակայքում: Նա բնազդաբար պահանջ էր զգում մերձենալու բնությանը, անկեղծ զգացումներին, այն բուսական կյանքին, որին մենք այնքան հաճույքով անձնատուր ենք լինում դաշտերում: Իր գալու վաղորդայնին նա ոչ առանց դժվարության մագլցեց Սանսիի գագաթը, դիտեց լեռնային հովիտները, անհայտ լճերը, Մոն-Դորի գյուղական խրճիթները, որոնց խիստ և վայրի տեսքը հիմա սկսում են հրապուրել մեր նկարիչների վրձինները: Երբեմն այստեղ հանդիպում են վեհությամբ և թարմությամբ առլցուն զմայլելի տեսարաններ, որոնք սուր հակադրություն են կազմում այդ տխրատեսիլ լեռների մռայլ տեսարանների հետ: Գյուղից գրեթե կես մղոն հեռու Ռաֆայելը իրեն գտավ այդպիսի մի վայրում, ուր երեխայի պես ծիծաղկոտ և զվարթ բնությունը ասես դիտմամբ թաքցրել էր իր լավագույն գանձերը: Այստեղ, այս գեղանկար և ակնապարար առանձնավայրում մտածեց հաստատվել Ռաֆայելը: Այստեղ կարելի էր ապրել հանգիստ, բուսական կյանքով — ծառի վրա պտուղի կյանքով:

Պատկերացրեք շուռ տված մի կոն, գրանիտե մի կոն, վերևի մասում բավական լայն,— մի տեսակ թաս՝ արտառոց կերպով կտրատված եզրերով. այստեղ՝ ուղիղ, հարթ, բուսականությունից զուրկ կապուտակ մակերես, որի վրայով, ինչպես հայելու վրայով, սահում են արևի ճառագայթները. այնտեղ՝ հեղեղատներով հատված ժայռեր, ուրկից կախվում են լավայի զանգվածներ, որոնց անկումը կամաց-կամաց նախապատրաստվում է անձրևային ջրերով, ժայռեր, որոնք հաճախ պսակվում են հողմահարվող թփուտներով. տեղ-տեղ մթամած և զովասուն կիրճեր, ուր ցցված են մայրիների պես բարձրաբերձ կասկենիների կույտեր, ուր դեղնավուն լանջերը փորված են քարանձավներով, որոնք բաց են անում մորմենիներով, ծաղիկներով և կանաչ շերտով եզերված իրենց սև ու խոր երախները: Այդ թասի խորքում, որ հավանաբար եղել է երբեմնի խառնարանը մի հրաբուխի, գտնվում է վճիտ, աղամանդաշող ջրով մի լճակ: Ուռենիներով, թրաշուշաններով, հացիներով և բազում ծաղկուն ու բուրավետ բույսերով՝ եզերված այդ գրանիտե ափերով խոր ջրավազանի շուրջը տարածվել էր անգլիական մարգասեզի պես կանաչ մի մարգագետին. նրա նուրբ ու սիրուն խոտերը ոռոգվում էին ժայռերի ծերպերից հոսող ջրերով և պարարտացվում բուսահողերով, որոնց մրրիկն էր անդադար բերում բարձրաբերձ արտևաններից: Լճակը, որի ափերը անհավասար ձևով էին կտրտված, գրավում էր մոտավորապես երեք արտավար տարածություն: Ժայռերն այնքան էին մոտենում ջրին, որ մարգագետինը հավանաբար մեկ-երկու արտավարից ավելի լայնություն չուներ, իսկ մի քանի տեղերում հազիվ էր տարածություն մնում կովերի անցման համար: Որոշ բարձրության վրա բուսականությունը չքանում էր: Երկնքի վրա գրանիտե ժայռերը գծագրվում էին ամենատարօրինակ ձևերով և ստանում էին անորոշ գույներ, որոնք լեռնագագաթներին որոշ նմանություն էին տալիս ամպերի հետ: Լերկ, ապալեր ժայռերը հովտի ակնապարար տեսարանին հակադրում էին ամայության և ամլության վայրի պատկերներ — փլուզմամբ սպառնացող բունծեր, այնպիսի քմահաճ ձևերով ապառաժներ, որ նրանցից մեկը կոչվել է Կապուցին, այնքան նա նման է վանականի: Երբեմն արևի մի ճառագայթ լուսավորում էր այդ սուր ասեղները, այդ ահագին քարաժայռերը, այդ բարձրադիր քարանձավները, և, լուսատուի ընթացքի ու օդի քմահաճույքների համաձայն, նրանք մերթ ստանում էին ոսկեգույն երանգներ, մերթ ներկվում

էին ծիրանի գույնով, մերթ դառնում էին վառ վարդագույն, մերթ մոխրագույն, գորշագույն: Լեռների բարձունքները հարափոփոխ մի տեսարան էին ներկայացնում, անընդհատ փոխելով գույները, ծիածանի պես շողալով, ինչպես աղավնու պարանոցը: Երբեմն, արշալույսի կամ վերջալույսի ժամանակ, արևի վառ շողը, թափանցելով կարծես տապարով կտրված լավայի երկու շերտերի միջև, հասնում էր այդ հրաշալի կողովի մինչև խորքը և խաղում էր լճակի ջրերի վրա, նման այն ոսկեգույն շողին, որ փեղկի անցքի միջով թափանցում է միջօրեի հանգստի պահին պինդ փակված իսպանական տան սենյակը: Երբ արևը բարձրանում էր հնամենի խառնարանի վերևում, որ ջրով էր լցված ինչ-որ անդրջրհեղեղյան հեղաշրջման հետևանքով, նրա քարքարոտ ափերը տաքանում էին, հանգած հրաբուխը ասես շիկանում էր, ջերմությունից ավելի արագ էին ծլում սերմերը, բեղմնավորվում էին բույսերը, գունազարդվում ծաղիկները և հասունանում պտուղները այդ խուլ, անհայտ անկյունում:

Երբ Ռաֆայելը այստեղ հասավ, նկատեց, որ մարգագետնի վրա կովեր են արածում մի քանի քայլ առաջանալով դեպի լճակը, նա հողի լայն շերտի վրա տեսավ գրանիտից կառուցված և փայտով ծածկված համեստ մի տուն: Այդ անսովոր հյուղակի կտուրը, ներդաշնակելով տեղանքի հետ, պատած էր մամուռներով, բաղեղներով և ծաղիկներով, մատնելով կառույցի խոր հնությունը: Ծխի նուրբ հոսանքը, որից արդեն չէին վախենում թռչունները, գալարաձև բարձրանում էր քայքայված ծխնելույզից: Դռան մոտ դրված էր մի մեծ նստարան ծաղկազարդ և քաղցրաբույր այծտերևուկների երկու խոշոր թփերի միջև: Պատը գրեթե չէր երևում որթատունկի ճյուղերի, վարդերի ու հասմիկների դրասանգների միջով, որոնք փարթամորեն աճել էին ազատության մեջ: Ըստ երևույթին, բնակիչները անտարբեր էին դեպի այդ գեղջկական զարդարանքը և թողել էին, որ բնությունն ուռճանա իր կենսառույգ և կուսական գեղեցկությամբ: Հաղարջենու վրա կախված սպիտակեղենը չորանում էր արևին: Կատուն պպզել էր կանեփազտիչ գործիքի վրա, որի տակ նոր մաքրված մի պղնձաման էր դրված գետնախնձորի կեղևների մեջ: Տան մյուս կողմում Ռաֆայելը նկատեց չոր փշաթփերից կազմված մի ցանկապատ, որ հավանաբար բարձրացված էր այն նպատակով, որպեսզի հավերը չփչացնեն այգին ու բանջարանոցը: Թվում էր, թե աշխարհն այստեղ է վերջանում: Բնակարանը նման էր այն վարպետորեն շինված թռչնաբույներին, որոնք կպչում են ժայռերին և որոնք իրենց վրա կրում են հնարագիտության և միաժամանակ անխնամության կնիքը: Դա միամիտ և բարի բնություն էր, իսկապես վայրի, բայց բանաստեղծական, որովհետև նա ծաղկել էր մեր կոկած բանաստեղծություններից հազար մղոն անդին և չէր նմանվում ոչ մի մտահղացման, այլ ծնվել էր ինքն իրեն, ինչպես դիպվածի իսկական հաղթանակ: Երբ Ռաֆայելը մոտեցավ, արևի ճառագայթներն աջ կողմից արձակվել էին գրեթե հորիզոնական, դրանից շողշողում էին բուսականության բոլոր գույները, աչքի էին զարնում լույսի և ստվերի մոգական խաղերը, գորշ-դեղին ժայռերը, տերևների բազմերանգ կանաչությունները, կապույտ, կարմիր, սպիտակ ծաղիկների զանգվածները, պատատուկ բույսերն ու նրանց զանգակիկները, թավշային մամուռը, հավամրգերի ծիրանեգույն ողկույզները և, հատկապես, լճակի վճիտ ու հարթ մակերեսը, ուր արտացոլվել էին գրանիտե լեռնակատարները, ծառերը, տունը, երկինքը: Այս զմայլելի պատկերի վրա ամեն ինչ ուներ իր փայլը, սկսած պսպղուն փայլարից մինչև մեղմ լուսաստվերի մեջ ծվարած շիկավուն խոտերի խուրձը: Ամեն ինչ աչք էր պարարում իր ներդաշնակությամբ — և՛ փայլուն ստևով պիսակավոր կովը, և՛ դյուրաբեկ ջրային ծաղիկները, որոնք ծոպերի պես եզերում էին ձորակը, որի վրա բզզում էին լազվարթ ու զմրուխտ միջատները, և ծառերի արմատները, որոնք շեկ մազերի պես պսակում էին

խճերի տձև կուրծքը: Անուշաբույր ջերմությունը, որով շնչում էին այս մենավոր ապաստանի ջրերը, ծաղիկներն ու անձավները, Ռաֆայելի մեջ առաջացրին ինչ-որ վավաշոտ զգացողություն:

Հանդիսավոր լռությունը, որ տիրել էր այդ պուրակում, որ, ամենայն հավանականությամբ, դուրս էր մնացել հարկահավաքի ցուցակից, հանկարծ խզվեց երկու շների հաչոցներով: Կովերն իրենց գլուխները շրջեցին դեպի ձորակի մուտքը, ապա իրենց խոնավ դնչերը ցույց տալով Ռաֆայելին և բթորեն նայելով նրան, շարունակեցին ճարակել խոտը: Մի այծ իր ուլիկի հետ, որոնք ասես ինչ-որ կախարդական ուժով կախված էին ժայռերի վրա, վայր ցատկեցին և կանգ առան Ռաֆայելից ոչ հեռու գրանիտե հարթակի վրա և հարցական հայացքով նայեցին նրան: Շների հաչոցների վրա տնից դուրս վազեց մի գեր մանչուկ և բերանը բաց կանգնեց, ապա երևաց ալեհեր ու միջահասակ մի ծերուկ: Այդ երկու էակներ որ ներդաշնակում էին շրջապատի տեսարանի, օդի, ծաղիկների և տան հետ: Առողջությունը հորդում էր այս փարթամ բնության մեջ, ծերությունն ու մանկությունը գեղեցիկ էին այստեղ: Մի խոսքով, կենդանի էակների այս բոլոր տիպերի մեջ զգացվում էր նախնական պարզություն, սովորական երջանկություն, որի առաջ մերկանում էին մեր փիլիսոփայական տափակ քարոզների բոլոր ստերը և սիրտը բուժվում էր արհեստական կրքերից: Ծերունին կարող էր բնատիպ ծառայել Շնեցի[169] առնական վրձինի համար. նրա թուխ, բազմակնճիռ դեմքը, հավանաբար, կոշտ էր շոշափելիս, ուղիղ քիթը, դուրս ցցված այտերը կարմիր երակներով, ինչպես որթատունկի գոսացած տերև, խիստ դիմագծերը, բոլորը ուժի նշաններ էին, թեև ուժը արդեն չքացել էր. ձեռքերը դեռևս կոշտուկավոր էին, թեև նրանք այլևս չէին աշխատում և ծածկված էին նոսր սպիտակ մազերով. նրա իրոք ազատ մարդու կեցվածքից կարելի էր երևակայել, որ նա Իտալիայում հելուզակ կդառնար անգին ազատության սիրուց: Երեխան, իսկական լեռնական, ուներ սև աչքեր, որոնցով նա կարող էր անքթիթ նայել արևին, թուխ դեմք, մուգ խռիվ մազեր: Նա կայտառ էր, վճռական, շարժումների մեջ բնական, ինչպես թռչունը. նա ցնցոտիներ էր հագել, և նրանց միջով երևում էր սպիտակ, թարմ մաշկը: Երկուսն էլ լուռ կանգնել էին կողք կողքի, դեմքի նույն արտահայտությամբ, և նրանց նայվածքը խոսում էր նրանց միատեսակ անզբաղ կյանքի կատարյալ նույնության մասին: Ծերունին յուրացրել էր երեխայի խաղերը, իսկ երեխան՝ ծերունու քմահաճույքները, երկու տեսակ թուլությունների— հանգող ուժի և ծաղկող ուժի— միջև հատուկ դաշինքով: Քիչ հետո շեմքին երևաց երեսնամյա մի կին: Նա քայլելով թել էր մանում: Նա օվեռնուհի էր. ուներ սպիտակ ատամներ, թուխ, զվարթ, պարզ դեմք, իսկական օվեռնուհու դեմք, օվեռնուհու իրան, օվեռնուհու հագնվածք ու սանրվածք, օվեռնուհու ցցուն կուրծք և օվեռնական առոգանություն, աշխատասիրություն, տգիտություն, խնայասիրություն, սրտակցություն, մի խոսքով, նա իր զավառի կատարյալ մարմնացումն էր: Նա բարևեց Ռաֆայելին. նրանք սկսեցին խոսել: Շները հանդարտվեցին, ծերունին նստեց նստարանի վրա արևին, իսկ երեխան գնաց մոր ետևից, լռությամբ լսելով և ակնապիշ նայելով օտարականին:

— Ա՛յ կին, դուք չե՞ք վախենում այստեղ ապրել:

---

[169] **Շնեց** — XIX դարի ֆրանսիացի նկարիչ:

— Ինչի՞ց վախենանք, պարոն։ Երբ մենք դուռը փակենք, էլ ո՞վ կարող է այստեղ մտնել։ Ո՛չ, մենք ոչ մի բանից չենք վախենում։ Եվ հետո,— ավելացրեց օվեռնուհին, մարկիզին հրավիրելով տան ամենամեծ սենյակը,— գողերը ի՞նչ պիտի տանեն մեզանից։

Նա ցույց տվեց ծխից սևացած պատերը, որոնց միակ զարդարանքը կազմում էին կապույտ, կարմիր և կանաչ գույներով նկարված պատկերները՝ «Վարկի մահը», «Հիսուս Քրիստոսի չարչարանքը» և «Կայսերական պահակազորի ռմբաձիգները». սենյակում կային նաև ընկուզենու փայտե մի հին մահճակալ, գալարաձև ոտներով մի սեղան, աթոռակներ, խմորի տաշտ, առաստաղից կախված խոզաճարպ, ամանով աղ, տապակ, իսկ օջախի վրա դեղնած ու ներկված գիպսե քանդակներ։ Դուրս գալով տնից, Ռաֆայելը ժայռերի մեջ նկատեց մի տղամարդ բահը ձեռքին, որ, կռացած, հետաքրքրությամբ նայում էր տան կողմը։

— Տանտերն է,— ասաց օվեռնուհին, գեղջկուհուն հատուկ ժպիտով։— Նա այնտեղ աշխատում է։

— Իսկ ծերուկը ձեր հա՞յրն է։

— Ո՛չ, ներեցեք, իմ տանտիրոջ պապն է։ Նա հարյուր երկու տարեկան է։ Դեռ վերջերս նա մեր մանչուկին ոտքով տանում էր Կլեռմոն։ Պինդ մարդ էր, իսկ հիմա միայն քնում, խմում, ուտում է։ Մանչուկի հետ զվարճանում է, երբեմն էլ փոքրիկը նրան տանում է լեռները, և նա մի կերպ գնում է։

Վալանտենը իսկույն որոշեց այս ծերունու և երեխայի հետ ապրել, նույն օդը շնչել, նույն հացն ուտել, նույն քնով քնել, նույն արյունով երակները լցնել։ Մահացողի՛ քմահաճույք։ Դառնալ այդ ժայռերին կպած խխունջ, մի քանի օր ավելի պահել իր պատյանը, անզգալի դարձնել մահը — դարձավ նրա համար կյանքի հիմնական վարքագիծը, կյանքի միակ նպատակը, կյանքի գեղեցիկ իդեալը, միակ ճշմարիտ կյանքը, իսկական կյանքը։ Խոր եսամոլական մի միտք մտավ նրա էության մեջ և նրա համար կլանեց տիեզերքը։ Նրան թվաց, թե տիեզերք այլևս գոյություն չունի, տիեզերքը կենտրոնացավ նրա մեջ։ Հիվանդի համար աշխարհն սկսվում է մահիճի սնարից և վերջանում է մահիճի ոտքին։ Այդ հովիտը դարձավ Ռաֆայելի մահիճը։

Ո՞վ կյանքում թեկուզ մի անգամ չի հետևել ժրաջան մրջյուններին, ո՞վ ծղոտ չի մտցրել միակ անցքի մեջ, որի միջով շնչում է շիկավուն խխունջը։ Ո՞վ չի դիտել փխրուն ճպուռի քմահաճ թռիչքը, չի հիացել կաղնու տերևների կարմրավուն ֆոնի վրա աչքի ընկնող անհամար վառ մազանոթներով։ Ո՞վ հաճույքով երկար ժամանակ չի դիտել անձրևի և արևի խաղերը կտուրի մուգ կղմինդրների վրա, չի դիտել ցողաշիթերը, ծաղկաթերթերը կամ ծաղկաբաժակների բազմապիսի կառուցվածքները։ Ո՞վ չի խորասուզվել անհոգ և մտամփոփ, աննպատակ և սակայն խորհրդածության առիթ տվող այդ աննյութական երազանքների մեջ։ Ո՞վ, վերջապես, երբեմն չի ապրել մանկական կյանքով, ծույլ կյանքով, վայրենու անաշխատ կյանքով։ Այսպես ապրեց Ռաֆայելը բազում օրեր, առանց հոգսերի, առանց ցանկությունների. նա նկատելիորեն կազդուրվեց, զգաց անսովոր բարելավություն, որը հանգստացրեց նրա տագնապները, մեղմացրեց նրա տանջանքները։ Նա մագլցում էր ժայռերն ի վեր և նստում էր մի բարձունքի վրա, որտեղից երևում էին անծայրածիր հեռաստանները։ Նա օրեր շարունակ այնտեղ էր մնում, ինչպես բույսը արևի տակ, ինչպես նապաստակը իր բնում։ Կամ, ընտելանալով բուսական կյանքի երևույթներին, երկնքի

փոփոխական վիճակներին, նա հետևում էր երկրային, ջրային և օդային բոլոր էակների զարգացմանը: Նա փորձում էր հաղորդակցել բնության ներքին կյանքի հետ, լիովին տոգորվել նրա կրավորական հնազանդությամբ, որպեսզի ընկներ տիրակալության տակ այն պահպանիչ օրենքի, որ ղեկավարում է բնազդական գոյերը: Նա ցանկանում էր ձերբազատվել իր բեռից: Վաղնջական ժամանակներում արդարադատությունից հետապնդված ոճրագործները փրկություն էին գտնում տաճարի հովանու տակ, այսպես Ռաֆայելը փորձեց ծածկվել կյանքի սրբարանում: Նա, ի վերջո, դարձավ բաղկացուցիչ մասը այդ ծավալուն և հզոր արգասավորության. նա վարժվեց եղանակի փոփոխություններին, եղավ ժայռերի բոլոր փապարներում, ուսումնասիրեց բոլոր բույսերի բարքերն ու սովորությունները, ճանաչեց ջրերի ծագումն ու հոսանքը, ծանոթացավ կենդանիներին. մի խոսքով, նա այնպես սերտորեն միաձուլվեց այդ շնչավորված երկրի հետ, որ որոշ չափով հասկացավ նրա հոգին և թափանցեց նրա գաղտնիքների մեջ: Բնության բոլոր թագավորությունների բազմապիսի ձևերը նրա համար հանդիսանում էին միևնույն գոյացության զարգացումները, միևնույն շարժման տարբեր բաղկացությունները, լայնարձակ շունչը անսահման մի էակի, որ գործում, մտածում, շարժվում, աճում էր և որի հետ միասին նա կամենում էր աճել, շարժվել, մտածել և գործել: Նա քմահաճորեն իր կյանքը միաձուլել էր ժայռի կյանքի հետ, նա ազգակցել էր նրա հետ: Շնորհիվ այդ խորհրդավոր պայծառամտության, երևակայական ապաքինության, նման այն բարերար մոռացության, որ բնությունը շնորհում է ինչպես ցավերի դադար, Վալանտենը այդ գեղաձիծաղ բնության մեջ բնակվելու առաջին իսկ օրերից վայելեց նոր մանկության հրճվանքները: Նա ամբողջ օրեր ընկնում էր փուչ բաների ետևից, հազար գործ էր սկսում և ոչ մեկը չէր վերջացնում, առավոտյան մոռանալով երեկվա իր ծրագրերը. հոգս չունենալով, նա երջանիկ էր և կարծում էր, որ ինքը փրկված է:

Մի օր նա մինչև կեսօր պառկել էր անկողնում. սուզվել էր այն կիսաքուն—կիսարթուն անրջանքի մեջ, որ իրականությանը տալիս է ցնորական տեսք, իսկ ցնորքներին տալիս է իրական կյանքի ցայտք. և հանկարծ, դեռ նույնիսկ չգիտակցելով որ արթնացել է, նա առաջին անգամ լսեց իր առողջության մասին տեղեկությունը, որ օվեռնուհին տալիս էր Հովնաթանին, որ ամեն օր գալիս էր նրա մասին հարցնելու: Օվեռնուհին, անշուշտ, կարծում էր, թե Ռաֆայելը դեռ քնում է, և խոսում էր բարձր ձայնով, լեռնականի ձայնով:

— Ոչ լավ է, ոչ վատ,— ասաց օվեռնուհին։— Նորից հազաց ամբողջ գիշերը: Նա միշտ հազում ու թքում է, մեղքս գալիս է այդ պարոնին: Ես ու տանտերը զարմանում ենք, թե նա ո՞րտեղից է ուժ գտնում այդպես հազալու: Ուղղակի սիրտ մաշող բան է: Ով գիտե, ինչ անիծյալ հիվանդություն ունի: Ոչ, նրա վիճակը պարզապես լավ չէ: Միշտ վախենում ենք, որ մի օր առավոտյան նրան մեռած կգտնենք անկողնում: Նա մոմե Հիսուսի պես գունատ է: Ես նրան տեսնում եմ, երբ վեր է կենում անկողնից, խեղճը ձողի պես բարակել է: Սիրտս կտոր-կտոր է լինում: Իսկ նա ոչինչ չի նկատում: Նրա համար մեկ է, նա ուժերն սպառում է վազվզոցով, կարծես կարգին առողջություն ունի: Լավ կաներ, հեռանար այս խոնավ տեղերից, այստեղ նա տանջվում է, ինչպես Քրիստոսը խաչի վրա: Մենք այդ չենք ցանկանում, ի՞նչ շահ ունենք: Նույնիսկ եթե նա մեզ այնքան չտար, ինչքան տալիս է, մենք նրան դարձյալ կսիրեինք, մենք նրան չենք պահում մեր շահի համար: Ա՜հ, աստված իմ,— շարունակեց օվեռնուհին,— միայն փարիզեցիների մոտ են պատահում այսպիսի անպիտան հիվանդություններ: Որտեղի՞ց են նրանք ստանում այդ հիվանդությունները: Խե՜ղճ երիտասարդ: Արդեն հայտնի է, որ նրա վերջը լավ չէ: Այդ տենդը, տեսնո՞ւմ եք, ինչպես կրծում, հալումաշ է անում նրան: Իսկ նա

ոչինչ չի մտածում, ոչինչ չի զգում, ոչինչ չի նկատում... Դրա համար կարիք չկա լաց լինել, պարոն Հովնաթան: Պետք է ասել՝ աստված տա, որ նա այլևս չտանջվի: Դուք պետք է իննօրյա աղոթք և մաղթանք անեք նրա բժշկության համար: Ես շատ բժշկություններ եմ տեսել իննօրյաներով: Ես էլ մոմ կվառեմ, միայն թե փրկվի այդ այնքան անուշ, այնքան բարի մարդը, այդ պատվական գառը...

Ռաֆայելի ձայնն այնքան էր տկարացել, որ նա չէր կարող ճչալ և հարկադրված եղավ լսել այդ ահավոր շաղակրատանքը: Սակայն նա այնպես էր ջղագրգռված, որ վեր կացավ անկողնից և երևաց շեմքին:

— Անպիտան ծերուկ,— գոռաց նա Հովնաթանի վրա:— Ի՞նչ է, դու ուզում ես իմ դահի՞ճը լինել:

Գեղջկուհին կարծեց, թե դա ուրվական է, և փախավ:

— Քեզ արգելում եմ հետաքրքրվել իմ առողջությամբ,— շարունակեց Ռաֆայելը:

— Լսում եմ, պարոն մարկիզ,— պատասխանեց ծերունի ծառան, սրբելով արցունքները:

— Եվ շատ լավ կանես, եթե այսուհետև այստեղ չերևաս առանց իմ հրամանի:

Հովնաթանը հնազանդվեց. նա գնաց դեպի դուռը, բայց, դուրս գալուց առաջ, մարկիզի վրա նետեց հավատարմության և կարեկցության զգացումներով լի մի հայացք, որի մեջ Ռաֆայելը կարդաց իր մահվան վճիռը: Հիմա նա որոշակի տեսավ իրերի իսկական վիճակը և վհատվեց. նա նստեց դռան շեմքին, ձեռքերը կրծքին խաչաձևեց և գլուխն իջեցրեց: Հովնաթանը պակուցումով մոտեցավ իր տիրոջը:

— Պարո՛ն...

— Հեռացի՛ր, հեռացի՛ր,— գոչեց հիվանդը:

Մյուս օրը առավոտյան Ռաֆայելը, ժայռերը մագլցելով, նստել էր մամռապատ մի խորշում, որտեղից երևում էր այն շավիղը, որ ջրաբուժավայրից տանում էր դեպի իր բնակավայրը: Ստորև նա նկատեց Հովնաթանին, որ նորից զրուցում էր օվեռնուհու հետ: Անսովոր մի ներզորությամբ նա հասկացավ, թե ինչ էին նշանակում այդ կնոջ գլխի ճոճումները, հուսահատական շարժումները, չարագուշակ-միամիտ տեսքը, և լռության մեջ քամին նրան հասցրեց ճակատագրական բառերը: Սարսափով համակված՝ նա ծվարեց ամենաբարձր գագաթների վրա և մինչև երեկո այնտեղ մնաց, չկարողանալով վանել մռայլ մտքերը, որոնք, դժբախտաբար, նրան հայտնի էին դարձել այն դժնդակ կարեկցությամբ, որի առարկան էր դարձել նա: Հանկարծ օվեռնուհին հայտնվեց նրա առաջ, ինչպես ստվերը երեկոյան աղջամուղջի մեջ. բանաստեղծի երևակայությամբ նա այդ կնոջ սպիտակ շերտերով սև շրջազգեստի մեջ ինչ-որ նմանություն գտավ չորացած կողերով ուրվականի հետ:

— Սիրելի պարոն, արդեն շաղը իջել է,— ասաց գեղջկուհին:— Եթե այստեղ երկար մնաք, ձեր վիճակը կծանրանա: Գնանք տուն: Ձեզ վնաս է խոնավություն շնչել, մանավանդ որ առավոտվանից ոչինչ չեք կերել:

— Նզո՛վք,— գոչեց Ռաֆայելը:— Ինձ հանգիստ թողեք, պառավ վհուկ, թե չէ կգնամ այստեղից: Բավական է ինչ դուք ամեն առավոտ իմ գերեզմանն եք փորում, գոնե երեկոյան մի փորեք...

— Գերեզմա՞ն, պարոն: Ձեր գերեզմանը փորե՞լ... Որտե՞ղ է ձեր գերեզմանը: Բայց ես սրտանց ցանկանում եմ, որ դուք այնքան ապրեք, ինչպես մեր պապը, և ամենևին չեմ ցանկանում գերեզման: Գերեզմա՛ն: Գերեզմանը մեզ համար դեռ շատ շուտ է...

— Բավակա՛ն է,— ասաց Ռաֆայելը:

— Բռնեցեք իմ թևից, պարոն:

— Ո՛չ:

Կարեկցությունն այն զգացումն է, որ մարդ ամենից դժվար է հանդուրժում, հատկապես երբ նա արժանի է կարեկցության: Ատելությունը ամրապնդիչ է, կենարար է, նա վրեժխնդրության է ներշնչում, բայց կարեկցությունը սպանում է, նա ավելի է թուլացնում մեր թուլությունը: Դա փաղաքշող չարիք է, դա փափկասրտության ձևի տակ արհամարհանք է կամ վիրավորական փափկասրտություն է: Ռաֆայելը իր նկատմամբ հարյուրամյա ծերունու մոտ տեսավ հաղթող կարեկցություն, երեխայի մոտ՝ հետաքրքրվող կարեկցություն, կնոջ մոտ՝ սրտնեղիչ կարեկցություն, ամուսնու մոտ՝ շահախնդիր կարեկցություն, բայց ինչպիսի ձևով էլ երևան գար այդ զգացումը, նա միշտ մահ էր ազդարարում: Բանաստեղծն ամեն ինչից հորինում է տխուր կամ զվարթ ստեղծագործություն, նայած թե ինչ պատկերներ են տպավորում նրան. նրա ոգեշնչված հոգին դեն է գցում մեղմ երանգները և միշտ ընտրում է վառ, ցայտուն գույները: Շրջապատողների կարեկցությունը Ռաֆայելի սրտում ստեղծեց վշտի ու թախծի ահավոր մի պոեմ: Ցանկանալով մերձենալ բնությանը, նա հավանաբար չէր էլ մտածել, թե ինչքան անկեղծ են բնական զգացումները: Երբ նա նստում էր մի ծառի տակ, բոլորովին միայնակ, ինչպես ինքն էր կարծում, և բռնում էր նրա հազի նոպան, որից հետո նա իրեն ուժաթափ էր զգում, նա հանկարծ նկատում էր փայլուն, վառ աչքերը տղայի, որ վայրենու պես թաքնվել էր թավ խոտերի մեջ և հետևում էր նրան այն մանկական հետաքրքրությամբ, որի մեջ նույնքան ծաղրանք կար, որքան և հրճվանք, և նաև անզգայության հետ զուգակցված ինչ-որ շահագրգռություն: Տրապիստների[170] «Եղբայր, հարկավոր է մեռնել» ահավոր խոսքը կարծես աչքերի մեջ էր գրված այն գեղջուկների, որոնց հետ էր ապրում Ռաֆայելը. նա չգիտեր, թե ինչից էր ավելի վախենում՝ նրանց միամիտ խոսքերի՞ց, թե՞ նրանց լռությունից. նրանց մեջ ամեն ինչ նեղում էր նրան: Մի առավոտ նա տեսավ, որ երկու սևազգեստ մարդ սլքտում են իր շուրջը, հետախուզում են, գաղտագողի իրեն են նայում. ապա, ձևացնելով, թե զբոսնելու են եկել այստեղ, նրանք Ռաֆայելին դիմեցին փցուն հարցերով, որոնց նա պատասխանեց կարճ կերպով: Նա հասկացավ, որ դրանք ջրաբուժարանի բժիշկն ու քահանան են, որոնք, հավանաբար, ուղարկվել էին Հովնաթանի կամ տանտերերի կողմից կամ գուցե նրանց ձգել էր մոտալուտ մահվան հոտը: Նա արդեն պատկերացրեց իր սեփական թաղումը, լսեց քահանաների երգեցողությունը, հաշվեց մոմերը, և սգո քողի միջով տեսավ գեղեցկություններն այս փարթամ բնության, որի ծոցում նա հույս ուներ վերագտնել կյանքը: Այն ամենը, ինչ նրան մի ժամանակ խոստանում էր երկար կյանք, այժմ մարգարեանում էր

---

[170] **Տրապիստներ** — տրապիստները անդամներ էին այն վանական միաբանության, որի կանոնադրությունը պարտադրում էր ծայրահեղ խստամբեր կյանք:

շուտափույթ վախճան։ Հետևյալ օրը, լսելով տանտերերի թախծագին ու սրտագին մաղթանքները, Ռաֆայելը մեկնեց Փարիզ։

Ամբողջ գիշերը քնելով ճանապարհին, նա զարթնեց Բուրբոնեի ամենածիծղուն հովիտներից մեկում, որի բնակավայրերն ու տեսարանները սրընթացորեն անցնում էին նրա աչքերի առջևով, ինչպես երազի մշուշոտ պատկերներ։ Բնությունը անողոք սեթևեթանքով իրեն ցուցադրել էր նրա առաջ։ Մերթ Ալյե գետակը գեղեցիկ հեռապատկերի վրա պարզում էր իր փայլփլուն և հոսանուտ ժապավենը. մերթ դեղնավուն ժայռերի կիրճերում երկչոտորեն պահվտած գյուղակները ցույց էին տալիս իրենց զանգակատների ծայրերը. մերթ միօրինակ այգեստաններից հետո հանկարծ երևան էին գալիս ձորակի ջրաղացները, այս ու այն կողմ երևում էին գեղատեսիլ դղյակներ, լեռնալանջերին կառչած գյուղեր, վեհաշուք կաղամախիներով եզերված ճանապարհներ. վերջապես ոսկեգույն ավազների մեջ փայլփլում էր Լուառի ադամանդաշող և գալարապտույտ մակերեսը։ Անհատնո՛ւմ թովչանքներ։ Երեխայի պես կենսաթրթիռ, կայտռուն բնությունը, հազիվ զսպելով հունիսյան կիրքն ու ավիշը, ճակատագրականորեն դեպի իրեն էր ձգում հիվանդի հանգած հայացքները։ Ռաֆայելը ծածկեց կառքի վարագույրները և նորից քնեց։ Երեկոյան դեմ, երբ Կոնը արդեն ետ էր մնացել, նա զարթնեց ուրախ մի նվագածության ձայնից, և նրա առջև բացվեց գյուղական տոնախմբության մի տեսարան։ Փոստակայանը գտնվում էր հրապարակին առընթեր։ Այն միջոցին, երբ կառքի ձիերն էին փոխում, նա նայեց գեղջկական ուրախ պարերին, ծաղկապաճույճ, սիրուն և գրգռիչ աղջիկներին, ոգևորված երիտասարդներին, գինուց կարմրած, զվարթացած ծերունիներին։ Երեխաները խայտում էին, պառավ կանայք ծիծաղելով զրուցում էին։ Ամենուրեք ցնծության ձայն էր, ուրախությունն ասես գեղեցկացրել էր և՛ զգեստները, և՛ բացված սեղանները։ Հրապարակն ու եկեղեցին ունեին տոնական տեսք. թվում էր, թե կտուրները, պատուհանները, դռները նույնպես պճնազարդվել էին։ Նման մահամերձներին, որոնք չեն հանդուրժում ամենաչնչին աղմուկն անգամ, Ռաֆայելն ուզում էր զսպել չարաշուք ժխորը, լռեցնել ջութակները, խլացնել գոռոցները, դադարեցնել շարժումը, կասեցնել այդ լպիրշ տոնահանդեսը։ Նա կառք նստեց համակ սրտաբեկ։ Երբ նա նորից նայեց հրապարակի վրա, ապա տեսավ, որ ուրախությունը հանգում է, գեղջկուհիները դեսուդեն են վազում, նստարանները դատարկվում են։ Նվագախմբի լաստակի վրա միայն մի կույր երաժիշտ շարունակում էր կլառնետով նվագել մի աղմկալի պարեղանակ։ Առանց պարողների այդ երաժշտությունը, թմբիի տակ միայնակ կանգնած այդ ծերուկը անճոռնի դեմքով, գիսախիվ մազերով, բրդգզված հագուստներով՝ ասես ֆանտաստիկական մարմնացումն էր Ռաֆայելի ցանկության։ Տեղատարափ անձրև եկավ, իսկական հունիսյան անձրև, որ հանկարծ ցած է թափվում էլեկտրականացած ամպերից և հանկարծ էլ դադարում է։ Դա այնքան բնական էր, որ Ռաֆայելը, նայելով հողմավար սպիտակավուն ամպերին, չմտածեց նայել շագրենի կաշուն։ Նա քաշվեց կառքի անկյունում, որը շուտով նորից թավալվեց ճանապարհի վրա։

Մյուս օրը նա արդեն իր տանն էր, իր սենյակում, իր բուխարու կողքին։ Նա կրակը վառել տվեց, նա մրսել էր։ Հովնաթանը նամակներ բերեց։ Նրանք բոլորը Պոլինից էին։ Նա առանց շտապելու բացավ առաջին նամակը, ասես դա հարկահավաքի սովորական ազդագիր լիներ։ Նա կարդաց սկիզբը.

«Մեկնեցի՛ր։ Բայց դա փախուստ էր, Ռաֆայել։ Ինչո՞ւ այդպես։ Ոչ ոք ինձ չի կարող ասել, թե դու որտեղ ես։ Եվ եթե ես չգիտեմ, էլ ո՞վ կիմանա»։ Չուզելով շարունակությունը կարդալ, նա

սառնությամբ վերցրեց նամակները և վառարանը նետեց, ապա աղոտ, անկենդան հայացքով նայեց բոցի խաղերին, որոնք գալարում, ծռմռում, ծվատում էին անուշահոտ թուղթը: Մոխրի վրա ոլորվեցին կիսայրյաց ծվեններ, որոնց վրա դեռ կարելի էր կարդալ մերթ խոսքերի սկիզբը, մերթ առանձին բառեր, մերթ որևէ միտք, որի կեսը հրո ճարակ էր դարձել, և Ռաֆայելը մեքենայորեն զվարճանում էր այդ ընթերցումով:

«Ռաֆայել… նստել էի քո դռան առաջ… սպասում էի… Քմահաճույք… հնազանդում եմ… Մրցակցուհիներ… Ես՝ ոչ… Քո Պոլինը սիրում է… Ուրեմն էլ չկա՞ Պոլինը… Եթե դու ուզում էիր լքել ինձ, չպետք է հեռանայիր այդ ձևով… Հավերժական սեր… Մեռնել…»:

Այս բառերը Ռաֆայելի մեջ մի տեսակ խղճահարություն առաջացրին. նա բռնեց ունելին և կրակից փրկեց նամակի վերջին նշխարը:

«Ես տրտնջացել եմ,— գրում էր Պոլինը,— բայց չեմ գանգատվել, Ռաֆայել: Բաժանվելով ինձանից, դու երևի ուզեցիր ինձ պահել ինչ-որ վշտից: Մի օր գուցե դու ինձ սպանես, բայց դու չափազանց բարի ես, որպեսզի ինձ տառապեցնես: Այլևս մի հեռանա այդպես: Ես պատրաստ եմ կրելու ամենամեծ տանջանքները, բայց միայն քո կողքին: Այն վիշտը, որ ես կկրեի քո պատճառով, արդեն վիշտ չէր լինի, իմ սրտում շատ ավելի սեր կա, քան քեզ ցույց եմ տվել: Ես կարող եմ ամեն ինչ տանել, միայն թե չարտասվեմ քեզանից հեռու և չիմանամ, որ դու…»:

Ռաֆայելը բուխարու վրա դրեց հրախանձ նամակի այս մնացորդը, ապա նորից կրակի մեջ նետեց: Այդ թերթիկը չափազանց կենդանի պատկերն էր իր սիրո և իր ճակատագրական կյանքի:

— Գնա կանչիր պարոն Բիանշոնին,— ասաց նա Հովնաթանին:

Օրասը եկավ և Ռաֆայելին գտավ անկողնում:

— Բարեկամս, կարո՞ղ ես ափիոնի թույլ դոզայով մի խմիչք պատրաստել ինձ համար, որպեսզի ես շարունակ քնի վիճակում գտնվեմ, բայց այդ դեղի մշտական գործածությունից վնաս չկրեմ:

— Դա շատ հեշտ է,— պատասխանեց երիտասարդ բժիշկը,— բայց միայն պետք է օրվա մեջ մի քանի ժամով վեր կենաս, որպեսզի բան ուտես:

— Մի քանի ժամո՞վ,— ընդմիջեց Ռաֆայելը:— Ոչ, ոչ: Ես ուզում եմ վեր կենալ ամենաշատը մի ժամով:

— Իսկ ի՞նչ է քո նպատակը,— հարցրեց Բիանշոնը:

— Քնել, դա նույնպես ապրել է,— պատասխանեց հիվանդը:— Ոչ ոքի ներս չընդունես, նույնիսկ օրիորդ Պոլին դը Վիչնաուին,— ասաց նա Հովնաթանին, մինչ բժիշկը դեղատոմս էր գրում:

— Պարոն Օրաս, որևէ հույս կա՞,— հարցրեց ծերունի ծառան երիտասարդ բժշկին, ուղեկցելով նրան մինչև վայրագավիթը:

— Կարող է դեռ երկար քաշել, կարող է և այսօր երեկոյան մեռնել: Կյանքի և մահվան հավանականությունները նրա մոտ հավասար են: Ոչինչ չեմ կարողանում հասկանալ,—

պատասխանեց բժիշկը և տարակուսանքով օրորեց գլուխը։— Հարկավոր է նրան զվարճացնել:

— Զվարճացնե՛լ: Դուք նրան չեք ճանաչում, պարոն: Անցյալ օր նա մի մարդու սպանեց և ոչ մի ծպտուն չհանեց... Ոչինչ չի զվարճացնում նրան:

Ռաֆայելը մի քանի օր ընկլուզվեց արհեստական քնի մեջ: Շնորհիվ մեր աննյութական հոգու վրա ներգործող ափիոնի նյութական զորության՝ այս այնքան ուժեղ և վառ երևակայությամբ մարդը իջավ մինչև մակարդակը այն թույլ կենդանիների, որոնք տեղից չեն շարժվում հեշտ որսը բռնելու համար: Նա նույնիսկ թույլ չէր տալիս, որ ցերեկվա լույսը թափանցի իր սենյակը, արևի ճառագայթներն այլևս չէին մտնում իր մոտ: Նա վեր էր կենում երեկոյան ժամը ութին, կիսագիտակից վիճակում հագեցնում էր իր քաղցը և նորից պառկում: Կյանքի սառն ու մռայլ ժամերն իրենց հետ բերում էին միայն խառնաշփոթ պատկերներ, միայն տեսիլներ, լուսաստվերներ սև ֆոնի վրա: Նա սուզվել էր խոր լռության մեջ. նա իր էությամբ ժխտում էր շարժումն ու միտքը: Մի օր երեկոյան նա սովորականից շատ ուշ զարթնեց և ճաշը «պատրաստ չգտավ: Նա զանգ տվեց Հովնաթանին.

— Կարող ես հեռանալ իմ տնից,— ասաց նա։— Ես քեզ հարստացրի, դու երջանիկ կլինես ծերությանդ օրերին, բայց ես քեզ թույլ չեմ տա խաղալ իմ կյանքի հետ… Ես քաղցած եմ, թշվառական: Ո՞ւր է իմ ճաշը: Պատասխան տուր:

Հովնաթանի դեմքին գոհունակության ժպիտ երևաց. նա վերցրեց մոմը, որի լույսը առկայծում էր լայնատարած սենյակների խոր մթության մեջ, նորից ընդարմացած իր տիրոջը տարավ դեպի մի ընդարձակ սրահ և հանկարծ բաց արեց դուռը: Ռաֆայելը, լույսով ողողված, շլացավ, զարմացավ անլուր տեսարանից: Նա իր առջև տեսավ բոցկլտուն մոմերով բեռնավորված ջահեր, իր ջերմոցից բերված և գեղարվեստորեն դասավորված հազվագյուտ ծաղիկներ, արծաթե, ոսկե, սադափե, հախճապակե սպասներով շողացող մի սեղան, արքայական մի ճաշ, որի գոլորշին ու հոտը գրգռում էին ախորժակը: Սեղանի շուրջը նստել էին նրա բարեկամները և նրանց հետ մեկտեղ շքազուգված, չնաշխարհիկ կանայք՝ հոլանի կուրծքով և ուսերով, ծաղկապաճույճ վարսերով, լուսափայլ աչքերով, բոլորն էլ տարբեր գեղեցկություններ, բոլորն էլ գայթակղիչ, ցանկահարույց զգեստավորումներով. մեկն իր հրապուրիչ ձևերն ստացել էր իռլանդական մի ժակետով, մյուսը հագել էր անդալուզական գրգռիչ շրջազգեստ, մեկը՝ կիսամերկ, Որսորդ-Դիանայի տարազով էր, մյուսը՝ համեստ և սիրազեղ, օրիորդ դը Լավալիերի տարազով, և բոլորն էլ հավասարապես գինովցած էին: Բոլորի աչքերի մեջ շողում էին խինդը, սերը, հաճույքը: Երբ Ռաֆայելի մեռելատիպ դեմքը երևաց դռան շեմին, հնչեցին ողջույնի միահամուռ բացականչություններ, որոնք հանդիսավոր էին, ինչպես այդ անակնկալ տոնախմբության հրավառությունները: Այդ ձայները, բույրերը, լույսերը, այդ չքնաղագեղ կանայք գրգռեցին նրա զգայարանները, արթնացրին նրա ցանկությունները: Ի լրումն արտասովոր տեսիլքի, երաժշտության հեշտալուր հնչյունները ներդաշնակ հեղեղով հոսեցին հարակից սրահից, խլացնելով այդ զգլխիչ խառնաժխորը: Ռաֆայելն զգաց, որ իր ձեռքը մեղմորեն սեղմում է մի կին, պատրաստ լինելով իրեն գրկելու սպիտակ և թարմ ձեռքերով,— դա Ակիլինան էր: Եվ հանկարծ գիտակցելով, որ այս բոլորն իրական կյանք է, այլ ոչ թե իր մշուշոտ երազների տարտամ և խուսափուկ պատկերներ, Ռաֆայելը խոլաբար ճչաց, դուռը ուժգին փակեց և իր ծերունազարդ ծառայի երեսին մի ապտակ հասցրեց:

— Հրե՛շ, — դու երդվել ես ինձ սպանե՞լ, ինչ է,— գոչեց նա:

Ապա, վտանգից հենց նոր ազատված մարդու նման դեռ թրթռուն, նա իր մեջ ուժեր գտավ մինչև իր սենյակը հասնելու, մեծ դոզայով խմեց քնաբեր դեղից և պառկեց:

«Սատանա՛ն տանի,— մտածեց Հովնաթանը, ուշքի գալով:— Բայց պարոն Բիանշոնը ինձ հրամայել էր, որ ամեն գնով զվարճացնեմ նրան»:

Գրեթե կեսգիշեր էր: Այդ ժամին քնած Ռաֆայելի դեմքը բնախոսական ինչ-որ քմահաճույքով, որ զարմանք և հուսահատություն է պատճառում բժշկական գիտություններին, փայլում էր գեղեցկությունից: Մի վառ վարդագույն էր խաղում նրա դալուկ այտերի վրա: Նրա կուսական քնքուշ ճակատը հանճար էր արտահայտում: Կյանքը ծաղկել էր նրա հանդարտ ու խաղաղ դեմքի վրա, ինչպես այն երեխայի մոտ, որ քնել է մոր թևերի տակ: Նա քնել էր առողջ, խորունկ քնով. նրա բոսոր շրթներից դուրս էր թռչում հավասար և մաքուր շունչը, նա ժպտում էր, հավանաբար երազում մի գեղեցիկ կյանք էր տեսել: Գուցե տեսել էր իր հարյուրամյա ծերությունը, տեսել իր թոռներին, որոնք իրեն երկար կյանք էին մաղթում. գուցե երազում տեսել էր, որ, նստած հասարակ նստարանի վրա, արևի ճաճանչներով ողողված ծառի ստվերի տակ, ինքը, ինչպես մարգարեն լեռան բարձունքին, նշմարել էր ավետյաց երկիրը երջանիկ հեռաստանում…

— Ահա և դուք:

Արծաթահունչ ձայնով արտասանված այս բառերը ցրեցին Ռաֆայելի քնի մշուշոտ պատկերները: Լամբարի լույսի տակ նա տեսավ, որ մահճի վրա նստել է իր Պոլինը, հրաժեշտից ու վշտից ավելի գեղեցկացած Պոլինը: Ռաֆայելին ապշեցրել էր նրա դեմքը, որ սպիտակ էր ինչպես ջրաշուշանի թերթերը և շրջանակված էր երկար սև խոպոպներով: Արցունքները փայլուն շավիղներ էին բացել նրա այտերի վրա և կանգնել էին, պատրաստ ընկնելու ամենափոքր շարժումից: Հագած սպիտակ հանդերձով, հակած և մահճին հազիվ հպած գլխով, Պոլինը կարծես երկնքից իջած հրեշտակ էր, կարծես ուրվական էր, պատրաստ չքանալու մի ակնթարթում:

— Ա՛յ, ես ամեն ինչ մոռացել եմ,— բացականչեց Պոլինը, երբ Ռաֆայելը բացավ աչքերը:— Ես կարող եմ քեզ միայն մի բան ասել՝ ես քոնն եմ: Այո, իմ սիրտը համակ սեր է: Ա՛հ, իմ կյանքի հրեշտակ, դու երբեք չես եղել այսքան գեղեցիկ: Քո աչքերը շողում են… Բայց ես ամեն ինչ հասկացել եմ, ամեն ինչ: Դու առանց ինձ առողջություն էիր փնտրում, դու ինձանից վախենում էիր… Դեհ, ինչ արած…

— Փախի՛ր, փախի՛ր: Մենակ թող ինձ,— վերջապես ասաց Ռաֆայելը խուլ ձայնով:— Թող գնա: Եթե դու մնաս, ես կմեռնեմ: Դու ուզում ե՞ս, որ ես մեռնեմ:

— Մեռնե՞ս,— կրկնեց Պոլինը:— Մի՞թե դու կարող ես մեռնել առանց ինձ: Մեռնե՞լ: Բայց դու դեռ շատ երիտասարդ ես: Մեռնե՞լ: Բայց ես քեզ սիրում եմ: Մեռնե՛լ,— մի անգամ ևս կրկնեց Պոլինը խոր, կերկերուն ձայնով և խելահեղորեն բռնեց Ռաֆայելի ձեռքերը.— Սառն են,— ասաց նա:— Թե՞ ինձ են այդպես թվում:

Ռաֆայելը սնարի տակից դուրս հանեց կուսածաղկի տերևի չափ փոքրացած շագրենի կաշու կտորը, և ցույց տալով այն, բացականչեց.

— Պոլին, իմ գեղեցիկ կյանքի գեղեցիկ պատկեր, մեկս մյուսին մնաս բարով ասենք:

— Մնաս բարով ասե՞նք,— կրկնեց Պոլինը զարմանքով:

— Այո: Ահա մի թալիսման, որ կատարում է իմ ցանկությունները և ցույց է տալիս, թե ինչպես է կրճատվում իմ կյանքը: Նայիր՝ ինչքան է ինձ մնում: Մի անգամ էլ ինձ նայիր, և ես կմեռնեմ:

Պոլինը կարծեց, որ Ռաֆայելը խելագարվել է. նա թալիսմանն առավ և մոտեցրեց լամբարին: Ռաֆայելի և թալիսմանի վրա ընկած պլպլան լույսի տակ Պոլինը ուշի ուշով նայեց և՛ իր սիրեցյալի դեմքին, և՛ կախարդական կաշու մնացորդին: Տեսնելով, թե ինչպես հիմա գեղեցիկ է սիրով և սարսափով համակված Պոլինը, Ռաֆայելը չկարողացավ իրեն տիրապետել. զգվանքների, կրքի անզուսպ ուրախությունների մասին հիշողությունները զարթնեցին նրա քնաթաթախ հոգում և բոցկլտացին, ինչպես բոցկլտում է անթեղված կրակը հանգած օջախում:

— Պոլի՛ն, ե՛կ այստեղ… Պոլի՛ն:

Ահավոր մի ճիչ դուրս թռավ երիտասարդ կնոջ հագագից, նրա աչքերը լայն բացվեցին, ցավագնորեն պրկված հոնքերը բարձրացան սարսափից. Ռաֆայելի աչքերի մեջ նա կարդաց կատաղի մի ցանկություն, որով նա հպարտանում էր մի ժամանակ. բայց այդ ցանկությունն աճելուն զուգնթաց, շագրենի կաշին, խտտացնելով նրա ձեռքը, հետզհետե ավելի էր կծկվում: Պոլինը հապշտապ նետվեց հարակից սրահը և դուռը փակեց ետնից:

— Պոլի՛ն, Պոլի՛ն,— աղաղակեց մահամերձը, վազելով նրա ետնից… Ես քեզ սիրում եմ, քեզ պաշտում եմ, քեզ ցանկանում եմ… Քեզ կանիծեմ, եթե չբանաս: Ես ուզում եմ մեռնել քո գրկում:

Կյանքի վերջին բռնկումը հանդիսացող արտասովոր մի ուժով Ռաֆայելը ջարդեց դուռը և տեսավ, որ իր սիրուհին կիսամերկ թավալվել է բազմոցին: Իր կուրծքը պատռելու զուր փորձերից հետո Պոլինը որոշել էր շալով խեղդել իրեն, միայն թե արագացներ իր մահը:

— Եթե ես մեռնեմ, նա կապրի,— ասում էր Պոլինը, ջանալով ձգել իր վիզը նետած հանգույցը:

Նրա վարսերը խառնակված, ուսերը մերկացած, հանդերձներն արձակված էին, և մահվան հետ այդ մաքառման մեջ, արտասվաթոր աչքերով, բոցավառ այտերով, հուսահատական գալարումներով, բազմապիսի նոր հրապույրներով նա խելացնորության էր հասցրել կրքից սրարբած Ռաֆայելին. գիշատիչ թռչունի թափով Ռաֆայելը նետվեց Պոլինի վրա, պատռեց շալը և ուզեց նրան ճզմել իր բազուկների մեջ:

Մահամերձը բառեր փնտրեց, որպեսզի արտահայտեր իր բոլոր ուժերը կլանած ցանկությունը, բայց միայն խեղդված հռնդյուններ դուրս եկան նրա կրծքից, որի մեջ շնչառությունը կարծես գնալով խլանում էր: Վերջապես, այլևս ի վիճակի չլինելով ոչ մի ձայն արտաբերել, նա կծեց Պոլինի կուրծքը: Իր լսած ճիչերից զահանդած՝ Հովնաթանը երևաց և փորձեց երիտասարդ կնոջը անջատել դիակից, որի վրա էր նա հակվել անկյունում: Ի՞նչ եք ուզում,— ասաց Պոլինը:— Նա ի՛մն է, ե՛ս սպանեցի նրան, մի՞թե ես դա չէի հայտնել նախապես:

ՎԵՐՋԱԲԱՆ

— Իսկ ի՞նչ եղավ Պոլինը:

— Ա՜հ, Պոլի՞նը: Լավ, լսեցեք: Զմռան մեղմ մի երեկո դուք երբևէ նստե՞լ եք ձեր տան ակութի առաջ, անձնատուր եղած սիրո կամ երիտասարդության քաղցր հուշերին, նայելով վառվող կաղնեփայտի ստացած գծագրություններին: Ահա այնտեղ վառվող ցախի վրա գծագրվում են ճատրակի տախտակի կարմիր վանդակիկներ, իսկ այստեղ ցախը փայլփլում է թավշանման. հրատի վառ ֆոնի վրա վազում, ոստնում, խաղում են կապույտ բոցիկներ: Եվ ահա գալիս է մի անծանոթ նկարիչ, որ, օգտագործելով այդ կրակի գույները, զարմանալի արվեստով մանիշակագույն և ծիրանեգույն բոցիկների մեջ ուրվագծում է կանացի մի դեմք գերբնական գեղեցկությամբ, անլուր քնքշությամբ, վայրկենական մի երևույթ, որ այլևս երբեք չի կրկնվի. այդ կնոջ վարսերը ծածանում է քամին, իսկ նրա դիմագծերը հեշտագին կիրք են բուրում — կրակ կրակի մեջ: Նա ժպտում է, նա չքանում է, դուք այլևս չեք տեսնի նրան: Գնաս բարո՜վ, բոցի մեջ փթթած ծաղիկ: Գնաս բարո՜վ, անավարտ, անակնկալ երևույթ, որ հայտնվեցիր շատ վաղ կամ շատ ուշ, որպեսզի դառնայիր մի գեղեցիկ ադամանդ:

— Իսկ Պոլի՞նը:

— Ուրեմն դուք չհասկացա՞ք: Ես նորից եմ սկսում: Տեղ բաց արեք: Տեղ բաց արեք: Ահա նա՝ պատրանքների թագուհին, կինը, որ վաղանցիկ է, ինչպես համբույրը, բոցավառ է, ինչպես փայլակը, աննյութական էակ, համակ հոգի, համակ սեր: Նա հագել է բոցեղեն մարմին և կամ նրա համար բոցն իսկ ոգեշնչվել է մի պահ: Նրա դիմագծերն այնպես ջինջ են, ինչպես լինում է լոկ երկնաբնակի մոտ: Արդյոք նա չի՞ շողում, ինչպես հրեշտակը: Արդյոք դուք չե՞ք լսում նրա թևերի օդային շրշյունը: Թռչունից ավելի թեթևասլաց նա իջնում է ձեզ մոտ, և նրա ահավոր աչքերը դյութում են. նրա հանդարտ, բայց հզոր շունչը մոգական ուժով դեպի իրեն է ձգում ձեր շրթները. նա սլանում է հեռու և ձեզ քարշ է տալիս իր ետևից, և դուք ձեր տակ չեք զգում հողը: Դուք անձկագին տենչում եք թեկուզ մի անգամ դիպչել այդ ձյունաթույր մարմնին, շոյել նրա ոսկեգույն ծամերը, համբուրել նրա բոցակեզ աչքերը: Ձեզ արբեցնում է մշուշը, ձեզ թովում է դյութական երաժշտությունը: Դուք սարսռում եք ամբողջ մարմնով, դուք համակ տենչանք եք, համակ տանջանք: Ո՞վ անճառելի երջանկություն: Դուք արդեն հպել եք այդ կնոջ շրթներին, բայց հանկարծ դուք արթնանում եք դժնդակ մի ցավից: Ա՜հ: Ա՜հ: Դուք ձեր գլուխը խփել եք մահճակալի անկյունին, դուք համբուրել եք անփայլ մահոգենին, սառն ոսկեդրվագը, բրոնզա դրվագը և կամ պղնձե Ամուրը:

— Բայց ի՞նչ եղավ Պոլինը:

— Նորի՞ց եք հարցնում: Ուրեմն լսեցեք դեռ: Մի երիտասարդ, պայծառ մի առավոտ «Անժեր քաղաք» շոգենավով մեկնելով Տուրից[171], իր ձեռքի մեջ էր բռնել մի սիրուն կնոջ ձեռքը: Եվ այսպես նրանք երկար ժամանակ հիացումով դիտեցին կանացի սպիտակ մի ֆիգուրա, որ հանկարծ առաջացել էր մշուշի մեջ, Լուառի լայնշի մակերեսի վրա, որպես ջրերի և արևի զավակ կամ որպես ամպերի և օդի քմահաճույք: Այդ հոսանուտ էակը մերթ իբրև ջրային ոգի, մերթ՝ իբրև օդային ոգի հածում էր օդում, ինչպես բառը, որ իզուր ես փնտրում, պտտվում է

---

[171] **Տուր** — քաղաք Լուառ գետի ափին:

հիշողության մեջ, բայց չի բռնվում. տեսիլքը շրջագայում էր կղզիների միջև, գլխով էր անում, թաքնվելով բարձրաբերձ կաղամախիների ճյուղերի ետև, ապա նա հասնում էր հսկայական չափերի, և այն ժամանակ փայլփլում էին նրա շրջազգեստի անհամար ծալքերը և կամ շողում էր նրա դեմքի շուրջը արևի գծած լուսապսակը. տեսիլքը սավառնում էր գյուղակների վրա, բլրակների վրա, և թվում էր, թե շոգենավին թույլ չէր տալիս անցնելու Յուսսեի դղյակի[172] առջևից: Կարելի էր կարծել, որ դա գեղեցիկ Զարմուհի—Դամայի[173] ուրվականն է, որ կամենում է իր երկիրը պաշտպանել ժամանակակից արշավանքներից:

— Լավ, հասկանում եմ, այդպես է Պոլինը: Իսկ Ֆեոդորա՞ն:

— Օ՛, Ֆեոդորա՛ն: Դուք նրան դեռ կհանդիպեք… Երեկ նա Իտալական թատրոնում էր, այսօր կլինի Օպերայում, նա ամեն տեղ է: Նա, եթե կուզեք, հասարակությունն է:

---

[172] **Յուսսեի դղյակ**— ֆրանսիական վերածնունդի գեղեցիկ դղյակներից մեկը Լուառի բարձրադիր ափին:

[173] **Գեղեցիկ Զարմուհի-Դամա** — Անտուան դը լա Սալի «Փոքրիկ Ժան դը Սենտրե» վեպի (XV դ.) հերոսուհի, ազնվածին դամա, որին թագավորը զարմուհի է անվանում. թունդ սիրահարված կնոջ տիպար: